

85

Է-67



Ի Ի Բ Ե Լ Ի Բ Ե Գ Ե Լ Ե Ի
Ե Բ Գ Ը



ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1948թ.:

Ավարտել է Երևանի պետական լսարանը (1971թ.): Բանասիրական գիտությունների թեկնածու է (1999թ.):

Արտասահմանյան գրականության պատմություն է դասավանդում Երևանի և Գավառի պետական լսարաններում:

1970-ական թվականների սկզբից գրական մամուլում լույս են տեսնում նրա թարգմանությունները Գյոթեից, Հայնեից, Շիլլերից, Թոմաս Մանից... Թարգմանական տասը գրքի հեղինակ է, այդ թվում.

Ֆ. Կաֆկա, «ՍԻՐԵՆՆԵՐԻ ԼՈՒՈՒԹՅՈՒՆԸ» (1993, «Նաիրի»)

Կոնֆիդիոս, «ԶՐՈՒՅՑՆԵՐ» (1995, ԵՊՀ Հրատ.)

Թ. Ադորնո, «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» (2001, «Ապոլոն»)

Է. Կանետի, «ԶԱՆԳՎԱԾ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ» (2002, «Ապոլոն»)

Ֆ. Կաֆկա, «ՕՐԱԳՐԵՐ» (2003, «Ապոլոն»)

Հ. Հեսսե, «ՏԱՓԱՍՏԱՆԻ ԳԱՅԼԸ» (2004, «Նաիրի»)

Հրատարակության է պատրաստում Թ. Մանի «ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԼԵՌԸ» վեպը:

գրքարան
Գրքարան
Գրքարան

DAS NIBELUNGENLIED

Deutsches Nationalepos

Übersetzung, Vorwort und Anmerkungen von
ARA ARAKELJAN

3.

VERLAG "NAIRI"
JEREWAN
2007

3.

ՆԻՔԵԼՈՒՆԳՆԵՐԻ ԵՐԳԸ

Գերմանական ազգային էպոս

Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝
ԱՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2007

Ք.Մ.Բ.

83
Կ-67

ՀՏԴ 398 = 30
ԳՄԴ 82.33
Ն 670

Նվիրում եմ հորս՝
ՀՐԱԶԹԱ ԱՌԱՔԵԼԹԱՆԻ
հիշատակին

Խմբագիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶԹԱՆ
Նկարիչ՝ ԱՐԿԱԴԻ ԲԱՂԴԱՍԱՐԹԱՆ (ԱՐԿՈ)

ԵՊՀ Գրադարան

227952



SU0201730


Ն 670 Նիբելունգների երգը / Թարգմ. գերմ. Արա Առաքելյանի.- Եր.:
Նաիրի, 2007, 340 էջ:

4703010500
Ն _____ 2007
705(01)2007

ԳՄԴ 82.33

ISBN 978-5-550-01498-1

© Արա Առաքելյան, 2007
© «Նաիրի» հրատարակչություն, ՓԲԸ, 2007



ԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային արժեքների համակարգում դյուցազնավեպերը «օգտվում» են առանձնահատուկ կարգավիճակից: Նրանց տեղը Սրբազան գրքերի և Հանճարների գործերի միջակայքում է, ընդ որում Հանճարների գործերից վեր և Սրբազան գրքերից՝ վար: Նման բարձր աստիճանակարգը պայմանավորված է դյուցազնավեպերի՝ ազգային ոգու արտացոլման և պոետիկայի բացառիկ, գրեթե անփոխարինելի բնույթով ու հնարավորութուններով: Այդպիսին է և «Նիբելունգների երգը»՝ գերմանական միջնադարյան գրականության բարձրակետը, շթաուֆենյան արքայական հարստության ժամանակներում ստեղծված ամենանշանավոր էպիկական ստեղծագործությունը:

Նիբելունգյան ավանդազրույցները լայնորեն տարածված էին գերմանական ժողովուրդների մեջ (դրանց ստեղծման ու տարածման գործում համեմատաբար քիչ ներդրում ունեն անգլոսաքսերը): «Երգի» ակունքների մեջ (սովորաբար դրանք բաժանվում են գերմանականի և սկանդինավյանի) առանձնանում են հատկապես միջին բարձր գերմաներենով գրված «Ողբը» (Die Klage), որ հակիրճ ներկայացնում է իրադարձությունների ընթացքը նիբելունգների և Հոների արյունալի կոտորածից հետո, ողջ մնացած էթցելի, Դիտրիխի և Հիլդեբրանդի ողբը մեռած հերոսների վրա և նրանց թաղումը, «Երգ եղջրավոր Ջիգֆրիդի մասին» ասքը (Das Lied vom Hümen Seyfrid, 16-րդ դարի վերջ), որ պատմում է պատանի Ջիգֆրիդի սխրանքների մասին, 13-րդ դարի քսանական թվականներին Հին իսլանդերենով ստեղծված էպիկական երկերի ժողովածուն՝ «Էդդան», որի հերոսական երգերից 19-35-ը ամբողջությամբ նվիրված են նիբելունգյան ավանդազրույցներին, նորվեգական ասպետական սագաներից «Ասք Տիդրեկի մասին» (Die Tidrecksage) պոեմը (13-րդ դարի երկրորդ կես), վերջապես սկանդինավյան ժողովրդական բալլադները, որոնք առավել ամբողջական պահպանվել են Դանիայում:

Նիբելունգյան թեմաներով պոեմների հնագույն տարբերակները մեզ չեն հասել: Դրանք ստեղծվել են գերմանական հնադարում՝ ֆրանկական առաջին թագավորների՝ մերովինգների ժամանակներում (5-7-րդ դդ.): Ենթադրվում է, որ դրանք եղել են հերոսական երգեր, դրանց կատարողը՝ զորախմբային երգիչը, որի արվեստը զարդարում ու ոգևորում էր տոնական ընկերակցությունը իշխանական դահլիճներում: Գերմանների մեջ վաղուց ի վեր տա-

րածված էպիկական երգերը ռազմաշունչ բնույթ ունենին: Գերմանների ռազմաշունչ կենցաղի և բարքերի մասին վկայում են Ղուլիոս Կեսարը («Փաղղիական պատերազմի մասին», 6, 22), Տակիտոսը (Գերմանիա, 7): Խոսելով գերմանների Հին երգերի մասին, որոնց նյութն, անկասկած, ռազմական արշավանքներն ու տոհմական ժամանակների գանազան իրադարձություններն են, Տակիտոսը ընդգծում է, որ Հին երգերը գերմանների մոտ համարվում են Հիշողությունների և ժամանակագրությունների միակ ձևը: Հերոսական բանաստեղծությունը թեև առնչվում էր պատմական իրականությանը, սակայն նրա խնդիրը սոսկ պատմական իրադարձության ավանդումը չէր: Այն ավելին էր, քան միայն պատմական երգը: Հերոսական երգեր կատարողների համար պատմությունը հուճք էր, բայց նրանք նոր կերպարանք էին տալիս պատմությանը, առանձնացնում հերոսների, որոնց բարձրացնում էին բարոյական իդեալի աստիճանի: Դրանք թելադրված էին ետհոմերական շրջանի բուռն իրադարձություններով, ծնունդն էին այն անհանգիստ ժամանակների, որոնք անվանվում են ժողովուրդների մեծ գաղթի շրջան:

Վաղ միջնադարի գերմանական հերոսական երգերից ոչինչ չի պահպանվել, բացի «Հիլդեբրանդի երգից»: Այն գրի է առնվել 9-րդ դարի սկզբին, պատկանում է Դիտրիխ Բեռնցոլ մասին ստեղծված էպիկական երգերի շարքին, թեև ամբողջական չէ, սակայն բացառիկ արժեք է ներկայացնում Հին գերմանական բանավոր բանաստեղծության բնույթի ու պոետիկայի մասին պատկերացում կազմելու առումով: Դրանք եղել են կարճտողանի, չեչտավոր բանաստեղծություններ, ստեղծված ալիտերացիայի, այսինքն՝ տողի մեջ չեչտվող առնվազն երկու բաղաձայն հնչյունների կրկնություն վրա, օրինակ.

Der H'engst neigt das Haupt auf das H'erm Leiche.

Նժույզը խոնարհում է գլուխը տիրոջ դիակի վրա:

Հերոսական երգերը, լուրջ փոփոխություններով, վերածնունդ են ապրում 11-12-րդ դարերում: Զորախմբային երգչին փոխարինում է ասացողը (Spielmann): Եպիկականները պատմական նոր պայմաններում Հին երգերի Հիման վրա ստեղծում են էպիկական նոր պոեմներ (այսպես կոչված չալիմանական էպոսը), որոնք իրենց պոետիկայով ընդհուպ մոտենում են «Նիբելունգների երգին»: Ռոմանական, հատկապես պրովանսի բանաստեղծական արվեստի ազդեցությամբ, Գերմանիայում նույնպես լայն տարածում է գտնում ռիթմավոր, վանկային բանաստեղծությունը:

Գերմանական հասուն միջնադարի (Hochmittelalter) գրական երկերից ոչ մեկի ավանդման պատմությունը այնքան հարուստ չէ, որքան «Երգիներ»: Այն ստեղծվել է 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբին: Բնագիրը, ցավոք, նույնպես չի պահպանվել: Այսօր հայտնի երեսունհինգ տեքստերից

տասնմեկը ամբողջական են, թեև դրանցից ոչ մեկը չի կարող Հավանել բնագիր լինելուն: «Երգի» ամենաճին ձեռագրերը վերաբերում են 13-րդ դարի սկզբին, այսինքն՝ ստեղծվել են բնագրից անմիջապես հետո, արված են մագաղաթի վրա, ամենաուշ ձեռագիրը՝ 16-րդ դարին (դրանցից մեկը, թղթի վրա, արված է Մաքսիմիլիան կայսեր պատվերով): Տասնմեկ ամբողջական ձեռագրերից երեքը համարվում են հատկապես կարևոր. Հոհենհեմս-Մյունխենյանը (բանասիրության մեջ ընդունված է այն անվանել ձեռագիր A, ստեղծվել է 13-րդ դարի վերջին), Սենտ-Գալենյանը (ձեռագիր B, 13-րդ դարի կես), Հոհենհեմս-Լասբերգյանը (ձեռագիր C, 13-րդ դարի սկիզբ):

Նիբելունգյան ասքերի հարուստ համակարգը, որ ձևավորվում է 5-7-րդ դարերում, հետագա երկու-երեք հարյուրամյակների ընթացքում զարգանում է մի քանի հիմնական պատումների շուրջ, որոնք, սաղմնային լինելով, առաջ են բերում ավանդազրույցի ընդարձակ ճյուղավորումներ ոչ միայն մայրցամաքային գերմանացիների (ֆրանկներ, գոթեր, բուրգունդներ և այլն), այլև սկանդինավյան ժողովուրդների շրջանում: Պատմադիցաբանական տարբերությւ սյուլթներ ներկայացնող այդ պատումները ի վերջո հանգում են երկու հիմնական թեմայի: Դրանցից մեկը Ջիգֆրիդի և Բրունհիլդի խորհրդավոր սիրո պատմությունն է, ապա Ջիգֆրիդի եղբրական մահը, իսկ երկրորդը՝ բուրգունդական արքայական տան կործանումը: «Նիբելունգների երգը» ստեղծվել է այս երկու պատումների միավորման ճանապարհով: Բայց դա չի եղել մեխանիկական միավորում:

«Երգի» անհայտ բանաստեղծը ոչ միայն միավորել է առանձին պատումները, այլև համաձայնեցրել է դրանք միմյանց հետ, հարստացրել նոր սյուլթներով ու կերպարներով, օգտագործել միասնական տաղաչափություն և պոետիկա՝ ելնելով դարաշրջանի (ասպետական) գրականության պահանջներից: Փաստորեն ստեղծվել է գեղարվեստական նոր կառույց, նոր արժեք, որն աչքի է ընկնում թե ամբողջականությամբ, թե միասնականությամբ:

«Երգը» բաղկացած է իրար հավասար երկու մասերից, որոնցից առաջինում (պարունակում է 39 դիպված) պատմում է բուրգունդական հզոր արքա-եղբայրների՝ Գունտերի, Գերնտտի, Գիզելհերի և նրանց գեղանի քրոջ՝ Քրիմհիլդի մասին, նաև Ջիգֆրիդ Նիդեռլանդցու, որը լսելով Քրիմհիլդի գեղեցկության լուրը, գալիս է Վորմս և հանուն Քրիմհիլդի ամեն գնով ձգտում է շահել արքա-եղբայրների մտերմությունը: Այն ավարտվում է Ջիգֆրիդի դավադիր սպանությունով: Պատճառը բուրգունդական արքաներից ավագի՝ Գունտերի՝ իսլանդական թագուհի Բրունհիլդի հետ խորամանկություն գլուխ բերած ամուսնությունն է, որ իրագործում է Ջիգֆրիդը՝ դրա դիմաց հնարավորություն ստանալով կնուկության առնելու արքայազույր Քրիմհիլդին: Ջիգֆրիդի մահվան անմիջական պատճառը երկու թագուհիների՝ Քրիմհիլդի և Բրունհիլդի վեճն է, որով բացվում է խաբեությունը:

Վերավորված Բրունհիլդի համար, արքա եղբայների լուռ համաձայնություն, վրեժխնդիր է լինում բուրգունդների առաջին ասպետ Հագենը: «Երգի» երկրորդ մասը (պարունակում է քսան դիպված) ներկայացնում է ամուսնուն՝ Ջիգֆրիդին կորցրած Քրիմհիլդի սարսափելի վրեժի պատմությունը: Վերջինս նախ համաձայնում է ամուսնանալ Հոնբրի Հզոր թագավոր Էթցելի հետ, ապա խորամանկությամբ իր մոտ է կանչում եղբայրներին, բուրգունդ բոլոր ասպետներին և սպանում նրանց: Սակայն վրեժի զոհ են դառնում ոչ միայն բուրգունդները, այլև Հոնաց իշխաններն ու զինվորները և անձամբ ինքը՝ Քրիմհիլդը:

«Երգը» մի վիթխարի էպիկական համանվագ է, որում ի մի են գալիս ու համատեղվում միջնադարյան կյանքի ու մտածողության ամենաբազմազան կողմեր ու գծեր, պատմական, դիցաբանական շերտեր, դարաշրջանի գեղարվեստական գիտակցության տարրեր, բանավոր էպիկական ավանդույթի, այլև բանաստեղծական անհատականության համադրման հազվագյուտ օրինակներ:

«Նիբելունգների երգում» անհամեմատ ուժեղ է արտահայտված պատմական շերտը:

5-7-րդ դդ. լատինական ժամանակագրություններում լայնորեն հիշատակվում է արքա Gundacarius կամ Gundeharius (մայրցամաքային գերմանացիների մեջ՝ Gunther, Հյուսիսում՝ Gunnar) անունը: Որպես Հռենոսի ավազանում վաղ միջնադարից հայտնի բուրգունդական արքայատոհմի վերջին արքա՝ ժամանակագիրները հիշատակում են Gundaharia թագավորին: Հիշատակվում է և Gislaharius (Giselher) արքան, իսկ ահա բուրգունդական արքա եղբայրների առաջին ասպետ Հագենի, ինչպես նաև Ռուդիգերի պատմական նախատիպերը անհայտ են: Գունդահարիա արքան և նրա ողջ տոհմը կործանվում են 437 թ. Հոնբրի դեմ մղած հայտնի ճակատամարտում¹:

Հոնբրի հանրահայտ առաջնորդ Աթիլան (Էպոսում՝ Էթցել), որ դաժանություն համար եվրոպական ժողովուրդների կողմից ստացել է «Աստծո խարազան» մականունը, մահանում է իր նստավայրում, 453 թ.: Գինարբուքից հետո նա գիշերն անցկացնում է Հելդիկո անունով գերմանուհու հետ, իսկ առավոտյան նրան գտնում են արյան գեղումից հանկարծամահ եղած: Մռայլ խնջուքի պատկերը տպավորվում է մարդկանց գիտակցության մեջ և բորբոքում նրանց երևակայությունը: Բյուզանդական պատմագիրները հետագայում արդեն գրում են, որ Աթիլային սպանել է գերմանուհին: Այստեղից է ծիլ առնում գերմանական ասքը: Գերմանացիների միջավայրում

¹ Այդ ճակատամարտից հետո Հռոմեացի զորավար Աեցիուսը 5-րդ դարի 40-ական թթ. բուրգունդներին մնացորդներին բնակեցնում է Ժնևյան լճից հարավ ընկած տարածքներում: Ավելի ուշ բուրգունդները հիմք են դնում նոր բուրգունդական թագավորության՝ Լիոն մայրաքաղաքով:

նման մտածողության համար գոյութիւն ունեւր միայն մեկ պատճառ՝ Հարազատների վրեժը: Այդպես էլ պատմում են Հյուսիսում՝ Աթիլլան զոհ է գնում մի կնոջ վրեժառութեան, որի եղբայրներին նա սպանել էր: Այդ եղբայրները բուրգունդական արքաներն են: Գերմանիայում արքաների քրոջն անվանում են Քրիմհիլդ, սկանդինավյան ժողովուրդները այդ կնոջը ճանաչում են Gudrun անունով: Հատկանշական է, որ ահել Աթիլլայի կերպարի մեղմացված ընկալումը էպոսում շատ ավելի մոտ է այն գնահատականին, որ ձևավորվել է օստգոթերի միջավայրում: Վերջիններս որոշակի մի շրջանում համարվում էին ռազմաշունչ Աթիլլայի գինակիցները եվրոպայում: Օստգոթական թագավոր Թեոդորիկը գերմանական Հերոսական երգերի ամենասիրված կերպարներից մեկի՝ Դիտրիխ Բեռնցո Կախտիպի է: «Երգի» առանձին կերպարների Հետ կարող են անուղղակի առնչութիւններ ստեղծել ֆրանկական ժամանակագրութիւններից Հայտնի Բրունհիլդա, Սիգբերտ առնունները՝ Իբրե Բրունհիլդի և Ջիգֆրիդի հնարավոր նախատիպեր:

էպոսում համեմատաբար թույլ է արտահայտված դիցաբանական շերտը: Անգլիական «Բեովուլֆը», սկանդինավյան «Էդդան» չափազանց հարուստ են դիցաբանական տարրերով, ավելին՝ դրանցում էպիկական միջավայրը բացառապես դիցաբանական է: Հավանաբար, Նիբելունգյան թեմաներով ստեղծված Հին պոեմները նույնպես Հիմնականում ունեցել են դիցաբանական նկարագիր: Դրանց մշակմանը և զարգացմանը զուգընթաց աստիճանաբար մեծացել է խզումը դիցաբանականից: «Նիբելունգների երգում» արդեն գերիշխողը պատմականութիւնն է, բանական աշխարհընկալումը: Բազմաթիվ Հատվածներ կարելի է մատնանշել, որոնցում ակնհայտորեն երևում է «Երգի» Հեղինակի բացասական վերաբերմունքը դիցաբանական սյուժեների հանդեպ: Օրինակ, Ջիգֆրիդի պատանեկան սխրանքները, անտառում Հրեշի սպանելը, նրա արյան մեջ լողանալը, Նիբելունգների գանձին տիրանալը «Երգում» ներկայացվում են ոչ թե ուղղակի, այլ դրանց մասին բուրգունդական արքաների առաջ պատմում է ամեն ինչին տեղյակ ու փորձառու Հարգները: Այդուհանդերձ, դիցաբանական տարրեր նույնպես կան, և դրանք ամենից առաջ կապված են Ջիգֆրիդի, Բրունհիլդի կերպարների Հետ: Այնուհետև դիցաբանական շատ բան կարելի է տեսնել նաև Նիբելունգների, նրանց երկրի ու նկարագրի¹, էպոսում մշտապես հանդիպող մրցախաղերի,

¹ Նիբելունգներ տոհմանունը «Երգի» Հիմնախնդիրներից մեկն է: Կարծիքները այդ անվան վերաբերյալ բավականին զանազանվում են: Դրանցից մեկի համաձայն (Հ. Ռոգենֆելդ) nibilingos ցեղանունը բուրգունդական է, և մինչև 8-րդ դարը նրանք ապրել են ֆրանկական թագավորութեան մեջ: Մեկ այլ կարծիքի համաձայն (Ֆր. Պանցեր) լատիները ֆրանկներին անվանում էին Franci Nebulones. Բանասերները մատնանշում են նաև Nivelles տեղանվան Հետ Հնարավոր կապը: Վերջինս Կարոլինգյան արքայատոհմի սրբատեղին էր և Հիմքում ունի nebul-մատափուղ բառը:

ճակատագրական երկու խնջույքների, որոնք տեղի են ունենում միևնույն՝ արևադարձի օրը և ավարտվում են արյունալի ողբերգությամբ (Հմմտ՝ Հունական միֆը Տանտալոսի մասին), որսի, պատերազմի տեսարանների մեջ, Հագենի, Գիզելհերի, արքայամայր Ուտեի և մի քանի այլ կերպարներում, որոնք դուրս են պատմական ժամանակի ազդեցությունից և միշտ մնում են նույնը՝ Հագենը ծեր է, Գիզելհերը՝ պատանի և այլն, վերջապես նաև բուրգունդական երեք արքա եղբայրների, որոնց մեջ կարելի է տեսնել Հնդկվորպական աստվածների եռադաս ֆունկցիաների նմանությունը՝ ըստ Ժ. Դյուլմեզիլի տեսության:

Աշխարհիկ բովանդակությամբ գերմանական էպիկական պոեմներ ստեղծվել են սկսած 12-րդ դարի կեսերից: Դա ասպետական գրականության ժամանակն է, Վոլֆրամ ֆոն էշենբախի, Հարտման ֆոն Աուելի, Վալտեր ֆոն դեր Ֆոգելվեյդեի ժամանակը, երբ Գերմանիայում, Ֆրանսիական օրինակների Հանգույն, բարձր զարգացման է Հասնում պալատական գրականությունը: Գերմանական Հողերում ասպետականությունը, իբրև կենսակերպ և գաղափար, ապրվեց, ունեցավ նպաստավոր Հիմքեր և Հասավ բարձր զարգացման: «Նիբելունգների երգը», անկասկած, ստեղծվեց ասպետական արժեքների և գեղագիտության միջավայրում, սակայն սոսկ ասպետական գրականության չափանիշներով գնահատել այն՝ նշանակում է մեծապես նեղացնել նրա սահմանները: Հայտնի է, որ էպոսը ստեղծվել է Հարավային Գերմանիայում և Ավստրիայում՝ բնիկ գերմանական տարածքներ, որոնք սնեցին Հերոսավեպը, քանզի այս վայրերում մշտապես թարմ էր մնում պատմական Հիշողությունը և սերը Հին երգերի ու Հերոսների Հանդեպ, մինչդեռ Գերմանիայի արևմուտքում ուղադրությունը դեպի Ֆրանսիան էր՝ Ֆրանկների երկիրն ու մշակույթը:

«Երգի» մեծատաղանդ Հեղինակն առ այսօր մնում է անհայտ: Նրա անձնավորությունը ճշտելու բոլոր փորձերը մնացել են անպտուղ: Բանասիրությունը ենթադրություններից այն կողմ չի անցնում: Պալատական կյանքի ու բարքերի գերազանց իմացությունը Հիմք է տալիս ենթադրելու, որ նա եղել է ասպետ, բայց ոչ Հարուստ: Նրա մեջ ուժեղ են շարժմանի ոգին ու պատկերացումը, չունեւոր մի մարդ է եղել, որն, ինչպես իր Հայրենակից, միննեզիլներ Ֆոգելվեյդեն, արվեստի Հետ բարեկամության մեջ է տեսնում իր կալվածքը: Պոեմի լեզուն և բնաշխարհիկ Հայրենասիրությունը մատնում են Ավստրիան: Վիեննական արքունիքը, ինչպես նաև Պասաուի եպիս-

Սակայն նիբելունգներ ցեղանունը շատ ավելի զուգորդվում է Հյուսիսի Հետ, ինչպես դա երևում է նաև էպոսում: Ութերորդ դիպվածում նկարագրվում է նիբելունգների խորհրդավոր երկիրն ու թագավորությունը, որի տերն է Զիգֆրիդը: Բառի ստուգաբանությունը տանում է դեպի գերմաներեն Nebel (մառախուղ), Հին իսլանդերեն Nifheim (ստորգետնյա աշխարհ) բառիմաստները:

կոպոսական նստավայրը նրա Համար այն վայրերն են, որտեղ նա մշտապես գտնուեմ է հովանավորներ: Եստ փաստեր կան այն մասին, որ նա եղել է մտերիմներից մեկը Պասաուլի եպիսկոպոս Վոլֆգանգի (1194-1204), որը գրողների և բանաստեղծների հայտնի հովանավոր էր: Վիեննայում կամ Պասաուում նա պիտի որ Հանդիպած լինի Ֆոգելվեյդեին: «Երգը» հայտնի է նաև ժամանակակից մեկ այլ բանաստեղծի՝ Վոլֆրամ Ֆոն Էշենբախին, որի անունը լայնորեն տարածված էր Հարավային Գերմանիայում: Նրանք բավականին լավ ծանոթ են եղել միմյանց ստեղծագործություններին: «Երգում» կան Հատվածներ, որոնք Հիշեցնում են «Պարցիֆալը»¹:

Որն է եղել անհայտ բանաստեղծի նպատակն ու առաքելությունը: Հավանաբար, ֆրանկական, բուրգունդական և օստգոթական հին պոեմները իրար միավորելը, շղախելը և նոր պալատական պոեմ ստեղծելը: Նոր պոեմ, անշուշտ, ստեղծվել է, այն ունի ինքնուրույն բազմաթիվ Հատվածներ ու Հերոսներ, Հատկապես երկրորդ մասում: Սակայն միավորման խնդիրը լուծվել է մասամբ, որի Հետևանքով «Երգը» չունի մեկ միասնական ազգային գաղափար և, բացի այդ, պարունակում է բազմաթիվ չհաղթահարված Հակասություններ: Ազգային գաղափարի բացակայությունը «Երգի» կարևոր առանձնահատկություններից մեկն է, որն ընդգծում են բազմաթիվ ուսում-

¹ Այսպես, «Պարցիֆալի» երկրորդ մասում նկարագրված Հերոսի մանկությունը ճիշտ և ճիշտ նման է Ջիգֆրիդի մանկությանը, որը սկանդինավյան ավանդույթի Համաձայն մեծանում է անտառում, դարձնի Հսկողության տակ: Նույն երկրորդ մասում ապետ Հոմուրետի երևալը խնջույքում շատ է Հիշեցնում որսից վերադարձած Ջիգֆրիդին (տե՛ս Средневековый роман и повесть, М, 1974, стр. 289, 311): Բանի որ այս երկու պոեմները ստեղծվել են գրեթե միաժամանակ, չի բացավում, որ ոչ միայն «Երգն» է ազդվել «Պարցիֆալից», այլև ընդհակառակը: Նման ազդեցության մասին է նշում Վ. Գ. Ադմոնին (տե՛ս Песнь о Нибелунгах, Л, 1972, стр. 329): Պետք է ի նկատի ունենալ նաև, որ 1130 թ. «Ռոլանդի երգը» արդեն թարգմանված էր միջին բարձր գերմաներեն, ուստի Ջիգֆրիդի և Հոմուրետի վերը նշված Հատվածների Համար իբրև ընդհանուր հիմք կարող էր լինել Փրանսիական Հերոսական էպոսը, մասնավորապես ներթոհիշյալ պատկերը («Ռոլանդի երգը», 91).

Դաշտավայրով կոմս Ռոլանդն է սլանում,
 Իր Վելյանտով նժույզն է բոց ու փոփուր,
 Նրան շատ են գնեք ու գրահր սազում.
 Երկար նիզակը նա սեղմել է ամուր՝
 Երկինք միամ սուր սլաքը ոսկեհուր.
 Տեղի ճերմակ գինանշանն է խայտում,
 Որի ծոփքերն են ուսն ի վար սփռվում,
 Վայելչազեղ է նա, պայծառ ու ժպտուն:

Միջնադարյան եվրոպական պոետների Համար նման հիմք կարող էր ծառայել նաև Վերգիլիոսի «Էնեականը»: Վերը բերված օրինակներին շատ մոտ են «Էնեական» չորրորդ երգի 140-150 տողերը:

նասիրողներ (Ա. Հոյսլեր, Ա. Գուրևիչ, Հ. դե Բոոր, Վ. Ժիրմունսկի): «Ֆրանկների էպոսը Ջիգֆրիդի մասին, - գրում է Վ. Ժիրմունսկին, - բուրգունդականը՝ Գունտերի, գոթականը՝ Դիտրիխի և էրմանարիկայի մասին մոտենում են միմյանց, բայց չեն միահյուսվել գերմանական էպոսի մեջ: Միավորման պրոցեսն անավարտ մնաց՝ միջնադարյան ֆեոդալական մասնատված Գերմանիայում դրա համար պատմական նախադրյալների բացակայության հետևանքով»¹: Հելմուտ դե Բոորի՝ «Նիբելունգների երգի» թարգմանչի, գրականագետի կարծիքը ավելի որոշակի է. «Ձևայած բոլոր ջանքերին, «ազգային էպոս», «համագերմանական արժեք» «Նիբելունգների երգը», համենայն դեպս, չդարձավ»²: Հետաքրքիր է, որ «Երգը» թշնամու կերպար, որպես այդպիսին, չի ճանաչում (Ջիգֆրիդի սպանությունից հետո բուրգունգների հանդեպ թշնամանքով են լցվում նիբելունգ ռազմիկները, սակայն Քրիմհիլդը շուտով այն ցրում է խորամանկությամբ): Հոմերոսյան հայացքի լայնությունը, որ վեհանձն հերոսներ էր տեսնում ոչ միայն աքայացիների, այլև տրոյացիների մեջ, «Երգի» հեղինակը հավասար աչքով է նայում ինչպես բուրգունգներին ու նիբելունգներին, այնպես էլ հոներին ու բավարացիներին: Բարու և չարի գաղափարին այստեղ, փաստորեն, տրվում է ոչ թե ազգային, այլ մարդկային բովանդակություն, որով միանգամայն նոր մեկնաբանություն է հաղորդվում հերոսավեպին:

Ինչ վերաբերում է Հակասություններին, ապա դրանք նկատելի են էպոսի երկու մասերում էլ: Նախ, դրանք զանազանվում են ոճականորեն և նյութով: Ուշադրություն է գրավում հատկապես նիբելունգ ցեղանվան գործածությունը: Առաջին մասում այն կրում են անսահման զանձի ու հարստության տեղ արքա-եղբայրները՝ Շիլբունգը, Նիբելունգը և նրանց զինվորները (Ջիգֆրիդը տեղ է դառնում նրանց զանձին, բայց նա նիբելունգ չէ): Դրան հակառակ, երկրորդ մասում այդպես անվանում են բուրգունգներին, 1526 քառատողում Հագենն է անվանվում «Հուշ նիբելունգաց», 1726-ում՝ Գունտերը: Տարբերակ է, որ բուրգունգ արքաների, ասպետների և զինվորների հետ հոների երկիր են մեկնում նաև նիբելունգները, այսինքն՝ նրանք առանձին են, տարբերվում են բուրգունգներից, բայց ինչպե՞ս են Ջիգֆրիդի հպատակները ճանապարհ գնում իրենց դահճների հետ (ավելորդ չէ հիշել, որ առաջին մասում լրիպված 18) նիբելունգները Ջիգմունդ արքայի հետ վերադառնում են Հյուսիս): Մի շարք հերոսներ բնորոշ են միայն մասերից որևէ մեկին, իսկ եթե հանդիպում են երկու մաս

¹ История зарубежной литературы. Сред. Века и Возрождение, М., стр. 65.

² Das Nibelungenlied, Herausgegeben und Übertragen von Helmut de Boor, Parkland, Köln, 2003, s. 5.

սերում էլ, ապա միանգամայն տարբեր կերպարային գծերով: Ֆուլկեր Ալցա-
յեցին, որ երկրորդ մասի Հիմնական Հերոսներից է, առաջին մասում միան-
գամայն դժգուշյն տպավորություն է թողնում: Հագենը միայն երկրորդ մա-
սում է անվանվում Ալգրիանի որդի: Հագենի եղբայր Դանկվարտը, որ առա-
ջին մասում արդեն Հասուն տղամարդ է, երկրորդ մասում չքմեղանում է
Զիգֆրիդի սպանությունը մասնակցություն ունենալու մեջ՝ պատճառաբա-
նելով, թե իբր ինքը այն ժամանակ մանուկ է եղել (1924):

«Նիրբելունդների երգը» պալատական գրականության նմուշ է: Սակայն
այդպիսին լինելով՝ այն բոլորովին չի սպառվում այդ գրականության չա-
փանիչներով: Ավելին, «Երգը» սկզբունքային զանազանություններ ունի
ասպետական վեպից: Արտաքնապես ասպետական վեպերին բնորոշ պոետի-
կա ունենալով՝ այն միաժամանակ այլ ստեղծագործություն է իր նյութով և
բովանդակությամբ, և Հենց դա է նրա անհայտ Հեղինակի հոգևոր սիրանքը:
Արտաքուստ մնալով ժամանակի մոդայիկ գրականության սահմաններում՝
ներքուստ, սակայն, նրա տեսադաշտում բնաշխարհիկ ոգու և պատմության
խնդիրներն են: Այս Հանգամանքը նրան մի աստիճան վեր է դնում իր ժա-
մանակի գրեթե բոլոր գերմանացի բանաստեղծներից: Ցավոք, «Երգը» բա-
վականին երկար ժամանակ մնաց աննկատ և չդարձավ Հայրենի գրականու-
թյան զարգացման աղբակ:

Ի տարբերություն «արթուրյան» վեպերի նորմատիվ գեղագիտության և
նորմատիվ սկզբունքների՝ «Երգը» օժտված է անհատական և իրական կյան-
քի մեծ ուժով: «Երգի»՝ արվեստի խորությունը Հենց այն է, որ կարողա-
նում է ընդգրկել անհատական կյանքը և, լինելով էպոս (քանզի էպոսին
նույնպես բնորոշ է նորմատիվ պոետիկան), չի աղավաղում այն: Ասպետա-
կան վեպը արկածային վեպ է, դա Հրաչքների աշխարհ է, որտեղ իրականու-
թյունը ուղադրությունից դուրս է: Իրականության Հետ կապը, սովորաբար,
սկսվում է աշխարհագրությունից: Ասպետական վեպերի Հերոսները ճանա-
պարհորդում են երկրներում, որոնք ոչ մի տեղ գոյություն չունեն: Դրան
Հակառակ՝ Զիգֆրիդի Քսանտեն նստավայրը այսօր էլ Հռենոսի ծաղկուն
քաղաքներից է, իսկ բուրգունդները ապրում են Վորմսում՝ նույնպես Հռե-
նոսի ափին: Նրանք անցնում են իրենց մեծ ճանապարհը Մայն և Դանուբ
գետերի ավազանով, Ֆրանկների երկրով, Բավարիայով, Ավստրիայով (տե՛ս
բուրգունդների ճանապարհի քարտեզը առաջաբանից Հետո): Ավստրիացի
բանաստեղծին ավելի հոգեհարազատ է Արևելքը, մինչդեռ Հռենոսը և Հյուս-
սիսը էպոսում արտահայտված են Համեմատաբար աղոտ: Ասպետական բա-
նաստեղծության և վեպի պարտադիր Հատկանիշներից են անհայտահարելի
ու անզսպելի սերը, Հավերժահարսները, թղուկները, կախարհները, Հսկա-
ներն իրենց դղյակներով ու Հրաչքներով: «Երգի» Հեղինակը վարպետորեն
խուսափում է նման սյուժեներից, դրանք այստեղ Հասցված են գրեթե նվա-

գագույնի: Նախ, անուշադրուծյան չպետք է մատնել այն, որ «Երգի» Հենց առաջին դիպվածում ՔրիմՀիլը մորը հայտնում է իր տարօրինակ վճիռը՝ Հեռու մնալ սիրուց, քանզի սերը դժբախտություն է բերում:

Բավ է խոսենք այդ մասին, մայր, — ասաց կույսը վերստին, —
Տես, թե որքան աղջիկներ կան, որ սիրելով ասպետի՝
Վաստակել են լոկ արցունքներ, ուստի Հեռու պիտ մնանք
Երկուսից էլ՝ ոչ սեր, ոչ էլ դառնակսկիծ տառապանք¹:

Հագեն Տրոնյեցին հավերժահարսների Հետ վարվում է այնպես, կարծես դրանք պալատական տիկնայք լինեն, գողանում է նրանց զգեստները և ստիպում հայտնել ճշմարտությունը բուրգունդների ճակատագրի մասին (դիպված 25): Ջայրացած Դիտրիխի բերանից այլևս կրակ չի ելնում, ինչպես «Ասք Տիդրեկի մասին» նորվեգական սագայում:

Ժանրային առումով «Նիբելունգների երգը» համարվում է Ֆեոդալական էպոս, մեկը եվրոպական գրավոր էպոսներից, որոնք ստեղծվել են վաղ միջնադարում: «Ռոլանդի երգը», «Երգ իմ սիդի մասին» էպոսների Հետ «Նիբելունգների երգը», ակնհայտ ընդհանրություններ ունենալով, միաժամանակ խստորեն զանազանվում է նաև դրանցից, և զանազանվում է ամենից առաջ ավելի հարուստ էպիկական միջավայրով: Բանն այն է, որ եթե Ֆրանսիական կամ իսպանական Հերոսական էպոսում առկա է էպիկական ժամանակի մեկ չափում, դա մավրերի դեմ քրիստոնյաների պայքարի ժամանակն է (8-10-րդ դարեր), ապա «Նիբելունգների երգում» առկա են ժամանակային մի քանի շերտեր՝ դիցաբանական, պատմական՝ իր երկու (ուշ տոհմական և ասպետական ժամանակների) ենթաշերտերով: Ուստի գերմանական Հերոսական էպոսի կառուցվածքը բազմաշերտ է, համադրական, մի ստեղծագործություն է «Երգը», որով փաստորեն եզրափակվում է «Նիբելունգյան» թեմայի մշակման երկարաձիգ, դարավոր շղթան:

Հին երգերից ու պոեմներից «Երգին» ոճական առումով թեև գրեթե ոչինչ չի անցել («Նոսք անգամ չի կարող լինել, — գրում է Հոյսլերը, — որ մեր ավստրիացի բանաստեղծը թեկուզև մասամբ Հետևում է իր սկզբնաղբույրների ոճին»²), այդուամենայնիվ համադրականությունը այստեղ նկատելի է

¹ «Երգի» այս քառատողի տրամադրության գուգահեռը կարելի է գտնել Հարտման Փոն Աուեի Հետևյալ բանաստեղծության մեջ:

На свете счастлив только тот,
Кто треволнений избегает,
Тот, кто любви не признает,
Кто красотой пренебрегает...

² А. Хойслер, Герм. героический эпос и сказания о Нибелунгах, М., 1960, стр. 178.

ամենուրեք, իրար են շողախված Հինը և նորը, դիցաբանականը և պատմականը, Հեթանոսականն ու քրիստոնեականը: Այսպես, թեև «Երգը» բանաստեղծական մտածողութամբ միանգամայն նոր է, սակայն նրա Հենց առաջին քառատողը մեր Հայացքն ուղղում է դեպի Հնագույն ասքերն ու զրույցնեբը, որոնցից իր պատմությունն է քաղել նա.

Շույլ են շատ ասքերն Հնոց, որ պատմում են մեզ բազում
Հրաչք անցքեր քաջաց կյանքից փառաբանված, դյուցազուն,
Նինդից նրանց, խնջույքներից ու ցավերից սրտկեղեք,
Նաև դաժան կռիվներից՝ արդ, ունկ դրեք ու լսեք:

Գյոթթի կարծիքով «Նիբելունգների երգը» իր տարբերքով Հեթանոսական է, Ա. Շլեգելը, ընդհակառակը, դրա մեջ տեսնում է քրիստոնեական բարոյականության անառարկելի գծեր: Էպոսի մասին կարծիքների այս ծայրահեղ զանազանությունը շարունակվում է նաև Հետագայում (Հոյսլեր, Աուերբախ): Ըստ էության, դրանք երկուսն էլ իրենց սահմաններում ճշմարիտ են և ավելի Հարստացնում են պոեմի էպիկական միջավայրը: Հակամետ այս գծերի առկայությունը էպոսում կարելի է տեսնել ամենուրեք: Օրինակ, դեպի իրենց ճակատագրական վախճանը, դեպի մահը բուրգունդների Համառ ընթացքի մեջ ակնհայտ քրիստոնեական պահվածք կա, սակայն գանձասիրությունը, մանավանդ խրախճանասիրությունը («Երգը» ճանաչում է խրախճանքը իբրև պալատական կենցաղի բարձրակետ) Հեթանոսական է: Այս Հանգամանքը Հերոսներին, իրադարձություններին Հաղորդում է երկակիություն՝ առանձնահատկություն, որ մատնանշում են առանձին ուսումնասիրողներ (Բ. Նագել, Ֆր. Նոյման):

Օրինակները բազմաթիվ են, լավագույնը թերևս, Հարսնախոսություն երկու տարբերակներն են, որ ներկայացնում է «Երգը»: Առաջինի՝ Բրունհիլդի Հարսնախոսություն մեջ (դիպված 7) վաղնջական շունչ կա. Բրունհիլդին տիրանալու Համար Գունտերը ստիպված է մահու և կենաց մարտ մղել Հենց իր Հարսնացուի դեմ և Հաստատել իր առավելությունը, իսկ երկրորդը՝ Քրիմհիլդի Հարսնախոսությունն է, որ կրում է ֆեոդալական ժամանակների կնիքը (ամուսնությունը թելադրված է ավելի շատ քաղաքական նկատառումներով, քան սիրուց):

Այս Համադրականությունը «Երգի» Համար ոչ միայն Հարստություն է, այլև ազատություն՝ չմնալու միմիայն ասպետական-պալատական բարքերի ու մտածողության սահմաններում: «Եթե գերմանացիների ամենահայտնի Հերոսական պոեմները, - գրում է է. Աուերբախը, - սկսած «Հիլդեբրանդի երգից» ընդհուպ մինչև «Նիբելունգների երգը», իրենց պատմական նյութը քաղում էին բարբարոսական և ժողովուրդների գաղթի ազատ դարաշրջանից և ոչ թե այն դարաշրջանից, երբ Հիմնավորապես ձևավորվել էր զարգացած

Ֆեոդալիզմի կառույցը, դա արդեն իսկ նրանց հաղորդում է մեծ լայնք և ազատություն, ուժանակն Գաղղիայի տարածք ժողովուրդների գաղթի դարաշրջանից գերմանական այս սյուլեթները չներթափանցեցին կամ, բոլոր դեպքերում, չկարողացան արմատ ձգել ուժանակն հողում... Ազատ-անմիջական ուժերը՝ դեռևս չձևափոխված դաժան նորմերի, և մարդկային արմատները այդ ուժերի, ավելի խորն են, հերոսական էպոսի շրջանակների գերմանական բանաստեղծական գործերի մասին չի կարելի ասել, ինչպես ասվում է «Ռոլանդի երգի» վերաբերմամբ, թե նրանց չեն բավականացնում ողբերգական խնդիրները...»¹:

Այս հարստությունը է հենց պայմանավորված «Երգի» պոետիկան, նրա բարդ ու բազմազան գեղարվեստական կառույցը:

Գերմանական հերոսական էպոսն աչքի է ընկնում, նախ, ներքին հարմոնիայով, կոմպոզիցիոն տարրերի միասնականությունը, հիմնական կերպարների ամբողջականությունը, դրամատիզմով ու հատկապես քնարականությունը, որ ընդգծվում է պոեմի էպիկական միջավայրում: «Սա քարեդեն բանաստեղծություն է, - «Երգի» մասին գրում է Հ. Հայնեն, - և նրա տողերը հավասար տաղաչափություն հատված քարակտորներ են: Բայց այս ու այնտեղ ճեղքերից արնագուլյն տողերի պես դուրբ են հորդում կարմիր ծաղիկները և կամ ցած է կախվում երկարաձիգ բաղդը՝ ինչպես կանաչ արցունք»:

Այսուամենայնիվ, հարկ է առանձնացնել «Երգի» գեղարվեստական կառույցի մի շարք հիմնարար սկզբունքներ:

Դրանցից կարևորագույնը, թերևս, հերոսականությունն է: Փոխարինելով ազգային գաղափարին՝ հերոսականությունը դառնում է «Երգի» ամենաբնութագրական գիծը, որի հետևանքով այն առավելապես հերոսական է, քան ազգային: Հետաքրքիր է, որ հերոսականությունը օժտված են «Երգի» գրեթե բոլոր կերպարները, սակայն յուրաքանչյուր կերպար, յուրաքանչյուր դեմք ունի հերոսականության իր «պաշարը» և տարբերակը: Սա գիծ է, որ «Երգին» է անցել հին պոեմներից, որոնցից յուրաքանչյուրը իր հետ բերել է հերոսականի իր իդեալը՝ մարմնավորված իր էպիկական հերոսի կամ հերոսների մեջ: Զիգֆրիդից մինչև մարկգրաֆ Ռուդիգեր, Քրիմհիլդից մինչև Դիտրիխ Բեռնցի կարելի է դիտարկել ուժի, հավատարմության, սիրո, տառապանքի և հերոսականության տասնյակ այլ տարբերակներ: Հերոսականության ինչ-որ գիծ կա անգամ խաղաղ, հանդարտաբար մարկգրաֆներ Գերեի և Էլկվարտի, պարտված արքաներ Լուդեգաստի և Լյուդեգերի կերպարներում:

Հերոսականին հասնելու ճանապարհը «Երգում» անպայմանորեն անցնում է պալատական-ասպետական կյանքի միջով: «Երգի» անհայտ հեղինա-

¹ Э. Ауербах, Мимесис, М. С-П, 2000, стр. 97.

կի տեսադաշտում ֆեոդալական Հասարակության վերնախավն է՝ դասերի ճիշտ և ճիշտ այն աստիճանակարգով, որ տալիս է պատմագիտությունը՝ թագավոր, Հոգևոր իշխաններ, աշխարհիկ իշխաններ, ասպետներ, արքունական ծառայողներ: Էպոսի առաջին դիպվածում, ըստ Հերթականության, նկարագրվում են այդ դասերը՝ սկսած թագավորից, վերջացրած խոհարարով, անկողնապետով, արտուպետով և մատովակով:

«Երգի» իրադարձությունների զգալի մասը տեղի է ունենում բուրգունդական արքունիքում, արքունիք, որն իր նրբաճաշակ կենցաղով Հայտնի էր Եվրոպայում, և որի ճոխությունը Հետագայում ժառանգեցին Հաբսբուրգները՝ պահպանելով ու խորացնելով այն Ավստրիայում ու Իսպանիայում:

Միջնադարյան եվրոպական արքունիքն, առհասարակ, այն ներքին ու լուրտն է, որտեղ կենսաձևերի գեղագիտությունը բացահայտվում է առավել լիակատար կերպով, և յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր արարք Հետևում է մշակված ու արտահայտիչ ծեսին՝ բարձրացվելով մինչև կայուն ու անփոփոխ կենսակերպի: Գունազեղ, երփներանգ աշխարհ է դա, որ աչքի է ընկնում ոչ միայն կայուն, կանոնակարգված բարքերով, այլև բուռն, դինամիկ կյանքով, որ լի է անակնկալներով ու անսպասելի ելքերով (դա էպոսում երևում է Հենց բուրգունդական արքունիքի օրինակով, որի ծաղկուն ժամանակներին Հաջորդում է ոչնչացումն ու ամայացումը): Անհրաժեշտը, դասային շերտավորման պարտադիր աստիճանավորումն այստեղ ձեռք ձեռքի է քայլում գեղեցիկի Հետ, և զգեստը, պահվածքը դառնում են մարդկային Հարաբերությունների ու դիրքի կարևորագույն պայման ու ցուցիչ («Երգը» մեզ գրեթե Հոգնեցնում է թագավորների ու թագուհիների, ասպետների ու դեսպանների՝ ամենատարբեր առիթներով քիչ է ասել, թե ճոխ Հանդերձների ու Հագ ու կապի նկարագրություններով: Ճոխ Հանդերձները կարող են ուժ Հաղորդել Հերոսներին և բերել օգուտ, իսկ վատ զգեստները՝ վնաս (344, 1156, 1434):

Պալատական կյանքին 10-11-րդ դարերում առանձին փայլ ու բովանդակություն են սկսում Հաղորդել Հատկապես ասպետական բարքերը: Ասպետ ձեռնադրվելը Համեմատվում էր մկրտության խորհրդի կամ ամուսնության Հետ, իսկ ասպետականության իդեալը, իր ամենաբարձր դրսևորումներում, մոտենում էր Հոգևոր, կրոնական միստիկային (դիպված 2-ում ներկայացվում է ասպետ ձեռնադրվելու արարողությունը՝ իր ողջ Հանդիսավորությամբ): «Երգում» լայնորեն երևում են միջնադարյան պալատն ու ասպետական կենցաղն՝ իրենց ամենակայուն դրսևորումներով՝ խրախճանք, պատերազմ, որսորդություն, Հարսնախոսություն, դինախաղեր և այլն: Մանրամասնորեն ներկայացվում են Հատկապես դինախաղերը: Ուժի, Հերոսականության ցուցադրություններ լինելուց բացի՝ վերջիններս ձեռք են բերում նաև դրամատիկ, ինչ-որ տեղ անզամ էրոտիկ բովանդակություն: Պատահա-

կան չէ, որ երկու թագուհիների (Բրունհիլդի և Քրիմհիլդի) ճակատագրական վեճը տեղի է ունենում Հենց բուրգունդ և նիբելունգ ասպետների մրցախաղի ժամանակ՝ դառնալով դրա յուրօրինակ շարունակություն և հետագա ողբերգական իրադարձությունների սկիզբ:

Փեմանական էպոսը նրբորեն շեշտում է այն հանգամանքը, որ պալատական կյանքը Հենց միայն արտաքին ճոխությունը և հարմարավետությունը չէ, այլ կենսակերպ, որ դրսևորվում է մարդկանց գիտակցություն և վարքի մեջ: Մարդու արտաքինի և ներքինի, դիմաչարժի և տրամադրության համահնչունությունը կազմում են այն արժեքները, որ այն ժամանակ անվանում էին առաքինություն և շնորհ, և որոնք, իբրև հոգու և մարմնի կատարյալ գծեր, ձեռք էին բերվում դաստիարակության և անհատական մղումների շնորհիվ: «Երգի» հերոսների գրեթե բոլոր արարքների մեջ կարելի է տեսնել դեպի կատարյալ ու բարձր ձգտելու հոգևոր վարքագիծ, որն ինքնին հերոսական է: Պալատական կյանքի յուրաքանչյուր իրադարձություն պարունակում է արտաքին տեսքի ու տրամադրության, ձևի ու բովանդակության երկմիասնություն և ներդաշնակություն, ի նշան որի հոգևոր ազնվությունը ճառագում է իբրև արտաքին գեղեցկություն, և, ընդհակառակն, արտաքին և ներքին հատկանիշների խզումը դրսևորվում է իբրև մոայլություն (Հագենը, օրինակ, մոայլ է): Այդ ներդաշնակությունը կարելի է տեսնել Գունտերի դեմքին, երբ Բրունհիլդի ներկայությամբ Ջիգֆրիդը պահում է նրա ձիու ասպանդակը (396-397, թեև այս էպիզոդում առկա են և երգիծական գծեր), մեկ այլ դեպքում Հենց այդ ներդաշնակության բացակայությունն է պատճառ բերում Քրիմհիլդը, երբ սկզբում մերժում է էթցելի Հարսնախոսներին (դիպված 20):

«Երգի» գեղարվեստական կառույցի կարևոր կողմերից է և հոգեբանական խորությունն ու հագեցվածությունը: «Նիբելունգների» շարժիչ ուժը, - գրում է Հենրիկ Էդոյանը, - մարդկային կյանքն է, սիրո և վրեժխնդրության հարցը, որի տեսանկյունից ներկայացված է աշխարհը և մարդկային հարաբերությունների բարդ կծիկը»¹: Իրոք, «Երգը» այնքան հարուստ է մարդկային և համամարդկային գաղափարներով, բնավորություններով ու հոգեբանությամբ (հատկապես՝ կանացի), այնքան վարպետությամբ է հեղինակը դրանք արտահայտում՝ միավորելով ասպետական ժամանակների խնդիրների ու բարքերի հետ, որ ակամա վիճելի է թվում Ա. Գուրևիչի այն կարծիքը, թե «էպոսում (իմա՝ «Նիբելունգների երգում»՝ Ա. Ա.), խստորեն ասած խոսք չկա անհատականության մասին»²: Անկասկած, էպոսում, ինչպես ընդգծում է Հեգելը, գերիշխում է ճակատագիրը, որի

¹ Գարուն, 2005, թիվ 3, էջ 35:

² А. Гуревич, Ср. Мир, М, 1980, стр. 120.

Հետևանքով կատարվում է այն, ինչ պետք է կատարվի¹: Սակայն, «Նիրբ-լունգների երգի» դեպքում, ի նկատի ունենալով նրա շեղումները, Հեգելյան բնորոշմամբ, ավանդական էպոսից, թվում է, այս ընդհանրական կանոնը չի գործում: Նախ, «Երգը» որոշակիորեն ինքնուրույն, Հեղինակային ստեղծագործություն է, նրա Հիմքում թեև ընկած են էպիկական Հին երգեր, սակայն շատ իրադարձություններ ու Հերոսներ, Հատկապես սյուժետային լուծումներ, ինչպես վերն ասվեց, նոր են, Հեղինակի մտահղացման արդյունք: Բացի այդ, դիցաբանական, մասամբ նաև պատմական կապերի բացակայության պայմաններում այդ լուծումների Հիմքում շատ հաճախ ընկած է բանաստեղծ-Հեղինակի անհատական կենսափորձը: Անկասկած, նա ապրել է մեծ կյանք: Ճակատագրի, սիրո, կյանքի ելեէջների՝ երջանկության ու ցավի իմաստը գիտի ոչ գրքերից: Վերջապես, որ, ամենակարևորն է, ազգային գաղափարի գրեթե բացակայությունը այս էպոսում ուղիղ ճանապարհ է հարթում դեպի մարդը, որը ոչ միայն էպիկական, այլև ներքին, անհատական մարդն է: Համենայն դեպս, այստեղ առանձին կերպարների Հոգեբանական խորությունը Հիմք է տալիս ասելու, որ եթե անգամ «Նիրբլունգներում» չկան լիարժեք անհատականություններ, ապա Հատկապես Քրիմ-Հիլդի և Հագենի կերպարներով այն ընդհուպ մոտենում է անհատական մարդու ըմբռնմանը և մեկնաբանմանը: Վերստին օգտվելով Հեգելի եզրաբանությունից՝ կարող ենք ասել, որ գերմանական Հերոսական էպոսը ներկայացնում է «միջին» մի ժամանակաշրջան, երբ ժողովուրդը (իմա՝ մարդը՝ Ա. Ա.) արթնանում է ծանր քնից, իսկ ոգին ինքն իր մեջ զորանում է այնքան, որպեսզի ստեղծի իր առանձնահատուկ աշխարհը»²:

Եթե Հերոսականությունամբ օժտված են «Երգի» գրեթե բոլոր կերպարները, ապա Հոգեբանական խորությամբ ու բարդությամբ աչքի են ընկնում քչերը: Իրունհիլդը, Էթցելը, Գունտերը, անգամ Զիգֆրիդը իրենց բնավորությամբ ավելի միազիծ են, քան բարդ: Հատկանշական է, որ «Երգը» կերպարային բարդության հասնում է ոչ միազիծ միջոցներով, այլ յուրաքանչյուր առանձին դեպքում կիրառվում են տվյալ կերպարին յուրահատուկ միջոցներ: Օրինակ, Քրիմհիլդի կամ Հագենի դեպքում օգտագործվում է բնավորությունների հակադիր անցման կամ կերպարանափոխության միջոցը, որի հետևանքով թե Քրիմհիլդի և թե Հագենի մեջ առկա են երկու լիարժեք և հակադիր կերպար: Ավելորդ չէ նկատել, որ եթե Քրիմհիլդի կերպարը գալիս է Հին երգերից, ապա Հագենն, իբրև կերպար, բոլորովին նոր է:

«Երգը» Հոգեբանական հարստության է հասնում նաև պալատական-ասպետական կենցաղի ամենօրյա, սովորական իրադարձությունների հմուտ

¹ Гегель, Эстетика, т. 3, стр. 452.

² Гегель, Эстетика, т. 3, стр. 427.

օգտագործմամբ: «Երգի» Հեղինակը ոչ միայն գիտե, ճանաչում է այդ կյանքը, այլև, մի փոքր շեղվելով սովորականից, կարողանում է իրադարձություններին Հաղորդել խոր դրամատիզմ, քանզի ձևերի ու բարքերի այդ աշխարհը քարացած չէ, և կարելի է Հենց առօրեականի միջոցով արտահայտել անսովորը՝ մարդկային Հարաբերությունների անծայրածիր աշխարհը: Այսպես, «Երգի» երկրորդ մասի Հենց սկզբում (դիպված 20) ՔրիմՀիլդը ընդունում է էթցել թագավորի կողմից Հարսնախոս ուղարկված մարկգրաֆ Թուդիգերին: Նա ընդառաջ է գնում մարկգրաֆին այրու իր սովորական, ամենօրյա զգեստներով (մարկգրաֆը նկատում է, որ ՔրիմՀիլդի զգեստի լանջը ամբողջովին թաց է տաք արցունքներից), մինչդեռ նաժիշտները տոնական զգեստներով են: Մոայլ թագուհու կերպարանքը գունազեղ շրջանակում ընկալվում է իբրև նախնական պատասխան, մինչև որ կհնչի մարկգրաֆի Հարցը: Առավել խոսուև է էթցելբուրգ ժամանած բուրգունդների ընդունելության միջոցառում (դիպված 28): Դիտրիխ Բեռնցին դուրս է գալիս ընդառաջ: Նրա դեմ բուրգունդական երեք արքա-եղբայրներն են և նրանց ասպետները: Ողջույնի սովորական տեսարան է ենթադրվում, սակայն Դիտրիխը խոսում է՝ ձևական բոլոր կանոնները դնելով մի կողմ:

Բարի գալուստ, ով տիարներ՝ Գունտեր, Գերնոտ, Գիզելհեր,
Մեծահամբավ Տրոնյեցի, Ալցայեցի ով Ֆոլկեր,
Խիզախ Դանկվարտ, ձեզ Հայտնի չէ՞, չգիտեք, որ թագուհին
Ձի մոռացել կորուստը իր ու ողբում է դառնազին:

Թեև բուրգունդ ասպետները և Հատկապես Հագենը արդեն կանխազգում էին աղետը, սակայն Դիտրիխի խոսքերից Հետո («..... ձեզ Հայտնի չէ՞, չգիտեք, որ.....») իրականությունն իր ողջ դրամատիզմով բացվում է նրանց առաջ:

Գերմանա-սկանդինավյան դիցաբանության ամենասիրված Հերոսներից մեկը՝ Ջիգֆրիդը, «Երգում» ենթարկվել է նկատելի փոփոխությունների: Նա արդիականացվել է, զրկվել դիցաբանական շատ գծերից: Դիպված 2-ում Ջիգֆրիդը ներկայանում է իբրև ասպետական-պալատական բարոյականության կատարելատիպ: Նրա մասին դեռևս պահպանվում են առասպելական սխրանքների Հիշողությունները՝ նա անխոցելի է, կրում է Բայմունգ սուրը, որին չի դիմանում ոչ մի զրահ, տերն է կախարդական Անտես գլխարկի և այլն, սակայն այս ամենով Հանդերձ նա ժամանակավրեպ գծեր ունի: Նրա առաջարկը բուրգունդ արքաներին՝ մենամարտի միջոցով որոշելու Բուրգունդիա երկրի ճակատագիրը, բոլորին թվում է ծիծաղելի, մանավանդ վտանգավոր (այդ պահին թեև մերժվում է Ջիգֆրիդի առաջարկը, սակայն Հետագայում բուրգունդ արքաները, Հատկապես Գունտերը, շատ լավ էլ

օգտվում են Ջիզֆրիդի ուժից): Սկանդինավյան ասքը և «Երգը» նրա կործանման պատճառ են համարում էպիկական մեղքը: Սկանդինավյան ավանդույթում Ջիզֆրիդը որոշակիորեն մոտեցված է Օդինին՝ գերագույն աստծուն, որին բնորոշ է նաև խաբելը («Օդինը սիրում է խաբել»,- գրում է Դյումեզիլը, և ավելացնում, որ «Էդդայում» Օդինի մասին կան հատվածներ, որոնք ուղղակի Հիշեցնում են Ջիզֆրիդին)¹:

Խոստանալով վերադառնալ և ամուսնանալ Բրունհիլդի հետ, Ջիզֆրիդը, սակայն, խախտում է իր խոսքը, և, ըմպելով կախարդական ըմպելիքը, մոռանում է նրան («Էդդա», Սագա Վյոլսունգների մասին): «Երգում» էպիկական այս մեղքից բացի Ջիզֆրիդի մահվան պատճառ է դառնում վերջինիս վասալական պարտականություն խախտումը Գունտերի հանդեպ:

Գերմանական ումանտիզմը և հետագա զգայնական միտքը նիդեռլանդցի այս արքայազնի մեջ հայտնաբերեցին գերմանական համազգային հերոսին, նրան մոտեցրին ռազմի աստծուն՝ Վոթանին (Ջիզֆրիդի անվան մեջ առկա է հաղթանակ բառիմաստը): «Երգի» դիցաբանական մեկնություններում (Ֆր. Երյոդեր) Ջիզֆրիդը աստվածային ծագում ունի և հանդիսանում է մանուկ՝ ծնված երկնքի աստծու և երկրի աստվածուհու սրբազան հարսանիքից): Բերտրան Ռասելի կարծիքով Ջիզֆրիդի մեջ նիցչեական գերմարդու գծեր կան²:

«Երգում» Ջիզֆրիդի կերպարին, կառուցվածքային առումով, շատ մոտ է Բրունհիլդը, վերջինիս մեջ նույնպես առկա է Հին՝ դիցաբանական և նոր՝ ավատական ժամանակների թագուհու գծեր: «Էդդայում» Բրունհիլդը վալկիրիա է, որ Օդինին խոստանում է համուսնանալ ոչ մեկի հետ, ով ճանաչում է վախը:

Նա ռազմիկ – օրիորդ է, որ հայտնի է դեռևս հունական դիցաբանությունից: «Էդդայի» երգերից մեկում Բրունհիլդին մեղադրում են իբրև չար ոգի, որը դժբախտություն է բերում իր ամուսիններին ու տղամարդկանց: Բրունհիլդի մեջ տեսնում ենք վիթխարի ուժի և Հպարտության ցուցադրություն (դիպվածներ 7, 10), սակայն, դառնալով Գունտերի կինը, նա զրկվում է ոչ միայն իր հզորությունից, այլև հերոսականությունից: Դիպված 18-ում գծված նրա կերպարը ավելի շատ Հիշեցնում է պաղ, մարմարյա արձան, որը Ջիզֆրիդից իր վրեժը առնելուց հետո այլևս ոչինչ չունի անելու:

Իսկ թագուհի Բրունհիլդը ապրում էր գոհ, անհաղորդ,

Քրիմհիլդին անկարեկից, նրա ցավին իսպառ խորթ.

¹ Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев, М, 1986, 137; 144.

² Б. Рассел, История западной философии, Санкт-Петербург, 2000, стр. 882.

Նա փորձ չարեց գեթ մեկ անգամ մի խոսք ասել սրտացավ,
Սակայն Հետո ՔրիմՏՀիլդից իր պատիժը ստացավ:

«Երգի» գեղարվեստական միասնության Համար Հանգուցային կերպարներ են Հատկապես ՔրիմՏՀիլդը և Հագենը: Նրանք երկուսն էլ Հավասարապես Հանդես են գալիս էպոսի երկու մասերում՝ ապահովելով պոեմի կոմպոզիցիոն միասնությունը, երկուսն էլ Հավասարապես ապրում են Հակադիր կերպարանափոխություն: Առաջին մասում իր առաքինությունը և գեղեցկությունը Հայտնի ՔրիմՏՀիլդը ամուսնու՝ Զիգֆրիդի դավադիր սպանությունից Հետո, երկրորդ մասում վերածվում է վրեժով Համակված մի կնոջ, որ Հանգիստ է առնում միայն իր թշնամիներին ոչնչացնելուց Հետո, իսկ ահա Հագենի կերպարային զարգացման գիծը միանգամայն Հակառակն է՝ առաջին մասի նախանձոտ, քինախնդիր Հագենի փոխարեն երկրորդ մասում տեսնում ենք փորձառու, բուրգունդական արքաների ու զահի ճակատագրով մտահոգ մի առաջնորդ ասպետի, որը թեև գիտի, կանխագուգում է արյունալի կործանումը, սակայն ճակատագրին Հնազանդ՝ քայլում է վերջինիս ընդառաջ՝ ամեն կերպ ձգտելով արագացնել դեպքերի ընթացքը և մոտեցնել ճակատագրի վերջնական Հարվածը:

ՔրիմՏՀիլդը ապրում է կերպարային զարգացման երեք փուլ՝ գեղեցիկ և ինքնավստահ արքայադուստր, Հպարտ և մեծամիտ թագուհի, վերջապես՝ ամուսնու Հիշատակին Հավատարիմ ու վրիժառու կին: «Միջին բարձր գերմաներենի շրջանի էպոսում, — գրում է Վ. Գ. Ադմոնին, — նման բնավորություն, Հերոսի ներաշխարհի բարդ զարգացման առումով, կարելի է գտնել միայն «Պարցիֆալում»¹:

ՔրիմՏՀիլդի արարքները Հոգեբանական Հարուստ գամմա են ներկայացնում Հատկապես երկրորդ մասում, երբ նա Հստակորեն գիտի իր անելիքը, գիտի իր թշնամիներին, և նիբելունգների վրիժառուությունը լռեցնելուց Հետո ընտրում է մի ճանապարհ, որը շատ բնորոշ է կնոջը՝ դա նպատակին Հասնելու երկար, բայց Հաստատապես Հաջողություն բերող ճանապարհն է (1033): Հագենից, եղբայրներից վրեժն առնելու Համար նա միջոցների առաջ կանգ չի առնում, իր ապրած ողբերգությունը Հիշեցնելու Համար ընտրում է ցանկացած միջոց, Զիգֆրիդի սպանությունից մեղադրանքից անցնում է գանձը գողանալուն, սառնասրտությունը նայում անգամ որդու՝ Օրտլիբի զոհաբերությունը, փնտրում է գործակիցներ՝ ստանալով Դիտրիխի մերժումը, դիմում է Բլոդգլիին, մյուս Հոն ասպետներին: Կարճ՝ ողջ երկրորդ մասը վրիժառուության և Համառության մի բեմականացում է, որտեղ միմյանց Հետ մրցում են ՔրիմՏՀիլդը և Հագենը: Եվ եթե ճշմարիտ է, որ «Նիբելունգների»

¹ Песнь о Нибелунгах, Л, 1972, стр 372.

չարժիչ ուժը կիրքն է, ապա պետք է հավելի, որ սա մեծ կրքերի դրամա է, որտեղ վերջինները՝ սերը և ասելութունը, հավատարմութունը և դավաճանութունը, առաքինութունն ու ստորութունը հասցվում են իրենց ամենավերջին սահմանին: Քրիմհիլդի կերպարանափոխության հիմքում առանձին ուսումնասիրողներ (օրինակ, Ա. Գուրեիչը) դնում են սատանայով բռնվելը: Սա, անկասկած, միակողմանի մոտեցում է և չի համապատասխանում կերպարի էությանը: Շատ ավելի ճիշտ կլինի Քրիմհիլդի կերպարի մեկնաբանության հիմքում դնել մեծ սերը: Ենդվելով նիբելունգյան հին երգերում Քրիմհիլդի կերպարային գծից՝ «Երգի» հեղինակը այս հերոսուհուն տալիս է նոր մեկնաբանություն և նրա արարքները պատճառաբանում զգացմունքով: Մեծ սերը, մահացու կերպով մերժված, վերածվում է ասելության, որը սահմաններ չի ճանաչում: «Երգը» բացահայտում է սիրո ուժի երջանկությունն ու վտանգը: Այս առումով գերմանական հերոսական էպոսը իր ժամանակի ամենամեծ ստեղծագործությունն է: Նա ոչ թե դատապարտում է կիրքը, այլ, կարծես, ի վիճակի է տեսնելու անչափելի մեծը: Քրիմհիլդը առանձնահատուկ կին է՝ միանգամայն տարբեր ասպետական վեպերի տիկնանցից: Նա երազում է բազբի մասին: Ամաչում է սուրհանդակին հայտնել իր սիրեցյալի անունը (դիպված 4) և համաձայնում է ամուսնանալ միայն օրինական բոլոր կանոնները պահելով: Հավատարմութունը իր մեծ սիրուն Քրիմհիլդի բնավորության ամենաէական գիծն է: Եթե հիմք ընդունենք Քրիմհիլդի կերպարը, ապա «Երգը» կարելի է անվանել պոեմ հավատարմության մասին (ավելորդ չէ հիշել, որ այդպես է անվանում իր «Պարցիֆալը» նաև Վ. էշենբախը): Վերջին դիպվածում, երբ Քրիմհիլդը Հագենից խլում է իր սիրեցյալ Ջիզֆրիդի Բալմունգ սուրը և հարվածում ասելի ասպետին, երևում է նրա մեծ սիրո վերջին փայլը:

Հույժ մռայլվեց Քրիմհիլդը. «Դուք ինձանից, չար ասպետ,
 Խլեցիք ողջ ունեցածս: Բալմունգը գեթ տվեք ես,
 Այն կրում էր Ջիզֆրիդն իմ՝ վերջին անգամ երբ տեսա,
 Ապանելով նրան՝ Դուք ինձ ցավ տվեցիք անսահման»:

«Երգում» արարքների և հոգեբանական զարգացումների բավականին ազատ տարածք է ստեղծվում նաև Հագենի համար: Նիդեռլանդական արքայազն Ջիզֆրիդի սպանության սկզբնական մոտիվը Հագենի համար իր թագուհուն՝ Բրունհիլդին հասցված վիրավորանքն է, սակայն հետագայում բացվում են բուրգունգ ասպետի հեռահար նպատակները՝ Ջիզֆրիդի սպանությանը իրենց ձեռքը կանցնեն անսահման հարստություն՝ գանձ ու երկիր, և, բացի այդ, բուրգունգական ասպետները կզրկվեն նիդեռլանդցի ասպետի վտանգավոր մրցակցությունից:

Հագենն ասաց. « Արքա Գուևտեր, արցունք պետք չէ Ձեզ արդեն, Ձէ որ Հիմա ազատ եք Դուք և Հոգսերից զերծ ամեն, Քչերն Հիմա կգտնվեն, որ դեմ կանգնեն Ձեր կամքին, Հպարտ եմ, որ կատարել եմ ցանկությունը ամենքի»:

(933)

Դիցարանական մեկնակետով Հագենն ունի դեմոնական գծեր: Միաժամանակ այս ասպետի բնավորության մեջ անսահման դաժանությունը (իսկ դաժանության ամենացնցող տեսարանը ամենքի աչքի առաջ Քրիմճիլդի դեռատի որդուն գլխատելն է) միախառնված է ինչ-որ ներքին իմաստության և ազնվական Հանդարտության Հետ:

«Երգում» գերմանացի անհայտ բանաստեղծը ցույց է տալիս, որ գիտի, ճանաչում է այն գերբնական ուժերը, որոնք անվանում ենք ճակատագիր: Ծակատագիրն ընդունելու ազատությունը ազնվական Հերոսների ազնվականության առաջին նշանն է, և Հագենի կերպարով Հեղինակը ապացուցում է, որ Հերոսը այն կարող է կրել: Հագենի մեջ մարմնավորված է բուրգունդների ճակատագիրը:

Բարդ, յուրովի Հերոսական կերպարներ են Ռուդիգեր Բելլարենցին և Դիտրիխ Բեռնցին: Երկուսն էլ, չլինելով Հոն, ծառայում են էթցելին: Ռուդիգերը ազնվության և ասպետականության իդեալ է, սակայն Հայտնվելով Հոնների և բուրգունդների (որոնց երկուսի Հետ էլ կապված է պարտքի ու պատվի կապերով) բախման կենտրոնում, նախընտրում է մահը, քան պատվազուրկ կյանքը: Երկուսի Համար էլ ծանրագույն բեռ է և անազնվություն Քրիմճիլդի թելադրանքով թշնամանալը բուրգունդ արքաների և ասպետների Հետ: Երկուսի Հերոսականութունն էլ թե ողբերգական է, թե ազդեցիկ: Վշտոտ տառապալի գծերը Դիտրիխ Բեռնցին անկասկած իր Հետ բերել է Հին երգից: Տառապանքը, տարագրի ծանր ճակատագիրը Դիտրիխին դարձրել են Հոգեպես անդարտ, խաղաղասեր, դիմացկուն: Իր թիկունքին ունենալով մեծ, դրամատիկ անցյալ՝ Հիմա կանգնած է գործերից Հեռու, մեկուսի, չարից և բարուց անդին՝ չափազանց բարձր մի Հերոս, որպեսզի Քրիմճիլդի ձեռքին դառնա սովորական գործիք:

Էթցելը ազնվականացված է:

«Երգը» կառուցված է նաև Հակադրությունների վրա, որոնք առհասարակ անխզելի են միջնադարյան աշխարհընկալումից: Քանի որ մարդկային ապրումները պահպանում են ամբողջականության և անմիջականության գրեթե մանկական աստիճանը, ուստի տառապանքը և ուրախությունը, դժբախտությունը և Հաջողությունը արտահայտվում են շատ ավելի շոշափելի, ուլիխեթ գծերով: Էպոսում, կարծես, ստեղծվում է Հակադրությունների գեղագիտություն, որի Հետևանքով յուրաքանչյուր թուիչքից Հետո սպասելի է

դառնում անխուսափելի կործանումը, յուրաքանչյուր խրախճանքից հետո՝ արհավիրքը: Դրանից մեծանում է ողբերգականությունը՝ «Երգի» հերոսների ոտքերի տակ, կարծես, մշտապես առկա է անկման անդունդը: Եվ դա պատահական չէ: Ամենից առաջ դա կապված է գերմանա-սկանդինավյան դիցաբանության հետ: Ժ. Դյումեզիլի կարծիքով, գերմանական դիցաբանությունը աչքի է ընկնում անհանգիստ, ողբերգական, հոռետես բնույթով, որի նմանը չունեն ոչ Հռոմեացիները, ոչ հնդիկները¹: «Սկանդինավյան դիցաբանության աշխարհը, - գրում է է. Համիլտոնը, - անսովոր է... Այնտեղ տեղ չկա ոչ պայծառ ուրախության, ոչ էլ երանության համար: Սա վայր է, որ հագեցած է մռայլ հանդիսավորությամբ, որի վրա կախված է անխուսափելի մահվան սպառնալիքը: Աստվածները գիտեն, որ վաղ թե ուշ զալու է օրը, երբ իրենք ոչնչանալու են: Նույնը վերաբերում է և ողջ մարդկությանը: Ամենահին առասպելների հերոսները դրվում են կամ հայտնվում աղետի առաջ»²: Դա գալիս է նաև միջնադարյան աշխարհընկալումից, այն դարաշրջանի, որում իրար էին միախառնված «վարդի բույրը և արյան հոտը»³: Շատ հերոսներ, հատկապես կանայք, կանխազգում են ապագա կործանումը⁴: Աղետի զգացումը մշտապես ուղեկցում է հերոսներին, երբ նրանք ձեռնարկում են որևէ գործ: Ջիզբրիդի ծնողները սարսափում են՝ լսելով Քրիմհիլդի համար Բուրգունդիա գնալու իրենց որդու վճռի մասին (դիպված 3): Քրիմհիլդը նույնպես կանխազգում է աղետը, երբ եղբայրը՝ Գունտերը, հայտնում է, թե Բրունհիլդիին հարսնախոսելու նպատակով գնում է Իսլանդիա (դիպված 6): Փորձելով ետ պահել իր որդիներին հոնների երկիր մեկնելու վտանգավոր վճռից՝ արքայամայր Ուտեն ասում է.

Լավ կլիներ, որ մնայիք, տանից չեկներ և ոչ ոք,
ես այս գիշեր երազ տեսա չարագուշակ, սոսկալի,
Մահն էր կարծես տարել բոլոր թուչուններին մեր երկրի:

(1509)

Բուրգունդիներին սպասող կործանումը, նույնիսկ մինչև Ջրահարսներից դա լսելը, կանխազգում է Հագենը (դիպված 23): Ողբերգական հագեցվածությամբ առանձնանում է «Երգի» երկրորդ մասը, ավելի ճիշտ կլինի ասել՝ ողբերգականությունը էպոսի երկրորդ մասում հասնում է իր տրամաբանա-

¹ Ж. Дюмезиль, 138.

² Э. Гамльтон, Мифы и легенды, М, 2003, стр. 433.

³ Хайзинга, 28.

⁴ Տակիտոսը գրում է. «Գերմանացիները գտնում են, որ կանանց մեջ սրբազան ինչ-որ բան կա և որ նրանց յուրահատուկ է մարգարեական շնորհը...» (ՏԱԿԻՏ, ԿՈՄ 2, 357):

կան ավարտին: Ծավալվելով ու զարգանալով դանդաղ (դրան օգնում է և «Երգի» միապաղաղ ընթացքը, կայուն քառատողային տաղաչափությունը, պալատական կենցաղի՝ ընդունելությունների, խրախճանքների, մարզախաղերի մշտապես կրկնվող շարքերը), հետագայում սակայն հասնում է այնպիսի հզորություն, որ ընդգրկում է ամեն ինչ և ամենքին՝ անհատականից վերածվելով ընդհանրական, տիեզերական ճակատագրի: Էպոսում կործանվում են բոլորը՝ ոչ միայն բուրգունդները, այլև հոները: Էթցելի պալատում տեղի ունեցող իրադարձությունները Հագենը անվանում է «մաշվան խնջույք» (1500):

36-րդ դիպվածում Քրիմհիլդը կրակի է մատնում պալատը, որտեղ պատսպարվում են վերջին բուրգունդները: Ծարավից խեղդվող ասպետներից մեկը, Հագենալու համար, խմում է մարդկային արյուն: Դրամատիզմի սքանչելի հատված է նախավերջին դիպվածում Դիտրիխ Բեռնցու և նրա գինակրի՝ Հիլդեբրանդի երկխոսությունը.

Ասաց արքան Հիլդեբրանդին. «Այդժամ ինքս կգնամ
Եվ պատասխան կպահանջեմ բուրգունդներից այս անգամ,
Ասպետներին իմ պատվիրեք՝ զինավորվեն թող մեկին,
Ասեք նաև՝ զենք, զրահս հիմա այստեղ թող բերին»:
Ալեմորուս զինակիրը խոսեց. «Տեր իմ, ու՛մ ասեմ,
Ով որ ողջ է մնացել դեռ, ահա, կանգնած է Ձեր դեմ,
Միայն ես եմ, ում տեսնում եք, մյուսները էլ չկան»:
Եվ այդ բոթից հույժ ահագնեց ազնվազարմ, հեզ արքան:

Ապա կրկին հնչում է Դիտրիխի խոսքը.

Եթե Տերն իմ վերջն է ուզում, էհ, իմ վերջը լինի թող,
Ասեք հիմա, բուրգունդներից մնացե՞լ է մեկը ողջ»:
Հիլդեբրանդը պատասխանեց. «Աստված վկա՛ էլ ոչ ոք,
Գունտեր արքան միայն, մեկ էլ՝ ժանտ Հագենը անողոք»:

Կարծես ի կատար է ածվում մի վերին և արդարամիտ դատաստան, որ չի խնայում ոչ մեկին: Առաջին մասում չնեբրվեց Ջիզֆրիդը իր թույլ տված մեղքի համար, հիմա չեն ներվում բուրգունդները և մյուսները, այսինքն՝ Ջիզֆրիդի մաշվան մեջ արդեն նախանշվում ու ենթադրվում է բուրգունդների կործանումը: Ջիզֆրիդի անեծքը («Թող անիծվի նա, ով ձեզնից պիտի սերվի, գա աշխարհ») պատմական բովանդակություն է ստանում: Բայց դա վերաբերում է ոչ միայն բուրգունդներին, այլև եվրոպական մի շարք հին ժողովուրդների, ինչպեսև հոներին, որոնք ներկայանում են էպոսում: «Եր-

զը» ձեռք է բերում համաձայնական արժեք և կանգնում նույն շրջանում ստեղծված էպիկական մեծ գործերի, Հատկապես «Ռոլանդի երգը» և «Ասք Իգորի գնդի մասին» պոեմների կողքին: Ընդհանուր գծեր տեսնելով Ֆրանսիական «Ռոլանդի երգը», ռուսական «Ասք Իգորի գնդի մասին» և գերմանական «Նիբելունգների երգը» ստեղծագործությունների միջև՝ կարելի է գալ եզրահանգման, որ դրանք Հերոսական պոեմներ են ոչ թե Հաղթանակի, այլ պարտություն մասին: Գերմանական էպոսը ընդհանրություններ է դրսևորում նաև «Սասնա Մռերի» հետ: Երկու էպոսներն էլ բովանդակում են ժողովրդական կյանքի և պատմական ճակատագրի ընդհանրացման ընդհանուր ներուժ և ավարտվում են դյուցազնական տոհմերի ոչնչացմամբ:

Ողբերգական այս հզոր ավարտով (վերջին՝ der Nibelunge Not տողի հիման վրա էպոսը անվանվել է նաև Նիբելունգների ողբը), բուրգունդների և Հոների պատմական վախճանի իմաստավորմամբ «Երգը» ձեռք է բերում անսովոր արժեք՝ կարծես ինչ-որ չափով մոտենալով «Սասնա Մռերի»՝ «Ազգավաքարով» եզրափակվելու խորհրդավոր ու բազմիմաստ վերջերգին:

«Երգում» իբրև գրական էպոս ամենուրեք նկատելի նաև դասական էպոսներին՝ «Իլիականին», «Էնեականին» նմանվելու հակում: Դա երևում է պոետիկայի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դրսևորումներում: Օրինակ, «Երգի» Հերոսները չափազանց անմիջական են իրենց զգացմունքների՝ վշտի կամ ուրախության արտահայտման մեջ՝ դա Հոմերոսյան Հերոսներին յուրահատուկ վարքագիծ է: Հագներ էպոսում ունի Տրոյայեցի ազգանունը: Տրոյայ բնակավայր Գերմանիայում կամ Ավստրիայում չկա: Ենթադրվում է, որ Տրոյայեցի անվամբ Հեղինակը ակնարկում է Տրոյան, որի հետ, իբրև, կապ ունի իր Հերոսը: Յոթերորդ դիպվածում նկարագրվում է Իգենշտայն ամրոցը, որտեղից թագուհի Բրունհիլդը Հետևում է ամրոց եկած անծանոթ ասպետներին, իսկ պալատականներից մեկը նրան մեկ առ մեկ ներկայացնում է եկվորներին: Այս տեսարանը Համադրելի է «Իլիականի» երրորդ երգի այն իրադարձությունների հետ, երբ Հեղինեն Պրիամոսին է ներկայացնում Տրոյայի պարիսպների տակ հավաքված Հունական Հերոսներին: Փոլկեր Ալցայեցին Հոմերոսյան ռապսոդ Դեմոդոկոսի (որի մեջ մասնագետները ենթադրում են հենց իր՝ Հոմերոսի կերպարը) նմանակն է: Նա (Փոլկերը՝ Ա. Ա.) videlaere է,՝ գրում է Հոյսերը,՝ այսինքն՝ ջուրթակաճար, շպիման, և մեր ավստրիացի բանաստեղծը ի դեմս նրա փառաբանում է իր սեփական արվեստը»¹: Հերակլեսի կողմից ամազոնուհիների թագուհի Հիպոլիտեի կախարդական գոտու առևանգման մոտիվը կարելի է տեսնել «Երգի» այն միջադեպում, երբ Զիգֆրիդը, հազիվհաս ընկճելով ռազմիկ կին Բրունհիլդին, գողանում է նրա գոտին ու մատանին: Կարելի է մատնանշել զու-

¹ Хойслер, 112.

զահեռ ևս մեկ մտտիվ. «Իլիականում» Աքիլեսը պատերազմի մեջ է մտնում միայն իր քնկերոջ՝ Պատրոկլեսի զոհվելուց հետո Դիտրիխ Բեռնցիին նույնպես մասնակցում է մարտերին միայն այն բանից հետո, երբ սպանվում է իր մտերմագույն ընկերը՝ Ռուդիգերը:

«Երգի» պոետիկայի վրա հատկապես մեծ է պալատական-ասպետական մշակույթի ազդեցությունը, որ երևում է ասպետական գրականությունը յուրահատուկ լեզվաոճական ձևերի, խորհրդանիշների, մոտիվների գործածություն և հատկապես տաղաչափության մեջ:

Այսպես, էպոսում գլուխները անվանվում են *Aventiure*, որ բառացի նշանակում է արկած, դիպված, որ շատ բնորոշ է ասպետական վեպին:

Այստեղ մեծ տեղ ունեն խորհրդանիշները, որոնք «Երգին» են անցել կամ հին պոեմներից, կամ նոր են, հեղինակի մտահղացման արդյունք: Առաջիններից են բազբի, երազի, անտես թիկնոցի մոտիվները, որոնք կարելի է լայնորեն հանդիպել միջնադարյան գերմանական գրականության մեջ:

«Երգում» շատ խոսուն խորհրդանիշ է մահացած Ջիզֆրիդի վերքի բացվելը և արյամբ պատվելը, երբ մահացածին է մոտենում ոճրագործը՝ Հագենը¹: Հին խորհրդանիշներից են նաև գոտին և մատանին, որոնք Բրունհիլդից ճակատագրական գիշերը խլում է Ջիզֆրիդը և հանձնում կոտլը՝ Քրիմհիլդին: «Հնազույն խորհրդանիշների համաձայն, - նշում է գրականության պատմաբանը, - մատանու և գոտու առևանգմամբ Բրունհիլդը զրկվում է կուսությունից, ուստի վեճի ժամանակ Քրիմհիլդի կողմից Բրունհիլդին հարձ անվանելը (*Kebsse*) ունի իրական հիմքեր»²: Հզոր, արտահայտիչ խորհրդանիշներ են գետանցից հետո Հագենի կողմից նավը ջարդուփշուր անելը, էթցելբուրգում բուրգուհուների սպառազեն եկեղեցի մտնելը, Քրիմհիլդի սև կերպարանքը ողջ երկրորդ մասում (դրանց թիվը կարելի է շարունակել), որոնք նոր են, սակայն գեղարվեստական կատարելությունամբ ոչնչով չեն զիջում հներին:

Ինչպես բոլոր էպոսներին, «Երգին» նույնպես յուրահատուկ է նաև հիպերոլան (որսի ժամանակ Ջիզֆրիդը սպանում է մեկական կինճ, առյուծ, բիզոն, որմզդեղն, եղջերու, վարազ, արջ և չորս վայրի ցուլ): Հագենը մենամենակ լաստով Դանուբով անց է կացնում 9000 զինվոր և 1000 ասպետ, հարսնախոսի մեկնող չորս ասպետների համար Գունտերը պատվիրում է պտորաստել 48 ձեռք զգեստ՝ չորս օրվա մեջ նրանք իրենց զգեստները

¹ Հավանաբար, կելտական մշակույթից մնացած պատկերացում է, որ տարածված է եղել եվրոպական ժողովուրդների մեջ: Նման մի պատկեր կա Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպում: «Օհ, ամենի վասիլիսկ այս լեռների, նրա համար ես եկել, որ տեսնես, թե քո մոտենալուց կթափվի՞ թե չէ արյունը այս դժբախտի վերքերից» («Դոն Կիխոտ», 1, 108): Այդպիսի պատկեր կա և Հարդման Փոն Աուեի «Իվեյն» վեպում:

² *Deutsche Literaturgeschichte*, Band I, Taschenbuch Verlag, 2000, s. 175.

պետք է փոխելին երեքական անգամ՝ ամեն անգամ ներկայանալով նոր գրեեստով:

Ինչ վերաբերում է «Երգի» տաղաչափությանը, ապա այն հիմնավորապես գալիս է միննեզանգից, մասնավորապես Կյուրենբերգից, որը ժամանակակիցն էր ու Համերկրացին «Երգի» հեղինակի: Բայց եթե Կյուրենբերգի բանաստեղծությունները բացառապես սիրային բովանդակություն ունեին, ապա «Երգով» կյուրենբերգյան քառատողի Համար բացվում է նոր՝ էպիկական ասպարեզ: Տաղաչափության մեջ այսօր Հայտնի նիբելունգյան տունը կառուցվում է չորս երկար տողից, որոնցից յուրաքանչյուրը կիսվում է երկու Հավասար մասի, կիրառվում է Հանգավորման 22 ի տարբերակը:

Միջնադարում ամենից շատ ընթերցվող «Նիբելունգների երգը» (ինչը վկայում են նրա բազմաթիվ ձեռագրերը) մինչև 18-րդ դարը մնում է անհայտության մեջ: Անգամ Յո. Բողմերի Հրատարակությունից հետո, որն առաջինն էր նոր ժամանակներում, էպոսի նկատմամբ վերաբերմունքը գրեթե մնաց նույնը: Այն լույս տեսավ 1757թ. «գրապայքարի» թեժ տարիներին և Հրատարակչի կարծիքով կարևոր ներդրում կարող էր ունենալ Գերմանիայում գրական միտքը դեպի ազգային ավանդները շրջելու գործում: Էպոսի լիակատար Հրատարակությունը իրականացրեց Քր. Միլլերը 1782թ., սակայն գիրքը արժանացավ պրուսական Ֆրիդրիխ 2-րդ թագավորի ծաղրին¹: Անգամ Յո. Գյոթեն «Նիբելունգների երգին» մոտեցավ գեղարվեստական մեթոդով և բավականին ուշ: Թոմաստիզմի դարաշրջանը լայն հնարավորություններ բացեց էպոսի ճանաչման և արժևորման համար: Նախ, Կարլ Լախմանի Հրատարակությունը (1826), որով հիմք է դրվում «Երգի» քննական պատմությանը, ապա Կարլ Ջիմրոկի թարգմանությունը արդի գերմաներենի (1827) էպոսը դարձնում են գերմանական Հանրությունը լայնորեն Հայտնի: Այսօր արդեն «Երգի» չափածո, արձակ և ազատ թարգմանությունները Հաշվվում են տասնյակներով: 19-20-րդ դարերում «Նիբելունգների երգը» Հաճախակի նյութ է դառնում գրականության և արվեստի ստեղծագործությունների համար (Վազների օպերաներից, Հեբբելի դրամաներից մինչև Ֆ. Լանգի Հայտնի երկամասնոց կինոնկարը (1924) և Հ. Մյուլլերի «Մահը Բեռլինում» պիեսը 1978):

Այս ամենին զուգահեռ «Նիբելունգների երգը» դառնում է նաև գիտական քննության նյութ, գերմանական բանասիրության կարևորագույն ուղ-

¹ Հրատարակիչ Միլլերին Ֆրիդրիխ 2-րդը պատասխանում է, որ նրա Հրատարակած գիրքը մի բուռ վառողի պայթյուն անգամ չարժե և արժանի չէ մաքրվելու մոռացության փոշիներից: «Համենայն դեպս, - գրում է թագավորը, - իմ գրադարանում նման անարժեք երևույթի առկայությունը ես չեմ հանդուրժի և դուրս կչպրտել: Ուստի այն վերադարձնում եմ ձեզ՝ ձեր գրադարանին ի պահ: Դա է նրա ճակատագիրը: Ավելին ոչինչ ասել չեմ կարող: Ձեր ողորմած տեր Ֆրիդրիխ. Պոստգամ, 22 փետրվարի, 1784 թ.»:


դուրբյուններից մեկը: Կ. Լախմանը, որ Հանրահայտ Ֆ. Վոլֆի աշակերտներից մեկն էր, Հոմերոսյան էպոսի մասին վերջինիս տեսության նմանությունամբ ստեղծեց մի վարկած (1816), որի Համաձայն «Նիբելունգների երգը» միասնական և ամբողջական տեքստ չէ, այլ հին էպիկական պոեմների մեխանիկական միավորում:

Դիցարանական դպրոցի (Շելինգ, Շելեգել եղբայրներ և այլք) կողմից զարգացվեց «Երգի» ծագման և մեկնաբանության դիցարանական վարկածը, որով առաջնությունը տրվում էր նիբելունգյան ասքի ստեղծման սկանդինավյան տարբերակներին: Հենվելով «Երգի» վրա՝ Ֆ. Շելլինգը, Ա. Շելեգելը խոսում էին ազգային բնավորության վերածննդի Հնարավորության մասին: 19-րդ դարի երկրորդ կեսին մերժվեցին ոչ միայն «Երգի» ստեղծման Լախմանի, այլև դիցարանական վարկածները (Ա. Հոլցման, Ֆ. Ցարնկե, Է. Իեսսեն, Վ. Հոլտեր): Հակադրվելով Կ. Լախմանին՝ Ադոլֆ Հոլցմանը 1854թ. առաջարկեց մի վարկած, որի Համաձայն «Երգի» Հնագույն օրինակից բացի գոյություն է ունեցել նաև բնագիր (Stemmata), որից ծագել են նախ Հնագույն օրինակը, ապա A, B, C ձեռագրային տարբերակները: Հոլցմանի կարծիքով բնագրին առավել մոտ է C տարբերակը, իսկ Հնագույն օրինակին՝ B-ն: Նիբելունգյան տեքստերի Հետազոտման նոր փուլ են ներկայացնում Կ. Բարչի ուսումնասիրությունները (1865): Բարչի կարծիքով նույնպես Հնագույն օրինակին առավել մոտ է B տարբերակը: Ի դեպ, այս տարբերակի վրա է Հիմնված Հելմուտ դե Բոորի մշակումը (1967), որից էլ կատարված է ներկա թարգմանությունը: «Երգի» ձեռագրային տարբերակների Համեմատական և Համընդգրկուն ուսումնասիրությունը առ այսօր Վիլհելմ Բրաունինն է (1900): 20-րդ դարասկզբին նիբելունգագիտության մեջ անհամեմատ մեծ է Անդրեաս Հոյսլերի ծառայությունը, որի Հիմնարար աշխատությունները լույս են սփռում ինչպես «Երգի» ստեղծման, նախնական երգերի Հետ առնչությունների, սկանդինավյան ասքերի Հետ կապի, նրա Հեղինակի, այնպես էլ բազմաթիվ այլ Հիմնախնդիրների վրա: Ա. Հոյսլերի տեսակետները և վարկածները թեև այսօր Հիմնականում չեն մերժվում, սակայն նիբելունգագիտության բուռն զարգացման Հետևանքով նա արդեն դասական է: 20-րդ դարում ի Հայտ եկան «Երգի» մեկնաբանման նոր տեսակետներ (Հ. Բրակերտ, Օ. Էհրիզման, Հ. Շնայդեր, Մ. Գուրշման և այլք):

ՆԻՐԵԼՈՒՆ ԳՆԵՐԻ ԵՐԳԸ

«ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐԻ ԵՐԳՈՒՄ» ՀԻՇՍԱՏԱԿԱԾ ՏԵՂԱԿԱՅԲԵՐԸ

- Ortsnamen zum Nibelungenlied
- (1) Metz, (2) Xanten, (3) Alzei, (4) Worms, (5) Speyer,
 - (6) Lorsch, (7) Großheuring, (8) Eiting (Keilsbachquellen),
 - (9) Pförting, (10) Regensburg, (11) Pfarting, (12) Passau,
 - (13) Eferding, (14) Enns, (15) Föchlarn, (16) Melk,
 - (17) Mautern, (18) Traismauer, (19) Tulln, (20) Zeischmauer,
 - (21) Wien, (22) Hainburg, (23) Wieselburg/Moson (Mosonmagyaróvár),
 - (24) Gran (Ezselburg), (25) Budapest



ԴԻՊՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Վորմսի արքունիքը

1. Շուայլ են շատ ասքերն Հնոց, որ պատմում են մեզ բազում
Հրաշք անցքեր քաջաց կյանքից փառաբանված, դյուցազուն
Խինդից նրանց, խնջույքներից ու ցավերից սրտկեղեք,
Նաև դաժան կռիվներից՝ արդ, ունկ դրեք ու լսեք:
2. Մեծանում էր Բուրգունդիայում սեզ աղջնակ մի լուսե,
էնքան չքնաղ, որ ոչ մեկը դեռ նմանը չէր տեսել,
Քրիմճիլդ էր անունը, նա դշխո դարձավ աննման,
Հանուն նրա շատ ասպետներ կսկիծ տեսան, տեսան մա՛հ:
3. Ամենքին էր կախարդում նա գեղեցկությամբ Հոգեթով,
Շատերն էին ձեռքը խնդրում, չկար մեկը իր սրտով,
Հմայք ուներ անչափելի, մարմնով՝ ծաղկուն ու դալար,
Բայց և Հոգու շնորհներով օրինակ էր ու տիպար:
4. Երեք արքա եղբայրները, իրենց փառքով մեծանուն,
Հոգում էին նրա մասին ու սիրառատ խնամում,
Գունտերն ավագ, Գերնտոր և Գիգելհերը պատանյակ,
Եվ ծաղկում էր Քրիմճիլդը, շուք էր առնում ու հասակ:
5. Բարի էին արքաներն այդ, բարձրատոհմիկ, մեծազարմ,
Ասպետական գործերի մեջ չկար նրանց հավասար,
Եվ տերն էին Բուրգունդիայի եղբայրներն այդ քաջածին,
Որ էթցելի Հոգում հետո անթիվ հոներ ջարդեցին:
6. Վորմսում էին նստում՝ ափին Հռենոսի բարձրադիր,
Շրջապատված իշխաններով, ասպետներով քաջընտիր,
Նրանց կյանքի ժամանակը կանցներ այդպես՝ ցավից զերծ,
Թե զույգ տիկնանց մի չար վեճից չգտնեին մահն իրենց:

7. Նրանց մայրն էր Ութեն ազնիվ՝ բարեհամբավ թագուհին,
Դանկրատն՝ Հայրը, թեև արդեն ավանդել էր իր Հոգին,
Սակայն նա էլ քաջ կուվող էր և կորովով իր անհուն
ժառանգել էր որդիներին թե ճոխ երկիր, թե անուն:
8. Երեք արքա եղբայրները, ինչպես արդեն պատմեցի,
Ջորեղ էին անասելի, իսկ ասպետներն՝ առնացի
Մի-մի հսկա հաղթաբազուկ, հանց առյուծներ կուվում թունդ,
Ջէին տեսել իրենց օրում ոչ վախ, ոչ էլ պարտություն:
9. Մեկն Հագենն էր Տրոնյեցի, ու եղբայրն իր արնակից՝
Դանկվարտը արագատք և քաջ Օրտվայնը Մետցից,
Մարկարաֆն էր Գերեն, նաև էկեվարտը նրա հետ,
Անդ էր Յուկեր Ալցայեցին՝ շատ անվանի մի ասպետ:
10. Խոհարարը Թումոյուն էր՝ հավատարիմ, անձնվեր,
Իսկ Ջինդուղը և Հունուղը՝ քաջազմուտ, օր-գիշեր
Հոգում էին, որ պալատում կյանքը լինի փառաշուք,
Ու դեռ էլի ինչքան կային, որոնց հիմա չեմ հիշում:
11. Ախոռապետն էր Դանկվարտը, իսկ Օրտվայնը ժրաջան
Սենեկապետն էր՝ արքունի հոգսերի մեջ անվախճան,
Անկողնապետն էր Հունհուղը, և Ջինդուղը՝ մատուվակ,
Եվ ամենքն էլ՝ պալատական վարք ու բարքին քաջ գիտակ:
12. Փայլի մասին նրանց գահի և համբավի տարածված,
Եվ գործերի մասին նրանց՝ արքաների, ասպետաց,
Որ օրն ի բուն տրվում էին զինախաղի ու խինդի,
Մ'վ կարող է մեկ-մեկ պատմել՝ դրանք շատ են ու անթիվ:
13. Եվ գեղանի Քրիմհիլդը տեսավ մթին մի երազ,
Իբրև ինքը բազե ուներ՝ ուժեղ, վայրի և անհաս,
Սակայն նրան իր աչքի դեմ հոշտեցին, օ, սուկում,
Երկու արծիվ: Այդքան մեծ ցավ չէր տեսել նա դեռ կյանքում:
14. Արթնանալով՝ նա երազը պատմեց մորը՝ թագուհուն,
Մայրը մեկնեց այդ երազի խորհուրդը՝ չար ու թաքուն.
«Բազեն, որ դու խնամել ես, ասպետն է քո պատվարժան,
Բայց թե Աստված չկամենա, կկորցնես դու նրան»:

15. «Օհ, ինչ ասպետ, սիրելի մայր, օտար մնա ինձ պիտի Սերն ասպետի, տղամարդու՝ փափազն ահա իմ սրտի, Ուզում եմ հար անհոգ ապրել մինչև օրը իմ վերջին, Որ ասպետի սիրո ցավը ինձ երբևէ չտանջի»:
16. «Նստասիրտ մի եղիր այդքան, — ասաց մայրը մտախոհ, — Թե ուզում ես այս աշխարհում բախտի աստղը գտնել քո, Պիտի փնտրես լոկ ասպետիդ գգվանքներում առնացի, Քանզի նրա սիրով միայն կդառնաս կին գեղեցիկ»:
17. «Բավ է խոսենք այդ մասին, մայր, — ասաց կույսը վերստին, — Տես, թե որքան աղջիկներ կան, որ սիրելով ասպետի, Վաստակել են լոկ արցունքներ, ուստի հեռու պիտ մնանք երկուսից էլ՝ ոչ սեր, ոչ էլ դառնակսկիծ տառապանք»:
18. Քրիմհիլդը մերժեց սերը զգաստությամբ ամենայն, եվ տարիներ անցան այդպես՝ անհոգության մեջ, անձայն, Ջկար մեկը, որին ցանկար իբրև տերը իր հոգու, Մինչև ասպետն ինքը գտավ իր երազած թագուհուն:
19. Դա բազեն էր, այն նույն բազեն, որ տեսել էր երազում, Բայց նա որքան դաժանորեն վրժժն առավ իր բազում Ջարմիկներից, որ ասպետին իր մատնեցին կորստյան, Մահվան համար մի ասպետի որքան քաջեր մահ գտան:

ԴԻՊՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Զիգֆրիդ

20. Մեծանում էր մի արքայազն Նիդեռլանդներ երկրում հին, Նրա հայրն էր Զիգմունդ արքան, մայրը՝ Զիգլինդ թագուհին, Գեղեցկաշուք ամրոց ուներ՝ փառքով հայտնի ամեն տեղ, Ափին ստորին Լոեննոսի և անունով՝ Քսանտեն:
21. Նրա անունն էր Զիգֆրիդ: Արքայազնն այդ քաջարի Տենչում էր միշտ ուժը փորձել մարտում՝ ընդդեմ քաջերի, Շրջում էր ու փառք որոնում՝ հանդգնությամբ անհնար, Լեյ, ինչքան շատ քաջեր տեսավ Բուրգունդիայում հետո նա:



ԴԻՊԿԱԾ

ԵՐԿՐՈՐԴ

22. Դեռ պատանի բոլորովին, բայց ամեն տեղ զարմանքով, խոսում էին նրա մասին, շնորհներից նրա ծով, Թե ինչպես են ուժով լցվում միտքն ու մարմինը ջահել, եվ թե ինչպես տիկնանց արդեն սկսում էր հմայել:
23. Նա սովորեց կիրթ պահվածքի, որ պատշաճ էր իր դասին, եվ ուր հարկն է՝ զարդարում էր քաջությունը բնածին, Նա դարձել էր պարծանքն արդեն իր երկրի հայրական, եվ գիտեին ամենքն արդեն՝ հետնորդ ունի հայր արքան:
24. Եվ երբ հասակ առավ այնքան, որ կարող էր գալ պալատ, Սիրով նրան ընդունեցին, իսկ կույսերը սիրառատ Ջգում էին, որ պատանին թովիչ է շատ, ցանկալի, եվ շատերն էլ, զգում էր նա, իրեն էին դուր գալիս:
25. Եքսիմբով էր շրջում նա՝ ժառանգորդը հոր գահի, Հագնվում էր լոկ պատվերով մայր թագուհու, արքայի, Կրթում էին նրան նաև իմաստուններ, գիտուններ, Ջէ՞ որ շուտով պիտի դառնար երկրի ու մարդկանց տեր:
26. Արդ հասուն էր Զիգֆրիդը ու կարող էր զենք կրել, Զի բնատուր շնորհներով վաղ լցվել էր, զորացել, Ծառայում էր չքնաղ տիկնանց, աչք չէր կտրում նրանցից, Տիկիներին էլ ի՞նչ էր պետք՝ պատանու պես սրտակից:
27. Այդժամ ելավ և յուր մարդկանց պատվեր տվեց ծեր արքան, Որ Քսանտեն՝ մեծ հանդեսի, իշխանները շտապ գան, Մարդիկ ճամփեց յուր երկրի սահմաններից էլ անդին, Որ հաղորդեն, թե բաշխում է ճոխ ընծաներ ամենքին:
28. Տոհմիկ դասի զավակները, որ ունեին աստիճան, Կարող էին օժվել ասպետ՝ հնոց կարգի համաձայն, Կանչեցին ու բերին պալատ հրամանով արքայի, Զիգֆրիդի հետ նրանց էլ ասպետի սուր պիտ տային:
29. Արքայական տոնի մասին պատմում էին հրաշքներ, Թագավորը ու թագուհին՝ մեկը մեկից լիաձեռ, Բաշխում էին թանկ նվերներ, ոսկի, արծաթ ու գոհար, Ահա ինչու էր մեծ տոնին մարդիկ կային անհամար:

30. Ձրոս հարյուր սեգ պատանիներ, ասպետացու, սրակիր,
Զիգֆրիդի հետ միասին հանդերձ հազան հատընտիր,
Տքենել էին դրանց վրա քանի կույսեր ոսկեձեռ,
Ընդհուլգել քարը ոսկով, զարդ կազմելով՝ առուցել:
31. Եվ կարեցին հետո զարդերն հանդերձներին՝ կարգ էր դա,
Այդպես պետք է հազնվեին ասպետները նորընծա,
Պատվեր տվեց արքան, որ լայն տեղ պատրաստեն հանդեսի,
Արևադարձ օր էր, երբ որ պատանիներն օձվեցին:
32. Եկեղեցի նախ գնացին պատանիներն անհամբեր,
Եվ նրանց հետ ամենուրեք՝ շատ անվանի ասպետներ
Քայլում էին ու ծառայում՝ ինչպես ծեսին էր վայել,
Այդպես մի օր ավագները իրենց էին ծառայել:
33. Նրանք այդ օր հանուն Աստծո լսեցին սուրբ պատարագ,
Օղակել էր ասպարեզը ժողովուրդը հասարակ,
Ամենքն էին ուզում տեսնել կարգով հնոց, խկական
Շուքն հանդեսի ասպետօժման, այն, որ հիմա էլ չկա:
34. Ապա եկան ասպետները արքայական մեծ պալատ,
Որտեղ գտան շատ նժույգներ՝ թամբած արդեն ու պատրաստ,
Եվ գավիթում վառվեց գուլպար՝ ասպետական խաղն իրենց,
Որ աղմուկով ու թնդյունով արքունիքը ողջ լցրեց:
35. Ավագ, կրտսեր՝ այնպես էին իրար վրա խոյանում,
Որ սրերի թուևդ շառաչը մինչ երկինք էր բարձրանում,
Ճեղքում էին նիզակները օդը թափով և հանկարծ
Նրանց հուժկու հարվածներից ջարդվում էին, թափվում ցած:
36. Երբ արքայի նշանի հետ գինախաղը ավարտվեց,
Նժույգներին տարան հեռու, ասպարեզը երբ բացվեց,
Զարդուփշուր տեսան անթիվ գեներ զրահներ ամենուր,
Եվ շողում էր խոտը՝ թափված զարդերի մեջ ականակուռ:
37. Թագավորն իր թանկ հյուրերին պալատ տարավ՝ խնջուլքի,
Զի ծանրաբեռ սեղանները կանչում էին ամենքին,
Ընտիր գինին գետի նման և ուտեստներն անհամար,
Արբեցրին ամեն մեկին՝ թե յուրային, թե օտար:

38. Եվ խնջույքը ձգվեց հետո ամբողջ օրը դաշտում բաց, Եկան նաև երաժիշտներ՝ թափառասներ, երգասաց Եվ ստացան ճոխ ընծաներ ու նվերներ փառահեղ, Որ անունը թագավորի հռչակեին ամեն տեղ:
39. Եվ արքայի կամքով այդօր Ջիգֆրիդը՝ քաջարին, Եղավ անչափ առատածեռն, բավարարեց բոլորին, Բաշխեց անթիվ հող ու ամբողջ ընկերներին իր ասպետ, Եվ ամենքն էլ ուրախ էին, որ եկել են Քսանտեն:
40. Ծոթ օր թնդաց խրախճանքից թագավորի ամբողջն հին, Եվ յոթ օրում ամենից շատ շուայլ եղավ թագուհին, Ջէր խնայում դեղին ոսկին խոհեմ Ջիգլինդը բնավ, Ջի ուզում էր որդու հանդեպ շահել հարգանք, սեր անբավ:
41. Քսանտենից չհեռացավ ոչ մի երգիչ ձեռնունայն, Ջի և հանդերձ բաշխում էին առատությամբ ամենայն, Կարծես նրանց այս աշխարհում մնացել էր լոկ մի օր, Եվ տեսե՞լ էր մեկն այդպիսի շուայլություն անսովոր:
42. Երբ Հյուերերին ճամփեցին տուն հարգ ու պատվով առանձին, Եվ երբ անցավ մի ժամանակ, իշխանները ասացին, Թե ուզում են գահին տեսնել արքայորդուն նորասպետ, Բայց քաջարի Ջիգֆրիդը համաձայն չէր նրանց հետ:
43. Քանի ողջ է Ջիգմունդ հայրը և մայրը իր Ջիգելինդ, Թագ չի կրի Ջիգֆրիդը՝ որդին նրանց սիրելի, Բայց թե մի օր արհավիրքը իր երկրին սպառնա, Ահեղ կռվում հոր փոխարեն սուր կվերցնի արդեն նա:

ԴԻՊԼԱՄ ԵՐՐՈՐԴ

Թե ինչպես Ջիգֆրիդը եկավ Վորմս

44. Եվ ասպետին վիրտն համակեց, երբ որ մի օր լուր առավ, Թե ապրում է Բուրգունդիայում գեղեցկությամբ իր անբավ Մի լույս աղջիկ՝ այնքան չքնաղ, կարծես ծնված երազից, Բայց աղջիկն այդ նրան բերեց թե խնդություն, թե թախիծ:

45. Ամենուրեք խոսում էին գեղեցկուհուց բուրգունդցի, Շնորհնեբրից ազնվական, վարքից նրա խելացի, Կախարդել էր գեղեցկուհին ասպետների մեծաթիվ, Նրանց համար Վորմս գալը թե բաղձանք էր, թե պատիվ:
46. Տենչում էին ձեռքը նրա շատ ասպետներ փառավոր, Սակայն այդքան քաջերի մեջ նա չէր գտնում մեկին, որ Իր Հոգու մեջ տեղ տար նրան, սրտանց սիրեր, նվիրվեր, Ձէր ճանաչում նա դեռ նրան, որի համար էր ծնվել:
47. Եվ Զիգլինդի որդին շուտով դարձավ անխոս ու անքուն, Մոռացել էր նա բոլորին, Քրիմհիլդին էր լուկ մտքում, Մառայել էր ուզում նրան ազնվազարմ պատանին, Եվ Հեռու չէր այն օրը, երբ Քրիմհիլդին առավ կին:
48. Երբ որ խոսք էր գնում սիրուց և Հարսնացու կույսերից, Խորհուրդ էին տալիս նրան Հարազատ ու զինակից. Ինքը պետք է արժանիին ընտրի կանանց մեջ բազում, Եվ վճռեց Զիգֆրիդը. «Քրիմհիլդին եմ ուզում:
49. Բուրգունդիայի գեղեցկուհուն, ջահել դստերն արքայի, Ջքնաղ է նա, ազնվազարմ, Հենց նա է ինձ արժանի, Մեծ կայսրն էլ եթե անգամ կին ունենալ ցանկանար, Ապա Հանուն գեղեցկուհույան նրա դուռը կգնար»:
50. Երբ խոսքերն այս եկան Հասան Հայր արքայի ունկն արթուն, Եվ իմացավ ցանկութունը ու վճիռը իր որդու, Քանզի այդ էր արքունիքում խոսք-գրույցի առարկան, Սաստիկ տրտմեց Զիգմունդ արքան ու մտքերի մեջ ընկավ:
51. Լուրը առավ նաև մայրը՝ ազնվազարմ թագուհին, Նա էլ տխրեց ու վշտացավ որդու համար թանկագին, Կանխազգում էր սիրտը նրա՝ փորձանք կգա Գունտերից, Աղաչում էր, խնդրում որդուն, որ Հետ կանգնի իր մտքից:
52. Բայց բռնկուն Զիգֆրիդն ասաց. «Սիրելի Հայր թագավոր, Կամուսնանամ ես նրա Հետ, ում սիրում է սիրտս խոր, Իսկ սիրում է սիրտս նրան, նրանից զատ՝ ոչ մի կին, Եվ ետ պահել ինձ իմ վճռից՝ չի հաջողվի ոչ մեկին»:

53. «Թե չես ուզում միտքդ փոխել, — ասաց Հայրը մտախոհ, — Ապա ես էլ, որդիս, անշուշտ, համաձայն եմ վճռին քո եվ ուզում եմ օգնել, որ դու մի օր հասնես բաղձանքիդ, Ուստի գիտցիր՝ շատ Հպարտ եմ ասպետները բուրգունդցի:
54. Ով չլինի՝ Հագենը կա: Ասպետը այդ աններում Փորձառու է, մանրախնդիր՝ արքունական գործերում, Վախենում եմ նրա ձեռքից վաղը սաստիկ տառապենք, Եթե փորձենք Հարսնախոսել ՔրիմՀիլդին մի օր մենք»:
55. «Նա մեզ ինչպե՞ս կխանգարի, — Զիգֆրիդը ծիծաղեց, — Ինչ պետք է ինձ՝ կառնեմ սիրով, թե հակառակ կանգնեն հենց, Կառնեմ զոռով, ուժով բազկիս, ինչպես քաջաց է օրեն, Եվ դրա հետ՝ երկիր ու գահ՝ այն ամենը, ինչ ունեն»:
56. «Թե խոսքերդ հասնեն բուրգունդ ասպետների ականջին, Դու չես տեսնի ոչ մի երկիր, չես տիրանա ոչնչի, Ցավում է իմ սիրտը, որդիս, — Զիգմունդն ասաց տիրադեմ, — Գունտեր, Գերնոտ արքաներին ճանաչում եմ, լավ գիտեմ:
57. Եվ ուժով էլ կին չես առնի, — շարունակեց Հայր արքան, — Կարգը գիտեմ, դու ինձ լսիր. իսկ ուզում ես թե այդքան Ուժդ փորձել, մեկնիր Բուրգունդ ասպետների հետ սրտոտ, Լավ զինվորներ կտամ ես քեզ՝ ճամփաներին քաջ ծանոթ»:
58. Արքայազնը ընդդիմացավ. «Իմ սրտով չէ, — ասաց նա, — Որ Հռենոս գնամ զորքով, զինվորներով անհամար, Արշավանքի հո չեմ ելնում: Վայել չէ, որ Ձեր որդին Զորքով առնի սիրտը քնքուշ, ազնվազարմ օրիորդի:
59. Ես կնության կառնեմ նրան միայն սիրով իմ հոգու, Եվ կմեկնեմ Բուրգունդիս իմ ասպետներով տասներկու: Օգնեք միայն ասպետներին՝ Հազնվեն ըստ պատշաճի»:
Եվ տվեցին նրանց կտոր՝ ախորժ սրտին ու աչքին:
60. Երբ լուր առավ այս ամենից ազնվազարմ թագուհին, Զուրախացավ սիրտը բնավ, այլ հանձնվեց մուժ ահին, Վախենում էր նա Գունտերից, նրա զորքից անհատնում, Ուստի անվերջ արտասվում էր, որդու համար տագնապում:

61. Զիգֆրիդը գնաց մոր մոտ, գտավ նրան առանձին,
Եվ սիրառատ խոսեց հետը. «Մայր թագուհի, թանկագին,
Մի արտասովից ինձ համար Դուք, մի վշտացեք հանուն ինձ,
Ես անվնաս կդառնամ տուն, չեմ երկնչում ոչ մեկից:
62. Լավ կլինի՝ չարտասովից, այլ ճանապարհին պետքն հոգաք,
Ասպետներին համար գտնեք ճոխ զգեստներ, հանդերձանք,
Վորմսում չէ՞ որ պիտի կանգնենք արքաների դեմ ազնիվ,
Դրա համար պետք է, որ մենք զգեստ կրենք արժանի»:
63. «Քանի որ չես ուզում փոխել միտքդ, — ասաց թագուհին, —
Ուստի կօգնեմ ճամփիդ համար, միամորիկ զավակ իմ,
Կպատրաստեմ ձեզ հանդերձներ՝ փառահեղ ու ճոխ այնքան,
Որ չեն տեսել իրենց օրում ոչ մի ասպետ ու արքա»:
64. Խոնարհ գլուխ տվեց նրան արքայազնը բարեկիրթ,
Ասաց. «Ես չեմ ուզում վերցնել զինվորներից ոչ մեկին,
Լոկ տասներկու քաջ ուղեկից՝ բարետես ու ինձ ճանաչ,
Տեսնել եմ ես ուզում արդեն Քրիմհիլդին օր առաջ»:
65. Եվ նստեցին գիշեր ու զօր աղջիկները ոսկեմատ,
Մոռանալով քուն ու հանգիստ, աշխատելով անընդհատ՝
Պատրաստեցին Զիգֆրիդի զգեստները փառավոր,
Եվ չէր ուզում արքայազնը կորցնել արդեն ոչ մի օր:
66. Եվ ընծայեց հայրը որդուն զենք ու զրահ, հանդերձանք,
Որ Բուրգունդիա մեկնի որդին հագած-կապած հենց դրանք,
Ընծայեց և մյուսներին զենքեր ընտիր, ոսկեզարդ,
Զէր խնայում արքան ոչինչ՝ կապարճ, սուսեր, սաղավարտ:
67. Ահա հասավ ժամը նրանց, ովքեր պիտի մեկնեին,
Եվ պատրաստած զենք ու հանդերձ գրաստներին բեռնեցին,
Մեկն էր միայն մտածմունքը և տազնապը ամենքի՝
Ի՞նչ կլինի բախտը նրանց, ետ կդառնա՞ն հայրենիք:
68. Նրանց ձիերն ընտիր էին, ասպազենը՝ շողշողուն,
Որտե՞ղ կային նման քաջեր, ո՞ր երկրի մեջ, ո՞ր հողում,
Նայում էին նրանց վրա, ցնծում էին տեսքով չեն,
Արքայազնը խնդրեց այդժամ թույլ տան իրենց, որ մեկնեն:

69. Թագավորը և թագուհին՝ արցունքների մեջ կանգնած, Որդին հույս էր տալիս նրանց, քաջալիբրոժ սրտաբաց. «Իմ պատճառով դուք մի տխրեք, մի արտասովեք լալագին, Անհոգ եղեք, ոչ մի վտանգ չի սպառնա իմ կյանքին»:
70. Լալիս էին նրանց համար ջահել կանայք, նորահարս, Կարծես իրենց սրտում նրանք զգում էին վերահաս Աղետը, որ շատերն արդեն ետ չեն դառնա երբեք տուն, ձիշտ էր զգում սիրտը նրանց՝ աղետ եղավ չարագույն:
71. Յոթերորդ օրն, առավոտյան, քաջերն հասան գետափին, Վորմսը մոտ էր: Նրանց ամբողջ հանդերձանքը, հանց արփին, Շողշողում էր, ասպազներ ոսկու մեջ էր ու զարդի, Գնում էին, և առջևից երիվարն էր Զիգֆրիդի:
72. Նոփ-նոր էին վահանները, ամրապինդ ու լայնալիբ, Սաղավարտներն՝ արևափայլ, շողերի մեջ ոսկեծիր, Ու գնում էր Զիգֆրիդն այդպես դեպ ուտանը Գունտերի, Ջէին տեսել այստեղ երբեք նման քաջեր անթերի:
73. Մինչ խթաններն էին հասնում սրերը շեշտ ու երկար, Կրում էին պինդ նիզակներ՝ գեղարդների հետ սուրսայր, Զիգֆրիդը սակայն ուներ կրկնակի հաստ նիզակ, Որի գեղարդն ահարկու էր մենամարտի ժամանակ:
74. Նժույգներով ընտիր-ընտիր, մետաքսափոկ, ոսկեսանձ, Ահա կտրած երկար ճամփան՝ ասպետները տեղ հասան: Նայում էին մարդիկ ապշած՝ նրանց իրենց մեջ առած, Եվ Գունտերի մարդիկ այդժամ փութով եկան ընդառաջ:
75. Սեզ ասպետներ, դրանիկներ և ժիր ճորտեր ժպտադեմ, Եկան ահա վաղվադակի ու կանգնեցին նրանց դեմ, Որ ընդունեն ըստ պատշաճի նրանց իբրև ազնիվ Հյուր՝ Վերցնելով ոսկեսանձերն ու վահաններն ամրակուռ:
76. Ախոռ էին ուզում տանել ձիերն արդեն, բայց ասպետ Զիգֆրիդը կանխեց, ապա այսպես խոսեց նրանց հետ. «Մեզ թողեք մեր նժույգները, հանգստանան թող մի պահ, Մենք ուզում ենք գնալ շուտով, շարունակել մեր ճամփան:

77. Վաճաններն էլ թողեք մնան: Ծնորհ արեք ինձ Հայտնել, Թե արքային Բուրգունդիայի որտեղ կարող եմ գտնել, Գունտերին, որ այս երկրի արքա-տերն է պատվարժան»: Առաջ եկավ մեկը, որին քաջ Հայտնի էր ամեն բան.
78. «Ուզում եք Հենց Թագավորի՞ն: Ասեմ ես Ձեզ Հավաստի. ես տեսել եմ նրան խորքի մեծ դահլիճում պալատի, Իշխանների Հետ էր նա ըլուր: Եթե գնաք Դուք այնտեղ, Կհանդիպեք ընտիր մարդկանց, ասպետների փառահեղ»:
79. Իսկ մինչև այդ լուրը Հասավ նաև արքա Գունտերին, Թե Հասել են մի խումբ քաջեր իր պալատի դռներին: Նրանք շքեղ կապարճով են, Հանդերձներով ոսկեզարդ, Որպիսիք ողջ Բուրգունդիայում դեռ չի տեսել ոչ մի մարդ:
80. Խիստ զարմացավ Թագավորը և կամեցավ լուր առնել, Որտեղի՞ց են նորեկները՝ այդպես շքեղ ու ջահել, Զենք-զրահով այդքան ընտիր, վաճաններով այդքան մեծ: Զգիտեին իշխանները, և Գունտերը տրտմեց:
81. Օրովայն Մետցին՝ քաջ ասպետը, որ կովոջ էր անվանի, Խորհուրդ տվեց Թագավորին, թե ինչ պետք է նա անի. «Եթե մեզնից ոչ մեկն, արքա, չի ճանաչում այդ մարդկանց, Կանչեք Հագեն Հորեդըրս: Նա փորձ ունի անկասկած:
82. Երկիր չկա, որ չի եղել ասպետը այդ փորձառու, Կճանաչի դրանց, թեկուզ երկրից լինեն շատ Հեռու»: Իր մարդկանցով կանչել տվեց Թագավորը Հագենին, Եվ Հագենը, պատիվ տալով, մտավ ինչպես որ Հարկն է:
83. Եվ Հարցրեց՝ ի՞նչ է արդյոք Գունտեր արքան կամենում: «Ասպետ Հագեն, — ասաց արքան, — Դուք եղել եք ամենուր, Բուրգունդիա են եկել ահա մեզ անծանոթ ասպետներ: Գուցե թե Դուք ասեիք մեզ՝ որտեղից են և ովքեր»:
84. «Սիրով կասեմ», — Հագենն ասաց, պատուհանից նայեց ցած, Նորեկներին զննեց մեկ-մեկ, ուշի ուշով, Հիացած՝ Շատ Հավանեց Հանդերձները և զենքերը աննման, Բայց Հասկացավ, որ ոչ մի տեղ չի Հանդիպել նրանց նա:

85. Եվ բարբառեց. «Որտեղից էլ եկած լինեն հողը մեր,
Ասպետներն այս իշխաններ են կամ իշխանի բանբերներ,
Նրանց ձեռն ընտիր են, և հանդերձները՝ ճոխ այնքան,
Որտեղից էլ գալու լինեն՝ նշան ունեն պատվական»:
86. Առաջ տարավ խոսքը ապա. «Որքան գիտեմ, մինչ այսօր,
Թեև երբեք չեմ հանդիպել Ձիգֆրիդին զորավոր,
Սակայն ինչպես երևում է՝ ասպետների հետ այս քաջ
Հենց նա ինքն է՝ Ձիգֆրիդը, որ կանգնած է մեր առաջ:
87. Ինչեք ասես, որ չեն պատմում ամենուրեք այն մասին,
Որ հերոսի աջն է ջարդել նիրբլունգյան քաջերին,
Շիլբունգին և Նիրբլունգին՝ արքայորդաց նրանց գոռ,
Եվ հրաշքներ գործել հետո իր ահարկու բազուկով:
88. Նա մեն-մենակ, հերոսի պես՝ Հանդգնությամբ անհատնում,
Հանդիպել է մի լեռան մոտ (այդպես էին մեզ պատմում),
Նիրբլունգյան գանձին, հետև էլ զինվորների մեծաթիվ,
Որոնց երբեք չէր հանդիպել Ձիգֆրիդը քաջազնիվ:
89. Անչափելի ու մեծ գանձը թագավորի Նիրբլունգ,
Որ տանում են գաղտագողի լեռնանձավից մի խորունկ
Ու որոշում կիսել, սակայն չեն կարենում բաժանել,
Տեսնում է դա Ձիգֆրիդը ու մոտենում անարգել:
90. Մոտ է գալիս Ձիգֆրիդը՝ ռազմիկն այդ ահարկու,
Հենց տեսնում են, ճանաչում են ու ձայն տալիս մեկմեկու.
«Ձիգֆրիդն է այստեղ գալիս, նիդեռլանդցին դյուցազուն»:
Ինչեք գտավ ասպետն այստեղ՝ գանձեր անթիվ ու բազում:
91. Շիլբունգը և Նիրբլունգը ընդունում են ասպետին,
Բարի սրտով ու համերաշխ հետը նստում խորհրդի,
Խնդրում են Ձիգֆրիդին, որ գանձն անի երկու կես,
Խնդրում այնքան, մինչև որ նա հոժարում է վերջապես:
92. Ինչ տեսնում է Ձիգֆրիդը, անհնար է սոսկ պատմել,
Ասում են, որ ակնեղենը հարյուր սայլ էր և ավել,
Բայց ամենից անհաշվելին կարմիր ոսկին էր արդար,
Եվ բոլորն այդ Ձիգֆրիդը պիտի կիսեր հավասար:

93. Ստանում է սսպետն ընծա թուրն արքայի նիբելունգ,
Սակայն նրա օգնութիւնը դառնում է ցավ ու արցունք,
Տեսնելով, որ Ջիգֆրիդը ճշմարիտ չի բաժանում
Բողոքում են եղբայրները և Հերոսին նախատում:
94. Եղբայրները մենակ չէին, Հետներն էին տասներկու
Հակաները նրանց Հլու՝ ամեհի և ահարկու,
Բայց ինչ օգուտ: Ջիգֆրիդը կոտորում է բոլորին
Եվ դրանց հետ՝ յոթը հարյուր զինվորների ընտրանին:
95. Կոտորում է իր մեծ սրով, որի անունն էր Բալմունգ,
Վախենալով քաջի բազկից, նաև սրից՝ նիբելունգ
Եղբայրները Ջիգֆրիդին դառնում են հեզ հպատակ՝
Հող ու ամրոց վայր դնելով դյուցազունի ոտքի տակ:
96. Արքայորդոց՝ երկուսին էլ սպանում է նա, սակայն
Ալբերիխն է արդ պատճառում պիելի մեծ հոգս նրան,
Որ վրեժը յուր տերերի հաստատ առնել է ուզում,
Մինչև ինքն էլ չի զգում խու ուժն Հերոսի դյուցազուն:
97. Ջի դիմանում Ջիգֆրիդին և գաճաճը մոլեգին,
Առյուծների պես կատաղի, ամուր գրկած մեկմեկի՝
Նրանք թռչում և հասնում են մինչև կատարը լեռան,
Տիրանում է սսպետն այստեղ և թիկնոցին մոգական:
98. Ով գալիս է քաջին ընդդեմ, Հաղթում է և սպանում,
Իսկ նիբելունգ եղբայրների բերած գանձը պատվիրում
Որտեղից որ բերել էին, վերցնեն նորից, տանն են,
Եվ գաճաճին՝ Ալբերիխին, նշանակում գանձապետ:
99. Ու երդվում է գաճաճն ազնիվ, հավատարիմ մնալ հար,
Ինչ կամենա նոր տերն արդեն՝ սուրբ օրենք է իր համար»:
Այսպես խոսեց Տրոնյեցին՝ սսպետ Հագենն ալեհեր,
Ապա ասաց. «Ոչ մեկը դեռ նման գործեր չի արել:
100. Ինձ հայտնի է մի բան էլ, որ խորհրդավոր է անչափ,
Ջիգֆրիդը սպանել է խոր անտառում մի վիշապ
Ու լողացել նրա արյամբ: Եվ դրանից մաշկն ամուր
Եղջուրով է պատվել այնպես, որ չի կտրում ոչ մի սուր:

101. Նրան պետք է Հարգ մատուցել, ինչ պատշաճ է Հերոսին,
Անակնկալ չվրդովել բարկությունը մոլեգին,
Այլ ընդունել խոհեմաբար, նրբանկատ վարմունքով,
Քանզի մեծ է ուժը նրա՝ Հրաշքների անափ ծով»:
102. Ապա խոսեց Գունտեր արքան. «Իրավացի ես, Հագեն,
Տեսքը նրա որքան խրոխտ, կովազան է, մի նայեք,
Ինքն էլ, Հետի զինվորներն էլ ասպետներ են փառապանծ,
Հիմա Հապճեպ իջնենք գավիթ ու ընդունենք մենք նրանց»:
103. «Անտարակույս, — Հագենն ասաց, — պատշաճում է դա նրան,
Արքայազն է Նիդեռլանդցին, ազնվազարմ, պատվարժան,
Մեր երկիր է եթե եկել, Աստված վկա, իզուր չի,
Ուրեմն կա խոհեմ պատճառ և ոչ առիթ մի չնչին»:
104. Ապա խոսեց թագավորը. «Բարով է նա ժամանել,
Որ խիզախ է, ազնվական՝ Հաճելի է մեզ լսել,
Ուստի մեզ մոտ՝ արքունիքում, պետք է տեսնի Հարգ պատշաճ»:
Եվ դուրս եկավ շքախմբով Ջիզֆրիդին ընդառաջ:
105. Թագավորն ու իշխանները ընդունեցին ասպետին,
Բարձր պատվով, ինչպես կարգն է արքունական ուստանի,
Եվ սիրալիբ գլուխ տվեց Ջիզֆրիդն էլ իր Հերթին՝
Ի նշանակ իրեն տրված բարձր Հարգի ու պատվի:
106. Եվ դիմելով Ջիզֆրիդին՝ Գունտերն ասաց Հարգալիբ.
«Ասացեք մեզ, ազնիվ ասպետ, որտեղից եք Դուք գալիս,
Կամ թե ինչն է պատճառը, որ ժամանել եք Բուրգունդիա»:
Պատասխանեց քաջ ասպետը. «Սիրով կասեմ, մեծ արքա»:
107. Պատմում էին Քասնտենում արքունիքի մասին Ձեր,
Որ այստեղ են ամենալավ ասպետները անվեհեր,
Արդ, տեսնում եմ նրանց Ձեզ Հետ՝ խիզախների արդարև,
Որ կարող են ուզած պալատ, ուզած գահույժը գարդարել:
108. Ձեր մասին եմ նաև լսել, որ ասպետ եք քաջագուն,
Քչերը կան Ձեզ Հավասար արքաների մեջ բազում,
Եվ լսելով Ձեր Համբավից ու գործերից մեծամեծ,
Որոշեցի ինքս փորձել՝ ճի՞շտ են պատմել մարդիկ մեզ:

109. Ես ինքս էլ արքայազն եմ, շուտով պիտի կրեմ թագ,
Բայց ուզում եմ՝ վստահ լինի ժողովուրդը բովանդակ,
Որ արժանի տերն եմ երկրիս, որ արքա եմ ես իրավ
Ու երզվում եմ գլխով, պատվով, որ չեմ խաբում ես բնավ:
110. Եվ քանի որ ասպետ եք քաջ, ոնց պատմում են ամենուր,
Ուստի էլ չեմ հարցնում՝ խոսքս դուրեկան է, թե անդուր,
Այլ կանչում եմ մենամարտի, թե հաղթեմ Զեզ մարտում բաց,
Ես կդառնամ տերը ամբողջ քո երկրի ու մարդկանց»:
111. Խիստ զարմացավ թագավորը, ու ամենքն էլ նրա հետ,
Երբ հասկացան միտքը նրա, նպատակը անհեթեթ,
Նա աչք ունի իրենց երկրին, նվաճել է ուզում այն,
Ուստի անչափ վրդովվեցին, անկեղծորեն զայրացան:
112. «Անհնար է, — ասաց արքան, տեղից ելավ անհամբեր, —
Այն, ինչ պատվով ու դարեդար պահպանել են նախնիք մեր,
Պետք է զիջենք ուժեղ մեկի՞ն: Անպատիվ է, անվայել,
Զէ՞ որ մենք էլ ասպետներ ենք և պարտ ենք այն պահպանել»:
113. «Դա կլինեի արդարացի, — Զիգֆրիդն էր համառում, —
Թե քիչ լինի գորությունդ՝ գահդ անխախտ պահելու,
Այդ դեպքում ես իմ երկրի հետ կտիրեմ և քո գահին,
Թե դու հաղթեմ՝ դու կտիրես քոնի հետ և իմ երկրին:
114. Քո երկիրն ու իմ երկիրը՝ ավելին են միասին,
Եվ մեզանից ով ուժեղ է, ով որ հաղթի մյուսին,
Նրան պետք է ողջը տրվի՝ բերդամրոցներ, մարդիկ, հող»:
Այդ լսելով՝ Գերնոտն ասաց դժկամությամբ անսքող.
115. «Համաձայն չենք, — բղավեց նա, — թշնամի չենք մենք իրար,
Պետք է մեզ այլ երկիր զավթել, արյուն թափել վայրաբար,
Հարուստ է մեր երկիրը և մեզ լիովի բավական,
Եվ նա մերն է հնուց անտի ու ոչ մեկին չենք տա այն»:
116. Թագավորի իշխանները թունդ բարկությամբ լցվեցին,
Անդ էր նաև արիասիրտ ասպետ Օրտվայնը՝ Մետցին:
«Այս ամենը, — Օրտվայնն ասաց, — վրդովիչ է ինձ համար,
Արքա, Զեր դեմ Զիգֆրիդը վեճ սկսեց անարդար:

117. Եվ եթե Դուք պաշտպանվելու էլ ոչ մի ուժ չունենաք,
Եվ նա մտնի մեր երկիրը զինվորներով անքանակ,
Հավատացեք, մենամարտում կստիպեմ այս քաջին ես,
Որ մոռանա իր պարծենկոտ Հանդգնությունն աներես»:
118. Հույժ զայրացավ նիդեռլանդցին՝ Ջիզֆրիդը բարձրուսեզ:
«Ուժով ինձ հետ, — ասաց, — չափվել փորձ չես անի դու երբեք,
Ես արքայի Հարուստ որդի, դու՛ Հպատակ մի ասպետ,
Զի պատշաճում արքայազնիս վեճի մտնել աստ քեզ հետ»:
119. Ձեռքը դեպի սուրը տարավ Օրտվայն Մետցին փութաջան,
Ձէ՞ որ Հազեն Տրոնյեցու եղբորորդին էր քաջն այն,
Հազենն՝ ինքը, դեռ լռում էր՝ վշտացնելով արքային,
Բայց Գերնտոր միջամտեց՝ պահն զգալով դժվարին:
120. «Զսպի՛ր դու քեզ, — Մետցու վրա որոտաց նա մտահոգ, —
Ջիզֆրիդը մեզ չի ասել անարգական ոչ մի խոսք,
Մենք կարող ենք դեռ բարությամբ մեղմել վեճը այս տհաճ,
Այդ պահվածքը անտարակույս մեզ ավելի է պատշաճ»:
121. Միջամտեց Հազենն այստեղ. «Ցավ է սրտիս կարեվեր
Եվ մնացյալ ասպետներին, որ Հռենոս՝ Հողը մեր
Նա եկել է կովի Համար: Ինքն սկսեց, ճիշտն ասած,
Իսկ մեր մարդիկ նրան բնավ թշնամի չեն, էն Աստված»:
122. Պատասխանեց Ջիզֆրիդը՝ խիստ մոլեզնած. «Ապաքեն
Այն ամենը, ինչ ասացի՝ թե տհաճ է ձեզ, Հազեն,
Ուրեմն ես պետք է ցույց տամ, որ ձեռքերս առանձին
Ուժ են առնում, երբ կռվում են ասպետաց դեմ բուրգունդցի»:
123. «Ձեմ թողնի դա», — կանչեց Գերնտոս՝ ազդեցիկ ու տիրաբար,
Եվ սանձեց իր ասպետներին, արգելելով, որ մի բառ
Խոսեն քի՛նով, որ կարող է չարացնել նորեկին:
Ջիզֆրիդն էլ, անշուշտ, հիշեց Քրիմհիլդին աչազեղ:
124. «Վայն՞լ է մեզ միթե վեճը, — խոսեց Գերնտոս անվեհեր, —
Եթե պիտի դրա Համար սպանվեն քաջ ասպետներ,
Կանպատվենք մեզ, Ձեզ էլ, ասպետ, վայել չէ դա, անկասկած»:
Իսկ Ջիզմունդի որդին այստեղ պատասխանեց ու ասաց.

125. «Բայց Հագենը և Օրտվայնը էլ ինչո՞ւ են հապաղում, Ձեն սկսում կռիվն իմ դեմ ասպետների հետ բազում, Որ կան այստեղ նրանց կողքին, զինավառ ու պատրաստի»:
Ջարձագանքեց նրան ոչ ոք: Դա պատվերն էր Գերնոտի:
126. «Սեզ ասպետին բարի գալուստ, — Գերնոտն ասաց սրտագին, — Եվ Ձեր մարդկանց, որ եկել են, բարի գալուստ, ամենքին ես և իմ քույր ասպետները կծառայենք ձեզ պատրաստ»:
Եվ պատվիրեց գինի բերել, հյուրասիրել լիառատ:
127. Այդժամ ասաց Գունտեր արքան. «Այն ամենն, ինչ ունենք մենք, հնդրեք պատվով և, անկասկած, Ձեր ոտքի տակ կդնենք, Եվ կկիսենք Ձեզ հետ մեկտեղ կյանք ու բարիք՝ ամեն ինչ»:
Այս խոսքերից Ջիգֆրիդի գայրույթն իջավ սակավ-ինչ:
128. Եվ օգնեցին եկվորներին՝ ազատվել զենք-զրահից, Եվ տվեցին ընտիր-ընտիր օթեաններ ու մահիճ Նիդեռլանդցի ասպետներին՝ գործվանքով հարգալիբ, Այդ օրերին Ջիգֆրիդը հյուրն էր նրանց ցանկալի:
129. Եվ մեծամեծ պատիվների արժանացավ նա էլի, Ինչ ասում եմ՝ դուք հասկացեք հազար անգամ ավելի, Դա վաստակն էր նրա ուժի: Եվ այդ երկրում մեծատուն, Չկար մեկը, որ նրա դեմ ոխ ունենար, չարություն:
130. Երբ արքան իր ասպետներով վարժանքների էր տրվում՝ Նա մշտապես լավագույնն էր մրցախաղի մեջ, կռվում, Հավասարը չկար նրան, նա ավյուն էր ու կրակ, Թե ծանրություն նետելու մեջ, թե տեղ, մկուռդ կամ նիզակ:
131. Երբ փափկասուն տիկիներին ու ասպետաց շրջանում Սրտագրավ խոսք-զրույցն էր երեկոյան թեժանում, Ձէին կտրում աչքերն իրենց տիկնայք քաջից բարձրուսեզ, Որ լցնում էր սիրտը նրանց սիրով, սիրով անեզբը:
132. Եվ պատրաստ էր ծառայելու սիրով նրանց՝ ամենքին, Բայց կրում էր սրտի խորքում լոկ մի անուն թանկագին, Օրիորդն ինքն էլ՝ Քրիմհիլդը, թեև նրան անծանոթ, Սակայն թաքուն երազներով նրա հետ էր, նրա մոտ:

133. Խաղերն էին երբ սկսում ասպետները անդադրում,
Եվ նրանց Հետ ջահելները և պատանիք տաքարյուն,
Մոռանում էր Քրիմհիլդը զբաղմունքներ ու ժամանց,
Արքայուհու իր օթյակից երկար նայում էր նրանց:
134. Թե իմանար Ջիգֆրիդը, որ խաղերի ընթացքում
Նա է իրեն նայում անվերջ, ով ապրում է իր սրտում,
Ինքն էլ նրան կտեսներ և կհամոզվեր իր աչոք,
Որ աշխարհում հարկավոր չէ նրան ուրիշ էլ ոչ ոք:
135. Երբ պալատում երևում էր ասպետների խմբի մեջ,
Ընկերների ու ամենքի ուրախությունն էր անվերջ,
Ջիգելինդի որդին այնպես հմայում էր, ճառագում,
Որ ցանկացած կնոջ սրտում սեր էր վառում, համակում:
136. Ինքն էլ հաճախ հառաչում էր ու մտմտում տխրազեմ.
«Ինչպես արդյոք աչքերովս գեղեցկուհուն իմ տեսնեմ,
Որին սիրում եմ ես սրտանց, բայց անցնում են օրերն արդ,
Եվ մնում է նա ինձ օտար, ու տխրում է սիրտս շատ»:
137. Ելնում էին արքաները իրենց երկրում շրջելու
Եվ իրենց Հետ տանում էին ասպետների քաջանուն,
Գնում էր և Ջիգֆրիդը: Սիրտը թախծում էր տիկնանց,
Տխրում էր և Ջիգֆրիդը՝ տառապանքին իր տրված:
138. Այսպես ահա մի ողջ տարի, ասում եմ ձեզ ճշտորեն,
Արքաների Հետ նա ապրեց բուրգունդական երկրում շեն,
Բայց ասպետը ոչ մի անգամ սիրելիին չտեսավ,
Նրան, որից պիտի տեսներ այնքան սեր ու այնքան ցավ:

ԴԻՊԼԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Թե ինչպես նա կռվեց սաքսերի դեմ

139. Եվ Բուրգունդիա երկիր հասավ ահավոր ու չար մի բռթ,
Սուրհանդակներն այն բերեցին ասպետներից անծանոթ,
Թե թշնամին որով լցված՝ հարձակվում է վերստին,
Երբ չարազետ լուրը առան, նրանք սաստիկ տխրեցին:

140. Ասեմ ձեզ, թե ովքեր էին. Լյուդեգերն էր՝ սաքսերի
Թագավորը Հզորագոր, պատերազմող անթերի,
Եվ նրա հետ՝ Դանեմարքի թագավորը Լյուդեգաստ,
Ամեն մեկը իրեն զորքով, զինվորներով կազմ, պատրաստ:
141. Ու երբ Վորմա մտան մի օր՝ դեսպանները տեղ հասած,
Որոնց այստեղ ճամփել էին տերերն իրենց սնապարծ,
Մի լուր էին ուզում առնել օտարներից բուրգունդցիք
Եվ Հապճեպով նրանց Գունտեր արքայի մոտ բերեցին:
142. Եվ Հարցրեց Գունտեր արքան. «Բարով լինի գալը ձեր,
Մ'եմ կողմից եք, ով է ճամփել՝ չգիտեմ, ով դեսպաններ,
Հապա խոսեք»: Եվ նայում էր բարի սրտով իր գահից:
Ու խոսեցին բանբերները՝ Հույժ վախեցած արքայից.
143. «Թե լսել եք ուզում լուրը, որ բերել ենք Ձեզ, արքա,
Ուստի կասենք և կանվանենք մեր տերերին, որ ահա,
Ճամփել են մեզ: Լյուդեգաստն է, Լյուդեգերն էլ՝ աջակից,
Կամենում են պատերազմով Ձեր Հողն առնել ձեզանից:
144. Բարկացած են նրանք սաստիկ առիթներով անքանակ,
Եվ պատճառը Դուք եք միայն, ինչպես ասում են նրանք,
Բուրգունդիա են գալիս նրանք՝ կռվի տենչով Համակված,
Եվ հետն իրենց շատ ասպետներ հիմա ունեն անկասկած:
145. Եվ տասներկու շաբաթ հետո արշավանքը կսկսվի,
Եթե ունեք բարեկամներ, փութով կանչեք այս կռվին,
Որ պաշտպանեք ձեր երկիրը պատուհասից վերահաս,
Քանզի անթիվ նիզակ ու սուր կլարդվի կռվում այս:
146. Իսկ թե ուզում եք բանակցել, ապա շտապ արեք դա,
Որ գուգազը նրանց Հզոր Ձեր երկրին մոտ չգա,
Սահմանից ներս՝ երկրի խորքը, դեպի Վորմա չխուժի,
Եվ շատ ու շատ ասպետների կյանքն անտեղի չկորչի»:
147. Ազնիվ արքան ասաց այսպես. «Թողեք փոքր-ինչ խորհելու,
Ինչ-որ այստեղ կվճռենք, դուք կիմանաք՝ կտանք լուր,
Ես բարեկամ մարդիկ ունեմ, պետք է կանչեմ անպատճառ,
Այս անուրախ լուրը նրանց պիտի Հայտնեմ բառ առ բառ»:

148. Շատ վշտացավ թագավորը, բանբերներին արձակեց,
 Լուրը գաղտնի պահեց սրտում, հառաչելով տրտմեց,
 Ապա կանչեց նա Հագենին: Մյուսներին հատ առ հատ
 Եվ Գերնոտին իր մարդկանցով կանչեց բերեց նա պալատ:
149. Հավաքվեցին քաջեր ընտիր և ասպետներ զինակից,
 Գունտերն ասաց. «Թշնամական բանակները մեզանից
 Մեր երկիրն են ուզում խլել՝ ասում եմ ձեզ մեծ վշտով»:
 Դրա վրա Գերնոտն ասաց՝ ասպետը քաջ, անվրդով:
150. «Մենք կփակենք մեր սրբերով ճամփաները թշնամյաց,
 Թող մեռնի նա, ով կմեռնի, պատերազմ է, ինչ արած,
 Բայց կպահենք մեր պատիվը, գետնով չենք տա այն երբեք,
 Իսկ սաքսերը ու դանիացիք թող զորքերով գան՝ տեսնենք»:
151. Ապա խոսեց Հագենն Հզոր. «Պետք է լինենք մենք խոհեմ,
 Լյուդեգաստն ու Լյուդեգերը ոխով լցված են մեր դեմ,
 Այդքան օրում մենք չենք կարող զորք հավաքել մի կարգին»:
 Շարունակեց ասպետն հետո. «Իմաց տվեք Ջիգֆրիդին»:
152. Դեսպաններին ուղարկեցին՝ հանգիստ առնեն քաղաքում,
 Թշնամիներ էին թեև, բայց կարգ էր դա խստազույն,
 Գունտեր արքան այդպես վճռեց՝ պահելով կարգ ու պատիվ,
 Եվ կարող էր հանդարտ խորհել անելիքներն իր անթիվ:
153. Արքան անչափ վհատված էր՝ ընկած ծովը մտքերի,
 Երբ պալատում նրան գտավ Ջիգֆրիդը՝ քաջարին,
 Անգիտակ էր նա եղածին, լուրը նրան չէր հասել,
 Ու խնդրեց թագավորին պատմել՝ ինչ է պատահել:
154. «Ես ցավում եմ ու զարմանում, — ասաց ասպետը կտրուկ, —
 Թե որքան եք Դուք փոփոխվել, շատ ժամանակ ինձ հետ Դուք
 Ուրախ էիք միշտ զգում Ձեզ, հիմա ինչո՞ւ եք մոռալ»:
 Պատասխանեց թագավորը՝ դեմքը նեմրութ ու անփայլ:
155. «Այն վիշտը, որ տանջում է ինձ և կրում եմ իմ սրտում,
 Ես չեմ կարող ասել ազատ, պատմել ամեն մի մարդու,
 Այլ միմիայն բարեկամին, որն ընկեր է սրտակից»:
 Եվ գուռատվեց Ջիգֆրիդը, հույժ տագնապեց այդ խոսքից:

156. Եվ Գուճապետին ասպետն ասաց. «Վստահեք ինձ, մեծ արքա, ես կօգնեմ Ձեզ ամենուրեք, սրտակցությամբ մշտակա, Բարեկամ՝ եք փնտրում անկեղծ՝ արդ կանգնած եմ Ձեր կողքին, ես կմնամ Ձեզ բարեկամ մինչև վերջը իմ կյանքի»:
157. «Աստված լինի Ձեզ օգնական, ուրախացա խոսքից Ձեր, Եթե նույնիսկ ինձ պետք չգա ուժն ասպետիդ անվեհեր, Թեթևացա սակայն, քանզի ունեմ Ձեզ պես սրտակից, Վարձահատույց կլինեմ Ձեզ, թե Աստված կյանք տա ինձ:
158. Ուստի ուզում եմ Ձեզ ասել, թե ինչու եմ ես տխուր, Մեզ ախոյան արքաների բանբերները բերին լուր, Որ միտք ունեն նրանք մեր դեմ կովել զորքով անքանակ, Իսկ մենք բանակ չենք Հավաքել, ոչ էլ ունենք ժամանակ»:
159. Զիգֆրիդը ասաց նրան. «Հոգ մի արեք, բարեկամ, Մի տրտմեք դրա Համար, ինձ լսեցեք այս անգամ, Թույլ տվեք ինձ Ձեր պատիվը պաշտպանել Ձեր փոխարեն, Եվ թող այնժամ Ձեր թշնամիք այս երկիրը գալ փորձեն:
160. Ձեր ախոյան ասպետները եթե անգամ ունենան Երեք տասնյակ Հազար ընտիր ասպետներ ու զորական, Միևնույն է՝ ես կՀաղթեմ, Հազար զինվորն ինձ բավ է»:
Ապա խոսեց Գուճապետ արքան. «Երախտապարտ եմ Հավետ»:
161. «Արդ, տվեք ինձ Ձեր մարդկանցից Հազար ասպետ քաջազնիվ, ես ավելին չունեմ, քան իմ ասպետները փոքրաթիվ, Որ ընդամենն տասներկուան են: Եվ կլինենք մենք Ձեզ Հետ:
Հավատարիմ ձեռքն ասպետի կծառայի Ձեզ Հավետ:
162. Պետք է օգնեն մեզ Հագենը և Օրտվայնը, ինչպես և Դանկվարտը և Զինդոլդը՝ ասպետները Ձեր պարթև, Մեզ Հետ նաև պետք է անշուշտ Ֆոլկերը գա՝ այն Հսկան, Հենց նա պետք է դրոշ կրի, նրանից լավ էլ ո՞վ կա:
163. Պատվիրեք, թող դեսպանները երկիրն իրենց շտապեն Եվ ասեն, որ սաքսոնացիք թող չուտով մեզ սպասեն, Թող իմանան՝ մենք չենք ուզում ոչ պատերազմ, ոչ չարիք»:
Եվ Հավաքեց թագավորն իր իշխաններին արքունիք:

164. Լյուդեգերի դեսպանները կրկին եղան պալատում,
Ուրախ էին նրանք անչափ, որ կարող են դառնալ տուն,
Դեսպանների հանդեպ արքան եղավ բարի հանց ասպետ,
Պահնորդների ուղեկցությամբ ճանապարհեց նրանց ետ:
165. «Հաղորդեք իմ քաղ թշնամյաց, – ասաց Գուևտերն անվրդով, –
Պատերազմի թող դուրս չգան, չթողնեն հարկն ապահով,
Իսկ թե նրանք կամենում են մեր հողն առնել անպայման,
Ասպետներս իմ կողքին են, թանկ կնստի՝ գիտենան»:
166. Դեսպաններին առատ-առատ արմաղաններ բաշխեցին,
Ջէր փսոսում Գուևտեր արքան ոչ հանդերձը, ոչ ոսկին,
Եվ հյուրերն էլ չմերժեցին բարի կամքը, ճոխ ընծան՝
Խնդրելով ճամփա ընկնել ու գոհ սրտով հեռացան:
167. Դեսպանները եկան հասան իրենց երկիր՝ Դանեմարք,
Եվ երբ մեկ-մեկ հաղորդեցին ամեն բան ու հանգամանք,
Թե ինչպես են խոսել Վորմսում, ստացել ինչ պատասխան,
Շատ վրդովեց թագավորը ու զայրացավ անսահման:
168. Դեսպանները ասացին, որ նրանք ունեն անթերի
Օգնականներ, իսկ մեկը կար, որ աջ ձեռքն էր Գուևտերի,
Նրա անունն էր Զիգֆրիդ՝ եկած երկրից Նիդեռլանդ,
Երբ սա լսեց Լյուդեգաստը, հոգսով լցվեց անփարատ:
169. Լուրն առնելով՝ խիստ վախեցան ասպետները դանիացի,
Եվ ավելի շատ գինվորներ գորակոչել ջանացին,
Եվ հավաքեց Լյուդեգաստը իշխաններով հպատակ
Քսան հազար ընտիր ասպետ և կռվողներ զենքի տակ:
170. Իսկ թագավոր Լյուդեգերը իր սաքսերից անձնվեց
Հավաքեց շուրջ քառսուն հազար և ավելի գինվորներ,
Այդ բանակը պետք է շուտով հողը մտնեք Գուևտերի,
Այստեղ նույնպես շարժվում էին, բանակ կազմում օր օրի:
171. Գուևտեր արքան բանբեր ճամփեց իշխանաց իր տիրասեր,
Ընտիրների, որ գան, գահին պաշտպան լինեն աներբր,
Ժամանակը կարճ էր անչափ, պահ չկար շունչ առնելու,
Եվ գիտեին, որ շատերին ժպտալու է բախտը չար:

172. Ժողովեցին զորքը իրենց՝ պատերազմի կարգով հին,
Դրոշակը ասպետներից տրվեց խիզախ Ֆոկերին,
Որոշեցին Վորմսից մեկնել Հռենոսի վրայով,
Եվ զորապետ նշանակվեց Հագենը քաջ, կորովի:
173. Այնտեղ էին Ջինդուդ, Հունդդ ասպետները փառապանծ,
Որ արշավից դառնում էին առատ ոսկի միշտ առած,
Դանկվարտը արագատք և Օրտվայնը տաքարյուն,
Տեղ ունեին զորքում նրանք և աստիճան, պատվանուն:
174. «Դուք մնացեք խաղաղությամբ, — Զիգֆրիդն ասաց Գունտերին, —
Իսկ Ձեր անվախ ասպետները թող հետևեն ինձ, տեր իմ,
Պահպանեցեք չքնաղ տիկնանց և Աստրծով զորացեք,
Ինչպես Հարկն է՝ կաշտպանեմ պատիվը և հողը Ձեր:
175. Արքաները Ձեր թշնամի աչք են տնկել Ձեր հողին,
Կաշտպանեմ ես այն, նրանք դեռ կզղջան լիովին,
Մենք կմտնենք նրանց երկիր, կգրավենք անպայման,
Ու սնապարծ արքաները կմատնվեն կորստյան»:
176. Հռենոսից անցան նրանք և Հեսսենով սրընթաց
Մտան երկիրը սաքսերի և մոտեցան թշնամյաց,
Եվ թալանից, հրդեհներից տնքաց հողը այդ բերրի,
Ծանր էր վիշտը և կորուստը այդ երկրի տերերի:
177. Երբ սաքսերի սահմանն հասան, ծառաները ետ ընկան,
Ասպետներին հարց ուղղեց Զիգֆրիդը՝ գոռ հսկան.
«Իսկ ո՞վ պետք է մեր թիկունքին և գումակին լինի տեր»:
Ավելի մեծ թշվառություն Սաքսոնիան դեռ տեսած չէր:
178. Եվ ասացին Զիգֆրիդին. «Դանկվարտին դա պատվիրեք՝
Կառավարի թող գումակը, քաջ ասպետ է նա, գիտեք,
Քիչ կորուստներ կունենանք մենք Լյուդեգերից և ապա,
Դանկվարտին ու Օրտվայնին էլ թողնենք զորքում վերջապահ»:
179. «Իսկ ես ինքս առաջ գնամ, — Զիգֆրիդն ասաց կաղնեձեռ, —
Ուզում եմ մեր ախոյանի զգաստությունը փորձել,
Եվ ճշգրիտ տեղեկանալ ի՞նչ ասպետներ կան այնտեղ»:
Եվ Զիգլինդի որդին կապեց զենք-զրահը փառահեղ:

180. Եվ թողնելով գորքն Հագենին՝ ասպետին այդ փորձառու
 Եվ Գերնոտին արքաներայր, որ կռվում էր Հանց առյուծ,
 Առաջացավ նա մեն-մենակ, հողը մտավ սաքսերի,
 Եվ շատ շուտով գտավ Հենց այն, ինչ ուզում էր սիրտը իր:
181. Նա նկատեց սահմանի մոտ թշնամու գորք մեծաթիվ,
 Դա ավելի մեծ բանակ էր, քան թե գուռը Ջիգֆրիդի,
 Կլինեին քսան հազար կամ թե մի քիչ ավելի,
 Եվ ասպետը իր թշնամուց աչք չէր կտրում խինդով լի:
182. Եվ Հանկարծ մի ուրիշ ասպետ Ղոկատներից թշնամու,
 Զրահ հագած ու զինավառ, որ հսկում էր այդ կողմում,
 Ջիգֆրիդի աչքովն ընկավ, նկատեց և նա սրան,
 Եվ չափելով ոխով միմյանց՝ նրանք արագ մոտեցան:
183. Ասեմ ձեզ, թե ասպետն ով էր, որ չրջում էր անվարան,
 Եվ իր ձեռքին ուներ թեթև ու ոսկեզօծ մի վահան,
 Լյուդեգաստն էր՝ Դանեմարքի թագավորը շատ ճանաչ,
 Եվ գալիս էր Ջիգֆրիդին նրա նժույզն ընդառաջ:
184. Լյուդեգաստն էլ տեսավ նրան, ճանաչեց իր թշնամուն,
 Խթանեցին նրանք իրենց նժույզները եռանդուն,
 Եվ պարզեցին նիզակները, որ տապալեն մեկմեկու,
 Եվ դանիացու գլխին մարտն այս աղետ դարձավ ահարկու:
185. Երբ խոյացան ձիերն առաջ, արքաները համարձակ
 Միմյանց եկան հողմի նման, վրիպեցին բայց նրանք,
 Եվ ձիերը շրջեցին ետ՝ աչքերում ոխ հրացայտ,
 Որ հիմա էլ ուժերն իրենց փորձեն սրով պողովատ:
186. Երբ Հարվածեց Ջիգֆրիդը՝ հողը ցնցվեց խուլ զարկից,
 Սաղավարտից թռան կայծեր, ասես կիզիչ խարույկից,
 Թռչում էին կայծերը թեժ սրի շեղբից շառաչուն,
 Ելել էին իրարու դեմ գույգ հսկաներ քաջազուն:
187. Լյուդեգաստն էլ հասցնում էր նրան զարկերն իր անահ,
 Նրանց ուժեղ Հարվածներից թնդում էին զենք-զրահ,
 Թագավորի թիկնազորը՝ երեսուն մարդ քաջագեն,
 Փռլթաց Հասնել իր արքային, սակայն ուշ էր շատ արդեն:

188. Երեք ծանր վերքերը, որ ասպետն հասցրեց շէշտակի,
Միջով թեթև գրահների, բավական էր արքային:
Ոտքից գլուխ արնաշաղախ՝ Լյուդեգաստը ընկավ ցած,
Նստտովանեց պարտությունն իր Ջիգֆրիդին փառապանծ:
189. Ասաց՝ ինքը Լյուդեգաստն է, Դանեմարքի տիրակալ,
Խնդրեց բաշխել իր կյանքը և իր երկրին տեր դառնալ,
Տեղ հասավ և թիկնազորը, և պարզ դարձավ, թե այնտեղ,
Նրանց միջև որքան ահեղ մենամարտ էր ընթացել:
190. Ասպետները շտապեցին թագավորի օրհասին,
Հարձակվեցին մեկի վրա, երեսունն էլ միասին,
Պաշտպանվում էր Ջիգֆրիդը, թանկ ավարը պահպանում,
Պատուհասեց այդտեղ քաջը ասպետներին քաջանուն:
191. Նա երեսուն ասպետին էլ մահվան մատնեց շատ արագ,
Միայն մեկին նա թողեց ողջ, որը փախավ սրտաճաք,
Բոթն հասցրեց ընկերներին, վախով պատմեց ամեն բան,
Հավատացին խոսքին, քանզի ողողված էր մեջն արյան:
192. Եվ դանիացի ասպետները մտքերի մեջ ընկան ծով,
Իրենց արքա Լյուդեգաստի գերության լուրն առնելով,
Ասում են, թե Լյուդեգերը խիստ մոլեգնեց, զայրացավ,
Լուրն առնելով կատարվածի՝ սոսկում ապրեց, սրտի ցավ:
193. Լյուդեգաստը՝ հարուստ արքան, շղթայակապ, հուսահատ,
Բուրգունդների ճամբար բերվեց Ջիգֆրիդի ձեռքով հաղթ,
Նիդեռլանդցին նրան հանձնեց խիզախ ասպետ Հագենին,
Սա բարեբաստ այդ դիպվածով ուրախացավ ահագին:
194. Ջիգֆրիդը բուրգունդներին դրոշ պարզել պատվիրեց.
«Առաջ, - գոռաց ասպետներին, - մենք դեռ կռիվ ունենք մեծ,
Օրը թեքվեց, թե ողջ մնամ ես այս մարտում դժնդակ,
Անթիվ կանայք ողբալու են Սաքսոնիայում բովանդակ»:
195. Հռեոսսի քաջ հերոսներ, սկսվում է մարտը մեր,
Ձեզ տանում եմ ահա դեպի սաքսերի գոռ բանակներ,
Տեսեք, ոնց եմ ճեղքում նրանց կորդակները իմ սրով,
Չկասկածե՛ք՝ իբրև գերի նրանք կանցնեն դեռ Վորմսով»:

196. Գերնոտն ու իր ասպետները դեպ նժույգներ փութացին,
Դրոշ պարզեց քաջ Ֆոլկերը՝ երգասացը առնացի,
Բուրգունդների առջևից հենց ընթացավ նա՝ կորովին,
Ապա նրա հետքից կարգով զորքը նետվեց մեծ կովի:
197. Բուրգունդները սակավ էին՝ հազար զինվոր, ոչ ավել,
Եվ գումարած տասներկուսը: Փոչին երկիրն էր առել,
Բուրգունդների զորքն անցնում էր երկրի միջով սաքսերի,
Եվ ամենուր փայլն էր նրանց վահանների, գեներբրի:
198. Բայց սաքսերի զինվորներն էլ պատրաստ էին կովի մեծ,
Զինված էին նրանք շատ լավ, ինչպես պատմում էին մեզ,
Կռվում էին ամենուրեք ատելութամբ դժնդակ,
Ո՛վ չի կանգնի պաշտպանելու իր քաղաքն ու հողը թանկ:
199. Երբ սաքսերի իշխանները զորքը մարտի հանեցին,
Այդժամ եկավ, հասավ նաև Զիգֆրիդը քաջածին,
Նիդեռլանդիա երկրից եկած իր քաջերով արնատենչ:
Ու թե՛ կռվում գեներ ու ասպետ շուտով կորան արյան մեջ:
200. Զինդուր, Հունուրդ ասպետները և Գերնոտը քաջազուն
Զարկում էին ամենուրեք ու սաքսերին հալածում,
Խաղ էր նրանց համար մարտը՝ քաջությանը միշտ սովոր,
Սակայն որքան կանայք այդօր դարձան այրի, սգավոր:
201. Ֆոլկեր, Հագեն դյուցազնները, նաև Օրտվայնը անհաղթ,
Որոնց սրից կովի դաշտում յուրաքանչյուր ակնթարթ
Սաղավարտ էր ընկնում գետին՝ ներկված կարմիր արյունով,
Դանկվարտը նույնպես մարտում հետ չէր մնում ավյունով:
202. Քաջ էին և դանեմարքցիք, կռիվներում փորձառու,
Թնդում էին վահանները՝ զարկվելով իրարու,
Շաչում էին սրերը թունդ՝ հատելով օդ ու մարմին,
Սաքսերից էլ ախոյանին վնասները քիչ չէին:
203. Բայց բուրգունդցիք՝ ախոյանին սեղմում էին քիչ առ քիչ,
Խոցում նրան թանձրատարափ հարվածներով խորտակիչ,
Ողողում էր վիրավորի արյունը ձի, առասան:
Կռվում էին նրանք անզուսպ՝ պատվի համար սրբազան:

204. Լսվում էր զիլ ձայնը զինաց ասպետների քաջեռանդ,
Նրանց Հատու Հարվածներ, որ երկրից էին Նիդեռլանդ,
Մղվում էին նրանք առաջ իրենց տիրոջն Հավասար,
Մի քայլ անգամ չընկրկելով Ձիգֆրիդից խանդավառ:
205. Ո՛վ կարող էր սահայն Հասնել Ձիգֆրիդին դյուցազուն,
Շուրջբուրբը նրա կարմիր արյան առուն էր Հոսում,
Սաղավարտ էր որ ճեղքում էր նիդեռլանդցին իր թամբին,
Մինչև գտավ Լյուդեգերին՝ օղակի մեջ իր խմբի:
206. Երեք անգամ Ձիգֆրիդը խումբը ճեղքեց սրարչավ
Իր դեմ կանգնած ասպետների, մինչ Հագենը տեղ Հասավ,
Եվ օգնեց, որ քաջը մարտում նոր ուժ առնի, նոր ավյուն,
Շատերն այդօր անդարձ կորան՝ տեսնելով մահ ու արյուն:
207. Երբ Հաղթանդամ Լյուդեգերը Ձիգֆրիդին նկատեց
Եվ տեսավ, թե ինչ ուժով է ճոճում սուրը պողպատե,
Ծավով տեսավ անագորույն կոտորածը սաքսերի
Ու Համակվեց անափ ոխով, կատաղությամբ ահռելի:
208. Իրարանցում եղավ ահեղ, զինքի շաչյուն մահաձայն,
Երբ ախոյան զինվորները ելան իրար Հանդիման,
Բայց սաքսերը, Հազիվ տեսած իրենց դեմ զորքն ամրակուռ,
Ձգացին մեծ արհավիրքը, նահանջեցին խառնիխուռն:
209. Եղբոր գերվելն արդեն գիտեր Լյուդեգերը տարաբախտ,
Ու դրանից նրա սիրտը ցավի մեջ էր Հուսահատ,
Բայց չգիտեր, որ գերողը Ձիգֆրիդն է էն կտրիճ,
Կասկածում էր, թե Գերնոտն է, բայց պարզվեց ամեն ինչ:
210. Լյուդեգերը Հասցնում էր զարկեր ուժով բովանդակ,
Որ դողում էր նիդեռլանդցի ասպետի ձին թամբի տակ,
Բայց չէր ընկնում քաջը ձիուց: Իսկ քիչ Հետո, ինչպես Հողմ,
Սկսեց իր գրոհն ուժգին, կոտորածը անողորմ:
211. Հագեն, Գերնոտ ասպետները օգնում էին Ձիգֆրիդին,
Եվ Ֆուկերը, Օրտվայնը՝ չորս բուրբ փռած դի,
Ձինդուղ, Հունուղ ասպետները՝ բուրբ քաջերը բուրգունդ,
Նրանք անթիվ թշնամիներ կոտորեցին կովում թունդ:

212. Կովում էին զույգ քաջերը՝ լցված ոխով դժնդակ,
Ամեն վայրկյան նրանց վրա թռչում էին տեգ, նիզակ,
Եվ քաջերի ձեռքից նետված, նպատակին հասնելով՝
Ջարդվում էին վահաններին կամ ներկվում արյունով:
213. Գրոհելով՝ ասպետները նժույգներից թռան ցած,
Ձէին հոգնում խոյանալուց, հարվածելուց միմյանց,
Ջիգֆրիդը էն քաջագուն, Լյուդեգերը՝ արքան սեգ,
Ու ծածկել էր երկինքը հոծ նիզակների ամպը սև:
214. Ջիգֆրիդը զարկով փշրեց սաքսի ասպար ու վահան,
Եվ զգում էր քաջը արդեն՝ մոտ է ժամը Հաղթության,
Եվ սաքսերից շատերն էին արդեն գտել մահն իրենց,
Հեյ, ինչքան շատ օղազրահ Դանկվարտը սրատեց:
215. Երբ թագավոր Լյուդեգերը Ջիգֆրիդի վահանին
Տեսավ ոսկե թագ նկարված և ճանաչեց Հերոսին,
Հասկացավ, թե ով է իր դեմ կանգնած քաջը ամեհի
Ու կանխելով իր քաջերին՝ սաքսը դիմեց ամենքին.
216. «Ով ինձ հետ է, թող կռիվը ավարտի այս վայրկյանին,
Ես տեսնում եմ Ջիգֆրիդին՝ որդուն Ջիգմունդ արքայի,
Նիդեռլանդցի այդ Հերոսին անհնար է ծուղակել:
Մեզ՝ սաքսերի վրա նրան սատանան է ուղարկել»:
217. Եվ թշնամիք դրոշները վար բերեցին գլխահակ,
Որ նշան էր խաղաղության և Հաշտության խնդրանք:
Գուցե լավ էր գերի դառնալ բուրգունդական արքային,
Քան դեմ կանգնել Ջիգֆրիդի արնածարավ Բալմունդին:
218. Մարտն ավարտվեց միանգամից, իջավ անդորր, ու Հանդարտ
Վար դրեցին կովոդները վահաններ ու սաղավարտ,
Դրանք աստիկ ջարդվել էին, հարվածներից ծռվով,
Եվ բուրգունդցի ասպետները արյուն էին վարից վեր:
219. Թե ուզեին կռվել, ուժը նրանց կողմն էր արդարև,
Բայց Գերնոտը և Հագենը շտապեցին պատվիրել՝
Պատգարակի վրա առնել վիրավորված քաջերին
Եվ հինգ հարյուր թանկ գերիներ հետո Վորմս ճամփեցին:

220. Եվ դանիացի ասպետներն էլ, տանուլ տված, դարձան տուն,
Եվ սաքսերն էլ թույլ կովեցին՝ չփայլելով այդ մարտում,
Դանիացիք ու սաքսերն անչափ տխուր էին, Հուսահատ՝
Մեռածները նրանց պիտի նզովեին անընդհատ:
221. Եվ բռնակիր գրաստները կրում էին Հռենոս
Ջենք-գրաչը ասպետների, որ կովեցին Հանց Հերոս,
Ջիզֆրիդի նման չկար ասպետաց մեջ Գուլտերի,
Դա տեսան և բուրգունդական իշխանները Հատընտիր:
222. Եվ Գերնոտը փութով Վորմս սուրհանդակներ առաքեց,
Թող այնտեղ էլ՝ Հայրենիքում, բերկրանք ապրեն լուրով մեծ,
Ինչպես իրենց Հաղթանակը Հաջողվեց՝ թող իմանան,
Քաջ ասպետներն իրենք էին Հաղթանակի քաջ վկան:
223. Սուրհանդակներն ընկան ճամփա, լուրն Հասցրին փառավոր,
Բերած լուրով ուրախացան տիկնայք, որոնք ամեն օր
Տիրում էին ու արտասովում սրտում ամեն չար կասկած,
Ջէին Հոգնում Հիմա արդեն Հարցում անել սրտաբաց,
224. Թե ոնց նրանք կարողացան ծնկի բերել թշնամուն:
Բանբերներից մեկին կանչեց Քրիմհիլդը շատ թաքուն,
Տարավ սեյակ, քանզի անչափ ամաչում էր նկատվել,
Ջէ՞ որ մեկը Հերոսներից թանկ էր սրտին առավել:
225. Երբ տեսավ, որ սուրհանդակը արդեն մտավ սեյակն իր,
Քրիմհիլդը՝ գեղեցկուհին, ասաց նրան սիրալիր.
«Եթե ուրախ լուր տաս, բանբեր, քեզ գանձ կտամ, ոսկի շատ,
Ճիշտն ասելով՝ կարժանանաս շնորհներին լիառատ:
226. Դու նախ պատմիր իմ եղբորից, մարդկանցից ինձ մտերիմ,
Եվ ասա, թե չա՞տ են արդյոք մեռածները զարմից իմ,
Ո՞վ էր արդյոք քաջն ամենից: Լսում եմ քեզ, ով բանբեր»:
Ազնիվ բանբերն այսպես ասաց. «Մենք չուներինք վախկոտներ:
227. Սակայն եթե ճիշտն ասեմ Ձեզ, ազնվազույն իմ օրիորդ,
Ասպետներից այնպես խիզախ չմարտնչեց և ոչ ոք,
Ինչպես քաջը օտարական՝ եկած երկրից Նիդեռլանդ,
Ո՞վ կպատմի Հրաշքներն այն, որ նա գործեց մարտում այդ:

228. Տեր արքայի ասպետները բոլորն էլ լավ կովեցին,
Դանկվարտը և Հագենը, մյուսները բուրգունդցի,
Բայց որքան էլ քաջ կովեին, նրանք ասես թույլ քամի՝
Հողմի դիմաց Ջիգֆրիդի՝ որդու Ջիգմունդ արքայի:
229. Նրանք պատվով մարտնչեցին, կոտորեցին անխնա,
Բայց ոչ մեկը չկոտորեց այնքան ոսոխ, որքան նա,
Համարք չկար Ջիգֆրիդի սրից ընկած թշնամուն,
Որքան կանայք քաջի ձեռքից պիտի թափեն դառն արցունք:
230. Մահը պիտի սգան անթիվ Հարսնացուներ դեռատի,
Նրա սրի շառաչն Հատու բռնել էր դաշտը մարտի:
Եվ Հոսում էր արյունն առատ, Հոսում՝ ինչպես բոսոր գետ,
Նա իսկական դյուցազուն է, անզուգական մի ասպետ:
231. Եստ քաջաբար կովեց նաև ասպետ Օրտվայնը՝ Մեոցից,
Ում կողմը որ թեքվում էր նա ահեղ սրով իր մեծղի՝
Կամ վիրավոր, կամ էլ մեռած ցած էր ընկնում առաջին:
Ձեր եղբայրն էլ պատվով կովեց՝ ինչպես վայել է քաջին:
232. Եստ Հոգս բերեց նա գորբերին շնորհիվ իր ավյունի,
Իսկ գորբերը նրանց ընտիր՝ Հենց գուգագն էր արքունի,
Այսպես Հպարտ բուրգունդները արշավանքը շահեցին,
Եվ փրկեցին պատիվն իրենց, անունն անեղծ պահեցին:
233. Եստ շատերի թամբերն այնտեղ դատարկվեցին Հուր-Հավետ,
Երբ սկսվեց կռիվն ահեղ, թնդուններով չարաղետ,
Հռենոսցի ասպետները այնպես էին գրոհում,
Որ թշնամի արքաներին պատում էր ահ ու սոսկում:
234. Նաև անթիվ աղետ բերեց Տրոնյեցին թշնամուն,
Երբ մարտի մեջ մտավ անվախ այս ասպետը քաջանուն,
Նա Հաղթ բազկով շատ շատերին նետեց ճամփան գեհնեի,
Եստ կպատմեն Վորմսում դեռ սխրանքներից Հագենի:
235. Ջինդուդ, Հունուդ ասպետները՝ Գերնտի Հետ մի խմբում
Եվ Ֆուլկերը՝ ասպետը քաջ, խփում էին ու խփում,
Լյուդեգերը նրանց երկար դեռ կհիշի, կցավի
Եվ կափսոսա, որ կանչել է բուրգունդներին մեծ կովի:

236. Ամենաթեմ մարտերը, որ պատահել են երբևէ,
Հինց սկզբից մինչև ավարտ, որ մենք տեսանք արդարև,
Զիգֆրիդի ջանքով եղան և վաստակն են իր բազկի:
Եվ բերում է Հարուստ ավար քաջը հիմա մեր երկիր:
237. Իր Հաղթ բազկով Զիգֆրիդը՝ նիդեռլանդցին քաջարի,
Ստիպեց, որ Լյուդեգաստը Հպատակվի իր սրին,
Նույնը նաև Լյուդեգեբրին՝ թագավորին՝ մեծՀամբավ,
Սակայն լսեք, ազնիվ օրիորդ, թե այդուհետ ինչ եղավ:
238. Այս երկուսին Զիգֆրիդը գերեց ահեղ ուժով իր,
Ոչ մի անգամ այդքան ավար դեռ չի բերվել մեր երկիր,
Ինչ բերում է նիդեռլանդցին բուրգունդական Հոենոսս:
Ու լսում էր դշխոն նրան Հրճվանքով ու անխոս:
239. «Ազնիվ օրիորդ, բերում են և Հինգ Հարյուրի չափ գերի,
Իսկ շուրջ ութսուն գերիններ էլ վերքերի մեջ սոսկալի,
Պատգարակի վրա արնոտ նրանց բերում են այստեղ,
Եվ նրանցից շատ շատերին Զիգֆրիդն է սրատել:
240. Նրանք, որ մեզ ուզում էին դարձնել իրենց Հեգ գերին,
Արդ, իրենք են գերի բերվում մեր թագավոր Գունտերին,
Եվ բերում են նրանց Հաղթած ասպետները վեհապանծ,
Ծփում են մեր դրոշները. ահա լուրը իմ բերած»:
241. Քրիմհիլդի դեմքը ամբողջ կարմրել էր քնքշանքից,
Նա ապրում էր ուրախութուն, բայց ապրում էր և թախիծ,
Երբ հիշում էր Զիգֆրիդին՝ քաջարի իր ասպետին,
Եղբայրների Համար նույնպես սիրտը ցնծում էր սաստիկ:
242. Ապա ասաց Քրիմհիլդը. «Լավ լուր բերիր ինձ, բանբեր,
Դրա Համար քեզ այս ընտիր Հանդերձները վարձ իբրև,
Եվ բացի դա, տասը մարկ ոսկի դու կստանաս անհապաղ»:
Այսպես Հասավ առատածեռն գեղեցկուհուն լուրն ուրախ:
243. Երբ ստացավ սուրհանդակը Հանդերձանքը և ոսկին,
Մոտեցավ իր պատուհանին Քրիմհիլդը՝ գեղանին,
Եվ նայեց դուրս ուրախությամբ, տեսավ՝ գալիս են արդեն
Հաղթանակած բուրգունդները՝ բերկրալից ու ժպտադեմ:

244. Վիրավորներ կային նաև, հաշմանդամներ մեծ մարտի,
Առնում էին նրանք մարդկանց ողջույնն առանց ամոթի,
Թագավորը ասպետներին ընդունելու ելավ արդ,
Զի հոգսերին նրա բոլոր վերջ էր տրվել բազկով հաղթ:
245. Նա ընդունեց ասպետներին՝ թե օտար, թե յուրային,
Ինչպես վայել էր մեծանուն, ազնվական արքային,
Ասպետների հանդեպ սիրտը լի էր սիրով մի անհուն,
Որ հաղթանակ բերին գահին, բերին պատիվ ու անուն:
246. Գունտեր արքան նախ ցանկացավ յուր մարդկանցից իմանալ,
Թե քանին են արշավանքում զինվորներից գտել մահ,
Կորցրել էր թագավորը ընդամենը վաթսուհին քաջ,
Որոնց պետք էր սգալ, ինչպես հերոսներին է պատշաճ:
247. Զինվորները կրում էին զենքեր՝ սաստիկ վնասված,
Սաղավարտներ՝ խիստ ծռումված հարվածներից թշնամյաց,
Պալատի մոտ նժույգներից նրանք իջան հարգալիք,
Եվ ընդունեց նրանց ընդոստ կանչ-ողջույնը ցնծալի:
248. Զինվորներին քաղաքի մեջ ուղարկեցին հանգստի,
Դա արքայի հրամանն էր՝ ամեն ինչ կար պատրաստի,
Զմոռացան և վիրավոր զինորներին օգնել շատ,
Գերիների հանդեպ նույնպես արքան եղավ գթառատ:
249. Լյուդեգաստին ասաց արքան. «Բարով տեսանք Ձեզ այստեղ,
Ձեր մեղքերի պատճառով ես կրեցի շատ վնասներ,
Բայց հաղթել ենք, կմոռանանք կորուստները անկասկած,
Աստված օգնի ասպետներս, մեծ է վաստակը նրանց»:
250. «Դուք կարող եք հպարտանալ, — պատասխանեց դանիացին, —
Ոչ մի արքա այսքան ավար չի վերցրել տակավին,
Կվճարենք մենք ձեզ ոսկով, ալրանքներով թանկարժեք,
Բարեհոգի եղաք անչափ, չենք մոռանա դա երբեք»:
251. Գունտերն ասաց. «Արդ ազատ եք, դա վճիռն է իմ արդար,
Բայց խոստացեք, որ իմ երկրից չեք հեռանա թաքնաբար,
Ձեր քեֆին աստ ապրեք, քանի թույլ չեմ տվել ձեզ հաստատ՝
Հեռանալ իմ երկրից մի օր»: Լյուդեգաստը գոհ էր շատ:

252. Նրանց համար հատկացրին ընտիր տեղ ու տաղավար, Արդ վիրավոր գերիների հանդեպ եղան Հոգատար, Առողջներին մատուցեցին թուևնդ գինի ու մեղրահաց, Եվ ոչ մեկը գերիներից բնավ դժգոհ չմնաց:
253. Հավաքեցին ամբարներում ջարդոտված տեգ ու ասպար, Նաև անթիվ թամբեր արնոտ՝ աչքից հեռու տվին պահ, Որ չտեսնեն կանայք դրանք և չարտասվեն դառնահեծ, Ձէր խնայվել կյանք ու արյուն հաղթանակի համար մեծ:
254. Ձինվորների հանդեպ արքան շատ շռայլ էր, խղճի ծով, Եվ քաղաքը լիքն էր հիմա տեսակ-տեսակ մարդկանցով, Ով հիվանդ էր, արքան նրան խնամում էր հայրաբար, Գոռոզությունն ասպետների կարծես անցել էր իսպառ:
255. Արքան հիվանդ զինվորների բուժման համար շուտափուլթ Ձէր խնայում արծաթ, ոսկի՝ կամեցուցյամբ բարեգուլթ, Որ կազդուրվեն մարտից հետո, շուտ ամոքվեն, Ելնեն վեր, Դրա համար թագավորը տալիս էր և ընծաներ:
256. Ով ուզում էր վերադառնալ, գնալ հասնել տուն արդեն, Նա սիրալիր խնդրում էր, որ դեռ մնան, չչտապեն, Հորդորում էր իշխաններին, խրախուսում անդադար, Որ լավ նայեն զինվորներին՝ ըստ վաստակի ու արդար:
257. Ապա ասաց Գերնոտն արի. «Տուն ուղարկեք ամենքին, Բայց պատվիրեք՝ վեց շաբաթից բոլորը ետ գան կրկին, Որ մասնակցեն արքայական մեծ հանդեսին հաղթույթյան, Իսկ մինչև այդ շատերն արդեն կապաքինվեն անպայման»:
258. Ձիգֆրիդը ևս խնդրեց թույլ տան՝ ընկնի ճանապարհ, Բայց երբ արքան իմացավ դա, խոսքով քաղցր, հոգատար Առաջարկեց, որ չչտապի դեռ ասպետը պատվարծան, Թե չլիներ Քրիմհիլդը, չէր համոզի և արքան:
259. Ոսկու համար չէր ծառայում, ոսկու տեր էր ու գահի, Նրա համար կարևոր էր՝ սերը շահել արքայի, Նաև նրա ապպետների, ովքեր տեսան իր անլուր Սխրանքները մարտում ահեղ և գործերը ամենուր:

260. Ու մնաց նա Քրիմհիլդի սիրո համար՝ սրտում ցավ,
Որ չի կարող տեսնել նրան, բայց այդ օրն էլ չուշացավ,
Ինչպես սիրտն էր տենչում, քաջը իր դիցուհուն գտավ անդ,
Եվ մի օր էլ նրան առած՝ վերադարձավ Նիդեռլանդ:
261. Ասպետական խաղերի էր կոչում արքան շարունակ,
Դրա համար գտնում էր նա քաջեր ամեն ժամանակ,
Եվ պատվիրեց Վորմսին մոտիկ, Հոենոսի Հենց ափին,
Տեղ պատրաստել նրանց համար, ով պիտի գար Հանդեսին:
262. Այն ժամանակ, երբ Հանդեսի օրը արդեն մոտեցավ,
Եվ գեղանի Քրիմհիլդը եղբայրներից իմացավ,
Որ գալու են բազում հյուրեր ու իշխաններ մեծազոր,
Գործի անցան չքնաղ կանայք՝ չքնելով գիշեր, զօր:
263. Պատրաստեցին Հանդերձ, զարդեր՝ մեծ Հանդեսին կրելու,
Լուրը հասավ չքեղաշուք Ութեին՝ մայր թագուհուն,
Որ գալիս են իշխաններն ու ասպետները տերության,
Եվ Հանեցին պահուստներից զգեստները բոլոր թանկ:
264. Զավակների պատվի համար, պատվի համար իր նախնյաց,
Ճոխ Հանդերձներ նա բաժանեց օրիորդներին ու տիկնանց,
Պատանի շատ ասպետներ էլ շորեր հագան թանկագին,
Իր հյուրերի համար նույնպես հոգ տարավ մեծ թագուհին:

ԴԻՊԼԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Թե ինչպես Զիգֆրիդը առաջին անգամ տեսավ Քրիմհիլդին

265. Գալիս էին դեպ Հոենոս, գալիս էին օր-գիշեր,
Տեսնել էին Հանդեսն ուզում սեզ ասպետներ ու քաջեր,
Եվ նրանց, որ արքաներից կանչ-հրավեր ունեին,
Տալիս էին ճոխ ընծաներ, նժույգ, Հանդերձք թանկագին:
266. Պատրաստ էին սեղան, աթոռ, ինչպես որ ինձ ասացին,
Ամեն մեկը իր տեղն ուներ՝ արժան դասին իր, կարգին,
Երեսներկու իշխան միայն՝ զարդն Հանդեսի իսկական,
Մրցում էին տիկնայք իրենց պերճանքներով թովչական:

267. Դադար չունենր Գիզելհերը՝ կրտսեր արքան սրտաբաց,
Ավագ եղբոր հետ միասին՝ Գերնոտի ու իր մարդկանց,
Ընդունում էր թանկ հյուրերին՝ լինեն օտար, յուրային՝
Ամեն մեկի համար նրանք ջերմ ողջույններ ունեին:
268. Ամենուրեք հյուրեր էին՝ ասպազենով ոսկեզարդ,
Հանդերձներով շքեղաշուք, վահաններով կորնթարդ,
Գալիս էին մասնակցելու արքայական տոնին բաց,
Հիվանդները անգամ Վորմսում ոտքի ելան կազդուրված:
269. Հիվանդները, որ անկողնում տանջվում էին լուելյայն,
Մոռացան, թե ինչ է մահը, վերքի ցավը հոգեհան,
Եվ ոչ մեկը չէր մտածում՝ վիրավոր է կամ տկար,
Այլ այրվում էր մեծ հանդեսի սպասումով կենարար:
270. Ինչպես էին տեսնել ուզում հանդիսությունն արքայի:
Խնդություն էր ամենուրեք, անթիվ հյուրեր անդ կային,
Եվ բոլորը, ով այնտեղ էր մեծ հանդեսի օրերում,
Բերկրում էին, քանզի ամբողջ Բուրգունդիան էր բերկրում:
271. Երրորդության տոնի օրը, լուսաբացի հետ տեսան,
Հոնոսի փն են գալիս զգեստներով հուրհրան,
Հինգ հազար մարդ կամ ավելի: Եվ հանդեսը ծայր առավ:
Եվ այդ օրը թևածում էր բուրգունդների փառքն անբավ:
272. Միամիտ չէր արքան բնավ, նա զգում էր շարունակ,
Թե ինչպես է նիդեռլանդցի դյուցազունը բովանդակ
Հոգով ձգվում դեպ իր քույրը, որին տեսնել չէր կարող:
Զկար նրան հավասարը օրիորդների մեջ գերող:
273. Օրովայն Մետցին այդժամ դիմեց թագավորին և ասաց.
«Որպեսզի մեր տոն-հանդեսը լինի մեծ ու փառապանծ,
Հարկ է հիմա պատվիրեք, որ ներկայանան աչազեղ
Օրիորդները մեր արքունի, որոնք անթիվ են այստեղ:
274. Ո՞վ կարող է ասպետ մարդուն երջանկացնել ավելի,
Քան գեղանի օրիորդները, տիկիները նազելի,
Զեր քրոջն էլ պատվիրեք, որ դա մասնակցի հանդեսին»:
Այս խորհուրդը շատ դուր եկավ ասպետների մեծ մասին:

275. «Համաձայն եմ, — արքան ասաց, — ես դա կանեմ մեծ սիրով»:
 Եվ բոլորը ուրախացան թագավորի խոսքերով:
 Լուր տվեցին մայր Ութին ու դստերն իր աննման,
 Որ աղախին-նաժիշտներով վեր կենան ու պալատ գան:
276. Սկսեցին նրանք փնտրել զգեստները լավագույն,
 Մնդուկներից դուրս բերեցին Հանդերձներ՝ ճոխ ու փայլուն,
 Ապա նաև զարդեղեններ՝ ապարանջան, մանյակ, օղ,
 Զարդարվեցին և նրանց Հետ շատ աղջիկներ լուսաշող:
277. Եվ այդ լուրով ուրախացան պատանիներն ահագին,
 Նրանք, որոնք գերի էին կանացի մի Հայացքին,
 Որի համար պատրաստ էին տալ թե երկիր և թե գանձ,
 Եվ նրանց, որ չէին տեսել, կտեսներն արդ՝ քիչ անց:
278. Ապա ազնիվ թագավորը Հրամայեց՝ ուղեկցեն
 Քրիմհիլդին և Ութին Հարյուր զինվոր քաջագին,
 Արքայական ծեսին վայել, պատշաճությամբ վեհապանծ:
 Դա էր կարգը բուրգունդական արքաների սահմանած:
279. Ահա տեսան, որ գալիս են թագուհին ու դուստրն իր,
 Քայլում էին թագուհու Հետ աղախիններ Հատրնտր՝
 Հարյուր Հոգի կամ ավելի՝ ճոխ, զարդարուն զգեստով,
 Քրիմհիլդին ուղեկցում էր խումբն օրիորդաց բարձրատուն:
280. Եվ բոլորը նայում էին նրանց երթին, նազանքին,
 Ամենից շատ ասպետները, ովքեր դողով անմեկին,
 Սպասումի բերկրանքի մեջ Հույս ունեին, որ Հիմա,
 Քրիմհիլդին՝ գեղեցկուհուն կտեսնեն գեթ մի պահ:
281. Գեղեցկուհին անցավ ահա, արշալույսն էր դա ասես,
 Որ բացվում է մութ երկնքում և սփռում է Հույս ու սեր,
 Թեթևացան ամենքն ասես և մոռացան Հոգսն իրենց,
 Զի կանգնած էր իրենց առաջ գեղեցկութունն ինքն անեղծ:
282. Զգեստները շողում էին ակների մեջ նրբահյուս,
 Եվ ակների վարդագույնը սփռվում էր դեմքին կույս,
 Ով Հանդիպում, կանգ էր առնում, չէր անցնում անտարբեր,
 Նման Հրաշք գեղեցկութուն չէր տեսել ոչ մեկը դեռ:

283. Թույլ, մարմրուն աստղերի մեջ՝ լիպուսնի պես պայծառ,
Որի լույսը թափանցում է ամպերից մուգ՝ ցուքով վառ,
Այդպես էլ նա խամրեցնում էր փայլը կողքի ողջ կանանց՝
Արբեցնելով մարդկանց հոգին և սրտերը նրբազգաց:
284. Եվ նրա հետ գնում էին մանկավիճի ու թիկնապահ,
Բացում էին նրանց առաջ ասպտնները Ճանապարհ,
Կույսին տեսնել գեթ մեկ անգամ կամենում էր ամեն ոք,
Իսկ ասպտին՝ Ջիգֆրիդին, դա և խինդ էր, և մորմոք:
285. Նա թաղվել էր մտքերի մեջ. «Հնարավոր է, միթե,
Նրա սրտին օրից մի օր կարողանամ ես տիրել,
Լավ էր՝ բնավ չծնվիի և մեռնի անանուն»:
Բայց զգում էր ծածուկ հրճվանք ու բերկրանք մի թաքուն:
286. Եվ կանգնել էր ասպտն այդպես Քրիմհիլդից մեկուսի,
Մազաղաթի նկար լինել ասես դեմքը ասպտի՝
Արված ձեռքով ու Հմտությամբ վարպետների Հանճարեղ:
Ոչ մի տեղ դեռ այդքան չքեղ, պարթև ասպետ չէր եղել:
287. Պահնորդները կույսի առաջ ճամփան էին ազատում,
Հեռացնելով նայողներին՝ ասպետ, թե Հյուր մեծատուն,
Թունդ էր լինում սիրտը նրանց և մարմինն էր առնում դող՝
Իրենց առաջ տեսնելով սեգ փերիններին կախարդող:
288. Գունտերի մոտ քաջ Գերնտը խոսք բաց արեց ու ասաց.
«Վեհաշուք տեր՝ մեր թագավոր, այստեղ նա է, ով սրտանց
Մեզ բերեց իր օգնությունը: Պարտավոր եք ասպտին
Ձեր հարզը տալ: Ասում եմ սա բարի մտքով, ոչ ետին:
289. Կանչեք Հիմա Ջիգֆրիդին հրամանով Ձեր արդար,
Որ ողջունի Քրիմհիլդը, ամենաթանկ վարձն է դա,
Ոչ մի ասպետ Քրիմհիլդից չի ընդունել վարձ երբեք,
Ջիգֆրիդը գոհ կլինի, նրա սիրտը կշահենք»:
290. Եվ Գունտերի մարդիկ իսկույն այս ու այն կողմ փութացին
Ու գտնելով նիդեռլանդցի արքայազնին՝ ասացին.
«Թույլ տվեք, տեր, պետք է Հիմա Դուք պալատ գաք շտապով,
Արքայաքույր Քրիմհիլդը պիտ ողջույն տա Ձեզ պատվո»:

291. Զվարթացավ ասպետը շատ, երբ որ լսեց լուրն այս թանկ,
Հոգում զգաց ուրախություն և անսահման բերկրանք,
Որ վերջապես արժանացավ տեսությանը օրիորդի
Եվ նրան է մատուցելու անհուն քնքշանքն իր սրտի:
292. Երբ ասպետին տեսավ կանգնած ՔրիմՀիլդը իր դիմաց,
Վարդ կտրեցին այտերն, ապա դիմեց քաջին և ասաց.
«Ողջույնս Ձեզ, ազնիվ ասպետ, Վորմսի պաշտպան անխորտակ»:
Այս խոսքերից Ջիզֆրիդի սիրտը խայտաց կրծքի տակ:
293. Ողջունեց և ինքը, ապա ձեռքը տվեց օրիորդին,
Եվ նրա հետ քայլեց շուքով հաղթանակած ասպետի:
Նայում էին նրանք իրար հայացքներով նվաղուն,
Ջիզֆրիդն ու ՔրիմՀիլդը՝ նայում էին, բայց թաքուն:
294. Արդ, սիրո՞ւց էր մեկ-մեկ սեղմում ՔրիմՀիլդը ժպտադեմ
Ճերմակ ձեռքով ձեռքն ասպետի, ինձ չեն պատմել, չգիտեմ,
Ձեմ էլ կարծում, թե տազնապն իր հաջողվում էր թաքցնել,
Երևում էր՝ նա սիրում էր սեզ ասպետին իր ջահել:
295. Ոչ ամառվա լուսաբացին, ոչ օրերում մայիսյան
Ջր զգացել Ջիզֆրիդը սրտի բերկրանք մեծ այդքան,
Որքան հիմա, երբ դեռ նոր էր հանդիպել իր սիրելուն,
Եվ նրա հետ ձեռքը ձեռքին արբենում էր ու քայլում:
296. Իսկ շատերն էլ խանդում էին. «Բախտս բերեր երանի,
Նրա նման ես էլ մի օր օրիորդի հետ քայլեի
Կամ սիրեի նրան սրտանց, չթողնեի իմ գրկից»:
Բայց չունեցավ նա ոչ մեկը ասպետի չափ սրտակից:
297. Եվ բազմաթիվ թագավորներ, որ հյուր էին այնտեղ թանկ,
Ընդունեցին նրանց սիրով, մատուցեցին սեր, հարգանք:
Թագավորը Ջիզֆրիդին արտոնեց մի համբույր տա:
Ջիզֆրիդի ջահել կյանքի երջանկագույն պահն էր դա:
298. Ապա ասաց Լյուդեգաստը՝ թագավորը Դանիայի.
«Այս համբույրը անշուշտ խլեց անթիվ կյանքեր մարդկային,
Ես էլ նրա հատու սրից վաստակել եմ շատ ցավեր,
Երանի թե Ջիզֆրիդն այս մեր կողմ չգա երբևէ»:

299. Բազմությունը տիկնանց առաջ կրկին բացեց ճանապարհ,
եվ ըստ կարգի շատ իշխաններ ու ասպետներ թիկնապահ,
Հերթով նրանց ուղեկցեցին դեպի պալատ վերստին,
Այստեղ մի պահ Ձիգֆրիդը աչքից կորցրեց իր կուսին:
300. Եկեղեցի մտան տիկնայք: Քրիմհիլդի Հետ չքնաղ
Կուսերն էին իր ուղեկցող, Հմայիչ էր նա այնքան,
Որ շատերին թվում էր, թե մարմին չէ, այլ լոկ երազ,
եվ շատերի Համար կույսը Հենց երազ էր մի անհաս:
301. Եվ ակնդետ սպասելով ժամերգության ավարտին՝
Երախտապարտ էր անսահման մեր Ձիգֆրիդը յուր բախտին,
Որ Հանդիպեց այն օրիորդին, ով իշխում է իր հոգուն:
Եվ ում սիրտը պատրաստակամ պատասխանեց իր սիրուն:
302. Քրիմհիլդն ու տիկնայք ահա եկեղեցուց դուրս եկան,
եվ ասպետը նորից գտավ սիրելիին աննման,
Գեղեցկուհին գոհությունն իր Ձիգֆրիդին Հայտնեց,
Որ ասպետն իր հաղթ բազուկով հաղթանակը տուն բերեց:
303. «Աստված ինի Ձեզ օգնական,— օրիորդն ասաց ասպետին,—
Այն ամենի Համար, ինչ Դուք ընծայեցիք մեր երկրին,
Ինչի Համար բոլորն այստեղ Ձեզ սիրում են ու Հարգում»:
Եվ լսում էր Ձիգֆրիդը բերկրանքով ողջ հոգու:
304. «Կծառայեմ Ձեզ Հավիտյան,— Ձիգֆրիդը ասաց ջերմ,—
եվ չեմ գտնի Հանգիստ, եթե Ձեզնից հեռու գտնվեմ,
Թե ամեն պահ չկատարեմ բաղձանքները, կամքը Ձեր,
Ձեզ Համար է, ազնիվ օրիորդ, այս ամենը արդարև»:
305. Տասներկու օրն անցավ արագ, անցավ ինչպես երազում,
Տեսնում էին օրիորդի Հետ միշտ ասպետին քաջազուն,
Ամեն անգամ, երբ օրիորդը պիտի գնար արքունիք,
Ուղեկցում էր նրան սիրով Ձիգֆրիդը երջանիկ:
306. Արքունական պալատի մեջ մեծ աղմուկ էր օրնիրուն,
Հսկում էր միշտ բարձր քրքիջ, նվազի ձայն, ցնծություն,
Խրախճանքի մեջ էր անցնում օրն ասպետաց անվանի,
Խրախճանքին չկար ավարտ Հագենի և Օրտվայնի:

307. Ինչ վճռեին արքաները, պատրաստ էին նրանք անդ
Մառայելու անդավաճան՝ սիրո, պարտքի մեջ Հաստատ,
Օտար, ծանոթ, ով էլ լիներ՝ ողջը նրանց գիտեին,
Եվ փառք էին բերում, իրավ, բուրգունդ արքա Գունտերին:
308. Ովքեր մինչ այդ տկար էին, գալիս էին, բայց, պալատ,
Փնտրում էին խինդ ու Հանգիստ ջերմ շրջանում մարդաշատ,
Փորձում էին նաև վարժանք, տեգ ու աշտե արձակել:
Գտնում էին ասպետ, ում Հետ կարող էին դեռ մրցել:
309. Եվ պատվիրեց տոնին արքան մատուցանել սրտաբաց
Ճոխ, զանազան ուտելիքներ: Արքան գիտեր յուր մարդկանց:
Ձէին սիրում իշխաններին, որ գծուծ են ու նվաստ,
Ուստի նա միշտ մարդկանց Հետ էր՝ շռայլությամբ բազմառատ:
310. Հրածեչտին Գունտերն ասաց. «Բարով գնաք, ասպետներ,
Վերջըրեք իմ նվերները, որ տալիս եմ լիաձեռ,
Ձեր վաստակն է, և Հարազատ արքային մի մերժեք Դուք,
Որ պատրաստ է Ձեզ Հետ կիսել թե պատերազմ, թե խնջույք»:
311. Եվ խոսեցին դանեմարքցիք. «Գունտեր արքա, թույլ տվեք,
Մենք էլ գնանք մեր երկիրը, վերադառնանք առՀավետ,
Մենք դաշինք ենք ուզում կնքել, խաղաղություն մշտական,
Ձեռքով Ձեր քաջ ասպետների մեզանից էլ շատն ընկան»:
312. Եվ վերքերից ապաքինված արքաները զույգ՝ գերի,
Որ այդ կովում ամենայն ինչք, բազում մարդիկ կորցրին,
Խընդրեցին Գունտերին, որ թույլ տա իրենց՝ դառնան տուն,
Իսկ սա դիմեց Ջիզֆրիդին՝ մի խորհուրդ տա իմաստուն:
313. Եվ ասաց քաջ նիդեռլանդցուն. «Սաքսերը և դանիացիք
Կամենում են վերադառնալ, մեկնել իրենց Հայրենիք,
Եվ ուզում են խաղաղություն կնքել մեզ Հետ առՀավետ,
Ինչպե՞ս վարվեմ, որն է արդյոք քո խորհուրդը, քաջ ասպետ:
314. Չեմ թաքցնի քեզնից, Ջիզֆրիդ, բարեկամս սրտագին,
Առաջարկի դիմաց նրանք տալիս են մեծ փրկագին՝
Հինգ Հարյուր ձի՝ ոսկով բարձած: Փո խորհուրդն եմ ես ուզում»:
Պատասխանեց Ջիզֆրիդը. «Արքաներին չի սազում

315. Վարվել այդպես: Մենք բոլորին՝ ասպետներին իրենց հետ,
Կթողնենք, որ վերադառնան: Բայց որպեսզի չգան ետ,
Եվ թո երկրի վրա նորից չհարձակվեն մեծ զորքով,
Դրա համար երգում վերցրեք՝ արքայական կնիքով»:
316. «Համաձայն եմ, – Գուևտերն ասաց, – թո խորհրդով լինի թող»:
Եվ այս լուրը արքաներին հասցրեցին մեծ փուլթով:
Որ չեն ուզում նրանց ոսկին, չեն պահանջում փրկագին,
Բավական է վիշտը նրանց, կորուստները թանկագին:
317. Վահանների վրա լցված արդ բերեցին ոսկին ալ,
Որ բաժանեց ընկերներին արքան ձեռքով իր շռայլ,
Հինգ հարյուր մարկ ոսկի էր դա, ոսկի ընտիր, անթերի,
Դա Գերնտը խորհուրդ տվեց իր եղբորը՝ Գուևտերին:
318. Արդ՝ մեկնումից առաջ բոլոր ասպետները քաջագուն
Հրաժեշտի այց տվեցին օրիորդին և թագուհուն,
Մեծ պատիվ էր նրանց համար դա, քանի որ երբևէ
Նման կարգի հրաժեշտներ նրանք չէին դեռ տվել:
319. Տաղավարներն ամայացան երբ հյուրերը մեկնեցին,
Սակայն այստեղ հին օրերի սովորույթով մնացին
Թագավորը և իր մարդիկ ու մի քանի մեծավոր,
Գնում էին նրանք այցի Քրիմհիլդին ամեն օր:
320. Զիգֆրիդն էլ ուզեց մեկնել, վերադառնալ տուն կրկին,
Նա հույս չուներ հասնել նրան, ում ձգտում էր իր հոգին,
Լսեց արքան, թե միտք ունի քաջը մեկնել Քսանտեն,
Թախանձանքով դիմեց նրան Գիզելհերը ժպտադեմ:
321. «Ո՛ր եք դնում, ազնիվ ասպետ, անսացեք իմ խնդրանքին,
Մնացեք մեր ասպետաց հետ, լսեք Գուևտեր արքային,
Ինչ կամենաք՝ կկատարվի, չեք զգա հոգս ու տաղտուկ,
Այստեղ չքնաղ աղջիկներ կան, որոնց համար կուռք եք Դուռք»:
322. Համաձայնեց Զիգֆրիդը. «Ախոռում թող մնա ձիս,
Ուզում էի դնալ, այո, սակայն միտքս փոխեցի,
Տեղը դրեք վահան և սուր: Ընկել էի ոտ ու ձեռ,
Սակայն եղբայր Գիզելհերը ստիպեց, որ մնամ դեռ»:

323. Այդպես մնաց Ջիզֆրիդը արքունիքում Գուևտերի,
 Նա ապրելու այլ տեղ չուներ, մի այլ անկյուն մտերիմ,
 Որ գրավեր նրան այնքան, որ պարզևեր կյանք ու սեր:
 Զէ՞ որ այստեղ Քրիմհիլդին երբ ուզենար՝ կտեսներ:
324. Նրա համար միայն մնաց Ջիզֆրիդը քաղնատիր,
 Որ զանազան ժամանցներով անցկացնում էր օրերն իր,
 Բայց տանջում էր սերը նրան, սերը կույսի էն անգին,
 Որի համար զրկվեց մի օր քաջն արևից ու կյանքից:

ԴԻՊԼԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

Թե ինչպես Գուևտերը Բրունհիլդի համար իսլանդիա մեկնեց

325. Եվ ծովերի վրա հեռու իշխում էր մի հրաշք կին,
 Նրա նման ոչ ոք չկար շնորհներով անմեկին,
 Գեղեցկություն ուներ անչափ և նույնքան էլ բազկի ուժ,
 Նա քաջերի հրազանքն էր՝ իր երկրի պես հազած մուժ:
326. Եվ նստում էր պերճ թագուհին ծովից անդին կղզում իր,
 Նրա նման գեղեցկուհի չկար, եթե փնտրեիր,
 Անչափելի գեղեցիկ էր, սակայն ուժեղ ավելի,
 Եվ Հաղթում էր միշտ խաղերում ասպետներին իր երկրի:
327. Քարը նետում ու հետևից թռչում-անցնում էր իսկույն,
 Ասպետներից ով որ խնդրեր ձեռքն օրիորդի քաջագույն,
 Պետք է երեք մենամարտում ծնկի բերեր օրիորդին,
 Եթե պարտվեր թեկուզ մեկում՝ զրկվեր կյանքից իր պիտի:
328. Տարածվել էր ողջ աշխարհում հզոր փառքը էն կույսի,
 Նրա մասին լսեց նաև տիրակալը Վորմսի,
 Այդ փառահեղ կինը տիրեց նրա սրտին ու մտքին,
 Դրա համար քանի ասպետ, ավաղ, զրկվեց իր կյանքից:
329. Ասաց Վորմսի տիրակալը. «Մեկնեմ ծովի կողմ պիտի,
 Բրունհիլդին գնամ գտնեմ՝ ինչ էլ որ ինձ պատահի,
 Հանուն նրա ես տալիս եմ իմ մարմինը և հոգին
 Կամ ես դրանք կկորցնեմ, կամ կլինի նա ինձ կին»:

330. Ձիգֆրիդն ասաց. «Արքա Գունտեր, խնայիր դու կյանքը քո,
Այդ կնոջ Հետ Հանդիպելը անչափ լի է վտանգով,
Ով ուզում է նրա սերը, վճարում է սաստիկ թանկ,
Լավ մտածեք ճամփից առաջ, իմ խորհուրդն է՝ չգնաք»:
331. Հագենը թե. «Եթե արդեն Ձեր վճիռն է անխափան,
Ապա մեկնեք Ձիգֆրիդի ուղեկցությամբ անպայման,
Հույժ քաջարի ասպետ է նա, միտքը հստակ, աչալուրջ,
Նաև վարքին, սովորություն լավ ծանոթ է էդ կնոջ»:
332. Գունտերն ասաց. «Ազնիվ Ձիգֆրիդ, օգնելո՞ւ ես ինձ, ասա,
Բրունհիլդը իմ փափազն է, մեկնեք ինձ Հետ Իսլանդիա,
Եվ ծովերից այն կողմ եթե մենք բաղձանքին Հասնենք մեր,
Օգնությանդ դիմաց, ասպետ, կստանաս մեծ պատիվներ»:
333. Եվ Ձիգմունդի որդին այսպես պատասխանեց արքային.
«Ես կօգնեմ Ձեզ, արքա, եթե Ձեր քրոջը տաք ինձ կին,
Քրիմհիլդին գեղեցկուհի, վաղուց սիրում եմ նրան,
Ոչ մի պարգև ես չեմ ուզում փոխարենն իմ օգնության»:
334. «Խոսք եմ տալիս,— Գունտերն ասաց,— ես կանեմ քեզ Համար դա,
Բրունհիլդին Հենց որ բերենք մեր երկիրը Բուրգունդիա,
Քրիմհիլդին քեզ կին կառնես ու կտանես քո երկիր,
Եվ քո ամբողջ կյանքը կապրես գրկում նրա սիրալիր»:
335. Իրենց խոսքը ասպետները Հաստատեցին և երդմամբ,
Սակայն նրանց սպասում էր ճանապարհ՝ լի նեղությունք,
Քանզի մինչև Բրունհիլդին Վորմս բերին, դեռ այնքան
Բուրգունդները անթիվ տհաճ փորձանքների մեջ ընկան:
336. Պատրաստություն էին տեսնում բուրգունդները փութեռանդ,
Ծամփի Համար Ձիգֆրիդը Անտես թիկնոցն էլ առավ,
Ձի թե պետք զար, կարողանար անտես մնալ աչքերից,
Ալբերիխից էր խել դա՝ նիբելունգյան գաճաճից:
337. Երբ Հագնում էր դա ասպետը՝ Ձիգֆրիդը քաջարի,
Բազմապատիկ մեծանում էր գորությունը իր միջի,
Տասնևերկու մարդու չափով ուժ էր առնում նա իսկույն,
Այդպես միայն կարողացավ Հաղթել գոռոզ թազուհու:

338. Այլ կախարդանք ևս ունեի թիկնոցը այդ տնավոր,
 Նրան տիրել կարող էր լոկ մեկ հողածին, ոչ ավել,
 Ով Հագնում էր, նրան ոչ ոք այդուհետ չէր նկատում,
 Այդպես հաղթեց, բայց և ինքն էլ մորմոք ապրեց անհաստում:
339. «Հապա ասա, քաջ Ջիգֆրիդ, ծովն ինչպես եսք անցնելու,
 Եվ որպեսզի ինձ ընդունեն պատշաճ երկրում այդ հեռու,
 Մենք զինվորեն՝ ր տանենք մեզ հետ, թե՞ ասպետաց մի ջոկատ:
 Երկու Հազար զինվոր հիմա սպասում են կազմ-պատրաստ»:
340. «Ինչիդ է պետք զորքը այդչափ, — բազմահմուտ քաջն ասաց, —
 Բրունհիլդը անողոք է, թե չարացավ նա հանկարծ,
 Կկործանի, թեկուզ տանես զորքեր անթիվ անհամար:
 Մենք կվարվենք խոհեմորեն՝ կընտրենք մեկ այլ ճանապարհ»:
341. Մեզ՝ ասպետաց, հարմար է, որ Հոենոսով նավենք վար,
 Ես կասեմ, թե ովքեր պիտի մեզ հետ ընկնեն ճանապարհ,
 Մենք կլինենք չորս ասպետով, ծովը կանցնենք և հետո
 Ոտք կդնենք կնոջ կղզին: Մնացածը իր հերթով:
342. Մեկնողներից մեկը Դուք եք, մյուսը՝ ես անկասկած,
 Երրորդ մարդը Հագենն է, նա անվախ է շատ, կյանք տեսած,
 Իսկ չորրորդը՝ Դանկվարտն է, ասպետը քաջ, դիմացկուն,
 Հազար մարդ էլ կանգնի մեր դեմ մենք կհաղթենք թագուհուն»:
343. Ապա հարցրեց Գունտեր արքան. «Հիմա ասա, քաջ ասպետ,
 Երբ տեղ հասնենք, իսկ ես դրան չեմ կասկածում այսուհետ,
 Ի՞նչ զգեստով ներկայանանք Բրունհիլդին գեղանի,
 Որ չգցենք նրանց աչքում պատիվը մեր արքենի»:
344. «Բրունհիլդի արքունիքում ասպետները և տիկնայք
 Ամենալավ զգեստներն են կրում, որ կան լուսնի տակ:
 Պատշաճորեն պիտ հետևենք բոլորս մեր հագ-կապին,
 Որ մեզ Հանկարծ վնաս չտանք զգեստներով անհարկի»:
345. Գունտեր արքան այդժամ ասաց. «Ինձ թողեք այդ գործը Դուք,
 Ես կգնամ, կինդրեմ Մայր թագուհուն վեհաշուք,
 Թող մեզ Համար իր տիկնանց հետ պատշաճ Հանդերձ պատրաստի,
 Որ ամոթով չլինենք, երբ ներկայանանք օրիորդին»:

346. Հպարտ Հագենն այդժամ դիմեց նրան խոսքով մտերիմ՝
«Բայց ինչու եք դրա Համար դիմում Ձեր մորը, տեր իմ,
Դուք դա ասեք Ձեր քրոջը: Շնորհներով անթերի,
Նա կկարի ամենալավ զգեստները աշխարհի»:
347. Ապա քրոջն Հայտնեց արքան, որ ուզում է դալ այցի,
Գունտերի Հետ Ձիգֆրիդն էլ ուզեց տեսնել սիրածին,
Ճոխ զգեստներ օրիորդն Հագավ և սպասեց սիրավառ՝
Ընդունելու երկու քաջի՝ իր սրտին մոտ Հավասար:
348. Նածիչտները նրա նույնպես զարդարվեցին տեղ տեղին:
Ու երբ եկան ասպետները, արքայաքույր գեղանին
Իր գահուլքից իջավ, դնաց ասպետներին ընդառաջ,
Եվ ընդունեց թանկ Հյուրերին՝ սիրտը անուշ դող առած:
349. «Բարով եկաք, — եղբորն ասաց, — ուրախ եմ, որ տեսա Ձեզ,
Եվ Ձեր ազնիվ ընկերոջը, Ձիգֆրիդին ազնվատես,
Ի՞նչ Հոգս ունեք, ի՞նչն է բերել ձեզ, ասպետներ պատվարժան,
Ձեզ օգնելու Համար սրտանց ես պատրաստ եմ ամեն ժամ»:
350. Պատասխանեց Գունտեր արքան. «Ասեմ, քույր իմ սիրելի,
Մեծ Հոգսեր ենք ահավասիկ մենք առել մեր ուսերին,
Մենք մեկնում ենք օտար երկիր՝ նպատակով մի շատ լուրջ,
Դրա Համար կարիք ունենք Հանդերձների վայելուչ»:
351. «Սիրելիներ, նստեք, — ասաց, ինչպես իրեն է վայել, —
Եվ պարզ պատմեք, թե Ձեր սիրտը Հանկարծ ով է գրավել,
Որի Համար ասպետներդ պիտի անցնեք գետ ու ծով»:
Քրիմհիլդը առավ նրանց ձեռքերն անհուն զգվանքով
352. Եվ դեպի ճոխ գահուլք տարավ, որին նստած էր Հենց նոր,
Կարված էր այն թանկ կտորից ոսկենկար, նախշավոր,
Բանված էին եզերքները դերձաններով գեղեցիկ,
Եվ Հյուրերը Քրիմհիլդի նրա վրա բազմեցին:
353. Նայում էին սիրահարներն իրար քնքուշ, անձկավետ,
Կարծես իրար չէին տեսել Հարյուր տարի և ավել,
Քրիմհիլդն էր նրա սրտում, ինքն էլ՝ սրտում իր կույսի,
Որին մի օր պիտի դառնար ասպետը այր-ամուսին:

354. «Շատ սիրելի քույր իմ,— ասաց թագավորը՝ սեզ արքան,—
Մենք չենք կարող ոչինչ անել առանց քո թանկ օգնության,
Գնում ենք արդ երկիրն Հեռու Բրունհիլդի՝ ինձ կանչող,
Ինչպես այնտեղ երևանք մենք՝ չուեննալով զգեստ ճոխ»:
355. Արքայաքույր Քրիմհիլդը պատասխանեց ժպտադեմ.
«Սիրելիդ իմ, Գուևտեր, ես ձեզ կօգնեմ որքան ուժ ունեմ,
Կպտրաստեմ ձեզ Հանդերձներ՝ այն, ինչ ուզում եք այժմ,
Իսկ ով չօգնի այդ գործում ինձ, օ, չեմ ների, կպատժեմ»:
356. Բայց ինչու եք Դուք ինձ խնդրում այդպես վախով ու երեք,
Հրամայեք իբրև իմ տեր՝ թագավորաց կարգով մեր,
Ես Ձեր բոլոր պատվերները կկատարեմ մի առ մի,
Կկատարեմ նաև սրտանց»,— ասաց Հանգով մտերմիկ:
357. «Սիրելի քույր, Հարկավոր են մեզ զգեստներ բարետես,
Պիտի հրաչք քո ձեռքերով Հանդերձները մեր ձևես,
Իսկ կկարեն օրիորդներդ, այնպես, որ մեզ լավ սազ գան,
Եվ չլինի՝ ճանապարհից որ ետ ընկնենք մենք Հանկարծ»:
358. Արքայաքույր Քրիմհիլդը ասաց նրանց. «Տյարք իմ,
Որքան պետք է, մետաքս ունեմ, իսկ դուք բերեք ինձ անգին
Քարեր ձեր լայն վահաններով՝ լալ, զմրուխտ ու գոհար,
Ու կտեսնեք, ինչ զգեստներ մենք կկարենք ձեզ Համար»:
359. «Իսկ ովքե՞ր են մեկնում,— Հարցրեց Քրիմհիլդը Գուևտերին,—
Ձեզնից բացի ուրիշ ովքե՞ր՝ այդ երկիրը ծովային»:
Գուևտերն ասաց. «Մենք՝ երկուսս ու մեզ Հետ զույգ թիկնապահ,
Հագենը և Դանկվարտը՝ ասպետները փառապանծ»:
360. Բայց լավ հիշիր, սիրելի քույր, ինչ եմ հիմա ասում քեզ,
Ջգեստները մեր չորս օրվա Համար պետք է պատրաստես,
Օրը երեք անգամ անշուշտ պետք է փոխենք մենք դրանք,
Եվ նայիր, որ լինեն շատ ճոխ ու ներչնչեն ակնածանք»:
361. Եվ դուրս եկան ուրախ ու գոհ ասպետները դյուցազուն,
Ապա կանչեց Քրիմհիլդը նաժիշտների երեսուն,
Որ գան իր մոտ, իր սենյակում աշխատելով ժրաջան՝
Ձևեն, կարեն նրանց Համար Հանդերձներ պերճ, աննման:

362. Արաբական մետաքսը, որ սպիտակ էր ինչպես ձյուն,
Նուրբ մետաքսը ծաղամանկից, որ ուներ մուգ կանաչ գույն,
Ճոխ Հանդերձներ կդառնային քարերի Հետ շողարձակ,
Եվ ՔրիմՇիլդն առաջինը առավ ասեղ ու դերձան:
363. Անդրծովյան ձկան կաշին, որ դժվար էր ճարվում շատ,
Պատեցին այդ մետաքսներով, զարդարեցին ոսկեխայտ,
Արժեք նայել դրանց վրա ու դրանցով զարդարվել,
Զի տեսնողին պիտի սաստիկ զարմացնեին արդարև:
364. Նաև ընտիր մետաքս ուներ, որ բերված էր Հեռավոր
Մարոկկոյից ու Լիբիայից, դրանց էին լոկ սովոր
Արքաները ազնվազարմ, իշխանները մեծանուն,
Եղբոր Համար ՔրիմՇիլդը ոչ մի բան չէր խնայում:
365. Ու քանի որ ասպետները անդրծով պիտ մեկնեին,
Ուր կնգումի ճերմակ մորթին չէր զարմացնի ոչ մեկին,
Ուստի ընտրեց նրանց Համար սեփ-սև մետաքս, որ ընտիր
Ու բաղձալի Հանդերձանքն էր յուրաքանչյուր ասպետի:
366. Արաբական կերպսը նուրբ շողշողում էր աստղազարդ,
Եվ օրնիրուն, չարչարվելով աղջիկները ոսկեմատ,
Յոթ շաբաթում պատրաստեցին զգեստները պատվավոր,
Պատրաստ էին նաև նրանց զենք-զրահը արդեն նոր:
367. Այդժամ ելան ասպետները, իջան դեպի գետն իսկույն,
Պատրաստելու իրենց Համար նավ դյուրասահ, դիմացկուն,
Որ դրանով արքան վստահ լողար, իջներ դեպի ծով,
Իզուր չէր, որ աղջիկները աշխատեցին եռանդով:
368. Եվ Հայտնեցին ասպետներին, որ կարված է ու պատրաստ,
Ինչ ոչ պիտի Հագնեն նրանք՝ զգեստները ոսկեզարդ,
Ամենայն ինչ տեղը տեղին արդեն պատրաստ է իսպառ,
Ուստի ոչինչ չի խանգարում, որ ընկեն ճանապարհ:
369. Գունտեր արքան իմաց տվեց իր ուղեկից ասպետաց,
Որ վերցնելու գնան իրենց Հանդերձները պատվիրած,
Նաև փորձեն՝ իրենց վրա դրանք նստում են կարգին,
Եվ գոհություն Հայտնեն նաև օրորդներին ըստ կարգի:

370. Ով տեսնում էր ասպետներին Հանդերձներով շողշողուն,
Ասում էր, որ չի Հանդիպել նման բանի աշխարհում,
Նման զգեստ դեռ չի կրել ոչ մի ասպետ մեծատուն,
Ձեռն ամաչի նրանք բնավ Բրունհիլդի պալատում:
371. Ուստի եղան շնորհակալ օրհորդներին ոսկեմատ,
Ապա եկավ պահը նրանց հրածեչտի հուզառատ,
Հրածեչտը նրանք այնպես ասպետաբար տվեցին,
Որ արցունքի մեջ թաղվեցին շատ-շատ աչքեր կանացի:
372. Քրիմհիլդը ասաց տխուր. «Քանի ուշ է, եղբայր իմ,
Դուք կարող եք այստեղ մնալ, դա է լավը և բարին,
Մի ենթարկեք Ձեր կյանքը զուր անխելամիտ փորձության,
Ամուսնացեք այստեղ՝ որքան օրհորդներ կան Ձեզ արժան»:
373. Ինձ թվում է, Քրիմհիլդը կանխազգում էր ամեն բան:
Եվ տիրազդին լալիս էին, տրտմում վշտով ամենայն,
Պատմում են, որ նրանք այնքան արտասովեցին, արին սուգ,
Որ խամբեցին արցունքներից Հանդերձները գեղաշուք:
374. Ահա դիմեց Ջիգֆրիդին Քրիմհիլդը՝ աչքն արցունք.
«Նվիրումով քո անխարդախ եղբորս լեռ միշտ նեցուկ,
Որ երկրում Բրունհիլդի նրան փորձանք չպատի»:
Եվ այս խոսքի վրա քաջը ձեռքը պարզեց օրհորդին:
375. Ասպետն ասաց Քրիմհիլդին. «Քանի ողջ եմ, քանի կամ,
Հոգ մի արեք, արքայաքույր, իբրև ազնիվ բարեկամ,
Նրան կրկին Հայրենի տուն ետ կբերեմ ես հետո,
Խոստանում եմ դա իմ կյանքով»:
Եվ խոնարհվեց ասպետը:
376. Եվ ափ տարան ահա նրա լայն վահանը ոսկեփայլ,
Եվ զենքերը նրա մյուս, Հանդերձները այլևայլ,
Մոտ բերեցին և ձիերը: Մեկնումի պահն էր արդեն,
Այդժամ կանայք սկսեցին արցունք թափել դառնորեն:
377. Օթյակներից տիկիները նայում էին սրտկոտոր,
Եվ ընթացիկ քամին բացեց առազատները բոլոր,
Եվ նավեցին ասպետները ալիքներով ափամերձ,
«Նավապետը ո՞վ է Հապա»,— Գունտեր արքան Հարցրեց:

378. «Ես եմ, – ասաց Ջիզֆրիդը, – եղեք, խնդրեմ, ապահով, Մենք Հոսանքով արագորեն կառաջանանք դեպի ծով, Ապա ծանոթ ծովուղիով կհասնենք մենք կղզին հեշտ»:
Եվ տվեցին ասպետները Բուրգունդիային հրատեղտ:
379. Եվ ձեռքն առավ անմիջապես Ջիզֆրիդը նավի թին,
Հաղթ ձեռքերով նավը հրեց, մղեց խորքը լայն գետի,
Գունտերն ինքն էլ՝ խիզախ արքան, նավի դեկը ձեռքն առավ,
Եվ Հոսանքը արագորեն նավը դեպի վար տարավ:
380. Եվ ունեին նրանք նավում տեսակ-տեսակ ուտեստներ,
Նաև գինի, որ կարող ես Հոննոսում լոկ գտնել,
Նրանց ընտիր նժույգներն էլ հանգիստ էին բաց նավում,
Որը հանդարտ, առանց ջանքի ընթանում էր ու թևում:
381. Առագաստի պարանները բացել քամին մշտարթուն,
Եվ տանում էր նրանց գետով, նավը քշում էր, տանում:
Անցել էին քսան մղոն, երբ արևը մտավ մայր,
Մ՞ւմ իմանար, որ այդ ճամփան աղետով պիտ վերջանար:
382. Տասներկուերորդ օրը, ոնց լսեցի, վաղորդյան
Քամիները նրանց տարան, հասցրեցին Իգենշթայն,
Դա ամրոցն էր Բրունհիլդի՝ սեզ բուրգերով բարձրադիր,
Եվ ոչ մեկին նա ծանոթ չէր, բացի որդուց Ջիզմունդի:
383. Երբ Գունտերը կղզու անթիվ ամրոցները նկատեց
Եվ դաշտերը լայնատարած, քաջ ասպետին հարց տվեց.
«Ասա, Ջիզֆրիդ, իմ բարեկամ, դու եղել ես ամեն տեղ, .
Մ՞ւմն են այս ճոխ ամրոցները և երկիրը փառահեղ»:
384. Պատասխանեց Ջիզֆրիդը. «Հիմա ասեմ, իմ արքա,
Սա երկիրն է Բրունհիլդի, հենց մեր ուզածը հարկավ,
Եվ բերդը այս, որքան գիտեմ, անվանում են Իգենշթայն,
Դուք կտեսնեք անդ օրիորդներ և տիկիներ պատվարժան:
385. Նաև ասեմ, որ մենք այստեղ կարգ պիտ պահենք խստագույն,
Եվ ունենանք մեկ միտք, նաև մեկ պատասխան թագուհուն,
Երբ հարց կտա Բրունհիլդը, կատակ չանեք նրա հետ,
Որ չթվանք կասկածելի, թե չէ՝ կորած ենք անհետ»:

386. Երբ մենք այսօր տեսնենք նրան՝ նաժիշտներով անհամար,
Ասելու ենք միայն այսպես՝ չմոռանաք ոչ մի բառ.
Գուևտերն իմ տեր-թագավորն է, իսկ ես նրա ճորտ-ծառան,
Միայն այսպես կկատարվի, ինչ ուզում է տեր արքան»:
387. Բուրգուևդները հավանությամբ լսեցին քաջ հյուսիսցուն,
Եվ ոչ մեկը չընդդիմացավ ու չհանեց մի ծպտուն,
Եվ այդպես էլ կատարեցին պատվիրանը Ջիգֆրիդի,
Երբ հանդիպեց Գուևտեր արքան իսլանդացի օրիորդին:
388. «Արքա Գուևտեր, այս ամենը ես չեմ անում Ձեզ համար,
Այլ լով չքնաղ Քրիմհիլդի, նրա սիրո համար վառ,
Ծառայում եմ նրան հլու մարմնով, հոգով խնդագին,
Եվ ուզում եմ շահել սերը նրա, որ ինձ դառնա կին»:

ԴԻՊԿԱԾ ՅՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես Գուևտերը տիրացավ Բրուևհիլդին

389. Եվ մինչ նրանք խոսքով ընկան, նավը հանդարտ մոտեցավ
Ափին կանգնած բերդամրոցին և Գուևտերի աչքն ընկավ
Գեղեցկադեմ մի օրիորդի՝ պատուհանի մոտ կանգնած,
«Ո՛վ է», — ասաց, ու կրծքի տակ սիրտը անուշ թպրտաց:
390. Նա հարցրեց Ջիգֆրիդին՝ փորձառու իր ուղեկցին.
«Գիտե՞ս արդյոք, ազնիվ ասպետ, թե ովքեր են ամրոցի
Օրիորդները, որ ակնապիշ մեզ են նայում վերևից,
Ո՛վ է նրանց երկրի տերը այդ բարեզարմ տիկնանցից»:
391. Պատասխանեց Ջիգֆրիդը. «Մի լավ նայեք նրանց Դուք,
Այդ կանանցից թե Ձեզ տրվեր ընտրելու իրավունք,
Ապա Դուք ո՞ւմ կընտրեիք, ո՞ր չքնաղին այս բերդի»:
«Հիմա, — ասաց Գուևտեր արքան, որ նայում էր ուշադիր, —
392. Այն մեկին, որ երևում է պատուհանից առաջին,
Ձյունաճերմակ զգեստ ունի և հմայիչ արտաքին,
Իմ աչքերը ընտրում են գեղեցկութունն այդ կնոջ:
Թե ընտրեի, նրան միայն, ուրիշ մեկին՝ երբեք, ոչ»:

393. «Քո աչքերը չեն խաբում քեզ, Գուևտեր արքա, ինքն է Հենց՝
Բրունհիլդը չնաշխարհիկ՝ շնորհներով մեծամեծ,
Հենց նրան է ձգտում սիրտդ և մարմինդ լիովին»:
Եվ արդարև Բրունհիլդը շատ դուր եկավ Գուևտերին:
394. Բայց պատվիրեց Բրունհիլդը իր օրիորդաց լուսերես,
Որ Հեռանան պատուհանից, քանզի պատշաճ չէ այդպես
Օտար մարդկանց առաջ կանգնել ու նայելը զարմացած,
Եվ Հնազանդ Բրունհիլդին՝ նրանք շուտով Հեռացան:
395. Բայց գրավիչ եկվորները ձգում էին իրենց կողմ,
Եվ շուտափուլթ զարդարելով մարմինները իրենց ճոխ,
Ինչպես օրենքն է կանացի, որ բոլորս գիտենք լավ,
Նայում էին նրանք թաքուն, կարճ ակնարկով ու սակավ:
396. Կղզի իջան ասպետները, ընդամենը չորս Հոգի,
Եվ բռնել էր Ջիգֆրիդը սանձը տիրոջ նժույգի,
Որ Գուևտերի Համար անշուշտ մեծ պատիվ էր ու Հարգանք,
Եվ դա տեսան պատուհանից թագուհին ու իր տիկնայք:
397. Եվ պահեց ձին Ջիգֆրիդը՝ երասանը իր ձեռքում,
Ուժեղ էր այն ու բարեկազմ, խոշոր էր ու խաղացկուև,
Մինչ Գուևտերն ելավ թամբին, Հպարտորեն սանձն առավ:
Մառայում էր քաջը այսպես, իսկ նա ամենն ուրացավ:
398. Ապա նավից Ջիգֆրիդը բերեց նժույգն իր նակ:
Նման բաներ նա մինչև այդ ոչ մի անգամ չէր արել,
Ձէր եղել, որ նա ձեռք մեկներ մեկի թամբին կամ սանձին:
Եվ դա տեսան պատուհանից օրիորդներն ամբողջի:
399. Ջիգֆրիդի և Գուևտերի զգեստները սպիտակ,
Հար և նման՝ շողում էին արեգակի լույսի տակ,
Նման էին և ձիերը, ասպետների ձեռքերում
Շողում էին նույն զենքերը, վահանները զարդարուն:
400. Նրանց ընտիր նժույգներից կայծ ու փայլ էր Հորդում բույլ,
Թամբին նրանց ու սանձերին զանգեր կային ոսկեձուլլ,
Եվ ձիերին իրենց բազմած, գեղ ու շուքով ազդեցիկ,
Ասպետները Բրունհիլդի պալատի կողմ վարդեցին:

401. Նիզակները երկար էին՝ գեղարդներով սուրսայրի,
Իսկ սրերը հասնում էին խթաններին ոտքերի,
Մեծ էր նրանց հմայքը և գեղեցկութունն այրական,
Եվ տեսնում էր այդ ամենը Բրունհիլդը՝ գեղականա:
402. Հետներն էին Դանկվարտը և Հագներ՝ Հերոսներ,
Պատում էին, թե որքան ճոխ տեսք ունեին երկուսն էլ,
Հանդերձները սեփ-սե էին, ագռավի պես սևաթույր,
Վահանները ընտիր էին, լայնալիր ու ամրակուռ:
403. Եվ քարերով լիբիական՝ թանկարժեք ու Հազվագյուտ,
Զգեստները ընդելուզված՝ շողում էին բազմագույն,
Եվ թողնելով նավը իրենց առանց պահնորդ ծովափին՝
Ասպետները Բրունհիլդի բերդի կողմը սուրացին:
404. Տեսան ներսում բարձրաբերձ աշտարակներ ութսուևվեց,
Երեք Հսկա ապարանքներ և մի դահլիճ լայն ու մեծ՝
Պատված կանաչ, խաս մարմարով, ասես լիներ կանաչ ծով,
Հենց այստեղ էր նստում ահեղ Բրունհիլդը՝ տիկնանցով:
405. Եվ ասպետաց առաջ բացվեց Հաղթ դարպասը երկաթի,
Ապա եկան Բրունհիլդի ծառաները բազմաթիվ՝
Ընդունելու եկվորներին այս երկրի կարգով Հին,
Վահանները վերցրեցին, ախոռ տարան ձիերին:
406. «Ձեր սրերը պետք է Հանձնեք»,— ասաց նրանց մի ծառա,—
Ինչպես նաև զրահները»: «Անհնար է սակայն դա,—
Կտրեց ասպետ Տրոնյեցին,— իմ զենքը ես պիտ կրեմ»:
Այդտեղ սակայն միջամտեց Զիգֆրիդը միշտ խոհեմ:
407. «Ասեմ ես ձեզ, ով ասպետներ, այս ամրոցի կարգն է Հենց,
Հյուրերն այստեղ ներս մտնելով՝ Հանձնում են զենքն իրենց,
Ուստի թույլ տանք զրանք աանեն, Հնազանդվենք այս անգամ»:
Սակայն զրան Տրոնյեցին Համաձայնեց շատ գժկամ:
408. Մատուցեցին նրանց գինի, ինչքան սրտերն էր ուզում,
Քալիս էին արդեն պալատ ասպետները այդ կղզու՝
Իշխանազան Հանգերձներով, իրենց պատվի նիշն առած,
Ասպետներին տեսնելու, որ եկել էին քիչ առաջ:

409. Սպասյակներն ապա փութով լուր տվեցին թագուհուն, Թե ամրոց են ներկայացել մարդիկ օտար, քաջագուն՝ Հանդերձներով շքեղաշուք և անհնար ճոխությամբ: Ջքնաղատես Բրունհիլդի սիրտը պատեց խոր տագնապ:
410. «Ասացեք ինձ, — օրիորդն ասաց՝ Հարցնելով իր մարդկանց, — Թե ովքե՞ր են ասպետները՝ մեր երկիրը ժամանած, Որ կանգնել են այդպես Հպարտ գավիթում իմ ամրոցի, Մ՞ր երկրից են, ի՞նչ գործով են եկել-հասել մեր կղզի»:
411. «Խոստովանեմ, իմ տիրուհի, — իշխաններից մեկն ասաց, — Որ նախկինում ոչ մի անգամ չեմ Հանդիպել ես նրանց: Բայց նրանցից մեկը կարծես թե նման է Ջիգֆրիդին, իմ խորհուրդն է, որ ընդունեք նրան իբրև ասպետի:
412. Եկվորներից երկրորդը, որ այդքան շքեղ տեսք ունի, Հավանաբար մի երկրի թագավոր է անվանի Կամ Հեռավոր, անդրծովյան Հարուստ երկրի մի իշխան, Կերպարանքը նրա, տեսեք, պատկառագրու է որքան:
413. Իսկ երրորդը ասպետներից, որ շատ մռայլ դեմք ունի, (Իրականում, սակայն, նա էլ գեղեցիկ է, տիրուհի), Նրա մռայլ նայվածքներից ցայտում է ահ ու սարսափ, Ես կարծում եմ՝ խորհրդավոր, մթին մարդ է նա անչափ:
414. Իսկ կրտսերը, նրանց միջի, դե ես այդպես եմ կարծում, Ուժով լեցուն և զորավոր ասպետ է մի քաջագուն, Թեև տեսքով քնքուշ է շատ, նուրբ է՝ ինչպես մի աղջիկ, Լավ կլինի, սակայն, ոչ ոք նրան մարտի չկանչի:
415. Թեև տեսքը սրտաբաց է, ու դրանով անարգել Կարող է շատ տիկիներին սիրտը արագ նվաճել, Սակայն եթե պատվախնդիր ասպետը այդ չարանա, Մեծ կլինի քաջությունը և զայրույթը՝ անխնա»:
416. Երկաթաձայն կանչեց կինը. «Ջգեստներս պատրաստեք, Ջիգֆրիդն է եկել մեզ մոտ՝ դյուցազուներ քաջատեսք, Եկել է իմ ձեռքը խնդրի, բայց չի լինի երբեք դա, Իր հանդուգն մտքի համար կվճարի նա շատ թանկ»:

417. Եվ սեզ օրհորդն Հագավ այդժամ Հանդերձները իր ընտիր,
Գնում էին աղջիկները ետքից դշտ օրհորդի,
Նրանք նույնպես չքնաղ էին և Հարյուրից ավելի,
Եվ բուրգունդցիք տեսան այնտեղ անթիվ տիկնանց նագելի:
418. Թագուհու Հետ գալիս էին իշխանները էդ երկրի,
Քայլում էին և ասպետներ՝ սարսափազդու, սրալիր,
Դրանց թիվը հինգ Հարյուր էր, երկնչեցին բուրգունդցիք,
Եվ թագուհու առաջ Հպարտ նրանք ոտքի կանգնեցին:
419. Եվ երբ տեսավ Զիգֆրիդը Բրունհիլդին մեծահաղթ,
Ահա թե ինչ ասաց նրան մեծահամբավ օրհորդն այդ.
«Իշխան Զիգֆրիդ, բարի գալուստ, ես ուրախ եմ մեծապես,
Որ եկել եք մեր երկիրը, ո՞ր քամին է բերել Ձեզ»:
420. Ասպետը թե. «Ազնիվ օրհորդ, շնորհակալ եմ սաստիկ,
Որ այդպես ջերմ ընդունում եք ինձ՝ Հասարակ ասպետիս,
Այս պատվարժան ասպետն ահա, որ կանգնած է Ձեր առաջ,
Հզորագույն իմ տերն է, ես՝ Հավատարիմ իր ծառան»:
421. Ձեզ ասեմ՝ նա Հոենոսի կողմերից է, տիրուհի,
Եվ ուզում է Ձեզ կին առնել՝ ինչ էլ թեկուզ պատահի,
Մենք եկել ենք, ծովը անցել մեր վճռով, կամքով իսկ:
Եվ մտածեք՝ քանի ուշ չէ, նա չի թողնի Ձեզ Հանգիստ»:
422. Արդ՝ Գունտեր են կոչում նրան, թագավոր է տերը իմ,
Եվ եթե նա կին առնի Ձեզ, կՀասնի իր բաղձանքին,
Պատվիրել է իմ տերը ինձ՝ իրեն բերել Իսլանդիա,
Իսկ եթե ինձ բանը մնար, ապա երբեք չէի գա»:
423. Բրունհիլդը ասաց. «Եթե դու ծառա ես, իսկ նա՝ տեր,
Եվ մրցումը իմ սահմանած Հանդգնում է ընդունել,
Ես կդառնամ կինը նրա, եթե մնա նա անհաղթ,
Իսկ եթե ոչ՝ պետք է մեռնի, սա է օրենքը անխախտ»:
424. Ապա խոսեց Տրոնյեցին. «Տիրուհի, թույլ տվեք արդ,
Դիտելու մեզ Հզորության և Հմտության մրցումն այդ,
Մինչ կուզենաք ամբողջ սրտով արքային իմ Դուք Հաղթել,
Գուցե պարտվեք մրցության մեջ Հենց ինքնեզրդ, ով գիտեք»:

425. «Նախ պետք է քար նետենք, ապա թռչենք անցնենք քարից մենք,
Եվ վերջապես նետենք նիզակ ու միմյանց հարվածենք,
Լավ մտածեք, – ասաց կինը, – ով թագավոր քաջագնիվ,
Չէ՞ որ այստեղ մեկ սխալը արժե թե կյանք, թե պատիվ»:
426. Ձիգֆրիդը՝ ասպետը քաջ, իր արքային մոտեցավ,
Հորդորեց, որ խոսի վստահ ու չընկճվի նա բնավ,
Եվ որ նրան Բրունհիլդից երկնչելու բան չկա.
«Ես քեզ կօգնեմ կախարդանքով, մի վախենա, իմ արքա»:
427. Եվ Գունտերը խոսեց այսպես. «Թագուհիդ իմ գեղատես,
Համաձայն եմ: Եթե նույնիսկ անհնարինն ինձ ասեք,
Հանձն կառնեմ ես՝ հմայված գեղեցկությամբ Ձեր անգին,
Եվ փորձության կտամ կյանքս՝ միայն դառնաք Դուք ինձ կին»:
428. Երբ որ լսեց Բրունհիլդը այս խոսքերը արքայի,
Հրամայեց մրցման դնալ, ըստ սահմանած պայմանի,
Եվ պատվիրեց բերել շուտով զգեաստները իր մրցման,
Ոսկեկարմիր, պինդ զրահներ, անխոցելի մի վահան:
429. Եվ թագուհին զրահի տակ հագավ զգեստ մետաքսյա,
Որ չէր ճեղքվում ոչ մի սրով կամ նիզակով մի սուրսայր,
Լիբիայից էր մետաքսը այդ՝ մեծ խնամքով պատրաստված,
Եվ զգեստի վրա կային ոսկե նախշեր նուրբ բանված:
430. Եվ բուրգունդցի ասպետները մատնվեցին խուճապի,
Դանկվարտը և Հագենը նմանվեցին սև ամպի,
Ի՞նչ կլինի թագավորին՝ հարցնում էին մտատանջ,
Եվ ցավում, որ այս աղետից չկար փախուստ կամ նահանջ:
431. Մինչ մրցության եռուզեռ էր Բրունհիլդի ամրոցում,
Թաքուն դեպի ծովափ գնաց Ձիգֆրիդը դյուցազուն,
Այնտեղ՝ նավում կախարդական Անտես թիկնոցը գտավ,
Եվ հագնելով՝ անմիջապես դարձավ անտես նա իրավ:
432. Ապա արագ ետ շտապեց: Ասպետների տեսավ շատ,
Բրունհիլդին՝ մրցությանը կանգնած արդեն կազմ-պատրաստ,
Պալատ մտավ Ձիգֆրիդը՝ դարձած անտես-աննկատ,
Եվ չէր տեսնում նրան ոչ ոք՝ ոչ մի ասպետ, ոչ մի մարդ:

433. Մրցման Համար ահա գծվեց շրջանագիծ լայնածիր,
Որից այն կողն սեղմ շարվեցին զինվորները իսլանդցի,
Շուրջ յոթ Հարյուր և ավելի՝ ազդու տեսքով ու ահեղ,
Նրանք վկա պիտ լինեին՝ ով է Հաղթողը այնտեղ:
434. Ահա եկավ Բրունհիլդը՝ ոտքից գլուխ գինավառ,
Կարծես կռիվ բուրգունդական ողջ երկրի դեմ պիտի տար,
Ջրահների վրա անգամ զարդեր ունեւ թանկագին,
Նրանց փայլն ու ճանաչները շլացնում էին ամենքին:
435. Թիկնապահներն ապա եկան: Հազիվ էին քարշ տալիս
Բրունհիլդի վահանը մեծ, որ ոսկուց էր, լայնալիր,
Շողշողում էր ակների մեջ, հույժ, ազդեցիկ, ամեհի,
Դրանով էր ասպետներին հաղթում անհաղթ թագուհին:
436. Եվ վահանը արքայուհու՝ ճոխ, ակնազարդ իր փոկով,
Փայլում էին ակներն, ինչպես խոտը կանաչ երանգով,
Իսկ վահանը շողշողում էր ոսկու փայլով անթերի,
Բրունհիլդին հաղթելն, իրավ, միայն գործն էր քաջերի:
437. Եվ վահանը սեզ թագուհու, ինչպես որ մեզ պատմեցին,
Ջուտ ոսկուց էր և պողպատից՝ ձուլված շուքով առանձին,
Եվ մեղտեղում հաստությունը երեք թիզ էր, քիչ պակաս,
Այնպես որ չորս թիկնապահներ բերում էին հազիվհազ:
438. Այդ վահանը երբ նկատեց Տրոնյեցին, սարսափած
Եվ ահով լի թեքվեց գեպի Գունտեր արքան ու ասաց.
«Մեր վերջն եկավ, Գունտեր արքա, ափսոս կյանքը Ձեր մատաղ,
Կյանքի-մահու մարտ կլինի այս կնոջ հետ՝ մեզ ավաղ»:
439. Հապա նրա հագուստները: Ընտիր էին, ազնվատեսք:
Նա հազել էր անդրծովյան մետաքսյա մի համազգեստ,
Որ Ազագուհի երկրից էր: Նրա գեմքի լույսերից
Առնում էին զգեստների քարերը փայլ լուսերից:
440. Բերեցին և նիզակը այն, որ նետում էր թագուհին,
Երբ մրցում էր ասպետաց հետ: Վիթխարի էր, ահագին,
Անսովոր սուր, երկար ու լայն գեղարգ ունեւ ծայրին նա,
Նրա զարկին ոչ մի ասպետ իր օրում չէր գիմանա:

441. Այդ նիզակի մասին այնտեղ պատմում էին լեզգենդներ,
Մախսել էին նրա վրա մետաղ չորս և կես լիտր,
Բրունհիլդի երեք զինվոր բերում էին Հազիվհազ:
Արքան սարսեց, երբ իր առաջ տեսավ ահեղ նիզակն այս:
442. Եվ մտածեց սարսափահար. «Բանս բուրդ է լինելու,
Սատանան էլ տեղս լիներ, մարտն այս տանուլ էր տալու,
Ու թե լինի՝ ողջ ու առողջ վերադառնամ Հայրենիք,
Կմոռանամ Բրունհիլդի մասին ամեն հույզ ու միտք»:
443. Ապա խոսեց Դանկվարտը՝ քաջ բուրգունդցին ջլապինդ.
«Սրտիս խորքում դեմ էի միշտ ճամփորդությանն այս անմիտ,
Բայց մենք չէ՞ որ ասպետներ ենք, մի՞թե այստեղ մենք պիտի
Նահատակվենք օտար Հողում, ձեռքով այս դե֊օրիորդի:
444. Ջղջում եմ, որ ճամփա անցել ու եկել եմ այս երկիր,
Այ, թե Հիմա Հագեն եղբոր զենքը լիներ իր ձեռքին,
Իսկ իմ զենքը լիներ ինձ մոտ, ասեմ ես ձեզ ճշմարիտ,
Կպատժեինք Բրունհիլդի ասպետներին մեծամիտ:
445. Սակայն եթե սրանք թույլ տան մեզ անվտանգ Հեռանալ,
Եվ ես անվերջ խոստանամ, որ այս երկիր էլ չենք դառնա,
Միևնույն է, իմ արքայի մահը այստեղ Հենց տեսնեմ,
Իմ ձեռքերով ես կսպանեմ այս թագուհուն չարադեմ»:
446. Այնուհետև Հագենը թե. «Ձէինք լինի մենք գերի,
Երկրի մեջ այս անծանոթ, եթե մենք զենք կրեինք,
Ունենայինք զենքերը մեր, որ պետք դային այս պահին,
Կստիպեինք Բրունհիլդին քիթը բարձր չպահի»:
447. Ժանտ թագուհին լսեց այդժամ, թե ասպետը ինչ ասաց,
Քմծիծաղով նայեց նրան և պատվիրեց իր մարդկանց.
«Եթե քաջ են սրանք այդքան և Հանդուգն ու Հպարտ,
Բերեք սրանց վահանները և սրերը պողովատ»:
448. Երբ ստացան զենքերն իրենց, ասպետները վերստին,
Խնդությունից կարմիր կապեց Դանկվարտի երեսին.
«Դե, սկսենք մեր մրցումը,Պ կանչեց ասպետը վստահ,Պ
Գունտեր արքան չի պարտվի, քանի ձեռքին մեր զենք կա»:

449. ԲրուենՀիլդի անչափելի ուժը տեսան այնտեղ, հրք
 Հրապարակ ներս բերեցին քար մի խոշոր՝ ժայռակերպ,
 Դա իսկական ապառաժ էր, սաստիկ ծանր ու անհարթ,
 Որ հազիվհազ բերում էին տասներկու տղամարդ:
450. Թագուհին այն նետում էր միշտ, ինչպես նիզակ սլացիկ,
 Բուրգունդցիներն զգացին, որ վտանգի մեջ են սաստիկ,
 «Ավաղ, — կանչեց Հագենը, — սա հարմար չէ մեր արքային,
 Սա դժոխքի ոգի է չար, սատանա է սա, ոչ կին»:
451. ԲրուենՀիլդը քշտեց ճեպով բազուկները ձյունացու,
 Ապա աշյակ ձեռքի վրա լայն վահանը վերցնելով՝
 Մյուս ձեռքով նիզակն առավ: Դա սկիզբն էր մրցումի:
 ԲրուենՀիլդի բարկությունից բուրգունդները դողացին:
452. Թե Զիգֆրիդը արագորեն չհասներ իր արքային,
 Ապա Գունտերն անտարակույս պիտի կորցներ կյանքը իր,
 Նա մոտեցավ Թագավորին, թևը քաշեց աննկատ,
 Ու դրանից սիրտն արքայի սարսափ պատեց մահու չափ:
453. «Մ՛վ դիպավ ինձ», — անցավ մտքով զարմանք կտրած Գունտերի,
 Նայեց շուրջը, բայց ոչ մեկին չնկատեց շուրջը իր,
 Ասպետն ասաց. «Ես եմ, արքա, Զիգֆրիդդ աջակից,
 Մի երկյուղիր, դու ոչ մի հոգս չես ունենա օրիորդից:
454. Տուր իմ ձեռքը նիզակը քո, և թող կրեմ ինքս այն,
 Եվ լսիր, թե ինչ կասեմ քեզ, և կատարիր անպայման,
 Դու շարժումը արա միայն, մնացածը ես գիտեմ»:
 Արքան լսեց, լցվեց հույսով, դարձավ կրկին ժպտադեմ:
455. «Թագուն պաշիր այս ամենը, դա երկուսիս է հարմար,
 Թե ինձ լսես՝ ԲրուենՀիլդին մենք կզրկենք անպատճառ
 Գոռոզությունն իր ցուլց տալուց: Նա ուզում է դա անել:
 Հապա նայիր, ինչ ահավոր կերպարանք է ընդունել»:
456. Արդ՝ ողջ ուժով նետեց հսկա նիզակը իր Թագուհին,
 Ուղիղ դեպի Գունտեր արքան, այն զարկվեց վահանին,
 Որ պահում էր Զիգֆրիդը՝ Գունտերի քաջ ղինակից,
 Թուան կայծեր, ինչպես քամու թունդ բորբոքած կրակից:

457. Եվ նիզակի սուր գեղարդը ճեղքեց վահանն ահագին,
Ու դուրս թռան բացված ճեղքից բոց լեզուներ կրակի,
Եվ ցնցվեցին այդ հարվածից, մարդիկ եղան սրտաճաք,
Սարսափեցին նրանք սաստիկ, ապրեցին խոր զարհուրանք:
458. Եվ բերանից Ջիգֆրիդի ծորաց արյունը շիթով,
Սակայն արագ թռավ տեղից, առավ նիզակը փութով,
Որ խրված էր վահանի մեջ, պատրաստվեց ամենի
Ուժով նետել միանգամից դեպի դաժան թագուհին:
459. Բայց վճռեց. չեմ վնասի գեղեցկուհուն ես անգութ:
Նա նիզակը շրջեց դեպ ետ և հարվածեց ծայրով բուժ,
Եվ այնպիսի ուժով խփեց Ջիգֆրիդը մրցակցին,
Որ սա ցնցվեց ու շառաչով զրահները զնգացին:
460. Եվ պողպատից ցայտեց կրակ՝ ասես քամուց բորբոքուն,
Երբ հարվածեց Ջիգֆրիդը իր նիզակով թագուհուն:
Եվ զգալով ուժն ամենի՝ Բրունհիլդը վայր ընկավ,
Գունտեր արքան նման զարկի ի վիճակի չէր բնավ:
461. Եվ գոռալով Բրունհիլդը ընկած տեղից ելավ վեր.
«Գունտեր արքա, ազնիվ ասպետ, լավ հարված էր»,
– բղավեց, Նա կարծում էր, թե արքայի հարվածն էր դա՝ չարազետ,
Սակայն նրան անտես դարձած՝ հարվածել էր այլ ասպետ:
462. Եվ շտապեց դեպի քարը Բրունհիլդը զայրալից,
Անչափելի ուժով առավ, բարձրացրեց վեր գլխից,
Եվ ողջ ուժով նետեց հեռու, ապա ցատկեց հետքից նա:
Սլացքի հետ Բրունհիլդի՝ զնգացին գենք ու զրահ:
463. Տասներկու սաժենից շատ թռավ քարը հաստակող,
Սակայն քարից առաջ անցավ Բրունհիլդը մի ցատկով:
Ջիգֆրիդը վազեց իսկույն, կանգնեց ընկած քարի մոտ,
Այն շոշափեց Գունտեր արքան, սակայն ինքը նետեց օդ:
464. Ջիգֆրիդը քաջ էր, ուժեղ, իր զորությամբ անարգել,
Քարն ավելի հեռու նետեց, ցատկեց հեռու առավել,
Ջիգֆրիդի արածն իրոք կախարդանք էր, հրաշք մեծ,
Նա թռավ և իր հետ նաև թագավորին թուցրեց:

465. Գերազանց էր թռիչքը այդ, և քարն ընկած էր գետինն,
 Եվ ոչ մեկը չկար կողքին՝ բացի արքա Գուևտերից:
 Կարմրել էր բարկությունից ազնվազարմ թագուհին,
 Եվ շնորհիվ Ջիգֆրիդի փրկվեց կյանքը արքայի:
466. Ու երբ տեսավ թագավորին՝ շրջազծի մեջ կանգնած,
 Հուսահատված Բրունհիլդը իշխաններին իր ասաց.
 «Եկեք այստեղ, իմ ժողովուրդ, եկեք, իշխան ու ասպետ,
 Դուք Գուևտերի Հպատակն եք այսօրվանից առհավետ»:
467. Իսլանդացի ասպետները զենքերը վայր դրեցին,
 Խոնարհվեցին ըստ պատշաճի Հաղթողներին բուրգունդցի
 Եվ մանավանդ թագավորին՝ խիզախին այդ մեծազույն,
 Կարծում էին, թե Գուևտերն է Հաղթել անհաղթ թագուհուն:
468. Եվ Գուևտերը Բրունհիլդին գլուխ տվեց սիրալիր,
 Իսկ թագուհին, ինքն էլ սիրով, նրան պարզեց ձեռքը իր,
 Նա այդ արեց, քանզի արքան զորավոր էր ավելի:
 Ուրախացան ամենքը, բայց Տրոնյեցին առավել:
469. Ապա խնդրեց Բրունհիլդը ասպետներին զալ պալատ,
 Հավաքվեցին այնտեղ շուտով ազնվազարմ այրեր շատ,
 Բուրգունդներին մատուցվեցին ճոխ մեծարանք ու պատիվ,
 Ջիգֆրիդի ուժը նրանց փրկեց մահից Հավաստի:
470. Մինչ այս, մինչ այն՝ Ջիգֆրիդը՝ քաջն ընտիր,
 Տարավ նավում ու թաքցրեց կախարդական թիկնոցն իր,
 Ապա կրկին եկավ պալատ, որտեղ կային շատ կանայք,
 Եվ ասաց իր թագավորին՝ իբրև լրիվ անտեղյակ:
471. «Արքա, ինչու եք Հապաղում ու չեք իջնում ասպարեզ,
 Համաձայն է դրան նաև մեր թագուհին քաջատես,
 Թույլ տվեք, որ տեսնենք Հիմա Հաղթանակը Ձեր վատահ»:
 Խորամանկեց ասպետն այդպես՝ իբրև գործին անգիտակ:
472. Եվ Հարցրեց Բրունհիլդը՝ արքայուհին քաջազարմ.
 «Ինչպե՞ս եղավ, Ջիգֆրիդ, որ դու մրցումը չտեսար,
 Ափսոս, չէ՞ որ Գուևտեր արքան Հաղթեց բազկով առնացի»:
 Պատասխանեց նրան այդժամ Հագենը՝ քաջ բուրգունդցին:

473. «Երբ ամեհի ուժով այստեղ երևացիք ահազդու,
 Եվ երբ արքա Գունտերի Հետ մենամարտի ելաք Դուք,
 Զիգֆրիդը, գուցե վախից, թողեց, նավի մոտ գնաց,
 Ահա ինչու անտեղյակ է մրցումին այդ փառապանծ»:
474. «Ինչ բարի լուր,— ուրախացավ Զիգֆրիդը իբրև թե,—
 Մեկը եղավ, որ վերջապես կարողացավ Ձեզ հաղթել,
 Մեկը մեզնից, որ քաջությամբ խրոխտանքը Ձեր ջարդեց,
 Ուստի, ազնիվ իմ տիրուհի, պետք է Վորմա գաք արդեն»:
475. Ապա խոսեց Բրունհիլդը. «Վաղաժամ է դեռ, ասպետ,
 Ես նախ պետք է իշխաններիս կանչեմ, խոսեմ նրանց Հետ,
 Թե չէ այդպես միանգամից ինչպես թողնեմ երկիրն իմ,
 Տեսնենք ինչ են ինձ ասելու արնակից ու մտերիմ»:
476. Եվ թագուհին ճամփեց չորս կողմ սուրհանդակներ ճեպընթաց,
 Իմաց տվեց երկրի մարդկանց, իշխաններին, ասպետաց,
 Խնդրեց, որ գան, ներկայանան արքունական իր պալատ,
 Եվ խոստացավ ամեն մեկին ընծաներ տալ լիառատ:
477. Եվ լցվեցին ճամփաները Բրունհիլդի մարդկանցով,
 Գալիս էին ամեն տեղից, մարդկանց գետ էր, մարդկանց ծով,
 «Սա փորձանք է,— Հագենն ասաց,— մինչ նստել ենք մենք պարսպ,
 Զինավորված իսլանդացիք հավաքվում են Հապլտապ»:
478. Մեկ էլ տեսար՝ Հավաքելով ասպետներին յուր թաքուն,
 Իսկ մենք լրիվ անտեղյակ ենք՝ ինչ կա չկա իր մտքում,
 Բրունհիլդը Հանկարծ վերցնի ու մեզ վրա Հարձակվի:
 Ապահով չենք այս աղջկա փորձանքներից տակավին»:
479. Եվ քաջարի Զիգֆրիդն ասաց. «Այս անգամ էլ, բուրգունդներ,
 Կփրկեմ ձեզ և թույլ չեմ տա, որ վտանգվի կյանքը ձեր,
 Ես կբերեմ այս երկրի մեջ ձեզ օգնություն վաղնեկեթ,
 Անծանոթ են նրանք դեռ ձեզ, բայց զինվոր են ու ասպետ»:
480. Բայց չպետք է մեկն իմանա, որ ես այստեղ չեմ, ես չկամ,
 Պետք է գնամ լրիվ թաքուն: Դուք դիմացեք՝ մինչև դամ,
 Մինչև բերեմ Հասցենեմ ձեզ օգնությունը անարգելք,
 Հազար ընտիր ասպետների, որոնց դուք դեռ չգիտեք»:

481. «Մի ուշացեք սակայն,— ասաց Գուենտեր արքան մտավախ,—
 Զեր օգնութեան Համար անչափ շնորհակալ եմք, ուրախ»:
 Ասպետն ասաց թագավորին. «Ես ետ կգամ շատ շուտով,
 Իսկ թագուհուն ասեք, թե ինձ ուղարկել եք մի գործով»:

ԴԻՊԼԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես Ջիգֆրիդն ուղևորվեց յուրայինների մոտ

482. Եվ այնտեղից ծովափ իջավ Ջիգֆրիդը՝ քաջարին,
 Անտես թիկնոցը Հագին էր, նավը կանգնած էր ափին,
 Եվ Ջիգմունդի որդին այնտեղ մտնելով լուռ, անշշուկ,
 Նավը տարավ այնպես արագ, ասես քամին էր քշում:
483. Նավավարը չէր երևում, նավը սուրում էր անկանգ,
 Անբավ ուժով Ջիգֆրիդն էր առաջ տանում անվտանգ,
 Թվում էր, թե թոցնում է նավը քամին մոգական,
 Ոչ, Ջիգֆրիդն էր նավը վարում՝ նիզեռլանդցի քաջ Հսկան:
484. Ողջ ցերեկը և գիշերը թիավարեց անդադար
 Եվ ի վերջո Հասավ մի տեղ, սքանչելի մի աշխարհ,
 Գուցե անցավ Հարյուր մղոն կամ ավելի, ով գիտե,
 Նիբելունգաց երկիրն էր դա, և պահվում էր գանձն ալյուսեղ:
485. Եվ մեն-մենակ դյուցազուներ ահա ափին մոտեցավ,
 Տեսավ մի գետ, անդ կայանեց նավակն, ապա ափ ելավ,
 Գնաց մոտիկ լեռան կողմը, ուր բարձրանում էր մի դղյակ,
 Քանզի ինքն էլ երկար ճամփից զգում էր քաղց ու խոնջանք:
486. Գնաց դեպի դարպասները, որ փակ էին ու Հզոր:
 Այնտեղ էր ողջ գանձը նրա, որ պահվում էր մինչ այդօր,
 Անծանոթի թունդ բախյունից դարպասն ասես երերաց:
 Դռներն ամուր փակված էին: Դռնապանը երևաց:
487. Վիթխարի էր դռնապանը, լեռան նման բարձր ու Հաղթ,
 Կողքին սուրն էր նրա դրած՝ պատրաստ ամեն ակնթարթ,
 Եվ ասաց նա. «Ո՞վ է այդտեղ, ո՞վ է դարպասը թակում»:
 Ջիգֆրիդը, ձայնը փոխած, խոսեց շեշտով ահարկու:

488. Այսպես ասաց նա Հսկային. «Ասպետ եմ ես, բաց արեք Դուռն իմ առաջ, եթե ոչ՝ այն կխորտակեմ անարգելք՝ Խանգարելով քուներ նրա, ով փակում է իմ ճամփան»:
Եվ կատաղեց այս խոսքերից դռնապանը անսահման:
489. Ապա խիզախ Հսկան առավ կողքի թուրը ամեհի,
Արագ դրեց սաղավարտը, որ պաշտպանի գլուխն իր:
Եվ վահանը վերցրեց փութով, բացեց դուռը երկաթյա,
Եվ ասպետի առաջ կանգնեց կատաղությամբ մի դժնյա:
490. Հանդգնել էր անծանոթը արթնացնել Հսկային,
Եվ ասպետի վրա տեղաց Հարվածները իր ուժգին,
Զիգֆրիդը ստիպված էր դիմակայել աղետին,
Հսկան սակայն խփեց կտրեց վահանի փոկն ասպետի:
491. Ապա այնպես զենքով ահեղ վրա ընկավ Հանց վարագ,
Որ քաջարի Նիդեռլանդցին կյանքը փրկեց ՀազիվՀազ,
Խոլ զարկերից դռնապանի Հրճվում էր նա սակայն,
Զէ՞ որ ասպետն ուներ նման Հավատարիմ դռնապան:
492. Դղրդում էր ողջ ամբողջը նրանց ուժգին զարկերից,
Եվ երկուսն էլ ուժեղ էին և արժանի մրցակից,
Բայց ընկճեց քաջը նրան՝ կապկպելով ոտ ու ձեռք,
Եվ տարածվեց լուրը շուտով նիբելունգյան երկրով մեկ:
493. Եվ լավեցին լեռան խորքից մռայլ ձայներ որոտի,
Դա կորովի Ալբերիխն էր՝ խիզախ թզուկն ասպետի,
Որ զինվում էր արագորեն, և դուրս վազեց կատաղած,
Տեսավ այնտեղ անծանոթին և Հսկային շղթայված:
494. Ահազդու էր Ալբերիխը, նաև ուժեղ, ափսահա,
Սաղավարտ էր կրում գլխին և մարմնին՝ պինդ զրահ,
Եվ մի ծանր, ոսկե մկուռնդ ուներ ձեռքին ահասարս,
Եվ ասպետի առաջն ելավ դժնի տեսքով ահա այս:
495. Այդ մկուռնդից կախված էին ծանրածանր յոթ գնդեր,
Երբ վահանին Զիգֆրիդի իջավ մկուռնդն այդ ահեղ,
Զարդուփշուր եղավ մեկեն կուռ ասպարը թանկագին,
Եվ Զիգմունդի որդին զգաց՝ դեմ առ դեմ է վտանգին:

496. Այդժամ մի կողմ նետեց ասպետն իր վահանը փշրված,
Մի կողմ նետեց նաև սուրը, որ երկար էր չափազանց,
Զի էջր ուզում պատճառել մահ, աղետել հանց պատուհաս,
Այլ փորձում էր նա իր մարդկանց քաջի նման՝ իբրև դաս:
497. Ուստի ուժեղ բազուկներով Ալբերիխին բռնեց նա,
Եվ առնելով ձեռքը նրա ճեղքման մորուքն անխնա,
Այնպես ձգեց, որ թզուկը գոռաց ցավից հուսահատ,
Զէր սպասում, որ անծանոթն ուժ կունեննար այդչափ շատ:
498. Եվ բղավեց Ալբերիխը. «Բաշխիբ կյանքն իմ, ով եկվոր,
Ես այն վաղուց մի ասպետի նվիրել եմ ողջ հոգով
Ու երդվել եմ, որ ծառայեմ հավատարիմ նրան միշտ,
Թե չէ՞ ճորտդ կղառնայի»,— ասաց մարդը ուղղամիտ:
499. Դոնապանի նման սրան նույնպես շղթա դրեց նա,
Բայց թզուկին շատ չարչարեց ուժն ասպետի անխնա,
Ալբերիխը հարցրեց նրան. «Օտարական, դուք ո՞վ եք»:
«Զիգֆրիդն եմ,— ասպետն ասաց,— կարծեմ որ ինձ լավ գիտեք»:
500. «Ինչ բարի լուր,— ուրախացավ Ալբերիխը մանկան պես,—
Հասկանում եմ հիմա արդեն, որ հենց Դուք եք իսկապես
Այս երկրի տերն իրական, տեր իմ, ասպետ Զիգֆրիդ,
Եվ քանի որ չսպանեցիք, երախտապարտ եմ քաջիդ»:
501. Զիգֆրիդը պատասխանեց. «Արագ ամբողջ դնացեք,
Եվ նիրելունգ իմ լավագույն զինվորներին հավաքեք,
Բայց լավերից լավերին լոկ՝ հազար զինվոր, ոչ ավել»:
Իսկ թե ինչ կար քաջի մտքում՝ Ալբերիխին չասաց էլ:
502. Ապա ազատ արձակեց նա թզուկին և հսկային,
Եվ սլացան սրանք իսկույն օթևանը բանակի,
Ալբերիխը ձայնեց նրանց՝ զինվորներին նիրելունգ.
«Ելեք ոտքի, ելեք քաջեր՝ Զիգֆրիդին տեսնելու»:
503. Եվ վեր թռան զինվորները, կազմ ու պատրաստ կանգնեցին,
Հազար զինվոր անզուգական, եռանդաշատ, առնացի,
Զիգֆրիդի մոտ գնացին խնդումներես, լիավյուն.
Եվ սիրալիբ ողջունեցին տիրոջն իրենց քաջազուն:

504. Եվ ջահեցին սրահները, մեղրագինի խմեցին,
Տեսնելով այդ՝ Զիգֆրիդի սիրտն հրճվեց խնդագին,
Եվ ասաց նա. «Պետք էք անչափ, նիբելունգներ ով իմ լավ»:
Եվ ցնծացին զինվորները՝ ծառայելու միշտ ծարավ:
505. Երեք Հազար զինվոր եկավ դրոշի տակ Զիգֆրիդի,
Բայց նրանցից վերցրեցին լուկ Հազարին քաջընտիր,
Եվ ստացան նրանք շտապ Հարկավոր զենք ու զրահ,
Զիգֆրիդը պիտի նրանց առաջնորդեր Իսլանդիա:
506. Ասպետն ասաց. «Լսեք, քաջեր, ինչ եմ ասում ձեզ հիմա,
Ուր մեկնում ենք, մարդիկ այնտեղ Հագնվում են անմաման,
Պետք է այնտեղ ներկայանանք տիկինների ազնվազարմ,
Ուստի Հարկ է, որ ունենանք Հագուստ ընտիր գեղազարգ»:
507. Հաջորդ օրն Հենց ճամփա ընկան արևը դեռ չծագած,
Զիգֆրիդը կամենում էր շուտ տեղ Հասնել անկասկած,
Նրանք իրենց Հետ ունեին Հանդերձ, զենքեր ու նժույգ,
Օտար երկիր Հարկ էր գնալ Հագուկապով պերճաշուք:
508. Պատուհանից նայում էին չքնադատես շատ կանայք:
Բրունհիլդը ասաց նրանց. «Գիտե՞ք, ովքեր են նրանք,
Որ գալիս են ծովով դեպի մեր ամրոցը՝ Իգենշթայն,
Եվ պարզել են առագաստներ, որ ճերմակ են ձյան նման»:
509. «Իմ մարդիկ են դրանք, — ասաց Գունտեր արքան գոհությամբ, —
Թողել էի մոտիկ մի տեղ, չէի բերել Հետս ափ,
Ես նրանց լուր ուղարկեցի, ահա եկան, ով տիկին»:
Իսկ փառավոր Հյուրերն արդեն ծովափ Հասան ցնծագին:
510. Զիգֆրիդին տեսան շուտով՝ զգեստներով վեհաշուք,
Նավի վրա Հպարտ կանգնած, շուրջն ասպետներ նիբելունգ,
Եվ Հարցրեց Բրունհիլդը. «Ասացեք, տեր արքա, ինձ՝
Ե՞ս ընդունեմ Հյուրերին, թե Հրաժարվեմ ողջունից»:
511. Գունտերն ասաց. «Դուք ընդառաջ գնացեք և ողջունեք,
Եվ թող տեսնեն, որ անում եք դա արքունի կարգով սեզ»,
Եվ թագուհին վարվեց՝ ինչպես արքան ասել էր իրեն,
Բայց ասպետին Բրունհիլդը ողջունեց շատ սառնորեն:

512. Եվ Հանգստի տարան նրանց՝ վեհանձնությամբ մեծատուն,
 Բայց Հյուրերի բազմությունը այնքան մեծ էր պալատում,
 Որ կեսն Հազիվ տեղավորվեց՝ ստանալով օթևան:
 Իսկ բուրգունդցիք ուզում էին ճամփա ընկնել Բուրգունդիա:
513. Դշխոն ասաց. «Բարյացակամ կլինեի այն ասպետի Հանդեպ Հար,
 Ով անհատնում արծաթ, ոսկին իմ բաժանել կարենար
 Ազնվազարմ այս Հյուրերին, որ եկել են իմ պալատ»:
 Գիզելհերի գանձապետը՝ Դանկվարտն ասաց պահին այդ.
514. «Ազնվազարմ իմ թագուհի, ինձ պատվիրեք, ես շատ լավ
 Կբաժանեմ Հյուրերի մեջ արծաթ, ոսկին Ձեր անբավ,
 Այնպես բաշխեմ, որ Հյուրերից չի դժգոհի և ոչ ոք»:
 Շուտով տեսան, որ նա անչափ առատաձեռն է իրոք:
515. Երբ Հագենի քաջ եղբայրը ձեռքը գցեց բանալին
 Եվ սկսեց ոսկին բաշխել աջ ու ահյակ լիուլի,
 Աղքատը, որ երազում էր լսել գոնե ոսկու ձայն,
 Հիմա արդեն տեր էր դառնում ոսկիների անսահման:
516. Հարյուրավոր Ֆունտերով էր Դանկվարտը բաժանում,
 Շատերն էին այս պալատից գնում՝ դարձած մեծանուն,
 Կրում էին ճոխ զգեստներ, որ նախկինում չուներին,
 Եվ երբ տեսավ այդ ամենը, խիստ սրտնեղեց թագուհին:
517. Ասաց ազնիվ Բրունհիլդը. «Վախենում եմ, տեր արքա,
 Որ Դանկվարտը Ձեր գանձապետ ամեն ինչը քամուն տա,
 Թե՞ ուզում է բանն Հասցնել ոսկիներին ավարտին,
 Երախտապարտ կլինեմ, երբ մեկը զսպի Դանկվարտին:
518. Շատ առատ է նա բաժանում կամ կարծում է՝ մեռած եմ,
 Բայց դեռ ողջ եմ ու դեռ երկար պիտի ապրեմ, հույս ունեմ
 Իմ Հայրական ոսկիներից օգտվելու այսուհետ»:
 Ձեր ունեցել Բրունհիլդը այդքան շուտ գանձապետ:
519. «Տիրուհի իմ, թույլ տվեք ինձ, — ասաց Հպարտ բուրգունդցին, —
 Հոննոցի արքան տեր է անբավ ոսկու և գանձի:
 Կարիք չունի ամենևին Հարստությանն այսպիսի,
 Նա ոչնչի կարիք չունի, Հավատացեք ասպետիս»:

520. Բայց թագուհին կանխեց. «Ասպետ, թե չեք գտնում անհարմար, Պատվիրեք, որ լցնեն ոսկով քսան սնդուկ ինձ համար, նաև մետաքս ու զգեստներ, որ երբ հասնենք Հռենոս, Թագավորի արքունիքում նվերներ տամ սրտովս»:
521. Եվ լցրեցին սնդուկները ամենաթանկ ակնեղեն, Սպասյակին իր պատվիրեց Բրունհիլդը դա անել, Քանի որ էլ Դանկվարտին չէր վստահում թագուհին: Հագնեն, արքան դրա վրա ծիծաղեցին մի կարգին:
522. Ապա ասաց Բրունհիլդը. «Բայց ո՞ւմ թողնեմ երկրին տեր, Հարկ է, որ այն կառավարվի կամքով իմ և քո՝ Գուենտեր»:
Թագավորը պատասխանեց. «Այստեղ կանչեք, թող նա գա, Այն մտերիմ մարդը, որին կթողնենք մենք փոխարքա»:
523. Նայեց շուրջը Բրունհիլդը, տեսավ մեկին մի տարեց,
Որ հարազատ մորեղբայրն էր, ուստի նրան պատվիրեց.
«Ձեզ եմ թողնում ամբողջ և իմ երկիրը հայրական,
Մինչև որ այն Գուենտեր արքան ինքը իշխել ցանկանա»:
524. Երկու հազար մարդ ընտրեց դշխոն՝ իրեն սրտամոտ,
Որ նրա հետ պիտ գնային հեռու Վորմս անծանոթ,
Տարան նաև Զիգֆրիդի զինվորներին նիբելունգ,
Եվ նստելով նժույգները՝ իջան ծովափ՝ մեկնելու:
525. Իր տիկնանցից ութսունվեցին Բրունհիլդը հետն առավ.
Նաև հարյուր օրիորդների՝ չքնաղներից իր հարկավ,
Չսպասեցին նրանք երկար, բոլորն էին շտապում,
Սակայն նրանց ճամփողները տրտմում էին, արտասվում:
526. Բրունհիլդը պատշաճորեն հայրենիքը իր թողեց,
Մանթ-օտար մարդկանց բոլոր մի առ մի համբուրեց:
Նրանք շուտով հասան ծովափ, որտեղ ահա ելան նավ:
Եվ այդուհետ սեզ թագուհին հայրական տուն չդարձավ:
527. Ծանապարհին ուրախ էին՝ ասպետ, զինվոր իրար հետ,
Անցնում էին օրերն արագ ժամանցներում խնդավետ:
Եվ ողջ ճամփին ուղեկցում էր նրանց քամին համբնթաց:
Զվարթ սրտով նրանք թողին Իգենշթայնը փառապանծ:

528. Եվ քանի դեռ ճամփին էին, սիրուց հեռու մնացին,
Պահում էին սերը, մինչև որ հայրենիք հասնեին,
Որտեղ պիտի տոնվեր նրանց հարսանիքը հաղթական,
Եվ նավելով բարեհաջող՝ նրանք շուտով տեղ հասան:

ԴԻՊԼԱԾ ԻՆՆԵՐՈՐԴ

Թե ինչպես Զիգֆրիդն ուղարկվեց Վորմս

529. Ու երբ նրանք նավարկեցին ինը գիշեր ու ցերեկ,
Հագենը քաջ դարձավ ասաց. «Հապա խոսքիս ուչ դրեք,
Մի սուրհանդակ, մի լուրն ինչ է, որ չենք ճամփում հայրենիք,
Իսկ թե կուզեք՝ սուրհանդակին վաղուց պետք է ճամփեինք»:

530. Գուռտեր արքան ասաց. «Հագեն, իրավացի եք անշուշտ,
Ինքներդ էլ պատրաստվեք, մեկնեք Վորմս շուտափույթ,
Մեր՝ բուրգունդցի ասպետներից ո՞վ կա հարմար ավելի,
Ո՞վ կարող է այդ գործն անել արժանապես, անթերի»:

531. Բայց Հագենը պատասխանեց. «Ինձանից ինչ սուրհանդակ,
Լավ է, արքա, մնամ այստեղ, սնդուկներին ես պահակ,
Կանանց մասին հոգամ, որոնք այստեղ հոգսեր ունեն ծով,
Եվ ջանամ, որ մեր հյուրերը Վորմս հասնեն ապահով»:

532. Նիդեռլանդցուն դա պատվիրեք, ճիշտ ընտրուկություն է, իրավ,
Նա ջահել է ու եռանդուն և այդ գործը կանի լավ,
Իսկ թե մերժի, բանացրեք խոսք խորամանկ ու ախորժ,
Թե սուրհանդակ պետք է մեկնի հանուն սիրո Ձեր քրոջ»:

533. Կանչեց արքան ասպետին, որ ներկայացավ նույն պահին,
Եվ դիմելով նրան, ասաց. «Մոտենում ենք մեր ափին,
Ուստի պետք է իմ քրոջը ուղարկեմ մի լրաբեր
Ու նաև իմ մորը՝ նրանք սպասում են անհամբեր»:

534. Խնդրում եմ քեզ, Զիգֆրիդ, այս պատվերս կատարիր,
Երախտապարտ կլինեմ միշտ», – ասաց արքան սիրալիր:
Սկզբում դա Զիգֆրիդի սրտովը չէր այնքան էլ,
Եվ Գուռտերը ստիպված էր իր խնդրանքը կրկնել:

535. Արքան ասաց. «Դուք մեկնում եք ոչ թե միայն Հանուն ինձ,
Այլ Հատկապես Հանուն նրա՝ ՔրիմՀիլդի սրտակից,
Ես և քույրս դրա Համար կվճարենք շատ թանկ գին»:
Այդժամ ասպետ Զիգֆրիդը պատասխանեց արքային.
536. «Գուևտեր արքա, Ձեր պատվերը անչափ մոտ է իմ սրտին,
Հաճույքով այն կկատարեմ Հանուն չքնաղ օրիորդի,
Ինչպես մերժեմ նրան, ով որ դարձել է իմ սրտին տեր,
Ինչ պահանջեք, Հանուն նրա ես պատրաստ եմ կատարել»:
537. «Ասացեք իմ մորը, ասպետ, — արքա Գուևտերը խոսեց, —
Որ գալիս ենք Հաղթանակով, Հպարտությամբ, փառքով մեծ,
Եվ պատմիր իմ եղբայրներին՝ ինչպես եղավ ամեն բան,
Ասպետներին պատմիր բոլոր, թող իմանան ու ցնծան:
538. Ապա գնա ՔրիմՀիլդին՝ իմ քրոջը տեսության,
ԲրունՀիլդի և իմ կողմից սեր ու ողջույն տար նրան:
Ողջունիր և արքունիքին, ժողովրդին Հասարակ
Եվ ասա, որ բաղձանքին մեր ահավասիկ մենք Հասանք:
539. Եվ Օրտվինին՝ զարմիկին մեր եռանդաշատ, բարեսիրտ,
Ասա՝ ափին Հռենոսի Հրապարակ պատրաստի,
Եվ Հաղորդի իշխաններին, զարմիկներին իմ բոլոր,
Որ Հարսանիք պիտի անենք, մեծ Հարսանիք փառավոր:
540. Ասա նաև ՔրիմՀիլդին, երբ մեր գալու լուրն առնի
Եվ տեսնի, որ Հյուրերի Հետ մտել եմ Հողն Հայրենի,
Թող Հոգ տանի ընդունելու Հարսին սիրով բովանդակ,
Դրա Համար երախտիքով կմնամ միշտ նրան պարտք»:
541. Զիգֆրիդը ոտքի ելավ, արագ տվեց Հրածեչտ
ԲրունՀիլդին, նրա տիկնանց՝ սովորույթով իր պարկեչտ,
Եվ իջնելով ափ՝ արշավեց օր ու գիշեր անընդմեջ:
Ավելի լավ բանքեր երբեք չէր գտնվի նրանց մեջ:
542. Եվ քսանչորս ասպետներով՝ Հող ու փոշու մեջ թաթախ,
Մտավ Վորմս, լուր տարածվեց արքունիքում անհասպող,
Որ եկել է Զիգֆրիդը՝ մենակ, առանց Գուևտերի,
Կարծեցին, թե սպանվել է իրենց արքան քաջարի:

543. Գետին թուան նժույգներից ասպետները փութաշարժ,
Գիզելհերը արագ-արագ եկավ նրանց ընդառաջ,
Եվ Գերնոտը նրա եղբայր, չտեսնելով Գունտերին
Ասպետների հետ՝ հարցրեց՝ սրտում սարսափ մի խորին.
544. «Բարով եկաք, քաջ Ջիգֆրիդ, բայց մենակ եք հասել Վորմս,
Ասեք, որտե՞ղ եք թողել դուք թագավորին՝ եղբորս,
Գուցե ընկավ իմ եղբայրը թագուհու հետ մարտում մեծ,
Ուրեմն, իրա՞վ այդ թագուհին նրա կյանքը կործանեց»:
545. «Հող մի արեք, քաջ իշխաններ, Ձեր եղբայրը իր մարդկանց՝
Ձեզ և բոլոր բուրգունդներին ողջունում է ջերմ, սրտանց,
Նա ճամփին է ողջ և առողջ, ինքն ուղարկեց ասպետիս,
Որ ժամ առաջ հասնեմ Վորմս ու ձեզ բերեմ ավետիս:
546. Լավ կլինի՝ հոգաք, որ ինձ Մայր թագուհին ընդունի,
Ու նրանից բացի նաև Քրիմհիլդը գեղանի,
Պիտի նրանց ես հաղորդեմ պատվերները անհապաղ,
Բրունհիլդի, Գունտերի, որ երջանիկ են, շատ ուրախ»:
547. Գիզելհերը պատասխանեց. «Հիմա նրանց մոտ գնանք,
Այդ լուրով դուք իմ քրոջը կպատճառեք մեծ բերկրանք,
Քրիմհիլդը նրա համար տրտմում է ու տանջվում միշտ,
Նա Ձեզ նույնպես սպասում է: Ես դա գիտեմ, Ջիգֆրիդ»:
548. Ջիգֆրիդը ասաց նրան. «Որտեղ էլ որ լինեմ ես,
Միշտ կկանգնեմ նրա առաջ՝ հաղթանակած, պարզերես,
Սակայն տիկնանց մոտ պատվարժան հիմա ո՞վ ինձ կտանի»:
Եվ կանանց մոտ մտավ ինքը՝ Գիզելհերը պատանի:
549. Գիզելհերը լուրը բերեց մորն ու քրոջը քիչ անց,
Նրանց տեսավ մեկտեղ՝ իրենց հարկաբաժնում և ասաց.
«Ջիգֆրիդն է ժամանել, քաջ նիդեռլանդցին՝ հանց բանբեր
Ուղարկել է նրան այստեղ Գունտեր արքան անհամբեր:
550. Լուր է բերում Ջիգֆրիդը մեր արքայից փառահեղ,
Եթե թույլ տաք քաջ ասպետին, որ նա ինքը գա այստեղ,
Կպատմի ձեզ՝ Իսլանդիայում ինչ է եղել միառմի»:
Բայց տխրեցին այս խոսքերից տիկիները ավելի:

551. Նրանք փութով վեր կացան և Հազնվեցին մտազբաղ,
Իմաց արին Ձիգֆրիդին՝ իրենց մոտ գա անՀապաղ,
Ինչը ասպետն արեց սիրով, զի ուզում էր տեսնել իր
ՔրիմՀիլդին, որը նրան դիմեց անչափ սիրալիր:
552. «Բարի գալուստ, ով Ձիգֆրիդ՝ ասպետաց մեջ գովարժան,
Մ'ը է Հապա իմ եղբայրը՝ Բուրգունդիայի քաջ արքան,
Վախենում եմ, որ եղբորս կործանել է կինը չար,
Ձղջում եմ, որ դժբախտ աստղով մի օր եկել եմ աշխարհ»:
553. Ձիգֆրիդը ուրախ ասաց. «Ազնվագարմ տիկիներն,
Աչքալուսանք մատուցեք ինձ, քանզի գուր է լացը ձեր,
Ես թողել եմ նրան առողջ, զվարթ Հոգով ու կայտառ,
Հայտնում եմ ձեզ նրանց ողջունյն-պատվիրանը բառ առ բառ:
554. Արքան և իր նորահարսը՝ Բրունհիլդը սիրասուն,
Ողջունում են Ձեզ ջերմագին, ով տիրուհի մեծանուն,
Ուստի թողեք արտասպելը՝ նրանք գալիս են այստեղ»:
Ավելի լավ լուր օրիորդին ոչ մեկը դեռ չէր Հայտնել:
555. Ձյունասպիրտակ զգեստներով արցունքները սրբեցին,
ԵնորՀակալ եղան ապա Ձիգֆրիդին քաջածին,
Որ բերել էր բարի լուրը, Հասցրել էր աստ՝ Վորմս,
Եվ մոռացան տիկիները թե տրտմություն և թե Հոգս:
556. Ձիգֆրիդին խնդրեց նստել ՔրիմՀիլդը աննման:
Ապա ասաց իր ասպետին. «Ձեզ կտայի անվարան
Աչքալույսի Համար այս մեծ անչափ ոսկի, բայց ինքներդ
Հարուստ եք շատ, ոսկին Ձեզ ի՞նչ: Իմ Հարգանքը Ձեզ, ասպետ»:
557. «Թե երեսուն երկիր էլ ես ունենայի Հպատակ,
Մեկ է, ձեռքից Ձեր, ՔրիմՀիլդ, կընդունեի ընծան թանկ»:
Ազնիվ օրիորդն ասաց այդժամ. «Ես Հենց Հիմա, թե թույլ տաք»:
Եվ պատվիրեց սպասուհուն՝ ներկայանա շատ արագ:
558. Քսանչորս ճոխ ապարանջան նվիրեց նա Ձիգֆրիդին,
Ընդելուզված էին դրանք քարերով պերճ, թանկագին,
Բայց դրանցից չվերցրեց Ձիգֆրիդը ոչ մի Հատ,
Այլ բաժանեց ՔրիմՀիլդի նաժիշտներին լիառատ:

559. Մայր թագուհին նույնպես ասաց խոսքերը իր գոհուլթյան, Դիմեց ասպետը օրիորդին. «Պետք է Հայտնեմ նաև այն, ինչ արքան է պատվիրել ինձ. երբ Հռենոս նա Հասնի, ինչ որ պիտի անեք՝ նա Ձեզ երախտապարտ կլինի:
560. Ազնվագարմ իր Հյուրերին, — այդպես արքան ինձ ասաց, — Դուք կընդունեք ինչպես հարկն է, դրա համար անկասկած Դուք ընդառաջ ելեք նրանց Հռենոսի ափին հենց, Այս է խնդրում Գուևտեր արքան՝ սրտակցությամբ իր անկեղծ»:
561. Օրիորդն ասաց հոժարակամ. «Կկատարեմ անպայման, եղբորս և թագավորի համար կանեմ ամեն բան, Կողջունեմ նորահարսիս և եղբորս՝ իբրև քույր»:
Եվ փայլեցին թունդ Հուզմունքից վառ այտերը գեղուհու:
562. Նրան որպես լուկ սուրհանդակ չընդունեցին այդքան ջերմ, Քրիմհիլը կհամբուրեր նրան, եթե չամաչեք, ինչ կարոտով նա հեռացավ օրիորդից յուր աննման, Եվ Հյուրերին ընդունելու բուրգունդները թև առան:
563. Զինդուղ, Հունուղ և Ռումուլտ ասպետները միասին Հիմա Հոգսեր ունեցան շատ, նրանք գետի այս ափին Հրապարակ պիտ գցեին և զարկեին վրաններ, Ընդունելու նրանց, ինչպես հնուց կարգ էր աներեր:
564. Մարկարաֆը և Օրտվայնը, որ չկորչեր օրն ի գուր, Սուրհանդակներ ուղարկեցին Հռենոսից ամենուր՝ Հայտնելու, որ Գուևտեր արքան անելու է Հարսանիք:
Եվ զուգվեցին օրիորդները սպասումով երջանիկ:
565. Ողջ պայտը, պատերն անգամ և դահլիճը Գուևտերի Զարդարվեցին շքեղորեն և պերճությամբ անթերի, Գալու էին անթիվ Հյուրեր, ողջը պատվին էր նրանց, Սպասվում էր ճոխ Հարսանիք, ուրախություն չլսված:
566. Եվ արքայի զարմիկները, ասպետները հպատակ Երջում էին Հռենոսով և երկրով բովանդակ, Ծամփան էին պահում նրանք արքայի և Հյուրերի:
Բացվում էին սնդուկները՝ պահած, փայած չորերի:

567. Արդ՝ լուրերը Հասան քաղաք, որ տեսել են գեղադեմ
Բրունհիլդին Հյուրերի Հետ՝ նրանք գալիս են արդեն,
Եվ դրանից Բուրգունդիայում ծայր առավ մեծ եռուզեռ:
Գալու էին ի՛նչ քաջազեն, մեծակորով ասպետներ:
568. Աքանչելի Քրիմհիլդը ասաց նաժիշտ կուսերին.
«Պետք է շուտով մեր Հյուրերին դիմավորենք միասին,
Ուստի Հանեք սնդուկներից Հանդերձները ձեր ճոխ-ճոխ,
Որ Հագնեք և մեր Հյուրերին երևաք ձեր փայլով ողջ»:
569. Պահնորդացու ասպետները պալատ եկան շուտափուլով,
Եվ բերեցին տիկնանց Համար թամբեր՝ ընտիր, ոսկուց զուտ,
Տիկնայք նույնպես նժույգներով պիտի գետափ գնային,
Նման շքեղ ձիասարքեր ողջ աշխարհում չկային:
570. Հեյ, ոնց էին շողում նրանց նժույգները ոսկեսանձ,
Փայլում էին գոհարազարդ երասանները նրանց,
Բերեցին և աթոռակներ՝ թանկ կտորով երեսպատ,
Որ դրանցով ձի Հեծնեին արիասիրտ տիկնայք այդ:
571. Պատրաստ էին տիկնանց Համար նժույգները սիգաքայլ,
Ինչպես Հենց նոր ձնզ պատմեցի՝ սանձուսարքով ոսկեփայլ,
Կրում էին նժույգները նաև փոկեր նրբաթել,
Ամենալավ մետաքսներից, որ շատերս չենք տեսել:
572. Արքունական տիկիներին խումբը՝ թվով ութսունվեց,
Գլխաշորով, ճոխ Հանդերձով Քրիմհիլդին այցելեց,
Շքեղ էին նրանք անչափ, բուրումնավետ ծաղկունքն այդ:
Եկան նաև օրիորդները՝ չնաշխարհիկ, վարդայտն:
573. Փայլում էին զարդերի մեջ օրիորդները Հիսունչորս,
Արքունիքում նման Հրաշք չէին տեսել մինչ օրս.
Ժապավեններ ունեին վառ իրենց դեղձան Հյուսերին,
Ցնծում էին անկեղծորեն Հաղթանակով Գունտերի:
574. Հանդերձները նրանց այնքան ընտիր էին, այնքան թանկ,
Որ մարդկանց մեջ չարժում էին լոկ Հիացմունք ու զարմանք,
Այնքան էին դրանք սազում օրիորդներին զարդասեր,
Որ Հիմարը միայն նրանց պիտի նայեր անտարբեր:

575. Շատ զգեստներ կային մորթուց սամուլրի ու կնգումի,
Զեռքերն էին նուրբ մշակված, իսկ մատները՝ ոնց մոմե,
Կրում էին մատանիներ և Հանդերձներ մետաքսե,
Իսկ զարդերի մասին առատ ո՞վ կարող է խոսք ասել:
576. Զեռամբ Հյուսված գոտիները՝ պերճ, երկար ու գալարուն,
Գրկում էին քնքշությամբ մեջքը նրանց դալարուն:
Հագնում էին մետաքս՝ բերված Արարիայից հեռավոր:
Եվ Հանդեսն էր մտքում նրանց՝ շքեղ փայլով, անսովոր:
577. Նեղում էին նրանց անչափ պիրկ կապերը կրծկալի,
Կարմիր էին այտերն առնում զգեստներից ավելի,
Այնքան էին նրանք կյանքով, զվարթությամբ առլեցուն,
Որ ցանկացած արքունիքի կրնձայիսին փառք անհուն:
578. Եվ երբ արդեն պատրաստ էին տիկինները Ութեի,
ԳրիմՀիլդի օրիորդները՝ պերճանքի մեջ անթերի,
Ասպետների ուղեկցությամբ շքեղ երթով դուրս եկան,
Ասպետները կրում էին թեթև նիզակ ու վահան:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Թե ինչպես Վորմսում ընդունեցին Բրունհիլդին

579. Գետի վրա շքախմբով տեսան՝ գալիս է արքան,
Մոտենում էր արդեն ասին Հյուրերի Հետ անքանակ:
Տիկնայք ձիով, ասպետաց հետ, գնում էին ընդառաջ՝
Ողջունելու եկվորներին, գնում էին թև առած:
580. Եվ նավերից շքախումբը իջավ զվարթ ու առույգ,
Նրանց հետ և Զիգֆրիդի զինվորները նիբելունգ,
Դուրս եկան ասին Հոենոսի, ուր բազմությամբ ալեկոծ,
Սպասում էր թագավորի ժողովուրդը բազմահոծ:
581. Լսեք, Հապա, պատմեմ նաև ազնվագարմ Ութեից,
Թե ինչպես նա իր տիկնանցով, նաժիշտներով ուղեկից
Ամրոցից դուրս եկավ, ապա ուղևորվեց դեպի ասի,
Ուղեկցությամբ իշխանների, ասպետների բազմությամբ:

582. Քրիմհիլդի ձիու սանձը, մինչ դարպասը ամրոցի,
Մարկգրաֆը պիտի պահեր, այնուհետև քաջածին
Ջիգֆրիդն էր ուղեկցելու իր օրիորդին մանկամարդ,
Որի համար նրան հետո սիրեց օրիորդն անչափ շատ:
583. Մայր թագուհու ձիու սանձից Օրտվայն Մետցին էր բռնել,
Ապա զույգ-զույգ գալիս էին անթիվ տիկնայք, ասպետներ,
Ոչ մի անգամ հանդեսներում, երդվում եմ, անկասկած,
Տիկնայք այդքան բազմաքանակ ես չեմ տեսել հավաքված:
584. Մինչև նավը ափ կհասներ, որ ձանձրույթին չտրվեն,
Ասպետները բուրգունդական, հանպատրաստի ու մեկեն,
Խաղեր էին կազմակերպում, զվարճութուն ու ժամանց,
Ապա տիկնանց օգնեցին, որ նժույզներից իջնեն ցած:
585. Նավից իջավ թագավորը, Հյուրերն իջան սիգածեմ,
Հեյ, ինչ փայլուն զուգսեր էին շողում կանանց աչքի դեմ,
Նուզգեռից վահանները խփվում էին մեկմեկու,
Ի՛նչ բարձր էր նրանց զնգոցն ու աղմուկը ահարկու:
586. Քրիմհիլդի օրիորդները կանգնած էին ափին մոտ,
Երբ Գունտերը Հյուրերի հետ նավից իջավ ցած փուլթկոտ՝
Ուղեկցելով Բրունհիլդին, նրան արած թեևանցուկ,
Շուքով նրանց զգեստները փայլում էին ու մրցում:
587. Առաջ գնաց Քրիմհիլդը՝ զվարթությամբ, խինդով լի՝
Ընդունելու Բրունհիլդին, նաժիշտներին նազելի
Եվ կանացի քնքուշ ձեռքով գլխանոցն իր աննշան
Ետ տարավ նա, որպեսզի ըստ պատշաճի համբույր տան:
588. Ազնվակիրթ օրիորդն ասաց Բրունհիլդին վեհաշուք.
«Մեծագնիվ Հյուր, մայրս և ես ուրախ ենք, որ արդեն Դուք,
Ոտք եք դնում մեր երկիրը: Ուրախ են և մեր տիկնայք»:
Խոր խոնարհվեց Բրունհիլդը՝ տալով արժան մեծարանք:
589. Նրանք միմյանց վայելչորեն համբուրեցին նորից նոր,
Մայր ու դուստր դգվում էին հարսին իրենց նոր եկվոր,
Ոչ մեկը դեռ չէր ընդունվել սիրով այդքան շերմ սրտի,
Գրկում էին Բրունհիլդին ու համբուրում վերստին:

590. Եվ երբ տիկնայք ԲրուենՀիլդի բուրն արդեն ափ իջան,
Մոտ վագեցին շատ ասպետներ՝ կնամեծար, փութաջան,
Վերցնելով ձեռքը նրանց, որ ծառային սրտաբաց
Եվ ուղեկցեն դեպի այնտեղ, ուր ԲրուենՀիլդն էր կանգնած:
591. Ժամեր անցան, մինչ ըստ կարգի ողջուն տրվեց ամենքին,
Եվ վարդապետ շատ շրթունքներ շատ Համբուրներ քաղցեցին,
Դեռ իրար մոտ կանգնած էին օրիորդները բարձրատուն,
Ասպետները Հիացմունքով նայում էին նրանց կողմ:
592. Ովքեր լսել էին միայն, տեսան աչքով սեփական,
Որ աշխարհում նման կույսեր դեռ չեն եղել ու չկան,
Ասում էին ասպետները, իշխանները մեծանուն,
Որ արդարև նրանք կնոջ օրինակ են աշխարհում:
593. Ով գիտակ էր մարմնավոր շնորհների կանացի,
Նա գովում էր ԲրուենՀիլդին, նրա տեսքը ազդեցիկ,
Իսկ շատերն էլ գովում էին, ինչպես Հարկն է ու ոչ քիչ
ՔրիմՀիլդի գեղեցկութան վեհությունը կախարդիչ:
594. Տիկնաներն ու օրիորդները քայլում էին թևանցուկ
Արդուգարդի մեջ գեղեցիկ, Հանդերձներում վեհաշուք,
Վորմսին մոտիկ, պարսպի տակ, դալարագեղ դաշտում լայն,
Խփված էին տաղավարները ու վրաններ աննման:
595. Իրար անցան թագավորի փոքրավոր ու դրանիկ,
Դշխոները, նաև տիկնայք ուզում էին խաղաղիկ
Ստվեր գտնել: Իսկույն ևեթ ասպետները բուրգունդցի
Ուղեկցեցին նրանց դեպի վրանները պատրաստի:
596. Եկան նաև Հյուրերն իրենց նժույգներով գեղեցիկ,
Վահաններով ընտրագույն, նիզակներով պինդ ու ձիգ,
Բարձրացավ ահեղ փողի, ասես Հրդեհ էր դաշտում,
Երբ դուրս եկան Հերոսները մրցամարտի անզիջում:
597. Նայում էին տիկնաները ասպետներին կտրած Հուր,
Բայց նրանց մեջ, ասում էին, Զիգֆրիդն էր ամենուր
Աչքի ընկնում ամենից շատ՝ իր քաջերով նիբելունգ՝
Պատճառելով չքնաղ տիկնանց զարմանք, նաև Հիացմունք:



ԴԻՊԿԱԾ

ՏԱՍԵՐՈՐԳ

598. Արքան սակայն Տրոնյեցուն նշան անել ս,ատվիրեց,
Ասպետներին՝ ավարտելու մրցախաղերը իրենց,
Զի փոշի էր նստում ազնիվ օրիորդների շորերին,
Քաջ Հյուրերը ուրախությամբ Հոծարեցին արքային:
599. Ասպետներին Գերնոտն ասաց. «Հանգիստ տվեք ձերին,
Մինչև զովը երեկոյան պիտ ուղեկցենք վերստին
Մինչ քաղաքի դարպասները դշխոներին վեհաշուք,
Հենց շարժվի թագավորը՝ պատրաստ եղեք նաև դուք»:
600. Ամբողջ դաշտում ավարտվեցին սրախաղեր ու մարզանք,
Ապա մտան վրանները ասպետները և տիկնայք,
Մեծ և ընտիր վրաններում, սովերի տակ առանձին
Նրանք, մինչև գնալները, զվարճության տրվեցին:
601. Երեկոյան, երբ արևը թեքվեց դեպի մայրամուտ,
Երբ զովացավ օդը, նրանք ոտքի ելան շուտափուլով
Եվ մեկնեցին Հյուրերի Հետ դեպ ոստանը բուրգունդաց,
Ասպետների ուշքն ամեն պահ գեղեցկութունն էր կանանց:
602. Ինչպես կարգն էր պահանջում աստ, ճանապարհին շարունակ
Ասպետները մրցում էին, տալիս շուքի օրինակ,
Երբ վերջապես պալատի դեմ արքան իջավ ձիուց ցած,
Ցած բերեցին նրանք իրենց նժուգներից և տիկնանց:
603. Թագուհիներն Հրաժեշտին բաժանվեցին ջերմորեն,
Բուռն օրվանից հոգնած ահա Քրիմհիլդը և Ութեն
Շքախմբով, ասպետներով իրենց օթյակը անցան,
Լսվում էին ամեն կողմից ջերմ ողջույններ Հիաձայն:
604. Պատրաստ էին սեղանները: Արքան ուզում էր Հիմա
Սեղան նստել Հյուրերի Հետ: Նրա կողքին աննման
Բրունհիլդը նստեց ահա: Թագ էր կրում ոսկեղեն,
Բուրգունդիայի Հզորագոր թագուհին էր նա արդեն:
605. Գցված էին սեղանները լայն, ընդարձակ, տոնական,
Ուտեստներով առատ լցված, դե, մենք ծանոթ ենք դրան,
Ոչինչ չկար այնտեղ պակաս կերուխումի Համար ճոխ,
Թագավորի կողքին անթիվ Հյուրեր կային բերկրացող:

606. Լվացվելու համար անգամ սպասյալը արքային
Ձուր մատուցեց ոսկե թասով: Ձհավատաք ոչ մեկին,
Ով որ կասի, թե տեսել է ավելի ճոխ խրախճանք,
Երդվում եմ, դեռ չի եղել այդպիսի բան լուսնի տակ:
607. Մինչ ձեռքերն էր Հռենոսի արքան այնտեղ լվանում,
Եկավ, կանգնեց արքայի դեմ Զիգֆրիդը դիցանուն,
Հիշեցրեց արքայական խոստման մասին երբեմնի,
Երբ Իսլանդիա՝ Բրունհիլդի երկիր պիտի մեկնեին:
608. Ասպետն ասաց. «Հիշեք, արքա, թե ինձ ինչ եք խոստացել.
Բրունհիլդը թե Վորմս գա և թագուհին դառնա ձեր,
Քրիմհիլդին՝ Ձեր քրոջը, կնության եք տալու ինձ,
Մոռացե՞լ եք, թե արածս համարում եք առ ոչինչ»:
609. Թագավորը պատասխանեց. «Ճշմարիտ եք, անկասկած,
Դա չպետք է ուշացնել, ցանկությունն է իմ սրտանց,
Որ երկուսիդ իրավ օգնեմ, ես կկանչեմ Հենց Հիմա
Քրիմհիլդին, թող պալատից իսկույն ևեթ այստեղ գա»:
610. Եվ ներս մտավ Քրիմհիլդը օրիորդներով աչազեղ,
Կտրեց սակայն նրա ճամփան Գիզելհերը տեղնուտեղ.
«Ետ ուղարկիր նաժիշտներին, սիրելիդ իմ Քրիմհիլդ,
Թագավորի հրամանն է տեսնել միայն օրիորդիդ»:
611. Եվ բերեցին Քրիմհիլդին արքայի մոտ՝ Գունտերի,
Շուրջը նրա կանգնած էին իշխանները երկրի,
Դահլիճում էր այս ամենը, պալատից խոր անդորր,
Եկավ այնտեղ այդժամ նաև Բրունհիլդը՝ դշխոն նոր:
612. Գունտեր արքան քրոջն ասաց. «Գեղանիդ իմ Քրիմհիլդ,
Քեզ կանչել եմ՝ գիտենալով, որ խոհեմ ես, բարեմիտ,
Խոստացել եմ վաղուց քեզ տալ Զիգֆրիդին կնության,
Ուստի օգնիր արքայիս, որ իմ խոստմանը տեր մնամ»:
613. Ասաց ազնիվ Քրիմհիլդը. «Շատ սիրելի իմ Գունտեր,
Դուք չպետք է ինձ խնդրեք: Հնազանդ եմ խոսքին Ձեր՝
Կատարելու այն ամենը, ինչ պահանջեք այս պահին.
Ես կսիրեմ սրտանց նրան, ում կընտրեք ինձ ամուսին»:

614. Եվ փայլում էր Ջիզֆրիդը, հուզվել, դառել կաս-կարմիր,
Համաձայն էր Քրիմհիլդը թագավորին՝ եղբորն իր,
Նրանց առան շրջանի մեջ և Հարցրին օրիորդին՝
Համաձայն է, որ ասպետը դառնա նրան ամուսին:
615. Խիստ ամաչեց Քրիմհիլդը ու գլուխը կախեց ցած,
Սակայն ասաց, որ չի մերժում ձեռքն ասպետի փառապանծ,
Երջանիկ էր Ջիզֆրիդը, երբ այս խոսքերն էր լսում,
Կատա՞կ բան է՝ Քրիմհիլդը համաձայն է, չի մերժում:
616. Եվ նշանված արդեն, իբրև նորահարս ու նորփեսա,
Պատրաստվեցին համբուրվելու, դե, հնավանդ կարգ էր սա,
Եվ ասպետը Քրիմհիլդին գիրկը առավ իր ամուր,
Կանգնածների աչքի առաջ տվեց նրան պինդ համբույր:
617. Այս ամենից հետո ահա ցրվեց շրջանը կամաց,
Եվ նստեց նա իր տիկնոջ հետ թագավորի հենց դիմաց:
Կազմ ու պատրաստ մոտիկ եկան մանկավիկները հլու:
Ասպետի շուրջ կանգնած էին զինվորները նիբելունգ:
618. Թագավորի կողքին նստած Բրունհիլդը՝ գեղանին,
Երբ որ տեսավ Քրիմհիլդին ծառայի հետ այդ չնչին,
Խուլ հեկեկաց՝ խոր թաքցրած վիրավորանքը թաքուն,
Արցունքները ողողեցին վառ աչքերը ծիծաղկուն:
619. Թագավորը Հարցրեց նան. «Տիրուհիս, ի՞նչ եղավ քեզ,
Ինչո՞ւ կորավ հանկարծ փայլը քո աչքերում լուսակեզ,
Արտասվում ես դու, փոխանակ շողշողալու երջանիկ,
Ձէ՞ որ հիմա ոտքիդ տակ են իմ երկիրը ու մարդիկ»:
620. «Արտասվելու պատճառ ունեմ, — ասաց չքնաղ թագուհին, —
Քրիմհիլդի համար է իմ սիրտը ցավում դառնագին,
Ես տեսնում եմ ճորտի կողքին քո քրոջը գերազնիվ
Եվ դրանից արտասվում եմ, անպատված է նա քանզի»:
621. Քաջ Գունտերը պատասխանեց. «Եվ չխոսենք մենք հիմա,
Ով թագուհի, ես քեզ հետո կպատմեմ դա անպայման,
Որ ես ինչու որոշեցի քրոջս տալ ասպետին,
Համոզված եմ՝ նրանք կապրեն լիության մեջ ու խինդի»:

622. Իսկ դշխոն թե՛ «Ափսոս, չէ որ չքնաղ է նա, սրտակից,
 Հնար եթե ունենայի, կփախչի այս երկրից,
 Քանզի երբեք չեմ ուզենա մտնել Ձեզ Հետ անկողին,
 Մինչև չասեք, թե ինչպես եք փեսա ընտրել Ձիգֆրիդին»:
623. Ապա խոսեց ազնիվ արքան. «Ասեմ Հիմա իմանաս,
 Նա այնքան Հող, ապրուստ ունի, որքան և ես, ոչ պակաս,
 Իմացիր, որ նա շատ Հարուստ թագավոր է, արքայազն,
 Ահա ինչու նա դարձել է արքայատան մեր փեսան»:
624. Լուրը լսեց Բրունհիլդը, կրկին մնաց նա մռայլ,
 Ելան ապա սեղաններից ասպետները շողափայլ:
 Եվ ամրոցը բռնեց մեկեն սրախաղը եռանդով,
 Բայց Գունտերը շատ էր ուզում, որ ավարտվի այն շուտով:
625. Առագաստ էր ուզում մտնել թագավորն իր կնոջ Հետ,
 Փառաբանված ասպետն Հիմա մի մտածմունք ուներ գեթ,
 Թե ինչպես է ճաշակելու սերը՝ խինդով առեցուն
 Եվ անդադար Բրունհիլդին բոցե Հայացք էր գցում:
626. Եվ խնդրեցին ասպետներին՝ սրախաղը վերջ տան արդ,
 Քանզի արքան թագուհու Հետ պիտի մտնի առագաստ,
 Եվ դահլիճի սանդուղքներով իջնում էին միասին
 Դշխոները՝ դեռ չգժտված էն չարաղետ վեճից սին:
627. Ու եռանդով գործի անցան դրանիկ ու սպասյակ,
 Որ տերերի առաջ ելան լապտերներով շողարձակ:
 Բարի գիշեր Գունտերն ասաց ասպետներին իր բազում,
 Տեսան՝ տալիս է Հրաժեշտ և ասպետը քաջազուն:
628. Երկուսին էլ սպասում էր սիրո գիշերն անմեկին,
 Ձի երկուսն էլ տենչում էին կնոջ գգվանք, անկողին,
 Բայց Գունտերի ջանքերն, ավաղ, իզուր եղան այդ գիշեր,
 Մինչ գիշերը Ձիգֆրիդի փառավոր էր, անեզր:
629. Երբ որ մտավ Ձիգֆրիդը իր կնոջ Հետ առագաստ,
 Սիրով ձգվեց դեպի կինը, դեպ օրիորդը անաղարտ,
 Եվ ասպետի սերը բորբոք առավ Հագուրդ, առավ զով,
 Եվ ծառայեց Քրիմհիլդը նրան չքնաղ իր մարմնով:

630. Էլ ինչ պատմեմ նրանց մասին, ամենքիդ էլ պարզ է հենց,
Լավ է լսեք պատմեմ ձեզ, թե Գուևտերին ինչ պատահեց,
Բրուևհիլդի հետ չբերեց բախտն արքայի այդ գիշեր,
Լավ կլիներ, որ Գուևտերը ուրիշ կնոջ հետ լիներ:
631. Երբ հեռացան ննջարաններ թե տղամարդ և թե կին,
Իսկույն ևեթ փակեց դուռը Գուևտեր արքան սենյակի՝
Հավատարով, որ շատ մոտ է սիրո պահը ըղձական,
Բայց Գուևտերը պիտի երկար դեռ սպասեր այդ օրվան:
632. Ճերմակ խալաթն հագավ արքան, գնաց դեպի անկողին,
Մտածում էր թագավորը. «Ես ունեցա այն, ինչին
Ձգտում էի սրտանց հասնել օրերիս մեջ անդադար»:
Բրուևհիլդի գեղեցկությամբ արքան տարված էր իսպառ:
633. Վառվող մոմը դանդաղ մարեց ձեռքերի մեջ արքայի,
Գնաց արքան դեպ անկողին, ուր պառկած էր,
Ձգվեց դեպի Բրուևհիլդը ուրախությամբ անքնին,
Փորձեց գրկել սիրելիին, տրվել սիրո բերկրանքին:
634. Նա կթաղվեր ծովում սիրո, քնքշանքի ու բերկրանքի,
Եթե կինը թույլ տար նրան՝ բուրգունդական արքային,
Բայց չարացավ Բրուևհիլդը արքայի միտքն զգաց հենց,
Որն ուզում էր սիրել, սակայն ատելության հանդիպեց:
635. Բրուևհիլդը ասաց նրան. «Դա մոռացեք, քաջ ասպետ,
Այն, ինչ ունեք ձեր մտքի մեջ: Դեռ չեք պառկի Դուք ինձ հետ,
Ես ուզում եմ գեռ կույս մնալ: Նաև պետք է իմանաք,
Որ ես պետք է լսեմ ձեզնից իսկությունը բովանդակ»:
636. Արքան փորձեց ուժով տիրել, պատռեց շապիկն օրիորդի,
Բայց բռնելով նրա մեջքից՝ Բրուևհիլդը իր գոտին
Հանեց մեջքից և շատ ամուր կապեց նրան անվրդով
Եվ վերջ դրեց գիշերային բաղձանքներին խեղճ մարդու:
637. Նա արքայի ոտուձեռը առանց ջանքի կապկպեց
Ու կախ տվեց բարձր մեխից, որ խփված էր պատին հենց,
Խղճալի էր Գուևտեր արքան, անկարող էր ու անճար,
Հզորագոր Բրուևհիլդն էր պատժել նրան չարաչար:

638. Եվ սկսեց Բրուենհիլդին խնդրել արքան սրտահեղ.
«Դե, արձակեք իմ կապերը, իմ տիրուհի, արձակեք,
ես այլևս երբեք ուժով չեմ փորձելու հաղթել Ձեզ
եվ իմ օրում, խոստանում եմ, երբեք մոտիկ չեմ գա ես»:
639. Բրուենհիլդը շլսեց դա, քանզի քնեց անվրդով,
Իսկ խեղճ արքան մինչ առավոտ գամված մնաց երկաթով,
Արշալույսը մինչև նայեց պատուհանից անարգել,
Իսկ Գուենտերը ամբողջ գիշեր բոլորովին չէր քնել:
640. «Վեհհաշուք տեր, հիմա ասեք, — խոսեց տիկինն էն չքնաղ, —
Շա՞տ դժվար է պատվիդ համար, թե որ տեսնի պատից կախ
Սպասյակդ հենց հիմա քեզ, այն էլ ձեռքով մի կնոջ»:
Եվ Գուենտերը պատասխանեց. «Ձեր պատիվն էլ կընկնի ողջ»:
641. Սակայն նաև իմ համբավը երկրով մեկ կընկնի շուտ,
Ուստի թողեք, որ Ձեր կողքին պառկեմ հիմա շուտափույթ,
Եվ քանի որ այդպես դեմ եք, որ իմ սերը ես Ձեզ տամ,
Դե մոտ չեմ գա ու չեմ դիպչի Ձեր զգեստին էլ անգամ»:
642. Բարձր մեխից իջեցրեց Բրուենհիլդը արքային,
Եվ նա գնաց, մտավ կրկին Բրուենհիլդի անկողին,
Սակայն պառկեց այնքան հեռու, որ չկպչի թագուհուն,
Այդպես առավ թագավորը իր աչքերին մի քիչ քուն:
643. Սպասյակներն եկան, նրանց հանդերձները բերեցին,
Դրանք արդեն վաղուց դրված, պատրաստ էին վաղ ծեղին,
Եվ բոլորն էլ ուրախ էին, թագավորն էր լուկ տրտում,
Թեև թագ էր կրում գլխին, փառքի տեր էր անպատում:
644. Եվ ըստ կարգի, որ մինչ էսօր դեռ պահում են, պահպանում,
Թագավորը եկեղեցի պիտի տաներ թագուհուն,
Նրանք մտան եկեղեցի, պատարագի ու օծման,
Զիզֆրիդն էլ շուտով եկավ իր տիկնոջ հետ աննման:
645. Պատրաստ էին հանդերձները նրանց օծման պսակի,
Պատրաստ էին և թագերը՝ մականների հետ ոսկի,
Օրհնվեցին նրանք այնտեղ՝ արքունական երկու զույգ,
Լիքն էր զվարթ ժողովրդով եկեղեցին փառաշուք:

646. Չորս հարյուր կամ ավելի շատ պատանիներ բուրգունդցի
Ի պատիվ այս ամուսնության սուր ստացան ասպետի,
Ցնծում էին մարդիկ սրտանց Բուրգունդիայում ամենուր,
Ձնգում էին հերոսների ձեռքին սրեր ամրակուռ:
647. Նայում էին պատուհանից օրիորդները մանկամարդ,
Նրանց առաջ փայլում էին վահանները ոսկեզարդ,
Իսկ Գունտերը՝ ինքը արքան, ուզում էր լուկ մենություն
Եվ չէր կարող թաքցնել, որ անչափ տխուր է, նկուն:
648. Ջիգֆրիդի հանդեպ անգամ նա շատ սառն էր, անտարբեր,
Թագավորի ցավը, սակայն, Ջիգֆրիդը լավ գիտեր
Եվ մոտեցավ նա Գունտերին և հարցրեց հարգալիր.
«Կուզենայի իմանալ, թե ինչ է եղել արքային»:
649. Գունտեր արքան ասաց նրան. «Սիրելիդ իմ, Ջիգֆրիդ,
Ես իսկական սատանա եմ բերել տունն իմ, արքունիք,
Երբ մոտեցա նրան սիրով, նա արձակեց իր գոտին,
Կապկպեց ինձ, կախեց մեխից, որ երևում էր պատին»:
650. Եվ ես այնտեղ տառապեցի ամբողջ գիշեր՝ մեխից կախ,
Մինչև որ ինձ լուսարացին ազատեց կինն այդ, ավաղ,
Ես ասում եմ այս ամենը քեզ՝ իբրև ինձ հարազատ»:
Եվ ասաց գոռ Ջիգֆրիդը. «Արքա, ցավում եմ ես շատ»:
651. Եվ եթե Դուք չեք առարկում, ապա կօգնեմ այսօր Ձեզ,
Ձեր թագուհու կողքին՝ իբրև ամուսին Դուք կպառկեք
Եվ նա երբեք Ձեզ չի մերժի, Դուք կսիրեք հույժ նրան»:
Այս խոսքերը թագավորի սրտին անչափ դուր եկան:
652. Ապա ասաց Ջիգֆրիդը. «Արքա, թեև այս անգամ
Մեր երկուսից երջանիկը ստույգ ես եմ հենց, որ կամ,
Եվ ինձ համար իմ կյանքից թանկ հիմա քույրդ է աննման,
Բայց կստիպեմ Բրունհիլդին՝ նույնը դառնալ Ձեզ համար»:
653. Այս գիշեր հենց, – ասպետն ասաց, – անտես թիկնոցս հագած,
Թաքուն կգամ ձեր սենյակը, բայց չլինի թե հանկարծ
Արարքներիս մասին մեկը որևէ բան իմանա,
Ուստի թողեք, որ մարդպետը Ձեր հանգստի շուտ գնա:

654. Հենց Հանգցնեմ սպասյակի ձեռքի լամպը իմ ձեռքով,
Դա կլինի նշան, որ ես սենյակում եմ արդեն քո,
Իսկ Հետո ես անկողնուդ մեջ թե ողջ մնամ, անվնաս,
Կստիպեմ, որ Բրունհիլդին դու այս գիշեր տիրանաս»:
655. «Միայն տես, որ, – արքան ասաց, – չդիպչես դու պատվին իր,
Մնացածը՝ ինչ ուզում ես, այնպես արա, Ջիգֆրիդ,
Արա, ինչ որ մտածում ես, նույնիսկ կյանքը նրա առ,
Նա հրեջ է, ասում եմ քեզ, սատանա է Հոգեհառ»:
656. «Ես դա կանեմ, – ասպետն ասաց, – դու կմնաս ինձնից գոհ,
Եվ չեմ դիպչի նրա պատվին: Ջնաշխարհիկ քույրը քո
Ամենաթանկն է ինձ Համար: Նա՛ կլինի իմը լոկ»:
Ուրախացավ այդ խոսքերից Գունտեր արքան լիաթոք:
657. Թնդում էին ամբողջ օրը մրցախաղերն այլազան,
Մինչ երեկոն վրա Հասավ, լուռ խաղաղվեց ամեն բան,
Եվ քանի որ արդեն պիտի ճաշկերույթի նստեին,
Արքունական մեծ դահլիճը կյանքով լցվեց վերստին:
658. Հենց գավիթը դատարկվեց աղմուկներից քիչ առ քիչ,
Թագուհիներն ուղղվեցին դեպ արքունի մեծ դահլիճ,
Քայլում էին նրանց կողքից եպիսկոպոս երկու սուրբ,
Դահլիճ մտավ նրանց Հետքից ասպետների մի մեծ խումբ:
659. Իր թագուհու կողքին նստեց Գունտեր արքան խնդասիրտ,
Ջի խոսքերից Ջիգֆրիդի Հույս էր առել ճշմարիտ,
Դանդաղ էին նրա Համար անցնում ժամերը սակայն,
Բրունհիլդից միտքը նրա չէր հեռանում մի վայրկյան:
660. Գունտեր արքան մի կերպ նստեց մինչ ճաշն Հասավ ավարտին,
Մինչև չէքնաղ Բրունհիլդին ուղեկցեցին Հանգստի,
Քրիմհիլդը նույնպես Հոգնած ննջարանը իր գնաց:
Քայլում էին նրանց կողքին ի՛նչ Հերոսներ փառապանծ:
661. Եվ նստեցին Ջիգֆրիդն ու Քրիմհիլդը իրար քով,
Նայում էին սիրով իրար և արբենում գգվանքով,
Եվ սեղմում էր ճերմակ ձեռքով դշխոն ձեռքն իր Հերոսի,
Երբ աչքերն իր կորցրին նրան պատկերի պես երազի:

662. Ծխի նման Ձիգֆրիդը հանկարծ ցնդեց, դարձավ հով,
Եվ հարցրեց Քրիմհիլդը նաժիշտներին իր՝ ահով.
«Ու՞ր կորավ իմ թագավորը, Ձիգֆրիդին չտեսա՞ք,
Ո՞վ փախցրեց իմ ձեռքերից, ու՞ր է, ասեք, իմ փեսան»:
663. Հետո ձայնը վախից կտրեց: Իսկ ասպետը ելավ դուրս,
Տեսավ անթիվ սպասյակներ և ձեռքներին մի-մի լույս,
Եվ սկսեց մեկ-մեկ մարել լապտերները նա իսկույն,
Արդ հասկացավ Գուլտեր արքան՝ Ձիգֆրիդն է սենյակում:
664. Թե ինչ պիտի ասպետն աներ՝ արքան գիտեր ապահով,
Եվ պատվիրեց, որ Հեռանան սպասյակները փուլթով,
Հետո արքան հոգածորեն փակեց դռներն իր պինդ-պինդ,
Եվ դռների դեմը բերեց, դրեց երկու ծանր լինգ:
665. Ապա արագ լույսն հանգրեց, որ վառվում էր սնարին,
Իսկ Ձիգֆրիդն արդեն մտավ Բրունհիլդի անկողին,
Եվ սկսվեց խաղը նրանց, որ կռիվ էր իսկական,
Նրանց նայում՝ մեկ խնդում էր, մեկ՝ արտասվում գոռ արքան:
666. Երբ ասպետը Բրունհիլդին ավելի շատ մոտ գնաց,
Սա չարացած ասաց կրկին. «Գուլտեր արքա, հանգիստ կաց,
Քեզ կկախեմ, ինչպես երեկ, թե փորձ անես: Մտնենք քուն»:
Բայց այդ գիշեր շատ չարչարեց Ձիգֆրիդը թագուհուն:
667. Համբ դարձավ Ձիգֆրիդը, որ չխոսի ակամա,
Իսկ Գուլտերը լավ լսում էր, լուկ տեսնել չէր կարող նա,
Որ անպատիվ քայլ չի անում Նիդեռլանդցին՝ Հանց ասպետ,
Եվ որ նրանք զբաղված չեն սիրախաղով անպարկեշտ:
668. Ձիգֆրիդը ներկայացավ արքայի տեղ բուրգունդցի,
Եվ ձգվելով՝ ուժով գրկեց Բրունհիլդին գեղեցիկ,
Բայց անկողնուց շարտեց դուրս Բրունհիլդը ասպետին,
Որ գլուխը վնասելով՝ ծանր թմփաց հատակին:
669. Ձիգֆրիդը սակայն կրկին ոտքի ելավ Հապշտայ,
Կրկին փորձեց Բրունհիլդին ընկճել ուժով, բռնությամբ,
Սրտի խորքում Ձիգֆրիդը ահ էր ապրում հուսահատ,
Ձի կնոջից ոչ մի ասպետ դեռ չէր նեղվել այդքան շատ:

670. Տեսնելով, որ թագավորը շարունակում է խաղն իր, Բրունհիլդը թռավ, կանգնեց ու բղավեց կատաղի.
«Հանդգնեցիք Դուք պատուել իմ շապիկը մետաքսյա,
Դրա համար արժե, որ Դուք կրկին պատիժ ստանաք»:
671. Եվ ձեռքերով Բրունհիլդը գրկեց մարմինն ասպետի,
Որ երեկվա նման նորից իր գոտիով կապկպի,
Քանզի կրկին ցանկացել էր Բրունհիլդին մեկնել ձեռք,
Բայց հատկապես կատաղել էր շապիկ համար թանկարժեք:
672. Ի՞նչ կարող էր կանգնել նրա զորության դեմ ահռելի,
Բրունհիլդը ցույց էր տալիս, որ ուժեղ է ավելի,
Ուժով բռնեց Ջիգֆրիդին և հմտությամբ անպատում
Ամուր սեղմեց նրան պատի և սնդուկի արանքում:
673. «Ավաղ, — խորհեց ասպետը քաջ, — կորցրի կյանքս ու Հոգիս,
Այս մոլեգին կնոջ համար տիկնայք պիտի հիշեն ինձ
Մի մեծամիտ քմծիծաղով՝ հրամցնելով եղածն այս,
Ասպետներին, տղամարդկանց՝ ընդունելու իբրև դաս»:
674. Տագնապում էր արքան, նրա բախտի համար ապրում ցավ,
Հետո հանկարծ Ջիգֆրիդը ամաչեց ու զայրացավ,
Եվ մեծագույն լարմամբ՝ կրկին դիմադրել սկսեց,
Որոշելով ամեն գնով քաջ կնոջը ընկճել:
675. Թագավորին այս ամենը երկար թվաց բավական,
Բրունհիլդը Ջիգֆրիդի ձեռքը սեղմել էր այնքան,
Քիչ էր մնում քաջ ասպետի ձեռքից ցայտեր ալ արյուն,
Սակայն քիչ անց Ջիգֆրիդը ծնկի բերեց թագուհուն:
676. Ջիգֆրիդը սանձեց նրան՝ մոռանալով վախ և ցավ,
Նիդեռլանդցու լեզվից սակայն մեկ բառ անգամ դուրս չեկավ,
Սակայն լսեց թագավորը, թե ինչպես նա օրիորդին
Մահճակալին սեղմեց և մի թույլ ճիչ մարեց կողորդին:
677. Բրունհիլդը ձեռքը մեկնեց գոտուն, ընկած կողքին հենց,
Որ ասպետին կապի, սակայն քաջը այնպես պինդ նեղեց,
Որ թագուհու ոսկորները ճարճատեցին: Հսկային
Գոռոզամիտ Բրունհիլդը հնազանդվեց որպես կին:

678. Եվ խնդրեց նա Գուևտերին. «Ազնիվ արքա, խնայիր, Մեղավոր եմ ես քո առաջ, ինչ արել եմ՝ ինձ ներիր, ես չեմ մերժի էլ քո սերը, ամուսին ես արդարև, Ճանաչում եմ ես քո ուժը: Կնոջ Հետ ես դու արդեն»:
679. Զիգֆրիդը մի կողմ քաշվեց, պառկած թողած թագուհուն, Մի պահ թվաց, թե ասպետը զգեստներն է իր Հանում, Բայց նա Հանեց գեղեցկուհու մատից ոսկե մատանին, Լավ կլիներ, որ Աստված դա թույլ չտար ասպետին:
680. Եվ բացի այդ Զիգֆրիդը վերցրեց գոտին օրիորդի, Չարածճի արարք էր դա, թե ուրիշ բան, ով գիտի, նա այն տվեց կնոջը իր, որից եկավ մեծ աղետ, Իսկ Գուևտերն ու Բրունհիլդը մահիճ մտան իրար Հետ:
681. Ճանաչեցին իրար սիրով, գզվանքներով սրտամոտ, Եվ թույլ տվեց դա թագուհին՝ մոռացած սաստ ու ամոթ, Եվ կախարդանքն անցավ նրա, ու գունատվեց թագուհին՝ Կորցնելով գորությունը և ուժը իր ամեհի:
682. Այժմ արդեն բոլոր կանանց նա նման էր, Հավասար, Եվ ծածկում էր իր մարմինը Հանդերձներով գեղազարդ, Եվ նա սիրեց թագավորին, գորովանքով իր թովիչ, Ու տրվելով իր արքային՝ մեկեն կորցրեց ամեն ինչ:
683. Բրունհիլդը ամբողջ գիշեր օրինավոր իբրև կին, Մինչ բացվելը արշալույսի՝ գրկի մեջ էր արքայի, Զիգֆրիդն էլ իր թիկնոցով անտես դարձած՝ ելավ դուրս, Գնաց գեպի Քրիմհիլդի ննջարանը սուսուփուս:
684. Բայց Հարցերին Քրիմհիլդի նա չտվեց պատասխան, Երկար լռեց՝ պահած խորունկ իր գաղտնիքը սրբազան, Եվ կնոջն իր շատ ուշ տվեց գողոններն իր երկու թանկ, Երբ արքան էր Նիդեռլանդի և կրում էր ոսկե թագ:
685. Առավոտյան ուրախ սրտով աչքը բացեց այր-արքան, Եվ նրա Հետ ուրախացավ արքունիքը ամենայն, Ինչպես նաև բոլոր նրանք, որ Հյուր էին արքային, Անկեղծորեն ուզում էին բարօրություն, ուժ գահին:

686. Հարսանիքը տեեց ամբողջ տասներկու օր և ավել,
Գիշեր ու զօր ավարտ չկար խնջույքներին խելահեղ,
Յնծոււմ էին բոլորն այնտեղ՝ տրված անկեղծ խնդության,
Չէր խնայոււմ թագավորը դրա համար ոչ մի բան:
687. Եվ պատվերով թագավորի իշխաններին բուրգունդցի
Բաժանեցին շատ զգեստներ և ոսկիներ տվեցին,
Իսկ Հյուրերին ընծայեցին անթիվ արծաթ և նժույգ:
Եվ տոււն դարձան Բուրգունդիայից նրանք Հարուստ և առույգ:
688. Զիգֆրիդը՝ նիդեւլանդցի թագավորը վեհանձն,
Իր աննման ասպետներով նույնպես բաշխեց շատ ընծա,
Ինչ որ բերել էին նրանք և հասցրել Հռենոս,
Թամբ ու սանձով ձիեր, ոսկի՝ առատությամբ մշտաՀոս:
689. Հեյ, բոլորն էլ տերեր դարձան ընծաների մեծամեծ,
Սակայն ժամն էր, որ Հյուրերը ետ դառնային Հողն իրենց,
Նրանք նման ճոխ հարսանիք կյանքում տեսած չկային:
Եվ ավարտվեց այդ մեծ տոնը ըստ ցանկության արքայի:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Թե ինչպես Զիգֆրիդը կնոջ հետ վերադարձավ Հայրենիք

690. Եվ Զիգմունդի որդին բարի սովորույթով ասպետի
Իր քաջածին զինվորներին ասաց՝ ելնենք մենք ոտքի,
Մեր ձիերը թամբենք, քանզի ժամն է զնանք մեր երկիր,
Այս խոսքերից խնդաց ինքն էլ՝ չնաշխարհիկ տիկիհնն իր:
691. Եվ ասաց նա Զիգֆրիդին. «Ժամ մի դնիր մեկնելուս,
Լավ կլինի, որ չչտապենք, ճամփա ընկնենք փոքր-ինչ ուշ,
Եղբայրներս իմ բաժինը պետք է ինձ տան երկրից այս»:
Բայց ասպետի համար անչափ տհաճ էր, ինչ կինն ասաց:
692. Երեք եղբայր արքաները Զիգֆրիդի մոտ եկան
Եվ ասացին. «Լավ իմացիր, ով Զիգֆրիդ, բարեկամ,
Մենք պատրաստ ենք ազնվորեն ծառայել քեզ, քո երկրին»:
Եվ զգացվեց ասպետը Հույժ այս խոսքերից սրտագին:

693. Ասաց կրտսեր Գիզելհերը. «Քեզ Հայտնում ենք, իմանաս, Որ մեր երկրից, ամրոցներից քեզ էլ պիտի Հանենք մաս, Ինչպես նաև այն ամենից, ինչ որ ունենք՝ գանձ ու կայք, Մեր քույրը իր մասը ունի, պիտի նրան բաժին տանք»:
694. Եվ Ջիզմունդի որդին ասաց եղբայրներին սրտացավ,
Երբ որ լսեց նրանց խոսքը և մտքերը Հասկացավ.
«Աստված պաշի ձեր երկիրը՝ ավանդված ձեր Հայրերից,
Եվ պահպանի մարդկանց նրա, որ լինեն ձեզ կարեկից:
695. Քրիմհիլդի ինչին է պետք բաժինքը, որ տալիս եք,
Նա գնում է Հարուստ երկիր, Թագուհի է դառնում սեզ.
Եվ իր կյանքում Հոգս ու կարիք չի զգա ոչ մի անգամ,
Իսկ ես եղել, կմնամ ձեզ Հավատարիմ բարեկամ»:
696. Քրիմհիլդը միջամտեց. «Ես կալվածքներ չեմ ուզում,
Բայց կվերցնեմ ես բուրգունդցի ռազմիկներ դուրսագլուխ,
Ձէ՞ որ ուզած արքունիքում կզոհանան նրանցից,
Դեմ չեմ, եթե եղբայրներս ինձ քաջեր տան բուրգունդցի»:
697. Գերնոտն ասաց. «Միրելիդ իմ, ինչ որ կուզես, քոն է, տար,
Շատերը կան, որ կուզենան քեզ Հետ ընկնել ճանապարհ,
Երեք Հազար ասպետներից Հազարը թող գա քեզ Հետ,
Դա կլինի թիկնազորդ»։ Քրիմհիլդը այդուհետ
698. Հարց ուղղեց Հագեն, Օրտվայն ասպետներին իմաստուն՝
Ձե՞ն ուզենա նրանք իր Հետ մեկնեն երկիրն ամուսնու:
Բայց Հագենը, խիստ զայրացած, պատասխանեց Թագուհուն.
«Մեզ ոչ մեկին Գուևտեր արքան իրավասու չէ տալու: .
699. Նիդեռլանդում Ձեզ ծառայող միշտ կլինի անպակաս,
Տրոնյեցի ասպետների պարտքն է պահել Հողը այս,
Բուրգունդական արքաներին մեր Հայրերն են ծառայել,
Մենք էլ, անշուշտ, կծառայենք ինչպես որ մեզ է վայել»:
700. Եվ մնացին: Մեկնողները ճամփով էին զբաղված,
Եվ Հավաքեց Քրիմհիլդը շքախմբի իր մարդկանց,
Երեսունեկերկու օրիորդ և Հինգ Հարյուր քաջասպետ,
Էքեվարտը՝ կոմսը նույնպես, ճամփա ելավ նրանց Հետ:

701. Եվ Հրաժեշտ տվին նրանց ասպետները և տիկնայք,
Օրիորդները պալատական, ծառաները սպասյակ,
Համբուրեցին բաժանվելիս նրանք սրտանց բոլորին
Եվ թողեցին ուրախ սրտով շին ոստանը Գուևտերի:
702. Հարազատներն ուղեկցեցին, դեռ Վորմսից էլ անցան դեն,
Պատվիրեցին նրանց համար գիշերակաց պատրաստեն,
Որ չհոգնեն ճանապարհին, երբ ուզենան՝ տան դադար,
Ապա Ջիզմունդ արքայի կողմ ուղարկեցին լրատար:
703. Եվ լուրն առավ Ջիզմունդ արքան, նաև Ջիզլինգ թագուհին,
Որ գալիս է իրենց որդին՝ պերճ դստեր հետ Ութեի,
Հռենոսի գեղեցկուհու՝ Քրիմհիլդի հետ քնքուչ:
Ձէին լսել նրանք երբեք լուր՝ ավելի սրտահույզ:
704. «Երջանիկ եմ, – Ջիզմունդն ասաց, – որ տեսա իմ օրում այս,
Ազնվազարմ Քրիմհիլդին՝ մեզ թագուհի նորահարս,
Դա պատիվ է մեզ բոլորիս, մեծ պատիվ է երկրին մեր,
Ուստի որդիս արժանի է, որ իմ գահին դառնա տեր»:
705. Եվ նվիրեց Մայր թագուհին բանբերներին թավիչ ալ,
Ընծա տվեց ոսկի, արծաթ և հանդերձներ ոսկեծալ,
Ուրախացավ թագուհին հույժ բարի լուրով իր լսած,
Մեծ խնամքով պատրաստվելու՝ պատվիրեց նա իր մարդկանց:
706. Երբ իմացավ Մայր թագուհին, թե ովքեր են որդու հետ,
Պատվիրեց, որ ողջ պալատը կարգի բերվի շուտ ևեթ,
Կահավորվի պատշաճ կահույք, ուր որ նստի նոր արքան,
Եվ պատրաստվեն ճոխ ընծաներ մարդկանց համար, որ պիտ գան:
707. Ինձ հայտնի չէ, թե մի այլ տեղ, կամ մի երկրում որևէ
Պատահե՞լ է, որ ընդունեն հյուրերին ճոխ առավել,
Մայր թագուհին ինքը գնաց Քրիմհիլդին ընդառաջ՝
Իր տիկնանց ու ասպետների շքեղաշուք խուճբն առած:
708. Մայր թագուհին անցավ սիրով մի ողջ օրվա ճանապարհ,
Գնում էին շքախմբով, մեծ էր խինդը հանդիպման,
Երբ վերջապես հանդիպեցին, վերադարձան մեկտեղ ետ,
Եկան, հասան ճոխ ամրոցին, որ կոչվում էր Քսանտեն:

709. Չափ կա՞ր արդյոք ուրախության Քսանտենի ամրոցում,
Մայր Թագուհին և Հայր արքան բերկրում էին ու ցնծում,
Համբուրեցին Քրիմհիլդին, Ջիգֆրիդին կարոտով,
Եվ մաղթեցին բարի գալուստ թանկ Հյուրերին լի սրտով:
710. Պատվիրեցին, որ բոլորը գան պայատի մեծ դահլիճ,
Նախ ձիերից ցած բերեցին օրիորդներին անձկալի,
Ասպետները շտապեցին ծառայելու ջանադիր
Գեղեցկուհի տիկնանց, նաև օրիորդներին դեռատի:
711. Թեև ճոխ էր Հարսանիքը Հռենոսի փեերին,
Բայց ճոխ էին նվերները այստեղ Վորմսից պվելի,
Եվ Ջիգմունդի Հեքիաթային ընծաների Համեմատ
Ընծաները բուրգունդական Համեստ էին շատ և շատ:
712. Եվ նստեցին նրանք այդպես իրենց տեսքով փառահեղ,
Հյուրերը և տանտերերը՝ արդ ու զարդի մեջ շքեղ,
Մարգարիտներ ու ակնեղեն որքան ասես այնտեղ կար,
Մայր Թագուհին այս Հանդեսին պատրաստվել էր շատ երկար:
713. Ապա ելավ Ջիգմունդ արքան, Հայտնեց մարդկանց նա ի լուր.
«Իմաց տվեք Ջիգֆրիդի զարմիկներին ամենուր,
Որ այսուհետ երկրիս թագը իմ որդին է կրելու»:
Եվ այս լուրը սիրով լսվեց Նիդեռլանդիս մեծ երկրում:
714. Նա իր որդուն Հանձնեց այսպես թագ, երկիր ու իրավունք,
Այդ օրվանից Ջիգֆրիդը արքա կարգվեց մեծաշուք,
Իսկական տեր եղավ երկրի և դատավոր մարդկային,
Քրիմհիլդի քաջ ամուսնուց դժգոհ մարդիկ չկային:
715. Արդարամիտ Ջիգֆրիդը տիրակալ էր իր երկրում,
Թագը գլխին, բայց քաջածին ասպետի փառք էր կրում
Եվ տասներորդ տարում ծնեց Քրիմհիլդը մի գավակ,
Որ երկրի գահի Համար և պարծանք էր, և ժառանգ:
716. Եվ կնքեցին նրան շուտով, անվանեցին Գուլնտեր՝ յուր
Քեռու պատվին, որ անունն այդ փառավորի ամենուր,
Եվ որ Հզոր ասպետ դառնա, բերի տոհմին իր պատիվ,
Ձգտում էին կրթել նրան, ոնց պատշաճ է ասպետին:

717. Այդ օրերում Քասնտենում մեռավ Ջիզլինդ թագուհին, Իշխանութունն անցավ ազնիվ Քրիմհիլդին՝ կարգով Հին՝ Վարելու ողջ գործը երկրի շնորհներով մեծագույն, Շատ սգացին նրանք, սակայն, թանկ կորուստը թագուհու:
718. Հոննոսի ասին նույնպես պատմում էին փոքր ու մեծ, Բրունհիլդը իր արքային արու զավակ մի ծնեց, Ի պատիվ իր մեծ փեսայի Գունտեր արքան խնդասիրտ, Նորածնին կնքելուց ետ սիրով կոչեց Ջիզֆրիդ:
719. Եվ պատեցին երեսային հոգածությամբ բովանդակ, Գունտեր արքան ինքն էր ընտրում որդու համար դաստիարակ, Նա սնվում էր խիզախությամբ, ասպետ դարձավ օրեր անց, Էհ, որքան շատ ազգականներ կորցրեց նա փառապանծ:
720. Ասքերը Հին տարիների, որ հիշում ենք մինչ այսօր, Պատմում են քաջ ասպետների կյանքի մասին հեռավոր, Որ ապրել են այդ օրերում երկրի մեջ Ջիզմունդի նրանց նման եղավ նաև Ջիզֆրիդի քաջ որդին:
721. Ջիզֆրիդը՝ ասպետը քաջ, Նիբելունգի տերն էր արդ, Եվ նրանից Հարուստ չկար, չկար Հզոր մեկ այլ մարդ, Եվ քանի որ լավ որդի էր, մեծացրեց հողը յուր, Ուղեկից էր փառքը նրան թե երկրի մեջ, թե այլուր:
722. Ամենամեծ ոսկու գանձը, որ տեսել են աշխարհում, Նա էր տիրում՝ Ջիզֆրիդը, շնորհներով անպատում, Լեռան խորքում ահեղ ուժով նա տիրացավ այդ գանձին, Հաղթելով շատ հերոսների, որ իր առաջ կանգնեցին:
723. Եվ նրանն էր փառքը Հիմա: Ձլիներ գանձն էլ թեկուզ, Ամենաքաջ ասպետն էր նա, չկար ոչ մի տարակույս, Լավագույնն էր նա նրանցից, ովքեր նժույզ են թամբում, Եվ ամեն տեղ նրա սրի Հզոր փառքն էր զրնգում:

ԴԻՊՎԱԾ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Թե ինչպես Գուևտերը Ձիգֆրիդին կանչեց խնջուքի

724. Բայց Գուևտերի կնոջ սիրտը տանջում էր մի մութ կասկած.
«Այդ ինչու էր Քրիմհիլդը այդքան գոռոզ, սնապարծ,
Ձէ որ իրենց հպատակն է այլը նրա մեծանուն,
Բայց մեզ ինչու այսքան տարի ծառայութիւնն էի անում»:
725. Դա էր նրա սրտի խորքում, բայց չէր խոսում այդ մասին,
Ձայրանում էր, որ պահում են նրանք իրենց մեկուսի,
Ձեն ճանաչում հարգն արքայի, մոռացել են հարկ ու տուրք,
Եվ ուզում էր պարզել, թե ինչ գաղտնիք էր դա, հանելուկ:
726. Եվ փորձում էր իմացնել խոսքով շինծու, սրտամտ,
Թե կուզենար նորից տեսնել Քրիմհիլդին իրենց մոտ,
Երբ այդ մասին ասաց մի օր արքային՝ իր ամուսնուն,
Լսեց արքան խոսքերը այս տհաճութիւնով մի թաքուն:
727. Եվ Գուևտերը կնոջն ասաց. «Ինչպես տեսնե՞ք մենք նրան,
Անհնար է նրա գալը, անչափ երկար է ճամփան,
Ձեմ հանդգնում կանչել, քանզի նեղութիւնն է, չարչարանք»:
Բայց թագուհին կտրեց նրան՝ պատասխանով խորամանկ.
728. «Որքան էլ որ հարուստ լինի հպատակը, — ասաց նա, —
Իր արքային ծառայելը չպիտի նա մոռանա»:
Այս խոսքերը լսելուն պես թագավորը կեղծ ժպտաց,
Ձիգֆրիդը ծառա՝ իրեն՝ ծաղիկը այդ ասպետաց:
729. Բրունհիլդը ասաց նրան. «Իմ թագավոր և ասպետ,
Կատարիր դու իմ խնդրանքը. Ձիգֆրիդին տիկնոջ հետ
Հրավիրիր, թող Վորմս գան, նրանց վաղուց չենք տեսել,
Ես ավելին չեմ թախանձում՝ իմ խնդրանքը լոկ այս է:
730. Երբ հիշում եմ Քրիմհիլդին, ափսոսում եմ չափազանց,
Վարմունք ուներ նա բարեկիրթ ու շնորհներ գերազանց,
Մտերմացանք որքան իրար, երբ դարձա ես կինը քո,
Վայելում էր նա էլ սրտանց Ձիգֆրիդի սերը գոհ»:

731. Նա խնդրեց այնքան, մինչև տեղի տվեց մեծ արքան.
«Ավելի լավ հյուրեր երբեք չենք ունենա մենք հարկավ:
Ճշմարիտ եմ ասում: Հիմա սուրհանդակներ կճամփեմ,
երկուսին էլ շուտով մեզ մոտ՝ Հռենոս հյուր կկանչեմ»:
732. Բրունհիլդը ուրախացավ. «Բայց ասա ինձ, իմ Գունտեր,
Թե արդյոք ու՞մ, նաև ե՞րբ ես ուղարկելու Քսանտեն,
Ե՞րբ կլինեն արդյոք մեզ մոտ հյուրերը մեր պատվարժան,
Ում որ պիտի ճամփես՝ դու ինձ տեղյակ պահիր անպայման»:
733. «Անտարակույս, — խոսեց արքան և ասաց իր թագուհուն, —
Հենց այսօր էլ ճամփելու եմ դեսպաններին երեսուն»:
Ապա կանչեց նրանց պալատ, որ պատվեր տա, հրահանգ:
Եվ թագուհին բաշխեց նրանց ընտիր-ընտիր հանդերձանք:
734. Ապա ասաց Գունտեր արքան. «Ով ասպետներ դուրաքայլ,
Այն, ինչ հիմա ես կասեմ ձեզ, կհաղորդեք ինչպես կա
Զիգֆրիդին՝ թագավորին և քրոջս՝ թագուհուն,
Իրենցից թանկ, ասեք, ոչ ոք մենք չուենեք այս աշխարհում:
735. Խնդրեք սիրով, որ երկուսն էլ Հռենոս գան անկասկած,
Ես և չքնաղ իմ տիրուհին սպասում ենք արդ նրանց,
Թող գան մինչև արևադարձ: Նրանք այստեղ նորից նոր
Կգտնեն մեր սերը անանց ու պատիվներ փառավոր:
736. Մեծապատիվ ողջույն տվեք նաև Զիգմունդ արքային,
Եվ հաղորդեք, որ մենք նրանց չենք մոռացել տակավին,
Քրոջս հայտնեք, որ կատարի այն, ինչ եղբայրն է ուզում,
Եվ ասեք, որ աստ բոլորին մեծ խնջույք է սպասում»:
737. Բրունհիլդը, Մայր թագուհին, բոլոր տիկնայք միասին
Հեռու երկիր ողջույնն իրենց ու կարոտը ճամփեցին
Ասպետներին, նաև տիկնանց: Դեսպանները ապա ժիր
Ճամփա ընկան, Հենց որ տվեց հրամանը արքան իր:
738. Հանդերձներով շքեղաշուք, նժույզներով հատընտիր
Ճամփա ընկան դեսպանները օտարոտի մի երկիր՝
Արտորելով ձիերն անվերջ, քանզի երկար էր ճամփան,
Ուղեկցում էր դեսպաններին ասպետաց խումբ պահապան:

739. Արշավելով երեք շաբաթ՝ Հասան օտար մի եզերք,
Նորվեգական երկիրն էր դա, նիբելունգյան բերդում սեզ
Գտան նրանք քաջ արքային՝ Ջիգֆրիդին Հարազատ,
Հոգնած էին դեսպանների նժույգները անչափ շատ:
740. Եվ չուշացան ծառաները՝ անմիջապես լուր տանել,
Որ անծանոթ ասպետներ են իրենց ամբողջ ժամանել,
Եվ կրում են իրենց Հագին բուրգունդական զգեստներ:
Մահճից մեկեն թուով կանգնեց Բրիմհիլդը անհամբեր:
741. Նաժիշտներից մեկը նրա պատուհանին մոտ գնաց,
Եվ լուր տվեց, որ գավիթում ազնիվ Գերեն է կանգնած՝
Բուրգունդական հեռու երկրից եկած իբրև սուրհանդակ,
Ու թպրտաց սիրտը ուժգին Բրիմհիլդի կրծքի տակ:
742. Ջիգֆրիդին թեքվեց ասաց. «Վեր կաց, տեր իմ թագավոր,
Տես, թե ով է մեր գավիթում կանգնած տեսքով փառավոր,
Գերեն է դա, նրան անչուշտ այստեղ Գունտերն է ճամփել»:
Եվ քաջագուն ասպետը թե. «Գերեն բարով է եկել»:
743. Սպասյակներն Հավաքվեցին եկվորների շուրջը լուր,
Ողջունեցին բարի խոսքով ու ջերմությամբ անսովոր,
Նրանց գալով ուրախ էին թե դրանիկ և թե տեր,
Ուրախ էր և սրտի խորքում Ջիգմունդ արքան Հյուրասեր:
744. Թանկ Հյուրերին պալատ տարան մեծարանքով մի պատշաճ
Եվ Հոգացին նժույգների մասին նրանց Հոգնատանջ,
Ուղեկցեցին ապա այնտեղ, ուր ոսկեզարդ գահույթին
Ջիգֆրիդն էր նստած՝ կողքին իր արմաղան թագուհին:
745. Թագավորը և թագուհին գահույթից վեր բարձրացան
Մարկգրաֆին ու իր մարդկանց ընդունեցին պատվարժան,
Բուրգունդական երկրի Հանդեպ մեծարանքով Հավաստի,
Եվ ի պատիվ մարկգրաֆի՝ խնդրեցին, որ նստի:
746. «Թեև ճամփից Հոգնել ենք Հույժ, — ասաց այդ ժամ քաջ Գերեն,
Բայց չենք նստի, մինչև չասենք, թե ինչ լուր ենք մենք բերել,
Հեռու երկրից բուրգունդական և ձեզ անչափ Հարազատ
Գունտերից և թագուհուց, որ բարեբախտ են Հիմա շատ:

747. Եվ Ութից՝ Մայր թագուհուց, բարեպատիվ, բարեսեր,
 Եղբայրներից Ձեր՝ Գերնոտից, Գիզելհերից էն կրտսեր,
 Եվ բուրգուկուդից իշխաններից: Ուղարկեցին նրանք մեզ,
 Որ հասցնենք ձեզ բոլորիդ խնդակցությունն իրենց մեծ»:
748. «Աստված նրանց միշտ պահպան, — Ձիգֆրիդն ասաց քաջանուն, —
 Ես սիրում եմ զարմիկներին ու միշտ նրանց վստահում,
 Նույնը նաև Քրիմհիլդը: Հիմա ասեք ճշմարիտ,
 Ողջ-առողջ են նրանք այնտեղ՝ արքաները բարեմիտ:
749. Այն օրվանից, երբ թողեցինք արքաներին մեր եղբայր,
 Եղե՞լ է, որ թշնամիներ նեղեն նրանց նենգաբար,
 Ես պատրաստ եմ այսօր էլ Հենց հասնել նրանց օգնության,
 Եվ ստիպել թշնամյաց չար, որ վճարեն անչափ թանկ»:
750. Եվ մարկգրաֆ Գերեն ասաց՝ խոնարհվելով արքային.
 «Տեր իմ, նրանք քաջառողջ են և տեր իրենց մեծ երկրին,
 Կանչում են Ձեզ՝ թագավորիդ, մեծ խնջուքի փառահեղ,
 Սրտատրոփ ու անհամբեր սպասում են Ձեզ այնտեղ:
751. Խնդրում են՝ Ձեզ Հետ մեկնի և թագուհին աննման,
 Երբ որ անցնի ձմեռը այս և օրերը ջերմանան,
 Արևդարձին կսպասեն Ձեզ արքաները Ձեր եղբայր»:
 Ձիգֆրիդը մտահոգվեց. «Անհնար է դա, դժվար»:
752. Գերեն նրան պատասխանեց՝ խոսքի մեջ սեր ու գորով.
 «Մայր թագուհին, եղբայրները սպասում են կարոտով,
 Մի մերժեք զալ, թեև ճամփան անչափ երկար է, տաղտուկ,
 Տրտնջում են նրանք անվերջ, որ Հեռու եք ապրում Դուք:
753. Թագուհին էլ՝ Բրունհիլդը, իր տիկնանց Հետ ազնվասուն,
 Անչափ ուրախ կլինի, երբ Ձեզ ընդունի Վորմսում,
 Ձի նրանք էլ սպասում են Ձեզ կարոտով անսահման»:
 Այս խոսքերը Քրիմհիլդի սրտին անչափ դուր եկան:
754. Եվ պատվերով Ձիգֆրիդի դեսպանները նստեցին,
 Քրիմհիլդի զարմիկներին ընտիր գինի բերեցին,
 Ձիգմունդ արքան նաև եկավ և Հյուրերին տեսնելով՝
 Ուրախացած ձայնեց նրանց՝ Հին ծանոթի Հրճվանքով:

755. «Բարի գալուստ, բուրգունդցիներ, քաջ ասպետներ Գունտերի, Այն օրվանից, ինչ իմ որդին՝ Ջիգֆրիդը քաջարի, Քրիմհիլդի ամուսինն է, չենք հանդիպել մեկմեկու, Ջարմիկ մարդկանց չի պատշաճում օտար մնալ իրարու»:
756. Առույգացան դեսպանները Ջիգմունդի այս խոսքերից, Անցավ նրանց Հոգնությունը բառերից ջերմ, կարեկից, Սեղան գցվեց, և բոլորը կերուխումի նստեցին, Եվ շողում էր նրանց սեղանն առատությամբ առանձին:
757. Ինը լրիվ օր բուրգունդցիք տանտերերին Հյուր եղան, Բայց ի վերջո հավաքվելով՝ Ջիգֆրիդի մոտ եկան, Հայտնեցին, որ մեկնել է պետք, բավ է որքան մնացին, Ջիգֆրիդը իր մոտ կանչեց իր նիբելունգ քաջերին:
758. Ու կամեցավ խորհուրդ առնել Հրավերի առիթով:
«Գունտերը՝ իմ բարեկամը, դեսպանների բերանով,
Կանչում է ինձ մեծ խնջույքի՝ գորովանքով անսահման:
Ինքս էլ դեմ չեմ, սակայն ճամփան շատ երկար է, Հոգեհան»:
759. Կանչում է և Քրիմհիլդին. «Բայց, եղբայրներ, ասեք ինձ՝
Մեր թագուհին չի՞ ընկճվի երկար ճամփի հոգսերից,
Վեճ էլ չկա կամ պատերազմ, որի համար սուր առած՝
Կտրեինք այդ երկար ճամփան՝ հարվածելու թշնամյաց»:
760. «Թե հաճո է խնջույքը Ձեզ, — ասպետները ասացին, —
Մեկնեք բարով, արքա, սակայն անսացեք մեր խորհրդին՝
Վերցրեք Ձեզ հետ Հազար ասպետ, Հազար վահան ոսկեզարդ,
Դրանով Ձեր հարզը Վորմսում կբարձրանա շատ և շատ»:
761. Ապա խոսեց ծեր Ջիգմունդը՝ Ջիգֆրիդի հայր արքան.
«Խնջույքի եք եթե գնում՝ ինձ էլ տարեք անպայման,
էհ, միասին կարճենք երկար ճանապարհն այս միգամած,
Իմ քաջարի ասպետներից կվերցնեմ հարյուր մարդ»:
762. «Սիրելի հայր, — որդին ասաց, — ուրախ եմ, որ Հյուրընկալ
Արքադ՝ սրտանց որոշել ես մեզ հետ հեռու Վորմս գալ,
Տասներկու օրից հետո ճամփա կընկնենք: Պատրաստ լիք»:
Մեկնողներին բաժանեցին հանդերձանք ու նվերներ:

763. Երբ քաջարի Ջիզֆրիդը վճռեց մեկնել Հռենոս,
Բարի խոսքով ճանապարհեց դեսպաններին քաղցրախոս,
Եվ պատվիրեց, որ Հաղորդեն իր բարեկամ Գուևտերին,
Թե ուրախ են Հրավերով և կլինեն խնջույքին:
764. Ջիզֆրիդն ու Քրիմհիլդը, ինչպես լսել ենք Հաստատ,
Ընծա տվին դեսպաններին այնպես շուռլուռ ու առատ,
Որ տանելու Համար տասնյակ գրաստների բարձեցին,
Ձէ՞ որ Հարուստ թագավոր էր Ջիզֆրիդը քաջածին:
765. Իր ասպետաց պետքի մասին Ջիզֆրիդն ինքը Հոգ տարավ,
Իսկ Ջիզմուևդն էլ իր ասպետաց: Էքեվարտը մարկգրաֆ
Տիկնանց մասին Հոգաց: Ընտիր զգեստները թանկագին,
Որ կային ողջ երկրում Հարուստ, նրանց Համար բերվեցին:
766. Ճամփի Համար ասպետների, օրիորդների ու տիկնանց
Պատրաստեցին թամբեր ընտիր և վահաններ գերազանց,
Ձեռք բերեցին ինչ որ պետք էր, քանզի արքան ոսկեզավ
Ընտիրներից ընտիրներին չբախմբի մեջ առավ:
767. Դեսպանները վաղվաղակի ճամփա ընկան ժամ առաջ,
Երբ տեղ Հասավ երկար ճամփից մարկգրաֆը՝ Գերեն քաջ,
Եվ քաջընթաց նրա մարդիկ ու ցած իջան ձիերից,
Ընդունեցին նրանց ջերմ ու ողջույններով սրտակից:
768. Կրտսեր, տարեց՝ Հարցերի մեջ առան ասպետ Գերենի,
Բայց ասպետը կտրուկ խոսքով պատասխանեց բոլորին.
«Ձեզ ամեն ինչ արքան կասի, երբ կպատմենք մենք նրան»:
Ապա դահլիճ մտավ, որտեղ սպասում էր իր արքան:
769. Ելավ արքան թագուհու հետ իր գահույթից շուտափուլթ,
Շնորհակալ եղավ նրան, որ ետ եկավ այդպես շուտ
Ու Հարցրեց իր դեսպանին արքան՝ սրտով գոհունակ.
«Ջիզֆրիդը ո՞նց էր: Այնտեղ գտա՞ք գորով ու Հարգանք»:
770. Եվ քաջ Գերեն պատասխանեց. «Շիկնել էին բերկրանքից
Ջիզֆրիդը և քույրը Ձեր: Նրանք երբեք ոչ մեկից
Ձէին լսել ուրախալի ու բերկրալի լուր այդքան:
Այդպես ասաց Ջիզֆրիդը: Նույնը կրկնեց Հայր արքան»:

771. Եվ հարցրեց մարկգրաֆին Բրունհիլդը խորագետ.
«Իսկ գալի՞ս է Քրիմհիլդը: Ինչպիսի՞ն էր նա, ասպետ,
Նախկինի պես գեղեցի՞կ էր, թե վաղածամ թառամած»:
Դրան Գերեն պատասխանեց. «Նա գալիս է անկասկած»:
772. Ֆրաու Ութեն դեսպաններին հրավիրեց իր սենյակ,
Ձի ուզում էր տեղեկանալ կարոտանքով բովանդակ
Դատեր մասին՝ Քրիմհիլդի. առո՞ղջ է նա, թե՞ տկար:
Եվ իմացավ, որ առողջ է ու ընկել է ճանապարհ:
773. Եվ պատմեցին դեսպանները ընծաներից անհամար,
Որ տվել էր Ձիգֆրիդը՝ ոսկի հանդերձ ու գոհար,
Եվ հանձնելով դրանք երեք արքաներին՝ ասացին,
Թե որքան են շուայլ ու շեն Ձիգֆրիդն ու թագուհին:
774. «Մի մեծ բան չէ, — Հագենն ասաց, — շուայլությունը նրանց,
Եթե անգամ անմահ լինի նիդեռլանդցին սրտաբաց՝
Ընծայելով չի սպառի նիրբուենգյան գանձն անգին:
Երանի թե օրից մի օր Բուրգունդիա գար այդ ոսկին»:
775. Ուրախ էր ողջ արքունիքը, ու բերկրանքով անպատոււմ
Առավոտից մինչ երեկո եռուզեռ էր ամրոցում,
Ոտքի վրա էին մարդիկ՝ սպասյակից մինչ արքա,
Հոգում էին ընդունելու թանկ հյուրերին պատվական:
776. Քաջ Հունուդը և Ձինդուդը՝ գործին գիտակ ու սովոր,
Կորցրեցին այս օրերում հանգստություն ու անդորր,
Դահլիճն էին կարգի բերում կամ պատրաստում ընծաներ,
Եվ Օրտվինն էր օգնում նրանց: Արքան ամենքից գոհ էր:
777. Խոհարարը՝ Ռումուլտը, իր մարդկանց հետ անդադար
Պատրաստում էր գավաթ, ափսե ու կաթսաներ անհամար,
Հեյ, ինչքան գործ կար անելու մեծ խնջույքի համար դեռ,
Հարկ էր արդեն թարմ, համադամ ուտելիքներ պատրաստել:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Թե ինչպես Ձիգֆրիդը կնոջ հետ եկավ խնջույքի

748. Հիմա թողենք բուրգունդներին իրենց հոգսի հետ մնան,
Եվ պատմենք, թե հեռու երկրից Քրիմհիլդը անմասն
Շքախմբով, նժույգներով ինչպես մեկնեց հանդեսի:
Հեյ, էդպիսի պերճանք երբեք աշխարհը էլ չի տեսնի:
749. Ճամփի համար պատրաստեցին անթիվ արկղեր հատընտիր,
Եվ քաջարի Ձիգֆրիդը ճամփա ընկավ խմբով իր,
Նրա հետ էր և թագուհին՝ Քրիմհիլդը իր լուսե,
Սակայն, ավաղ, նրանց համար դառնաղետ էր ճամփան, սև:
750. Եվ թողեցին նրանք տանը իրենց որդուն դեռատի,
Այդպես նրանք վճռեցին, կամ նշանն էր դա բախտի,
Եվ չարաղետ էդ խնջույքից նրան մնաց վիշտ անբավ,
Ձի ոչ մորը, ոչ էլ հորը նա այլևս չտեսավ:
751. Մեկնեց նաև Ձիգմունդ արքան՝ նիդեռլանդցին քաջազուն,
Թե իմանար նա նախապես՝ ինչ է իրենց սպասում,
Ոչ ճանապարհ կընկներ ինքը, ոչ էլ հարսին ու որդուն
Կուղարկեր այդ չար խնջույքին ու չէր տեսնի դառնություն:
752. Արդ, բանբերներ ուղարկեցին, որ նախապես լուր տանեն,
Ապա մի խումբ բուրգունդական պերճազգեստ ասպետներ,
Ելան նրանց ընդառաջ՝ հին սովորության քաջընտել:
Արքան ինքն էլ պատրաստվում էր նրանց արդեն ընդունել:
753. Ելավ, եկավ թագուհու մոտ՝ դատիկոնը կանացի,
Ասաց նրան գորովանքով, հոգածությամբ առանձին.
«Մեր քրոջը մենք կընդունենք, ինչպես նա մեզ ընդունեց»:
«Անհոգ մնա, իմ թագավոր», — Բրունհիլդը խոսք տվեց:
754. Գունտերն ասաց. «Առավոտյան նրանք այստեղ կլինեն,
Ուստի պետք է հիմիկվանից աճապարեք Դուք արդեն,
Որ ընդառաջ դնանք նրանց և ընդունենք սիրալիք,
Ամենայնով չյուրերն են մեր Ձիգֆրիդն ու տիկինն իր»:

755. Եվ պատվիրեց Բրուենհիլդը օրիորդներին ու տիկնանց՝
Մնդուկներին հանեն իրենց հանդերձները գերազանց,
Որ ընդունեն թանկ հյուրերին պարտուպատշաճ՝ ինչպես միշտ,
Ու մեծ սիրով գործի անցան սպասուհի ու նաժիշտ:
756. Արքայի մոտ շտապեցին իշխանները բուրգունդցի,
Ապա եկավ Բրուենհիլդը շքախմբով իր ընտիր,
Պատրաստ էին նրանք իրենց արդուզարդով լիովին,
Եվ ընդառաջ ելան ճեպով ազնվազարմ հյուրերին:
757. Ինչ ճոխությամբ ընդունեցին բուրգունդցիները նրանց,
Եվ թվում էր բոլորին, թե Բրուենհիլդին նորահարս
Ավելի ճոխ չէր ընդունել Քրիմհիլդը նախկինում,
Չէր տեսնվել նման պերճանք ոչ ներկայում, ոչ հնում:
758. Ապա իր քաջ ասպետներով Ջիգֆրիդը ժամանեց,
Շրջապատված հերոսներով, իշխաններով մեծամեծ
Եվ խմբերով իր մարտական՝ նժույգներին բազմած սեգ,
Եվ աղմուկ էր շուրջբոլորը, նաև փոշի անեզերք:
759. Երբ Գունտերը Ջիգֆրիդին տեսավ բազմած նժույգին
Եվ Ջիգմունդին տեսավ ապա, բացականչեց սրտագին.
«Բարի գալուստ, թանկագիններ, բազմականներ հարազատ,
Երջանիկ ենք ձեզ տեսնելով, սրտանց ուրախ ենք, հպարտ»:
790. «Աստված լինի Ձեզ պահապան, — Ջիգմունդն ասաց ալևոր, —
Քանի որ իմ Ջիգֆրիդը Ձեր փեսան է, մերձավոր,
Ուստի ազնիվ ասպետներիդ ինքս էլ տեսնել կամեցա»:
Պատասխանեց քաջ Գունտերը. «Ձեք սխալվել, ով արքա»:
791. Ինչպես հարկն է ընդունեցին Ջիգֆրիդին քաջարի,
Թշնամիներ նա դեռ չուներ: Սերն էր տեսնում բոլորի,
Իսկ Գիզելհերն ու Գերնոտը եղան այնքան ուշադիր,
Որ ասպետը զգա իրեն զվարթաշատ, անձանձիր:
792. Ելան իրար դեմ հանդիման դշխոսները աննման,
Դատարկվեցին թամբեր անթիվ, և ասպետներ մոտ եկան,
Որ ձիերից ցած իջնելիս դշխոսներին օգնեին,
Քանզի տիկնանց ծառայելը հաճո պարտք էր ամենքին:

793. Երբ մոտեցան ապա իրար թագուհիները երկու
Ու հարգալիր, վայելչաբար համբուրեցին մեկմեկու,
Արքաների աչքին անչափ ախորժ էր դա, դուրեկան:
Ասպետաց մեջ նոր ծանոթներ գտան տիկնայք աննման:
794. Ու դեպ իրար առաջացան շքախմբերը տիկնանց,
Ըստ պատշաճի խոնարհվեցին, ձեռք մեկնեցին սրտաբաց,
Ողջունեցին նրանք իրար, համբուրվեցին սրտագին,
Դա տեսնելով՝ արքաների ասպետները ցնծացին:
795. Ապա երկար չսպասելով՝ նրանք քաղաք շարժվեցին
Ու մինչ ամրոց կմտնեին, Գունտեր արքան բարեծին
Ի պատիվ իր թանկ Հյուրերի պատվեր տվեց անհապաղ,
Որ գումարվի տիկնանց առաջ աշտեներով մրցախաղ:
796. Ապա Հագեն Տրոնյեցին Օրտվինի Հետ քիչ անց
Հսկողության տակ վերցրին մրցախաղը ասպետաց,
Հլու էին նրանց ձայնին ասպետները, Հնազանդ,
Թանկ Հյուրերին ծառայելու պատրաստ էին նրանք արդ:
797. Դարպասների մոտ ամրոցի զրնգացին վահաններ,
Փակ էր անգամ արքաների ճանապարհը դեպի ներս,
Զարկվում էին իրար ուժգին կուռ ասպարներ ու նիզակ,
Եվ տաք կռվում ժամերն անցան ակնթարթի պես արագ:
798. Ուղղվեցին Հետո պայատ զվարթերես ու ժպտուն,
Եվ թամբերի ծածկոցները՝ նրբամետաքս զարդարուն,
Ոսկեերիզ ու ոսկեկար, կախվել էին մինչ գետին,
Եվ Գունտերի սպասյակներն առաջ եկան վերստին:
799. Որ ուղեկցեն եկվորներին տաղավարներ Հանգստի:
Ու չէր կտրում ոչ մի վայրկյան Բրունհիլդը Հայացքն իր
Քրիմհիլդից, որ շողում էր գեղեցկությամբ աննման,
Զարդերի մեջ ոսկիների՝ թագուհու պես իսկական:
800. Եվ քաղաքում ամենուրեք ցնծություն էր խելահեղ,
Զայն էր լսվում Հյուրամեծար խնջույքների ամեն տեղ,
Ապա խոսքով թագավորի Դանկվարտը զորական
Թանկ Հյուրերի Համար գտավ կացարաններ պատվարժան:

801. Հացի էին կանչում նրանց ամենուրեք ժպտադեմ,
Ու ոչ մի տեղ նրանց հանդեպ չէին եղել այդպես ջերմ,
Նրանց համար կար, պատրաստ էր ամենայն ինչ լիուլի,
Ձի Գունտերը որքան հարուստ, նույնքան գթոտ էր, բարի:
802. Ծառայում էր իր հյուրերին անկեղծորեն, սրտաբաց
Ու թանկագին հյուրերի հետ նա սեղան էր նստում բաց,
Պահանջում էր Ձիգֆրիդից՝ հին օրերի պես ճանաչ,
Նստել իրար դեմ հանդիման՝ ինչպես իրենց էր պատշաճ:
803. Ձիգֆրիդի հետ նստում էին հազար երկու հարյուր քաջ,
Պատում էին Բրունհիլդիին մթին խոհեր ու կասկած,
Որ չգիտի ինքն ամեն ինչ՝ ճո՞րտ է, արդյոք, նա, թե տեր:
Ձիգֆրիդի հանդեպ սակայն նա թշնամանք դեռ չուներ:
804. Երբ Գունտերը երեկոյան սեղան նստեց խնջույքի,
Շատ հանդերձներ թրջվեցին անբավ գինուց, խմիչքից,
Հագիվ էին պարպում նրանք գավաթները իրենց խոր,
Երբ լիուլի լցվում էին կարմիր գինով նորից նոր:
805. Եվ ինչպես միշտ պատահում է խնջույքներում պալատի,
Տանտերերը պատվիրեցին տիկնանց տանել հանգստի,
Սպասում էր նրանց ընտիր, հարմարավետ անկողին,
Եվ հոգատար ձեռքով արքան չմոռացավ ոչ մեկին:
806. Ու երբ անցավ գիշերը այդ, ու ցերեկը ժամանեց,
Սկսեցին տիկնայք բացել սնդուկները իրենց մեծ,
Շողշողացին նրանց ձեռքին ակնեղեն ու զարդեր ալ,
Ամենքն էին ուզում իրենց ողջ պերճանքով երևալ:
807. Մինչ դուրս կգար թագավորը պատարագի վաղորդյան,
Ասպետական պալատի մեջ կրկին հնչեց զենքի ձայն,
Այնտեղ մտան քաջ ասպետներ՝ իրենց ուժը ցույց տալու
Եվ Գունտերի արքայական բարձր շնորհն առնելու:
808. Եվ հնչեցին փողեր հանկարծ, որոտումով ահագին,
Մեծդաներն ու շեփորները վեր հանեցին ամենքին,
Ջայնը նրանց բարձր էր այնքան, որ լսվում էր ամենուր,
Եվ շտապով ձի թամբեցին հերոսները ամրակուռ:

809. Սկսվեցին զինախաղեր ասպետական, տաքարյուն,
Այստեղ էին քաջեր անթիվ՝ Համբավավոր, մեծանուն,
Ջահեղների կուրծքը անչափ հպարտությամբ էր շնչում,
Երբ դահլիճում ավազների զենքի շառաչն էր հնչում:
810. Ու երբ բարձր օթյակներին տիկիները մոտեցան,
Օրիորդներն իսկ չքնադատես, երբ քաջերով հիացան,
Անթիվ այրեր տեսան նրանք մրցամարտում գերազանց,
Շրջան մտավ արքան ինքն էլ՝ խմբի հետ իր ասպետաց:
811. Խաղին տրված՝ չզգացին էլ, թե ժամերը ոնց անցան,
Բայց երբ հնչեց եկեղեցու զանգը բարձր, բազմաձայն,
Տիկնանց Համար և օրիորդաց նժույզներ մոտ բերեցին,
Որ գեղանի դշխոները եկեղեցի գնային:
812. Եկեղեցու առաջ նրանց վար բերեցին թամբերից,
Բրուևհիլը Հյուրերի հետ դեռ բարի էր, կարեկից,
Եվ թագազարդ գլուխներով նրանք մտան Մայր տաճար,
Բայց չքացավ սերը շուտով ու ծայր առավ ոխը չար:
813. Ժամերգությունն ավարտվեց, ու վերստին ճոխ խնջույքներ,
Պատրաստ էին նրանց Համար սեղանները ծանրաբեռ,
Այդպես անցան օրերը, բայց ուրախության, երգի հետ
Վորմսի վրա տասնմեկերորդ օրը բացվեց չարադետ:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍԵՉՈՐՍԵՐՈՐԴ

Թե ինչպես թագուհիները վեճի բռնվեցին

814. Ու եղավ, որ մի երեկո ասպարեզի մեջ մտան
Զիամարտիկ գլուցազուներ՝ զինախաղի ու մրցման,
Նայում էին նրանց խաղին, իբրև ուրախ մի ժամանց,
Բազմաքանակ խումբն աչալուրջ տղամարդկանց ու կանանց:
815. Նստած էին իրար կողքի դշխոները ազնվատեսք,
Նրանց մտքում իրենց երկու արքա-այրերն էին սեզ,
Քրիմհիլը ասաց. «Այրն իմ այնքան քաջ է, Համարձակ,
Թե կամենա՝ կիշխի նաև այս երկրին բովանդակ»:

816. Բրունհիլդը պատասխանեց. «Պարապ խոսքեր են, չնչին, եթե միայն Դուք լինեիք այս աշխարհում ազնվածին, Ապա անշուշտ այս երկիրը Ձեզ կլինեք Հպատակ, Բայց քանի կա իմ Գունտերը, անհնար է դա, կատակ»:
817. Քրիմհիլդը շարունակեց. «Դու Հասակը նրա տես, Նայիր, ոնց է կանգնած բոլոր ասպետաց մեջ՝ քաջի պես, Լիալուսին լինի կարծես աստղերի մեջ բյուրավոր, Եվ իզուր չէ, որ ես այսքան երջանիկ եմ, բախտավոր»:
818. Բայց առարկեց Բրունհիլդը. «Զիզֆրիդը անթերի Որքան էլ որ գեղեցիկ է, բայց եղբորդ՝ Գունտերին Պետք է բոլոր ասպետներից բարձր դասել, Քրիմհիլդ, Զի նա բոլոր արքաներից առավել է ճշմարիտ»:
819. Բայց Համառ էր Քրիմհիլդը. «Ամուսինն իմ Հաղթական Բարձր է այնքան, որ իզուր չեմ փառաբանում ես նրան, Եվ Հաճախ է նա ցույց տվել, որ Հերոս է քաջածին, Հավատա ինձ, որ ասպետն իմ Հավասար է Գունտերին»:
820. «Զէի ուզում վիրավորել քեզ, Քրիմհիլդ, բայց լսիր, Իմ խոսքերը, ինչ ասում եմ, անհիմն չեն ու պատիր, Դա իմացա, երբ առաջին անգամ տեսա ես նրանց, Երբ եկել էր քաջ Գունտերը ինձ մոտ իբրև նշանած:
821. Ու քանի որ մրցամարտում ինձ Հաղթեց իմ այրն ընտիր, Զիզֆրիդը ասաց՝ ինքը Հպատակն է Գունտերի, Ուստի ճիշտ եմ վարվում՝ նրան Համարելով Հպատակ»:
Բացականչեց Քրիմհիլդը. «Անհնար է դա, կատակ»:
822. Դուրս է գալիս՝ եղբայրներս մեծատոհմիկ, մեծատուն, Կնության են տվել ինձ ճորտ ու Հպատակ մի մարդու՝ Աղաչում եմ քեզ, Բրունհիլդ, մոռացիր, ինչ ասացիր, Եվ մի ասա խոսքեր, որ ինձ անպատիվ են, անհարիր»:
823. «Ձեմ դադարի կրկնել դա, — Բրունհիլդը խոսեց տաք, — Ինչու՞ պետք է Հրաժարվենք մենք ասպետից Հպատակ: Շարունակի թող ծառայել տեր արքային իր և ինձ»:
Երբ դա լսեց Քրիմհիլդը՝ կարմիր կտրեց զայրույթից.

824. «Բայց և այնպես ստիպված ես նրան հանգիստ դու թողնել, Քանզի ազնիվ ամուսինն իմ երբեք ծառա չի եղել: Նա Գուևտերիդ Հավասար է իբրև ասպետ առաջին, էլ չեմ ուզում լսել խոսքեր, որ տհաճ են ականջիս:
825. Եվ ինչն է հույժ զարմանալի. թե ճորտն ենք քո սեփական, Եվ դու տերն ես մեր երկուսի ու զորեղ ես դու այդքան, Ինչպե՞ս է, որ չենք վճարել տուրքը մեծիդ մինչ էսօր, Սակայն՝ լռենք, քանզի կուշտ եմ փուչ խոսքերից քո բոլոր»:
- 826 «Քեզ պահում ես շատ մեծամիտ, — Բրուևհիլդը տաքացավ, — Բայց հաճույքով կուզենայի տեսնել Վորմսում ես իրավ, Թե մեզանից մարդիկ ու՞մ են դասում բարձր և ու՞մ՝ ցած»: Ու երկուսն էլ փրփրեցին՝ չափ ու սահման մոռացած:
827. «Դեռ կտեսնենք, — բորբոք կանչեց Քրիմհիլդը ազնվաշուք, — Զիգֆրիդին դու հաշվում ես Հպատակը քո ստույգ, Սակայն այսօր արքաների, ասպետների, մարդկանց դեմ Հպատակս՝ ես քեզնից շուտ եկեղեցի կմտնեմ:
828. Եվ հենց այսօր դու կտեսնես, որ ծնված եմ ես ազատ, Որ քաջազնիվ ամուսինն իմ բարձր է քեզնից, պայազատ, Եվ այլևս քեզնից լսել վիրավորանք թույլ չեմ տա, Դու այսօր իսկ կտեսնես, որ ստրկուհիդ Հպատակ
829. Բո իսկ երկրում, աչքի առաջ բուրգունդական ասպետաց, Առաջինն է մտնում տաճար: Ու ցույց կտամ անկասկած, Որ բարձր եմ ես ավելի, քան թագ կրող շատ տիկնայք»: Ու դրանով նրանց միջև ծագեց ռյը դժնդակ:
830. «Թե ազատ ես, իրավ, — ասաց բուրգունդական թագուհին, — Այնտեղ կգաս դու քո տիկնանց շքախմբով առանձին, Ու երբ մտնենք եկեղեցի, դու մեզանից կջոկվես»: Պատասխանեց Քրիմհիլդը. «Դե ինչ, կանենք ճիշտ այդպես»:
831. «Հազնվեք, իմ աղավնյակներ, — Քրիմհիլդը կանչեց ջերմ, — Անարգանքներ նման կարգի ես լսելու սովոր չեմ, Բուրգունդներին պետք է ցույց տանք հիմա մեր ողջ փայլը խաս, Բրուևհիլդը՝ մեծամիտն այդ պետք է մեզնից առնի դաս»:

832. Եվ անսացին օրհորդները իրենց չքնաղ թագուհուն,
Զարդարվեցին Հանդերձներով, ակնեղենով լավագույն
Ու դուրս եկան Հանդիսավոր՝ եկեղեցի որ գնան,
Զարդարված էր նաև ինքը՝ Քրիմհիլդը անմման:
833. Քայլում էին նրա կողքից քառասուն և երեք կույս,
Արարական մետաքսի մեջ խումբն էր շողում ոսկելույս,
Այդպես նրանք շորորաքայլ մոտեցան Մայր տաճարին,
Այդտեղ էին և Զիգֆրիդի ասպետները քաջարի:
834. Շատ զարմացավ ժողովուրդը, չհավատաց տեսածին,
Թե ինչու են թագուհիներն այսօր քայլում առանձին,
Նրանք, ովքեր սիրով էին ու մտերիմ իրարու:
Զգիտեին՝ դեռ դրանից որքան ցավեր են գալու:
835. Եկեղեցու մոտ կանգնած էր Գուենտերի պերճ թագուհին,
Նայում էին նրա տիկնանց հայացքներով անձկազին
Ասպետները բուրգունդական, որ անդ էին ժողովված,
Եկավ նաև Քրիմհիլդը՝ նաժիշտներով բոլորած:
836. Նրա տիկնայք Հանդերձներում շողում էին Հանց աստղեր,
Կիսամրեին նրանց առաջ աղամանդյա շատ թագեր,
Զի անբավ էր գանձ ու ոսկին Քրիմհիլդի ամուսնու,
Նա առավել հարուստ էր, քան թագավորներ երեսուն:
837. Երազել է ով թագ ու գահ, խոստովաներ պիտի արդ,
Որ չէր տեսել կյանքում երբեք նման պերճանք ոսկեզարդ,
Ինչ որ տեսան Քրիմհիլդի օրհորդների վրա նոր,
Նման պատվեր չէր տա, թե նա ոխ չուեննար խորախոր:
838. Նրանք տեսան միմյանց՝ Հանդարտ մոտենալով Տաճարին.
Ու զայրացկոտ ձայնով խոսեց Բրունհիլդը՝ թագուհին,
Եվ պատվիրեց Քրիմհիլդին՝ պահել կարգը, չանցնել ներս.
«Հպատակ ես, քո թագուհուց հետո միայն կմտնես»:
839. Ապա խոսեց Քրիմհիլդը՝ նրան ցասկոտ նետելով.
«Լավ կլինեիր, որ լռեիր, սակայն անզուսպ քո լեզվով
Ստիպեցիր խոսել, ուստի մարդիկ լսեն թող ահա՝
Հպատակի հարճը երբեք արքայի կին չի դառնա»:

840. «Ով է այստեղ հարճը»,— փութով Բրունհիլդը հարց տվեց:
«Հենց դու,— ասաց Քրիմհիլդը,— դու՝ տիկինդ ազնվամեծ,
Առաջինը սիրել է քեզ Ջիգֆրիդն իմ ամուսին,
Եղբայրս չէր, որ իր ուժով դարձրել է քեզ իր կին»:
841. Թռե՞լ էր քո խելքն այդ գիշեր, չէի՞ր զգում, որ խաղում
Ու խաբում եմ, մթնով քեզ հետ հպատակն է անկողնում:
Մեղքը դու ես գործել, ուստի պետք է համր ու լուռ մնաս»:
Բրունհիլդը պայթեց. «Կասեմ ես Գունտերին ամենն այս»:
842. «Ձեմ վախենում ես դրանից: Գոռոզությամբ քո անմիտ
Ստիպեցիր, որ ես պատմեմ ողջ եղածը ճշմարիտ
Եվ իմացիր այսուհետև, թեև ցավում եմ, սակայն,
Սեր չի լինի մեր մեջ արդեն, այլ թշնամանք մշտական»:
843. Բրունհիլդը դառն արտասովեց: Ու չասելով ոչինչ էլ՝
Քրիմհիլդը տաճար մտավ շքախմբով անարգել,
Այդպես ծնվեց նրանց միջև թշնամանքն ու սիր մեծ,
Որ շատ պայծառ աչքեր մի օր արցունքներով ողողեց:
844. Եվ ինչ երկար ձգվեց այդ օր պատարագը տաճարում,
Սպասում էր Բրունհիլդը՝ հոգում տազնապ անպատում,
Սեականած էր նրա հոգին, չարով լցված էր անբավ,
Որ քաջերի համար անթիվ կյանք ու արև արժեցավ:
845. Բրունհիլդը իր տիկնանց հետ եկեղեցուց ելավ դուրս,
Եվ վճռեց մտքում. «Պետք է Քրիմհիլդը թագուհուս
Թունոտ լեզվով իր պատմածը ապացուցի անպայման,
Ջիգֆրիդն է եթե փչել, թանկ կնստի դա նրան»:
846. Քրիմհիլդն էլ Մայր տաճարի դռների մոտ երևաց,
Եվ տիրուհին նորից նրա առաջն ելավ մոլեգնած.
«Կանգ առ, դու ինձ անվանեցիր հարճ, սակայն,
Անարգանքիդ համար ծանր ապացույցներ, փաստեր կա՞ն»:
847. Քրիմհիլդը ասաց. «Ավաղ, պետք չէր կանգնել իմ ճամփին,
Ահա ոսկե այն մատանին, որ կրում եմ իմ ձեռքին,
Ջիգֆրիդն է վերցրել քեզնից, երբ եղել է քո գրկում»:
Ավելի վատ խոսք չէր լսել Բրունհիլդը իր կյանքում:

848. «Վաղուց է, ինչ կորցրել եմ այդ մատանին,— ասաց նա,— ինչ—որ մեկն այն գողացել էր ճարպկությամբ անհնար, Հիմա արդեն ես հասկացա՝ դա արել են ձեռքերն ում»:
Եվ լցվեցին իրար հանդեպ նրանք ռիսով անպատում:
849. Քրիմհիլը խեթեց սակայն. «Ամենևին գող չեմ ես, Թե քեզ թանկ է պատիվը քո՝ էլ այսուհետ չխոսես, Իսկ եթե ոչ՝ ահա գոտիդ, որ կրել ես թագուհիդ, Այն, որ հիմա ես եմ կրում, Ջիգֆրիդի կին Բրունհիլդ»:
850. Նինվիեի խաս մետաքսից էր հրաշագեղ այդ գոտին՝ Ընդելուզված ակնեղենով, որ կրում էր թագուհին, Երբ այն տեսավ Բրունհիլդը, դառն արտասովել սկսեց, Իմացան դա Գուևտեր արքան և իշխաններ մեծամեծ:
851. Բրունհիլդը լացով ասաց. «Կանչեք՝ շուտով այստեղ գան Հոենոսցի իշխանները, ես ուզում եմ իմանան, Թե ինչպես է անպատվում ինձ քույրը իրենց սևերես Եվ ամենքին ի լուր ասում, Թե Ջիգֆրիդի կինն եմ ես»:
852. Եկավ արքան ասպետներով: Տեսավ՝ լալիս է կանգնած իր տիկինը: Ամուսնական գորովանքով ասաց նա.
«Սիրելիդ իմ, թագուհիս, քեզ վիրավորե՞լ են այստեղ»:
Պատասխանեց Բրունհիլդը. «Անպատվված եմ ես արդեն»:
853. Քո քույրն այստեղ տիկնանց առաջ, մարդկանց առաջ մեզ ճանաչ, Հաստատում է, որ ես թաքուն մեղք եմ գործել քո առաջ:
Ջիգֆրիդն է առաջինը ինձ հետ պառկել անկողնում»:
Այդ լսելով՝ Գուևտեր արքան կտրեց. «Սուտ է նա խոսում»:
854. «Նա կրում է իմ այն գոտին, որ կրել եմ շատ վաղուց, Նաև ոսկե իմ մատանին: Արդ՝ լալիս եմ, ավաղում, Որ ծնվել եմ: Եթե մաքրես իմ վրայից ամոթն այս, Ամբողջ կյանքում, արքա Գուևտեր, ինձ պաշտելի կմնաս»:
855. Եվ զայրացած Գուևտեր արքան այդժամ կանչեց մարդկանց իր.
«Կանչեք ինձ մոտ Ջիգֆրիդին, գտեք շուտով պարտադիր, Թող գա և ինձ պատասխան տա խոսքի համար իր կնոջ»:
Եվ Գուևտերին ներկայացավ Ջիգֆրիդն իրեն շուքով ողջ:

856. Երբ նկատեց Ջիզֆրիդը տիկիններին արցունքով,
(Քանզի ոչինչ դեռ չգիտեր), դիմեց նրանց տազնապով.
«Տիկնայք ինչո՞ւ են վշտացել, ի՞նչ ցավ ունեն կամ կսկիծ,
եվ ինչու՞ է Հոենոսի տիրակալը կանչել ինձ»:
857. Այդժամ ասաց Գուլտեր արքան. «Ծանր է խոսել այդ մասին,
Բայց ահա թե ինչ է ասում մեր Բրունհիլդ թագուհին,
Իբրև թե դու առաջինն ես տեսել մարմինն իմ կնոջ:
Բրունհիլդին ասել է դա Քրիմհիլդը՝ կինը քո»:
858. Ասաց նրան Ջիզֆրիդը. «Եթե այդպես է ասել,
Ինձ պատասխան կտա, անշուշտ, խոսքի Համար անվայել,
Իսկ ես ամբողջ արքունիքի առաջ, ահա, երդվում եմ,
Որ կնոջս նման բաներ չեմ ասել ես, չգիտեմ»:
859. Գուլտեր արքան սակայն ասաց. «Բայց դու պետք է դա ի տես
Ասպետների առաջ բոլոր խոսք-երդումով Հաստատես,
Որ ազատվես ամբողջովին սուտ լուրերից անպատիվ»:
Եվ բուրգունդցի ասպետները օղակեցին Ջիզֆրիդին:
860. Բարձրացնելով քաջը ձեռքն իր՝ նա երդվեց նորից նոր:
Ու Գուլտերը ուրախ ասաց. «Համոզվեցի արդեն, որ
Ջիզֆրիդը մեղավոր չէ: Մեղավորն այս պատմության
Քրիմհիլդն է՝ նրա կինը և քույրը մեր միմիայն»:
861. Ջիզֆրիդը խոսքը կրկնեց. «Այս պատմության մեղքը բուն
Իմ տիկնոջն է, որ ակամա անպատվել է թագուհուն:
Հասկանում եմ չափը դրա, ազնվորեն արհեստում»:
Ու նայեցին միմյանց բուրգունդ ասպետները դյուցազուն:
862. «Կապը նրանց պետք է ձգել, — Ջիզֆրիդը ասաց քաջ, —
Որ չըզաղվեն բամբասանքով՝ իրենց դասին անպատշաճ,
Դու տիկնոջը Հասկացրու, իսկ ես իմին անպայման,
Գուլտեր արքա, այս ամենը խիստ ամոթ է ինձ Համար:
863. Այդ օրվանից դշխոնները կտրվեցին իրարից,
Բայց զգում էր Բրունհիլդը այնքան մեծ վիշտ ու կսկիծ,
Որ Գուլտերի մարդիկ նույնպես կիսում էին ցավն անբավ,
Եվ մի օր էլ Տրոնյեցին իր տիրուհու մոտ եկավ:

864. Բրունհիլդին տեսավ տխուր ու երբ պատճառն իմացավ,
Երգվեց Հագեն Տրոնյեցին՝ տոհմիկ ասպետն այդ իրավ,
Որ կպատժի նիդեռլանդցի Ջիգֆրիդին չարաչար,
Թե չպատժի, ասաց, կյանքում չի ունենա քուն, դադար:
865. Գերնոտը և Օրտվինն էլ Բրունհիլդի մոտ եկան,
Որ թաքնաբար խորհուրդ անեն վասն ասպետի կորստյան,
Եկավ նաև Գիգելհերը՝ կրտսեր որդին Ութի,
Երբ իմացավ միտքը նրանց՝ խոսեց ազնիվ սրտով իր.
866. «Լավ կլռեք արարքը ձեր, ով ասպետներ պատվարժան,
Չէ՞ որ ազնիվ Ջիգֆրիդը արժանի չէ չարության,
Եվս առավել մահվան, քանզի չի պատահել լուրջ ոչինչ,
Մի՞թե նրա կյանքը պիտի մարի տիկնանց փուչ վեճից»:
867. «Սակայն այդպես թողնենք մնա, — Հագենն ասաց դժնդակ, —
Հռենոսցի ասպետներին համար ծաղր է, նշավակ,
Որ պառկել է նիդեռլանդցին թագուհու հետ մեր ազնիվ:
Կամ նա, կամ՝ ես: Լավ է մեռնեմ, քան թե ապրեմ անպատիվ»:
868. Խոսեց ինքը՝ Գունտեր արքան. «Ջիգֆրիդից մենք միայն
Բարիքներ ենք տեսել անթիվ և օգնություն ամենայն,
Թողնենք նրան մենք կենդանի: Թշնամանքից ի՞նչ օգուտ:
Չէ՞ որ միշտ էլ զորավիգ է մեզ ձեռքը իր բարեգուլ»:
869. Ապա խոսեց բուրգունդներից Օրտվին Մետցին տաքարյուն.
«Եթե արքան իրավունք տա, ես կսպանեմ այդ մարդուն,
Ու չի փրկի նրան արդեն ասպետական ուժն անբավ»:
Եվ մատնվեց ասպետն այսպես խարդավանքին չարաղավ:
870. Բայց բուրգն էլ չարության գործն օրըստօրե մոռացան,
Լոկ Հագենն էր, որ Գունտերին համոզում էր, թե որքան
Գանձ ու երկիր իրենց կանցնի Ջիգֆրիդի մահից ետ,
Եվ լսելով նրան՝ արքան քունը կորցրեց առհավետ:
871. Անցան օրեր: Տեսան էլի ձիամարտ է ու մրցում,
Հե՛յ, ինչքան սուր ջարդվեց այդօր Մայր տաճարի գավիթում,
Նիբելունգներն էին մրցում՝ Քրիմհիլդին ի պատիվ,
Եվ բարկացան դրա վրա բուրգունդ այրեր մեծաթիվ:

872. Արքան ասաց. «Արդ՝ մոռացեք բարկությունը ձեր անբավ,
Զիգֆրիդի ողջ մնալը մեզ օգուտ է լուկ, համբավ,
Եվ բացի դա՝ նիդեռլանդցին զորավոր է անսահման,
Եթե լսեց դավի մասին, վատ կլինի մեզ համար»:
873. «Ոչ, — առարկեց Տրոնյեցին, — նա ոչինչ չի իմանա,
Ես ամեն ինչ կանեմ ծածուկ, անհոգ մնա, իմ արքա,
Նա տիրուհուս լացի համար պիտ պատժվի չարաչար,
Ես՝ Հագենս Տրոնյեցի, թշնամի եմ նրան հար»:
874. Եվ հարցրեց Թագավորը. «Ինչպե՞ս պիտի դա անես»:
Պատասխանեց Տրոնյեցին. «Իմ Թագավոր, ասեմ Ձեզ.
Մենք կկանչենք սուրհանդակներ, որ Հոենսու գան՝ մեզ մոտ,
Հայտարարեն մեզ պատերազմ և լինեն մեզ անծանոթ»:
875. Այդժամ կասեց մեր հյուրերին և ասպետաց, որ հիմի
Պատերազմ ենք մեկնում, իբր հարձակվել է թշնամին,
Նա անկասկած կգա Ձեզ հետ, բայց կսպանվի այս անգամ,
Մինչ այդ նրա գաղտնիքը ես Քրիմհելիդից կիմանամ»:
876. Հագենն այսպես իր արքային թեքեց դեպի չարություն,
Ու նյութեցին նրանք մեկտեղ՝ անլուր ոճիր ու արյուն,
Երանի թե դավից այս նենգ մի լուր հասներ ականջին,
Քանի՛-քանի քաջեր, ավաղ, դարձան զոհը այս վեճի:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍԵԼԻՆԳԵՐՈՐԴ

Թե ինչպես իմացվեց Զիգֆրիդի գաղտնիքը

877. Եվ արքունի ապարանքին չորրորդ օրվա վաղորդյան
Երեսուն և երկու հեծյալ սուրհանդակներ մոտեցան,
Եվ նրանցից Գունտեր արքան պատերազմի լուր առավ,
Լուրը կեղծ էր, սակայն որքան արցունք բերեց, որքան ցավ:
878. Արդ՝ հասնելով Թագավորի նստավայրը անարգել,
Սուրհանդակներն ասացին, որ Լյուդեգերն է ուղարկել,
Հենց նա, որին նիդեռլանդցին հաղթել էր մի ժամանակ,
Եվ ձերբակալ՝ բերել որպես բուրգունդներին հպատակ:

879. Ողջույն տվեց նրանց արքան: «Նստեք»,— ասաց բարյացակամ:
 Եվ նրանցից մեկը ասաց. «Թույլ տվեք մեզ, տեր արքա,
 Կանգնած Հայտնել լուրը, որ Ձեզ մենք բերել ենք շատ արագ,
 Իմացեք, որ բուրգունդներին սպառնում է մեծ վտանգ:
880. Լյուդեգերն ու Լյուդեգաստը զինավառ ու մարտական,
 Քանզի նրանք չեն մոռացել անարգանքը պարտության,
 Արշավում են անթիվ զորքով դեպ սահմանը Ձեր երկրի»:
 Այս լուրն իբրև թե համակեց մեծ բարկությամբ Գունտերին:
881. Ապա շինծու դեսպաններին տրվեց ուտեստ ու հանգիստ,
 Ինչ իմանար Ջիգֆրիդը, այդ ասպետը բարեսիրտ,
 Որ խաղ էր դա, և Գունտերը Հյուսում էր չար որոգայթ,
 Ավաղ, Հետո դա բոլորին պատճառեց վիշտ անփարատ:
882. Թաքուն խորհուրդ արեց արքան իր մարդկանց Հետ մտերիմ,
 Ջի Հանգիստ չէր նրան տալիս Տրոնյեցիին ռեսերիմ,
 Թեև շատերն ուզում էին վերջ տալ ռիսին ապարդյուն,
 Բայց Հագենը իր խորհրդից ետ չէր կանգնում օրնիրուն:
883. Ջիգֆրիդը բռնեց շուտով չար խորհրդի մեջ նրանց
 Եվ Հարցրեց բուրգունդներին սովորույթով սրտաբաց.
 «Այս ինչո՞ւ են այսպես տխուր թագավորն ու իր մարդիկ,
 Ինչ-որ մեկից նեղվո՞ւմ եք դուք: Կպատժվի նա սաստիկ»:
884. Գունտեր արքան պատասխանեց. «Մտահոգ եմ ես իրոք,
 Լյուդեգերն ու Լյուդեգաստը մեր դեմ հանել են մեծ զորք,
 Մոտեցել են նրանք արդեն ոստանին մեր Հայրական»:
 Եվ քաջարի Ջիգֆրիդն ասաց. «Բազուկը իմ, տեր արքա,
885. Ապավեն է եղել առմիշտ, Հիմա էլ կա աննահանջ,
 Եվ ինչպես որ այն ժամանակ՝ արդ կռվողներ ունեմ քաջ,
 Որոնց Հետ այդ երկրները պիտի վարեմ ինչպես Հանդ,
 Եթե չանեմ դա, թող այդժամ անձս լինի Ձեզ պատանդ:
886. Մնացեք ձեր ասպետներով ապարանքում ապահով,
 Եվ թույլ տվեք, որ ես գնամ պատերազմ իմ քաջերով,
 Ձեզ ցույց կտամ կրկին, որ ես անխարդախ եմ իմ սրտում,
 Եվ կտեսնեք, որ թշնամուն չի լինելու էլ ներում»:

887. «Որքան ուրախ եմ, Ջիզֆրիդ»,— պատասխանեց չար արքան,
 Կարծես իրավ այս խոսքերից ուրախ էր նա բավական,
 Եվ նրա դեմ դավաճանը կանգնեց խոնարհ, լուռ ու հեգ:
 Դրա վրա Ջիզֆրիդը ասաց. «Բնավ էլ դուք հոգ չանեք»:
888. Սկսեցին ապա շինծու արչավանքի շփոթ, եռք,
 Որ հյուրերը նիդեռլանդցի գլխի շքնկնեն ոչ մի կերպ,
 Ջիզֆրիդը ինքն էլ շուտով պատվեր տվեց անհապաղ,
 Որ պատրաստվեն պատերազմի ասպետները իր խիզախ:
889. Եվ քաջարի ասպետն ասաց. «Սիրելիդ իմ հայր, Ջիզմուլդ,
 Դուք մնացեք ապարանքում, ետ կդառնանք մենք Բուրգունդ,
 Թե Տերը տա Հալոդոլթյուն՝ Հաղթանակով փառահեղ:
 Բուրգունդական արքայի հետ չեք ձանձրանա Դուք այստեղ»:
890. Արչավանքի մեկնողները արդ պարզեցին դրոշներ,
 Սակայն բուրգունդ ասպետներից չգիտեին ո՞՞մանք դեռ,
 Ի՞նչ կուիվ են մեկնում իրենք, կյանք են տալու ո՞ւմ համար:
 Ջիզֆրիդի պես նրանք էլ խաբված էին չարաչար:
891. Գրաստներին նրանք արագ բարձեցին գեներ ու զրահ,
 Անթիվ հզոր քաջեր էին արդ ընկնելու ճանապարհ,
 Իսկ Հագենը՝ Քրիմհիլդի օթյակ եկավ հարգալից
 Եվ խնդրեց՝ տալ իրավունք հեռանալու երկրից:
892. «Երջանիկ եմ,— տիկինն ասաց,— իմ ամուսնով ես այնքան,
 Որ կարող է ամեն անգամ փուլթով հասնել օգնության
 Ջարմիկներին իմ բուրգունդցի, եղբայրներին իմ անգին,
 Ուստի ոգով բարձր եմ հիմա, որ այստեղ եմ, ձեր կողքին»:
893. Եվ Դուք Հագեն Տրոնյեցի, որ ասպետ եք պատվարժան,
 Մտածեք, թե որքան ենք մենք կապված սիրով անբաժան,
 Եվ չպետք է իմ ամուսնուն այստեղ խեթեն և ատեն,
 Նա մեղք չունի, ես ինքս եմ Բրունհիլդին նախատել:
894. «Շատ ցավում եմ դրա համար,— ասաց ազնիվ տիրուհին,—
 Ջիզֆրիդը ինքն էլ այսօր ինձ դաս տվեց մի կարգին,
 Որ թագուհուն անպատվել եմ առանց մի լուրջ պատճառի,
 Ջի դրանից շատ էր տխրել Ջիզֆրիդն իմ քաջարի»:

895. Տրոնյեցին ասաց նրան. «Ով սիրելի Քրիմհիլդ,
Այս օրերին հարկ է, որ Դուք խոնարհ լինեք ասպետիդ,
Զիգֆրիդի համար հիմա նաև ասեք անթաքույց՝
Ի՞նչ կարող եմ անել մարտում, որ պաշտպանեմ թշնամուց»:
896. Պատասխանեց ազնիվ կինը. «Ես անհոգ եմ ու վստահ,
Քանզի նրան ոչ մի հերոս ի զորու չէ վնաս տալ,
Նա զգույշ է, համբերատար, կռիվներում փորձառու,
Ամուսինն իմ թրծված է ասպետական գործերում»:
897. «Տիկին, – ասաց Տրոնյեցին, – եթե ունեք ինչ-որ ահ,
Որ կարող է Զիգֆրիդին փորձանք բերել կամ թե մահ,
Ինձ ասեք, որ կարողանամ վանել ցավը չարաղետ,
Արչավանքի ողջ ընթացքում ես կլինեմ նրա հետ»:
898. Քրիմհիլդը պատասխանեց. «Զարմիկներ ենք ես ու դու,
Անկեղծորեն վստահում եմ քեզ կյանքը իմ ամուսնու,
Որ մշտապես իմ հերոսին մարտում լինես պահապան»:
Եվ հայտնեց այն, ինչը պիտի գաղտնիք մնար հավիտյան:
899. «Զիգֆրիդն իմ, – տիկինն ասաց, – քաջ է և տեր մեծ ուժի,
Երբ անտառում, լեռան վրա, սպանել է հրեշին,
Լողացել է նրա արյամբ ամուսինն իմ դյուցազուն,
Եվ դրանից հետո նրան էլ ոչ մի զենք չի խոցում»:
900. Միևնույն է, ամեն անգամ, երբ կռիվ է նա մեկնում,
Եվ կանգնում է թշնամական տեղերի դեմ անհատնում,
Թվում է, թե կորցնելու եմ, ու նա երբեք ետ չի գա,
Ախ, ինչ ծանր է Զիգֆրիդի կյանքի վտանգը զգալ:
901. Ուստի քեզ մի գաղտնիք կասեմ՝ իբրև նրան սիրող կին,
Որը պիտի թաքուն պահես ու չհայտնես ոչ մեկին,
Այնքան շատ եմ սիրում նրան, որ ասում եմ լուրը սույն,
Արդ, իմացիր, թե որտեղից նա կխոցվի մահացու»:
902. Երբ սպանված՝ դուրս է հորդել տաք արյունը գազանի,
Եվ նրա մեջ լողացել է ամուսինն իմ քաջազնիվ,
Վայր է ընկել նրա մեջքին ծփենու մի լայն տերև,
Հենց այդտեղ է նա խոցելի: Դա է հոգսս արդարև»:

903. Ասաց Հագեն Տրոնյեցին. «Իսկ դու շորին թիկունքից,
Ճիշտ այդ տեղում նշան գործիր, որ Հայտնի լինի ինձ,
Երբ որ մարտում մենք կլինենք, նա ապահով կմնաս»:
Այսպես կինը իր ամուսնուն մահվան մատնեց ակամա:
904. ՔրիմՀիլդը ասաց. «Փոքրիկ խաչ կգործեմ մետաքսե,
Մեջքին քաջիս հանդերձանքի, և ձեռքը քո, ով ասպետ,
Պետք է նրան սատար լինի, երբ որ մարտում լինեք դուք,
Եվ նա կանգնի թշնամու դեմ, վտանգների դեմ ստույգ»:
905. «Այդպես կանեմ, իմ տիրուհի»,— Հագենն ասաց նենգադավ,
ՔրիմՀիլդը կարծում էր, թե Ջիգֆրիդին լավ է դա,
Սակայն, ավաղ, դավաճանեց իր ասպետին նա անհույս,
Իսկ խորամանկ Տրոնյեցին խոնարհվեց ու ելավ դուրս:
906. Եվ Գունտերի մարդիկ հիմա շատ գոհ էին, բավական,
Ինձ թվում է, ոչ մի ասպետ չէր կատարի նման բան,
Որ կատարեց Տրոնյեցին, խայտառակեց նա իրեն՝
Իմանալով ՔրիմՀիլդից մեծ գաղտնիքը նենգորեն:
907. Ապա Հաջորդ առավոտյան հազարյակով իր անդամ,
Ուրախ սրտով Ջիգֆրիդը արչավանքի դուրս եկավ՝
Հավատացած, թե գնում է բարեկամի օրհասին,
Իսկ Հագենը նրա մեջքին խաչն էր փնտրում մետաքսի:
908. Երբ նշանը տեսավ մեջքին, երկու դեսպան ուղարկեց,
Որ գորքի դեմ իսկույն կեթ գան այսպիսի լուրով կեղծ.
Թող երկրին բուրգունդական խաղաղություն լինի միշտ,
Լյուդեգեբրը ետ է կանգնել իր մտքերից ամբարիշտ:
909. Ինչ բարկությամբ Ջիգֆրիդը վերադարձավ ետ նորեն,
Մեծ Հաճույքով նա կպատժեր Լյուդեգեբրին անօրեն,
Եվ Գունտերի մարդիկ հազիվ էին պահում ասպետին:
Ու երբ եկավ արքայի մոտ, սա գովքն արեց վերստին:
910. «Աստված լինի քեզ պահպան, ով ասպետդ թանկագին,
Ամեն անգամ, երբ վտանգ կա, Դուք կանգնում եք իմ կողքին,
Ձեր մշտական պարտապանն եմ՝ բուրգունդական գահով իմ,
Ջարմիկներից Դուք եք, իրավ, ինձ ամենից մտերիմ:

911. Դե, քանի որ կովի հոգսից հիմա ազատ ենք դառել, ես ուզում եմ հրավիրել Ձեզ Վոգեզյան անտառներ, Որսի գնանք, այնտեղ առատ եղջերու և վարազ կա»: Ենեզ Հագեհն էր այս խորհուրդը նրան տվել անկասկած:
912. Եվ Գուևտերը ասաց. «Հայտնեք ողջ հյուրերին մեր Վորմսի, Որ մեկնում ենք մենք շատ կանուխ: Ով ուզում է գալ որսի, Թող պատրաստվի արագորեն: Իսկ ովքեր, որ կմնան՝ Մառայելու տիկիներին, Թող լինի՝ ոնց կամենան»:
913. Նիդեռլանդցին ասաց Գուևտեր Թագավորին հարգալից. «Թե որսի եք մեկնում, ապա ինձ էլ դարձրեք մասնակից, Տվեք Դուք ինձ մի քաջ որսորդ և ընտիր շուն մի քանի, Մնացածը Թողեք բազկիս, Թե անտառում ինչ կանի»:
914. «Բայց ինչո՞ւ եք մեկը ուզում, — հարցրեց Գուևտերը մեկեն, — ես Ձեզ կտամ չորս որսորդ, որ այս տեղերը լավ գիտեն, Գիտեն ամեն կածան, անկյուն, հարուստ վայրերը որսի: Դու նրանց հետ չես մոլորվի և ճամբարը չես կորցնի»:
915. Եվ ասպետը իր տիրուհու՝ Քրիմհիլդի մոտ գնաց, իսկ Հագեհնը իր արքային պատմեց Թագուն, սրդողած, Թե ոնց պիտի Ձիգֆրիդի կյանքի թելը նա կտրի: Ավաղ, նման ոճի բրեք ոչ մեկը չէր կատարի:

ԴԻՊՎԱԾ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ



Թե ինչպես սպանվեց Ձիգֆրիդը

916. Եվ Գուևտերը Հագեհնի հետ՝ ասպետներն այդ պայագատ, նարդավանքով որոշեցին անտառ գնալ որսաշատ, Որ եղնիկներ որսան այնտեղ, ցուլ ու արջեր, կինձ վայրի, Ի՞նչ կա հաճո քաջաց սրտին ուրիշ մի բան ավելի:
917. Եվ նրանց հետ նաև ինքն էր՝ Ձիգֆրիդը՝ քաջ ասպետ, նրանք ընտիր ուտելիքներ վերցրեցին իրենց հետ, Մի սառնորակ աղբյուրի մոտ հանդիպեց նա իր մահին, Եվ դա արեց Բրունհիլդը՝ Բուրգունդների Թագուհին:

918. *Զիգֆրիդը գնաց գտավ իր թագուհուն սիրազեղ,
Եվ պատրաստ էր ամենայն ինչ, որ մեկնեին որսատեղ,
Ուզում էին նրանք անցնել Հոենոսի մյուս ափ:
Բայց սրտի մեջ Քրիմհիլդը զգում էր մի խոր տագնապ:*
919. *Զիգֆրիդը Համբուրգ դրեց շրթունքներին իր տիկնոջ.
«Աստված տա՝ քեզ, իմ սիրելի, կրկին տեսնեմ ողջ առողջ,
Քո գեղեցիկ տիկնանց Հետ դու զվարճացիր ուստանում,
Մինչև որ ես վերադառնամ: Արքան որսի է տանում»:*
920. *Հանկարծ կնոջ մտքով անցավ գաղտնիքը էն չար, գարհուր,
Որ հայտնել էր Հագենին, բայց դրա մասին մնաց լուռ,
Չասաց նրան: Տրտնջալով, անիծելով բախտն իր սև՝
Զիգֆրիդին արցունքներով նա ողողել սկսեց:*
921. *Ապա ասաց իր ասպետին. «Մոռացիր այս որսը դու,
Երազումս տեսա՝ իբրև երկու վայրի խոզ դաշտում
Հալածում են քեզ, իսկ Հետո ծաղիկները դարձան ալ,
Դու տեսնում ես, որ Հարկ է ինձ տագնապել ու վշտանալ:*
922. *Մի քանիսի չար խորհուրդից վախենում եմ ես Հիմա,
Ո՛վ գիտի՝ չենք վիրավորել մեկնումեկին ակամա,
Եվ նա Հիմա թաքուն մեր սև մահն է ուզում կատաղի,
Մնա, Զիգֆրիդ, խնդրում եմ քեզ արցունքներով իմ աղի»:*
923. *Զիգֆրիդը պատասխանեց. «Մի տիրիր, ես ետ կգամ,
Այստեղ մեկին, չգիտեմ, որ չլինի ինձ բարեկամ,
Բուրգունդական ասպետները սիրում են ինձ անկասկած,
Ես ինքս էլ նրանց Հանդեպ սիրառատ եմ, սրտաբաց»:*
924. *Ո՛չ, սիրելիդ իմ Զիգֆրիդ, վախենում եմ քեզ Համար,
Մեկ այլ երազ տեսա այսօր, իբրև երկու Հսկա սար,
Հարձակվեցին քեզ վրա, և կորցրեցի Հետո քեզ,
Թե գնում ես, ինձ էլ տար, որ չտառապեմ այստեղ ես»:*
925. *Եվ ասպետը գորովանքով սեզ տիկնոջը գիրկն առավ
Ու գեղանի դեմքը ծածկեց Համբուրգներով իր անբավ,
Ապա տվեց Հրաժեշտն իր և Հեռացավ նա իսկույն,
Եվ Քրիմհիլդն այդուհետև չտեսավ իր ամուսնուն:*


926. Ասպետները մտան անտառ, անցան թավուտ ու բացատ,
Ուզում էին Հանգստանալ և որս անել լիառատ,
Արքայի Հետ կային անթիվ դրանիկներ բուրդուհողջի,
Բայց Գերնոտն ու Գիզելհերը ապարանքում մնացին:
927. Հռենոսով անցկացրին ձիեր՝ բեռնած ահագին,
Տանում էին որսորդներին ուսեստեղեն ու գինի,
Զկան Հետ միս, անուշեղեն և խորտիկներ համադամ,
Որ արքունի սեղաններին առատորեն միշտ էլ կան:
928. Կիսակողզու վրա գետի, որ շատ լայն էր, գովասուն,
Ընտրեցին ճամբարն իրենց ասպետները քաջազուն,
Եվ այստեղից պիտ սկսվեր արքայական որսը մեծ:
Ապա եկավ Ջիգֆրիդը: Թագավորին լուր տրվեց:
929. Հավաքվեցին ահա բոլոր որսորդները մեծանուն,
Եվ քաջարի Ջիգֆրիդն ասաց. «Ո՞վ է Հիմա ցանկանում
Անտառ մտնել մեզ Հետ, գտնել թաքստոցներ որսաշատ,
Ո՞վ է ծանոթ կածաններին, մի՞ր է, սրաչք, ուժառատ»:
930. «Մինչև մեր որսն սկսելը, — Հագենն ասաց սրտով նենգ, —
Հավ կլինի՛ իրար գլխի չլցվենք, այլ բաժանվենք,
Ամեն մեկը թող առանձին իր որսն անի անտառում,
Այդպես հստակ կերևա, թե ով է մեզնից փորձառուն:
931. Կրածանենք որսորդներին և շները մեր միջև,
Եվ կիմանա ամեն մեկը, թե անելիքն իր ինչ է,
Ամենաշատ որսն ով անի՝ նա կստանա թանկ ընծա»:
Այդ լսելով ասպետները արագորեն հեռացան:
932. Ջիգֆրիդը ասաց. «Հիմա ինձ տվեք մի որսկան շուն,
Միայն լինի շատ հոտառու, որ գտնի որսն ու իսկույն
Կարողանա Հետապնդել, թեթև անցնել սար ու ձոր՝
Առատ ու ճոխ որս կունենանք անտարակույս մենք այսօր»:
933. Մի ծեր որսորդ, որ ծանոթ էր ամեն քարի ու թփի,
Հավ մի քերձե ընտրեց, ապա առաջնորդեց ասպետին,
Այնտեղ, ուր միշտ որսաշատ էր, և անտառն էր խլշում զով,
Հե՛յ, ինչ առատ որս արեց նա որսորդների իր խմբով:

934. Եվ բոլոր այն գազաններին, որ գտնում էր շունն ուշիմ, Տապալում էր Նիդեռլանդցին զորեղ ձեռքով նույն պաշին, Ձին վազկան էր, ոչ մի գազան նրանից չէր պրծնում, Եվ բոլորից շատ որս արեց Ջիզֆրիդը մեծանուն:
935. Հարվածի դեմ Ջիզֆրիդի չէր կանգնում ոչ մի գազան, Եվ առաջին որսը, որին նա տապալեց անվարան, Մի վիթխարի վայրի կինճ էր՝ թավուտի մեջ անմատույց, Իսկ քիչ հետո Ջիզֆրիդը սպանեց մի շեկ առյուծ:
936. Երբ որ քերծեն գտավ նրան՝ քնահարամ առյուծին, Նետահարեց ասպետն իսկույն իր աղեղով շանթածին, Եվ մինչ կընկներ նետով խոցված՝ երեք թուխք կատարեց, Հույժ գովեցին քաջի զարկը որսորդները իր տարեց:
937. Ապա խփեց նա մի բիզոն, քիչ անց՝ մի մեծ որմզդեղն, Չորս վայրի ցուլ հաղթամարմին, մի եղջերու ահադեմ, Ձին այնպես էր թուցնում նրան, որ ասպետի քաջ ձեռից Ջէր պրծնում ոչ եղջերու, ոչ թեթև վիթ, ոչ էլ ինձ:
938. Շուտով քերծեն թավուտի մեջ գտավ վայրի մի վարազ, Եվ երբ նետվեց քաջը այնտեղ՝ կայծակի պես վերահաս, Մեկ փախչում էր Ջիզֆրիդից գազանը մեծ խուճապով, Մեկ հարձակվում նրա վրա՝ կատաղությամբ ու ճեպով:
939. Եվ սպանեց նրան սրով Նիդեռլանդցին վեհատես, Ոչ մի որսորդ չէր սպանի խոլ գազանին հեշտ այդպես, Երբ վարազը անշունչ ընկավ, շանը փակի տակ առան, Եվ համբավը շուտով նրա բռնեց ամբողջ Բուրգունդիան:
940. Եվ ասացին որսորդները Ջիզֆրիդին քաջագործ.
«Աստված սիրեք, ինչ կլինի՝ մեզ էլ թողեք մի քիչ որս, Թե չէ շուտով չի մնալու այստեղ գոնե մի աղվես»:
Այս խոսքերի վրա սրտանց Ջիզֆրիդը ծիծաղեց:
941. Ամեն կողմից հնչում էին բարձր կանչեր ու գոռոց, Խառնվում էին ձայներն իրար որսորդների, անասնոց Եվ ետ գալիս արձագանքով անտառով մեկ շառահում, Որսորդներին օգնում էին քսանեկորս որսաշուն:

942. Շատ առատ էր որսը այդօր, որս չէր, սպանդ էր կարգին, Քանզի ամեն մեկն էլ կուզեր տեր լինել այն պարզեւին, Որ խոստացավ Հագենը, բայց չխոսեցին էլ որսից, երբ խարուկի մոտ երևաց կերպարանքը Հերոսի:
943. Որսն ավարտվեց արքայական, բայց ոչ լրիվ, ոչ իսպառ, Որսորդները, կամաց-կամաց ուղղվելով դեպ ճամբար, Բերում էին թանկ մորթիներ ու այնքան շատ որսի միս, Որ պալատի խոհարարը չէր սպառի մեկ ամիս:
944. Եվ արքունի փողը Հնչեց՝ ինչպես օրվան էր վայել, Դա նշան էր որսորդներին՝ արքան ուզում է ճաշել, Հնչեց ձայնը ողջ անտառում, որ կանչում էր անխտիր Բոլոր-բոլոր որսորդներին՝ ժամն է արդեն Հանգստի:
945. Զիգֆրիդի որսորդն ասաց. «Որսն Համարենք ավարտած, եղջերափողն Հնչեց ահա, մեզ են կանչում անկասկած, Սպասում են մեզ ճամբարում, գնանք քանի դեռ ուշ չէ»: Եվ այդ պահին երկրորդ անգամ եղջերափողը Հնչեց:
946. Համաձայնեց Նիդեռլանդցին. «Վերադառնում ենք ճամբար»: Զիգֆրիդի ձին գնում էր թեթև վարձով, և ապա Գալիս էին որսորդները: Դոփյուլեններից էր Հարկավ՝ Մի արջ զարթնեց, բարձր գոռաց: Զիգֆրիդը շուռ եկավ:
947. «Այ, փառահեղ ու իսկական զվարճալիք որսորդի, Հանդիպեցինք նաև արջի: Շունն արձակեք վերստին, Մենք անպայման մեզ Հետ ճամբար պետք է տանենք այս արջին, Զգուշ եղեք, որ գազանը Հանկարծ ձեռից չփախչի»:
948. Բաց թողեցին շանը նորից, բայց բրդոտը գազազել եվ ուզում էր Զիգֆրիդից փախս տալ, գլուխն ազատել, Մտավ անանց թավուտը, ուր անց չէր կենա ոչ մի ձի, եվ մտածեց՝ Թավուտ մտնել ոչ մեկն արդեն չի փորձի:
949. Բայց կանգ չառավ Զիգֆրիդը: Նա սանձերը նետեց դեն Ու վազ տալով արագորեն՝ Հասավ արջին, որն արդեն Հանգստացել, չէր սպասում, թե մեկն իրեն մոտենա, Զիգֆրիդը բռնեց նրան և կապկպեց անխնա:

950. Երախը փակ, թաթերին՝ կապ, հլու դարձած գազանին
 Զիգֆրիդը ամուր կապեց ձիու թամբից, հեծավ ձին
 Ու հետևից կապած բերեց՝ պրկած ձիու փոկ ու թամբ,
 Որ բերկրեն ընկերներն իր անօրինակ քաջությամբ:
951. Զիգֆրիդը շողում էր, երբ ճամբար մտավ զվարթուն,
 Նրա նիզակն անչափ մեծ էր, գեղարդը՝ լայն ու հատու,
 Սուրը այնքան երկար էր, որ հասնում էր մինչ խթանն իր:
 Նա կրում էր եղջերափող՝ ոսկեզօծված ու ընտիր:
952. Ես ավելի գեղեցկատես որսորդ երբեք չեմ տեսել,
 Նրա հագի զգեստները շատ թանկ էին, գույնը՝ սև,
 Պերճ գլխարկը նրա գլխի սամուրեհնուց էր կարված,
 Հապա նրա կապարճը ճոխ՝ ոսկիներով նուրբ բանված:
953. Եվ կարված էր կապարճը այդ ընձառյուծի նուրբ կաշվից,
 Որ բուրբեր միշտ ախորժալի: Իսկ աղեղը՝ լայնալիճ,
 Պատրաստել էր ինքն իր ձեռքով, լոկ նա էր ի վիճակի
 Ամրապինդ այդ լարը ձգել առանց ճիգի ու ջանքի:
954. Կուղբենուց էր պատրաստված նրա թիկնոցը շքեղ
 Եվ վերից վար զարդարված էր մորթիներով գունազեղ,
 Այն թեթև էր ու ընդարձակ, որսորդության շատ հարմար,
 Եվ եզրերը բանված էին նախշ ու զարդով ոսկեկար:
955. Նա կրում էր Բալմունդ թուրը՝ լայնաշեղք ու ակնակուռ,
 Այնքան սուր էր, որ նրա դեմ չէր դիմանում ամրակուռ
 Ոչ մի զրահ կամ սաղավարտ, կտրում էր նա մի զարկով,
 Եվ Բալմունդով Զիգֆրիդը միշտ հպարտ էր ու միշտ գոհ:
956. Ու որպեսզի նրա մասին չմոռանամ ես ոչինչ,
 Ասեմ նաև, որ կապարճը լի էր նետով սրաթուխ,
 Ծայրերը զուտ ոսկուց էին, գեղարդները՝ մեկ ափ լայն,
 Ում զարկերն դրանք, երբեք հույս չէր լինի փրկություն:
957. Այսպես մտավ ճամբար ազնիվ Զիգֆրիդը վեհաբար,
 Երբ Գունտերի մարդիկ տեսան Նիդեռլանդցուն, անհապաղ
 Զիու սանձը պահեցին և լուռ շարվեցին իր առաջ,
 Նաև տեսան՝ թամբից կապված բերում է մի հսկա արջ:

958. Երբ ասպետը ձիուց իջավ, գործը եղավ առաջին՝
Ազատելու կապանքներից թաթն ու երախը արջի,
Շնեքն հիմա սկսեցին հաչել, ուժգին վրա տալ:
Արջն ուզում էր պրծնել մի կերպ ու սլանալ դեպ անտառ:
959. Բայց աղմուկից վախենալով՝ փախավ մտավ խոհանոց,
Մառանները փախան իսկույն: Արջը, ինչպես հուր ու բոց,
Կաթսանները խփեց շրջեց, մարեց կրակն օջախի,
Հե՛յ, ինչքան լավ ուտելիքներ աղտոտեց այդ կատաղին:
960. Եվ վեր թռան ասպետները հոգնած տեղերից իրենց,
Կատաղել էր արջը արդեն, Գունտեր արքան պատվիրեց,
Որ բաց թողնե քերծեններին՝ շուրջկալելու արջին այդ:
Թե վերջանար ամեն ինչ լավ, օրն ուրախ էր ու զվարթ:
961. Բայց այլևս չսպասեցին, ահա զինված, փութալի,
Վազ տվեցին մարդիկ այնտեղ, ուր բրդոտն էր կատաղի,
Ջէին կարող խփել, քանզի շներն էին շուրջկալել,
Թնդում էին մարդկանց ձայնից շրջակայքում հանդ ու լեռ:
962. Եվ փախուստի դիմեց արջը՝ քերծեններից քշվելով,
Ասպետներից մեկը չկար՝ հասնել արջին, և դա լուկ
Զիգֆրիդն էր, որ հասնելով խոցեց զարկով քաջարի:
Քարչ տվեցին նրան կրկին խարույկի մոտ ճամբարի:
963. Ջարմանք բերեց բուրգունդներին քաջությունը այդ մարդու:
Եվ մոտեցան սեղաններին որսորդները մեծատուն,
Եվ գեղեցիկ մարգագետնում նրանց համար հաճելի
Ճոխ խրախճանք տվեց արքան՝ ուտեստներով լիուլի:
964. Ամեն ինչ կար սեղաններին՝ հոհնոսյան գինուց զատ,
Ի՞նչ խրախճանք, եթե չկա կարմիր գինին լիառատ,
Մոռացվե՞լ էր, իրոք, գինին. ոչ, դա մեկի կամքն էր պիղծ,
Եթե գինին բերված լիներ, կվանվեր չարն սկզբից:
965. Զիգֆրիդը ասաց այդ ժամ. «Ջարմանում եմ անսահման,
Մատուցում եմ մեզ ուտեստներ այսքան ընտիր, բազմազան:
Իսկ գինի՝ ոչ: Մատովակներն ու՞ր են չքվել ու կորել,
Որսորդներին լավ չեք նայում, ձեզ հետ որսի չեմ գա էլ:



ԴԻՊԿԱԾ

ՏԱՆԿԵՅԵՐՈՐԴ

974. Տրոնյեցի Հագենն ասաց. «Այո, ուզում եմ փորձել»:
 Զիգֆրիդը պատասխանեց. «Դուք սկսեք վազքը ձեր,
 Իսկ ես այստեղ խոտերի մեջ առժամ պառկած կմնամ»:
 Երբ սա լսեց, ուրախացավ Գուևտեր արքան չարակամ:
975. Ասաց նաև քաջ ասպետը. «Այն ամենը, ինչ ահա
 Ունեմ Հագիս, չեմ Հանի, թող այդպես վրաս էլ մնա,
 Վահանը իմ և նիզակը՝ որսագուլքով իմ Հանդերձ»:
 Եվ բացի այդ կապեց սուրը և կապարճը վերցրեց:
976. Բայց Գուևտերը և Հագենը Հագուստները Հանեցին,
 Եվ Հագեներին լոկ մի շապիկ իրար կողքի կանգնեցին,
 Ապա ինչպես հովազ՝ թռան մարգագետնով դեպ առաջ,
 Երբ տեղ Հասան, աղբյուրի մոտ Զիգֆրիդին տեսան քաջ:
977. Զարմանք կտրեց Գուևտեր արքան և ասպետն իր դրուժան,
 Արձակել էր քաջն իր սուրը, Հանել կապարճն աննման
 Եվ ծփենու բարձր ճյուղին Հենած նիզակն իր Հսկա,
 Սպասում էր աղբյուրի մոտ՝ մրցորդները մինչ կգան:
978. Տիրական էր նա, փառապանծ, շնորհներով բյուր լցված:
 Հագիվ էր նա աղբյուրի մոտ իր վահանը դրել ցած,
 Երբ ծարավը սկսեց տանջել, բայց դիմացավ նա այնքան,
 Որ արքայից Հետո խմի, բայց մոռացավ դա արքան:
979. Սառնորակ էր աղբյուրը շատ, ջուրը մաքուր ու զանգակ,
 Եվ կուացավ Գուևտեր արքան ջրի վրա սառնորակ,
 Խմեց, ապա վեր բարձրացավ, քաշվեց մի կողմ ու գնաց,
 Ապա թեքվեց ջրի վրա Զիգֆրիդը ծարաված:
980. Եվ պատժեց պարկեշտութունն ստորությամբ մի Հետին,
 Զար Հագենը մի կողմ տարավ վահանն ու սուրն ասպետի,
 Եվ մոտեցավ ծփենուն, ուր քաջի նիզակն էր դրված,
 Եվ նկատեց քաջի մեջքին ասեղնազործ խաչը բաց:
981. Երբ կուացավ Զիգֆրիդը սառնաղբյուրին, որ խմի,
 Նա Հարվածեց ուղիղ խաչին, որ բացվեց մեծ վերքով մի,
 Եվ Հագենի գգեստներին ցայտեց արյունն ասպետի:
 Ոչ մի ասպետ դեռ չէր գործել նման ոճիր անպատիվ:

982. Ուղիղ քաջի սիրտը խրվեց տեգն Հագենի չարակամ,
Դեռ չէր փախել նա ոչ մեկից, ինչպես փախավ այս անգամ
Անտառային բացատներով, կեսօրին այդ արյունոտ,
Մինչ Ջիգֆրիդը կհասկանար խարդավանքը մահահոտ:
983. Նա վեր ցատկեց աղբրակից՝ անակնկալ, շփոթված,
Եվ նիզակը հենց իր երկար ուղիղ մեջքին էր ցցված,
Փորձեց գտնել աղեղը լայն և կամ սուրը պողպատե,
Եթե գտներ, Հագենն անշուշտ կպատժվեր հենց այդտեղ:
984. Երբ մահացու վիրավորը չգտավ սուրն իր կողքին,
Էլ ուրիշ գենք աչքին չառավ, լուկ վահանը ահագին,
Տեսավ փախչող Հագենին և նետեց վահանն իր հակա,
Եվ սա դիպավ դավաճանին ինչպես ահեղ մի վեմ-քար:
985. Վիրավոր էր թեև քաջը, բայց հարվածեց պինդ այնպես,
Որ վահանը հզոր գարկից մեկեն եղավ երկու կես,
Եվ շաղ եկավ գետնին նրա ակնեղենը գուլյնգուլյն,
Որքան կուզեր Ջիգֆրիդը կյանքից զրկել այդ մարդուն:
986. Եվ սոսկալի այդ հարվածից Հագենն ընկավ կիրճը խոր,
Իսկ հարվածի ձայնը հասավ հեռաստանները բոլոր,
Եթե սուրը ձեռքին լիներ, Հագենից բան չէր մնա,
Անգամ մահվան շեմին կանգնած ահարկու և վեհ էր նա:
987. Գուլյնը թռավ: Եվ մահամերձ օրորվում էլ էր արդեն,
Քիչ-քիչ կորավ անդամների ուժը մարմնի գորնդեղ,
Քանզի նրա սեգ ճակատին մահը դրեց նշանն իր,
Եվ ողբացին նրան հետո անթիվ կանայք սգակիր:
988. Եվ ցած ընկավ Ջիգֆրիդը ծաղիկների մեջ հովտի,
Եվ արյունը վերքի թրջեց ծաղիկները նորատի,
Բայց մահվան մեջ նա հասցրեց նզովք կարդալ նրանց, որ
Երիտասարդ կյանքն իր առան խարդավանքով մի ստոր:
989. Եվ վիրավոր ասպետն ասաց. «Ախ վախկոտներ նենգադավ,
Արածներին համար մի՞թե այս վարձն էր, որ ինձ հասավ,
Հավատարիմ եղա, սակայն պատժվեցի կարեմով,
Դուք ամոթով խարանեցիք Հավերժաբար տոհմը ձեր:

990. Թող անիծվի նա, ով ձեռնից պիտի սերվի, գա աշխարհ,
Եվ կուղեկցի աշտուղանից ձեզ զայրույթը իմ արդար,
Կույր չարութեամբ իմ վրեժը դուք հավիտյան ստացաք,
Ով ձեզ ասպետ կոչի, նրան հազար ամոթ, անարգանք:
991. Ասպետները հավաքվեցին, տեսան նրան մահամերձ,
Եվ բոլորն էլ հույս սուկացին, լեզուն նրանց կարկամեց,
Ով սիրում էր նրան անկեղծ, հառաչում էր խոր ցավից,
Արժանի էր Զիգֆրիդը շիտակութեան, ոչ դավի:
992. Անգամ Գուլտեր թագավորն էր Զիգֆրիդին ողբ ասում:
Մահամերձը սակայն ասաց. «Դու՞ք ինչու եք արտասվում,
Ում ձեռքերը արքայական իմ արյունով են ներկված,
Կծածկե՞ն կեղծ արցունքները այս հանցանքը չլսված»:
993. Հագենն ասաց. «Արքա Գուլտեր, արցունք պետք չի Ձեզ արդեն,
Ձէ՞ որ հիմա ազատ եք Դուք և հոգսերից զերծ ամեն,
Քչերն հիմա կգտնվեն, որ դեմ կանգնեն մեր կամքին,
Հպարտ եմ, որ կատարել եմ ցանկությունը ամենքիս»:
994. «Դուք տեղ չունեք հպարտութեան, — ասաց վերջին ճիգով իր, —
Եթե ստույգ ճանաչեի ձեր գործերը դավադիր,
Կպատժեի բոլորիդ էլ, կփրկեի կյանքը իմ,
Սակայն Կհիմա Քրիմհիլդի վիշտն է տանջում իմ հոգին:
995. Բարեհոգ էր Աստված, երբ ինձ որդի ծնվեց ու ժառանգ,
Սակայն, ավաղ, մանկութեան նրան կկշտամբեն շարունակ,
Որ արնակից զարմիկները մարդասպան են չարամիտ,
Եվ եթե ուժ ունենայի, կողբայի երկուսիդ»:
996. Եվ տանջահար ձայնով դիմեց մահամերձը Գուլտերին.
«Եթե, արքա, մնացել է ձեր մեջ ինչ-որ գուրթ վերջին,
Անկեղծութեան փոքրիկ նշույլ թե պահել եք իմ հանդեպ,
Նեցուկ եղեք իմ տիկնոջը, սատար եղեք ամեն կերպ:
997. Հետը վարվեք ազնվորեն, ձեր հարազատ քույրն է նա,
Պատվիրում եմ՝ Քրիմհիլդը արքունիքում ձեր մնա:
Ոչ մի եղբայր իր քրոջը չի պատճառել վիշտ այսքան,
Իսկ իմ հայրն ու գինյվորները դեռ կպահանջեն իմ ճամփան»:

998. Ծաղիկները թրջվեցին Ջիզֆրիդի արյամբ տաք,
Բայց հերոսը մահվան հետ էր կռիվ տալիս շարունակ
Կռիվը կարճ տևեց, քանզի սուր է մահվան գերանդին,
Եվ ասպետը լռեց շուտով ու ավանդեց իր հոգին:
999. Ու երբ տեսան, որ հերոսը փակեց աչքերն հավիտյան,
Բերեցին մի ոսկի վահան ու դրեցին դին վրան,
Խորհուրդ արին՝ ինչպես անեն, որ հանցանքը Հագենի
Ինչ-որ ձևով բուրգունդների ականջն հանկարծ չընկնի:
1000. Եվ ասացին ասպետները. «Մենք ոճիր ենք կատարել,
Ուստի պետք է ասենք մի բան, որ իրարու սատարենք,
Կասենք այսպես՝ Ջիզֆրիդը որս էր անում մեն-մենակ,
Վրա տվել, սպանել են ավազակներ անքանակ»:
1001. Ասաց Հագեն Տրոնյեցին. «Ես կտանեմ դին նրա,
Իմ պետքը չէ, Քրիմհիլդը թող ամեն ինչ իմանա,
Նա ինքն է հենց վիրավորել մեր թագուհուն անսքող,
Որքան էլ որ բարձր ողբա, ոչինչ անել չի կարող»:

ԴԻՊԼԱԾ ՏԱՍՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես սպացին Ջիզֆրիդի մահը և թաղեցին նրան

1002. Սպասեցին գիշերն այնտեղ, ապա իջան գետով վար,
Ո՛վ էր տեսել՝ որսը լիներ այդքան տխուր ու մռայլ,
Արնաշաղախ վիթի վրա ձագն էր ողբում կարեվեր,
Զարկված քաջի համար ինչքան արյուն պիտի դեռ հեղվեր:
1003. Հիմա լսեք մեծ չարության մասին պատմեմ ապաքեն
Եվ վրեժի մասին ահեղ: Ժանտ խորհրդով Հագենի
Տարան պալատ Նիդեռլանդցու՝ Ջիզֆրիդի արնոտ դին
Եվ իր տիկնոջ ննջարանի դռան առջև դրեցին:
1004. Նա պատվիրեց մեռածի դին դնել այնտեղ՝ դռան մոտ,
Որովհետև Քրիմհիլդը ամեն օր վաղ առավոտ
Ժամբարդության էր միշտ գնում հանց բարեպաշտ, ազնիվ կին
Ու ոչ մի օր չէր մոռանում Աստծուն պարգև իր հոգին:

1005. Արդ Հնչեցին եկեղեցու զանգերն ինչպես ամեն օր,
Եվ Ֆրաու Քրիմհիլդը ձայնեց տիկնանց իր բոլոր,
Պատվիրեց, որ ջահը վառեն և զգեստն իր պատրաստեն,
Եվ նկատեց մի սպասյակ մեռածի դին դուռն դեմ:
1006. Տեսավ նրան սպասյակը արնակոլով, շորը թաց,
Բայց չիմացավ սկզբում, որ իր տերն էր անդ ընկած,
Նա մոտ բերեց ձեռքի ջահը և զննեց ահալի,
Այդպես շուտով Քրիմհիլդին հասավ լուրը ողբալի:
1007. Երբ դուրս եկավ նա տիկնանց հետ եկեղեցի գնալու,
Սպասյակը ասաց. «Կանգնեք, ով թագուհի, քիչ հեռու,
Դուսն առաջ մի սպանված ասպետի դի է ընկած»:
Քրիմհիլդի սիրտը ծակեց սև կասկածի ցավն հանկարծ:
1008. Մինչ կպարզեր ով լինելը այդ սպանված ասպետի,
Միտը եկան Տրոնյեցու հարցերը նենգ ու մթին,
Որ իբր թե կպաշտպանի Զիգֆրիդին... Ախ, եթե
Ճիշտ լինի նա, օր ու արև չի ունենա այսուհետ:
1009. Ապա ծնկի իջավ անուժ, ոտքից գլուխ կարկամած,
Ու տապալվեց գեղեցկուհի Քրիմհիլդը գետնամած,
Օ, ինչ դառն էր Քրիմհիլդի ողբը անզոր, դառնադի,
Ճշուժ էր նա՝ ողջ պալատը թնդացնելով իր գլխին:
1010. Սպասյակներն հույս տվեցին. «Գուցե մարդ է անծանոթ»:
Անհուն վշտից Քրիմհիլդի բերանն արյուն լցվեց հորդ:
Եվ նա ասաց. «Զիգֆրիդն է՝ իմ սիրելին, անգինը,
Բրուհհիլդի չար խորհրդով սպանողն էլ չազենն է»:
1011. Կարգադրեց տանեն իրեն ասպետի մոտ սպանված,
Նուրբ ձեռքերով բարձրացրեց նրա գլուխն ու... ճչաց...
Որքան էլ որ արյան մեջ էր՝ ճանաչեց իր ամուսնուն,
Այդտեղ մեռած-ընկած էր նա՝ մեծ հերոսը դյուցազուն:
1012. Գոռաց ցավից Քրիմհիլդը, ողբը հասավ մինչ երկինք.
«Քո վահանը, վա՛յ ինձ, անգամ չի վնասվել գեթ մեկի
Սրի զարկից: Քեզ, Զիգֆրիդ, սպանել են նենգաբար,
Թե իմանամ ով է՝ մահն իր պիտի տենչամ անդադար»:

1013. Բոլոր տիկնայք, նաժիշտները ողբում էին նրա հետ, Քանզի սրտանց սիրում էին Ջիգֆրիդին քաջ սասպետ, Ողբում էին նրանք սաստիկ մահը իրենց արքայի: Այսպես հանեց Բրունհիլդի ոխն Հագենը նենգալի:
1014. Ապա ասաց կինը լալով. «Սենեկապան, շտապիր, Կանչիր այստեղ Ջիգֆրիդի բոլոր մարդկանց անխտիր, Հայտնիր նաև արքայաճայր Ջիգմունդին իմ վիշտը դու, Գա, որ ողբանք մենք միասին կորուստը մեր սիրելու»:
1015. Փութով վազեց սուրհանդակը՝ ջարդոտելով ոտ ու ծունկ, Մինչև գտավ Ջիգֆրիդի սասպետներին նիբելունգ, Վշտացրեց նա բոլորին Հայտնած գույժով իր դաժան, Բայց ոչ մեկը չէր հավատում, մինչև աչքով չտեսան:
1016. Բոթը տարան Հասցրեցին նաև ծերուկ Ջիգմունդին, Նա չէր քնել ամբողջ գիշեր, տանջվել էր իր բարձին, Ինձ թվում է՝ գուշակել էր նրա սիրտը Հայրական, Որ սիրելի իր զավակին չէր տեսնելու հավիտյան...
1017. «Արթնացեք, ով Ջիգմունդ արքա, ձեզ կանչում է թագուհին, Դժբախտություն է պատահել Ձեր աթոռին ու գահին, Մեր թագուհու սիրտն է ջարդվել, եղբք նրան կարեկից, Քանզի վիշտը անագորույն նաև ձերն է և ոչ քիչ»:
1018. Ոտի ելավ Ջիգմունդն, ասաց. «Այդ ի՞նչ վիշտ է պատել մեծ Քրիմհիլդին գեղեցկուհի, որ գուժում եք շնչահեղձ»:
Սուրհանդակը խոսեց լալով. «Էլ ի՞նչ պահեմ ես ձեզնից. Նիդեռլանդցի Ջիգֆրիդը սպանված է մահով պիղծ»:
1019. Ջիգմունդ արքան ասաց. «Թողեք կատակները անհարկի, Դրանք իրոք կատակներ են, որ հասնում են իմ ունկին, Ջիրկենս այլևս, որ չկա որդիս սիրական, Եթե այդպես լինի, պիտի ես լամ մինչև գերեզման»:
1020. «Եթե Դուք չեք հավատում իմ ասածներին, տեր արքա, Ապա անձամբ կլսեք, թե ոնց է անում ողբ-կական Քրիմհիլդն իր նաժիշտներով Ջիգֆրիդի վրա հեգ»:
Սարսափ պատեց Ջիգմունդին և կատաղություն մի ահեղ:

1021. Նա շտապեց դեպ արքունիք թիկնազորով իր հարյուր,
Եվ բոլորի ձեռքերում հաղթ սրերն էին՝ երկաթ, սուր,
Նրանք հասան դիակի մոտ, շուրջը ջալանք էր սաստիկ,
Այնտեղ էին Ջիգֆրիդի հազարյակի քաջ մարդիկ:
1022. Լսում էին նրանք կանանց ողբի ձայնը դառնազին,
Որ մոռացել էին անգամ հանդերձ հազնել մի կարգին,
Տրվել էին նրանք վշտին ամբողջովին, լիասիրտ,
Ինչեք էին կրում նրանք վշտի մեջ այդ անբասիր:
1023. Ահա եկավ Ջիգմունդ արքան, գտավ շորով հարսին իր,
Ասաց նրան. «Ավա՛ղ, ինչո՞ւ, ինչո՞ւ եկանք այս երկիր,
Այդ ի՞նչ ձեռք էր, որ տարավ իմ որդուն և քո ամուսնուն,
Իսկ մենք այնքան վստահ էինք՝ բարեկամ են մեզ Վորմսում»:
1024. «Ախ, եթե ես իմանայի, — ասաց տիկինն էն ազնիվ, —
Նա ինձանից փրկություն հուր-հավիտյան չէր տեսնի,
Մի այնպիսի մահվան նրան կդարձնեի ես բաժին,
Որ նրա ողջ ազգ ու տոհմը ինձնից դառը ողբային»:
1025. Ջիգմունդ արքան երբ որ գրկեց Ջիգֆրիդի պաղած դին,
Այդժամ նրա ընկերները այնպես բարձր ողբացին,
Որ դահլիճը, պալատը ողջ, բարձրաձայն ողբալուց
Վորմսը համայն ողողեցին սուգ-շիվանով հոգեցուկնց:
1026. Եվ չէր կարող Քրիմհիլդին մխիթարել ոչ մի մարդ,
Ու հանեցին զգեստները քաջի մարմնից մեծահաղթ.
Լվացին վեքն ու դրեցին պատգարակին նրա դին,
Այդժամ հնչեց ընկերների ողբաձայնը վերստին:
1027. Եվ ասացին Ջիգֆրիդի ասպետները երզվյալ.
«Մենք պատրաստ ենք մեր իսկ զնդով վրեժն հանել մեր արդար,
Ով գործել է ոճիրը այս, այստեղ է, այս քաղաքում»:
Ջիգֆրիդի մարդիկ իրենց ձեռքը առան զենքն իսկույն:
1028. Հազար հարյուր ընտիր ասպետ արդ կանգնել էր զինավառ,
Սպասում էր, թե ինչ կասի Ջիգմունդ արքան վշտահար,
Իսկ նա անչափ շատ էր ուզում առնել վրեժն իր որդու,
Դա կլիներ արդարացի նաև աչքում Տեր Աստծու:

1029. Սակայն նրանք չգիտեին, թե որ կովեն, բայց ո՞ւմ դեմ, Գուցե դա Հենց Գուևտերն էր կամ նրա մարդիկ, ո՞վ գիտե, Որոնց Հետ էլ Զիգֆրիդը որսի գնաց խնդրես: Բոլորից էլ ՔրիմՀիլդը սարսափում էր իսկապես:
1030. Որքան էլ որ մեծ էր վիշտը, ողբը՝ առանց սփոփանք, Նա զգում էր ասպետներին սպառնացող մեծ վտանգ Գուևտերից և իր մարդկանցից, որ կճգմեն մի առ մի: Եվ փորձեց ետ պահել նրանց սրտակցությամբ մտերմի:
1031. Դառնակսկիծ կինը ասաց. «Տեր իմ արքա, ով Զիգմունդ, Ձեր մտքինը ի՞նչ է, ասեք: Լավ չգիտեք սրանց դուռ: Գուևտեր արքան շատ ասպետներ ունի կողքին անվանի, Թե Հարձակվենք, չեմ կարծում, թե ձեզ փրկության ճար լինի»:
1032. Վահանները պարզեցին վեր նրանք մարտի ի նշան: ՔրիմՀիլդը խնդրեց նրանց՝ ասպետներին պատվարժան, Որ ետ կանգնեն մտքից իրենց ու չդառնան պատվի զոհ: Իսկ եթե ոչ՝ իր այս ողբին կավելանա ողբ մի նոր:
1033. Նա ասաց. «Տեր Զիգմունդ, պետք է Հրաժարվեք մարտելուց, Մինչև որ գա Հարմար առիթ, ես ունենամ ապացույց, Թե ով է ճիշտ սպանողը: Այդ ժամանակ իմ Հանգույն Մենք կվարվենք: Ձի խուսափի նա իր պատժից խստագույն:
1034. Հռենոսի ասին շատ կան խիզախ ռազմիկ ու ասպետ, Խորհուրդ չեմ տա ես ոչ մեկին մարտի մտնել նրանց Հետ, Մեկ զինվորի դիմաց նրանք Հանելու են երեսուն: Նրանք կառնեն պատիժն իրենց, ապավինենք Աստծուն:
1035. Ով Հերոսներ, պետք է մնաք, օգնեք ցավին դիմանալ, Երբ օրը գա՝ մեկ մարդու պես կանգնեք կողքիս անայլայլ Հողին տալու Զիգֆրիդին՝ իմ Հերոսին անձնվեր»:
Ասացին քաջ զինվորները. «Թող որ լինի կամքը Ձեր»:
1036. Ոչ ոք Հիմա չի կարող ձեզ պատմել վշտից այն անանց, Թե ինչ բարձր էր ողբաձայնը ասպետների և կանանց, Այնքան բարձր, որ բռնել էր քաղաքն ամբողջ լաց ու կոծ: Եվ շատ ազնիվ քաղաքացիք վազում էին դեպ ամրոց:

1037. Ողբում էին հյուրերի հետ նրանք էլ մահն անողոք,
Քանզի իրավ մեծ էր ցավը: Ու չէր ասի և ոչ ոք,
Թե որ մեղքի համար զրկվեց Ջիգֆրիդը իր կյանքից:
Եվ կանանց հետ լալիս էր նա, ով սիրտ ուներ և հոգի:
1038. Դարբիններին պատվիրեցին, որ դազաղը պատրաստվի
Մաքուր ոսկուց և արծաթից՝ ըստ պատշաճի և պատվի,
Չորս կողմերը պնդացրին գոտիներով պողպատե:
Եվ բոլորը ողբում էին հերոսի մահն անհեթեթ:
1039. Ահա գիշերն անցավ այդպես, արշալույսը բացվեց հուր:
Եվ թագուհու հրամանով եկեղեցի տարան լուռ
Դին նրա թանկ ամուսնու և քաջ ասպետի, որ գնաց:
Նիբելունգներն այնտեղ էին՝ աչքերի մեջ խինդն հանգած:
1040. Հնչեցրին զանգերը, երբ հերոսի դին հասավ տեղ,
Ամենուրեք լսվում էին հոգեպարար երգ-տաղեր:
Ահա եկավ նաև արքա Գունտերը իր մարդկանց հետ,
Նրանց մեջ էր և Հագենը՝ դեմքը՝ մռայլ, աչքը՝ խեթ:
1041. Գունտերն ասաց. «Սիրելի քույր, ինչ ծանր է վիշտը քո,
Եթե միայն իմանայինք այս ամենը վաղօրոք...
Ողբալու ենք մենք հավիտյան Ջիգֆրիդին մեր անգին»:
«Ինչո՞ւ պիտի ողբաք, — ասաց այրին արցունքն աչքին: —
1042. Թե դա լիներ ցավ ձեզ համար, չէր պատահի ինձ աղետ,
Մոռացել եք դուք ինձ, բայց ես պիտի տոկամ այսուհետ,
Բաժանեցիք դուք ինձանից իմ ամուսնուն պաշտելի,
Աստված վկա, ես մեռնեմ՝ կլիներ լավ ավելի»:
1043. Սկսեցին քծնել, ստել: Բայց անկոտրում էր այրին.
«Ով անմեղ է, թող դա ցույց տա մարդկանց առաջ այս պահին,
Թող մոտենա պատգարակին, կանգնի կողքը մեռյալի,
Եվ կիմանան մարդիկ այդժամ իսկությունը սոսկալի»:
1044. Աշխարհում շատ հրաշքներ են եղել ու կան այսօր էլ:
Եվ հազիվ էր մարդասպանը պատգարակին մոտեցել,
Երբ մեռյալի վերքը բացվեց ու արյունը երևաց:
Հասկացան, որ դա Հագենի ձեռքի գործն է անկասկած:

1045. Ինչպես հենց նոր խոցված տեղից, բացվեց վերքը արնածոր
 եվ ողբում էր ամբոխը ողջ անհուն վշտից, ցավից խոր:
 Գունտերն ասաց. «Ճշմարտութունն ասեմ ես ձեզ՝ իմացեք,
 Ավազակներն են սպանել, Հագենն այստեղ չունի մեղք»:
1046. «Ավազակներն, – ասաց այրին, – Հայտնի են ինձ արդեն,
 Աստված անի՝ Հարազատի ձեռքով նրանք պատժվեն:
 Գունտեր, Հագեն, մարդասպանը դուք եք և ոչ մեկը այլ...»:
 Առաջ եկան Ջիգֆրիդի ասպետները երգվյալ:
1047. Սակայն խոսեց Քրիմհիլդը. «Հավատարիմ եղեք ինձ»:
 Ապա եկան Գերնոտը և Գիգելհերը կարեկից,
 Պատգարակին տեսան պառկած վերքը սրտին մեռածին:
 Եվ այլոց հետ նրանք նույնպես իրենց ողբը ողբացին:
1048. Ողբում էին նրանք մահը Քրիմհիլդի ամուսնու:
 Ժամն էր արդեն պատարագի: Գալիս էին անհատնում
 Ամեն կողմից մարդկանց խմբեր՝ թե տղամարդ և թե կին:
 Ողբում էին նրանք էլ, որ չէին տեսել Հերոսին:
1049. Գերնոտը և Գիգելհերը մոտիկ եկան. «Քույր մեր թանկ,
 Վիշտդ խորն է, բայց առջևում քո կյանքն է դեռ բովանդակ,
 Քանի մենք կանք՝ քո կողքին ենք, որ քո ցավին դիմանաս»:
 Բայց չէր կարող ոչ ոք այրուն մխիթարել կյանքում այս:
1050. Չորեքշաբթի դարբինները դագաղն ուսած բերեցին,
 Պատգարակից վերցրեցին Ջիգֆրիդի անշունչ դին,
 Բայց տիրուհին թույլ չտվեց, որ դիակը շուտ թաղվի:
 Եվ վշտակից մարդկանց սրտում հորդեց ողբը դառնաղի:
1051. Հագրեցին հանգուցյալի զգեստները թանկարժեք,
 Հավատացեք, չկար մեկը, որ չարտասվեր սրտաբեկ,
 Եվ թագուհի Ութեն նույնպես, նաժիշտներով իր բոլոր,
 Սրտանց ողբում-կոծում էր թանկ ասպետի մահն ահավոր:
1052. Երբ լսեցին՝ եկեղեցում պատարագն է սկսվում
 Եվ դնում են դին դագաղը՝ բարձրացավ վայնասուն,
 Ամեն մեկը կուզեր նրա հոգուն զոհել ինչ-որ բան:
 Թշնամյաց մեջ անգամ ասպետն ուներ ընկեր-բարեկամ:

1053. Եվ ողբացյալ Քրիմհիլդը մերձավորաց յուր դիմեց.
«Ով ասպետիս Հանդեպ Հարգանք և նվիրում ունի մեծ,
Համարում է ինձ բարեկամ և իր սիրուն արժանի,
Ձիգֆրիդի Հոգու Համար մարդկանց թող մարկ բաժանի»:
1054. Փոքրիկներին անգամ, որոնք ոչինչ չէին Հասկանում,
Տրվում էին մեծ ընծաներ: Մինչ թաղումը խորանում
Այդ օրվա մեջ լսվեց Հարյուր ժամերգություն-պատարագ:
Շարվել էին Ձիգֆրիդի զինվորները գլխահակ:
1055. Ժամերգությունն երբ ավարտվեց, բազմությունը ելավ դուրս:
Քրիմհիլդը ասաց. «Մենակ մի թողեք դուք թագուհուս,
Ես այս գիշեր պետք է Հսկեմ ասպետիս քունն անխուով:
Նրա մահվամբ օր ու կյանքս ներկվելու է լոկ սևով:
1056. Երեք ցերեկ, երեք գիշեր պետք է Հսկեմ անդադրում՝
Մինչև ընդմիջտ աչքերիցս կկտրեն իմ սիրելուն,
Գուցե կամքն է դա Տեր Աստծո, որ ձգում է շիրիմն ինձ,
Միայն այդպես ես՝ թշվառս, կազատվեմ իմ ցավերից»:
1057. Քաղաքացիք ահա կրկին դարձան տները իրենց,
Քրիմհիլդը քահանայոց և իր մարդկանց խնդրեց,
Որ չգնան, սաղմոս երգեն Հերոսի մոտ մինչ ի լույս:
Այդպես անցավ մի մաս գիշեր և մի ցերեկ վշտահյուս:
1058. Շատ շատերը առանց Հացի, առանց ջրի մնացին:
Ով ուզում էր մի բան ուտել՝ տալիս էին առանձին
Ճոխ ուտեստներ՝ Հանուն ասպետ Ձիգֆրիդի մեծ Հոգու:
Բայց մոտ չեկան երբեք Հացին ասպետները նիբելունգ:
1059. Երեք օրերն, ինչպես արդեն ասացինք մենք, անց կացան
Պատարագով, ժամերգությամբ և ծեսերով զանազան:
Շատ շատերը այդ օրերին ստացան ճոխ ընծաներ,
Ով աղքատ էր, շուայլ ձեռքով դարձավ Հարուստ ինչքի տեր:
1060. Ով գալիս էր այդտեղ երկրի թշվառական անձերից,
Ստանում էր առատ ոսկի Ձիգֆրիդի գանձերից
Եվ գնում էր Հարստացած, ետ չէր դառնում իհարկե:
Եվ ասպետի Հոգու Համար բաշխվեցին շատ մարկեր:

1061. Հողաբաժին էր ընծայում Քրիմհիլդը ամենայն
 Բարի մարդկանց և վանքերին մաքուր սրտով, աննման:
 Աղքատների դեմ լիուլի ոսկի, արծաթ էր ցանում:
 Դրանով նա առ ասպետը իր մեծ սերն էր ցուցանում:
1062. Երրորդ օրվա առավոտյան, երբ պատարագն էր վերջին,
 Եկեղեցու բակում անթիվ բուրգունդցիներ լցվեցին,
 Նրանք անկեղծ սգում էին, սրտանց անում ողբ, կական,
 Բարեկամի նման տալիս վերջին պատիվ ու հարգանք:
1063. Պատմում էին, որ չորս օրում, որպես ընծա ու նվեր,
 Բաժանվել էր երեք հազար մարկ, գուցեև դեռ ավել,
 Շատ բան տրվեց աղքատներին հոգու համար ասպետի,
 Ավաղ, նրա փառքն ու ուժը ետ չէին գա վերստին:
1064. Երբ երգեցին, վերջացրին պատարագը այդ վերջին,
 Բազմության մեջ՝ ողբաձայնը բարձրացավ էլ ուժգին,
 Դուրս բերեցին մեռյալի դին և տարան դեպ գերեզման:
 Ում որ թանկ էր հանգուցյալը, սուգ էր անում անսահման:
1065. Բարձր ողբով ուղեկցում էր բազմությունը ասպետին
 Եվ բոլորը տխուր էին, թե տղամարդ և թե կին:
 Մինչ թաղումը նորից եղան երգ ու աղոթք հոգեթով:
 Թաղման ծեսին ներկա էին քահանաներ մեծ թվով:
1066. Մինչ մոտ կգար դժբախտ այրին գերեզմանին ամուսնու,
 Սիրտը մեկեն տակնուվրա եղավ ցավից իր անհուն,
 Նրա դեմքը իսկույն ջրով ցողեցին, որ ուշքի գա,
 Դժբախտ կնոջ տառապանքին սահման չկար, վերջ չկար:
1067. Հավանաբար հրաշք էր մեծ, որ նա տարավ վիշտը այդ,
 Նրա կողքին սգում էին ուրիշ կանայք շատ ու շատ:
 Ապա դիմեց Քրիմհիլդը ասպետներին նիբելունգ.
 «Աղաչում եմ, որ իմ վերջին խոսքն էլ անեք դուք:
1068. Թույլ տվեք ինձ նրա դեմքին նայեմ վերջին մի անգամ,
 Իմ այս ահեղ ցավերի մեջ թող որ փոքր-ինչ բերկրանամ»:
 Այնպես ցավով, տառապանքով սկսեց վիշտն իր ողբալ,
 Որ դժվար էր նրան ասել սփոփանքի գեթ մի բառ:

1069. Ահա տարան Քրիմհիլդին մեռածի մոտ վերստին,
Բարձրացրեց նա նուրբ ձեռքով չքնաղ գլուխն ասպետի,
Եվ համբուրեց իր գեղեցիկ ասպետին նա սիրահույզ,
Ձինջ աչքերը նրա ցավից արյուն էին ցողում լույս:
1070. Սրտակեղեք ողբ-շիվանով հրածելտի պահն եկավ,
Քրիմհիլդին տարան մի կողմ, ամբողջովին թույլ, տկար,
Գեղեցկուհի կինը իսպառ կորցրել էր փայլը իր,
Տեսնողները կարծում էին՝ ուր որ է նա կմարի:
1071. Երբ որ հողին պահ տվեցին մարմինն ազնիվ ասպետի,
Անհուն ցավով համակվեցին բոլոր նրանք անխտիր,
Ովքեր եկել էին այստեղ հեռու երկրից Նիբելունգ:
Ընկճված էր և Ձիգմունդը՝ հոգում ավեր ու արցունք:
1072. Եվ սգակիր բազմության մեջ սակավ չէին նրանք, որ
Բոլորովին չէին սնվել՝ խորունկ վշտից երեք օր,
Հետո կերան հացը իրենց. չէին տրվի հո մահին,
Մեռնողի հետ ով է մեռնում՝ այս աշխարհի կարգն է հին:

ԴԻՊՎԱԾ ՏԱՍԵՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես Ձիգմունդը վերադարձավ իր երկիր

1073. Ձիգմունդ արքան ելավ եկավ, գտավ հարսին սգավոր,
Ասաց. «Գնանք մենք այստեղից, անընտել եմ, անսովոր,
Ձե՛ն սիրում մեզ հոննոսցիք, անկոչ հյուր ենք երկրում այս,
Վեր կաց գնանք երկիրը մեր, Քրիմհիլդ իմ, անուշ հարս:
1074. Եվ քանի որ այս երկրի մեջ մեզ դավեցին նենգաբար,
Չխեղճանաս դու երբևէ, մնում ես նույնն ինձ համար,
Ես մնում եմ քեզ սիրող հայր ու հարազատ մշտական
Հանուն որդուս հիշատակի և սիրելի իմ թռան:
1075. Դուք, Տիրուհի, պիտի պահեք իշխանություն, երկիր, թագ,
Որ ունեիրք Ձեր ամուսնու՝ Ձիգֆրիդի ժամանակ:
Հիմա նույնպես երկիրը ձեզ սպասում է Չերմորեն,
Եվ իմացեք՝ Ձիգֆրիդի մարդիկ ընդմիշտ Ձեզ հետ են»:

1076. Ապա բոլոր մեկնողներին տրվեց ճամփի Հրահանգ,
Շտապեցին ձիերի մոտ նիբելունգներն Հնազանդ,
Շատ ծանր էր նրանց Համար դեռ Հյուր մնալ թշնամյաց:
Ճամփի Համար պատրաստ լինել պատվիրեցին և կանանց:
1077. Երբ կամեցավ Ջիգմունդ արքան ճամփա ընկնել իր երկիր,
ՔրիմՀիլդին Հարազատներն Հորդորեցին Հարգալիբ,
Որ նա մնա, Հոննոսից չհեռանա սրտաբեկ,
Բայց տիրուհին պատասխանեց Հպարտորեն. «Օ՛, երբեք:
1078. Ինչպես տեսնեմ իմ աչքերով նրանց կողքիս, միշտ առ իս,
Ովքեր այնպես դաժանորեն որբացրին թշվառիս»:
Ասաց ջահել Գիզելհերը. «Շատ սիրելի քույրիկ իմ,
Մնա այստեղ Հանուն քո մոր, Հանուն մարդկանց մտերիմ:
1079. Ովքեր քեզ վիշտ պատճառեցին, վշտացրին քեզ այդպես,
Դու չես տեսնի նրանց երբեք և միայն ինձ Հետ կապրես»:
Պատասխանեց ՔրիմՀիլդը. «Ոչ, եղբայր իմ, Թանկագին,
Ախ, կանգ կառնի ցավից սիրտս, երբ ես տեսնեմ Հագենին»:
1080. «Դրա ելքն էլ գիտեմ, քույր իմ, մտածել եմ ամեն բան,
Դու կմնաս եղբորդ մոտ՝ Գիզելհերից անբաժան,
Կփորձեմ քեզ մոռացնել տալ ամուսնուդ մահն անողոք»:
Եվ Հառաչեց թշվառ այրին. «Հնարավո՞ր է արդյոք»:
1081. Երբ Գիզելհերն ասաց նրան խոսքեր այսքան սիրազեղ,
Ապա Ութեն և Գերնոտը սկսեցին Համոզել,
Հետո ուրիշ Հարազատներ խնդրում էին, Համոզում,
Թե նա չունի Հարազատներ Ջիգֆրիդի երկրում:
1082. Գերնոտն ասաց. «Այն երկրի մեջ քեզ Հարազատ բան չկա,
Մարդու վերջը մահն է, թեկուզ լինի Հզոր մի Հսկա:
Քույր իմ, դու սա լավ իմացիր և սփոփվիր վեհաբար:
Մնա այստեղ, մեր կողքին, դա լավագույնն է քեզ Համար»:
1083. Նա խոսք տվեց եղբայրներին, որ չի մեկնի Նիդեռլանդ,
Թող Ջիգմունդի մարդիկ թամբեն ձիերն իրենց փութեռանդ,
Թե ուզում են ուղևորվել երկիրն իրենց Հարազատ,
Եվ թող բարձեն Հանդերձանքը գրաստներին կազմ— պատրաստ:

1084. Ահա եկավ Ջիզմունդ արքան Քրիմհիլդի մոտ՝ Հարսի,
Ասաց նրան. «Ջիզֆրիդի մարդիկ ահա պատրաստի
Սպասում են նժույգներով, որ Դուք դուրս գաք ու մեկնենք,
Ջի ուզում ենք վայրկյան առաջ թողնել երկիրը այս նենգ»:
1085. Ասաց ազնիվ Քրիմհիլդը. «Համոզեցին մերոնք ինձ,
Որ ես մնամ իրենց կողքին, չհեռանամ մեր երկրից,
Քանզի չունեմ Նիդեռլանդում ես ոչ մեկը Հարազատ»:
Եվ Ջիզմունդի սիրտը ցավեց այս խոսքերից սաստիկ շատ:
1086. Ջիզմունդ արքան ասաց նրան. «Դա չպետք է ասես դու,
Նիդեռլանդիա երկրին Համայն տիրակալ ես լինելու,
Նստելու ես գահին թափուր, թագ կկրես տոհմական:
Քեզ չպետք է մեղադրենք, որ հերոսը մեր չկա»:
1087. Եվ պետք է գաք մեզ հետ նաև Հանուն Ձեր իսկ զավակի,
Դուք իրավունք չունեք նրան թողնել առանց խնամքի,
Երբ մեծանա Ձեր զավակը, Ձեզ կլինի սփոփանք,
Եվ բացի այդ անթիվ քաջեր կլինեն Ձեր ձեռքի տակ»:
1088. Քրիմհիլդը ասաց. «Բայց ես չեմ ուզում գալ, տեր արքա,
Որոշել եմ այստեղ մնալ, թեկուզ գլխիս ինչ էլ գա:
Մերոնց կողքին կսփոփվեմ, կթոթափեմ վիշտ ու ցավ»:
Պատասխանն այս Ջիզֆրիդի ասպետներին դուր չեկավ:
1089. Եվ ասացին նրանք այսպես. «Ոոստովանեք, թագուհի,
Որ մենք մեծ ցավ ու տրտմություն վաստակեցինք այս պահին:
Եթե մեր նենգ թշնամյաց հետ պիտի մնաք Դուք Վորմսում,
Ապա մեր աստ կտրած հացը թույն կդառնա մեր ներսում»:
1090. «Հանգիստ սրտով ճամփա ընկեք, Աստված լինի ձեզ նեցուկ,
Ես կդնեմ ձեզ հետ ընտիր պահնորդներ, որ հասնեք դուք
Մինչ երկիրը քաջ Ջիզմունդի: Իսկ իմ որդուն սիրասուն
Հոգածությանն եմ ձեր հանձնում, ով ասպետներ դյուցազուն»:
1091. Երբ վերջապես Համոզվեցին, որ չի գալու թագուհին,
Նիդեռլանդցի ասպետները ողջը մեկեն ողբացին,
Հուսահատվեց Ջիզմունդն իսպառ ու որբացավ ավելի,
Մնաս բարով ասաց նրան՝ ջահել Հարսին իր այրի:

1092. «Անիծվիր թող այս խնջույքը, — ասաց արքան՝ սրտում սուգ, —
 Թող չտեսնի կյանքում մեկը նման վիշտ ու արտասուք,
 Ինչ որ տեսան ասպետներն իմ և ես՝ արքաս ծերունի,
 էլ այսուհետ մեր ոտքն այստեղ՝ Հռենոսում չի լինի»:
1093. Զիգֆրիդի մարդիկ, սակայն, խոսեցին բաց, անթաքույց.
 • «Մենք Հռենոս կգանք նորից, երբ ունենանք ապացույց,
 Թե հավաստի ով է եղել սպանողը մեր տիրոջ,
 Ու հազիվ թե մեր վրեժից ազատվի նա ողջ-առողջ»:
1094. Եվ Հրաժեշտ տվեց արքան Քրիմհիլդին՝ ողբալով,
 Ո՛վ կարող էր նրա վիշտը փարատել կամ ի՞նչ խոսքով.
 «Թողնենք հիմա ու գլխիկոր վերադառնանք մեր երկիր,
 Լոկ հիմա եմ ես հասկանում չափը վշտի իմ անծիր»:
1095. Ոչ ոք նրանց չուղեկցեց, երբ Հռենոսի ափն իջան,
 Վախ չուներին նրանք բնավ այդ Հողի մեջ դիական,
 Թե կարող է մեկը ելնել իրենց առաջ նենգ մտքով,
 Իսկ ով ելներ, անտարակույս, կգարկեին քաջ ձեռքով:
1096. Զէին ասել նրանք Վորմսում մնաա բարով ոչ մեկին,
 Լոկ Գերնոտն ու Գիզելհերը երևացին միասին,
 Եվ Զիգմունդին մոտենալով՝ խոսք ասացին, թե որքան
 Իրենց համար ծանր է վիշտը ու կորուստը անդարման:
1097. Արքաեղբայր Գերնոտն այսպես ասաց խոսքը իր սրտի.
 «Ամենատես Տերն է վկա, որ մահվան մեջ ասպետի
 Մեղավոր չեմ և չգիտեմ, թե երկրում մեր անգամ
 Ունեցե՞լ է նա թշնամի: Ես նրան հար կողբամ»:
1098. Իսկ պատանի Գիզելհերը եղավ նրանց ուղեկից,
 Մինչ սահմանը իր երկրի, ապա սրտով կարեկից
 Զիգմունդին ու նրա մարդկանց ճանապարհեց Նիդեռլանդ,
 Բոթն այնտեղ էլ գտավ մարդկանց, մատնեց վշտի անփարատ:
1099. Զգիտեմ, թե ոնց տեղ հասան ասպետները ու արքան,
 Բայց Վորմսում Քրիմհիլդի ողբն էր լսվում մշտական,
 Որ չէր կարող ոչ մի վայրկյան սփոփանքը իր գտնել,
 Նրա կողքին հավատարիմ Գիզելհերն էր լոկ ջահել:

1100. Իսկ թագուհի Բրունհիլդը ապրում էր գոհ, անհաղորդ,
Քրիմհիլդին անկարեկից, նրա ցավին խսպառ խորթ,
Նա փորձ չարեց գեթ մեկ անգամ մի խոսք ասել սրտացավ:
Սակայն Հետո Քրիմհիլդից իր պատիժը ստացավ:

ԴԻՊՎԱԾ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Թե ինչպես Նիրեյունգների ոսկին բերվեց Վորմա

1101. Ու երբ այսպես սեզ թագուհին դարձավ այրի, որբացավ,
էքեվարտ կոմսն ասպետներով ընդմիշտ նրա մոտ եկավ
Ու մինչև մահ հավատարիմ ծառայեց իր թագուհուն՝
Ազնիվ սրտով ու հնավանդ նվիրումով մի անհուն:
1102. Վորմաում հարմար տուն սարքեցին՝ եկեղեցուն շատ մոտիկ
Փայտաշեն տուն ընդարձակ և տեսքով անչափ գեղեցիկ,
Այստեղ ապրեց Քրիմհիլդը շքախմբով մեկուսի:
Միշտ գնում էր եկեղեցի խոր հավատով անբասիր:
1103. Ու որքան էլ ժամանակը առաջանար ու փոխվեր,
Ջէր դադարում սիրելիի գերեզմանին այցելել,
Խնդրել Աստծուն նրա Հոգու համար դրախտ երկնային
Ու հիշելով՝ միշտ ողբում էր իր քաջարի ասպետին:
1104. Սփոփում էին նրան Ութեն և տիկիներն իր նաժիշտ.
Բայց մնում էր Քրիմհիլդի սիրտը ցավով լցված միշտ,
Սփոփանքի և ոչ մի խոսք նրա սրտին չէր հասնում,
Նա Հանգիստ ու դադար չուներ կարոտից իր ամուսնու,
1105. Որից երբեք դեռ այդքան շատ չէր տանջվել ուրիշ կին,
Դրանով էր նա լոկ ապրում, և շունչ առնում խոր հոգին:
Քրիմհիլդը իր ամուսնուն որքան ապրում էր՝ սգաց:
Բայց նա Հանեց սարսափելի վրեժը իր՝ օրեր անց:
1106. Զիգֆրիդի ողբերգական մահից Հետո նա ապրեց
Եվս երեք ու կես տարի, — դա այդպես էր իրապես, —
Եվ չխոսեց Գունտերի Հետ ոչ մի անգամ գեթ բառ մի
Ու չնայեց ոչ մի անգամ Տրոնյեցուն թշնամի:

1107. Հագենն ասաց թագավորին. «Հարկավոր է, որ կրկին Մտերմանաք Ձեր քրոջ հետ, սիրաշահեք իր հոգին, Միայն այդպես մենք կբերենք նիրբելունգյան գանձն այստեղ, Թե համոզեք Քրիմհելդին, գործ կլինի փառահեղ»:
1108. Գունտերն ասաց. «Եղբայրներս զույգն էլ նրան շատ են մերձ, Մենք կարող ենք խնդրել, որ նա մտերմանա կրկին մեզ, Երբ մենք նրա սիրտը շահենք, կփոխվի նա մեր հանդեպ»:
«Ձեմ հավատում, – Հագենն ասաց, – Թե պատահի նման դեպք»:
1109. Եվ Օրտովինին ճամփեց արքան Քրիմհելդի սպարանք, Հետը Գերե մարկգրաֆին: Արդ հասնելով տեղ՝ արանք Կանչել տվին Գերնոտին և Գիզելհերին խնդադեմ Եվ փորձեցին անկեղծորեն սիրտը բացել նրա դեմ:
1110. Բուրգունդներից առաջինը ահա Գերնոտը խոսեց.
«Տիրուհի, դուք այսքան երկար ողբում եք ձեր ցավը մեծ, Բայց պատրաստ է արքան երդվել, որ ասպետին չի խոցել:
Մենք լսում ենք գիշեր-ցերեկ լուկ սրտաբեկ ողբը Ձեր»:
1111. «Արքային չեմ մեղադրում: Դա Հագենն է սևերես, Խոցելի տեղն իմ ասպետի նրան էի հայտնել ես, Մտքովս իսկ չէր անցնում, որ հոգու մեջ նենգ է նա, Թե չէ ինչպե՞ս թույլ կտայի, որ գաղտնիքը իմանա:
1112. Եվ ես չէի դավաճանի իմ ասպետին փառապանծ, Ես՝ թշվառս, պիտի տեսնեմ միայն արցունք, միայն լաց:
Ինձ բարեկամ չի լինի նա, ով կատարեց գործն այդ սև»:
Այնուհետև Գիզելհերը նրան խնդրել սկսեց:
1113. «Ես կընդունեմ թագավորին», – ասաց այրին սգակիր:
Եվ իր խմբով Գունտերն իսկույն այցի եկավ քրոջն իր, Իսկ Հագենը չհանդգնեց Քրիմհելդին գալ այցի,
Քանզի գիտեր իր հանցանքը և չափը իր արածի:
1114. Երբ Գունտերին ներեց քույրը նենգ արարքի դիմաց այն, Համբուրվեցին քույր ու եղբայր ի նշան ջերմ հաշտության, Վաղուց Գունտերն իր քրոջ հետ կհաշտվեր անկասկած, Եթե իրավ չգիտակցեր անհուն մեղքը իր գործած:

1115. Արցունքներից հետո այնքան նա դեռ ներեց վեհորեն,
Թեև վիշտը սպանել էր, մարել մեջը հուրն ամեն:
Ձեռքը պարզեց նա բաց սրտով զարմիկներին մեկ առ մեկ,
Բացի Հագեն Տրոնյեցուց, ում չներեց նա երբեք:
1116. Քրիմհիլդին լուր տվեցին, երբ անցավ մի ժամանակ,
Թե ամուսնու երկրում ինքը գանձեր ունի անքանակ,
Դրանք իրոք իր գանձերն են, հարսանեկան նվերն իր,
Եվ որ դրանք պետք է բերել հայրենական իր երկիր:
1117. Եվ մեկնեցին Գիզելհերը ու Գերնտոը փութեռանդ,
Քրիմհիլդը ճամփեց՝ հետներն հազար երկու հարյուր մարդ,
Որ բերին գանձերն անբավ լեռան տակից ահռելի,
Ալբերիխն էր պահպանում այն իր ջոկատով քաջերի:
1118. Եվ երբ տեսան Հոենոսից մարդկանց մի խումբ է գալիս,
Ալբերիխն իր ընկերներին դիմեց խոսքով շատ հանգիստ.
«Մենք իրավունք չունենք նրանց չհանձնելու գանձը սույն,
Որովհետև իբրև օժիտ պատկանում է թագուհուն»:
1119. «Անշուշտ, — ասաց Ալբերիխը, — չէր հեռանա գանձը մեր,
Եթե մեր տեր Զիգֆրիդը անգթորեն չսպանվեր
Կախարդական իր թիկնոցով, հնարանքով իր բազում
Եվ չէր կորցնի նա հավիտյան Քրիմհիլդին սիրասուն:
1120. Զիգֆրիդի գլխին սակայն դժբախտություն եկավ մեծ,
Երբ որ մեզնից կախարդական թիկնոցը մեր վերցրեց
Եվ երկիրը մեր նվաճեց, դարձրեց ճորտն իր լիովին»:
Ապա բերեց Ալբերիխը գանձարանի բանալին:
1121. Եղբայրների խումբը ահա լիռան առաջ կանգ առավ,
Լեռան տակի գանձարանից կրում էին գանձն անբավ
Դեպի ծովափ, որ բարձեին նավերի մեջ ամրասյուն:
Եվ նավելով հոսանքի դեմ՝ գետով հասան Վորմս՝ տուն:
1122. Գանձի մասին կարելի է պատմել անլուր հրաշքներ,
Այնքան շատ էր, որ տասներկու սայլ չէր տանի այդքան բեռ,
Չորս օր նրանք լեռան տակից կրում էին իրար հետ,
Եվ օրական ամեն մի սայլ կատարում էր երեք երթ:

1123. Այնտեղ միայն ոսկի էր ձուլլ և թանկագին ակննդեն,
Ու թե մարդկանց կամենային տալ դրանցից լիորեն,
Հագիվ թե մարկ կպակասեր գանձերից այդ անհամար,
Ձուր չէր Հագենն ուզում գանձն այդ Վորմս տանել անհապաղ:
1124. Գանձերի մեջ կախարդական մի փայտիկ կար (ձուլլ ոսկուց),
Ով որ դրան տիրեր հանկարծ, տեր կդառնար նա իսկույն
Ողջ աշխարհին այս լուսնի տակ: Եվ գանձի Հետ թանկագին
Ալբերիխի շատ քաջեր էլ Գերնոտի Հետ գնացին:
1125. Երբ ապահով գանձը հասավ երկիրն արքա Գուլտերի,
Քրիմճիլդը ձեռքը առավ հսկողութունն անթերի,
Ինչքան սենյակ ու ամբար կար՝ լցվել էին լի ոսկով,
Մեծ զարմանք էր պատել մարդկանց առատութունը այդ ծով:
1126. Եվ եթե այդ գանձը լիներ հազար անգամ ավելի,
Նա հոժար էր ողջը թողնել, դառնալ աղքատ խղճալի,
Միայն թե իր Ջիֆգֆրիդը լիներ կողքին կենդանի,
Ջի այլևս նման Հերոս ողջ աշխարհը չէր տեսնի:
1127. Երբ տիրացավ իր գանձին, ապա կանչեց նա պալատ
Բազում օտար ասպետների, նվեր տվեց այնքան շատ,
Որ նման բան չէին տեսել սրանք իրենց ողջ կյանքում:
Իրավ նա մեծ տիրակալ էր, շատերն էին գովերգում:
1128. Աղքատներին, հարուստներին բաժանում էր բարեսիրտ,
Իսկ Հագենը զգուշացավ. «Եթե այսպես գնա միշտ,
Նոր ասպետներ վերցնի իր մոտ, մտերմանա նրանց Հետ,
Այդ ամենը կարող է մեր գլխին բերել մեծ աղետ»:
1129. Գուլտերը՝ թե. «Նա ազատ է, ուրախանա թող գանձով,
Տնօրինի անբավ ոսկին իր իսկ սրտի ուզածով,
Դժվարությամբ կարողացա նրա սիրտը շահել ես,
Խառնվել նորից նրա գործին անհնար է այլևս»:
1130. Հագենն ասաց թագավորին. «Խելոք մարդը, իմացիր,
Ջի թողնի, որ այդչափ գանձը մի կին անի ցան ու ցիր,
Սրան-նրան ընծա տալով՝ կգնա շատ Հեռուն նա
Ու մի օր էլ Բուրգունդիայի գլխին փորձանք կդառնա»:

1131. Ասաց Գուռտեր թագավորը. «Նրան խոսք եմ ես տվել,
ինչ էլ լինի՝ վիշտ ու արցունք չեմ պատճառի այսուհետ,
ես չեմ խախտի իմ երդումը քրոջս առաջ Հարազատ»:
Հագենն ասաց. «Թող իմ Հոգու վրա ընկնի մեղքը այդ»:
1132. Էլ ինչ երդում, ինչ Հարազատ, երբ որ գանձ կար այդքան շատ,
Տարան նրանք այրու գանձը արարքներով ապիրատ,
Նախ Հագհի՛ի ձեռքը ընկան բանալիները բոլոր,
Երբ Գերնտըր սա իմացավ՝ վիրավորվեց անչափ խոր:
1133. Այդժամ ասաց Գիզելհերը. «Այնքան արցունք է բերել
Տրոնյեցին քրոջս, որ էլ դժվար է Համբերել,
Թե չլիներ ինձ Հարազատ, կսպանեի ես նրան»:
Եվ սկսեց արցունք թափել Քրիմհիլդը ողբաձայն:
1134. Ապա Գերնտտն ասաց. «Ավաղ, գանձը դարձավ պատուհաս,
Ճիշտ կլիներ՝ Հռենոսում, ինչ-որ մի տեղ անվնաս
Թաքցնեինք Հույժ ապահով՝ ոչ ոք տեղը չիմանար»:
Քուլլըր կանգնեց եղբոր առաջ արտասովթոր, դողաՀար.
1135. «Իմ լավ եղբայր, իմ մասին դու պիտի Հոգաս ողջ սրտով,
Թե կյանքս, թե ունեցվածքս պիտ պաշտպանես ապահով»:
Գերնտտն ասաց. «Կանեմ, քուլլր իմ, չեմ խնայի ոչ մի ջանք
Հենց դարձանք ետ: Իսկ Հիմա մենք պետք է շտապ Հեռանանք»:
1136. Շրջելու էր ելնում Գուռտեր թագավորը երկրում իր,
Եվ Հեան էին եղբայրներն ու դրանիկներ շատ ընտիր,
Զկար միայն Հագենը, որ ատելությամբ իր անձիր
Տիկնոջ Հանդեպ մտմտում էր կատարել մի նոր ոճիր:
1137. Մինչև երես կդառնային արքաները շրջայցից,
Տրոնյեցին Հափշտակեց, բան չթողեց ողջ գանձից:
Տարավ. թաղեց ԼախՀայմի մոտ՝ Հռենոսում սառնաշուր՝
Կարծելով թե կվայելի օրից մի օր, բայց իզուր:
1138. Երբ ետ դարձան եղբայրները ասպետների Հետ իրենց,
Քրիմհիլդը իր տիկնանց Հետ բողոքելը սկսեց,
Թե կորել է գանձը ամբողջ, և դարձել է ինքն աղքատ:
Ու վերստին Գիզելհերը զայրուլթ ապրեց Հուսահատ:

1139. Հույժ բարկացան եղբայրները. «Հագենը չափն իր անցավ»:
Նրանց ահից Տրոնյեցին արքունիքից հեռացավ
Առժամանակ, մինչև կրկին շահեց նրանց բարձր հովանին:
Բայց ավելի ռիսով լցվեց որբեայրի թագուհին:

1140. Մինչ Հագենը չէր թաքցրել տիրուհու գանձն անհատնում,
Միմյանց՝ երեք արքաները և նա տվեցին երգում՝
Քանի ողջ են այս աշխարհում, գանձին երբեք ձեռք չտան
Եվ ոչ մեկին տեղը չասեն, պահեն գաղտնի հավիտյան:

1141. Զիգֆրիդի մահից հետո վրա տվեց մի նոր ցավ.
Դա իր գանձն էր, որ իր աչքից ասեղի պես չքացավ,
Եվ համակվեց Քրիմհիլդը կրկին վիշտ ու ցավով մեծ,
Մինչև մահը վերջ չունեցավ նրա ողբը դառնահեծ:

1142. Զիգֆրիդի մահից հետո, — իսկ դա այդպես է իրավ, —
Տասնևերկու տարի ապրեց նա՝ սրտում լոկ ողբ ու ցավ,
Զկարեցավ իր ասպետին մոռանալ գեթ մեկ վայրկյան,
Նրան, որ մի աշխարհ արժեք, չդավեց նա հավիտյան:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆԵՐՈՐԴ

**Թե ինչպես արքա էթցելը խնամախոսների ուղարկեց
Բուրգունդիա՝ Քրիմհիլդի համար**

1143. Եվ եղավ, որ այն օրերում մեռավ Հելխե թագուհին,
Եվ ուզում էր էթցել արքան պալատ բերել մի նոր կին,
Խորհուրդ տվին իշխանները, որ կին առնի հոգեթով,
Հարուստ այրուն Բուրգունդիայի, Քրիմհիլդին բարետոհմ:

1144. Եվ քանի որ Հելխեն նրանց սիրելի էր անսահման,
Ասում էին. «Նոր թագուհին պիտի լինի անպայման
Գահին պատշաճ, ինչպես Հելխեն, որ արքայիդ ազնվածին
Սազ գա, դա հենց Քրիմհիլդն է՝ ազնիվ այրի բուրգունդցին»:

1145. Ապա ասաց հզոր արքան. «Հնարավո՞ր է արդյոք,
Զէ՞ որ ես մի հեթանոս եմ, չի մկրտել ինձ ոչ ոք,
Քրիստոնյա այրու հետ դուք դժվար թե մի խոսքի դաք,
Եթե նա գալ համաձայնվի՝ դա կլինի մեծ հրաշք»:

1146. Բայց պնդեցին նրա մարդիկ. «Համաձայնի երևի
Ձեր վե՛հ անվան պատճառով և հզորագույն համբավի:
Այդ տրկնոջը պետք է փորձել տրկինների մեջ անթիվ,
եվ կուսենաք Դուք թագուհի՝ գեղեցիկ ու մեծազնիվ»:
1147. Ասաց էթցել թագավորը. «Ձեր մեջ մեկը կա՞, իրավ,
Որ քաջ գիտե շոնոսը ու ծանոթներ ունի լավ»:
Պատասխանեց Բեխլարենցի Ռուդիգերը վսեմ.
«Ես ծանոթ եմ այդ կողմերին, այրուն մանկուց ես գիտեմ»:
1148. Գիտեմ նրա եղբայրներին՝ Գունտերին ու Գերնտին,
Եվ կրտսեր Գիգելհերին: Ամեն մեկը առանձին
Քաջության ու խիզախության օրինակ է շողշողուն,
Նաև նրանց նախնիները ունեն այնտեղ մեծ անուն»:
1149. Նորից խոսեց էթցել արքան. «Բարեկամ իմ, հենց հիմի
Ասա ինձ, թե նա կուզենա՞ դառնալ երկրիս թագուհի,
Եվ չքնա՞ղ է արդյոք այնքան, որքան մարդիկ են ասում»:
Պատասխանեց Բեխլարենցին՝ ասպետը քաջ, դյուցազուն.
1150. «Գեղեցկությամբ հավասար է մեր հանգուցյալ Հելխին,
Նույնիսկ չքնաղ է ավելի: Ձգիտեմ մի ուրիշ կին,
Որ իր շուքով, գեղեցկությամբ նրան լինի հավասար:
Եթե նրան կին առնեք Դուք, կբարօրեք անպատճառ»:
1151. Էթցելն ասաց. «Խնամախոս եղիր, ուրեմն, Ռուդիգեր,
Եվ թե պառկեմ Քրիմհիլդի կողքին մի օր, ես գիտեմ,
Թե քեզ ինչպես կհատուցեմ, չեմ թողնելու քեզ անվարձ,
Որովհետև ցանկությունն իմ դու կլինես կատարած»:
1152. Հիմա գնա գանձարանից վերցրու արծաթ և ոսկի,
Վերցրու այնքան, որքան պետք է մարդկանց համար, ճամփեքի,
Նժույգներ ու հագուստ վերցրու, ամեն բան առ ձեռքիդ տակ,
Որ դու և ջո ընկերները ճամփին պակաս չունենաք»:
1153. Պատասխանեց մարկգրաֆը խոսքով խոհեմ և արդար.
«Սազական չէ՞ Ձեր գանձերից օգտվելը ինձ համար,
Կմեկնեմ իմ միջոցներով, ով թագավոր քաջազնիվ,
Ձէ՞ որ ինչի ես հասել եմ, եղել է Ձեր շնորհիվ»:

1154. Ասաց զորեղ թագավորը. «Ե՛րբ կընկնենք ճանապարհ
Դեպ երկիրը Քրիմհիլդի: Աստված լինի պահապան,
Ասպետներիդ և Ֆրաու Քրիմհիլդին օգնի նա,
Բախտս նորից կժպտա ինձ, թե գեղանին կամենա»:
1155. Կրկին խոսեց Բելլարենցին. «Շատ շտապել մեզ պետք չի,
Պիտ պատրաստենք մեր գենքերն ու հազուստներն ըստ պատշաճի,
Որովհետև լինելու ենք պալատական բարձր հյուր:
Ես ուզում եմ ինձ հետ տանել ասպետների հինգ հարյուր:
1156. Բուրգունդիայում թե որ տեսնեն շուք ու փայլով մեզ այդքան,
Դրանից Ձեր փառքը միայն կավիանա, տեր արքա,
Չեն գնացել դեռ Հոենոս խմբով այդքան բազմամբոխ,
Նման երկար ճամփի համար չեն զարդարվել այդքան ճոխ»:
1157. Եվ եթե Դուք, ով քաջ արքա, Քրիմհիլդին պիտ առնեք,
Ջիգֆրիդին սիրում էր ճիշտ խենթի պես, իմացեք,
Դուք տեսել եք քաջին հաստատ, չկար մեկը իր հանգուլն,
Ասպետների մեջ բովանդակ միակն էր նա, քաջագույն»:
1158. Էթցելն ասաց. «Քաջ ասպետի սիրված կին է եղել նա,
Ետ կանգնել իմ որոշումից համարում եմ անհնար,
Եվ մանավանդ քամահրելը պատշաճ չէ ինձ՝ արքայիս:
Եվ բացի այդ գեղեցկությամբ նա շատ է ինձ դուր գալիս»:
1159. Ապա ասաց մարկգրաֆը. «Ասեմ ես Ձեզ, իմ արքա,
Որ քսանչորս օրից հետո ընկնելու ենք մենք ճամփա,
Եվ կհայտնեմ Գոտելինդին՝ իմ տիկնոջը ազնվամիտ,
Որ Բուրգունդիա հարսնախոսի ճանապարհվեմ ես պիտի»:
1160. Ռուդրիգերը սուրհանդակներ ճամփեց դեպի Բելլարեն,
Եվ համակեց Գոտելինդին ցնծություն ու վիշտ մեկեն,
Նա լուր տվեց, որ գնում է կին բերելու արքային:
Գոտելինդը հիշեց սիրով գեղեցկուհի Հելխենին:
1161. Երբ ճամփա էր ընկնում արդեն մարկգրաֆը Հոենոս,
Շատ-շատ տխրեց Գոտելինդը՝ արտասովորվ տրտմախոս,
Հարցնում էր միշտ, թե կունենա՞ն նախորդի պես ազնիվ կին:
Եվ Հելխեի համար անվերջ մորմոքում էր տրտմագին:

1162. Ռուդիգերը Հունգարիայից ճամփա ընկավ յոթ օր անց,
Դրա համար էթցել արքան ուրախացավ շատ, սրտանց,
Ջգեստները կարել էին վիեննացիք մեծահարգ,
Եվ այլևս երթը իրենց ձգձգելու չկար հարկ:
1163. Բեխլարենում սպասում էր արդեն տիկինը նրան,
Նաև չքնաղ մարկգրաֆուհին՝ նրանց դուստրն աննման,
Տեսան՝ գալիս է հայրիկը շքախմբով արքունի,
Տրվեցին նրան ճոխ պատիվներ ջերմ հարկի տակ իշխանի:
1164. Մինչ իշխանը իր ջոկատով կժամաներ Բեխլարեն,
Վիեննայից հագուստները հասել էին տեղ արդեն
Գրաստներով և ասպագեն զինվորների հսկման տակ,
Քանզի ճամփին վխտում էին անթիվ գող ու ավազակ:
1165. Եվ երբ նրանք եկան հասան արդ Բեխլարեն՝ շեն քաղաք,
Ռուդիգերն ասպետներին տեղ տվեց իր հարկի տակ
Եվ պայմաններ ստեղծեց ճոխ բարեկամի պես սրտանց:
Տիկինն հրճվեց, երբ որ տեսավ իշխանին ու իր մարդկանց:
1166. Նույն հրճվանքը ապրեց նաև դստրիկն Հոր գալստյամբ,
Ոչ ոք նրան տեսակցելով, անշուշտ, ուրախ էջր այդչափ,
Երջանիկ էր, որ տեսնում էր Հոր հետ եկած Հոներին,
Ուրախ սրտով աղջիկն այսպես դիմեց Հորն ու Հյուրերին.
1167. «Բարով եք դուք եկել, հայր իմ, բարեկամներ նաև դուք»,
Եվ զգայուն ասպետները, վարք ու խոսքով վեհաշուք,
Իրենց բերկրանքն էին հայտնում գեղեցկուհուն աննման,
Իսկ կինն ուզում էր իմանալ ամուսնու միտքն անպայման:
1168. Երբ գիշերը ամուսիններն իրենց մահիճը մտան,
Կինն սկսեց նրա գլխին տեղալ հարցեր զանազան՝
Ո՛ր է ճամփում Հոնաց արքան իշխանին իր թանկագին:
Մարկգրաֆը պատասխանեց. «Ասեմ հիմա, իմ տիկին:
1169. Քանզի գիտես՝ մահացել է արքայուհի մեր Հելխեն,
Ուստի մեր տեր թագավորին մի նոր կին է պետք արդեն,
Եվ գնում եմ Վորմս՝ ձեռքը Քրիմհիլդի խնդրեմ, որ
Նա մեր դշխոն դառնա և ձեր թագավորին կյանք տա նոր»:

1170. «Տիրոջ կամքով թող գլուխ դա,— ասաց տիկինը հուզված,—
 Նրա մասին մենք լսել ենք լոկ լավ բաներ, էն Աստված,
 Գուցե դառնա նա մեզ Հելլես, ինչպես այն Հին օրերին,
 Մենք ուզում ենք սրտանց, որ նա կրի թագը Հոների»:
1171. Մարկգրաֆը պատասխանեց. «Սիրելիդ իմ Գոտելինդ,
 Իշխաններ կան չքախմբում, արդե՞ եկել է լավ առիթ,
 Ընծայիր մեր տանը եղած հագուստներից ինչ ուզես
 Նրանց, որ լավ տեսք ունենան և միշտ լինեն խնդրեաս»:
1172. Պատասխանեց Գոտելինդը. «Բանի այստեղ են նրանք,
 Առատորեն կտանք նրանց՝ ինչ ունենք մեր հարկի տակ,
 Մենք կընծայենք ամեն մեկին այն, ինչ պատշաճ է, հարմար»:
 «Ինչ բարի ես, իմ սիրելի»,— իշխանն ասաց քնքշաբար:
1173. Հե՛յ, մետաքսյա ինչ զգեստներ պահեստներից դուրս բերին
 Եվ ընտրեցին ասպետները հանդերձանքներ անթերի,
 Հազնվեցին՝ ոտից գլուխ մորթիներով զարդարուն:
 Թուղիգերը ընտրեց սակայն ասպետներին լավագույն:
1174. Յոթերորդ օրն առավոտյան Բեխլարենից դուրս եկան,
 Յուր սրակիր ասպետներով կոմսը անցավ իր ճամփան՝
 Տանելով զենքն ու հագուստը Բավարիայով բովանդակ,
 Չհանդգնեց նրանց ճամփան կտրել ոչ մի ավազակ:
1175. Տասներկու օրում նրանք Հոենոսի փին հասան
 Եվ չէր կարող գաղտնի մնալ լուրը նրանց գալստյան,
 Լուր տվեցին թագավորին, նաև նրա մարդկանց քաջ,
 Թե եկել են թանկ-թանկ հյուրեր, սակայն իրենց անճանաչ:
1176. Արքան ուզեց տեղեկանալ՝ որտեղի՞ց են և կամ ո՞վ,
 Տեսնում էին նրանց բերած բեռներն հսկա հակերով,
 Որ նրանք շատ հարուստ էին՝ երևում էր հավաստի:
 Մեծ քաղաքում նրանց համար տեղ տվեցին հանգստի:
1177. Երբ հյուրերը դադար առան այդքան ճամփա կտրելուց,
 Նրանց մասին արքունիքում ծայր առավ խոսք ու զրույց,
 Եվ տեսնելով՝ իշխանները չեն ճանաչում ոչ մեկին,
 Թագավորը կանչել տվեց ամենազետ Հագենին:

1178. «Բայց ես նրանց դեռ չեմ տեսել, – Հագենն ասաց փորձառու, –
Հենց որ տեսնեմ, գուցե ասեմ, մոտ տեղից ես, թե հեռու,
Գուցե պարզեմ՝ նպատակը նրանց բարի՞ է, թե չար,
Իսկ թե հանկարծ չճանաչեմ, ուրեմն օտար ես իսպառ»:
1179. Արդ, հյուրերին ընդունեցին արքունական Հարկի տակ՝
Որպես օտար սուրհանդակներ՝ Հագած շքեղ Հանդերձանք,
Նրանք պալատ եկան նստած նժույգներին ազնվացեղ,
Եվ կրում էր ամբողջ խումբը հատուկ շորեր՝ նույնաձև:
1180. Ասաց Հագեն Տրոնյեցին. «Կուահում եմ ես որքան,
Թեև վաղուց չեմ հանդիպել այս քաջերին պատվական,
Բայց այն մեկի կանգնելն ասես Ռուդիգերինն է որ կա,
Հունգարացի ասպետ է քաջ, համբավավոր մի հսկա»:
1181. «Ինչպես դրան մենք հավատանք, – ասաց արքան անհամբեր, –
Որ եկել են մեր երկիրը բեխլարենցի ասպետներ»:
Երբ խոսում էր Գունտերն այսպես և ասպետին էր նայում,
Հագենն արդեն ճանաչել էր Ռուդիգերին մեծանուն:
1182. Եվ ընդառաջ վազեց դեպի եկվորները գրկաբաց,
Տեսան ահա մոտ հինգ Հարյուր ասպետ իջան ձիուց ցած,
Եվ հոներին ընդունեցին չափազանց ճոխ, քանզի դեռ
Ոչ մի անգամ չէին տեսել այդքան Հարուստ Հանդերձներ:
1183. Ասպետ Հագեն Տրոնյեցին ասաց ահա բարձրաձայն.
«Բարով եք դուք եկել մեզ մոտ, ով ասպետներ պատվարժան,
Դուք՝ մեծ իշխան Բեխլարենցի և ուղեկից Ձեր մարդիկ»:
Ընդունեցին քաջ հոներին տերերն այսպես Բուրգունդի:
1184. Թագավորի զարմիկները մոտիկ եկան հոներին,
Օրովայն Մետցին Ռուդիգերին Հայտնեց զարմանքն իր խորին.
«Մենք այս վերջին տարիներին մեր երկրի մեջ Հարազատ
Հավատացե՞ դեռ չենք տեսել այսքան հյուրեր մարդաշատ»:
1185. Հյուրերն իրենց գոհությունը հաղորդեցին խնդալից,
Ապա խմբով անցան նրանք արքայական մեծ դահլիճ,
Որտեղ տեսան թագավորին, իշխաններին մեծամեծ,
Թագավորը ելավ գահից և հյուրերին ողջունեց:

1186. Մեծ Հարգանքով նա մոտեցավ դեսպաններին Հոնորի եվ ընդունեց մեծարանքով, ինչպես կարգն էր իր երկրի, Կողբին Գերնոտն ու ասպետներ՝ օրինակներ քաջության, եվ Գունտերը Բեխլարենցու ձեռքը բռնեց Հաճությամբ:
1187. Տարավ մինչև իր գահի մոտ, որին նստած էր մինչ այդ, եվ պատվիրեց Հյուրերին տալ մեղրագինի ոսկեկաթ, Մատուցանել ուտեստ Համեղ և գինիներ ընտրագույն, Որից միայն կգտնեք դուք Հոնոսի երկրում բուն:
1188. Գիզելհերն ու Գերեն Հասան Հյուրընկալման Հանդեսին, Դանկվարտը և Ֆոլկերը պալատ մտան միասին, Լուրը առած եկել էին, ուրախ սրտով Հասել տեղ, Արքայի դեմ ողջունեցին ասպետներին փառահեղ:
1189. Այդժամ դիմեց իր արքային Տրոնյեցին և ասաց.
«Այս Հյուրերի Հանդեսը լինենք մեծարանքով գերագանց,
Քանզի նույնն ենք տեսել մենք միշտ Հյուրամեծար ասպետից,
Գոտելիդի ամուսինը արժանի է մեծ պատվի»:
1190. Ապա ասաց Գունտեր արքան. «Ինձ լուր տվեք մի բարի,
Ասացեք, թե ոնց են ապրում իրենց երկրում Հոնորի
էթցել Հզոր թագավորը և իր Հելխեն Հմայիչ»:
Պատասխանեց մարկգրաֆը. «Հարկավ, կասեմ ամեն ինչ»:
1191. Նա վեր կացավ և նրա Հետ բոլորն ելան տեղերից,
եվ արքային դիմեց այսպես. «Թե Հարցնում եք, արքա, ինձ,
Ապա պիտի Հայտնեմ Հիմա ես այն լուրը անհապաղ,
Որի Համար անցել եմ ես այսքան երկար ճանապարհ»:
1192. Գունտերը՝ թե. «Ինչ պատվեր որ ստացել եք էթցելից,
Մինչ խորհուրդը կհավաքվի, թույլ եմ տալիս ասել ինձ,
Գաղտնիք չկա, թող իմ մարդիկ նույնպես լսեն, իմանան:
Ինձ Համար մեծ պատիվ է, որ ընդունեմ ձեզ Հանց դեսպան»:
1193. Ապա ասաց Ռուդիգերը. «Իր ողջունը սիրալիբ
Ուղարկում է էթցել արքան Հոնոսյան ձեր երկիր.
Ձեզ, արքա և Ձեր մերձավոր բոլոր մարդկանց բարեկամ
Ուղարկում է իր ողջունը անհուն սիրով իմ արքան»:

1194. Նա խնդրում է, որ Դուք լսեք ցավի մասին իր հոգու, Ժողովուրդը որբացել է: Մահը տարավ թազուհու, Ազնվազարմ մեր Հելիսին՝ գեղեցկուհուն աննման: Նրա մահվամբ շատ օրիորդներ մեր երկրում որբացան՝
1195. Դստերքը մեր իշխանների, որոնց կրթել էր մոր պես, Ուստի երկրում մեր բովանդակ տիրում էր վիշտ աղեկեզ, Բայց վշտի մեջ չկա մեկը, որ սփոփանք տա նրան, Ահա սա է մեր արքայի ցավը միակ, անդարման»:
1196. Գունտերն ասաց. «Աստված լինի թող օգնական, որ նա իր Վիշտը այդպես ասում է մեզ, բացում սիրտը անբասիր, Նրա ողջույնն ընդունում եմ ես ցնծությամբ անսահման, Զարմիկներս, իշխաններս աջակից ենք միշտ նրան»:
1197. Բուրգունդներից Գերնոտն ասաց սրտի խոսքն իր անկաշառ. «Ամբողջ աշխարհն է ողբ անում չքնաղ Հելիսի Համար, Քանզի ազնիվ ու վեհանձն էր և սիրտ ուներ նա ոսկի»:
Հագենը և այլ ասպետները հոժարվեցին այս խոսքին:
1198. Ապա խոսեց մարկգրաֆը, ազնիվ դեսպանն էթցելի. «Եթե թույլ տաք ինձ, ով արքա, ես կխոսեմ դեռ էլի, Եվ կհայտնեմ՝ ինչ է խնդրում իմ տեր արքան վշտակիր Զքնաղ կնոջ մահից հետո դժբախտ կյանքի Համար իր:
1199. Հասել են իմ տիրոջն արդեն զրույցները ձեր երկրի: Մահացել է Զիգֆրիդը: Իսկ Ձեր քույրը՝ արդ այրի. Նա ուզում է Քրիմհիլդին առնել իրեն կնության, Որ նա կրի հզոր թազը հոների մեծ տերության»:
11200. Ապա խոսեց Գունտերն հզոր (հաշվենկատ էր արքան). «Պիտի Հարցնեք Քրիմհիլդի կարծիքը մենք անպայման, Առաջիկա երեք օրում ձեզ կհայտնեմ պագորոջ՝ Կամ կընդունի առաջարկը, կամ էթցելին կասի՝ ոչ»:
1201. Մինչ այս, մինչ այն՝ պատրաստեցին լավ սենյակներ հյուրերին, Ռուդիգերը զգաց իրավ՝ այդտեղ ողջն են մտերիմ, Դա Հագենն էր նրան սիրով ծառայություն մատուցում, Մի ժամանակ Ռուդիգերն էր այդպես շահել բուրգունդցուն:

1202. Թուղիգերը մնաց մինչև երրորդ օրվա ավարտին,
Արքան իր մոտ հրավիրեց գիտուն մարդկանց՝ խորհրդի,
Եվ հարցրեց՝ ի՞նչ են կարծում մտերիմներն իր համայն,
Թե հարմա՞ր է քրոջն իրենց տան էթցելին կնության:
1203. Եվ բոլորը, Հագենից զատ, առաջարկին կողմ էին,
Բայց ասում էր Տրոնյեցին ազնվազարմ արքային.
«Պետք է մերժեք առաջարկն այդ, թե ողջամիտ եք, արքա,
Նույնիսկ եթե Քրիմհիլդը պատասխան տա դրական»:
1204. «Ինչու, — ասում էր Գուլտերը, — ընդդիմանամ ես բարուն,
Ամուսնությունն այդ գուցե թե օգուտ բերի խեղճ այրուն:
Նա իմ քույրն է, խրախուսեմ պիտի գործն այս անպայման՝
Մանավանդ, որ ես կարծում եմ մեծ պատիվ է սա նրան»:
1205. Նորից խոսեց Տրոնյեցին. «Այդպես չէիք ասի Դուք,
Թե էթցելին ճանաչեիք ինձ պես ոտքից մինչ գլուխ,
Իմացեք, Հենց ամուսնանա էթցելը Ձեր քրոջ Հետ,
Դառնալու է մեր թշնամին, բերելու է մեծ աղետ»:
1206. «Ինչո՞ւ, — հարցրեց Գուլտեր արքան, — կջանամ, որ անհարկի
Թշնամություն էթցելի Հետ ոչ մի անգամ չծագի,
Եվ մանավանդ որ մեր քույրը լինելու է նրան կին»:
Հագենն ասաց. «Ձեմ հավատում, վստահ չեմ Ձեր ասածին»:
1207. Արդ, կանչեցին վաղվադակի Գիգելհերին, Գերնտտին,
Որ այս երկու արքաներն էլ իրենց խոսքը հայտնեին,
Թե էթցելի առաջարկը պե՞տք է արդյոք ընդունեն,
Զի Հագենը չէր դադարում կտրուկ խոսել դրա դեմ:
1208. Բուրգունդներից խոսեց ջահել Գիգելհերը՝ քաջ ասպետ.
«Գոնե հիմա, Տրոնյեցի, բարի եղեք իր Հանդեպ,
Պատճառել եք Դուք շատ ու շատ վշտեր նրան անինա,
Խանգարում եք նաև հիմա, որ երջանիկ նա դառնա»:
1209. Դուք քրոջս պատճառել եք իսկապես որ շատ չարիք, —
Շարունակեց Գիգելհերը արիության շնչով լիք, —
Եվ նա բոլոր հիմքերն ունի ատելու Ձեզ ողջ Հոգով,
Ո՞վ կարող էր կնոջն այդքան վիշտ պատճառել ու ցավ, ո՞վ»:

1210. «Ասում եմ ձեզ, — Հազենն ասաց, — Ինչ Հասու է իմ մտքին, Թե էթցելին նա կին դառնա, վերադառնա նոր կյանքի, Իր վրեժը առնի պիտի, ճամփաներ կան անքանակ, Մտածենք, թե քանի-քանի ասպետ կընկնի ձեռքի տակ»:

1211. Քաջ Գերնտը տեղնուտեղը պատասխանեց Հազենին.
«Մենք չենք գնա նրանց երկիր, նրանք ապրում են քանի, Չենք տեսակցի ՔրիմՀիլդի, ոչ էթցելի Հետ երբեք, Սակայն նրանց նկատմամբ մենք միշտ Հարգալից կլինենք»:

1212. Հազենն ասաց. «Ինձ ոչ մեկը ետ Համոզել չի կարող, Եթե այրին թագն Հելիսի կրի Հանկարծ մի լավ օր, Նա մեզ ցավեր կպատճառի, եթե լինի մի առիթ, Պիտ արգելել, այդ վտանգը սպառնում է բոլորիդ»:

1213. Շատ խիստ խոսեց Գիզելհերը՝ ազնիվ որդին Ութեի.
«Մենք չենք կարող խորհուրդն անել խարդավանքի ու ստի, ՔրիմՀիլդը ինչ որ ուզի, մենք Հաճությամբ պիտ անենք, Իսկ Դուք, Հազեն, ինչ էլ խոսեք՝ նրա կողմն եմ, իմացեք»:

1214. Լսեց Հազենն ու սակվեց՝ պահած սրտում մաղձը իր:
Գերնտը և Գիզելհերը, ասպետները անբասիր, Եվ Գուևտերը՝ արքան Հզոր, եկան Հաստատ մտքին այն, Որ քրոջը դեմ չեն կանգնի, եթե լինի Համաձայն:

1215. Ասաց Գերեն. «Ես տիրուհուն Հայտնե՞մ լուրը ցանկալի, Որ նա պետք է ուրախ լինի առաջարկով էթցելի, Նա կունենա մեծ բազմություն ասպետների Հպատակ, Եվ կգտնի ՔրիմՀիլդը Հիմա գոնե սփոփանք»:

1216. Եվ քաջ Գերեն եկավ ահա իր թագուհու մոտ իսկույն:
ՔրիմՀիլդը ընդունեց ջերմ: Ասպետն ասաց տիրուհուն.
«Դուք պետք է ինձ ուրախ սրտով աչքալուսանք տաք, տիկի՛ն, Դուք կազատվեք տառապանքից՝ բախտը ժպտաց Ձեզ կրկին»:

1217. Ձեր ձեռքն ահա խնդրելու Հարսնախոսներ են եկել,
Նրանց ճամփել է Հոն արքան, որի անունն է էթցել,
Նա տալիս է Ձեզ իր սիրտը և երկիրն է տալիս Ձեզ:
Ասպետները Համաձայն են, եղբայրները ձեր՝ նույնպես»:

1218. Կինը խոսեց խիստ ընկճված. «Երկնայինը անպատճառ Ձի ներքի Ձեզ և նրանց, որ կատակներ եք անում չար ինձ նման մի թշվառի հետ: Ես ինչ պետք եմ այն մարդուն, Որ երբևէ ճաշակել է կնոջ սեր ու քաղցրություն»:
1219. Քրիմհիլդը մերժեց կտրուկ առաջարկը էթցելի, Սակայն եկան Գերնոտը և Գիզելհերն իր սիրելի, Խնդրեցին քրոջն իրենց անհուն սիրով, քնքշորեն, Թե հոժարի առաջարկին, կյանք կսկսի նա նորեն:
1220. Բայց ոչ մեկին չէր հաջողվում Քրիմհիլդին համոզել՝ Ամուսնանալ երկրորդ անգամ, գտնել նոր կյանք ու նոր սեր: Ապա նրան խնդրեցին ասպետները սրտաբեկ.
«Կամքը Ձերն է, գոնե մի պահ Ռուդիգերին ընդունեք»:
1221. «Ես կընդունեմ նրան, — ասաց Քրիմհիլդը խոսքի հետ, — Եվ կուզեմ սիրով տեսնել մարկգրաֆին քաջ ասպետ, Թե մեր երկիր նա չլինեք եկած իբրև պատվիրակ, Հավատացեք, ուրիշ մեկի չէի ընդունի հարկիս տակ»:
1222. Եղբայրներին ասաց. «Թող նա առավոտյան դա իմ տուն, Ցանկանում եմ լսել նրան, ազնվասիրտ այդ մարդուն, Ինչ ասացի ձեզ, ուզում եմ անձամբ նրան հաղորդել»:
Եվ վշտահար կնոջ սրտից ցավը կրկին դուրս հորդեց:
1223. Բարի ասպետ Ռուդիգերը ևս այլ բան չէր ուզում, Քան հենց տեսնել թագուհուն, որ իր այցը չանցնեք զուր, Իմաստուն էր Բեխլարեցին ու եռանդուն անսպառ, Կարծում էր, որ կհամոզի Քրիմհիլդին անպատճառ:
1224. Մյուս օրը առավոտյան՝ ժամերգության ավարտին Դեսպանները եկան: Այնտեղ իրարանցում էր կարգին, նրանք, որ պիտ Ռուդիգերի հետ գնային արքունիք, Հագել էին ճոխ հանդերձներ, տեսք ունեին գեղեցիկ:
1225. Ազնիվ տիկին Քրիմհիլդը սգի մեջ իր սուզված խոր՝ Մարկգրաֆին՝ սուրհանդակին սպասում էր մտախոհ, Քրիմհիլդն իր ամենօրյա հագուստով էր անպաճույճ, Մինչդեռ տիկնանց հանդերձները ճոխ էին ու վայելուչ:

1226. Քրիմհիլը գնաց դեպի դուռը նրանց ընդառաջ
Եվ ընդունեց դեսպաններին ջերմ ժպիտով, բարեհաճ,
Ռուդիգերը ունեւր իր Հետ տասներկու մարդ ուղեկից,
Որոնք այրուև ողջունեցին կնամեծար, Հարգալից:
1227. Խնդրեցին դեսպան եկած ասպետներին, որ նստեն,
Ազնվասիրտ մարկգրաֆներ էքեվարտը և Գերեն
Կանգնած էին թագուհու մոտ՝ գորովանքով սիրառատ,
Տանտիրուհու Հանդեպ բոլորն զգում էին պատկառանք:
1228. Հյուրերն այնտեղ տեսան նստած բազում տիկնանց աննման,
Մինչ տիրուհուց լսում էին խոր հառաչներ հոգեհան,
Զգեստի լանջն ամբողջովին տաք արցունքից դեռ թաց էր,
Երբ տեսավ դա մարկգրաֆը, ազնիվ սիրտը զգացվեց:
1229. Խոր Հարգանքով դեսպանն ասաց. «Ազնվասիրտ թագուհի,
Խնդրում եմ, ինձ և իմ մարդկանց, որ Հետս են, ուղեկից,
Թույլ տվեք Ձեզ ողջունելու, Ձեզ՝ տիկնոջն փառահեղ,
Եվ Հայտնել այն, ինչի Համար որ եկել ենք մենք այստեղ»:
1230. «Թույլ եմ տալիս, — ասաց նրան թագուհին շատ սիրալիր, —
Ինչ ուզում եք ինձ Հաղորդել՝ ես կլսեմ ուշադիր:
Խոսեք, քանզի Դուք պատվարժան մարդ եք, ասպետ Ռուդիգեր»:
Տեսան մարդիկ իրենց աչքով, թե նա որքան տխուր էր:
1231. Ասաց իշխան Ռուդիգերը՝ Բեխլարենցին Հարգալից.
«Ով տիրուհի, ես բերել եմ Հզոր արքա էթցելից
Վստահության մեծ ողջուններ Ձեզ և երկրին այս Համայն:
Ուղարկել է նա մեզ, որ Ձեր ձեռքը խնդրենք իր Համար:
1232. Մեծ գորովով խոստանում է նա Ձեզ սերն իր ճշմարիտ,
Պատրաստ է Ձեզ տալ ջերմություն, Հավատարիմ լինել միշտ,
Ինչպես եղել էր Հելխեին, երբ ապրում էր դշխոն դեռ,
Իր տիկնոջից Հետո այնքա՛ն տանջանք տարավ արքան մեր»:
1233. Ապա ասաց Քրիմհիլը. «Ով մարկգրաֆ Ռուդիգեր,
Թե որևէ մեկն իմանար իմ ցավերը կարեվեր,
Ինձ չէր խնդրի, որ տամ սերս մեկ ուրիշին ես կրկին,
Զի կորցրել եմ ես այն գանձը, ինչ կտենչար ամեն կին»:

1234. «Ինչն է կարող ցավն ամոքել, — ասպետն ասաց բարեսիրտ, —
 Եթե ոչ սերն աստվածային, սերը հզոր, ճշմարիտ,
 Երբ ընտրում ես նրան, ով որ արժանի է քո սիրուն,
 Հավատացե՛ք ինձ, Թագուհի, այդ է ուղին լավագույն»:
1235. Կերջանկացնի Ձեզ իմ տիրոջ սերը ազնիվ, անապակ,
 Տասներկու թագավորներ կլինեն Ձեզ Հպատակ,
 Եվ Հնազանդ կլինեն Ձեզ սեզ իշխաններ երեսուն,
 Որոնց Հաղթել, նվաճել է էթցել արքան դյուցազուն»:
1236. Դառնալու եք դուք թագուհի ազնվագույն այն մարդկանց,
 Որ Հպատակն էին այնժամ իմ տիրուհուն ողորմած,
 Նմանապես շատ-շատ տիկնայք, բարձրատոհմիկ, աննվաճ,
 Կլինեն Ձեր կամքին հլու», — մարկգրաֆը ասաց քաջ»:
1237. «Դրանից զատ, իմ տերն ասաց, որոշել է անպատճառ,
 Եթե դեմ չեք՝ թագը կրել Դուք նրա Հետ Հավասար,
 Ունենալ մեծ իշխանություն Հելխեի պես լուսանուն,
 Դուք կլինեք արքունիքի տիրակալը բարձրագույն»:
1238. Այսպես ասաց Քրիմհիլդը. «Ինչպես, ասեք, ես կրկին
 Կարող եմ նոր բախտ որոնել, այդ Հերոսին դառնալ կին,
 Զիգֆրիդի մաճը դաժան ինձ տվել է ցավը այն,
 Որ ստիպված տանելու եմ մինչև մաճ ու գերեզման»:
1239. Բայց խոսնայրը շարունակեց. «Արքայուհի թանկագին,
 էթցելի Հետ ապրելու եք խնդություն մեջ ու փառքի,
 Կպարզե՛ք Ձեզ անընդհատ ուրախություն և մեծ սեր,
 Քանզի հզոր կայսր է նա, ունի անթիվ Հերոսներ»:
1240. Երբ Հելխեի նաժիշտները և Ձեր կույսերն ապաքեն
 Միաձուլվեն իրար սիրով և շքախումբ մի կազմեն,
 Դա անպատճառ նոր ուժ կտա ասպետաց մեր անվեհեր,
 Տիրուհի, թույլ տվե՛ք ասել, որ Հենց այդ է կյանքը Ձեր»:
1241. Պատասխանեց Քրիմհիլդը պատշաճությամբ թագուհու.
 «Մինչև վաղն ինձ Հանգիստ թողե՛ք, ապա եկե՛ք Դուք կանուխ,
 Ես Ձեզ կասեմ, Դուք կիմանաք, թե իմ սրտում ինչեր կան»:
 Եվ դուրս եկան ապարանքից դեսպանները Հոնական»:

1242. Դեսպանները դարձան իրենց կացարանը վերստին,
Գիզելհերին՝ իր եղբորը կանչեց ազնիվ թագուհին,
Նաև՝ մորը: Ու նրանց մոտ բացեց սիրտը իր մռայլ,
Որ ինքը լուկ մեկ հոգս ունի՝ Զիգֆրիդի համար լալ:
1243. Եղբայրն ասաց. «Սիրելի քույր, ես լսեցի Հրճվանքով,
Թե ուզում է էթցել արքան ողջ տանջալի ցավը քո
Մոռացության տալ առհավետ, թե կնության առնի քեզ:
Առաջարկը ընդունելով՝ կարծում եմ ճիշտ կվարվես»:
1244. Շարունակեց Գիզելհերը. «Շատ բան կտա քեզ Հաստատ:
Ռոնայից մինչ Հոենոս, էլբայից մինչ ծովն անհայտ
էթցելինն է, դրանից մեծ երկիր չկա աշխարհում:
Դու կարող ես ուրախ լինել, որ նա հենց քեզ է ընտրում»:
1245. Քույրը ասաց. «Ինչո՞ւ ես դու այդ խորհուրդը ինձ տալիս,
Արտասուքը և վիշտը խոր ավելի են մոտ սրտիս,
Ինչպես դուրս գամ մարդկանց աչքին ես այս տեսքով խայտառակ,
Կին եմ եղել ես զեղեցիկ, բայց դարձել եմ ավերակ»:
1246. Բայց Ութեի խոսքն աղջկան սիրով լի էր, հոգածու.
«Աղջիկս, ինչ խորհուրդ կտան եղբայրներդ՝ արա դու,
Լսիր խոսքը մոտիկներիդ և մոռացիր ախուժախ,
Ինչքան երկար ժամանակ է, քեզ չեմ տեսել ես ուրախ»:
1247. Քրիմհիլդը աղաչում էր, կանչում Աստծուն օգնության,
Որ ունենա նորից անթիվ ոսկի, արծաթ, շորեր թանկ,
Ինչպես հնում, երբ ապրում էր ամուսինը քաջարի,
Բայց այդպիսի երջանիկ պահ նա երբեք էլ կապրի»:
1248. «Սակայն ինչպե՞ս ես կարող եմ հեթանոսին դառնալ կին,
Իմ հավատը ինձ թույլ չի տա, — Հիշեց հուզված տիրուհին, —
Թե չէ ամբողջ կյանքում պիտի հոգիս լինի խոռովված,
Եթե նա ողջ աշխարհն էլ տա, համաձայն չեմ, էն Աստված»:
1249. Գիշեր ի լույս այդ խնդիրը մնաց այդպես անվճիռ,
Մտածմունքով անցկացրեց անկողնու մեջ տիկինն իր,
Եվ երեսը նրա շողուն արցունքով էր ողողված,
Մինչև որ վաղ առավոտյան պատարագի նա գնաց:

1250. Ժամերգության ժամանակ Հենց եղբայրները մոտ եկան,
Սկսեցին ՔրիմՀիլդին նրանք նեղել բավական,
Խորհուրդ էին տալիս, որ Հոն թագավորին դառնա կին,
Բայց փարատել վիշտը այրու չհաջողվեց ոչ մեկին:
1251. Կանչեցին, որ գան էթցելի դեսպանները Հարգարժան,
Որոնք փութով ուրախությամբ շուտով եկան տեղ Հասան,
Ռուդիգերը պալատ մտավ մտքերի մեջ անորոշ.
Ի՞նչ պիտ ասեր ՔրիմՀիլդը, մերժելո՞ւ էր նա, թե՛ ոչ:
1252. Ապա Հայտնեց մարկգրաֆը, որ ըստ կամքի էթցելի
Պետք է արագ ՔրիմՀիլդի պատասխանը տեղ Հասցնի,
Եվ որ արդեն տուն դառնալը ճիշտ կլինեիր, քանի որ
Ճամփաները երկար են մինչ իր երկիրը Հեռավոր:
1253. Եվ սկսեց խնդրել ասպետն ազնվագույն տիրուհուն,
Ձէ՞ որ պետք է իրեն Հայտնի, թե նա ինչ է վճռում,
Որ Հաղորդի իր արքային՝ սպասումով անհանգիստ,
Բայց ասպետը ՔրիմՀիլդից կրկին լսեց մերժում խիստ,
1254. Թե այլևս չի ցանկանում ինքն ամուսին ունենալ:
Մարկգրաֆը ասաց նրան. «Օ, կլինեիր դա սխալ,
Ջուր տեղը մի սպառեք Ձեր հրապույրը երկնային,
Դուք կարող եք ուզած մարդու բախտ շնորհել, թագուհի»:
1255. Ամեն խնդրանք իզուր անցավ, Ռուդիգերը մինչև որ
Չասաց թաքուն, թե ինքն անձամբ կհատուցի իր ձեռքով
Այն ամենի Համար, ինչ որ նրան բերեց այդքան ցավ:
Այս խոսքերից ՔրիմՀիլդի վիշտը փոքր-ինչ մեղմացավ:
1256. Ռուդիգերը ասաց նրան. «Արցունքները թողեք Ձեր,
Թե Հոների երկրում Հզոր չունենայիք օգնող ձեռք՝
Ինձանից, իմ ասպետներից, ընկերներից իմ բացի,
Միևնույն է, ես կառնեի վրեժը Ձեր այս լացի»:
1257. Էլ ավելի ՔրիմՀիլդի վիշտը դարձավ մեղմ ասես:
Ասաց. «Դուք ինձ երդվո՞ւմ եք արդ, որ կլուծեք վրեժս,
Թեկուզ Հայտնի ասպետ լինի, ասացեք, չե՞ք երկնչի»:
Մարկգրաֆը ասաց. «Դրան պատրաստ եմ, չեմ նահանջի»:

1258. Եվ ողջ խմբով Ռուդիգերը երգում տվեց թագուհուն՝
Միշտ ծառայել Հավատարիմ և էթցելի մեծ երկրում
Նրան կյանքում ոչ մի անգամ ոչ մի բանում չմերժել:
Եվ ի նշան իր երգումի՝ բարձրացրեց ձեռքը վեր:
1259. Մի պահ խորհեց այրին. «Ընտիր քաջեր թե ունենամ Համախոհ,
Շատ բանի եմ ես հասնելու, իսկ չարակամ մարդիկ թող
Բամբասեն ինձ որքան իրենց սիրտն է ուզում, ինձ ինչ փուլթ,
Զիգֆրիդիս վրեժն անհազ այսպես կառնեմ շուտափուլթ:
1260. Թե էթցելը ունի այդքան շատ ասպետներ անվանի,
Կիսնդրեմ նրան, որ ինչ ուզում եմ ես, նա անի:
Բացի այդ նա հարուստ է շատ, ընծա կտամ սրտաշահ:
Ողջ գանձերս հափշտակեց Տրոնյեցին դրուժանք»:
1261. Ապա ասաց Ռուդիգերին. «Այ, եթե ինձ լուր տային,
Որ էթցելը Հեթանոս չէ, պիտ սիրով ձեր արքային
Դառնայի կին ու գնայի թեկուզ ծայրը աշխարհի»:
Մարկգրաֆը պատասխանեց. «Օ, մի ասեք, տիրուհի,
1262. Նրա երկրում Հիմա այնքան քրիստոնյա ասպետ կա,
Որ դուք երբեք հայրենիքի կարոտն այնտեղ չեք զգա,
Հավանաբար Ձեզ հաջողվի մկրտելու արքային,
Առանց դուլյոն-ինչ երկմտելու մեծն էթցելին դարձեք կին»:
1263. Եվ ասացին եղբայրները. «Համաձայնիր, Քրիմհիլդ,
Մի օր պիտի վերջը տեսնենք տառապանքիդ ու վշտիդ»:
Նրանք երկար խնդրում էին, մինչև որ նա ի վերջո
Համաձայնեց մեծ էթցելի կինը լինել և դշխոն:
1264. «Համաձայն եմ,— այրին ասաց,— ես՝ թագուհիս տարաբախտ,
Եվ գալիս եմ Ձեզ հետ հեռու հողը էթցել կայսեր հաղթ,
Բայց նախ պետք է ես հավաքեմ ուղեկիցներ անձնվեր»
Եվ ի նշան հավաստումի նա իր ձեռքը պարզեց վեր:
1265. «Եթե Դուք լուկ երկուսն ունեք, ապա ես՝ ճիշտ Հինգ Հարյուր,—
Ասաց ազնիվ մարկգրաֆը,— լավ կլինի, Ֆրաու,
Մենք ինքնհրս անցկացնենք Ձեզ Հոննոսն ու գնանք,
Ձեմ ուզում էլ Բուրգունդիայում վատնեք իզուր ժամանակ:

1266. Հետս ունեմ ծառաներ շատ և զինվորներ հինգ Հարյուր,
Որ պետք է Ձեզ ծառայեն միշտ, այստեղ, տանը, ամենուր:
Տիրուհի, թե ցանկանաք՝ ես պատրաստ եմ Ձեր ձեռքի տակ,
Իմ խոստումը կկատարեմ կամ պատիվ, կամ ամոթանք:
1267. Հրամայեք՝ Ձեր նժույգին դնել իսկույն թամբ ու սանձ,
Ձեք զղջալու, որ հետևեք իմ խորհուրդին Դուք սրտանց
Եվ ասեք Ձեր աղջիկներին, սիրուններին Ձեր հետի,
Որ դալու է մեզ ընդառաջ ասպետների խումբ ընտիր»:
1268. Նրանք նաև շատ ունեին թամբի ընտիր կտորներ,
Որ օրերից Ջիզֆրիդի սնդուկներում կային դեռ,
Շատերն էին ուզում մեկնել թագուհու հետ անմաման,
Հե՛յ, ինչ սիրուն թամբեր էին զուգել կանանց Համար այն:
1269. Որ նախկինում Հագնում էին զգեստներ ճոխ, գերազանց,
Ճիշտ այդպիսիք ճամփի Համար բաժանեցին շատ կանանց,
Էթցելի մեծ ունեցվածքի մասին լսել էին շատ,
Եվ բացվեցին սնդուկները, որ փակ էին մինչև այդ:
1270. Ձորս ու կես օր զարդարվեցին նաժիշտները թագուհու,
Փնտրում էին սնդուկներում, Հարկավորը դուրս հանում,
Ապա բացեց Քրիմհիլդը՝ ինչ որ ուներ թանկ պահուստ,
Ջի ուզում էր Ռուդիգերի մարդկանց ընծա տալ Հարուստ:
1271. Նիբելունգի երկրից դեռ նա ոսկի ուներ բավական
Եվ ուզում էր առատորեն հոների հետ կիսել այն,
Դա երևի վեց Հարյուր ձի դժվարությամբ տանեին:
Լուրը եկավ բերնբերան ընկավ ականջն Հագենի:
1272. Հագենն ասաց. «Քրիմհիլդը ինձ ատում է կարեվոր,
Ուստի ոսկին չեմ տա, թաքուն պիտի մնա երկրում մեր,
Ինչու թողնեմ այդչափ ոսկին ընկնի ձեռքն իմ թշնամու,
Քանզի գիտեմ Քրիմհիլդը ողջ տալու է քամուն:
1273. Երբ հոները տանեն ոսկին, ապա հաստատ ես գիտեմ,
Որ կցրի գանձը հսկա ի հակառակ, դես ու դեռ,
Սակայն նրանք չուենն այնքան ձի, որ բարձեն ողջ ոսկին:
Քրիմհիլդին հաղորդեք, որ չեմ տա ոսկին ոչ ոքի»:

1274. Քրիմհիլդը լսեց դա, և շատ վշտացավ սիրտը հեզ,
Այդ իմացան նաև արքան, եղբայրները իր երեք:
Նրանք սրտանց ուզում էին կանխել արարքն այդ խարդախ,
Երբ չստացվեց, Ռուդրիգերը տիկնոջն ասաց շատ ուրախ.
1275. «Ով թագուհի, ոսկու կորուստն անչափ ծանր եք Դուք տանում,
Էթցել արքան ոսկի ունի անչափելի, անհատնում,
Երբ Դուք կանգնեք նրա առաջ, նա Ձեզ կտա ավելին,
Որ չեք կարող ծախսել երեքք Ձեր ողջ կյանքի օրերին»:
1276. Ասաց նրան Քրիմհիլդը. «Ազնիվ ասպետ Ռուդրիգեր,
Ավելի շատ ոսկի ոչ մի թագուհի չի ծախսել դեռ,
Քան այն, ինչը գողացել է Հագենն ինձնից դրուժան»:
Ապա եկավ նրա եղբայր քաջ Գերնտը գանձարան:
1277. Թագավորի իրավունքով բացեց դուռը գանձատան,
Քրիմհիլդի ոսկին Հորդեց դռնից, ինչպես գետ ելման,
Դա երեսուն Հազար մարկ էր կամ էլ նույնիսկ ավելի,
Որն Հյուրերին տրվեց իսկույն: Դա սրտովն էր Գունտերի:
1278. Գոտելիդի ամուսինը՝ Ռուդրիգերն ասաց արդ.
«Եթե կրկին իմ տիրուհուն վերադարձվի ամենն այդ,
Որ բերվել է Նիբելունգի երկրից մի օր Բուրգունդիա,
Ոչ ես, ոչ էլ թագուհին իմ չենք կպցնի ձեռք դրան:
1279. Մեզ բնավ էլ ոսկի պետք չէ, ասեք՝ տանեն և պահեն,
Ես բերել եմ առատ ոսկի ինձ հետ Հոնաց երկրից շեն,
Ճամփի Համար մենք այդ ոսկուց Հրաժարվում ենք սրտանց,
Որովհետև մեր ծախսերը Հոգացված են գերազանց»:
1280. Մինչ այդ լցրին Քրիմհիլդի աղջիկները փութաջան
Տասնեերկու սնդուկ ոսկի՝ ո՞վ կուեննար գանձ այդքան:
Վերցրեցին դա իրենց հետ, նաև անթիվ գուգա ու զարդ,
Ճամփի Համար իրենց երկար, որ կրեին լիառատ:
1281. Նրան շատ էր վախեցնում Տրոնյեցու ուժն անարգ,
Ընծայելու Համար նա դեռ մտոր ունեի Հազար մարկ,
Որ բաժանեց իր սիրելու Հոգու Համար անխնա,
Ռուդրիգերը Հասկացավ, թե ինչ նվիրված կին է նա:

1282. Կանչեց դշխո Քրիմհիլը. «Մոտիկներս ուր են արդ,
Որ Հանուն ինձ օտար երկիր ուղևորման են պատրաստ,
Թող գան ինձ մոտ և վերցնեն ոսկի, որքան որ կուզեն,
Եվ պատրաստեն իրենց Համար Հանդերձներ ու ասպազեն»:
1283. Մարկգրաֆը՝ էքեվարտը, պատասխանեց Թագուհուն.
«Այն օրերից, երբ ինքս Ձեզ ծառայություն եմ անում,
Եղել եմ միշտ Հավատարիմ և անձնվեր անսահման,
Մինչև մահս էլ կծառայեմ Ձեզ՝ Թագուհիս աննման»:
1284. Եվ ես պիտի վերցնեմ ինձ Հետ ասպետների Հինգ Հարյուր,
Որ պատրաստ են սրտով, մտքով ծառայել Ձեզ ամենուր,
Կբաժանի չախարհում լոկ ամենահաղթ մահը մեզ»:
Քրիմհիլը լուռ խոնարհվեց, պարտ էր վարվել նա այդպես:
1285. Ապա բերին նժույգները՝ պիտ ընկնեին ճանապարհ,
Հալիս էին ամենուրեք Հարազատներն Հոգատար,
Խոր տիրություն կար դեմքերին մայր Ութեի ու տիկնանց,
Քրիմհիլը շուտով նրանց մնաս բարովն իր ասաց:
1286. Քրիմհիլը վերցրեց իր Հետ Հարյուր չքնաղ աղջիկներ,
Որ հազած ու զուգված էին այնպես, ինչպես որ Հարկն էր,
Արցունքները Հոսում էին նրանց աչքից շողշողուն,
Նրանք ուրախ օրեր տեսան նաև Հոնաց շեն Հողում:
1287. Եկան Գերնոտ և Գիզելհեր եղբայրները սիրասուն,
Շքախմբով, տեղը տեղին, ինչպես վիպասքն է ասում,
Ուզում էին ճամփու ղենել քրոջն իրենց Հարազատ,
Եվ նրանց Հետ գնում էր մի ասպետների Հազարյակ:
1288. Արագատոք Գերեն եկավ, Օրտվինն էլ այնտեղ կար,
Հրաժեշտին բացակա չէր և Ռումոլտը՝ խոհարար,
Արշավեցին մինչև Դանուբ առանց Հանգիստ ու կանգի,
Իսկ Գունտերը գնաց մինչև դարպասները քաղաքի:
1289. Հոենոսից բաժանվելով՝ ուղարկեցին շատ արագ
Դեպ Հոների երկիրը վարժ ու սրընթաց սուրհանդակ,
Որ պետք է լուր տար էթցելին՝ Ռուդիգերը քաջ ասպետ,
Ժամանում է ահա շուտով, և՛ Թագուհին նրա Հետ:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Թե Ինչպես ՔրիմՀիլը մեկնեց Հոնբրի երկիր

1290. Դեսպաններին թողնենք գնան, իսկ մենք պատմենք այն մասին, Թե Ինչպես էր օտար երկիր ճամփա գնում թագուհին, Թե Ինչպես գույգ եղբայրները բաժանվեցին նրանից, Որ քույրն իրենց կրկին չզգա ոչ տիրութուն, որ թախիծ:
1291. Նրանք Հասան Դանուբ գետին, Պֆորինգին շատ մոտիկ, Ճամփողները ուզում էին վերադառնալ Հայրենիք Եվ խնդրել սկսեցին թագուհուն՝ տա Հրաման: Հնարավոր չէր բաժանվել առանց լացի և Հուզման:
1292. Ազնվասիրտ Գիզելհերը դիմեց քրոջն ու ասաց. «Քույր իմ, եթե դու երբևէ զգաս կարիքն իմ Հանկարծ, Իմաց արա ինձ անպայման, թեկուզ ինչ էլ որ լինի, Ես կՀասնեմ քեզ օգնության, կգամ երկիրն էթցելի»:
1293. Եվ Համբուրեց ՔրիմՀիլը շրթունքները մոտ մարդկանց, Ես տեսա, որ բաժանվեցին ինչ սիրալիր ու սրտանց Բուրգունդները Թուրիգերի չքախմբից մեծքանակ: Գնում էին թագուհու Հետ Հավատարիմ շատ տիկնայք՝
1294. Թվով Հարյուր և չորս: Նրանց Հագուստները ակնաթով Կարված էին թանկ կտորից՝ ընդելուզված ազաթով, Արդ, թագուհուց բաժանվեցին բազում փայլուն ասպետներ, Որոնց ջերմ սիրտն ու Հայացքը ամբողջ ճամփին իր Հետ էր:
1295. Խումբը ճամփան շարունակեց Բավարիայով դեպի վար, Ասքն ասում է՝ Հասան նրանք շատ շուտով մի օտար վայր, Ուր կանգնած է Հսկա մի վանք, վեհատես ու սեպվուն, Եվ Ինն գետը Հենց այդ տեղում Դանուբին է խառնվում:
1296. Պասաուում եպիսկոպոսն էր Պիլգրիմը բանիբուն: Դատարկվեցին օթեաններ, իշխանական Հարկ ու տուն, Ջի գուրս եկան բավարացիք՝ թանկ Հյուրերին ընդառաջ, Անդ Հանդիպեց Պիլգրիմը իր զարմուհուն սրտաՀաճ:

1297. Իզուր չէին բավարացիք նրանց տեսնել շտապում,
 Ինչքան չքնաղ կին ու աղջիկ նրանք տեսան այդ խմբում:
 Ողջույն էին տալիս նրանց իշխանները տեղացի՝
 Պատրաստ նրանց օթևան տալ, հրավիրել ճոխ հացի:
1298. Մինչ թագուհու հետ ճամփին էր Պիլգրիմը տակավին,
 Պասառ ողջ քաղաքն արդեն գիտեր լուրը այն մասին,
 Որ գալիս է վանականն իր զարմուհու հետ աննման:
 Եվ մեծամեծ, վաճառական պատրաստվեցին հանդիպման:
1299. Երբ բարեսիրտ Պիլգրիմը խնդրեց՝ մնան այդ գիշեր,
 էքեվարտը պատասխանեց. «Պիտի գնանք ճամփան մեր,
 Գնանք պիտի, Ռուդիգերի երկիրն հասնենք անպայման,
 Բեխլարենում վաղուց արդեն պահում են արդ մեր ճամփան»:
1300. Եվ գեղեցիկ Գոտելինդը սպասում էր, արդարև,
 Ու նրա հետ պատրաստվում էր դատրիկը իր նաև,
 Մարկգրաֆը լուր էր տվել իր կնոջը գեղանի,
 Որ թագուհի Քրիմհիլդին հատուկ շուքով ընդունի՝
1301. Իր մարդկանց հետ շարժվելով էնս գետի կողմ՝ ճամփով հին:
 Եվ երբ պատրաստ էր ամեն ինչ, ճամփա ընկավ տիրուհին,
 Ճամփաները եռում էին մարդկանցից, որ թև առած՝
 Ոտքով, ձիով գալիս էին թանկ հյուրերին ընդառաջ:
1302. Իսկ մինչև այդ Քրիմհիլդը հասավ արդեն էֆերդինգ,
 Բավարիայում ապրում էին անհնազանդ շատ մարդիկ,
 Կողոպտուր Ճամփաներին սովորույթ էր այնտեղ հին,
 Կարող էին նրանք հանգիստ թալանել թանկ հյուրերին:
1303. Բայց Ռուդիգերի մեջքն ամուր էր Բավարիայով անցնելիս,
 Նա հետն ունեւր հազար ասպետ և մի քիչ էլ ավելի,
 Նրանց հասավ նաև շուտով ազնիվ կինը մարկգրաֆի,
 Եվ նրա հետ հպարտ երթով՝ շատ ասպետներ կորովի:
1304. Եվ Թրաուն գետն անցնելով՝ էնս լեռան մոտ դուրս եկան,
 Որտեղ տեսան խփված ճամբար՝ կացարաններ ու վրան,
 Կարող էին նրանք գիշերն այդտեղ իրենց հանգիստ տալ,
 Այդ ամենը պատրաստել էր մարկգրաֆը հոգատար:

1305. Ելավ ահա հպարտորեն՝ Բրիմհիլդին հանդիման
Գեղեցկատես Գոտելիսդը՝ նժույգ հեծած աննաման,
Շեփորների, թմբուկների ձայնն հասնում էր ամենուր:
Եվ ցնծում էր մարկգրաֆի սիրտը խինդով մի անլուր:
1306. Ճանապարհի երկու կողմից գալիս էին նրա հետ
Անթիվ քաջեր ու ասպետներ՝ հանդիսությամբ երկղջերթ,
Ապա տիկնանց ցույց տվեցին բազուկն իրենց ամբակուռ,
Ուզում էին սիրտը շահել իրենց նորեկ թագուհու:
1307. Եվ բռնկվեց գուպարը խոլ ասպետների զույգ տիկնանց,
Ու երբ իրար զարկում էին հերոսները տաքացած,
Փչում էին թափով իրենց գենք ու ասպար պողպատե,
Զքնաղ տիկնանց ջերմ հայացքից նրանց եռանդն էր պատել:
1308. Երբ ավարտվեց զինախաղը, ամեն կողմից լավեցին
Ջերմ մաղթանքի խոսքեր անկեղծ և ողջույններ ցնծազին,
Գնաց չքնաղ Գոտելիսդը Բրիմհիլդին ընդառաջ,
Ու երկուսն էլ գնում էին՝ ասպետներին շուրջն առած:
1309. Մարկգրաֆը նժույգն ուղղեց դեպ սիրելի տիկինն իր,
Որն ուրախ էր ու երջանիկ, որ տեսնում էր քաջընտիր
Իր ամուսնուն՝ վերադարձած Հոենստից անվնաս,
Եվ Հոգսերը նրա բոլոր ցնդել էին հանց երազ:
1310. Եվ պատվիրեց մարկգրաֆը իր տաքարյուն ասպետաց,
Որ օգնեին տիկիններին՝ նժույգներից իջնեն ցած,
Այս պատվերը ասպետների սիրտը լցրեց ուժ, կորով,
Քանզի պատրաստ էին նրանց ծառայելու ողջ Հոգով:
1311. Ապա տեսավ Բրիմհիլդը՝ իր տիկնանց հետ ընտրանի
Գոտելիսդը կանգնեց, ահա, որ թագուհուն ընդունի:
Զգեց սանձը ոսկեերիզ, և նժույգից գեղաթամբ
Իջավ ներքև տանտիրուհին՝ ասպետների օգնությամբ:
1312. Եպիսկոպոսն էքեվարտի հետ մոտեցավ թագուհուն,
Տարան դեպի Գոտելիսդը, որից լույս էր ճառագում,
Կանգնածները բացում էին նրանց առաջ ճանապարհ,
Եվ համբուրեց օտարուհին Գոտելիսդին քնքշաբար:

1313. Եվ տիկինը Ռուդիգերի ասաց խոսքեր մեղմանուչ.
«Ազնվագուշյն իմ թագուհի, բախտավոր եմ, աչքս լույս,
Որ մեր երկրում տեսնում եմ Ձեզ աչքերովս սեփական:
Նման առիթ ինձ չի եղել կյանքում դեռ ոչ մի անգամ»:
1314. Քրիմհիլը ասաց. «Տերը Ձեզ հետ, ազնիվ Գոտելինդ,
Իսկ քանի ես կենդանի եմ, կպարգևեմ Ձեզ լոկ խինդ,
Եվ քանի կա ամուսինս՝ որդին հզոր Բոթլունգի»:
Ավաղ, նրանք չգիտեին մութ խաղերը գալիքի:
1315. Ողջունելու համար միմյանց տիկնայք իրար մոտ եկան,
Նրանց պատրաստ էր ծառայել ինչքան ասպետ կար ներկա,
Ապա տիկնայք դադար առան մարգագետնում՝ լեռան մոտ,
Ովքեր ճանաչ չէին մինչ այդ, հիմա դարձան լավ ծանոթ:
1316. Տանտերերը պատրաստվեցին տիկնանց գինի մատուցել,
Իսկ կեսօրին նրանք կրկին հեծան ճիերն ազնվացեղ,
Եվ գնացին, որ ընդարձակ վրաններում հանգչին քիչ՝
Ազատելով տապից իրենց մարմինները հմայիչ:
1317. Գիշերը լավ հանգստացան, որ առավոտ վաղ մեկնեն,
Ապա գնաց մարկգրաֆը իր հայրենի Բեխլարեն,
Այդ եռանդուն մարդն ուզում էր տեսնել աչքով սեփական,
Թե հյուրերի համար, արդյոք, պատրաստե՞լ են ամեն բան:
1318. Բաց էր այնտեղ ապարանքի ամեն դուռ ու պատուհան,
Ուրախ էին ընդունելու եկվորներին պատվարժան,
Ապա եկան հյուրերը, և սահման չկար հրճվանքին:
Ազնիվ ասպետ Ռուդիգերը չէր մոռանում ոչ մեկին:
1319. Նրա դուստրն ապա ելավ նաժիշտներով հատընտիր,
Եվ ընդունեց Քրիմհիլը նրան անչափ սիրալիր:
Այնտեղ էր և նրա մայրը՝ Գոտելինդը աննման,
Իսկ օրիորդներն ընդունվեցին սրտակցությամբ անսահման:
1320. Եվ գնացին նրանք ուրախ, միմյանց արած թեանցուկ,
Մի ընդարձակ դահլիճ մտան՝ կահավորված, պերճաշուք,
Պատուհանի տակ խշշում էր Դանուք գետը մուկեփին:
Հանգիստ առան նրանք էնտեղ անդորրի մեջ, վայելքի:

1321. Չեմ կարող ես պատմել հիմա, թե ինչ եղավ այդուհետ.
Քրիմհիլդի սասկետները սկսեցին իրար հետ
Տրտնջալ, թե շտապում են, շտա երկար է դեռ ճամփան,
Լե՛յ, ինչ ընտիր ուզմիկներ Բեխլարենից դուրս եկան:
1322. Մարկզրաֆը հյուրերի հետ եղավ անչափ սիրալիլ,
Քրիմհիլդն էլ նրա դստերն ընծա տվեց այ կարմիր
Տասնեերկու ապարանջան և զգեստներ ցանկալի
Այն լավերից, որ տանում էր իր հետ երկիրն էթցելի:
1323. Նիբելունգյան ոսկին թեև թալանված էր թագուհուց,
Բայց ով նրան այցելում էր, իբրև սիրո ապացույց,
Նվիրում էր, ինչ որ ուներ, մտում շուայլ ու շենշող:
Բեխլարենցի տիկնանց նույնպես նա ընծաներ տվեց ճոխ:
1324. Գոտելինդը նմանապես իր հյուրերին ցույց տվեց
Հյուրամեծար, թանկ պատիվներ՝ ընծաներով փոքր ու մեծ,
Որ բուրգուեղցի սասկետները գտնում էին հազվագյուտ՝
Լիններ նրա ընծան տված գոհարեղեն, թե հագուստ:
1325. Նախաճաշից հետո փոքրիկ ժամն էր արդեն, որ նրանք
Պատրաստվեցին հրածեշտի: Գոհության հետ և հարգանք
Հրաշագեղ Գոտելինդին հայտնեց տիկինն էթցելի՝
Համբուրելով նաև չքնաղ դստրիկին իշխանի:
1326. Եվ թագուհուն օրհորդն ասաց. «Ես լավ գիտեմ, տիրուհի,
Թե դեռ ինչ է կատարելու իմ հայրիկը սիրելի.
Նա կուղարկի ինձ անպայման Ձեզ մոտ՝ պալատն էթցելի»:
Եվ թագուհին ասաց՝ նրան միշտ հովանի կլինի:
1327. Ձիերն արդեն պատրաստ էին, որ ընկնեին ճանապարհ,
Եվ հրածեշտ տվեց դշխոն տանտերերին հյուրընկալ,
Ռուդիգերի տիկնոջը նախ և դստերը մանկամարդ:
Բաժանվեցին նրանք անկեղծ մաղթանքներով սիրառատ:
1328. Այդ օրվանից հետո նրանք էլ միմյանց չտեսան:
Ճամփորդները հաջորդ օրը Մելք դոյապին մոտեցան,
Հեղվեց այնտեղ ազնիվ գինին դավաթներում ոսկեգուլն՝
Ճամփի վրա հենց մաղթելով բարի գալուստ թագուհուն:

1329. Եվ նստում էր այդ դղյակում Աստուղ իշխանը բանիրուն,
 Նա ցույց տվեց Ավստրիա տանող ճամփան թագուհուն,
 Որ իջնում էր Դանուբն ի վար՝ դեպ ամրոցը Մաուտեռն,
 Ուր կապասն նրան անթիվ ասպետներ ու նաժիշտներ:
1330. Եպիսկոպոսն ուրախ սրտով բաժանվեց իր զարմուհուց,
 Քրիմհիլդին խորհուրդ տվեց ջերմ խոսքերով սիրահույզ՝
 Հելխեի պես լավ թագուհի լինել էթցել արքային,
 Հոնբերի մեջ մեծ պատիվներ գտնել, դառնալ մեծ տիկին:
1331. Այնուհետև հասան նրանք Թրայզեն հզոր ամրոցին,
 Ռուդոլֆերի մարդկանց արդեն այստեղից ետ ճամփեցին,
 Որովհետև տեսան արդեն ասպետներին էթցելի,
 Արքայուհուն զգաց այստեղ, որ ինքն ուժեղ է էլի:
1332. Թրայզենի մոտ հոնբերի տիրակալը ուներ մի
 Հզոր ամրոց՝ հույժ անառիկ, ամենուրեք շատ հայտնի,
 Թրայզենմառեր, ուր Հելխեն էր բնակվում մի ժամանակ,
 Վայելելով իր մարդկանցից անչափելի սեր, հարգանք:
1333. Սիրով տրվեց իր արքային Քրիմհիլդը վշտահար,
 Ջէ՞ որ վշտից հետո պետք է որբեկայրին ուշքի գար,
 Արքունիքում սփռում էր նա անհուն քնքշանք, բարություն,
 Եվ անվանի ասպետները գովում էին թագուհուն:
1334. Էթցել արքան հզոր էր շատ և ասպետ էր շատ սրտոտ,
 Աշխարհի չորս անկյուններից գալիս էին նրա մոտ
 Ամենաքաջ ասպետները, ընդունում էր նա անխոս
 Եվ խորություն չդնելով՝ քրիստոնյա, հեթանոս:
1335. Եվ այդպիսի հզորություն չէիք տեսնի ոչ մի տեղ,
 Ով ասպետն էր դառնում էթցել թագավորի զորընդեղ,
 Քրիստոնյա կլիներ նա, թե հեթանոս կուսապաշտ,
 Վայելում էր սերը նրա և շնորհը մշտառատ:

ԴԻՊՎԱԾ ՔՍԱՆՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉԱԿԵՍ ԷԹՑԵԼԸ ԸՆՊՈՆՆԵՑ ՔՐԻՄՂԻԼԻՊԻՆ

1336. Չորրորդ օրը Հասան մի վայր՝ Թրայգենմաուեր գոյակին,
Փոշին էր մառ ելնում ճամփից՝ սե ամպի պես ահագին,
Եվ նույն պահին քաջ էթցելի իշխանները՝ լուրն առած,
Ավասրիո երկրով արդեն գալիս էին ընդառաջ:
1337. Եվ էթցելի մոտիկները հորդորեցին արքային,
Որ մոռանա տիրությունը, մտքից հանի վիշտը հին,
Զի այստեղ է ՔրիմՂիլը՝ արդեն հոնաց մեծ երկրում,
Եվ շտապով ելավ արքան ընդառաջ իր տիրուհուն:
1338. Ճամփաները լցվել էին ասպետներով այլազգի,
Ու բոլորն էլ դրոշի տակ հզոր էթցել արքայի,
Քրիստոնյա և հեթանոս՝ մի ողջ բանակ այրուձի,
Երբ թագուհուն նկատեցին, ուրախ առաջ մղվեցին:
1339. Կային այնտեղ ուռաներ քաջ և հելլեններ հրացայտ,
Արագընթաց լեհեր կային և վալախներ կային շատ,
Հրաշալի նժույգներով անցնում էին բերկրալի:
Ամեն մեկը ցույց էր տալիս ուժն ու ոգին իր երկրի:
1340. Եվ Կիևից նույնպես կային շատ ասպետներ վեհակերպ,
Եվ կատաղի պեչենեգներ, որ աղեղից անվրեպ
Նետահարում էին թռչնին ու ցած բերում երկնից խոր՝
Ամբողջ ուժով ետ ձգելով լարն աղեղի պնդուր:
1341. Մի քաղաք կար ճամփին նրանց՝ Դանուբ գետի ափին մոտ,
Կոչվում էր Թուլն: ՔրիմՂիլը այնտեղ տեսավ անծանոթ
Տարօրինակ սոլորույթներ, որ չէր տեսել մինչ հիմա:
Նրան սիրով ընդունողներն իր պատճառով գտան մահ:
1342. Եվ ուղարկեց էթցել արքան մի շքախումբ նախապես՝
Ճոխ հագնված, խնդումներես, բարեկիրթ ու բարեսես,
Մոտ քսանչորս իշխանների՝ հզոր, տոհմիկ, բարձրանուն,
Որ գնային և մոտիկից տեսնեին նոր թագուհուն:

1343. Շքախմբում էր Ռամինգը՝ վալախիայի տերն Հսկա,
Որ յոթ հարյուր ասպետներով նրա առաջ դուրս եկավ,
Սլանալով բազեի պես, սրաթռիչ, փառահեղ,
Հետո հերցոգ Գիբիխը իր ասպետներով հասավ տեղ:
1344. Ապա իշխան Հորնբոգն էր ասպետներով իր հազար
Եկել այստեղ, որ տեսակցեր թագուհու հետ իր պայծառ,
Փայլում էին նրանք ոսկե զենքերի մեջ շողարձակ:
Այնտեղ էին ազնվազարմ Հոն իշխաններ անքանակ:
1345. Ժամանել էր Հավարտը քաջ իր երկրից Դանեմարք,
Եվ իրինգը, որ ասպետ էր ազնվագույն, անապակ,
Իրնֆրիդը թյուրինգացի՝ գեղեցկատես, գեղակերտ,
Հազար երկու հարյուր ասպետ էին գալիս նրանց հետ:
1346. Նրանց համար մեծ պատիվ էր՝ կողքին լինել մեծ Հոնի,
Այնտեղ էր և Բլոյդելը՝ արքաեղբայրն անվանի,
Երեք հազար Հոն զինվորից նա կազմել էր զորագունդ:
Եվ փառավոր երթով եկավ՝ մինչև հասավ թագուհուն:
1347. Եվ ի վերջո էթցելն եկավ, ապա՝ Դիտրիխն իր զորքով,
Ասպետական շուք ու փայլ էր իշխում այնտեղ անաբող:
Նրանց շուրջը անթիվ էին ասպետները քաջագույն,
Եվ դրանից Քրիմհիլդը ցնծում էր ու ճառագուն:
1348. Ապա ասաց Քրիմհիլդին Բեխլարենցին Հոգատար.
«Տիկին, ահա Ձեզ ուզում է Հզոր արքան ողջույն տալ:
Պարտավոր եք Դուք Համբուրել ասպետներին մեծանուն,
Ոչ բուրդին, զգույշ եղեք, նշան կանեմ ես, թե՛ ում»:
1349. Ապա թամբից ցած բերեցին չքնադագեղ թագուհուն,
Հզոր էթցելն էլ այլևս չհամբերեց և իսկույն
Ցատկեց ձիուց, և նրա հետ իշխաններն իր անհամար,
Եվ քայլեց դեպ Քրիմհիլդը՝ թեթև քայլով, Հուզավառ:
1350. Երկու զորեղ իշխան, որոնց տեսնում էինք վերստին,
Քայլում էին նրա ետքից՝ պահած փեշը զգեստի,
Եվ քայլում էր էթցել արքան դեպի չքնաղ թագուհին:
Եվ ողջունեց Քրիմհիլդը համբուլրով իր արքային:

1351. Գլխածածկը նա ետ տարավ շղարշի հետ ոսկեոր,
Շողողացին մագերը շեկ, և ասացին մարդիկ, որ
Քրիմհիդը Հելխեից էլ գեղեցիկ է, բարեկազմ:
Եվ թագուհուն մոտիկ եկավ Բլոյդելը արքայազն:
1352. Ռուդիգերը նշան արեց՝ արքանդորն համբույր տա,
Նաև համբույր տա Դիտրիխին և Գրեթին քաջ արքա:
Ասպետներից տասներկուսին շերմ համբուրեց թագուհին
Եվ ողջունեց շատ շատերին հայացքով իր երկնային:
1353. Երբ կանգնած էր էթցել արքան նորահարսի կողքին իր,
Երիտասարդ ասպետները սովորույթով այդ երկրի
Սկսեցին զինախաղերն՝ ինչպես տարերք հորդահոս,
Մրցում էին բոլորն այնտեղ՝ քրիստոնյա, հեթանոս:
1354. Եվ Դիտրիխի ասպետները իրենց հզոր ձեռքերով,
Ինչ հմտութամբ, արագութամբ, ճարպկութամբ մի գերող,
Նետում էին աշտեն դեպի վահանները դիմացի,
Եվ հյուրերի առաջ գերման շատ վահաններ ջարդվեցին:
1355. Երբ էթցելի ասպետները ընդդեմ ելան զինավառ
Ասպետներին բուրգունդացի, խոլ զնգացին տեգ, ասպար.
Եվ ժամերը անցան այսպես՝ աներևութ, հանց վայրկյան,
Մինչ հանգստի նշան տվին թագուհին ու այր արքան:
1356. Եվ մոտերքում տեսան նրանք շքեղագույն մի վրան,
Ամբողջ դաշտն էր ծփում այդօր վրաններից հուրհրան,
Խոնջենքից ետ լավ էր այստեղ, գոզն հաճելի ու ընտիր,
Ուր բերեցին տիկիներին ասպետները ուշադիր:
1357. Եվ թագուհու վրանի մեջ դրված էր ճոխ մի գահույճ,
Խոս կտորով երեսպատված, չնաշխարհիկ, պերճաշուք,
Բեխլարենցու պատվերն էր դա: Եվ այնքան էր դուրեկան,
Որ գովեցին ասպետները, գովեց նաև սեգ արքան:
1358. Ինչից էին խոսում նրանք՝ մնում է դա ինձ թաքուն,
Հոնի գորեղ արի մեջ էր քնքուշ ձեռքը թագուհու:
Սանձում էին սերը, քանզի Բեխլարենցին դրանիկ
Խրատել էր իր արքային՝ համբերել մինչ հարսանիք:

1359. Մինչ այդ ահա վերջացավ և մրցախաղը փոթորկոտ,
Մախսելով ողջ ուժերն իրենց, նաև զվարթ ու խրոխտ՝
էթցելի քաջ ասպետները վրանների մեջ մտան:
Լավ հանգստի համար այնտեղ պատրաստված էր ամեն բան:
1360. Գիշերն անցավ, նրանք այդտեղ հանգիստ առան մի կարգին,
Մինչև բացվեց առավոտը ու երևաց լույս արփին,
Շատ ասպետներ նորից իրենց նժույզները թամբեցին,
Հե՛յ, ինչ խաղեր սկիզբ առան ի պատիվ մեծ էթցելի:
1361. Տիրակալը պատվիրեց, որ խաղը ազնիվ ընթանա,
Այնուհետև ճամփա ընկան Թուլնից դեպի Վիեննա,
Սքանչելի հանդերձներով կանայք կային արդ այնտեղ:
Եվ ամեն տեղ Քրիմհիլդը ընդունվում էր փառահեղ:
1362. Թուլնում արդեն պատրաստված էր առատորեն ամեն բան,
Ինչ որ սրտանց ուզում էին հերոսները պատվարժան,
Պատրաստվում էր քաղաքը ողջ տոնին ամեն մի քայլի,
Եվ սկսվեց մեծ ցնծությամբ հարսանիքը արքայի:
1363. Վիեննայում անհնար էր տեղ տալ անթիվ հյուրերին,
Եվ պատվիրեց Բեխլարենցին նրանց համար առանձին,
Քաղաքից դուրս առժամանակ պատրաստել ճոխ կացարան:
Դիտրիխ Բեռնցին չէր հեռանում Քրիմհիլդից մի վայրկյան:
1364. Բեռնի արքան և մի քանի այլ ասպետներ բարեսիրտ,
Որ թագուհու սիրտը շահեն, պահեն նրան ուրախ միշտ,
Դրա համար նրանք չէին խնայում ջանք ու եռանդ,
Մարկգրաֆն էլ թագուհու հետ անցկացնում էր ժամեր շատ:
1365. Հարսանիքը կայացավ սուրբ երրորդության օրը հենց,
Երբ էթցելը Վիեննայում Քրիմհիլդի հետ պառկեց:
Եվ թագուհին էթցելի մոտ տեսավ անթիվ հպատակ,
Զէր զգացել զորեղ այդքան Զիգֆրիդի ժամանակ:
1366. Նա ճանաչել տվեց իրեն՝ բաժանելով շատ ընծա,
Հյուրերի մեջ նույնիսկ ոմանք ասում էին բարձրաձայն.
«Գիտեինք, թե Քրիմհիլդը սնանկացած է իսպառ,
Բայց մեզ զարմանք են պատճառում ընծաները անսպառ»:

1367. Հարսանիքը նրանց տևեց տասնյոթ օր անդադրում,
Չեմ լսել ես, որ երբևէ մեկ այլ արքա իր օրում
Հարսանիքն իր արած լինի այդքան չքեղ ու հարուստ,
Զի մասնակից անձանց բոլոր բաժանեցին նոր հագուստ:
1368. Անգամ տանը՝ Նիդեռլանդում, Հարսանիքը իր նախորդ,
Որի մասին նույնպես շատ խոսք ու զրույց կա մեզ ծանոթ,
ԶիդՖրիդի գանձը հայտնի, Հարստությունն իր անբավ,
Չէին չափվի այն ամենի հետ, որ այստեղ նա տեսավ:
1369. Երևի իր Հարսանիքին չի եղել դեռ մի արքա,
Որ բաժաներ այդքան առատ թիկնոցներ՝ լայն ու երկար
եվ այլ ընտիր զգեստներ, որ բաժանվեցին փութաջան:
Հանուն չքնաղ Քրիմհիլդի բոլորն այնտեղ բերկրացան:
1370. Քրիմհիլդի Հարազատներն ու հյուրերը մնացյալ
Ունեին մի միտք՝ չափսոսալ և ընծաներ տալ շուայլ,
Ով ինչ ուզեր՝ տալիս էին պատրաստակամ, ժպտալով,
Իսկ նրա շատ ասպետներ էլ մնացին մեն մի շորով:
1371. Բայց երբ հեռու Հոենսոսն էր միտը գալիս իր հանկարծ,
Արտասվում էր՝ հիշելով իր ԶիդՖրիդին փառապանծ,
Սակայն խորունկ թաքցնում էր արցունքները իր ցավի,
Զի ծով վշտից հետո կրկին նա հասել էր մեծ պատվի:
1372. Սակայն բոլոր ընծաները քամի էին, դատարկ բան
Այն ամենի դիմաց, ինչ որ Դիտրիխն արեց անվարան,
Էթցելի ողջ տվածը նա ցրիվ տվեց մի շնչում:
Ետ չէր մնում և Ռուդիգերը շուայլությամբ անպատում:
1373. Նաև ասպետ Բլոյդելը՝ կառավարիչն Հունգարիո,
Պատվիրեց, որ բացեն իսկույն սնդուկ, արկղ նորանոր՝
Լցված ոսկով և արծաթով, որ բաշխեցին շատ արագ,
Իսկ արքայի ասպետները փող դիզեցին անքանակ:
1374. Արքայի գուլգ երգասացներ Շվեմելին, Վերբելին
Ընծա տրվեց՝ ամեն մեկին հազար մարկից ավելի:
Դա պատահեց մեծ խնջույքին, նվիրական, թանկ պահի,
Երբ վերստին թագուհու հետ արքան նստեց իր գահին:

1375. Տասնութերորդ առավոտյան Վիեննայից դուրս եկան,
Մրցույթներում փչրվեցին շատ սաղավարտ ու վահան
Նիզակներով՝ ձեռքերի մեջ հերոսների խանդավառ:
Այդպես եկավ էթցելը մինչ քաղաքը իր նստավայր:
1376. Գիշերեցին նրանք այդ օր հին բերդ-քաղաք Հայմբուրգում,
Եվ ոչ մեկը ճշգրտորեն չգիտեր, թե իր խմբում
Ինչ ազգության մարդկանց հետ են ընկել իրենք ճանապարհ:
Հե՛յ, ինչ կույսեր այդ քաղաքում գտան իրենց սեր ու բախտ:
1377. Հարուստ քաղաք Մայսենբուրգում բարձրացան նրանք նավ,
Ծածկված էր նժույգներով ու մարդկանցով ջուրն անբավ,
Կարծես գետին լիներ ջուրը, որ հոսում էր անմոռունչ:
Հոգնած տիկնայք կարող էին նավի վրա առնել շունչ:
1378. Կապկպեցին իրար բազում լաստանավեր, որպեսզի
Հորձանքը կամ ալիքն հուժկու վրա չտա, վնասի,
Լաստի վրա արագորեն խփեցին թանկ վրաններ՝
Կարծես նրանք դաշտում էին, գետնի վրա աներեր:
1379. Էթցել արքան սուրհանդակներ ճամփեց շուտով ամրոցն իր,
Թող խնդանան բոլորն այնտեղ՝ տղամարդ, կին անխտրի,
Արքունիքը, որ երբևէ ծառայում էր Հելխերն,
Հիմա էլ պիտ ուրախանար Քրիմհիլդի հետ անգին:
1380. Ափին կանգնած սպասում էր նրան խումբը օրիորդաց,
Որ Հելխեր մահից հետո չէին բերկրել՝ աչքը թաց:
Քրիմհիլդը տեսավ այնտեղ յոթ թագուհի նազելի,
Գեղեցկուհի շատ կանանցով լիքն էր երկիրն էթցելի:
1381. Եվ Հելխերից հետո նրանց հոգն էր տանում գթառատ
Օրիորդ Հերատն՝ հանգուցյալի քրոջ դուստրը հարազատ,
Նա Դիտրիխի նշանածն էր և դուստրը Նենտվիներ՝
Մի արքայի, որը ուներ շատ մեծ համբավ ու պատիվ:
1382. Նրանք անչափ ուրախացան, Քրիմհիլդը երբ եկավ,
Եվ բաժանեց նա հյուրերին թանկ ընծաներ ոչ սակավ,
Ամուսնությամբ այս էթցելը ուրախ էր և գոհ այնքան.
Ձէ՞ որ երկիրն արդեն ուներ նոր տիրուհի իսկական:

1383. Արքան անձամբ իր թագուհուն իջեցրեց նավից ափ,
Եվ ողջունեց այնտեղ կանգնած օրհորդներին ջերմությամբ,
Օրհորդները մեծ հարգանքով գլուխները կախեցին
Նրա առաջ, ով նստել էր արդեն գահին Հելխին:
1384. Ազնվորեն ծառայելը սովորություն էր նրանց հին,
Եվ բաժանեց այն ամենը, ինչ հետն ուներ թագուհին.
Գոհարեղեն և հագուստներ, նաև ոսկի ու արծաթ,
Որ բերել էր Հոննոսից՝ բաժանելու իբր ընծա:
1385. Եվ շատ շուտով մի այնպիսի դիրքի հասավ թագուհին,
Որ Հելխին էլ նույնիսկ չունեիր, երբ բազմած էր իր գահին,
Մերձավորներն ու հպատակ ասպետները էթցելի
Հլու էին նրան ցմահ՝ ակնածությունով, սիրով լի:
1386. Նրա օրոք երկիրը ողջ մոռացավ վիշտ, տխրություն,
Ուրախություն էր թեւածում ապարանքում օրնիբուն,
Որտեղ էթցելն ու թագուհին ապրում էին ջերմ սիրով:
Մարդիկ այնտեղ նրանց կողքին գտնում էին սեր, գորով:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉԱԿԱ ՔՐԻՄՆԻԼԻՆ ՀԱՉՈՂՎԵՑ ԽՆՁՈՒՅԻ ԿԱՆՉԵԼ ԻՐ ԵՂՔԱՅՐՆԵՐԻՆ

1387. Եվ մեծ շուքի ու պատվի մեջ, իսկ դա ճիշտ է, հավաստի,
Քրիմհիլը էթցելի հետ ապրեց մինչև յոթ տարի,
Եվ յոթերորդ տարում ծնեց դշխոն արու մի զավակ,
Ու էլ էր եղել այդքան ուրախ արքան ոչ մի ժամանակ:
1388. Քրիմհիլը կարողացավ համոզել քաջ էթցելին,
Որ չառարկի մկրտելու իրենց որդուն նորածին,
Ըստ օրենքի կրոնական մանուկն Օրթլիբ անվանվեց,
Բերկրում էր երկիրը ողջ, ցնծում էին փոքր ու մեծ:
1389. Կարգը, որ այդ երկրում կար դեռ Հելխի օրերում,
Հիմա արդեն Քրիմհիլն էր եռանդորեն պահպանում,
Օրինակ էր տալիս նրան օրհորդ Հերատն ազնվասիրտ,
Որ հիշում էր իր Հելխին, և խոնավ էր այտը միշտ:

1390. Թե օտարը, թե ծանոթը ՔրիմՀիլդից ամենուր
 խոսում էին բարի սրտով, որպես ազնիվ թագուհու,
 Ջէին տեսել նրա նման առատաձեռն ու բարի:
 Ահա այդպես անցավ մինչև տասներեք ձիգ տարի:
1391. Ժամանակ անց ՔրիմՀիլդը համոզվեց, որ անխոտոր
 Կկատարին ասպետները հրամաններն իր բոլոր,
 Թեև այստեղ տիրուհի էր նա տասներկու արքայի,
 Միլենույն է, չսպիացավ նրա վերքը անցյալի:
1392. Նա հիշում էր նիրելունգյան երկրի փառքը իր անծիր,
 Որ ինքն ուներ և այնուհետ ողջը եղավ ցանուցիւր,
 Հենց Հազենի ձեռքով զոհվեց Ջիգֆրիդն իր աննման:
 Միտք էր անում ինչպես առնի վրեժը այդ թանկ արյան:
1393. «Դրա համար պետք է, որ այդ ստորն ընկնի ձեռքը իմ»:
 Երազում նա տեսնում էր միշտ Գիզելհերին մտերիմ,
 Եվ համբուրում պատանյակին գորովանքով բովանդակ:
 Բայց հենց ինքն էլ նրան հետո մահվան մատնեց դժոխակ:
1394. Չար սատանան արթնացրեց նրա սրտում վերստին
 Գուևտերի դեմ իր ունեցած թշնամանքն ու վրեժն Հին,
 Որին փնտրում, համբուրում էր ու ներում էր որպես քույր:
 Եվ թրջեցին հանդերձները արցունքների շիթերն Հուր:
1395. ՔրիմՀիլդը օր ու գիշեր տառապում էր ցավագին,
 Որ հակառակ իր ցանկության՝ հեթանոսի դարձավ կին
 Եվ տառապանքն այդ սոսկալի պատճառել է նենգարար
 Տրոնյեցի Հազենն իրեն՝ Գուևտերի Հետ իր եղբայր:
1396. Խոր վրեժից նրա սիրտը սառեց, քար դարձավ կարծր,
 Մտածում էր. «Ես ուժեղ եմ իշխանությամբ իմ բարձր
 Եվ կարող եմ իմ թշնամյաց ցավ պատճառել մի կարգին,
 Ուստի սիրով վնաս կտամ Տրոնյեցի Հազենին»:
1397. Սիրելիիս համար է իմ սիրտը ողբում անդադրում,
 Ովքեր ինձ ցավ են պատճառել, նրանց նույնն եմ կամենում,
 Եվ մահը էն չարագործի թող գա, հասնի հապշտապ,
 Ես չեմ կարող էլ համբերել»:- Խոսում էր նա դառնությամբ:



ԴԻՊԿԱԾ

ՔԱՆՆԵՐԵՔԵՐՈՐԳ

1398. Սիրում էին Քրիմհիլդին Հպատակներն էթցելի,
Քանզի բարեք էր գործել նա փոքրերին ու մեծերին,
Սենեկապանն էքեվարտն էր, որ ուներ շատ շոալ ձեռք,
Այդ պատճառով Քրիմհիլդի խոսքը կարգ էր և օրենք:
1399. Մտածում էր նա շարունակ. «Խնդրել է պետք արքային,
Նա բարի է, գուցե թույլ տա տեսնել մերոնց վերստին,
Անհրորդի եղբայրներին ընդունի իր պալատում»:
Ո՛վ գիտեր, որ նա դրանով նրանց մահն է պատրաստում:
1400. Երբ մի գիշեր Քրիմհիլդը պառկեց կողքին էթցելի,
Գրկեց նրան արքան ամեն օրվա նման ցանկալի,
Որին սիրում էր կյանքի չափ և տենչում էր տենչալով:
Սակայն կնոջ ուղջն ու միտքը թշնամիներն էին լուկ:
1401. Եվ ասաց նա յուր արքային. «Սիրելի իմ ամուսին,
Ուզում եմ Ձեզ խնդրել, որ բարին խորհեք իմ մասին,
Եթե սիրում եք ինձ, եթե արժանի եմ ես դրան,
Հրավիրեք եղբայրներին՝ գան մեզ մի օր տեսության»:
1402. Էթցել Հզոր արքան ասաց անկեղծությամբ սրտագին.
«Ես պատրաստ եմ կատարել Ձեր ցանկությունը, իմ տիկին,
Գործով միայն ապացուցել եղբայրներիդ փառապանծ,
Թե Հանուն Ձեզ ինչքան-ինչքան Հավատարիմ եմ նրանց»:
1403. «Դուք լավ գիտեք, որ ես ունեմ Հարազատներ քաջատոհմ,
Որոնց անչափ կարոտել եմ, — ասաց տիկինը Հետո, —
Արդեն ինչքան ժամանակ է չեն այցելել նրանք մեզ,
Այստեղ կարող են կարծել, թե Հարազատներ չունեմ ես»:
1404. Պատասխանեց էթցել արքան. «Շատ սիրելի Քրիմհիլդ,
Ընդունել Ձեր եղբայրներին՝ պատիվ է ինձ Համար, խինդ,
Եթե միայն չխանգարի երկար ճամփան, անկասկած»:
Հույժ բերկրեց այդ խոսքերից Քրիմհիլդը և խնդաց:
1405. Տիկինն ասաց. «Որ այդպես է, տեր իմ, ճամփեք մի բանբեր,
Վորմսի երեք եղբայրներին տանեն մեզնից Հրավեր,
Որ անՀամբեր սպասում են նրանց քույրը և փեսան,
Եվ շուտափույթ գինվորներով նրանք այստեղ կսուրան»:

1406. Արքան ասաց. «Կկատարվի անտարակույս կամքը Ձեր,
Դուք պիելի չեք ուզում Ձեր զարմիկներին տեսակցել,
Քան ես նրանց՝ որդիներին ազնվազարմ Ութեի,
Եվ այդ Հոգսը խիստ նեղում է թե թագուհուդ ու թե ինձ»:
1407. Եվ ապա նա շարունակեց. «Թե դեմ չես, իմ գեղանի,
Ես ուզում եմ մեր մարդկանցից քո երկիրը Հայրենի,
Որպես ընտիր սուրհանդակներ՝ երգիչներին իմ ճամփել»:
Եվ անհասպող կանչեցին, որ արքունիք գան երկուսն էլ:
1408. Եվ երկուսն էլ վաղվաղակի պալատ եկան, ուր արքան
Եվ թագուհին նստած էին: Արքան ասաց, որ դեսպան
Պետք է մեկնեն բուրգունդական արքաների Հողը չեն:
Եվ պատվիրեց՝ նրանց Համար ճոխ Հանդերձներ պատրաստեն:
1409. Եվ քսանչորս ասպետների Համար չորեր կարեցին,
Ապա արքան տվեց նրանց իր պատվերներն առանձին,
Թե ինչ պետք է ասեն նրանք եղբայրներին քաջասպետ,
Իսկ թագուհի Քրիմհիլդը թաքուն խոսեց նրանց Հետ:
1410. Եվ բարբառեց Հզոր արքան. «Պատվերն ահա իմ սրտանց,
Հաղորդեք, որ կամենում ենք այնտեղ բարիք մենք նրանց,
Սակայն սիրով սպասում ենք նրանց գալուսն անպատճառ,
Զի աշխարհում ամենաթանկ Հյուրն են նրանք մեզ Համար:
1411. Եթե ուզում են մեզ տեսնել զարմիկները թագուհու,
Ուրախ պիտի լինեն նրանց ընդունելու մեր երկրում,
Թող պատրաստվեն ճամփի Համար և չուշանան անհարկի,
Ուզում եմ, որ մեզ մոտ լինեն ամառային խնջույքին»:
1412. Դեսպաններից մեկը՝ Հպարտ Շվեմելը, Հարցրեց.
«Ամառային խնջույքը երբ պիտի անեք, արքա մեծ,
Որ Հաղորդենք Հռենոսի արքաներին փառապանծ»:
«Առաջիկա արևդարձին»,— թագավորը կարճ ասաց:
1413. «Կանենք՝ ինչ որ պատվիրում եք»,— ասաց Վերբելը խոնարհ:
Քրիմհիլդը դեսպաններին պատվիրեց, որ գաղտնաբար
Իր սենյակ գան և նրանց Հետ այնտեղ խոսեց նա թաքուն:
Այդ պատվերը շատ շատերին բերեց Հետո մահ, ստկում:

1414. Ասաց նրանց. «Խոստանում եմ ձեզ բռերով ոսկի տալ,
եթե այնտեղ ասածներս կատարեք դուք անսխալ,
Եվ Բուրգունդում անեք այն, ինչ Հիմա կտամ ձեզ պատվեր:
Ես ձեզ Հարուստ կդարձնեմ և կտամ նոր Հազուստներ:
1415. Երբ որ այնտեղ կանգնեք դուք իմ եղբայրներին Հանդիման՝
Հռենոսի ափին, Վորմսում, ոչ ոք պիտի չիմանա,
Թե այստեղ դուք տեսնում եք ինձ Հաճախ տխուր, մտատանջ,
Այլ Հաղորդեք ջերմ ողջույնս ասպետներին դուք այդ քաջ:
1416. Եվ Հաղորդեք նրանց, ինչ որ պատվիրեց իմ տեր արքան,
Եվ դրանով ազատեք ինձ իմ Հոգսերից Հոգեհան,
Հոններն այստեղ կարծում են, թե չուրեմ ոչ մի Հարազատ:
Այ թե ասպետ ես լինեի, կտուրայի տուն ազատ:
1417. Ասեք նաև Գերնոտին դուք, իմ եղբորը սիրելի,
Որ նրանից ողջ աշխարհում չկա ուժեղ ավելի
Եվ խնդրեք, որ գա ինձ մոտ, այս երկիրը փառահեղ,
Մեր լավագույն զարմիկներով, որոնց գիտենք գերազանց:
1418. Գիզելհերին ասեք՝ իր Հետ միասիրտ եմ, միակամ,
Ես իր մեղքով չեմ արտասովել երբևէ ոչ մի անգամ,
Եվ որ գիրկս կառնեմ նրան ուրախությամբ, քնքշալիբ,
Նրան սիրով կսպասեմ ես՝ նվիրումի Համար իր:
1419. Իսկ իմ մորը Հաղորդեք, որ փառքի մեջ եմ ու լույսի,
Եթե Հագեն Տրոնյեցին խուսափի և դալ չուզի,
Ասեք նրան՝ ապա էլ ո՞վ կլինի ձեզ ուղեցույց
Դեպի երկիրը Հոների, որ նրան ծանոթ է վաղուց»:
1420. Չհասկացան դեսպանները, թե իմբի Հետ իր ցեղի
Ինչո՞ւ Հագենն անպատճառ գա այս խնջույքին էթցելի,
Բայց Հենց նրա ձեռքով Հետո խինդը դարձավ ողբաձայն,
Եվ անհամար իշխան, ասպետ մռայլ մահվան գիրկն անցան:
1421. Ապա տրվեց դեսպաններին արքայական գոց նամակ
Ու, որ ճամփին չնեղվեին՝ առատ ոսկի ու ապրանք,
Այդքան ընտիր չէր Հագնվել ոչ մի երգիչ ապաքեն:
Ապա արքան ու թագուհին թույլ տվեցին, որ մեկնեն:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Թե ինչպես Վերբերը և Շվեմերը գլուխ բերեցին դեսպանությունը

1422. Ու երբ ճամփեց էթցել արքան սուրհանդակներ թեթևոտ
Հռենոսի կողմերն հեռու, որ խնջույքի գան իր մոտ,
Անզուգական քաջեր եկան՝ ուժով ընտիր ու անբավ,
Բայց նրանցից, ավաղ, ոչ ոք էլ հայրենիք չգարձավ:

1423. Եվ մեկնեցին դեսպանները մեծ երկրից հոների:
Դեպ Բուրգունդիա գնում էին արագությունամբ հողմերի՝
Երեք ազնիվ արքաների երկիրն հեռու հաղթական,
Որ պիտ գային հոնաց երկիր՝ խրախճանքի տոնական:

1424. Դեսպանները արագընթաց հասան շուտով Բեխլարեն,
Ընդունեցին նրանց այնտեղ պատիվներով, ջերմորեն,
Քաջ մարկգրաֆ Թուդիգերը կնոջ հետ և դատրիկի,
Որ Հռենոս տանեն իրենց ողջույնները սրտագին:

1425. Դեսպաններին շնորհեցին անթիվ բարիք ու ընծա,
Որ ավելի վստահ անցնեն ճանապարհը մնացյալ,
Թուդիգերը խնդրեց հայտնել Ութերին և իր որդոց
Նրանց հանդեպ տածած սերը և նվիրումն իր անխոց:

1426. Նա պատվիրեց Բրունհիլդին տեղյակ պահել անպայման,
Որ ջերմ սիրով, ուրախ սրտով կծառայի միշտ նրան,
Եվ երբ կրկին ձի նստեցին դեսպանները երգասաց,
Տանտիրուհին նրանց համար աղոթք հղեց առ Աստված:

1427. Բավարիայով թեև նրանք պիտի արագ անցնեին,
Բայց Վերբերը Պասաուում դադար տվեց ձիերին,
Եվ հանդիպեց եպիսկոպոս Պրիգրիմին բարեպաշտ,
Որ չգիտեմ, ինչ պատվիրեց, սակայն ոսկու մեծ պաշար

1428. Տվեց նրանց: Ու երբ ընկան ճամփա՝ ասաց բարեսիրտ.
«Շատ եմ ուզում տեսնել ինձ մոտ զարմիկներին իմ Վորմսի,
Անպատմելի կարոտել եմ ես իմ քրոջ քաջ որդոց,
Ցավոք սրտի, ես չեմ կարող գնալ այնտեղ՝ Հռենոս»:

1429. Ինչպես անցան ճանապարհը երգիչները սուրհանդակ,
Զգիտեմ ես, սակայն կասեմ, որ ոչ մի գող, ավազակ
Չհարձակվեց նրանց վրա ճամփաներով անցնելիս,
Քանզի նրանք դողում էին բարկությունից էթցելի:
1430. Տասներկու օրից հետո Վորմս մտան նրանք շեն,
Եվ հապճեպով ամրոց եկան, որ Գուլտերին հանդիպեն:
Եվ լուր տարան թագավորին, ողջ պալատին անհամբեր,
Թե եկել են երկու ասպետ՝ օտար երկրից դեսպաններ:
1431. Հռենոսի տերն հարցրեց. «Արդ՝ ո՞վ կասի ձեզնից, թե
Ովքեր են այդ ասպետները, որ մեր երկիրն են եկել»:
Զգիտեին: Ապա տեսավ դեսպաններին երգասաց
Տրոնյեցի Հագենը և թագավորին իր ասաց.
1432. «Ասեմ արքա, թե ովքեր են եկածները մեր երկիր,
Դրանք էթցել թագավորի երգասացներն են ընտիր,
Որոնց Ձեր քույրն է ուղարկել հռենոսյան մեր եզերք,
Հանուն էթցել իր ամուսնու Դուք նրանց լավ ընդունեք»:
1433. Նրանք մտան գավիթը և առաջացան շատ հպարտ,
Այդպես փառքով ոչ մի գուսան մուտք էլ դործել դեռ պալատ,
Նրանց առաջ ելան իսկույն սպասյակներն արքայի,
Որ ընդունեն նժույգ ու զենք եկվորների ձեռքերից:
1434. Թեև իրենց ճամփորդական հագուստներով շատ ընտիր
Կարող էին նրանք վստահ ներկայանալ Գուլտերին,
Սակայն դրանք դեսպանները գտան հարմար ոչ այնքան,
Փոխեցին և հագան իրենց հանդերձները տոնական:
1435. Այդ տեսնելով՝ եղան մարդիկ, որ խոսեցին սրտալի
Ու գովեցին հզորագոր հոն թագավոր էթցելին,
Դեսպանները ահա նրա զարդարվել են ճոխ այնքան,
Որ հրեւէ էլ զարդարվել արքայական մի դեսպան:
1436. Ու երբ նրանք մտան պալատ, արքայի մոտ՝ Գուլտերի,
Հոն հյուրերին ընդունեցին պատշաճությամբ անթերի,
Ապա ելավ հյուրերի դեմ Տրոնյեցին փութեռանդ,
Ջերմ ողջույնից դեսպանները զգացվեցին անչափ շատ:

1437. Եվ անհապաղ Հարցրեց արքան դեսպաններին, որ ասեն,
Թե ինչպես է էթցել արքան, Հպատակներն ինչպես են:
Պատասխանեց երգասացը. «Մեր երկիրը երբևէ,
Դուք լավ գիտեք, այսքան Հարուստ ու բարգավաճ չի եղել»:
1438. Մոտ գնացին թագավորին, լիքն էր դահլիճն արքայի,
Ընդունեցին բանբերներին Հյուրամեծար, ըստ Հարկի,
Ողջունեցին նրանք սիրով թագավորին փառապանծ:
Շվեմելը տեսավ նրան շատ քաջերով օղակված:
1439. Եվ Գունտերը դեսպաններին ողջունյն տվեց սրտալի.
«Բարով եք դուք եկել մեզ մոտ, երգասացներ էթցելի,
Եվ ձեր մարդիկ: Արդ, ասացեք ձեր մտքինը ինձ Հստակ,
Թե ինչո՞ւ է ձեզ ուղարկել էթցել արքան Բուրգունդիա»:
1440. Խոնարհվեցին նրանք, ապա խոսեց Վերբելը Հանդարտ.
«Ձեզ իմ արքան և թագուհին՝ Ձեր քույրիկը Հարազատ,
Խնդրում են, որ այցի գաք իրենց երկիր խմբով մեծ:
Ուղարկել են նրանք մեզ Հետ նվիրումի խոսքն իրենց»:
1441. «Հաճույքով եմ ես լսում Ձեզ, — ասաց արքան գոհունակ, —
Հիմա պատմեք Դուք էթցելից և, միևնույն ժամանակ,
Մեր քրոջից՝ Քրիմհիլդից լուր տվեք մեզ, ով դեսպան»:
Վերբելն ասաց. «Ես Հաճույքով Ձեզ կպատմեմ ամեն բան»:
1442. Ես չգիտեմ մի ավելի երջանիկ մարդ լուսնի տակ,
Քան այդ երկուսն իրենց երկրում և նրանց Հետ Հպատակ
Բոլոր մարդիկ՝ իշխան լինի, մերձավոր, թե ուսմիկ:
Ուրախ էին նրանք անչափ, երբ ճամփա պիտ ընկնեինք»:
1443. «Երախտապարտ եմ ողջունյի Համար՝ Հղած ինձ անձամբ,
Նրան և իմ քրոջը ես երախտապարտ եմ անչափ,
Որ ապրում են՝ հիշելով մեզ բարեկամի սիրով ջերմ,
Թե չէ այստեղ, ես ճիշտն ասած, քրոջս Համար Հանգիստ չեմ»:
1444. Երկու կրտսեր արքաները քիչ ավելի ուշ եկան,
Երբ լուրն առել էին արդեն դեսպանների ժամանման:
Գորովանքով նայեց նրանց Գիզելհերը պատանի,
Քրոջ սիրուց նրանց ասաց բարի խոսքեր մի քանի.

1445. «Ով դեսպաններ, բարով եկաք, մեր սրտերում տեղ ունեք,
 էլ ավելի հաճախ եկեք Հոենոսի մեր եզերք,
 Աստ կգտնեք բարեկամներ, մտերմություն անսահման,
 Եվ ոչ մեկից դուք չեք տեսնի ատելություն, թշնամանք»:
1446. «Դա տեսնում ենք,— այդժամ ասաց Շվեմելը ժպտերես,—
 Մենք չենք կարող սոսկ բառերով ողջը պատմել իրապես,
 Թե որքան ջերմ ողջույններ են ուղարկել Ձեզ էթցելը
 Եվ Ձեր ազնիվ քույրը, որի փառքը այնտեղ շատ մեծ է:
1447. Թագուհին Ձեզ հիշեցնում է անկեղծությունն ու սերն իր,
 Որ եղել եք իրար հանդեպ միշտ կարեկից, սիրալիր,
 Բայց նախ պետք է Ձեզ հաղորդենք պատվիրանը մենք նրանց,
 Որ Ձեզ և Ձեր եղբայրներին սպասում են շատ սրտանց:
1448. Եղբայրներիդ իր երկիրն է կանչում էթցել իմ արքան,
 Նա ասում է, եթե չուզեն իրենց քրոջն այցի դան,
 Մերժման դեպքում, խնդրում է նա, հայտնել իրեն առանձին,
 Թե ինչով է նա Ձեր սրտում տեղիք տվել կասկածի:
1449. Եթե նույնիսկ մեր արքային չլինեիք բարեկամ,
 էլի պիտի գայիք՝ նրան այցելության ինքնակամ,
 Էլ ուր մնաց Բրիմհիլդի եղբայրներին փառահեղ,
 Որոնց պետք է նա ընդունեն իր երկրում վաղուց դեռ»:
1450. Ասաց Գուևտեր թագավորը. «Յոթ օր հետո ես միայն
 կասեմ ձեզ իմ պատասխանը՝ իմ վճիռը վերջնական,
 Կուզենայի ասպետներին միտքն իմանալ անպատճառ,
 Իսկ մինչև այդ հանգստացեք ճանապարհից հույժ երկար»:
1451. Եվ Վերբելը խոսեց կրկին. «Կարելի՞ է, արքա, մեզ
 Տեսակցելու մեծ թագուհի Ութեի հետ լուսերես,
 Մինչև նրան չհանդիպենք, չենք հանդարտի անկասկած»:
 Դրա վրա ծիծաղադեմ Գիզելհերը այս ասաց.
1452. «Թե ուզում եք տեսնել նրան, հարկավոր չեն շատ բաներ,
 Իմ մայրն էլ շատ կուզենար ձեզ հանդիպել, դեսպաններ,
 Նա շատ սիրով կընդունի ձեզ հանուն դստեր իր միակ:
 Դե, վեր կացեք, մի ուշացեք, հարկ է նրա մոտ գնաք»:

1453. Գիզելհերը բերեց այնտեղ, ուր կենում էր մայր Ութեն,
 Եվ թագուհին սիրով տեսավ դեսպաններին դեմ առ դեմ,
 Նա ընդունեց բարի մտքով, խոր ջերմությամբ մի անհուն,
 Եվ Հայտնեցին պատշաճությամբ ու Հարգանքով թագուհուն.
1454. «Իմ տիրուհին պատվիրել է, – Եվեմելը արդ ասաց, –
 Հայտնելու Ձեզ ամենաջերմ մաղթանքները, սերն անանց,
 Աշխարհում նա ամենից շատ, Համոզված եմ, սիրակեզ
 Կցանկանար, որ իր կրծքին սեղմեր անուշ մորը՝ Ձեզ»:
1455. Մայր թագուհին ասաց. «Ոչինչ էլ չես փոխի դու, ավաղ,
 Ես ինքս էլ կմեկնեի դատերս մոտ շատ Հաճախ,
 Եթե նրա երկիրն այդքան մեզնից Հեռու չլիներ:
 Տա Աստված, որ երջանիկ լինեն նա և էթցելը»:
1456. Դուք ինձ պետք է ասեք, երբ եք ուղևորման մտադիր,
 Անչափ երկար ժամանակ է, չունեմ ես ձեզ պես ընտիր
 Ավետարան Հյուրեր այստեղ, պալատական Հարկի տակ»:
 Եվ խոստացան դեսպանները Հայտնել օրը շատ Հստակ:
1457. Եվ Հոները անցան իրենց կացարաններն Հանգստի,
 Հզոր արքան Հավաքեց ողջ երկրից մարդկանց իր անթիվ,
 Եվ Հարց տվեց նա մեկ առ մեկ իշխաններին ցանկալի,
 Թե այդ մասին ի՞նչ են խորհում՝ գնա՞ն երկիրն էթցելի»:
1458. Շատերն էին խորհուրդ տալիս՝ թե գնալն է ճիշտ, արքա,
 Քաջերն էին ասում բոլոր ասպետների մեջ ներկա,
 Միայն Հագենն էր մտահոգ առաջարկից այդ անմեղ:
 Թաքուն ասաց նա արքային. «Կորչելու ենք մենք այնտեղ»:
1459. Մեր արածը Քրիմհիլդին մենք չպետք է մոռանանք,
 Նաև Հիշենք, որ նրանից սպառնում է միշտ վտանգ,
 Ես իմ ձեռքով սպանել եմ իր ամուսնուն պաշտելի,
 Էլ մենք ինչպե՞ս Համարձակվենք գնալ երկիրն էթցելի»:
1460. Արքան ասաց. «Բայց իմ քրոջ զայրույթն անցել է կարծես,
 Նա Հեռացավ մեր երկրից խաղաղ սրտով իրապես,
 Նա ներել է մեր բոլորի արածները ամենայն,
 Թե չարություն ունի, Հագեն, դա Ձեր դեմ է միմիայն»:

1461. Հագենն ասաց. «Այդքան արագ մի հավատաք հոներին,
Նա մինչև մահ չի մոռանա եղածը և չի ների,
Դուք կկորցնեք Ձեր այդ քայլով կյանք ու պատիվ այդ երկրում,
Քրիմհիլդը մեզ բուրբիս հանդեպ վրեժ է նյութում»:
1462. Եվ խորհրդի առաջ խոսեց Գերնոտ արքան վեհապանձ.
«Դե, Ձեզ՝ Հագեն, լուրջ պատճառ կա՝ լինել այդպես սրդողած,
Քանի որ Ձեր արարքներից տազնապում է Ձեր հոգին,
Իսկ մենք ինչու պիտ զրկվենք տեսնելուց մեր քույրիկին»:
1463. Ապա դիմեց Գիզելհերը Տրոնյեցի Հագենին.
«Քանի որ իմ քրոջ մեղավոր եք Դուք ինքնին,
Դե, ուրեմն, կացեք այստեղ, պահպանելու կյանքը Ձեր,
Թող գան, ովքեր քրոջս դեմ ոչ մի հանցանք չեն գործել»:
1464. Դրա վրա խիստ զայրացավ Տրոնյեցի տերն հսկա.
«Չկա մեկը, որ ուղեկցի ավելի վարժ ու վստահ,
Ձեզ էթցելի երկիր տանի, առաջնորդի ճամփին ձեզ,
Քան ինքս եմ: Անհոգ եղեք՝ դա կարող եմ միայն ես»:
1465. Ապա խոսեց Ռումոլտը՝ խոհարարը իմաստուն.
«Դուք ունեք մեծ իշխանություն մարդկանց վրա Բուրգունդում,
Ո՛ր եք թողնում արքունիքը, ողջ երկիրը և մարդկանց:
Համոզված եմ, ձեզ Հագենը ճշմարտություն լուկ ասաց:
1466. Եթե նրան չեք լսելու, լսեք Դուք ինձ՝ Ռումոլտին,
Որ եղել է Ձեզ հպատակ և Ձեր անձին մտերիմ,
Իմ կարծիքով, պետք է մնաք այստեղ ընդմիշտ, առհավետ
Եվ իր երկրում հանգիստ թողնեք էթցելին իր տիկնոջ հետ:
1467. Որտե՞ղ գտնեք բարեբեր հող դուք սրանից ավելի,
Վտանգ չունեք ոսոխներից թալանի ու ավերի,
Քեֆ եք քաշում Դուք օրն ի բուն՝ շքեղորեն հագնված,
Ճաշակում եք ընտիր գինի և սիրում եք պերճ կանանց:
1468. Եվ դրա հետ ձեզ տալիս են ուտելիքներ շատ համեղ,
Սակայն եթե դրանք նույնպես չեն պահելու Ձեզ այստեղ,
Ապա տանը մնացեք Դուք հանուն տիկնանց ձեր անգին:
Անմիտ բան է օտար երկրում Ձեզ ենթարկել փորձանքի:

1469. Այդ պատճառով Համամիտ եմ հանգիստ տանը մնալու, Այստեղ տանը Դուք կլինեք փորձանքներից շատ հեռու, Մինչդեռ այնտեղ՝ Հոնաց երկրում, ինչ կլինի, ո՞վ գիտե, Ով արքաներ, ահա այս է խորհուրդը ձեր Ռումոլտի»:
1470. Գերնտոն ասաց. «Պետք է մնալ, պետք է մեկնել անհապաղ, Քանզի որ քույրս ու էթցելը կանչում են մեզ հանց եղբայր, էլ ի՞նչ ունենք երկմտելու կամ ի՞նչ պատճառ տազնապի, Ով չի կարող գալ մեզ հետ՝ թող մնա տանը, պինդ փակվի»:
1471. Հագենն ասաց. «Կտեսնենք դեռ, թե ով է ճիշտ և ով՝ սուտ, Ինձ մի դատեք իմ կամակոր վարքի համար այդքան շուտ, Եթե պիտի գնանք, ապա լուկ այնպես, որ քաջերիս Անակնկալ չվնասի ամենանենգ ոտխն իսկ»:
1472. Եթե իրավ գնալու եք, թույլ տվեք ինձ, որ իսկույն Բանակ կազմեմ ընտիրներից, որ կան մեր մեջ, մեր երկրում, Ես դրանցից կընտրեմ հազար զինվոր կամ քիչ ավելի, Որ կօգնեն մեզ դիմակայել ամեն տեսակ դավերի»:
1473. «Այդ խորհուրդը ընդունում եմ», — ասաց Գուլնտերն անտրտում, Ապա ճամփեց՝ գնան մարդկանց փնտրեն Համայն Բուրգունդում: Շուտով եկան հերոսները՝ երեք հազար, ավելի, Նրանք ոչինչ չգիտեին աղետներից դեռ գալիք:
1474. Նրանք եկան թագավորի կոչով Համայն Բուրգունդից, Եվ խոստացան տալ բոլորին թանկ Հանդերձանք, ընտիր ձի ճամփորդելու համար դեպի Հոնաց երկիրն անհապաղ, Շատ ասպետներ եկան ընտիր՝ պատրաստ ելնել ճանապարհ:
1475. Եվ պատվիրեց Տրոնյեցին իր եղբորը՝ Դանկվարտին, Որ Հոնեսոս բերի իր հետ ութսուն ասպետ շատ ընտիր: Նրանք եկան ճոխ Հազնված, նժույզներով, վեհորեն Եվ բերեցին Գուլնտերի մոտ շատ քաջերի ասպազեն:
1476. Եկավ ազնիվ երգասացը՝ խիզախ Ֆուլկերը պալատ, Իր երեսուն ասպետներով՝ ճամփորդելու կազմ պատրաստ, Հանդերձանքը չքեղ էին՝ արքաների արժանի, Եվ Հայտնեց, որ սպասում են Հրամանին արքունի:

1477. Թե Ծովկերին չեք ճանաչում, պատմեմ խոսքով ձեզ շիտակ,
Նա մի ազնիվ իշխան էր և ուներ անթիվ Հպատակ
Ընտրագուշն քաջ ասպետներ՝ Բուրգունդիայում Հռչակված,
Քանի որ նա նվագում էր, կոչում էին երգասաց:
1478. Հագենն ընտրեց Հազար ասպետ, իրեն ծանոթ, պատվական,
Եվ փորձել էր կռիվներում իր իսկ ձեռքով շատ անգամ,
Ով որ նրանց ճանաչում էր, չէր հանդգնի դեմ ելնել,
Զի բոլորն էլ կարող էին պատիվն իրենց պաշտպանել:
1479. Եվ լավում էր դեսպանների տրտունջը, թե՛ ուշացան,
Վախն արքայի Հանդեպ իրենց զգալի էր բավական:
Անգեն նրանք խնդրում էին ճամփա ելնեն շատ շտապ,
Բայց Հագենը դեսպաններին խանգարում էր միշտ դիտմամբ:
1480. Նա ասաց յուր թագավորին. «Դա մեր օգտին է միայն,
Մենք ապահով կլինենք շատ, եթե թողնենք, որ գնան
Յոթ օր առաջ մեր մեկնումից դեպի երկիրն էթցելի:
Եվ չի կարող թշնամին մեզ անակնկալ մատուցի:
1481. Քրիմհիլը չի Հասցնի Հավաքել իր ողջ մարդկանց
Եվ չի կարող թունավորել նախապես մեր դեմ նրանց,
Իսկ թե անի Հանկարծ այդպես, զղջալու է նա այնքան,
Մենք մեր Հազար ասպետներով նրանց կտանք պատասխան»:
1482. Թամբերը և վահանները, Հանդերձանքը այն բոլոր,
Որ պետք էին ճամփի Համար՝ դեպ երկիրն այդ Հեռավոր,
Ասպետների Համար նրանք պատրաստեցին անթերի,
Որից Հետո միայն կանչեց դեսպաններին Գունտերը:
1483. Դեսպաններին Հենց որ տեսավ, Գերնոտն ասաց խնդազին.
«Թագավորը Համաձայն է մասնակցելու խնջույքին:
Մենք բոլորս ցանկանում ենք գալ երկիրը էթցելի
Եվ Հանդիպել, կարոտն առնել մեր քրոջից սիրելի»:
1484. Ապա ասաց Գունտեր արքան. «Կարո՞ղ եք մեզ ասել դուք,
Թե խնջույքը ե՞րբ կլինի՝ ամիսը և օրն ստույգ,
Որպեսզի գանք»։ Պատասխանեց Շվեմիլը. «Տեր արքա,
Պատվիրել են Հաղորդել Ձեզ՝ արևդարձին մոտակա»:

1485. Այդ օրն արքան թույլ տվեց, որ նրանք գոնե մեկ անգամ
Հանդիպին Բրուհհիլդին, եթե անշուշտ ցանկանան,
Կարող էին դեսպանները տեսնել նրան դյուրությամբ,
Բայց Ֆոլկերը առարկեց իր թագավորին Հապտապ.
1486. «Ով դեսպաններ, մեր թագուհին այս պահին շատ տկար է,
Թե ուզում եք տեսնել նրան, ո՞վ կարող է խանգարել,
Բայց Համբերեք մինչ առավոտ, և կընդունի անպայման»:
Առավոտյան նույնպես նրանց չթողեցին տեսության:
1487. Եվ որպեսզի ցրի նրանց Հոգու ամպը տրտմագին,
Հարուստ արքան պատվիրեց, որ բերեն մի մեծ կույտ ոսկի
Վահանների վրա մեծղի, դեսպաններին ընծա տան:
Նրանցից ետ չմնացին Հարուստ ասպետ ու իշխան:
1488. Գիզելերը և Գերնտը, ապա Օրտվինն ու Գերեն
Որքան էլ որ ուզում էին դեսպաններին նվիրեն
Ընծաները իրենց բերած՝ ամբողջ սրտով, Հարգալից,
Սակայն նրանք չընդունեցին՝ վախենալով էթցելից:
1489. Այսպես ասաց թագավորին դեսպան Վերբելն երգասաց.
«Տեր արքա, Ձեր ընծաները պիտի մնան երկրում այս,
Մենք չենք կարող դրանք վերցնել, արգելում է մեր արքան,
Վախենում ենք դա մեր գլխին փորձանք բերի իսկական»:
1490. Եվ գայրացավ դրա վրա Գունտեր արքան սոսկալի,
Որ մերժում են նրանք ընծան իր պես Հզոր արքայի,
Նա ստիպեց, որ վերցնեն Հանդերձները և ոսկին:
Դեսպանները ընդունեցին դրանք՝ առանց մի խոսքի:
1491. Վերադարձից առաջ նրանք այցելեցին Ութեին,
Դեսպաններին առաջնորդեց Գիզելհերը՝ պատանին
Պալատ՝ մոր մոտ: Եվ թագուհին դեսպաններին խնդրեց, որ
Հայտենեն նրանք դատերը իր մաղթանքները սիրող մոր:
1492. Այնուհետև մայր թագուհին իր զարդերից բյուրանուն
Ընծա տվեց դեսպաններին՝ Հանուն դատեր սիրասուն:
Եվ էթցելի պատվին տվեց նրանց ոսկի ու արծաթ:
Ընդունեցին դեսպանները ընծաներն այդ խնդաշատ:

1493. Եվ Հրաժեշտ տալով ուրախ ասպետներին ու կանանց՝
Ճամփա ընկան ՔրիմՀիլդի դեսպանները երգասաց,
Մինչ երկիրը շվաբների դեսպաններին ուղեկցեց
Գերնոտի ջոկն ասպետների, որ վտանգից պահեն զերծ:
1494. Երբ ուղեկից պահնորդները վերադարձան ետ կրկին,
Մնացած ողջ ճամփան անցան նրանք առանց արգելքի,
Ու չխից ոչ ոք նրանց զգեստները կամ էլ ձին,
Բոլորն էին ամենուրեք սարսափ զգում էթցելից:
1495. Ուր բարեկամ ունեին մի՝ շուտափուլթ լուր տվեցին,
Որ գալիս են ահա շուտով հերոսները բուրգուևդջի,
Հոնոսի եզերքներից դեպի երկիրն էթցելի,
Եպիսկոպոս Պիլգրիմն էլ առավ լուրը ցնծալի:
1496. Երբ որ նրանք անցնում էին Բեխլարենով մեծհամբավ,
Վայրկենապես ողջ քաղաքում խոսք-զրույցը ծայր առավ,
Ռուդիգերը և իր կինը անհուն բերկրանք ապրեցին,
Որ իրենց հյուր պիտի լինեն արքաները բուրգուևդջի:
1497. Դեսպանների ձիրեն անվերջ սուրում էին ու վարգում,
Նրանք գտան թագավորին հենց իր Գրան քաղաքում,
Դեսպանները հաղորդեցին մաղթանքները արքայից,
Որ էթցելին էին բերել: Իսկ նա շիկնեց բերկրանքից:
1498. Երբ թագուհին՝ ՔրիմՀիլդը, լուրը առավ բաղձալի,
Որ եղբայրներն համաձայն են գալ երկիրը էթցելի,
Անհունորեն ուրախացավ, դեսպաններին երգասաց
Հազար ու մի ընծա տվեց, անչափ ոսկի ու արծաթ:
1499. Նա ասաց. «Դե, իմ դեսպաններ, հիմա երկուսդ էլ ասեք,
Ո՞վ է ուզում խնջուլքին գալ, եղբայրներից իմ երեք
Եվ պատվարժան այն անձերից, ում կանչել ենք հրճվագին,
Ասեք, ինչպես վերաբերվեց Հագենը մեր խնդրանքին»:
1500. «Հագենն եկավ վաղ առավոտ պալատական խորհրդին,
Բայց օգտակար քիչ բան խոսեց խնջուլքի և մեր օգտին,
Մինչ բոլորը գովում էին այցն հոնեիրին պատվարժան,
Մուսյլ Հագենն անվանեց դա մահվան խնջուլք, ոչ այլ բան:

1501. Եղբայրները Ձեր անպայման ժամանելու են այստեղ
 Բարձր սրտով, ուրախ, զվարթ, իսկ նրանցից բացի, թե
 Ով կլինի, ես չեմ կարող ձեզ հայտնել, ճիշտն ասած,
 Կարծես ուզում էր հետները գալ Փոլկերը երգասաց»:
1502. Քրիմհիլդը ասաց. «Ուրախ կլինեմ ես անպատում,
 Որ չտեսնեմ այդ Փոլկերին ոչ մի անգամ պալատում,
 Այ, Հագենը՝ ուրիշ, Հզոր ասպետ է նա փառահեղ,
 Երանի թե կարողանանք տեսնել նրան մենք այստեղ»:
1503. Ապա գնաց Քրիմհիլդը այցելելու արքային,
 Ծատ սիրալիր, ջերմ խոսքերով մոտիկ եկավ նա գահին.
 «Դե, ինչպես եք գնահատում լուրերը, իմ տեր արքա,
 Ինչ իմ սրտում երազ էր լուկ, արդ՝ գալիք է իրական»:
1504. «Քո կամքը իմ խնդությունն է, — ասաց արքան ջերմորեն, —
 Համոզված եմ՝ եղբայրներդ շատ ավելի ինձ թանկ են,
 Քան իմ մարդիկ: Հավատա ինձ և ընդունիր խոսքերս,
 Եղբայրներիդ սերը գուցե կցրի իմ Հոգսերը»:
1505. Ծառայողներն ամենուրեք սկսեցին տենդահար
 Բարեզարդել դահլիճները, ողջ պալատը վերից վար
 Թանկ հյուրերի համար, որոնք գալու էին շատ շուտով:
 Եվ դարձել էր սիրտն արքայի ուրախության ելման ծով:

ԴԻՊՎԱԾ ՔՍԱՆՀԻՆ ԳԵՐՈՐԴ

Թե ինչպես նիբելունգները մեկնեցին հոների երկիր

1506. Հանգիստ թողնենք մենք հոներին հոգսերի հետ իրենց բյուր,
 Եվ գանք գոռոզ արքաներին, որ գնային պիտի հյուր,
 Նրանք երբեք չէին հագել այդքան չքեղ, այդքան թանկ,
 Ձի ունեցան, ինչ կամեցան, թե զենք, թե ճոխ հանդերձանք:
1507. Հռենոսի տիրակալը ընծայեց նոր հանդերձանք
 Հազար վաթսուկ ասպետների, ինչպես որ մենք լուր առանք,
 Եվ ինչ հազար ծառաների մեծ խնջույքին գնացող,
 Հարազատներն հետո նրանց շատ արեցին սուգ ու ողբ:

1508. Պալատի դեմ արդ բերեցին նժույգները ոսկեսանձ,
Ութնի մոտ շպեյերցի ծեր քահանան խոսք սասց.
«Մեկնում է մեր թագավորը հոնաց երկիր՝ խնջույքի,
Հաջողութուն էնտեղ նրանց և Աստված թող օգնի»:
1509. Այդ ժամանակ որդիներին սասց Ութնի մտահոգ.
«Լավ կլիներ, որ մնայիք, տանից չեկներ և ոչ ոք,
Ես այս գիշեր երազ տեսա չարագուշակ, սոսկալի,
Մահն էր կարծես տարել բոլոր թռչուններին մեր երկրի»:
1510. Հագենն սասց. «Երագներին Հավատալով՝ ոչ մի մարդ
Այս աշխարհում չի իմացել՝ որն է լավը, որն է՝ վատ,
Եվ պատիվն իր չի կարեցել նա պաշտպանել քաջաբար:
Իմ տեր արքան կարող է հենց հիմա ելնել ճանապարհ»:
1511. Մեծ սիրով ենք մենք մեկնելու դեպի երկիրն էթցելի,
Կծառային քաջերն հզոր արքաներին մեր էլի,
Իսկ մենք սիրով կմասնակցենք Քրիմհիլդի տոնին մեծ»:
Հագենն այսպես խորհուրդ տվեց, բայց հետո շատ ափսոսաց:
1512. Նա այլ խորհուրդ կարող էր տալ, թե Գերնտը անվրդով
Վիրավորանք չհասցնեք նրան դաժան բառերով,
Հիշեցրեց նա Հագենին Ջիգֆրիդին, քաջ սասպետ՝
Ասելով թե. «Այդ պատճառով չի հանդգնում գալ մեզ հետ»:
1513. Ապա խոսեց Տրոնյեցին. «Արածիցս չունեմ ահ,
Դուք կարող եք, ով արքաներ, ասել ինչ ձեր սրտում կա,
Ես պատրաստ եմ սիրով գնալ ձեզ հետ երկիրն հոների»:
Քիչ գրահ ու սաղավարտ նա չջարդեց այն օրերին:
1514. Նավերն արդեն կանգնած էին կազմ ու պատրաստ գետափին,
Սկսեցին բեռնել դրանք, ինչ հարկավոր էր ճամփին,
Եվ բեռնեցին մինչ երեկո քրտինք մտած, անդադար,
Բոլորն էին ուրախ սրտով տանից ընկնում ճանապարհ»:
1515. Խփել էին պերճ վրաններ խոտերի մեջ գետափինյա,
Հռնոսի մյուս ափին, երբ պատրաստ էր ամեն բան,
Գունտերին կինն հրաշագեղ խնդրեց քիչ էլ հապաղի,
Մի անգամ էլ ամուսնու հետ մտավ սիրո անկողին»:

1516. Վաղ առավոտ թմբուկ շեփոր որոտաձայն թնդացին,
Արդ մեկնումի ժամը Հասավ: Հերոսները առնացի
Վերջին անգամ գիրկը առան մերձավորաց՝ աչքն արցունք,
Եվ շատերի Համար վերջին հրածեչտն էր դա, եղուկ:
1517. Մայր Ութեի որդիները ունեին քաջ ասպետ մի,
Նա խիզախ էր և անվանի: Երբ ժամն Հասավ մեկնումի
Արքաների Հետ նա խոսեց շատ սրտաբաց, մտերիմ,
«Երբ մեկնում եք արքաներով, շատ ցավում է սիրտը իմ»:
1518. Ռումոլտն էր, քաջ ասպետը, ամենուրեք ճանաչված:
Ասաց. «Եթե թողնում եք Ձեր երկիրը և մարդկանց,
Ապա ո՞վ է Ձեր փոխարեն մնալու տեր այս երկրին,
Այդ ինչպես Դուք Հավատացիք Քրիմհիլդի խոսքերին»:
1519. «Երկիրը ես թողնում եմ քեզ, կհետևես և որդուս,
Կծառայես նվիրումով, այդ ամենի տերն ես դու:
Եթե տեսնես արտասովող աչք, մխիթարիր անթաքույց,
Ոչ մի փորձանք չի կարող գալ մեզ Քրիմհիլդ թագուհուց»:
1520. Նժույզները կանգնած էին սանձերն արձակ, փրփրալից,
Ասպետները չէին կարող զատվել գիրկ ու Համբույրից,
Նրանք Հոգով առույզ էին և սրտերը՝ լի բերկրանք,
Սակայն շուտով նրանց Համար պիտ ողբային Հեզ կանայք:
1521. Երբ որ արդեն ասպետները նժույզներին մոտեցան,
Քար կտրեցին կանայք ցավից և լաց եղան բարձրաձայն,
Սրտերն ասես զգում էին՝ նրանք գնում են ընդմիջտ:
Բայց ինչ կարող էին անել Հուզումներով անհանգիստ:
1522. Սկսեցին երթը իրենց անզուգական բուրգունդից:
Ջորաշարքը երկար էր շատ, միևնույն պահին նաև ձիգ,
Մարդիկ արցունք էին թափում Հոննոսի ափին զույգ,
Ասպետները զվարթորեն շարժվեցին գունդ առ գունդ:
1523. Մեկնողների մեջ էին և ասպետները նիրբուլուգ
Մոտ Հազար՝ կանանց թողած տան՝ աչքերին արտասուք:
Նրանք իրար արդեն երեք չէին տեսնի այս կյանքում,
Քանզի սիրտը Քրիմհիլդի դեռ տանջվում էր, մորմոքում:

1524. Արևելյան Ֆրանկների երկրով առանց աղետի
Անցան նրանք ու բարձրացան Հոսանքն ի վեր Մայն գետի,
Առաջնորդը Հագենն էր, որ ճամփան գիտեր գերազանց,
Ջորապետն էր Դանկվարտը՝ բուրգունդ քաջը փառապանծ:
1525. Արևելյան Ֆրանկների երկրից անցան Շվաբենֆելդ,
Ճանաչեցին նրանց այնտեղ իրենց տեսքով Հոյակերտ
Մտերիմներն հերոսների, իշխանները պայազատ:
Երկու շաբաթ հետո Հասան Դանուբ գետին Հորդառատ:
1526. Եվ Հագենը քչեց իր ձին զորքի առաջ բազմագունդ,
Ամենուրեք նա էր հույսը զինվորների նիրբուռնգ,
Հասնելով ափ՝ քաջ ասպետը ձիուց իսկույն ցատկեց վար
Եվ մոտակա ծառից կապեց իր նժույզը անվարան:
1527. Հորդ ջրերը հեռու էին քչել նավերն ափերից,
Նիրբուռններն այստեղ ընկան հոգսերի մեջ տանջալից.
Ոնց անցնեին մյուս ափը, գետը լայն էր ու շատ խոր
Եվ անհանգիստ սկսեցին շարժվել գետի երկայնքով:
1528. Հագենն ասաց. «Այ, Համա թե փորձանք է սա խայտառակ,
Տեր իմ արքա, ինքդ ես տեսնում, ինչ տարերքի դեմ առանք,
Բարձրացել են ջրերն ահա, հուժկու ալիք են նետում,
Վախենամ, թե այսօր մենք շատ զինվոր կորցնենք այս գետում»:
1529. «Հագեն, շատ եք Դուք տրտնջում, — ասաց նրան քաջ արքան, —
Մի վախեցրեք մեզ ավելի, քան կա վիճակն իրական,
Աշխատեք մի ճամփա գտնել անց կենալու մյուս ափ,
Բայց այնպես, որ մեզ հետ տանենք ինչ որ ունենք՝ նույնությամբ»:
1530. Հագենն ասաց. «Կյանքիս Համար չեմ էլ դողում ես այնքան,
Թե կխեղդվեմ ու կկորչեմ ջրերի մեջ այս ելման,
Բայց մինչև այդ իմ ձեռքով պիտ սպանեմ մի քանիսին
Հոնաց երկրում, Հաստատակամ որոշումս է այդպիսին:
1531. Դուք մնացեք, իսկ ես փնտրեմ մի անցատեղ մեզ Համար,
Այս կողմերում գուցե ճարվի նաև ինչ-որ լաստավար,
Որ կարող է անցկացնել մեզ այն ափը, իմ արքա»:
Եվ ձեռքն առավ քաջ ասպետը գետնից վահանն իր հսկա:

1532. Նա զինված էր ոտքից գլուխ ամենալավ զենքերով,
Սաղավարտը շողշողում էր շող ու փայլով մի գերող,
Զրահների վրա գոտի, ապա սուր էր կրում նա,
Երկսայրի էր և կտրում էր սուրն այդ ամեն մի զրահ:
1533. Նա փնտրում էր գետի բոլոր ծանծաղուտներն անխտիր,
Ապա լսեց ջրի աղմուկ, ականջ դրեց ուշադիր,
Եվ աչքերի առջև բացվեց զանգակահունջ մի աղբրակ,
Ուր լողանում էին չքնաղ ջրահարսներ ճեփ-ճերմակ:
1534. Մոտիկ եկավ նրանց թաքուն Հագենն՝ ունկը ձայներին,
Բայց չտապով փախան նրանք, Հենց որ տեսան Հագենին,
Ուրախ-զվարթ լող տվեցին դեպի խորքերը գետի,
Թեև նրանց շորերն արդեն ձեռքին էին ասպտի:
1535. Ասաց մեկը փերիներից, ում անունն էր Հաղբուրդ.
«Ով դու Հագեն, ազնիվ ասպետ, զգեստները մեր ետ տուր,
Եթե ետ տաս, ապա ճշտիվ կհայտնենք քեզ, դյուցազուն,
Թե Հոների երկրում Հեռու ձեզ ինչեր են սպասում»:
1536. Թռչնի նման լողում էին նրանք ջրում մեղմասահ,
Խիստ գրավեց Տրոնյեցուն փերիների խոսքն ասած:
Նա կուզենար իմանալ, թե ինչ է գալու իր գլխին,
Երբ հարցրեց, փերիները նրան ամենն ասացին:
1537. Հաղբուրդը ասաց. «Վստահ գնացեք դուք ձեր ճամփան,
Ես ասում եմ՝ Հոնաց երկրում չի պատահի ձեզ վատ բան,
Գիտցեք նաև, որ Հենց այնտեղ, երկրի մեջ էթցելի
Սպասում են ձեզ բոլորիդ բյուր պատիվների փառքով լի»:
1538. Այդ խոսքերից Տրոնյեցին թեթևացավ բավական
Ու ետ տվեց զգեստները փերիներին դյութական,
Բայց ետ տալուց Հետո միայն Տրոնյեցին դյուցազուն
Ճշմարտությունն իմացավ, թե իրենց ինչ է սպասվում:
1539. Խոսեց մյուս ջրահարսը, ում անունն էր Զիգելինդ.
«Ուզում եմ քեզ տեղյակ պահել, Ալդրիանի քաղ որդիդ,
Խաբել է քեզ քույրս Հանտուն իր շորերի, օ, ներիդ,
Փորձանք կգա ձեր գլխին, թե գնաք երկիրն Հոների:

1540. Քանի ուչ չէ՝ վերադարձեք ձեր երկիրը դուք կրկին,
Թեև արի հերոսներդ կանչված եք խնջույքի,
Բոլորդ էլ մեռնելու եք երկրի մեջ հոների,
Եվ ով հասնի էթցելի հող, մեռնելու է, չի ներվի»:
1541. Բայց Հագենը ասաց նրան. «Ձեմ վստահում Ձեզ երբեք,
Հավատալու բա՞ն է, արդյոք, որ բոլորս անդ մեռնենք,
Եվ այն էլ մի կնոջ ոխի ու վրեժի պատճառով»:
Կրկնեցին իրենց խոսքը փերինները անխոով:
1542. Մեկը ասաց. «Կլինի այն, ինչ որ մենք քեզ ասացինք,
Եվ ձեզանից ոչ մեկը չի վերադառնա հայրենիք,
Մեզ հայտնի է, որ անվնաս մեծ երկրից հոների
Լոկ արքայի քահանան է դառնալու տուն հայրենի»:
1543. Խոսեց խիզախ Տրոնյեցին՝ սիրտը մուրը ահով լի.
«Այդ դեպքում դուք իմ տերերին հայտնեք լուրը սոսկալի,
Որ մեզ այնտեղ՝ հոնաց երկրում սպասում է մահ, սարսափ:
Իսկ ինձ լավ է ցույց տվեք, թե ինչպես անցնենք մյուս ափ»:
1544. Փերիններից մեկը ասաց. «Թե չեք փոխում միտքը ձեր,
Մի խրճիթ կա ահա այնտեղ, գետի հունով դեպի վեր,
Լաստավարի խրճիթն է դա, նա այս վայրում միակն է»:
Այդ լսելով՝ արագորեն տեղից ելավ Հագենը:
1545. Բայց ձայն տվեց փերիններից մեկն ասպետին կամակոր.
«Կացեք, Հագեն, էլի բան կա ասելու Ձեզ կարևոր,
Լսեք՝ ինչպես պետք է անցնեք այդ երկիրը անվտանգ,
Որն ընկած է քաջ էլզբի հզորագոր ձեռքի տակ»:
1546. Նա մի հերոս եղբայր ունի և անունն է Գելֆրատ,
Տերն է համայն Բավարիայի, որ անցնելը ծանր է շատ,
Եթե անցնեք հողով նրա՝ զգուշ եղեք ամենուր,
Հնազանդվեք լաստավարին՝ չբարկանա նա իզուր:
1547. Հոգին մռայլ ասպետ է նա և կատաղի չափազանց,
Եվ կորած եք, եթե հետը վեճի մտնեք դուք հանկարծ,
Կվճարեք շռայլորեն աշխատանքի դիմաց իր,
Գելֆրատի ծառան է նա և պահնորդը գետանցի:

1548. Քե պատասխան չտա նա Ձեզ՝ «Ամելրիխն եմ ես», — կանչեք,
 Նա աննման ասպետ էր մի բարեսիրտ և հզոր ձեռք,
 Որ թշնամյաց պատճառով իր թողեց երկիրն այս հսկա:
 Լաստավարն այդ կանչի դեպքում կլսի Ձեզ, մոտ կգա»:
1549. Մռայլասիրտ Տրոնյեցին երախտիքը հայտնեց իր,
 Բայց այլևս բան չխոսեց, լուռ հեռացավ մտացիլ
 Եվ հունն ի վեր բարձրացավ գետեզերքով Դանուբի,
 Այդժամ տեսավ լաստավարի փոքրիկ խրճիթն այն ափին:
1550. Եվ սկսեց բարձր ձայնել ասպետն ափից դեպ այն կողմ.
 «Եղբայր, ինձ շուրն անցկացրու, — բղավեց նա ինչպես հողմ, —
 Քեզ իբրև վարձ կտամ ոսկե ապարանջան մի ընտիր,
 Դե շուտ արա, էյ, լաստավար, քո նավակը պատրաստիր»:
1551. Լաստավարը հարուստ էր շատ, փողն իր աչքին չնչին էր,
 Նա ոչ մեկից վարձ չէր վերցնում, վարձը նրա ինչի՞ն էր:
 Մառանները նրա նույնպես հպարտ էին, անկաշառ,
 Եվ ոչ մեկը այն ափից չէր արձագանքում գեթ մեկ բառ:
1552. Ապա գոռաց Հագենն ուժգին, Հանեց այնպես ահեղ ձայն,
 Որ այդ ուժից Դանուբ գետի ալիքները բարձրացան.
 «Անցկացրու ինձ գետը, ես Ամելրիխն եմ, նա եմ, ով
 Այս երկիրը թողեց գնաց իր թշնամյաց պատճառով»:
1553. Ապարանջանն ապա սրի ծայրին դրած, պարզեց վեր,
 Անասելի չքնաղ էր այն և շողում էր ոնց արև,
 Դա վճարն էր, որ անց կենար ինքը երկիրն էլզենի:
 Թիերն իսկույն ձեռքը առավ լաստավարը ամենի:
1554. Նա վճռեց զարդը տանել կնոջը իր սիրավետ,
 Բայց ով ոսկով գայթակղվում, նա կորած է առհավետ,
 Մտքին դրեց նա Հագենի կարմիր ոսկին ունենալ
 Եվ սրահար եղավ նրա հզոր ձեռքով անխնայ:
1555. Լաստավարը մեծ եռանդով կտրեց անցավ գետն այս կողմ,
 Չտեսավ այս ափին սակայն Ամելրիխին սպասող,
 Այլ տեսնելով օտար մարդու՝ զայրույթ ապրեց մոլեգին
 Եվ ահռելի կատաղությամբ կանչեց, ասաց Հագենին:

1556. «Օտարական, ձեր անունն էլ Ամելլրիխ է գուցե թե,
 Բայց դու այն չես, ում համար որ եկա և ում լավ գիտեմ,
 Ամելլրիխը հորից, մորից իմ եղբայրն էր հարազատ.
 Դե իսկ հիմա որպես պատիժ դուք կմնաք ափին այդ»:
1557. Հագենն ասաց. «Աստծու սիրուն, եղբք Դուք ինձ ապավեն,
 Ընկերներիս վիճակը ինձ դրդեց այդպես որ վարվեմ,
 Վերցրեք ահա հոժարությամբ իմ այս վարձը թանկարժեք,
 Անցկացրեք մեզ այն ափը, երախտապարտ կլինենք»:
1558. Կրկին խոսեց լաստավարը. «Մի փայփայեք հույսեր զուր,
 Շատ թշնամի ունեն իմ տեր իշխանները ամենուր,
 Այդ պատճառով չեմ անցկացնում այն ափ ոչ մի մարդ օտար,
 Մնա ափին այդ, եթե որ թանկ է կյանքը քեզ համար»:
1559. «Պետք է անցնեմ, — Հագենն ասաց, — թեկուզ ինչ էլ գլխիս դա,
 Գոնե վերցրեք ընծա իբրև ապարանջանն այս ոսկյա,
 Անցկացրեք մեզ՝ հազարիս և ձիերին մեր նույնքան»:
 Ասաց մուսյլ լաստավարը. «Մոռացիր դա հավիտյան»:
1560. Ապա արագ ձեռքը առավ նա մի լայն և ամուր թի,
 Եվ Հագենին խփեց ուժով, հետո գղջար դեռ պիտի,
 Այդ հարվածից Հագենն ընկավ նավակի մեջ գլխիվայր,
 Նա չէր տեսել այդքան դաժան և կատաղի նավավար:
1561. Բայց ավելի գայրացրեց լաստավարը Հագենին,
 Երբ խփեց իր գլխին հանկարծ կարթածոզով ահագին
 Ու ջարդեց այն: Շատ ուժեղ էր լաստավարն այդ անիրավ:
 Բայց էլզեի լաստավարը շուտով պատիժն իր առավ:
1562. Այդ վայրկյանին խիստ կատաղած Հագենը ձեռքն իր պարզեց
 Եվ վահանի տակ վիթխարի հսկա սուրը դուրս քաշեց,
 Սրով խփեց լաստավարի գլխին ուժգին, փռեց ցած,
 Այս ամենի մասին շուտով բուրգունդները իմացան:
1563. Մինչ Հագենը զբաղված էր լաստավարով, Դանուբի
 Ջրերն հորդուն լաստը տարան, հեռացրին գետափից,
 Պետք էր նրա առաջն առնել, պետք էր հզոր ճիգ ու ջանք:
 Հույժ դժվար էր, բայց ասպետը հաջողեց դա մեն-մենակ:

1564. Ահա փորձեց նալը շարժել խոլ հոսանքով դեպի վեր,
 Բայց ձեռքերում քաջ ասպետի հաստապինդ թին ջարդվեց,
 Թեև չկար ուրիշն այնտեղ, չվհատվեց անհարկի,
 Արագորեն իրար կապեց կտորները թիակի:
1565. Հագենն հմուտ լաստավարի նման կանգնեց ղեկի մոտ
 Եվ ուղղեց լաստը դեպի ափի կողմն անտառոտ,
 Այնտեղ գտավ արքաներին՝ աչքը պահած իր ճամփին:
 Հենց որ տեսան Հագենն է դա՝ խմբվեցին գետափին:
1566. Ուրախացած ողջունեցին բուրգունդները Հագենին,
 Բայց հենց տեսան լաստանավում արյան ծով է ահագին
 Այն վերքերից, որ առել էր լաստավարը Գելֆրատի,
 Եփոթահար սկսեցին հարցում անել ասպետին:
1567. Երբ որ տեսավ Գունտեր արքան լաստանավում տաք արյուն,
 Հույժ տագնապած՝ դիմեց, ասաց իր ասպետին տաքարյուն.
 «Հագեն, ո՞ւր է լաստավարը: Քաջ ծանոթ եմ բարքին քո,
 Վախենամ թե լաստավարը սպանվել է քո ձեռքով»:
1568. Եվ Հագենը ստեց, ասաց. «Երբ այս նալը ես գտա,
 Կապած հսկա մի ուռնեուց, արձակեցի այն վստահ,
 Բայց և ոչ մի լաստավարի չեմ նկատել շուրջըդ
 Եվ իմ ձեռքով ոչ մի մարդու չեմ վնասել ես այսօր»:
1569. Եվ բարբառեց Գերնոտն այդժամ՝ խոսքի մեջ հոգս ու տագնապ.
 «Հեծյալներիս կյանքի համար մտահոգ եմ ես անչափ,
 Գետի հուժկու ալիքները կշրջեն նալն անպատճառ,
 Ինչպե՞ս պետք է մենք գետն անցնենք առանց հմուտ լաստավար»:
1570. Հագենն այդժամ բարձր կանչեց ժիր ճորտերին ու ասաց.
 «Հիմա հանեք ու ցած բերեք նժույգներից թամբ ու սանձ,
 Մոռացա, որ Հոենոսում լաստավար եմ եղել ես,
 Վստահ եղեք, ով իմ տիարք, կանցկացնեմ գետն այս ձեզ»:
1571. Մտրակելով՝ նժույգներին դեպի գետը քշեցին,
 Որ լող տալով անցնեն գետը առանց հեծյալ ու սանձի,
 Եվ գետն անցան բարեհաջող նժույգները ընտրագուլյն՝
 Չնայած որ մի քանիսը ավաղ եղան ջրամուկն:

1572. Ապա ոսկու սնդուկները և բեռները նավ տարան,
Քանգի չկար ճամփի համար դրանցից թանկ մեկ այլ բան:
Հագենը ձեռքն առավ թին և անցկացրեց գետով հորդ,
Շատ փառապանծ ասպետների դեպի երկիրն անծանոթ:
1573. Նախ և առաջ ասպետներին՝ ճիգ-լարուժով մի անլուր,
Ապա մարդկանց իր՝ վաթսուներին և, առանց շունչ առնելու,
Ինը հազար զինվորներին ափն հասցրեց դիմացի:
Ամբողջ օրը Տրոնյեցու ձեռքերն հզոր տքնեցին:
1574. Երբ Հագենը անցկացրեց գետն ամենքին անվնաս,
Կրկին նրա միտքը ընկան աղջիկները ջրահարս,
Որոնց տեսավ աղբյուրի մեջ, երբ իջնում էր գետով վար,
Դրա համար քիչ մնաց, որ քահանան իր կյանքը տար:
1575. Գետն անցնելիս քահանային տեսավ Հագենը հանկարծ,
Իր վանական իրերի մոտ նավակողին թիկն ընկած,
Երբ Հագենը տեսավ նրան՝ դուրը չեկավ քահանան,
Եվ ասպետը նրա հանդեպ եղավ այդօր խիստ դաժան:
1576. Քահանային Հագենն ուժով լաստանավից նետեց դուրս:
«Կաց, Հագեն, կաց», — կանչում էին շատ շատերը սրտահույզ:
Երիտասարդ Գիզելհերը առաջ եկավ անհամբեր,
Նա չէր ուզում թույլ տալ, սակայն իր ուժերից դա վեր էր:
1577. Այնուհետև խոսեց Գերնոտ թագավորը՝ քաջ բուրգունդ.
«Ասպետ Հագեն, քահանայի մեռնելուց Ձեզ ի՞նչ օգուտ,
Եթե ուրիշ մեկն աներ՝ Դուք կարգելիք անպայման,
Ինչու՞ այդքան դաժան եղաք, ի՞նչ մեղք ունեք քահանան»:
1578. Խեղճ քահանան փորձեց նորից բարձրանալ լաստանավ,
Թե օգնեին՝ կիներ անշուշտ, բայց ոչ մեկը մոտ չեկավ,
Քանգի հզոր Հագենը դեռ զայրացած էր ահազին,
Նորից նրան հրեց ջուրը: Դա դուր չեկավ ոչ մեկին:
1579. Երբ քահանան տեսավ՝ իրեն էլ չի օգնում ոչ մի մարդ,
Նորից դեպի գետը նետվեց՝ հույսը կտրած, ճարահատ,
Նա չգիտեր լողալ, սակայն տեր Աստված էր նրա հետ,
Ցամաք հասավ ողջ ու առողջ, բայց համարյա կիսախեղդ:

1580. Ափ դուրս գալով՝ նա թափ տվեց Հանդերձները ծանր ու թաց:
Դա հենց տեսավ Հագենը, ապա բախտն հասկացավ բուրգունդաց
Այնպես, ինչպես ասել էին փերիները գետափին:
Մտքեց. «Շուտով նայելու ենք ուղիղ մահվան աչքերին»:
1581. Երբ որ նավը ափ հասցվեց բեռներով իր բազմանուն՝
Ինչ որ պետք էր թագավորի ասպետներին դյուցազուն,
Ջարդեց նավը Հագենը և կտորները լցրեց ջուր:
Շատ զարմացան ասպետները նրա քայլից այդ զարհուր:
1582. «Եղբայր, — նրան Դանկվարտն ասաց, — նավն ինչու ես ջարդոտում.
Վերադարձին ապա ինչպե՞ս պիտի անցնենք գետն Հորդուն,
Երբ հոների երկրից դառնանք ու ետ գնանք Բուրգունդիա»:
Ջասաց սակայն Հագենը, որ չի լինելու երբեք դա:
1583. Տրոնյեցին ասաց միայն. «Այս է միտքն իմ արքայի,
Եթե մենք մեզ հետ բերել ենք վախկոտների վատհոգի,
Որ կուզենան փախչել մեզնից՝ իրենց ահից գլխահակ,
Այս ջրերում պետք է գտնեն իրենց մահը խայտառակ»:
1584. Նրանք իրենց մեջ ունեին երևելի մի ասպետ
Ֆոլկեր անվամբ, որ եկել էր Բուրգունդիայից իրենց հետ,
Նա արտաբաց ուրախությամբ և պարզությամբ արքեհեի
Ասաց իրեն շատ դուր եկավ պատասխանը Հագենի:
1585. Նժույզները պատրաստ էին ու բեռները բեռնված,
Բուրգունդները չէին կրել ոչ մի կորուստ անկասկած,
Չհաշված խեղճ քահանային, որ դառնացած ու անխոս,
Ոտքով, մենակ ստիպված էր վերադառնալ Հոննոս:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

Թե ինչպես Դանկվարտը սպանեց Գելֆրատին

1586. Ու երբ առանց փորձանքների Դանուբն անցան անվնաս,
Գունտեր արքան ասաց նրանց. «Ինչպե՞ս անցնենք երկիրն այս,
Ո՞վ մեզ պիտի ճամփա ցույց տա այս խորթ երկրում անընտել»:
Եվ քաջ Ֆոլկերն առաջ գալով՝ ասաց. «Ճամփան ես գիտեմ»:

1587. Հագենն ասաց. «Ով ասպետներ, ականջ դրեք ինձ մի պահ, Բարեկամաց պետք է լսել, անսալ նրանց մինչև մահ, Ես այսօր մի վատ լուր առա և հայտնում եմ ահա ձեզ. Մեզնից ոչ ոք էլ հայրենիք ետ չի դառնա այլևս:
1588. Դա ասացին փերիներն ինձ առավոտյան Հենց այսօր, Մեզնից ոչ ոք չի դառնա տուն, իմ խորհուրդն է միակ, որ, Ով Հերոսներ, զինվեք շատ լավ և պաշտպանվեք քաջաբար, Կհանդիպեն մեզ շատ ուժեղ թշնամիներ անհամար:
1589. Ես մինչ Հիմա կարծում էի՝ ինձ խաբում են այն փերիքփ Ասելով, թե ոչ մեկը չի վերադառնա հայրենիք, Այլ միայն նա՝ արքունական քահանան պիտ դառնա տուն: Այդ պատճառով էի ուզում նրան խեղդել ես գետում»:
1590. Եվ այս լուրը ջոկատներով անցավ ինչպես հուր-կայծակ, Սփաթվեցին ցավից խկուռն ասպետները համարձակ: Ահը պատեց Հոգիներին մռայլ մահի, կորստյան: Եվ խնջույքի մեկնողները անհունորեն վշտացան:
1591. Եվ երբ նրանք Մեհրիբի մոտ անցան գետը ամեհի, Այստեղ էր, որ զրկվեց կյանքից լաստավարը Էլզեի, Կրկին խոսեց Տրոնյեցին. «Իմ պատճառով մեզ վրա Թշնամիներ կհարձակվեն շուտով, գիտեմ ես վստահ:
1592. Առավոտյան լաստավորին սպանեցի ես անձամբ, Իմացքե այդ: Դրա համար կզան շուտով ոնց տարափ Գելֆրատն ու Էլզեն այստեղ, խուսափելն է անհնար: Նրանք գիտեն անտարակույս ու լսել են բոթն այդ չար:
1593. Նրանք, գիտեմ, շատ խիզախ են, կովիլու ենք անպատճառ, Պետք է, որ մենք քշենք ձիերն երկրով մեկ հևասպառ, Թող չկարծեն, թե փախչում ենք մենք նրանցից վատաբար»:
Ասաց ջահել Գիզելհերը. «Ճիշտ խորհուրդ է մեզ համար:
1594. Սակայն մեզ ո՞վ այս երկրում ճանապարհը ցույց կտա»:
«Ֆոլկերն, – ասին, – երգասացը՝ այս կողմերին քաջ գիտակ, Նրան ծանոթ է այստեղի ամեն կածան, ճանապարհ»:
Եվ Ֆոլկերը առաջ եկավ՝ ոտքից դուրս զինավառ:

1595. Երգասացը սաղավարտը գլխին կապել էր ամուր,
Շողում էին լուսերի մեջ զրահները ոսկեհուր,
Տեգի վրա կապել էր նա կարմիր դրոշ փողփողուն,
Գտավ, ավաղ, իր վախճանը քաջը հոնաց մեծ հողում:
1596. Լաստավարի մասին իսկույն Գեկֆրատը լուր առավ,
Նրա եղբայր էլզեն նույնպես լսեց դեպքը անիրավ:
Կատարվածը երկուսին էլ սոսկալի վիշտ պատճառեց,
Հավաքեցին քաջերին ու ճամփա ելան փուլթով մեծ:
1597. Եվ շատ չանցած, ինչպես որ այս լուրն հասել է ականջիս,
Երևացին բավարացիք բուրգունդաց կողմ վարգելիս,
Գալիս էին նրանք հուժկու զինվորներով ամեհի:
Նրանց թիվը կլիներ մոտ յոթ հարյուր կամ ավելի:
1598. Մարկգրաֆներն սկսեցին հետապնդել թշնամյաց,
Եվ նրանցից յուրաքանչյուրն այնքան շատ էր չարացած,
Որ տենչում էր հասնել նրանց և բռնվել շուտ մարտի,
Բայց նրանց և զորքի համար վերջացավ դա վատ սաստիկ:
1599. Տրոնյեցին այնպես շարեց զորագունդը բուրգունդաց
(Շատ էին թանկ նրա համար զինվորներն իր անկասկած),
Որ վերջապահ դարձավ ինքը՝ ասպետներով կաղնեձեռ:
Եվ նրա հետն Դանկվարտը՝ քաջ եղբայրը իր կրտսեր:
1600. Վերջին շողերն էին վառվում մայրամուտի ալշրթունք,
Հագներ շատ մտահոգ էր զորքի համար նիբելունգ:
Վահաններով պաշտպանվելով՝ անցնում էին Բավարիան,
Եվ քիչ հետո նրանց վրա հարձակվեցին անվարան:
1601. Ծանապարհի երկու կողմում և հետևում հենց իրենց
Լավեց դոփյուն սմբակների. բազմութուն էր գալիս մեծ,
Դանկվարտն ասաց. «Պատրաստ եղեք, կհարձակվեն հենց հիմա,
Սաղավարտներն ամուր ձգեք, լավ կլինի ձեզ համար»:
1602. Պարզելու, թե դա ինչ զորք է՝ բուրգունդները կանգ առան
Եվ մթան մեջ տեսան նրանք. շողում են սուր ու վահան,
Եվ երկար չէր կարող լռել ասպետ Հագենն անխռով.
«Ո՞ր է գալիս մեր հետևից, պատասխանեք մեզ շուտով»:

1603. Մարկգրաֆը՝ Բավարիայի տերը, ասաց Հագենին.
«Մենք փնտրում ենք նրան, ով մեզ վնասել է ահագին,
ես չգիտեմ, լաստավարիս ով է սպանել վատաբար,
Քաջ ասպետ էր նա, ուստի ես վշտացած եմ, շատ եմ չար»:
1604. «Ուրեմն, դա քո՞ լաստավարն էր, — Տրոնյեցին խոսեց արդ, —
Նա մեզ մերժեց փոխադրել, մեղավոր եմ, Գելֆրատ,
Այդ ասպետին սպանեցի, բայց ցավում է սիրտս դեռ:
Եվ քիչ մնաց նա ինքը ինձ այն աշխարհը ուղարկել:
1605. Ես առաջարկ արի նրան ոսկի, զգեստ, ինչ կուզեր,
Որ անցկացնեիր իր նավով մեզ գետը այս կողմ՝ ափը Ձեր,
Դրա վրա զայրացավ նա ու հարվածեց ինձ ուժեղ,
Ձեռքի ծանր կարթածողով. կատաղեցի ես այդտեղ:
1606. Սուրս առա, որ պաշտպանվեմ գայրույթից իր հրացայտ,
Վերք հասցրի նրան ծանր, և նա մեռավ վերջից այդ:
Նրա համար որքան պետք է, ես պատրաստ եմ վճարել»:
Եվ երկուսն էլ խիստ բարկացած՝ սկսեցին թունդ վիճել:
1607. Գելֆրատն ասաց. «Ես գիտեի, եթե Գունտերն իր գործով
Գա և անցնի, Հագենը մեզ կպատճառի հոգսեր ծով,
Դրա համար նա իր կյանքով կհատուցի անպայման,
Իր չարիքի համար գործած պիտի մեզ տա պատասխան»:
1608. Նրանք միմյանց վահաններին սուր տեգերը ուղղեցին,
Ու զայրույթը ողջ համակեց Գելֆրատին, Հագենին,
Չափվում էին իրար հետ Դանկվարտը ու էլզեն,
Փորձում էին միմյանց, ապա սկիզբ առավ մարտ մեկեն:
1609. Էլ ո՞ւր կային նրանց նման ասպետներ քաջ ու խիզախ,
Հզոր զարկից Տրոնյեցին մեջքի վրա ընկավ կախ,
Պոկվեց նրա ձիու փորկապն ուժեղ զարկից Գելֆրատի:
Կորցրած սանձը՝ Տրոնյեցին թամբից զարկվեց չոր գետնին:
1610. Լավում էին ամեն կողմից գենքի շաչյուն ու կանչեր,
Կրկին Հագեն Տրոնյեցին ընկած տեղից ելավ վեր,
Ցած էր ընկել նա անողոք ախոյանի մկունդից,
Կատաղել էր Հագենը հույժ ընդդեմ ասպետ Գելֆրատի:

1611. Զիբերն այդժամ տալով ձեռքը ասպետների հպատակ,
Կրկին ելան իրարու դեմ՝ ատելությամբ դժնդակ,
Գեղֆրատն ու Հագենն էլի զարկվեցին իրարու:
Ու զարկեցին նրանք միմյանց՝ աչքերում մահ ու արյուն:
1612. Գեղֆրատի վրա թեև քաջ Հագենը խոյացավ,
Սակայն նրա վահանն անխոց փշրեց քաջը մարկզրաֆ,
Եվ վահանից Տրոնյեցու կայծեր թռան բոցեղեն,
Եվ Գուևտերի ասպետն զգաց մահվան մոտ է ինքն արդեն:
1613. Բարձր կանչով Դանկվարտի կողմը դարձավ նա իսկույն.
«Օգնիր, եղբայր իմ, առաջս քաջ է կանգնել աննկուն,
Մի զորավոր, ահեղ ասպետ, նա կսպանի ինձ հաստատ»:
Ասաց նրան Դանկվարտն արի. «Ես կլուծեմ վեճը այդ»:
1614. Ապա թուով մոտ և այնպես հարված իջավ կատաղած
Գեղֆրատի վրա սրով, որ նա անշունչ ընկավ ցած,
Շատ կուզենար էլզեն առնել իր վրեժը հերոսից,
Սակայն մեծ էր չափը նրա զորքի կրած վնասի:
1615. Եղբայրը իր սպանված էր, ինքը՝ արյան մեջ թաթախ,
Երևի մի ութսուն հոգի զինվորներից իր խիզախ
Իրենց մահը գտան այստեղ, և ստիպված էր էլզեն
Հրաման տալ իր ասպետաց՝ խոհեմաբար նահանջել:
1616. Երբ որ փախան բավարացիք՝ կրած ծանր պարտություն,
Լսվում էր, թե ինչպես էին զենք ու զրահ դղրդում,
Տրոնյեցու ջոկատն էր դա՝ հետապնդող թշնամուն:
Փախչում էին բավարացիք գլխապատառ, խառնիխուռն:
1617. Եվ տեսնելով փախչողներին՝ Դանկվարտը քաջասպետ
Բարձր կանչեց բուրգուհներին. «Բավական է, դառնանք ետ,
Թողնենք գնան, ոտից գլուխ նրանք վերք են ու արյուն:
Իմ խորհուրդն է, որ մերոնց մոտ վերադառնանք մենք իսկույն»:
1618. Դարձան այնտեղ, ուր քիչ առաջ կռվում էին և առույգ,
Ասաց Հագեն Տրոնյեցին. «Հայտնեք հիմա ինձ ստույգ,
Թե քանի մարդ ենք կորցրել զինվորներից մեր արծիվ
Այս կռվի մեջ Գեղֆրատի կատաղության շնորհիվ»:

1619. Այդ կովի մեջ բուրգունդները կորցրեցին լոկ չորս մարդ, Անչափ քիչ էր այդ կորուստը բավարացոց համեմատ, Նրանց կողմից սպանվել էր հարյուր զինվոր, դեռ ավել: Բուրգունդների վահանները արյամբ էին ողողվել:
1620. Այդ ընթացքում ամպի տակից լուսինն ելավ վեհաշուք, Եվ Հագենը կրկին ասաց. «Լսեք, ոչինչ չասեք դուք Մեր պատվարժան արքաներին կովի մասին այս հանկարծ, Մինչև չգա առավոտը՝ չպատճառենք հոգս նրանց»:
1621. Երբ որ մարտից ասպետները վերադարձան, տեղ հասան, Սկսեցին նեղվել իրենց հոգնությունից անսահման.
«Ինչքան պիտի մենք դեռ քայլենք», – հարցնում էին իրարու:
Դանկվարտն ասաց. «Այս կողմերում մենք հանգիստ չենք առնելու»:
1622. Պետք է առաջ գնանք այնքան, մինչև բացվի առավոտ»:
Եվ Ֆուլկերը, որ դարձել էր բոլորին քաջ առաջնորդ, Հարց ուղղեց զորապետին. «Երբ ենք տալու մենք հանգիստ Արքաներին մեր սիրելի և իջնելու ցած թամբից»:
1623. Դանկվարտն ասաց. «Ես չեմ կարող պատասխանել հիրավի, Մենք չպետք է հանգստանանք, մինչև օրը չբացվի, Որտեղ էլ որ հասնենք, անշուշտ, դադար կառնենք խոտերին»:
Վհատվեցին բոլորը շատ, երբ խոսքերն այդ լսեցին:
1624. Զրահներին զինվորների բոսոր արյուն էր դեռ տաք, Մթան մեջ դա չէին տեսնում, մնում էին անտեղյակ, Բայց լեռների հետևից երբ արեգակը շողշողաց, Արքան նայեց Տրոնյեցուն և հարցրեց զարմացած.
1625. «Ի՞նչ է եղել, ասպետ Հագեն, անտեղյակ ենք մենք, ավաղ, Կարող էի, չէ՞, ուղարկել Ձեզ օգնություն անհապաղ, Ո՛ւմ հետ եք դուք մտել կովի արյունալի, թե՛ սյուլպես»:
Հագենն ասաց. «Գելֆրատի: Մթնով վրա տվին մեզ»:
1626. Լաստավարի պատճառով այն հարձակվեցին մեզ վրա, Գելֆրատին իմ եղբայրը գետին փռեց սրահար:
Մե՛ծ նեղության մեջ ընկնելով՝ էլզեն փախավ վիրավոր, Նրանք հարյուր զոհ տվեցին, իսկ մենք՝ միայն չորս զինվոր»:

1627. Ես չեմ կարող ասել՝ նրանք որտեղ իջան Հանգստի,
Սակայն շուտով ողջ տեղացոց դարձավ մեկին պարզ, Հայտնի,
Որ Ութնի որդիները գնում են մեծ խնջույքի,
Նրանց շուտով ընդունեցին Պասաուում ցնծազին:
1628. Իսկ մորեղբայր Պիզրիմը՝ եպիսկոպոս և իշխան,
Անչափ շատ էր ուրախացել, որ զարմիկներն իր եկան
Ասպետներով մեծաքանակ և Հյուր եղան երկրում իր:
Բուրգունդներին պարզ էր վաղուց, որ կընդունվեն սիրալիր:
1629. Ճանապարհից եկածներին ընդունեցին Հրճվազին,
Պասաուում չկարեցան տեղավորել ամենքին:
Գետից այն կողմ, դաշտերի մեջ պատրաստեցին շատ արագ
Տաղավարներ Հանգստավետ և վրաններ բարեկարգ:
1630. Եվ ստիպված էին նրանք մի ամբողջ օր ու գիշեր
Մնալ այնտեղ՝ վայելելով Հոգածուխյուն անեզր:
Ապա ընկան ճամփա դեպի Ռուդիգերի Բելլարեն,
Էլզեի հետ կատարվածը այստեղ Հայտնի էր արդեն:
1631. Երբ որ ճամփից Հոգածները, Հանգիստն իրենց լավ առած,
Եռանդազին ու խնդասիրտ շարժվեցին դեպ առաջ,
Հենց սահմանի գլխին տեսան մի ասպետի՝ մտած քուն,
Որի սուրը Տրոնյեցին կողքից առավ շատ թաքուն:
1632. Քնով անցած ձեր ասպետի անունն այս էր՝ էքեվարտ,
Երբ արթնացավ ու տեսավ, որ սուրը չկա, տխրեց շատ՝
Մտածելով, որ կորցրել է բուրգունդների հենց մեղքով,
Ուրեմն, ինքը չի պահպանում սահմանները ապահով:
1633. «Ավաղ, ավաղ, — էքեվարտը կանչեց տխուր, Հուսահատ, —
Ծանր նստեց ինձ վրա այս բուրգունդների երթը շատ,
Զիգֆրիդի մահվան օրից իմ խնդուխյունն է կորել,
Մոռացա քո Հանդեպ պարտքս, ավաղ, ասպետ Ռուդիգեր»:
1634. Լսեց Հագենն էքեվարտի հառաչանքը սրտակեղ,
Ետ տվեց սուրն ու վրան էլ՝ ապարանջան վեց ոսկե.
«Վերցրու դրանք, հերոս, վարձդ է, ես սիրեցի քեզ անհուն:
Խիզախ մարդ ես, որ միայնակ սահմաններ ես պահպանում»:

1635. Էքեվարտը ասաց. «Թող Ձեզ միշտ պահպանի տեր Աստված, Բայց ես պետք է ասեմ, որ Դուք ոտք չդնեք Հողն Հոնաց, Սպանել եք Ջիզֆրիդին, դեռ չի անցել ոխն այն մեծ, Պահպանեք Ձեր կյանքը՝ այս է իմ խորհուրդը Ձեզ անկեղծ»:
1636. «Աստված մեզ Հետ,— ասաց նրան Հագենը ի պատասխան,— Այլ Հոգա չուենն ասպետներն այս կտրած երկար ճամփա, քան Լավ Հանգստից ու խնամքից՝ վայել իրենց վեհ դասին: Եվ այսօր մենք այս երկրի մեջ պիտի Հոգանք այդ մասին»:
1637. «Երկար ու ձիգ ճանապարհից նժույզներն են մեր Հոգնել, Ուտելիքը վերջացել է,— շարունակեց Հագենը,— Վայ թե ոսկով չկարենանք սնել զորքը մեր քաղցած, Ա՛յ թե լիներ մի ազնիվ մարդ, մեզ պատիվ տար ու ճոխ Հաց:
1638. Կրկին խոսեց Էքեվարտը. «Ձեզ ցույց կտամ ես մեկին, Նրա նման ձեզ ոչ մեկը չի ընդունի, չի Հարգի, Ոչ մի այլ տեղ, քան Հենց այստեղ, ամբողջում մի բարձրահարկ, Եթե Հպարտ ասպետներդ Ռուդիգերի մոտ գնաք:
1639. Ապարանքը մեր իշխանի ճամփից անչափ Հեռու չէ, Փառավոր է նրա տունը, իսկ նրա սիրտն՝ այնքան ջերմ, Լի է անգին շնորհներով, ինչպես դաշտը՝ ծաղկառատ: Ասպետներիդ ծառայելու, գիտցե՛ք, նա միշտ է պատրաստ»:
1640. Ասաց Գունտեր թագավորը. «Սուրհանդակս եղեք Դուք, Եթե իրոք կամենում է մեզ ընդունել վեհաշուք, Մեր սիրելի Ռուդիգերը, նաև զորքիս ամենայն, Արքայի պես կհատուցեմ դրա դիմաց ես նրան»:
1641. Էքեվարտը ասաց. «Սիրով կդառնամ Ձեզ սուրհանդակ»:
Եվ նա իսկույն ճամփա ընկավ ուրախ սրտով, գոհունակ, Հաղորդելու տեսածը իր տեր ասպետին, տիրուհուն:
Ձէր գգացել մարկգրաֆը վաղուց նման խնդություն:
1642. Ապա տեսան Բեխլարեն է գալիս մեկը քաջընթաց:
Ռուդիգերը ճանաչում էր Էքեվարտին և ասաց.
«Ո՛ւր է այդպես Քրիմհիլդի Հպատակը շտապում»:
Նրանց թվաց՝ թշնամիք են վրա տվել անհատնում:

1643. Ռուդիգերը դարպասի մոտ դիմավորեց բանբերին,
Որ հսկա սուրն հանած գոտուց՝ մոտենում էր տանտերին:
Էքեվարտը պատմեց երկար՝ չլուելով մի վայրկյան,
Տանտիրոջն ու նրա մարդկանց հայտնեց լուրը հրճվածայն:
1644. Ասպետն ասաց մարկգրաֆին. «Ուղարկել է ինձ Ձեզ մոտ
Գուևտեր արքան Բուրգունդացի, ասպետը քաջ՝ Ձեզ ծանոթ,
Գիգելհերը և Գերնտը՝ զույգ եղբայրներն արքայի
Խնդրում են Ձեր ծառայությունն իրենց գորքին ու գահին:
1645. Նույնն ասացին Տրոնյեցին և Ֆոլկերը միասին,
Որ հայտնեցի Ձեզ շտապով: Էլ չեմ ասում այն մասին,
Թե ինչ խնդրեց Դանկվարտը՝ զորապետը արքունի,
Որ իր գորքը օթևանի և խնամքի հոգս ունի»:
1646. Այդժամ ասաց մարկգրաֆը՝ ծիծաղելով զվարթուն.
«Շատ ուրախ եմ, որ Բուրգունդի արքաները մեծանուն
Ծառայություն են պահանջում: Թող իմանան նրանք, որ
Միշտ պատրաստ եմ, նրանց գալով կլինեմ ես բախտավոր»:
1647. «Իսկ զորապետ Դանկվարտը Ձեզ հայտնում է շատ ստույգ,
Թե Ձեր հարկի տակ ում պիտի հյուրընկալեք այսօր դուք:
Հազար վաթսուև ազնիվ ասպետ, մարկգրաֆ իմ սիրալիր,
Եվ նրանց հետ՝ ինը հազար զինվորներ ու զինակիր»:
1648. «Բարով են մեր հյուրերն եկել, խնդություն է իսկական,
Որ այդքան վեհ ասպետներ են եկել, հասել մեր ոստան,
Կմատուցեմ եկվորներին ծառայությունն իմ սրտանց,
Արդ, ասպետներ, հպատակներ դիմավորե՛նք մեներ նրանց»:
1649. Ասպետները հեծան իրենց նժույգները՝ կազմ-պատրաստ,
Ռուդիգերի խոսքը նրանց ոգևորեց անչափ շատ,
Պատրաստ էին ծառայելու եկվորներին սիրով ջերմ,
Միայն թե նա՝ Գոտելինդը այս ամենին տեղյակ չէր:

ԴԻՊԿԱԾ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉԱԿԵՍ ՀԱՍԱՆ ԲԵԽԱՐԵՆ

1650. Երբ տուն մտավ մարկգրաֆը, կանանց գտավ միասին՝
Տիկնոջը և իր դստերը, ու հաղորդեց այն մասին,
Որ քիչ առաջ լուր է առել, ուրախալի, բարի լուր՝
Քրիմհիլդի եղբայրները շուտով կգան իրենց հյուր:
1651. «Իմ սիրելի տիկին, — ասաց մարկգրաֆն անվանի, —
Պետք է նրանց լավ ընդունենք՝ արքաներին քաջազնիվ,
Երբ որ նրանք հերոսներով հասնեն այստեղ, մենք պիտի
ձերմ ողջունենք Տրոնյեցուն՝ արքայի մեծ ասպետին:
1652. Նրանց հետ է մեկ այլ ասպետ, որի անունն է Դանկվարտ,
Իսկ մյուսը Ֆուլկերն է քաջ, որ ասպետ է անաղարտ,
Այս վեցին էլ պիտ համբուրես, նաև՝ դուստրը իմ բարի,
Եվ սիրալիբ ծառայելով՝ շահենք սրտերն հյուրերի»:
1653. Դա խոստացան անել նրանք՝ պատրաստակամ ու զվարթ,
Սնդուկներից դուրս բերեցին ընտիր հանդերձ, արդուզարդ,
Դրանք հագած՝ պետք է նրանք հյուրերի դեմ ելնեին
Ու եռանդով գործի անցան չքնաղ օրիորդ ու տիկին:
1654. Շպարելու կարիք չկար դեմքը նրանց վարդերես,
Կրում էին ճոխ պսակներ գլուխներին ոսկեգես՝
Հյուսված քնքուշ նրա թելից և ազուցված մազերին,
Որ չխառներ քամին դրանք՝ հավատացեք իմ խոսքին:
1655. Թողնենք կանանց իրենց անթիվ Հոգսերի մեջ բազմազան:
Բեխլարենցու ասպետները ամրոցից դուրս սլացան,
Որ ընդառաջ ելնեն երեք արքաներին քաջազոր,
Մարկգրաֆի Հողում նրանց ընդունեցին փառավոր:
1656. Մարկգրաֆը տեսավ, ահա, արքաներն են մոտենում,
Կանչեց նրանց ուրախացած՝ ձայնով բարձր զվարթուն.
«Բարի գալուստ, ով արքաներ, ասպետաց հետ ձեր ազնիվ,
Որ տեսնում եմ ձեզ իմ երկրում՝ երջանկություն է, պատիվ»:

1657. Ենորհակալ եղան նրան արքաները սիրալիր,
Որ ընդունեց իրենց շատ ջերմ մարկգրաֆը հողում իր,
Բեխլարենցին ջերմ ողջունեց առանձնապես Հագենին
Եվ Ֆոլկերին՝ բուրգունդական երգասացին արքենի:
1658. Նա ողջունեց և Դանկվարտին: Եվ սա ասաց սրտացավ.
«Զեր Հարկի տակ Դուք կընդունեք ասպետներին, մարկգրաֆ,
Սակայն ինչպես տեղավորենք զինվորներին՝ ինն Հագար»:
Բեխլարենցին պատասխանեց. «Անհոգ եղեք Ձեզ Համար:
1659. Ամենքիդ էլ տեղ կճարվի իմ Հարկի տակ այս գիշեր,
Ինչ որ ունեք Ձեզ Հետ Հիմա՝ Հանդերձանք ու նժույգներ,
Հոգ կտարվի ինչպես Հարկն է՝ թե մարդկանցը, թե ինչքին,
Այնպես որ Ձեր ունեցածից խթան անգամ չի կորչի:
1660. Դուք՝ զինվորներ, Հենց դաշտի մեջ վրան խփեք ձեզ Համար,
Ինչ կորցնեք՝ Հոգ մի արեք, կհատուցեմ անպայման,
Եվ ձիերի սանձերն Հանեք՝ դաշտում արձակ արածեն»:
Ձէին տեսել բուրգունդները նման տանտեր լիաձեռ:
1661. Այդ լսելով՝ ուրախացան բուրգունդները լիաթոք,
Նրանց այդպես էջր ընդունել, Հաստատ գիտեմ, դեռ ոչ ոք,
Ձիերն Հեծան ասպետները, դեպի քաղաք վարգեցին,
Եվ դաշտի մեջ զինվորները ճամբարն իրենց զարկեցին:
1662. Գոտելինդը սպասում էր դարպասի մոտ քաղաքի,
Նրա Հետ էր դուստրը չքնաղ, տեսան նրան իր կողքին,
Երջապատված նաժիշտներով, օրիորդներով շողշողուն,
Հագած Հանդերձ չնաշխարհիկ, ընտիր զարդեր բազմագույն:
1663. Արևի տակ շողում էին Հագուստները նրանց պերճ՝
Թաղված ամբողջ ակնեղենի, գոհարակուռ ոսկու մեջ:
Երբ մոտեցան, Հյուրերն իջան նժույգներից՝ շուքով մեծ,
Հե՛յ, ինչ փայլով ցույց տվեցին բուրգունդական բարձն իրենց:
1664. Երեսունվեց կույսեր, նաև շենշող տիկնայք մեծաթիվ,
Որոնց միայն նայելն արդեն մեծ վայելք էր ու պատիվ,
Ասպետների ուղեկցութամբ առաջ եկան ժպտադեմ,
Որ Հյուրերին ողջունենր տան, բարի գալուստ մաղթեն ջերմ:

1665. Մարկգրաֆի դուստրը երեք արքաներին Համբուրց,
(Այդպես վարվեց նաև մայրը): Բայց օրիորդը կարկամեց,
Երբ Հագենին տեսավ, սակայն Հոր ակնարկով վերստին
Առաջ եկավ ու Համբուրց մռայլագեմ ասպետին:
1666. Դուստրը անխոս կատարում էր պատվերը Հոր բարձրանուն,
Բայց շիկնել էր նա ամոթից, գուշն էր տալիս ու առնում:
Նաև Դանկվարտն ու Ֆոլկերը արժանացան Համբուրի,
Երգասացին Համբուրց, զի ազնվատես էր ու բարի:
1667. Մարկգրաֆի դուստրը ջահել ձեռքը բռնեց այդուհետ
Արքանդայր Գիզելհերի՝ բուրգունդական ասպետի,
Այդպես վարվեց նաև մայրը՝ ուղեկցելով Գուլտերին:
Նրանք ուրախ դաշլիճ մտան՝ քաջերի Հետ միասին:
1668. Մարկգրաֆը Գերնոտի Հետ դաշլիճ մտավ լուսազարդ,
Եվ նստեցին նրանք սեղան՝ ուտեստներով լիառատ,
Եվ պատվերով մարկգրաֆի ընտիր գինի բերեցին,
Ջէին բերկրել Հերոսներն այդ վաղուց այդպես սրտագին:
1669. Եվ բոլորը նայում էին զարմանքով ու ապշահար
Մարկգրաֆի դստերը սեգ: Գեղեցկութամբ անհնար
Շողում էր նա ու գրավում խելքն ու միտքը ամենքի,
Երազանքն էր նա բոլորի՝ իբրև Հրաշք անմեկին:
1670. Ջգում էին, սակայն, իրենք անմատուցյն են երազում:
Շուրջբոլորը գեղանիներ, կույսեր էին փափկասուն՝
Հայացքի տակ ասպետների խանդավառված, սիրառատ:
Իսկ Ֆոլկերը պատրաստակամ տանտիրոջն էր օգնում արդ:
1671. Ապա նրանք բաժանվեցին, դա այդպես էր՝ իբրև կարգ,
Եվ իրարից զատ նստեցին ասպետները ու տիկնայք,
Մեծ դաշլիճում ծածկվեցին սեղանները լիովին,
Երբ տանտերը սիրով ձայնեց՝ Հացի նստել ամենքին:
1672. Հյուրերի Հետ նստեց միայն Գոտելինդը՝ տիրուհին,
Իսկ գեղանի իր դուստրը՝ օրիորդաց Հետ միասին,
Առանձին էր տեղը նրանց, բայց երբ Հանկարծ դա տեսան,
Բուրգունդական ասպետները տրամեցին անսահման:

1673. Իսկ երբ նրանք ընտիր գինուց, ուտեստներից կշտացան,
Նորից դաշլիճ կանչեցին գա գեղեցկուհի աղջկան,
Տեսան նրան ասպետները, զվարթացան նորից նոր,
Եվ ամենից զվարթատես երգասացն էր բարեշնորհ:
1674. Ասաց ազնիվ երգասացը բարձր, ի լուր ամենքի.
«ԲազմաՀարուստ իմ մարկգրաֆ, Աստված մեծ է ու բարի,
Շուայլորեն բաշխել է Ձեզ շնորհներից իր առատ.
Գեղեցիկ կին ու նրա հետ՝ օր ու արև բարեբախտ:
1675. Թե լինեի ես թագավոր ու կրեի ոսկե թագ, —
Շարունակեց երգասացը, — կընտրեի լուսնի տակ
Լոկ դստերը Ձեր իբրև կին՝ Հրեշտակին ծաղկազարդ,
Որ չքնաղ է տեսքով, ծագմամբ՝ բարեծնունդ, բարեզարմ»:
1676. Մարկգրաֆը պատասխանեց. «Հնարավոր է միթե,
Որ կամենա թագավորը իմ աղջկան կին ընտրել,
Ովքե՞ր ենք մենք՝ ես ու կինս, երկնքի տակ այս օտար,
Էլ ո՞ւմ է պետք իմ աղջկա գեղեցկությունն անխաթար»:
1677. Դրա վրա ազնիվ ասպետ Գերնոտն ասաց Հրճվագին.
«Թե ընտրելու լինեմ Հանկարծ ես երբևէ ինձ մի կին,
Կընտրեմ հենց այս գեղեցկուհուն, որ հմայիչ է այնքան»:
Պատասխանեց Տրոնյեցին՝ որպես մոտիկ բարեկամ.
1678. «Ամուսնանալ է ցանկանում Գիզելհերը՝ մեր արքան,
Մարկգրաֆի դստեր ծագումն ազնիվ ու վեհ է այնքան,
Որ կընդունենք նրան սիրով մենք բոլորս անխտիր,
Եթե դառնա մեր թագուհին, թագը կրի Բուրգունդի»:
1679. Բարեհոգի մարկգրաֆին շատ դուր եկան խոսքերն այս,
Գոտելինդը՝ նրա կինը, ուրախացավ ոչ պակաս,
Եվ բոլորը՝ Հեռու-մոտիկ որոշեցին միաձայն,
Որ օրիորդին Գիզելհերը առնելու է կնության:
1680. Ինչ որ բախտը սահմանել է՝ լինելու է աներկբա,
Մնողները պատվիրեցին, որ դուստրը դաշլիճ գա
Ու երդվեցին Գիզելհերին տալ աղջկան կնության,
Գիզելհերն էլ երդում տվեց՝ սիրել կնոջն Հավիտյան:

1681. Եվ խոստացան գեղեցկուհուն նվիրել բերդ ու կավածք,
 Գունտեր արքան իր կնիքը դրեց իրենց երդման տակ,
 Եվ Գեբրնոտը երդում տվեց, որ կլինի Հենց այդպես:
 Մարկգրաֆը ասաց. «Քանզի ամրոցներ չունենեմ ես,
1682. Կհատուցեմ ձեզ բոլորիդ նվիրումով իմ անխախտ:
 Ես կհանձնեմ իմ դստերը այնքան ոսկի ու արծաթ,
 Որ հարյուր ձի հազիվ տանել, տեղ հասցնել կարենան,
 Որ փեսային բարձր տոհմի պատվին լինի դա արժան:
1683. Ապա երկու ջահելներին սեղմ օղակի մեջ առան,
 Ինչպես կարգն էր՝ շարք կազմեցին երկուսի դեմ հանդիման,
 Երիտասարդ ասպետները՝ զվարթադեմ ու ցնծուն,
 Խանդով էին նրանք նայում Գիզելհերին դյուցազուն:
1684. Սկսեցին հարցնել նրանք գեղեցկուհի օրիորդին,
 Հավանո՞ւմ է Գիզելհերին, արդյոք մո՞տ է իր սրտին:
 Նա ամոթից շփոթահար՝ չգիտեր, թե ինչ ասեր:
 Աղջիկները միշտ դժվար են ասպետներին հայտնում սեր:
1685. Հայրը խորհուրդ տվեց նրան՝ «այո» ասի արքային,
 Անկեղծորեն համաձայնի Գիզելհերին դառնալ կին,
 Իր սպիտակ նուրբ ձեռքերով գրկեց արքան օրիորդին,
 Սակայն ի՛նչ կարճ տևեց նրանց երջանկությունն անմեկին:
1686. Ապա ասաց մարկգրաֆը. «Ով իմ ազնիվ արքաներ,
 Երբ ետ դառնաք դուք Բուրգունդիա, դեպ հայրենի ափը ձեր,
 Այդ ժամանակ, ինչպես կարգն է, կտամ դստերս մեկուճար,
 Տանեք ձեզ հետ ձեր երկիրը»: Առաջարկին դեմ չկար:
1687. Եվ այս վճռով փակվեց օրը, մարդիկ ոտքի ելան զոհ,
 Թույլ տվեցին օրիորդին, որ դնա սենյակն իր շուտով,
 Եվ հյուրերն էլ հանգիստ առան օթյակներում պերճաշուք,
 Առավոտյան նրանց համար պատրաստեցին ճոխ խնջույք:
1688. Երբ որ կերան ու դուրս եկան բուրգունդները պանծալի՝
 Պատրաստվելով շարունակել ճամփան երկիրն էթցելի,
 Մարկգրաֆը ասաց նրանց. «Մնացեք դեռ մի քիչ էլ,
 Չեզ նման թանկ ու սիրելի հյուրեր ես չեմ ունեցել»:

1689. Դանկվարտը պատասխանեց. «Անհնար է դա, իշխան, Որտեղի՞ց եք վերցնելու Դուք խմիչքներ ու Հաց այդքան, Որ կարենաք մեր բոլորին կերակրել այսպես լավ»:
Ռուդրիգերը լսեց, ասաց. «Հոգ մի արեք դուք բնավ»:
1690. Իմ սիրելի արքաներ, դուք չեք դարձնի ինձ աղքատ, Թեկուզ մնաք քառասուն օր, և ես ծախսեր անեմ շատ, Ձեզ Համար և ձեր բյուրավոր ասպետների պատվական, Հանուն էթցեյ մեր արքայի չեմ խնայի ոչ մի բան»:
1691. Բուրգունդները ուզում էին ճամփա ընկնել շատ արագ, Բայց ստիպված Բեխլարենում մնացին չորս օր նրանք, Վայելեցին մարկգրաֆի շոայլությունն անաղարտ, Որ նվիրեց նրանց զենքեր և Հանդերձանք շատ առատ:
1692. Սակայն չէին կարող մնալ, պիտ ընկնեին ճանապարհ, Եվ տանտերը շոայլորեն բաժանեց ինչ կար-չկար, Իր թանկագին Հյուրերին նա չխնայեց ոչ մի բան, Ում ինչ պետք էր՝ նվիրում էր, որ իրենից գոհ մնան:
1693. Ծառաները մոտ բերեցին դարպասներին Հապշտապ Երթի պատրաստ նժույգները՝ սանձած արդեն, դրած թամբ, Եվ ձեռքն առած ասպետները վահանները անթերի՝ Ուզում էին շարժվել արդեն, դեպի երկիրն էթցելի:
1694. Իսկ տանտերը շոայլորեն նվերներ էր տալիս թանկ Հյուրերին, որ Բեխլարենից մեկնում էին գոհունակ, Այն միտքն էր մեղմ նրա սիրտը Հպարտորեն ջերմացնում, Որ դարձել է իր գեղանին Գիզելհերի Հարսնացուն:
1695. Նա մի չքեղ օղագրահ Հանձնեց Գունտեր արքային Եվ կամեցավ, որ նա Հագնի ի պատիվ իր մեծ գահի, Հազվադեպ էր ընծա վերցնում Գունտերը, բայց այս անգամ Հյուրընկալին գոհությունն իր Հայտնեց իբրև բարեկամ:
1696. Նա Գերնոտին նվեր տվեց սուր, որ բազկով իր արդար Քաջ ասպետը կռվի դաշտում մարտնչի միշտ քաջաբար, Նվերն Հանձնեց մարկգրաֆի կինը սրտով իր անդամ, Սակայն Հետո Ռուդրիգերը Հենց այդ սրից էլ ընկավ:

1697. Գոտելիինդը առաջարկեց պարգև նաև Հագենին,
Որը տիկնոջ կարծիքով նա պիտի վերցնեք սրտագին,
Զի ասպետը պարտ է անել, ինչ իր արքան է անում:
Այդուհանդերձ Տրոնյեցին ուզեց մերժել տիրուհուն:
1698. Տրոնյեցի իշխանն ասաց. «Կմերժեի ընծան Զեր,
Բայց նվերով թե ուզում եք Զեր հարգանքը մատուցել,
Ես կվերցնեմ Մեծ դահլիճի պատից կախված վահանն այն,
Զեռքս առած՝ մեծ հաճույքով Հոնաց երկիր կգնամ»:
1699. Երբ որ լսեց մարկգրաֆի կինը ինդրանքն Հագենի,
Մթնեց նրա դեմքը իսկույն տառապանքից անքնին,
Ցավով միտը ընկավ Նուդունգ որդու մահը իր անգին,
Նրան Վիտեկն սպանեց և սիրտն իր մատնեց տանջանքի:
1700. Նա Հագենին ասաց. «Ես Զեզ կտամ վահանն այդ անգին,
Թե կամենար Աստված, նա դեռ պիտի ապրեր մեր կողքին:
Նա է կրել վահանը այդ, նա, որ ընկավ մարտում թեժ:
Ես՝ դառնասիրտ կինս, պիտի ողբամ նրա մահն հավերժ»:
1701. Եվ պաշտելի տանտիրուհին ելավ տեղից զգացված,
Ճերմակաթույր ձեռքերով իր վահանն հսկա բերեց ցած,
Տարավ դեպի Հագենը, որ առավ ձեռքից հարգալիք:
Տանտիրուհին շատ պատվարժան կերպով հանձնեց նվերն իր:
1702. Վահանն ամբողջ ծածկված էր խաս քարերով թանկագին
Եվ այնպես էր փայլփլում, որ կուրացնում էր ամենքին,
Իսկ թե հանկարծ ցանկանային վաճառելու վահանն այդ,
Դրա համար ամեն ասպետ կտար հազար մարկից շատ:
1703. Տրոնյեցին պատվիրեց, որ տանեն իսկույն ընծան թանկ:
Պալատ մտավ իր եղբայրը՝ Դանկվարտն այդ ժամանակ:
Ռուդիգերի դուստրը նրան տվեց զգեստ մի շքեղ,
Որ էթցելի երկրում քաջը կրի պատվով ամեն տեղ:
1704. Այն ամենը, ինչ Հյուրերը վերցրին նրանց ձեռքերից,
Վերցրին միայն Բեխլարենցու հանդեպ սիրուց, հարգանքից,
Սակայն շուտով նրանց միջև թշնամանքը ծայր առավ,
Եվ բուրգունդաց ձեռքից ընկավ Բեխլարենցին մարկգրաֆ:

1705. Ապա եկավ քաջ Ֆուկերը՝ քաջ բուրգունդցին սրտաբաց,
 Իր ընթացով խոնարհ կանգնեց Գոտելիւնդի դեմ դիմաց,
 Նա նվազեց քաղցրորեն, երգեց երգեր դյուլթական
 Ու դրանով հասկացնում էր՝ թույլ տա իրենց, որ գնան:
1706. Տանտիրուհին պատվիրեց, որ գանձատուփը մոտ բերեն,
 Հասկացան, որ նվերներ է ուզում բաշխել նա նորեն:
 Նա տասներկու ապարանջան կապեց երգչի դաստակին.
 «Տարեք, Ֆուկեր, հոնաց երկիր, ուրախ սրտով, խնդազին»:
1707. Եվ հանուն ինձ կրեք այնտեղ՝ արքունիքում հոների,
 Իսկ երբ ետ գաք դեպ Հոենոս արքայական տոներից,
 Մենք երջանիկ պիտի լինենք ծառայելու ձեզ սրտանց»:
 Եվ կատարեց նա ճշտորեն կամքը տիկնոջ փառապանծ:
1708. Տանտերն ասաց իր հյուրերին. «Ճամփա ընկեք պապհով,
 Ուղեկցում եմ ես ձեզ անձամբ, մինչև հասնեք հոնաց հող,
 Եվ կլինեն ձեզ հետ խիզախ պահապաններ մեծաթիվ»:
 Եվ բարձեցին գրաստներին բռններն իրենց անհաշիվ:
1709. Մարկգրաֆը ճամփա ելավ՝ հետը զինվոր հինգ հարյուր,
 Նժույգներով, հանդերձանքով, արիասիրտ, ամբակուռ,
 Զվարթ երթով ճամփա ելան ապետների հետ բուրգունդ,
 Բայց չտեսան հոնաց երկրում ոչ բարություն, ոչ էլ գութ:
1710. Տանտերը ջերմ համբույրներով գգվեց բոլոր իր մարդկանց,
 Գիզելհերն էլ վարվեց այդպես՝ իր բորբ սիրուց թե առած,
 Բոլորն էին չքնադազեղ օրիորդներով թե առել,
 Սակայն շուտով պիտ ողբային նրանց վրա բոլորն էլ:
1711. Այնուհետև լայն բացվեցին պատուհանները ճերմակ,
 Դեպ ձիերը շարժվեցին ասպետները թեւարձակ,
 Ճանապարհող կանանց սիրտը մղկտում էր ահով լի,
 Զգում էին՝ էլ չեն տեսնի դեմքերն իրենց սիրելի:
1712. Բոլորը հույժ տանջվում էին մարդկանց համար հարազատ,
 Լալիս էին, արցունք թափում օրիորդները սիրառատ,
 Իսկ մեկնողներն ուրախ էին, սիրտն ուրախ էր բոլորի,
 Դանուբ գետով իջան ներքև, ուր երկիրն էր հոների:

1713. Ապա դիմեց բուրգունդներին մարկգրաֆը մեծհամբավ.
«Հիմա արդեն ժամանակն է, որ այստեղից անհապաղ
լուր ուղարկենք, որ գալիս ենք մենք երկիրը հոների.
Կուրախանա էթցել արքան՝ առնելով լուրն այս բարի»:
1714. Եվ սլացան դեսպանները Ավստրիո ճամփեքով,
Ամենուրեք լուր բերելով ժողովրդին, որ շուտով,
ժամանում են Բուրգունդիայի հերոսները տիրակալ:
Իսկ էթցելի արքունիքում խնդությանը չափ չկար:
1715. Իր երկրով մեկ նա ուղարկեց սուրհանդակներ արագուտն,
Հայտնելու, որ հոենոսցիք ժամանում են իրենց մոտ.
«Պետք է նրանց լավ ընդունես դու, Քրիմհիլդը. իմ տիկին,
եղբայրներդ արժանի են պատիվների թանկագին»:
1716. Գեղեցկուհի Քրիմհիլդը պատուհանից նայեց դուրս,
Սպասում էր եղբայրներին տազնապներով սրտահույզ:
Հոենոսից եկածների ճամփան պահում ցնծությամբ:
Իսկ էթցելը, լուրն առնելով, ուրախացել էր անչափ:
1717. «Ահա բախտս բերեց,— ասաց Քրիմհիլդը ինքնիրեն,—
Արդ գալիս են եղբայրներս պերճ հանդերձով, ասպազեն:
Ովքեր առան ոսկիներս և տվեցին ինձ մեծ վիշտ,
Նրանց միտը կզցեմ դա՝ թվալով միշտ բարեսիրտ»:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉԱԿԱ ԲՈՒՐԳՈՒՆԴՆԵՐԸ ԵԿԱՆ ՀՈՆԵՐԻ ԵՐԿԻՐ

1718. Երբ տեղ հասան բուրգունդները, հողը մտան մեծ հոնի,
Իմացավ դա քաջ բեռնցին՝ Հիլդերբրանդը ծերունի,
Եվ լուր տվեց իր արքային, որ վշտացավ անչափ շատ,
Բայց ասաց, որ հյուրընկալին նրանց իբրև հարազատ:
1719. Սեզ Վոլֆհարտը նշան տվեց՝ նժույգները բերեն մոտ,
Եվ ընդառաջ ելավ Բեռնցին բուրգունդաց դեմ իր ծանոթ,
Դիտրիխի հետ գնում էին ասպետներն իր՝ հանց փաղանգ,
Եվ շողում էր դաշտն հյուրերի վրաններից երփներանգ:

1720. Երբ Հագենը տեսավ Հեռվից ասպետներին փառապանծ, Մեծարանքով դիմեց բուրգունդ արքաներին և ասաց. «Ոտքի ելեք, ազնիվ այրեր, իմ խորհուրդն է հիմա ձեզ, Դիմավորեք պատվով նրանց, ով ողջույն է բերում ձեզ:
1721. Նրանք, ովքեր մոտենում են, ինձ լավ ծանոթ են, ճանաչ, Ամելունգյան ասպետներն են՝ պատվախնդիր և շատ քաջ, Եվ արքան է նրանց ասպետ Դիտրիխ Բեռնցին մեծհամբավ, Արդ, ընդունեք սիրով, նրանց չարհամարհեք դուք բնավ»:
1722. Տեղ Հասան և Դիտրիխի Հետ նժույգներից թուան ցած Ասպետները և փութաջան գինակիրները նրանց, Ու քայլելով՝ եկան բուրգունդ արքաներին ընդառաջ, Որ Հայտնեին արքաներին ողջույն իրենց սիրառատ:
1723. Երբ Դիտրիխն էլ տեսավ այդժամ, որ գալիս են դեպ իրեն, Լսեք պատմեմ, թե ինչ ասաց քաջ ասպետը տրտմորեն Որդիներին Ութեի: Նա նրանց գալով ուրախ չէր, Հույս ուներ, թե մարկգրաֆը նրանց գալը պիտ կանխեր:
1724. «Բարի գալուստ, ով արքաներ, Գուևտեր, Գերնոտ, Գիգելհեր, Մեծահամբավ Տրոնյեցի, Ալցայեցի ով Տուկեր, Խիզախ Դանկվարտ, ձեզ Հայտնի չէ՞, չգիտե՞ք, որ թագուհին Ջի մոռացել կորուստը իր ու ողբում է դառնագին»:
1725. «Որքան էլ որ սգա՝ մեկ է, — Հագենն ասաց միգապատ, — Այդ մահվանից Հետո արդեն տարիներ են անցել շատ, Նրա լացով Ջիգֆրիդը Հարություն չի առնի էլ, Լավ է սիրել ողջին հիմա, քան մեռածին Հար կոծել»:
1726. Դիտրիխ Բեռնցին՝ արքան ազնիվ, խոսեց այսպես ու ասաց. «Առժամանակ մոռանանք մենք մահն ասպետի փառապանծ, Բայց քանի դեռ Քրիմհիլդը ողջ է՝ վնաս կգա Ձեզ, Գուևտեր՝ Հույսդ նիրելունգաց, զգույշ եղիր՝ չավաղես»:
1727. Դրա վրա Գուևտերն ասաց. «Ձգուշության Հարկ չկա, Սուրհանդակ էր ճամփել մեր կողմ էթցել արքան Հյուրընկալ, Որ իր երկիր գանք խնջույքի արքայական՝ մեզ վայել, Եվ մեր քույրն էլ իր սիրառատ ողջույններն էր ուղարկել»:

1728. Բայց մոտեցավ Տրոնյեցին իր արքային և ասաց.
«Որ այդպես է, ազնիվ արքա, Դիտրիխին ու իր մարդկանց
Համոզեք, թող Հաղորդեն Ձեզ Հավաստի ու անսխալ,
Թե թագուհու մտքինն ի՞նչ է, ուզում է ի՞նչ խաղ խաղալ»:
1729. Այդժամ արքա եղբայրները առանձնացան միասին,
եվ նրանց Հետ՝ Դիտրիխը քաջ ու խոսեցին մեկուսի.
«Ով Բեռնցի՝ ասպետդ քաջ, ասա ազնիվ սրտով մեզ,
Թե ինչ գիտես դու թագուհուց, ի՞նչն է տանջում այդպես քեզ»:
1730. Ասաց Բեռնի տիրակալը. «Ինչ ասեմ ձեզ, արքաներ,
Ամեն օր, երբ լույսն է բացվում, ես լսում եմ սրտավեր
Ողբը նրա: Մեծ էթցելի տիկինն ունի ծանր վիշտ,
Երկնքին է դիմում անվերջ ու Հատուցում խնդրում միշտ»:
1731. «Անօգուտ է խոսելն այստեղ, — Տոլկերն ասաց անայլայլ:
Մի Հանդուգն կտրիճ էր նա, — Հո չե՞նք կարող ետ դառնալ,
Հիմա գնանք պալատ, Հետո կերևա, թե թագուհին
Ի՞նչ խնջույք է պատրաստել և ի՞նչ է գալու մեր գլխին»:
1732. Խիզախ, անվախ բուրգուհուները շտապեցին դեպ պալատ,
Իրենց երկրի սովորությամբ ճոխ Հագնված և Հպարտ,
Եվ Հոներից շատ շատերը՝ ասպետներ քաջ, մեծանուն,
Ուզում էին մոտից տեսնել Տրոնյեցուն դյուցազուն:
1733. Ամեն տեղ էլ ժողովուրդը լավ տեղյակ էր անկասկած,
Որ Ջիգֆրիդ Նիդեռլանդցուն սպանել է ասպետն այս,
Ասպետներից քաջագույնին՝ Քրիմհիլդի ամուսնուն,
Այդ պատճառով ահա նրան տեսել էին երազում:
1734. Բարձրահասակ էր դյուցազունը, դա ստույգ է անկասկած,
Ուսերը՝ լայն, կուրծքը՝ արձակ, մազերը՝ քիչ ճերմակած,
Ոտքերն իրավ երկար էին, իսկ քայլվածքը տիրական,
Դեմքն ահազդու սարսափելի է Հայացքը խոր այնքան:
1735. Արդ, բուրգուհուցի զինվորներին կացարաններ տվեցին,
Իսկ Գունտերի ասպետները տեղ ստացան առանձին,
Այդպես ուզեց Քրիմհիլդը լի վրեժի հրով ժանտ:
Եվ այդ բոլոր զինվորները սպանվեցին շուտով անդ:

1736. Զորապետը բուրգունդների Դանկվարտն էր քաջասպետ,
Գունտեր արքան պատվիրեց, որ միշտ լինի իր մարդկանց հետ,
Լինի զգոն ու ջանադիր, հոգա հոգսերը նրանց:
Եվ լավ սերտեց անելիքն իր զորապետը փառապանծ:
1737. Գեղեցկուհի Քրիմհիլդը շքախմբով շտապեց,
Նիրելունգներն էին որտեղ և ողջունեց նրանց կեղծ,
Համբուրեց լոկ Գիզելհերին, պարզեց ձեռքը սիրալիր:
Երբ դա տեսավ Տրոնյեցին՝ սաղավարտը ձգեց իր:
1738. Հագենն ասաց. «Արդ, այդպիսի Հանդիպումից անկասկած
Մտահոգվեն պիտի բոլոր ասպետները վեհապանծ,
Ամենքին չէ, որ այս երկրում ընդունում են ի սրտե,
Մենք չենք եկել մասնակցելու լավ խնջույքի կարծես թե»:
1739. Քրիմհիլդը ասաց. «Բարի գալուստ, միայն նրան, ում
Ես սիրում եմ: Մյուսներին անարժան եմ համարում,
Հիմա ասեք, ինչ եք բերել Հոենոսյան երկրից ձեր,
Որ ըստ այդմ էլ ես ողջունեմ և ասեմ ձեզ ջերմ խոսքեր»:
1740. Հագենն ասաց. «Այ քեզ զարմանք, չգիտեի ես, որ Դուք,
Ով թագուհի, ասպետներից վերցնում եք Հարկ ու տուրք,
Եթե Հարուստ ես լինեի, կբերեի լիուլի
Իմ տուրքը և կհանձնեի արքունիքին էթցելի»:
1741. «Ես չեմ խոսում տուրքի մասին, բոլորի մոտ ասա դու,
Թե որտեղ է Նիրելունգյան ոսկին պահվում անհատնում,
Ձե՞ որ այն իմ սեփականն էր, դուք Հո գիտեք դա շատ քաջ,
Եվ պարտ էիք բերել ձեզ հետ, հիմա լցնել իմ առաջ»:
1742. «Ծիչտը ասած, ով թագուհի, անցել է շատ ժամանակ,
Ինչ չեմ դնում էլ գլուխս ես այդ ոսկու ցավի տակ,
Արքաներս պատվիրեցին Հոենոսում պահ տալ այն:
Պարտավոր եմ տեղը գաղտնի պահել մինչև դբերգման»:
1743. Բայց առարկեց Քրիմհիլդը. «Վստահ էի մինչ պահն այս,
Որ դուք կգաք՝ ձեզ հետ առած այդ գանձերից գեթ մի մաս,
Քանի որ այն իմ ոսկին էր, ես եմ նրան միայն տեր,
Ուստի ես շատ տխուր օրեր դրա համար կապրեմ դեռ»:

1744. « Դե գրողի ծոցը անցեք, — գոռաց Հագենն այսահար, —
ես իմ վահանն եմ քարշ տվել այսքան երկար ճանապարհ,
Սաղավարտս եմ կրել ծանր և իմ սուրն է իմ կողքին,
Դրա համար չէի կարող բերել այստեղ Ձեր ոսկին»:
1745. Ապա ասաց Քրիմհիլըը ասպետներին ողջ ներկա.
«Այս դահլիճում ոչ ոք պետք է չկրի գենք ու զրահ:
Ով Հերոսներ, վատահք ինձ և ձեր գենքերը Հանձնեք»:
«Օ՛, ոչ, — ասաց Տրոնյեցին, — չի լինելու դա երբեք:
1746. Ասեք, ինչպե՞ս կթողնեմ ես, որ բոլորին նա ի տես
Չքնաղ մեջքն իր ծոմռելով տանի ծանր գենքերս,
Ուսուցել են ծնողքս ինձ՝ Հարգել տիկնանց նագեղի:
Օ՛, ներեցեք, իմ գենքերը կրելու եմ ես էլի»:
1747. « Դժբախտությո՞ւն, — աղաղակեց Քրիմհիլըը դառնահեծ, —
ինչո՞ւ եղբայրս ու Հագենը չեն հանձնում գենքն իրենց:
Զգուշացված են երկուսն էլ անտարակույս վաղորդ:
Եվ ով էլ որ արել է դա՝ պիտ պատժվի անողորմ»:
1748. Եվ Դիտրիխը, խիստ զայրացած տվեց, նրան պատասխան.
«Այդ ես եմ հենց զգուշացրել իշխաններին պատվական,
Եվ բուրգունդցի խիզախ ասպետ Տրոնյեցի Հագենին,
Դե, պատժիր ինձ, թե կարող ես, աստանայի դու ժանտ կին»:
1749. Ամոթից կաս-կարմիր կտրեց ազնիվ տիկինն էթցելի,
Նա Բեռնցի այս Հերոսից վախենում էր սոսկալի
Եվ առանց մի խոսք ասելու լուռ հեռացավ դռնով բաց,
Միայն կտրուկ մի հայացքով չափեց նա իր թշնամյաց:
1750. Ապա երկու ասպետները իրար սիրով գգվեցին.
Դա Հագենն էր, իսկ մյուսը՝ խիզախ Դիտրիխ Բեռնցին,
Եվ զորավիզ ազնվագարմ Դիտրիխն ահա ինչ ասաց.
«Որ եկել եք Հոնբերի մոտ՝ ցավ եմ ապրում ես սրտանց:
1751. Իզուր չէ, որ Քրիմհիլըը խոսեց ձեզ Հետ այդքան չար»:
Ասաց Հագեն Տրոնյեցին. «Ամեն ինչին կա մի ճար»:
Այդպես երկու ասպետները խոսում էին տազնապած,
Դա նկատեց էթցել արքան և Հարցրեց իր մարդկանց.

1752. «Մեծ Հաճույքով ես կուզեի իմանալ, թե ո՞վ է այն Ասպետը, ում տեր Դիտրիխը ողջույն տվեց ջերմ այդքան, Երևում է՝ քաջ ասպետ է, շատ ազդեցիկ տեսք ունի, Հավանաբար նա զավակ է ծնողների անվանի»:
1753. ՔրիմՀիլդի մարդկանցից մեկն իսկույն տվեց պատասխան. «Նա ծնվել է Տրոնյեում, Հոր անունն է Ալդրիան, Թեպետ ուրախ է ձևանում, բայց մի մարդ է մութ, մռայլ: Երբ ճանաչեք, կՀամոզվեք, թե որքան եմ անսխալ»:
1754. «Ինչպե՞ս նրան ես ճանաչեմ, եթե մռայլ է այդքան»:
 Եվ չգիտեր այն դավերի մասին ոչինչ Հոն արքան,
 Թե Հարազատ իր մարդկանց դեմ ինչ էր նյութում թագուհին:
 Այնպես, որ մահն այդ երկրի մեջ սպասում էր ամենքին»:
1755. «Ես լավ գիտեմ Ալդրիանին, Հպատակս էր դյուցազուն, Արժանացել էր ճանաչման, պատիվների նա բազում, Ես եմ օժել նրան ասպետ, դեմը ոսկին իմ Հեղել, Նրա Հանդեպ միշտ բարի էր նաև չքնաղ իմ Հելխեն»:
1756. Այդ պատճառով ինձ Հազենը արմատով է ծանոթ իր, Երկու պատանդ երեխաներ ես բերեցի իմ երկիր՝ Նրան, Վալտեր իսպանացուն: Հազենին ես փառքով մեծ Ճամփեցի տուն, իսկ Վալտերը Հիլդեգունդի Հետ չբվեց»:
- 1757 Հին օրերը էթցելն Հիլեց և անցքերը Հիլեց Հին,
 Նա իր առաջ իր ընկերոջ որդուն տեսավ ամեհի,
 Որ դեռ ջահել բարիք բերեց Հոնաց դահին ու երկրին,
 Այժմ, սակայն, ծեր օրերին պատուհասեց Հոներին»:

ԴԻՊԼԱԾ ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ

Թե ինչպես ՔրիմՀիլդը նախատեց Հազենին, իսկ սա տեղից չբարձրացավ

1758. Երբ իրարից բաժանվեցին դյուցազուներն ահով լի՝
 Տրոնյեցի Հազենն Հսկա և Դիտրիխը պանծալի,
 Քաջ Գունտերի իշխանն ապա թեքվեց, նայեց իր չորս դին,
 «Հռենոսցիք ո՞ւր են», — ասաց ու գտավ իր զինակցին»:

1759. Գիզելհերի կողքին տեսավ նա Ֆուլկերին՝ ինչպես բերդ,
 Խիզախ ասպետ երգասացին, որին խնդրեց գալ իր հետ,
 Քանզի գիտեր նրան իբրև քաջերի մեջ քաջ մարդու,
 Նա օժտված ասպետ էր մի՛ շնորհներով իր հատուկ:
1760. Եվ քանի դեռ ասպետները խմբված էին դահլիճում,
 Երկուսով դուրս ելան մենակ՝ չհանելով ձայն-ծպտուն,
 Գավթով անցան դեպի կողքի փոքրիկ պալատն առանձին,
 Ասպետներն այդ ընտրագույն աչ չուներին ոչ մեկից:
1761. Եվ նստեցին պերճ պալատի մուտքի առջև կողք կողքի,
 Քրիմհիդդին էր պալատը և ոչ ուրիշ այլ մեկի,
 Նրանց հագի գրահները փայլում էին շողարձակ:
 Եվ շատերը, հենց որ տեսան՝ ճանաչեցին շատ արագ:
1762. Ինչպես վայրի գազանների՝ այլ աշխարհից ժամանած,
 Շատ-շատ հոներ այս երկուսին նայում էին զարմացած,
 Պատուհանից նայեց նաև չքնաղ կինը էթցելի,
 Եվ մուսլվեց հրաշագեղ Քրիմհիդդի սիրտն էլի:
1763. Եվ աչքերը մշուշվեցին արցունքից դառն ու անհուն,
 Հպատակներն այդ տեսնելով՝ հարցրեցին թագուհուն.
 «Ինչու այդպես տրվեց հանկարծ խոր ցավի ու տխրության»:
 Ասաց. «Պատճառն Հագենն է լոկ, ով ասպետներ պատվական»:
1764. Եվ տիկնոջը հարցրեցին. «Ի՞նչ է եղել, թագուհի,
 Եղել էք միշտ գվարթադեմ, Ձեզ տեսել ենք խինդով լի,
 Որքան էլ որ քաջ լինի նա, թշնամին է եթե Ձեր,
 Հրամայեք և կստանա մեր հարվածը մահաբեր»:
1765. «Երախտապարտ կմնամ միշտ, ով որ վրեժն իմ հանի,
 Ինչ կամենա՝ ես պատրաստ եմ, որպես ազնիվ մտերմի,
 Մեկաչոք ձեզ աղաչում եմ, — ասաց կինը լալազին, —
 Քաջեր, հանեք իմ վրեժը՝ սպանելով Հագենին»:
1766. Ապա մոտ մի վաթսուն ասպետ ձեռքը տեգ ու սուր առան,
 Քրիմհիդդի համար նրանք կմեռնեին անվարան,
 Ուզում էին մահվան մատնել քաջ Հագենին շատ արագ
 Եվ նրա հետ՝ երգասացին, որից կզար մեծ վտանգ:

1767. Եվ երբ նայեց Քրիմհիլդը փոքր խմբին ասպետաց,
Մուսյուրենն ահա թե ինչ իր քաջերին նա ասաց.
«Այդ մարդկանցից զգուշ եղեք, իմ ասպետներ հարգելի,
Դուք այդքանով ի զորու չեք դուրս գալ դեմը Հագենի»:
1768. Որքան զորեղ ու խիզախ է Տրոնյեցին ահալիր,
Էլ ավելի ուժեղ է ու սարսափելի՝ կողքինն իր,
Ֆուկերն է դա, երգասացը, չարության մի ահեղ ծով,
Դուք չեք կարող մոտենալ իսկ այս քանակի մարդկանցով»:
1769. Երբ լսեցին այս խոսքերը Քրիմհիլդի քաջ մարդիկ,
Հավաքեցին իսկույն ևեթ երեք հարյուր նոր մարտիկ:
Իսկ թագուհին մտքում միայն իր վրեժն էր փայփայում,
Բայց ասպետաց գլխին իջավ շուտով աղետ անպատում:
1770. Երբ տեսավ, որ սպասում է զինյալ խումբը ասպետաց,
Դիմելով քաջ ասպետներին՝ Քրիմհիլդը այս ասաց.
«Ապասեք մի պահ բոլորդ, դուրս մի ելեք դեռ մարտի,
Իմ թշնամյաց առաջ թագով ներկայանամ ես պիտի»:
1771. Պետք է լսեք, որ տեղին եմ մեղադրում ես նրան,
Տրոնյեցի այդ Հագենին, որ ասպետ է դրուժան,
Իր հանցանքը նա չի ժխտի, նա հպարտ է, դուրբազգաց,
Հետո արդեն պետքս չէ, թե նրանց գլխին ինչ կգա»:
1772. Ապա տեսավ խիզախ ասպետ երգասացը այդ պահին,
Որ իջնելով ապարանքի սանդուղքներով՝ թագուհին
Շարժվում է հենց իրենց կողմ: Երբ Ֆուկերը տեսավ դա,
Թեքվեց, ասաց Տրոնյեցուն. «Նայիր, նայիր, դու Հապա,
1773. Ազնիվ Հագեն, ինչպես է մեզ մոտենում նա թագակիր,
Ով մեզ դավով հրավիրեց անհյուրընկալ այս երկիր,
Ես տեսնում եմ թագուհու հետ ոչ քիչ թվով զորական,
Ձեռքներին մերկ սրեր՝ նրանք մոտենում են մարտական»:
1774. Ազնիվ Հագեն, պարզ է, նրանք մոտենում են ուղիղ Ձեզ,
Խորհուրդ կտամ լինել զգուշ և չափազանց հեռատես
Ամեն վայրկյան, որ չկորցնենք մենք ոչ պատիվ, ոչ էլ կյանք,
Իսկ նայելով նրանց դեմքին՝ շատ զայրացած են նրանք»:

1775. Նրանց մեջ կան շատ Հաղթ մարդիկ՝ ոտքից գլուխ գինավառ,
Պաշտպանվելու մասին խորհենք, թե չենք ուզում մահանալ,
Իմ կարծիքով զգեստի տակ նրանք կրում են զրահ,
Բայց, ճիշտն ասած, չեմ Հավատում՝ որն է իմաստը դրա»:
1776. Եվ զայրացած Տրոնյեցիին՝ խիզախ ասպետն այս ասաց.
«Ես լավ գիտեմ, որ ամեն ինչ Հենց իմ դեմ է ուղղված:
Եթե նրանց ձեռքներին մենք նկատում ենք մերկ սրեր,
Դրա մասին ես գիտեի, ասում էի Վորմսում դեռ»:
1777. Արդ՝ ասա ինձ, եղբայր Ֆոլկեր, կկանգնե՞ս իմ կողքին դու,
Եթե Հանկարծ մեզ Հետ կռվեն գինվորները թագուհու,
Քանի այստեղ միասին ենք, օգնենք պիտի մենք միմյանց,
Հետո կյանքում կհատուցեմ գործերովս անձնուրաց»:
1778. «Անշուշտ կօգնեմ, — Ֆոլկերն ասաց իր բարեկամ ասպետին, —
Մենք կկանգնենք նրանց ամբողջ բանակի դեմ միասին,
Եթե անգամ էթցելը գա, ես ողջ լինեմ քանի դեռ,
Ձեր կողքից չեմ Հեռանալու մեկ քայլ անգամ, իմ ընկեր»:
1779. «Երկնային տերն, ազնիվ Ֆոլկեր, վարձահատույց լինի Ձեզ,
Եթե դուք ինձ Հետ կլինեք, էլ ո՞ւմ կարիքն ունեմ ես,
Ինչպես այժմ ես Հասկացա, թե ինձ Հետ եք Դուք, եղբայր,
Ով մոտենա մեզ նենգ սրտով՝ կպատժվի չարաչար»:
1780. Ֆոլկերն ասաց ընկերոջը. «Ոտքի կանգնենք պարտադիր
Թագուհու դեմ, երբ մոտենա ազնվական քայլքով իր,
Ազնվազարմ տիկին է նա, եկ՝ մենք նրան պատիվ տանք,
Եվ դրանով մենք նրա մոտ գուցե գտնենք մեծ Հարգանք»:
1781. Հագնեն ասաց. «Ոչ, քանի որ նա ատում է ինձ անչափ,
Հոն ասպետներն այս կարող են այդժամ կարծել սխալմամբ,
Որ ես վախից դա արեցի ու պիտ փախչեմ անպայման:
Ես իմ նստած տեղից, լավ է, վեր չկենամ, բարեկամ»:
1782. Այդ մասին էլ չխոսենք մենք, ավելորդ է, անարժան,
Մի՞թե պետք է պատիվ Հայցեմ ես թշնամուց իմ դաժան,
Քանի դեռ կամ ու ապրում եմ, չեմ անի դա երբեք, ո՛չ,
Որքան էլ որ ահեղ լինի կատաղութունն այդ կնոջ»:

1783. Նա ծնկների վրա դրեց իր մերկ սուրը համարձակ,
Եվ երևաց դաստապանից մի վառ հասպիս շողարձակ,
Որ թարմ մարգի դալար խոտից շատ ավելի կանաչ էր:
Քրիմհիլդը անմիջապես սուրն ամուսնու ճանաչեց:
1784. Երբ ճանաչեց սուրն ամուսնու, սիրտն համակեց խոր կսկիծ,
Դաստապանը ոսկեպատ էր, պատյանի շուրջն ավան գիծ,
Կրկին խոցվեց նա ժանտ ցավով և արտասվեց նա կրկին:
Ես, կարծում եմ, սուրն Հագենը դիտմամբ դրեց իր ծնկին:
1785. Իսկ Ֆոլկերը նստարանի վրա իրեն մոտ բերեց
Ջութակի պիրկ աղեղը, որ շատ երկար էր ու շատ մեծ,
Կարծես հսկա մի սուր լինեք, սրաչեղբ էր, հետն էլ՝ լայն,
Այսպես ահա նստած էին ասպետները մարտական:
1786. Նստած էին ասպետները իրար կողքի շատ վստահ,
Եվ ոչ մեկից այս աշխարհում էլ չուներին նրանք ահ,
Թագուհու դեմ չէին կանգնի՝ որոշված էր վճռական:
Ահա ելավ Քրիմհիլդը և ողջունեց շատ դժկամ:
1787. Ասաց. «Հագեն, ասացեք ինձ, ո՞ւմ խորհրդով թունալի
Հանդգնեցիք վեր կենալ ու գալ երկիրը հոների,
Ձէ՞ որ դուք լավ գիտեիք, թե ինձ ինչ ցավ եք պատճառել:
Մի՞թե Աստված ձեզանից Ձեր վերջին խելքն էլ է առել»:
1788. «Ոչ մեկն էլ ինձ չի ուղարկել, — Հագենն ասաց սրտաբեկ, —
Հրավիրել են այս երկիր արքաները իմ երեք,
Իմ տերերն են նրանք, իսկ ես՝ հպատակը այդ գահի,
Ես նրանց միշտ ուղեկցել եմ, դա իմ պարտքն է, թագուհի»:
1789. Քրիմհիլդը ասաց. «Հագեն, պառ ուղիղ ասեք ինձ,
Պատճառն ի՞նչն է, որ իմ աչքում դարձաք ահա այսքան պիղծ,
Սպանել եք դավադրաբար Դուք ամուսնուս սիրելի,
Որին մինչև կյանքիս վերջը պիտի ողբամ դառնադի»:
1790. «Բավական է, — Հագենն ասաց, — այդ խոսքերը անօգուտ,
Այո, ես հենց այն Հագենն եմ, որ սպանեց ամուսնուդ,
Երիտասարդ, քաջ ասպետին, որ ուներ փառք ու անուն,
Քանի որ դու վիրավորանք հասցրիր մեր թագուհուն»:

1791. Ով թագուհի մեծահարուստ, բնավ ես չեմ ժխտում, որ Այս ամենի մեջ միմիայն ինքս լինեմ մեղավոր, Ես արդարև պատճառել եմ ահռելի վիշտ Ձեր սրտին, Հապա առնի թող վրեժը, ով ուզում է՝ այր, թե՛ կին»:
1792. Քրիմհիղը ասաց. «Տեսա՞ք, ով ասպետներ իմ ընտիր, Ինչ անպատիժ հանդգնությամբ ընդունեց նա մեղքը իր, Նրանց գլխին թե ինչ կգա, ես չեմ հարցնի, ով քաջեր»:
Կանգնած իրար էին նայում ասպետները աներեր:
1793. Եթե կռիվն սկսեին, կտեսնեին պարզ նրանք, Թե ինչպես են երկու ասպետ պատվի համար զոհում կյանք, Իսկ դա նրանք տեսել էին շատ մարտերում սոսկալի:
Վախից ահա անշարժացել, մոտիկ չէին էլ գալիս:
1794. Եվ մի ասպետ ասաց մեկին. «Ինչ ես նայում ինձ այդպես, Ինչ խոստացել եմ կատարել՝ անհնար է պարզապես, Ինչ-որ մեկի պարտքի համար ես չեմ զոհի կյանքը իմ, Մեզ՝ բոլորիս մահվան դուռն է ուզում քշել թագուհին»:
1795. Մեկ ուրիշը իր կողքինին այս էր ասում. «Բարեկամ, Եթե կարմիր ոսկուց շինած աշտարակներ էլ ինձ տան, Ի՞ գորու չեմ ես զենք շարժել երգասացի վրա այս, Եանթ-հայացքի պատճառով, որ ահա կախված է վրաս:
1796. Գիտեմ նաև այս Հագենին իր պատանի տարիքից, Այդ պատճառով նրա մասին կարիք չկա պատմել ինձ:
Ես տեսել եմ նրան ուղիղ քսաներկու մարտերում:
Եվ ցանեղ է նա խոր կակիժ բազում կանանց սրտերում:
1797. Իսպանացու հետ միասին կռիվներ է մղել մեծ, Բյուր սխրանքներ է կատարել էթցելի մոտ, այստեղ հենց, Հանուռն իրենց թագավորի, դա հայտնի է ասպետաց, Այդ պատճառով էլ Հագենի փառքն այստեղ կա դեռ անանց:
1798. Այն ժամանակ այս ասպետը դեռ մանուկ էր տակավին, (Տես այն փոքրիկին՝ հիմա ինչպես ճերմակել է լիովին), Տղամարդ է դարձել հուժկու, ձեռքին Բալմունգն է հայտնի, Որին, ահա, տեր է դարձել ինչ-որ դավով տմարդի»:

1799. Խոսակցությունն ավարտվեց, և ոչ ոք կռվել չէր ուզում,
Դա, իհարկե, թագուհուն շատ պատճառեց վիշտ ու հուզում,
Եվ հեռացան ասպետները՝ փրկվելով մահից սև,
Երկու հոգուց այդ բոլորով սարսափեցին արդարև:
1800. Ասաց խիզախ երգասացը. «Այժմ պարզ է մեզ համար,
Որ մենք այստեղ թշնամիներ պիտի գտնենք անպատճառ,
Արագորեն վերադառնանք արքաների մոտ, ասպետ,
Եվ թույլ չտանք, որ թշնամիք կռիվ անեն նրանց հետ:
1801. Երբ վանելով վախն՝ ընկերոջ թիկունքին ես կանգնում դու,
Այդ վայրկյանին ցած է ընկնում գեներ ձեռքից թշնամու,
Որպեսզի նա ետ կանգնի իր նպատակից չարանենդ,
Պետք է ցույց տաս, որ նրանցից չես վախենում դու երբեք»:
1802. Հագենն ասաց. «Այդպես կանեմ, հիմա գնանք, բարեկամ»:
Եվ փառահեղ ասպետները կրկին դահլիճ ետ եկան,
Տեսան արքայք սպասում են, որ գան, իրենց ներս տանեն:
Ֆուկերն այստեղ խոսեց բարձր, որ ամենքը լավ լսեն:
1803. Ֆուկերն ասաց արքաներին. «Մի սպասեք այդքան շատ,
Որ տանտերերն ընդունեն ձեզ: Հարկ է գնաք դուք պալատ
Եվ հարցնեք արքային հենց՝ ինչ է դրել մտքին իր»:
Եվ ճանապարհ ընկան զույգ-զույգ ասպետները հատրնտիր:
1804. Բեռնի արքան՝ Դիտրիխը սեզ, արդ մոտեցավ կամացուկ
Եվ հարգանքով առավ ձեռքը արքա Գուլնտեր Բուրգոլենդցու,
Իրնֆրիդը քայլում էր քաջ Գերնոտի հետ համարձակ,
Բեխլարենցու հետ քայլում էր Գիզելհերը պատանյակ:
1805. Այն պահից, երբ հյուրերն ամբողջ շարժվեցին դեպ պալատ,
Հագենը և երգասացը մնացին միշտ անանջատ
Կռիվներում այդ շարադետ, մինչև վայրկյանը մահվան:
Աղնվական բազում կանայք նրանց համար լաց եղան:
1806. Տեսան՝ պալատ է ուղեկցում արքաներին վեհապանձ
Շքախումբը՝ հազար խիզախ ասպետներից կազմված,
Եվ դրանց հետ թվով վաթսուև տրոնյեցի սեզ ասպետ:
Քաջ Հագենի ջոկատն էր դա՝ հավատարիմ, միշտ իր հետ:

1807. Հավարտը և Իրինգն ահա՛ երկու ասպետ մեծ փառքի,
Գնում էին դեպի պալատ արքայից Հետ ձեռք ձեռքի,
Իսկ Դանկվարտը և Վոլֆհարտը՝ ասպետներն այս պանծալի,
Հսկում էին երթը նրանց դեպի պալատն էթցելի:
1808. Երբ տիրակալն Հռենոսի մտավ պալատ վեհորեն,
էթցելը, որ գահից երեք վեր չէր կենում հանց օրենք,
Ելավ տեղից ու ողջունեց, երբ տեսավ նա գալիս է:
Ոչ մի արքա դեռ էթցելից չէր ստացել այդքան սեր:
1809. «Բարի գալուստ, արքա Գունտեր և Դուք՝ արքադ իմ Գերնոտ,
Եվ դուք՝ արքադ իմ Գիզելհեր, որոնց կանչել եմ ինձ մոտ,
Հավատարիմ մեր սիրտը ձեզ, Հռենոսի արքաներ,
Եվ ձեզ՝ բոլոր եկածներիդ, բարի գալուստ, անկեղծ սեր:
1810. Թույլ տվեք և բարեմաղթեմ՝ խոսքիս տալով Հատուկ գին,
Խիզախ ասպետ Ֆոլկերին և նմանապես Հագենին,
Իմ անունից և իմ տիկնոջ ողջունյն ասեմ երկրում մեր:
Նա սուրհանդակ էր ուղարկել դեպ Հռենոս՝ ձեր կողմեր:
1811. Ասաց Հագեն Տրոնյեցին. «Գիտենք, գիտենք դա, տեր իմ,
Թե չգայի արքաներիս Հետ երկիրն այս՝ Հոների,
Ապա հանուն Ձեր Համբավի ես կգայի անկասկած»:
Եվ Հյուրերի ձեռքը բունեց ազնիվ արքան զգացված:
1812. Եվ տարավ իր գահի կողմը, սեղանների մոտ վերին,
Այնուհետև եռք ու վազքով մատուցեցին Հյուրերին
Ոսկյա մեծ-մեծ գավաթներով մեղրախմիչք ու գինի
Եվ մաղթեցին բարի գալուստ բուրգունդներին անվանի:
1813. Հզորագոր էթցելն ասաց. «Ասում եմ ձեզ ճշմարիտ,
Որ չի եղել իմ ողջ կյանքում դեռ ավելի լավ առիթ,
Քան գալուստը ձեր իմ երկիր, ով եղբայրներ թանկագին,
Ձեզ համար շատ տառապում էր նաև ձեր քույր թագուհին»:
1814. Մտածմունքը միշտ ինձ Հետ էր ու սրտիցս անբաժան,
Որ ունեի Հարազատներ այսքան ընտիր, պատվարժան,
Սակայն չէին գալիս ինձ Հյուր, չգիտեի՝ թե ինչու,
Ուրախ եմ, որ իմ հարկի տակ տեսնում եմ ձեզ ի վերջո»:

1815. Առաջ եկավ մարկգրաֆը ու զրույցին խառնվեց.
«Իզուր չէ Ձեր հրճվանքն, արքա, և խնդությունն՝ այդքան մեծ,
Նվիրված են Ձեզ և գահին արքաները առհավետ,
Նաև բուրգունդ ասպետները, որ եկել են նրանց հետ»:
1816. Արևդարձի նախօրեն էր, հրբ էթցելը սրտաբաց
Իր հարկի տակ առավ նրանց: Շատ ենք տեսել պերճանք, բայց
Ձեռք տեսել, որ Հյուրընկալին այդքան անկեղծ, ջերմ այդքան,
Ապա եկավ խնջույքի ժամ ու բացեցին ճոխ սեղան:
1817. Ձի եղել դեռ նման խնջույք: Դա խնջույք չէր, այլ հրազ,
Ուտելիքներն անբավ էին, գինին գետ էր, անպակաս,
էթցել արքան չէր խնայում ոչինչ ընտիր Հյուրերին,
Նրանց ամեն մի ցանկություն կատարվում էր նույն պահին:

ԴԻՊԼԱՄ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

Թե ինչպես Հագենն ու Ֆուլկերը հսկեցին նրբյունգներին

1818. Օրը մթնեց և գիշերը լուռ քայներով մտեցավ,
Իջավ Հոգնած ասպետներին, ու նրանց Հոգսն արթնացավ,
Ամենքն էին ուզում արդեն մտնել փափուկ անկողին,
Եվ Հագենը չհամբերեց ու խոսք բացեց այդ մասին:
1819. Ապա խոսեց Գունտեր արքան և էթցելին ասաց մեղմ.
«Ուշ է արդեն, շատ Հոգնեցինք խնջույքից այս փառահեղ,
Վաղը, հրբ որ բացվի լույսը, կտեսնվենք մենք կրկին»:
Եվ էթցելը թողեց նրանց՝ գնան իրենց հանգստին:
1820. Անթիվ Հոններ նայում էին նրանց աչքով զարմացած,
Ու թեքվելով դեպի նրանք՝ քաջ Ֆուլկերը չոր ասաց.
«Մեր ոտքերի տակ մի ընկեք, ով դուք Հոններ ապշահար,
Կացեք հեռու, թե չէ անչափ վատ կլինի ձեզ Համար»:
1821. Ծանոթ չեք դեռ իմ ջութակին, թե զարկեցի՝ իմացեք,
Ձեր մայրերը Հավիտյանս ողբալու են վշտաբեկ,
Լավ է հեռու մնաք մեզնից, խարդավանքի վերջն է վատ,
Բուրբ իրենց քաջ են կարծում, բայց քաջերը քիչ են շատ»:

1822. Երբ զայրացած խոսքն ավարտեց քաջ Ֆուկերը երգասաց՝
Հագեներ լուռ շուրջը նայեց, մոայլվեց ու ասաց.
«Լավ խորհուրդ է Ֆուկերը ձեզ տալիս, Հոներ, իմացեք,
Քրիմհիլդի մարդիկ, քաշվեք, ձեր տները գնացեք:
1823. Ինչ որ ունեք դուք ձեր մտքում՝ չարչարվում եք հիմա զուր,
Թե ուզում եք մեզ բան ասել՝ առավոտյան եկեք Հյուր,
Իսկ մեզ հիմա Հանգիստ թողեք, գիշերն արդեն դառավ կես:
Ամեն տեղ էլ ասպետները կվարվեին ճիշտ այդպես»:
1824. Եվ Հյուերինն ազնվազարմ մի մեծ դահլիճ բերեցին,
Ուր պատրաստ էր կահավորված գիշերատեղ ամենքին,
Մահճակալներ երկայն ու լայն, անկողիններ ոսկեզարդ:
Բայց թագուհին նրանց Համար պատրաստել էր որոգայթ:
1825. Մահիճներին դրված էին Արաս երկրի ճոխ բարձեր,
Շողում էին ծածկոցները լույսերի մեջ բերկրաբեր,
Արաբական խաս մետաքսից ու եզրերը ոսկեկար,
Ընկողմաներ ով որ այդտեղ, իրեն արքա ճիշտ կզգար:
1826. Վերմակները կարված էին սամույրենուց անչափ թանկ,
Կզաքիսի մորթուց սևկեկ, գիշերները դրանց տակ
Անցնում են շատ Հանգիստ, մինչև լույսն է բացվում զվարթուն,
Զէր տեսել դեռ մեկը կյանքում նման փայլ ու ճոխություն:
1827. Գիզելհերը, սակայն, ասաց. «Եղուկ մեզ, ով եղբայրներ,
Ապա եղուկ մեզ Հետ եկած զինվորներին նաև մեր,
Որքան էլ որ մեր քույրն այստեղ Հոգացել է ամեն ինչ,
Բայց վախենամ խարդավանք կա այս փայլի տակ կախարդիչ»:
1828. Բայց Հագեներ կտրեց նրան. «Իզուր է Ձեր վախն, արքա,
Ամբողջ գիշեր, մինչև Հասնի լուսաբաց ու արևգալ,
Դռների մոտ վահանն առած, ես կհսկեմ աներեր,
Եվ ոչ մեկը չի խոռովի արքայական քունը Ձեր»:
1829. Խոնարհվեցին քաջ ասպետին, շնորհակալ եղան լուռ,
Գնացին դեպ անկողիններ՝ չսպասելով էլ իզուր,
Եվ մինչ նրանք կպառկեին մահիճներում ոսկեբարձ,
Սկսեց Հագենը զրահները Տրոնյեցին բազմափորձ:

1830. Ապա խոսեց Ալլցայեցին՝ քաջ Ֆուկերը երգասաց.
«Մի մոռացեք ինձ էլ, Հագեն, այս գիշեր մինչ լուսաբաց
ես ուզում եմ Ձեզ հետ հսկել բուրգուհների քունն անեղծ»:
Եվ Հագենը երախտապարտ նայեց նրան ու խոսեց.
1831. «Թող երկնքի Տիրակալը քեզ միշտ լինի պահպան,
Եթե կողքիս կանգնի քեզ պես դյուցազունը անսասան՝
Ձեմ ունենա էլ ոչ մի հոգս, ով իմ ասպետ բարեկամ,
Կհատուցեմ պարտքս, Ֆուկեր, եթե այստեղ ողջ մնամ»:
1832. Եվ երկուսն էլ Հագան իրենց զրահները փառահեղ,
Վերցրեցին վահանները՝ պողպատակուռ ու ահեղ
Եվ դուրս գալով մեծ դահլիճից՝ դադար առան դռան մոտ
Ու հսկեցին բուրգուհներին՝ քուն, խոնջենքի խիստ կարոտ:
1833. Բայց Ֆուկերը անմիջապես՝ վահանը ցած բերելով,
Հենեց պատին, գնաց կրկին դեպ դահլիճը շտապով,
Ու ետ եկավ՝ ձեռքին բռնած իր ջուժակը ոսկեթել
Ու որոշեց ընկերների համար անուշ նվագել:
1834. Եվ դահլիճի դռների մոտ նստեց քարին անաղմուկ,
Ձէր եղել դեռ նրա նման ոչ մի ասպետ փառաշուք,
Եվ լարերից հնչեցրեց մեղեդիներ հուզառատ,
Նրան հպարտ բուրգուհները երախտապարտ էին շատ:
1835. Ու ողողվեց ողջ դահլիճը հնչյուններով մեղեդու,
Ձէր խնայում ասպետն իրեն, նվագում էր եռանդուն,
Ապա երգեց՝ քաղցրությամբ պարուրելով երեկոն
Եվ հոգսաշատ ընկերներին օրորելով իր երգով:
1836. Երբ քուն մտան նրանք արդեն, և Ֆուկերը տեսավ դա,
Կանգնեց նորից դռների մոտ, վահանն առավ անշտապ,
Իր հաղթ բազկին, որ վերստին արթուն աչքով պահպանի
Դուռն հոներից Քրիմհիլդի՝ ներս չմտնեն գողունի:
1837. Եվ երբ կիսվեց գիշերը մութ, Ֆուկերն հանկարծ նկատեց,
Որ փայլում են խավարի մեջ սաղավարտներ պողպատե,
Հոներն էին Քրիմհիլդի, որ դավադիր, քաջագեն,
Փալխս էին դահլիճի կողմ, որ հյուրերին վնասեն:

1838. Երգասացը ձայնեց այդժամ. «Նայեք, եղբայր իմ, Հագեն,
Երևում է, մենք այս գիշեր հոգս կուենենանք ահագին
Պալատի մոտ խավարի մեջ գինված հոներ են վխտում,
Նրանք շատ են և հենց այնպես չէին շրջի խոր մթնում»:
1839. «Ուրեմն լուռ մնա, — ասաց Տրոնյեցին անվանի, —
Թող մոտենան ու քանի որ մեզ խավարում չեն տեսնի,
Մենք կընդունենք նրանց այստեղ ու կըարդենք մի կարգին,
Նրանց անշուշտ ուղարկել է Քրիմհիլը՝ թագուհին»:
1840. Եվ հոներից մեկը շուտով դռների մոտ նկատեց
Քաջ Ֆուկերին ու կամացուկ ընկերների ձայն տվեց.
«Ինչի համար եկել էինք, չի հաջողվի մեզ արդեն,
Դռների մոտ երգասացն է՝ ձեռքին վահան պողպատե»:
1841. Սաղավարտ է դրել ընտիր, որ նմանը իր չունի,
Ոչ մի մարտում այն չի խոցել ոչ մի ասպետ անվանի,
Տեսեք, ոնց են շողում մթնում զրահները, ինչպես բոց,
Եվ կողքին էլ Հագենն է գոռ՝ ասպետը մեծ ու անխոց»:
1842. Հոները ետ դարձան վախով: Երբ Ֆուկերը դա տեսավ,
Շրջվեց դեպի Հագենը և վրդովմունքով մի անբավ
Կանչեց. «Տեր իմ, Թողեք Հասնեմ ես ետևից հոների,
Մի երկու խոսք ասեմ նրանց, միտքն իմանամ քաջերի»:
1843. Հագենն ասաց. «Թե սիրում ես ընկերոջդ՝ մի գնա,
Նրանք շատ են, քեզ կնեղեն հարվածներով անխնա,
Եթե Հասնեմ քեզ օգնության անհավասար կուվում ձեր,
Ասպետները մեր կմնան անպահասպան ու անտեր»:
1844. Մենք երկուսով կըռնվինք հոների հետ թե՛ մարտի,
Իսկ նրանցից մի չորս-հինգը գիշերվա մեջ ու մթի
Փաղտագողի ներս կմտնեն ու դահլիճում անպաշտպան
Կկոտորեն քնածներին՝ սիռելով մահ ու սպանդ»:
1845. Կրկին խոսեց Ֆուկերը քաջ. «Համամիտ եմ Ձեզ, ասպետ,
Բայց մենք պետք է գոնե նշան տանք հոներին չարաղետ,
Որ տեսել ենք իրենց այստեղ, այդ դեպքում մեզ չեն խաբի
Քրիմհիլի գինվորները, թե չեն վարվել տմարդի»:

1846. Եվ Հոնների կողմը բարձր երգասացը ձայն տվեց.
«Էդ ինչն՞ է եք, ով ասպետներ, զինվել էրպես ծանրումեծ,
Թե գնում եք մութ գիշերով ալան-թալան անելու,
Իմ բարեկամ-Հագենի Հետ պատրաստ ենք ձեզ օգնելու»:
1847. Երբ Հոները լուռ մնացին, չտվեցին պատասխան,
Հագենը քաջ գոռաց, ասաց. «Ջարագործներ դուք անբան,
Ուզում էիք մեզ սպանել, երբ քնած ենք անկողնում,
Բայց էջը վարվի այդպես ոչ ոք, ոչ մի ասպետ իր օրում»:
1848. Ինչ եղել էր իմացավ և Քրիմհիլը՝ Թագուհին,
Ու երբ լսեց, սիրտը նրա պատեց վիշտը ցավազին,
Եվ սկսեց խորհել այլ բան՝ քեներ սրտում նենգավոր,
Որ ուղարկեց մահվան ճամփով ասպետների բյուրավոր:

ԴԻՊԼԱԾ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

Թե ինչպես նրանք եկեղեցի գնացին

1849. «Յուրտն ինձ տարավ զրահիս մեջ, — կանչեց քաջը երգասաց, —
Երևում է՝ շատ չի ձգվի գիշերը այս սառնամած,
Զի երկինքը ցույց է տալիս, որ բացվում է լուսն արդեն»:
Ու ձայնեցին նրանք Հապճեպ, որ բոլորին վեր Հանեն:
1850. Հերոսներին քիչ անց ժպտաց լուսաբացը խնդազին,
Եվ սկսեց Հագենն այդժամ արթնացնել քաջերին,
Որ գնային եկեղեցի ու լսեին պատարագ,
Քրիստոնյա սովորույթով Հնչում էին երգ ու զանգ:
1851. Պատարագի ձայնը սակայն անսովոր էր ու մռայլ,
Քանզի ծեսը Հեթանոսաց կատարվում էր կարգով այլ,
Եվ Գուտերի ասպետները՝ պատրաստակամ ու Հլու
Վեր կացան ու պատրաստվեցին եկեղեցի գնալու:
1852. Եվ Հանելով պերճ Հանդերձներ՝ Հագնվեցին նրանք ճոխ,
Որտե՞ղ կային նման քաջեր՝ շնորհներով անսքող,
Սակայն նրանց Հանդերձները վշտացրին Հագենին.
«Այստեղ մեզ այլ զգեստներ են անհրաժեշտ ու տեղին»:

1853. Գիտենք արդեն բուրգունդներս, թե ովքեր են Հոններն այդ,
Ուստի զենքեր կրեք, ոչ թե փետրափնջեր գունազարդ,
Գոհարաշատ գլխարկի տեղ՝ դուք սաղավարտ կրեք կուռ,
Զի հույժ մեծ է Քրիմհիլդի չարությունը ահարկու:
1854. Ասեմ ձեզ, որ այսօր գուցե ստիպված ենք կռիվ տալ,
Ուստի մետաքս հագնելու տեղ՝ հագեք զրահ պողպատյա,
Եվ փոխարեն թիկնոցների՝ վահան կրեք ապահով,
Կգայրանան ոմանք անչափ, թե ձեզ տեսնեն զենքերով:
1855. Իմ սիրելի թագավորներ, բարեկամներ, ասպետներ,
Եկեղեցի գնանք Հիմա զվարթ սրտով, աներեր,
Եվ մեր Աստծուն աղոթենք մեր Հոգս ու ցավից անպատում,
Զի զգում եմ նա բոլորիս մահն է կանխավ պատրաստում:
1856. Սակայն ինչ էլ մեզ պատահի, չմոռանանք Աստծուն մեր,
Ապաշխարենք մեր սրտի մեջ՝ չմոռանանք հավատ, սեր,
Եվ իմանանք, քաջ բուրգունդներ, պատարագն այս լուսալիր,
Ստույգ վերջին պատարագն է ասպետներին տարագիր»:
1857. Եվ գնացին պատարագի՝ արքա, ասպետ և իշխան,
Որ հասնելով սուրբ Տաճարին՝ դավիթի մոտ կանգ առան,
Քաջ Հագենը խորհուրդ տվեց՝ եկեղեցի չմտնեն.
«Մենք միասին պետք է լինենք, որ Հոնները երկյուղեն:
1858. Վահանները Հիմա դրեք ոտքներիդ մոտ, սպասեք,
Թե Հոններից մեկնումեկը չար խոսք ասի ձեզ՝ զարկեք,
Զարկեք այնպես, որ դին փռվի, անչնչանա զարկից ձեր,
Թե մեզ փրկի՝ քաջությունը կփրկի լոկ, ասպետներ»:
1859. Ապա Յուզկերն ու Հագենը՝ ասպետները դյուցազուն,
Գնացին դեպ եկեղեցի, որ շատ մեծ էր, ծավալուն,
Ուզում էին նրանք այնտեղ Քրիմհիլդին հանդիպել
Եվ կամ նրա զինվորներին: Մուայլ էին երկուսն էլ:
1860. Ահա եկան էթցել արքան և տիկինն իր աչագեղ,
Կրում էին ճոխ զգեստներ՝ մեծավայել, փառահեղ,
Գալիս էին նրանց հետքից հպատակներ, ասպետներ,
Եվ ելնում էր փոշին նրանց ընթացքի հետ դեպի վեր:

1861. Եվ երբ Հորը էթցել արքան տեսավ մուսյլ ու զինված
Բուրգունդական արքաներին, շատ զարմացավ ու ասաց.
«Ինչո՞ւ ես մեր Հյուրերն այդպես զենք ու զրազ կապել ձիգ,
Անհանգի՞ստ են ինչ-որ բանից կամ Հո՞գս ունեն առանձին»:
1862. Թե՞ ակամա մեկը նրանց Հասցրել է իմ երկրում
Վիրավորանք կամ թե վնաս աններելի, անպատում,
ես պատրաստ եմ Հատույցը տալ ու ցավում եմ կարեվեր,
Ասեք՝ միայն ես իմանամ ձեր պահանջը, ասպետներ»:
1863. Նրան Հագեն Տրոնյեցին պատասխանեց. «Ով արքա,
Անհանգիստ չենք ոչ մի բանից, այլ պահում ենք մեր կարգը՝
Պատարագի գնալ միայն սպառազեն ու զինված,
Թե մեկը մեզ վիրավորեր, կասեինք Ձեզ անկասկած»:
1864. Լավ լսում էր ՔրիմՀիլըը այս խոսքերը Հագենի
Եվ նայում էր թշնամանքով նրան տակից Հոնքերի,
Բայց բուրգունդցու ասածներին չընդդիմացավ թագուհին,
Թեև ինքն էլ լավ Հիշում էր օրենքներն իր երկրի Հին:
1865. Եվ որքան էլ մեծ էր նրա ատելությունը սրտի,
Եթե պատմեր թագավորին ճշմարտությունն հավաստի,
Ապա իսկույն կհասկանար տիրակալը ամեն ինչ,
Ուստի զսպեց չարությունն իր և խոսքերը խոռովիչ:
1866. Քայլեց դեպի եկեղեցի թագուհին՝ չար ու քինոտ,
Բայց այն երկու բուրգունդները կանգնել էին դռան մոտ,
Փակել էին նրա ճամփան: Տեսան Հոնքերը այդտեղ,
Որ թագուհին տաճար մտավ բուրգունդների Հետ մեկտեղ:
1867. Վրդովվեցին Հոնքերը, երբ Հանդգնությունն այդ տեսան,
Կսկսեին նրանք շուտով վեճ ու կռիվ անպայման,
Եթե միայն չսոսկային մեծ էթցելից՝ Հոնից քաջ,
Մի պահ միայն դռների մոտ իրարանցում եղավ կարճ:
1868. Ավարտելով պատարագը՝ եկան կրկին ետ՝ պալատ,
Անցնում էին նժույգներով Հոնքեր, ահա, պայազատ,
Գնում էին թագուհու Հետ մոտ յոթ հազար ուղեկցող,
Նաև տիկնայք ու աղջիկներ՝ ընտիր զուգսով ու շենչող:

1869. Քրիմհիզը իր տիկնանց հետ պատուհանի մոտ նստեց,
Նրա կողքին էթցել արքան տեղավորվեց ծանրուձեձ,
Նրանց պատվին հիմա պիտի մի մրցախաղ սկսվեր,
Եկել էին, խմբվել այնտեղ հզորագոր ասպետներ:
1870. Եկավ այնտեղ զինվորներով և Դանկվարտը զորապետ,
Ապա եկան շքախմբով բուրգունդ իշխան ու ասպետ,
Բերում էին ծառաները նժույգները նրանց պերճ,
Նիբելունգյան ընտիր ձիեր՝ ասպագեն ու զարդի մեջ,
1871. Նժույգներին երբ մոտեցան արքա, ասպետ բուրգունդցի,
Երգասացը դիմեց նրանց խրատ-խոսքով ազդեցիկ.
«Պետք է բարձր պահենք այստեղ պատիվը թանկ մեր երկրի»:
Եվ բոլորի սրտով էին խոսքերը քաջ Յուլկերի:
1872. Ավյունով լի բուրգունդները մտան մարտի ասպարեզ,
Ու ծայր առավ մրցախաղը ասպետների քաջատես,
Լավեց թնդյուն ասպարների, գենքի շառաչ մոլեգին,
Նայում էին նրանց՝ նստած էթցելը և թագուհին:
1873. Եվ ասպարեզ մտան ապա ասպետները բեռնցի,
Նրանք մեկտեղ հինգ հարյուր մարդ՝ հաղթահասակ, առնացի,
Ուզում էին չափվել նրանք քաջերի հետ բուրգունդաց,
Եթե միայն իրենց թույլ տար Դիտրիխ արքան փառապանձ:
1874. Հե՛յ, ինչ ընտիր քաջեր էին ասպարեզում հավաքվել,
Բայց Դիտրիխը ասպետներին պատվեր տվեց՝ չընեն
Մարտի՝ ընդդեմ հոնոսցի ասպետների տաքարյուն,
Ափսոսում էր նա իր մարդկանց, զգուշորեն խնայում:
1875. Եվ երբ նրանք ասպարեզը թողեցին ու դուրս եկան,
Մեջտեղ եկան բեխլարենցի ասպետները փութաջան,
Հինգ հարյուր մարդ՝ վահաններով գավիթ մտան անհամբեր,
Բայց տեսնելով նրանց՝ ազնիվ մարկգրաֆը տագնապեց:
1876. Խթանեց ձին, վարդեց այնտեղ տերը երկրի Բեխլարեն,
Եվ պատվիրեց ասպետներին զինախաղից խուսափեն,
Հոնոսցիք, երևում է, չարացած են, չարակամ,
Ուստի լավ է՝ զինախաղից հրաժարվել այս անգամ:

1877. Ու երբ նաև բեխլարենցիք ասպարեզից Հեռացան,
Այդժամ, ինչպես ասքն է ասում, թյուրինգցիները եկան,
Եվ դանիացի հազար ասպետ մտավ մարտի ասպարեզ,
Շառաչեցին օդում անթիվ տեգ ու նիզակ՝ քամու պես:
1878. Իրնֆրիդը և Հավարտը քաջ՝ արքաները աղնվածին,
Առաջ տարան ասպետներին դանիացի և թյուրինգցի,
Նիզակազեն բուրգունդները ճակատեցին նրանց դեմ՝
Ջախջախելով շատ զրահներ ու վահաններ պողպատե:
1879. Ապա եկավ Բլոյդելը երեք հազար ասպետով,
Եվ սկսեց մի նոր մրցում հրապուրիչ, հոգեթով,
Ցնծում էին մրցամարտով թագավորն ու թագուհին,
Բայց թագուհին բուրգունդներին չարությամբ էր նայում հին:
- 1880 Գիրբխն ելավ մարտի, ապա քաջասպետը Շրուտան,
Հորնբոգն ու Ռամունգը՝ սովորությամբ իրենց տան,
Նետվում էին բուրգունդաց դեմ հոները քաջ, անվեհեր,
Եվ փշրված նիզակները թռչում էին օդն ի վեր:
1881. Թեև խաղ էր դա ասպետաց, որ թովում էր ամենքին,
Բայց զարկերը բուրգունդների այնքան էին մուգգին,
Որ թնդում էր պալատը ողջ, որմերն էին դղրդում,
Արժան էին բուրգունդները զովեստների անդադրում:
1882. Ասպետների մրցումն այնպես անզուսպ էր ու կատաղի,
Որ ձիերի ծածկոցները ճերմակեցին քրտնաղից,
Ոչ մի վայրկյան դադար չկար նրանց ընտիր ձիերին,
Ձէին զիջում տանտերերը ասպետներին Հյուրերի:
1883. Ասաց խիզախ երգասացը՝ Ալցայեցին դյուցազուն.
«Հոները մեզ վնասելուց ու պատժից են միշտ խոսում,
Սակայն ինչո՞ւ են ծուլանում, թե վախկոտ չեն, թուլասիրտ,
Ձէ՞ որ երբեք չի կրկնվի սրա նման լավ առիթ»:
1884. «Սակայն Հանգիստ տանք ձիերին, — խոսքը առաջ տարավ նա, —
Եվ ասպարեզ կեղնենք նորից, երբ օդը քիչ զովանա,
Այդժամ գուցե փափկի նաև բորբոք սիրտը թագուհու,
Եվ կզովի բուրգունդներնս պարզեներով ընտրագույն»:

1885. Տեսա՛վ հանկարծ երգասացը, որ բազմած պերճ նժույգին,
Մի պճնամով Հոն է անցնում՝ զարդերի մեջ թանկագին,
Տիկնոջ նման Հույժ սեթևեթ՝ նա անցնում էր գավիթով,
Ե՛վ Հառել էր աչքերը վեր՝ տիկիններին սիրաթով:
1886. Յողկերն ասաց. «Սրան ինչպես ես իմ ձեռքից բաց թողնեմ,
Ինչ էլ լինի՛ սրան պիտի գոնե մի զարկ հասցնեմ,
Չխանգարի՛ք ինձ, բուրգունդներ, հարկ է դաս տալ էս Հոնին,
Ե՛վ Հոգըս չէ, թե դրանից կկատաղի թագուհին»:
1887. «Ո՛չ մի դեպքում, — Գունտերն ասաց, — վանիր քեզինց միտքը նենգ,
Թե Հարվածես առաջինը, մենք մեղավոր կլինենք,
Եթե կռիվ պիտի ծագի, թող որ ծագի իրենցից»:
Ե՛վ նայում էր էթցել արքան ասպետներին վերևից:
1888. «Ի՛մ ձեռքերն էլ քոր են գալիս, — խոսեց Հագենն ու ժպտաց, —
Թող տեսնեն այս տիկինները և ասպետներն Հավաքված,
Թե ինչպես են բուրգունդները նժույգ վարում, նստում տեգ,
Ինչ-որ քիչ են գովում մերոնց և նայում են աչքով թեք»:
1889. Այդ լսելով՝ երգասացը կրկին մտավ ասպարեզ,
Դա շատ տիկնանց աչքին բերեց դառն արցունքներ աղեկեզ,
Քանզի խփեց ու սպանեց հարուստ Հոնին իր տեգով,
Ե՛վ ողբացին նրա վրա մարդիկ դառը մորմոքով:
1890. Ե՛վ ասպարեզ մտավ արագ Տրոնյեցին դուռցազուն,
Ե՛վ սկսեց վարգել այնտեղ ասպետներով իր վաթսուն,
Ընկած էր դեռ ասպարեզում Հոնը՝ արյան մեջ թաթախ,
Ե՛վ ամեն ինչ տեսան արքան ու թագուհին ակնբախ:
1891. Բուրգունդական արքաները ուզում էին իրենք էլ
Իրենց ազնիվ երգասացին անօգնական չթողնել,
Ասպետներով իրենց հազար հրապարակ շուտ մտան,
Ե՛վ ջարդեցին նիզակներով ոչ քիչ զրահ ու վահան:
1892. Տեսնելով, որ սպանվել է զարմիկն իրենց գեղեցիկ՝
Արյունակից Հոներն այնտեղ առատ արցունք հեղեցին,
«Ո՛վ սպանեց», — հարցնում էին նրանք միմյանց կարեկից:
«Երգասացը, — ասում էին, — հարվածով իր նիզակի»:

1893. Հոներն այդժամ խառն ամբոխով՝ կատաղած ու վրդովված,
Սրերով մերկ՝ պատրաստ էին հրապարակ իջնել բաց,
Որ Ֆոլկերից շուտով առնեն վրեժն իրենց թանկ արյան,
Տեսավ նրանց զայրույթը մեծ ու ցած իջավ ինքն արքան:
1894. Վրիժառու Հոները երբ աղմկեցին զայրացած,
Բուրգունդական արքաները նժուգներից իջան ցած,
Եվ Հանձնեցին սանձերն իրենց ծառաներին միառժամ,
Ապա այնտեղ եկավ նաև էթցել արքան փութաջան:
1895. Մեկն Հոներից ձեռքը դեպի սուրը տարավ քինորեն,
Բայց էթցելը նրա ձեռքից սուրը խլեց ու մեկեն
Ցրեց ամբոխն ու վրդովված կանչեց կանգնած Հոներին.
«Ինձ խայտառակ կանեք այստեղ, թե դիպչեք իմ Հյուրերին»:
1896. Ես տեսա, թե երգասացը ինչպես խոցեց ասպետին,
Պատահական շփոթմունք էր, ոչ թե արարք չար սրտի,
Դա մեղքը չէր երգասացի, այլ սայթաքեց ձին Հանկարծ,
Տանտիրոջ պարտքն ասում է մեզ՝ լինել ներող, վեհանձն:
1897. Ուստի Հանգիստ թողեք, Հոներ, իմ Հյուրերին մեծանուն»:
Տեսնելով, որ էթցել արքան իրենց կողմն է պաշտպանում,
Պատվեր տվեց իր ասպետաց բուրգունդների քաջ արքան,
Որ անվրդով մի կողմ տանեն ու ձիերին Հանգիստ տան:
1898. էթցել արքան իր մարդկանց հետ դաշլիճ մտավ լայնարձակ,
Եվ չարության նշույլ չկար հայացքի մեջ բովանդակ,
Եվ մոտեցավ Հյուրերի հետ սեղաններին լիառատ,
Բայց ունեին նրանք արդեն թշնամիներ անչափ շատ:
1899. Եվ մինչ ազնիվ արքաները կնստեին խնջույթի՝
Իր հոգսերի հետ էր կրկին ՔրիմՀիլդը ժանտհոգի,
Ապա զնաց ու մոտեցավ նա Բեռնցի Դիտրիխին,
Ասաց. «Իշխան, ինձ շատ պետք է քո օգնությունն այս պահին»:
1900. Միջամտեց խոսքին այստեղ Հիլդեբրանդը ամելունգ,
«Ով որ դեմ է ազնվասիրտ ասպետներին նրբելունգ,
Ես նրա հետ բարեկամ չեմ: Ուարդավանքով կամ ոսկով
Անհնար է հաղթել նրանց ասպետներին կորովի»:

1901. Բեռնցին, սակայն, պատասխանեց խոսքով պատշաճ ու վայել.
«Իմ թագուհի, ես չեմ կարող Ձեր խնդրանքը կատարել,
Բուրգունդները և մեր միջև չկա ոչ մի թշնամանք,
Ուստի վերցնել նրանց դեմ զենք՝ անվայել է, անարգանք»:
1902. Ձեզ էլ, ազնիվ իմ տիրուհի, սազական չէ խնդրանքն այդ,
Ձեր Հարազատ եղբայրներին ինքենորդ եք կանչել արդ,
Ձեր նկատմամբ Հավատով են նրանք եկել: Ես երբեք
Զիզֆրիդի Համար նրանց չեմ վնասի, մոռացե՛ք»:
1903. Մերժեց նրան Դիտրիխը, բայց դադար չառավ թագուհին,
Բլոյդելին գտավ կանգնած ու խոստացավ ասպետին,
Որ կընծայի նրան Նուդունգ մարկգրաֆի Հողը մեծ,
Մինչ այդ, սակայն, Դանկվարտը Բլոյդելին սպանեց:
1904. Քրիմհիլը ասաց. «Դու ինձ պետք է օգնես, Բլոյդել,
Իմ Հարկի տակ իմ թշնամին քեֆ է անուժ անարգել,
Նա, ով մի օր սպանել է անխղճորեն Հուլյան իմ տան,
Ով վրեժս առնի, նրան Հպատակ եմ Հաժխոյան»:
1905. Բլոյդելը պատասխանեց. «Իմ տիրուհի, իմացե՛ք,
Ի սեր էթցել թագավորի չեմ Հանդգնի ես երբեք
Պատուհասել բուրգունդներին, արքան Հարգում է նրանց,
Եթե նրանց ցավ պատճառեմ, ապա կորած եմ անդարձ»:
1906. «Ինձ իզուր ես մերժում, իշխան, լիաշնորհ իմ ձեռքից
Դու կստանաս անչափ արծաթ, գոհարեղեն ու ոսկի,
Եվ Նուդունգի չքնաղ այրուն դու կստանաս իրրե կին,
Եվ կդառնաս տերը նրա թովիչ սիրո կաթոգին»:
1907. Ես Նուդունգի Հողն անսահման խոստացա քեզ, Բլոյդել,
Կհավիլեմ դրան նաև ուրիշ կալվածք ու բերդեր,
Արքայի պես կյանք կունենաս ու վայելքներ զգլխիչ,
Ես տիկնոջ մոտ կգովեմ քեզ և կհարթեմ ամեն ինչ»:
1908. Երբ Հասկացավ Բլոյդելը չափն ընծայի տրվելիք,
Որի մեջ էր և Նուդունգի պերճ տիկինը տենչալի,
Վճռեց մտքում արժե փորձել բախտը Հանուն պերճանքի,
Ստիպված էր, ավաղ, գրկվել թե կյանքից իր, թե զորքից:

1909. Եվ ասաց նա Քրիմհիլդին. «Վերադարձեք Դուք դահլիճ,
Իսկ քիչ Հետո մեծ աղմուկով ես կսկսեմ ամեն ինչ,
Հագենն այսօր կհատուցի չարյաց Համար կատարած,
Շղթայակապ ու գլխիկոր նա կկանգնի Ձեր առաջ»:
1910. Ապա ձայնեց զինվորներին. «Ի գեն, քաջեր իմ խիզախ,
Պետք է ելնենք Հիմա զորքով թշնամու դեմ մեր խարդախ,
Դա պատվերն է մեր թագուհու, որ պետք է մենք կատարենք,
Ձխնայենք ուստի եռանդ, բուրգունդներին կոտորենք»:
1911. Երբ Հեռացավ Բլոյդելը, որ կատարի խոստումն իր,
Եկավ դշխոն սեղանի մոտ, ուր էլթցել սիրալիր
Բերկըրում էր հյուրերի Հետ, գինի ըմպում փառավոր,
Մինչ թագուհին նրանց հանդեպ խարդավանք էր հյուսել նոր:
1912. Ժանտ վրեժի ծարավն այնպես մեռցրել էր նրա մեջ
Ամենայն սեր ու գորովանք, որ մեռել էր սիրտը պերճ,
Նա պատվիրեց դահլիճ բերել ջահել որդուն էլթցելի,
Ո՛վ էր տեսել մեկ այլ կնոջ՝ չար, անողոք ավելի:
1913. Ահա ելան թագավորի չորս մանկավիկ, գնացին
Ու բերեցին նորամանուկ արքայազնին գեղեցիկ,
Նրան տարան սեղանի մոտ, որտեղ Հագենն էր նստած,
Սա սպանեց նրան քիչ անց զայրույթի մեջ մոլեգնած:
1914. Երբ քաջազուն էլթցել արքան տեսավ նստած իր որդուն
Եղբայրների Հետ թագուհու, կանչեց սրտով զվարթուն.
«Նայեք նրան, իմ մինուճար որդին է դա, զարմիկներ,
Իմ և չքնաղ իմ թագուհու, բայց որդին է նաև ձեր:
1915. Նմանվելով իր տոհմին՝ նա մարդ կդառնա քաջարի,
Հզոր բազկով, բայց և Հոգով ամենատես ու բարի,
Տասներկու շեն արքայութուն կնվիրեմ ես որդուս,
Եվ կտեսնեմ, թե ինչպես է թիկունք դառնում նա մեզ, Հույս:
1916. Դրա Համար խնդրում եմ ձեզ, իմ եղբայրներ թանկագին,
Երբ Հռենոս՝ ձեր հայրենիք, վերադառնաք դուք կրկին,
Վերցրեք ձեզ Հետ ձեր սիրասուն քրոջ որդուն պայազատ,
Եվ Հոգացեք նրա մասին իբրև որդի Հարազատ:

1917. Եվ խնամք նրան մինչև Հասակ առնի, մեծանա,
Երբ մեծանա, կհատուցի զարմիկներին պարտքը նա,
Եվ կօգնի, որ թշնամյաց դեմ հաղթանակներ տանք զուգը»:
Եվ լսում էր այս խոսքերը Քրիմհիլը մթնաշուգը:
1918. «Նրան պիտի դաստիարակեն արքանե՞րը մեր բուրգունդ,—
Տրոնյեցին հարցրեց մուսյլ,— բայց կասկած կա իմ հոգում,
Երևում է արքայազնը տեսքից զժգույն բավական,
Հազիվ թե նա ապրի այնքան, որ ծառայեմ ես նրան»:
1919. Նրա կողմը նայեց արքան, սիրտը խոցվեց խոսքից այդ,
Բայց Հագենին ի պատասխան ոչինչ չասաց դառնախայթ,
Լուեց արքան՝ վիրավորված մինչև խորքը իր սրտի,
Քանզի զգաց՝ կատակ չկար խոսքերի մեջ ասպետի:
1920. Այդ խոսքերից խոր խոցվեցին իշխանները և հոնաց,
Բայց որքան էլ մթնած էին ու ծայրահեղ մոլեգնած,
Գիտեին, որ պարտ են լինել զվարթատես ու անքեն,
Զգիտեին սակայն, ինչ կա մտքում ասպետ Հագենի:

ԴԻՊԿԱԾ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Թե ինչպես Դանկվարտը սպանեց Բլոյդելին

1921. Բլոյդելի զինվորները՝ Հագած զրահ, առած սուր,
Կովի պատրաստ հազար հոգով եկան մտան սրահն, ուր
Քաջ Դանկվարտն էր զինվորներով հացի նստել անգիտակ,
Եվ Հենց այստեղ քաջաց միջև ծագեց վեճ ու թշնամանք:
1922. Եվ երբ ասպետ Բլոյդելը գոռ մոտեցավ սեղանին,
Դանկվարտը նրան սիրով ողջույն տվեց սրտագին.
«Բարով տեսանք մենք Ձեզ այստեղ, տեր իմ, ազնիվ Բլոյդել,
Զարմացնում է ինձ Ձեր գալը, ասեք՝ ի՞նչ է պատահել»:
1923. Պատասխանեց Բլոյդելը. «Ողջույններդ պահիր քեզ,
Գալս նշան է այն բանի, որ ժանտ մահ եմ բերել ձեզ,
Զի եղբայրն ես Հագենի, որ Զիգֆրիդին սպանեց,
Այդ մեծ ոճրի հատուցումը պետք է լինի նույնպես մեծ»:

1924. «Լսե՛ք, ասպետ, — բացականչեց Դանկվարտը քաջարի, — Ափսոսում եմ, որ եկել եք խորհուրդներով ոչ բարի, նս դեռ փոքր՝ սպանվել է Ջիզֆրիդը դյուցազուն, Ջեմ Հասկանում, թե թագուհին ինձնից ինչ է, արդ, ուզում»:
1925. «Ասպետների ձեռքով բուրգունդ կատարվել է չար ոճիր, Հագեն, Գունտեր ասպետներն են գործել արարքն այդ զազիր, եվ դու պետք է պատասխան տաս, քանզի զարմիկն ես նրանց, եվ թագուհին պիտ Հագենա լուկ Ջեր արյամբ անկասկած»:
1926. Դանկվարտը խոսեց այսպես. «Թե վճռել եք, Դուք, ասպետ, Հաստատ կովել, ուրեմն իզուր խոսք բացեցի ես Ջեզ Հետ»:
Այս ասելով՝ քաջ ասպետը իր սեղանից վեր թռավ,
եվ պատյանից դուրս քաշելով՝ երկայն սուրը ձեռքն առավ:
1927. Նա Հարվածեց: Այնքան մեծ էր թափը զարկի Դանկվարտի,
Որ գլուխը Բլոյդելի թռավ, ընկավ ցած՝ գետին:
«Հարսանեկան նվեր սա քեզ, — գոչեց Հսկան մոլեգին, —
Թեև դեռ կին չէիր կոչել չքնաղ այրուն Նուդունգի»:
1928. Նրա Համար միշտ կճարվեն փեսացուներ սրտացավ...
Այս մեկն ուզում էր թանկ օժիտ՝ իր բաժինը ստացավ:
Մի ազնիվ Հոն Դանկվարտին մեկ-մեկ պատմել էր արդեն,
Թե ինչպես է Քրիմհիլդը դավեր նյութում նրանց դեմ:
1929. Արդ, տեսնելով տիրոջն իրենց մեռած, ընկած արնաներկ,
Բլոյդելի զինվորները՝ նիզակներով, սրամերկ,
Հարձակվեցին բուրգունդների վրա անզեն, անպատրաստ,
Վճարեցին, սակայն շատ թանկ, քանզի ընկան դիտապատտ:
1930. Դանկվարտը բուրգունդներին բարձր ձայնեց ու ասաց.
«Ազնիվ քաջեր, մեզ պարզ է արդ որոգայթն այս անկասկած,
Հասկանում ենք, թե ինչու է թագուհին Հյուր կանչել մեզ,
Ուստի կովենք, թե պիտ մեռնենք, ապա մեռնենք քաջի պես»:
1931. Քանզի նրանք անզեն էին, կովում էին աթոռով,
Կովում էին ձեռքերն ընկած սեղաններով, գավաթով,
Նայում էին քաջերն իրար և իրարից սիրտ առնում,
Հրճվում անկեղծ, որ մերկ ձեռքով ասպետներ են կոտորում:

1932. Կռվում էին նրանք վերջին կատաղությամբ, հուսահատ
եվ հոնների քչեցին դուրս՝ ջարդելով տեգ, սաղավարտ,
եվ հոններից հինգ հարյուրը ընկան այնտեղ սպանված,
Արյունի մեջ լողում էին բուրգունդները փառապանծ:
1933. Երբ այս ծանր լուրը հասավ ասպետներին էթցելի,
Նրանք անչափ շատ վշտացան, հառաչներով տրտմալի
Ընդունեցին Բլոդելի մահը իր քաջ գորքի հետ,
Որ Հագենի եղբոր գործն էր, Դանկվարտի գորապետ:
1934. Եվ մինչ կառներ լուրն էթցելը՝ հոնների մի ողջ բանակ
Կազմ ու պատրաստ կանգնեց այնտեղ՝ զինավառ ու զենքի տակ,
Երկու հազար հոգով նրանք կացարաններ խուժեցին
Եվ կոտորել սկսեցին զինվորներին բուրգունդից:
1935. Եվ որքան էլ բուրգունդները կռվում էին քաջաբար
Եվ կանգնեցին թշնամու զեմ արիասիրտ ու երկար,
Անզեն էին նրանք սակայն, ու բոլորն էլ գտան մահ,
Ու տարածվեց ամենուրեք մահվան սարսափ, մահվան ահ:
1936. Ջէր եղել դեռ նման սպանդ աշխարհի մեջ բովանդակ,
Սպանվեցին ինը հազար ռազմիկներ հասարակ:
Տասներկու ասպետ նաև՝ Դանկվարտին հպատակ,
Եվ նրանցից փրկվեց միայն Դանկվարտը թևարձակ:
1937. Երբ զինական աղմուկները դադարեցին շուրջբոլոր,
Դանկվարտը նայեց ընկած բուրգունդներին ու խոժոռ
Ասաց. «Ավաղ, զինվորներս արդ մեռած են, սպանված,
Եվ մենակ եմ հիմա կանգնած ի մեջ անթիվ թշնամյաց»:
1938. Ամեն կողմից զարկում էին մենակ կանգնած ասպետին,
Բայց հասցրեց նա շատերին մատնել մահվան, կորստի,
Երբ վահանն իր բազկին առավ, ձգեց փոկերը կաշվե,
Ոտից գլուխ արյամբ թաթախ՝ դիակաց մեջ անհաշիվ:
1939. Ալբրիանի որդին կանչեց. «Հոնն՛ր, ճամփից իմ հեռու,
Հեղձուկը այս ինձ կխեղդի, էլ օդ չկա շնչելու,
Թողեք դուրս գամ՝ թարմ օդ առնի իմ երեսին պահ առաջ»:
Եվ հերոսը ճամփա բացեց երկար սրով, բազկով քաջ:

1940. Երբ ի վերջո դժվարությամբ Դանկվարտը ելավ դուրս,
Սաղավարտը կրկին զնգաց հարվածներից ահարկու,
Ով ծանոթ էր դեռ հերոսին, բազկի ուժին ամեհի,
Զգտում էր շուտ նրան մատնել սև կորստյան ու մահի:
1941. Այդժամ կանչեց Դանկվարտը քաջ. «Տեր իմ, անսա իմ կանչին,
Փոքրիկ մի լուր հասցրու բուրգունդ արքաներիս ականջին,
Թե եղբայրս լսեր՝ ինչպես ինձ նեղում է թշնամին,
Իմ թիկունքը կպահեր նա կամ կմեռներ իմ կողքին»:
1942. Ասացին Հոն ասպետները. «Լուրը ինքդ կտանես,
Երբ որ քո դին մենք կդնենք եղբորդ դեմ սևերես,
Տրոնյեցի ասպետն այդժամ խոր ցավ կզգա անպատում,
Պատճառել ես դու էթցելին թանկ կորուստներ անհատնում»:
1943. Դանկվարտը պատասխանեց. «Կացեք ինձնից դուք հեռու,
Թե չէ սուրս դեռ շատերիդ արյունով եմ ներկելու,
Ինքս պիտի պատմեմ ցավս արքաներին իմ երեք,
Եվ արարքի մասին ձեր ժանտ պիտի հայտնեմ, իմացեք»:
1944. Ապա կտրուկ հարվածներով նա փախցրեց Հոներին,
Որ նրանից հույժ վախեցած՝ նիզակներով անթերի
Զարկում էին նրան հեռվից: Եվ տեղերից ծանրացած
Վաճանը նա ստիպված էր իջնցնել, դնել ցած:
1945. Եվ մնալով առանց վաճան՝ առաջ նետվեց նա էլի,
Հե՛յ, ինչ ընտիր սաղավարտներ ճեղքեց ուժով ամեհի:
Ո՛վ կարող էր նրա առաջ ելնել ազատ իր կամքով,
Նա բոլորից զորեղն էր անդ, որ վաստակեց փառք ու գովք:
1946. Նրա վրա ամեն կողմից նետվում էին, գրոհում,
Շատերն էին ուզում չափվել հերոսի հետ անկոտորում,
Նա գնում էր Հոների դեմ, ինչպես վարազ մի դիվոտ,
Որ անտառում հալածում է քերձեներին թեթևոտն:
1947. Նրա ճամփան ամեն վայրկյան ներկվում էր արյունով,
Անհնար էր հավատալ, որ դեմն է Հոնաց զորքը ծով,
Կարողացավ Դանկվարտը մենակ բացել իր ճամփան,
Տեսան, ահա, դյուցազուներ պալատ մտավ անվարան:

1948. Եվ հենց լսվեց պալատի մեջ գեներալ աղմուկ ու շաշյուն,
Մատուվակաց ձեռքից ընկան գավաթները փրփրուն,
Ափսեաների տեղակ նրանք սրբի առան բյուրավոր,
Եվ հերոսի առաջ ելան թշնամիներ նորանոր:
1949. «Մատուվակ ու միկիտաննե՛ր, – գողաց հերոսը հոգնած, –
Ձէ՞ որ պիտի ձեր հյուրերին, դուք լավ նայեք, սրտաբաց,
Արքանները սպասում են ուտեստների պատվարժան,
Թողեք նրանց ես հասցնեմ եղելությունն այս դաժան»:
1950. Ով քաջություն ուներ՝ ելավ հերոսի դեմ սրամերկ,
Բայց նրանից զարկված՝ ընկավ սանդուղքներին մարմարե,
Մյուսները ընկրկեցին քաջի առաջ աներեր,
Դանկվարտի ուժն այդ օրը գործեց անլուր հրաշքներ:

ԴԻՊՎԱԾ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Թե ինչպես բուրգունդները կռվի բռնվեցին հոների հետ

1951. Արդ, քաջարի Դանկվարտը դռների մեջ երևաց,
Հեռու քշեց ծառաներին, դուռը բռնեց թևաբաց,
Արյամբ էին ցողված նրա զրահները բովանդակ
Ու բռնել էր ձեռքին սուրը, երկայն սուրը արնածածկ:
1952. Եվ ձայն տվեց Դանկվարտն ահեղ իր եղբորը՝ Հագենին
Այնպես բարձր, որ լսելի լինի խոսքը ամենքին.
«Ի՛նչ երկար եք նստում: Իսկ ես, արդ, գուժում եմ Աստծուն, Ձեզ՝
Վրաններում մորթված են զինվորները մեր անգեն»:
1953. Ի պատասխան Հագենն ընդոստ կանչեց նրան. «Ո՛ր՞նչ ձեռքով»:
«Բլոյդելի, որ ներխուժեց մեր կացարան իր զորքով,
Սակայն ասեմ, Բլոյդելը թանկ վճարեց անասճման,
Ես այս սրով թուցրեցի գլուխը իր դրուժան»:
1954. «Մեծ կորուստ չէ, – Հագենն ասաց, ապա խոսեց անվրդով, –
Երբ խոսում են ասպետական կռիվներից կորովի,
Ուր ընկնում է ազնիվ մարտում մեկը սրից մյուսի,
Ձե՛ն վշտանում դրա համար կանայք անգամ փափկասիրտ»:

1955. Սակայն, եղբայր իմ, Դանկվարտ, զրահներդ չորս կողմից
Ծածկված են կարմիր արյամբ, վիրավոր ես, ասա ինձ,
Թե՞ կա մեկը, որ քեզ այստեղ պատճառել է վերք դաժան,
Սատանայի մարդ է, ուստի պետք է մեռնի անպայման»:
1956. «Վիրավոր չեմ ամենեին, այլ՝ արյունով շաղախված,
Դա արյունն է Բլոյդելի և նրա հոն ասպետաց,
Հարյուրներով նրանց այստեղ սպանեցի մարտում թեժ,
Դրանց ստույգ թիվը արդեն ես չեմ կարող ասել Ձեզ»:
1957. Եվ անխուով Հագենն ասաց. «Դուռը պահիր դու այնպես,
Որ ոչ մի հոն կամ թշնամի չսողոսկի դրսից ներս,
Ես մնացյալ հոների հետ, ինչպես հարկն է, կխոսեմ,
Թե ինչու են սրի քաշել զինվորներին մեր անգեն»:
1958. «Էհ, դոնապա՞ն դառնամ հիմա, — քաջ բուրդունդը բարբառեց, —
Այս պաշտոնը սազում է ինձ արքաների մոտ իմ մեծ,
Համաձայն եմ, եղբայր Հագեն, ես դոները կպահեմ,
Ներս չեմ թողնի Քրիմհիլդի ոչ մի ասպետ դժնարհեմ»:
1959. «Ջարմանում եմ, — շարունակեց խոսքն Հագենը քաջասպետ, —
Թե ինչու են հոներն այդպես լուռ քչփչում իրար հետ,
Ջէի՞ն ուզում գուցե տեսնել դոների մոտ նրան, ով
Մեզ լուր տվեց զինվորների կոտորածը անողորմ»:
1960. Ես լսել եմ, որ թագուհին՝ Քրիմհիլդը մեր ազնիվ,
Ջի մոռանում իր անցյալը ու ցավերը մեծաթիվ,
Ուստի խմենք նրա գինին, մեռյալներին հիշենք մեր
Եվ հատուցում առաջինը արքայազնից պահանջենք»:
1961. Եվ Հարվածեց Տրոնյեցին մանկահասակ Օրտլիբին,
Եվ արյունը հոսեց ի վար սրի վրա լայն շեղքի,
Իսկ գլուխը մանկան թռավ ոտքերի մոտ թագուհու,
Ու սկսվեց ասպետաց մեջ կռիվ կյանքի ու մահու:
1962. Եվ արքունի դաստիարակը, որ կրթում էր թագազնին,
Նույնպես գտավ իր վախճանը սրի զարկով Հագենի,
Նրա գլուխը թավալվող սեղանի տակ հայտնվեց,
Անչափ դառն էր վարձը տված վաստակի դեմ նրա մեծ:

1963. Եվ վերբերին արքայական սեղանի մոտ տեսնելով՝
Հագենն այն կողմ աճապարեց արնաթաթախ իր սրով,
Եվ հարվածեց երաժշտի ջութակին և աջ ձեռքին.
«Առ քեզ, որ մեզ հյուր կանչեցիր՝ դեսպան գալով մեր երկիր»:
1964. «Ա՛խ, իմ ձեռքը, — ցավից գոռաց երգասացը էթցելի, —
Տեր իմ, Հագեն, ի՞նչ եմ արել քեզ երգիչս՝ վշտով լի,
Ձեր երկիր եմ եկել իբրև հավատարիմ բարեկամ,
Հիմա ինչպես ես նվագեմ, երբ աջ ձեռքս էլ չկա»:
1965. Բայց հոգը չէր Տրոնյեցու երգասացը տարաբախտ,
Նա զգում էր, որ պայատում մեծ նախճիր է ու սպանդ
էթցելի հոն ասպետների, որոնցից նա շատերին
Ցած տապալեց սրակոտոր՝ մահ սփռելով իր չորս դին:
1966. Հագենի պես գործի անցավ և Ֆուկերը զինակից,
Բարձր զնգաց նրա ձեռքին պիրկ աղեղը ջութակի,
Ոչ լարերին ջութակի, այլ հոնաց մեջքին իջնելով,
Լե՛յ, ինչքան հոն նա սպանեց իր պողպատե աղեղով:
1967. Սեղանից վեր թռան նաև արքաները նիբելունգ,
Ուզում էին նրանք սաստել կովողների բորբոքուն,
Ի՞նչ կարող էր սակայն անել արքայական ձայնն այնտեղ,
Որտեղ Հագենն ու Ֆուկերը բացել էին մարտ ահեղ:
1968. Եվ երբ տեսավ Գունտեր արքան, որ չեն լսում էլ իրեն,
Ինքն էլ սուրը մերկացրեց ու մեջ մտավ փութորեն,
Սա մի քանի սպառազեն հոն սպանեց մեծազնյա,
Եվ ցույց տվեց հերոսը, որ ինքն էլ ասպետ է դաժան:
1969. Եվ ասպարեզ մտավ ապա քաջ Գերնոտը հաղթհասակ,
Եվ Գունտերի հանգույն նետվեց սրամարտի համարձակ,
Այն սուրը, որ իբրև ընծա Բեխլարենցին էր տվել,
Նրա ձեռքին մահ էր սփռում, զրահ փշրում անարգել:
1970. Մեջ մտավ և Գիզելհերը՝ կրտսեր որդին Ութեի,
Եվ հաղթ բազկով ցած տապալեց ասպետների մեծաթիվ,
Նրա սուրը շաչում էր և խոցում հատու, անվրեպ,
Նա ճեղքում էր շարքը հոնաց թեթևորեն, ինչպես սեպ:

1971. Թեև բոլոր բուրգունդներն էլ կռվում էին անձնուրաց, Բայց ամենից քաջը, իրավ, Գիզելհերն էր անկասկած, Ո՛վ կհասներ նրա թափին ու սլացքին համարձակ, Որտեղ նա էր՝ շուրջբոլորը արյան ծով էր բովանդակ:
1972. Բայց հոններն էլ կռվում էին առյուծի պես անվարան, Ելնում էին բուրգունդաց դեմ իբրև ընտիր ախոյան, Եվ էթցելի մեծ դահլիճում մահվան պար էր ու ճարակ, Ամենուրեք լսվում էին ցավի կանչեր, աղաղակ:
1973. Դրսում եղած հոններն անթիվ ուզում էին մտնել ներս, Որ օգնության հասնեն իրենց ընկերներին դժնատես, Բայց դահլիճի դռների մոտ նրանց հույսն էր վերջանում, Քանզի այնտեղ կանգնած էր քաջ Դանկվարտը անկոտրում:
1974. Եվ մեծ էր անդ՝ դռների մոտ իրարանցումը սաստիկ, Սաղավարտ էր ճեղքում հոնաց ահեղ սուրը Դանկվարտի, Սակայն մենակ չէր դիմանա քաջ ասպետը հոներին, Թե չլինեիր նրան սատար ձեռքը գորեղ Հագենի:
1975. Բարձր կանչեց մեծ ասպետը Ալցայեցի Ֆոլկերին.
«Զինընկեր իմ, հապա մի պահ նայիր կողմը դռների,
Շուրջկալել ես հոններն այնտեղ մեր եղբորը Դանկվարտին,
Եթե չօգնես, մենք անպատճառ կկորցնենք ասպետին»:
1976. Երգասացը պատասխանեց. «Աչքիս վրա, տեր Հագեն»:
Եվ սկսեց, երգ ասելով, ճանապարհը իր մաքրել,
Ոչ աղեղով ջութակի, այլ մեծղի սրով իր պողպատ,
Որին բուրգունդ ասպետները երախտապարտ էին շատ:
1977. Եվ ձայն տվեց Դանկվարտին քաջ Ֆոլկերը կես ճամփից.
«Ինձ ուղարկեց Ձեր եղբայրը, որ լինեմ Ձեզ աջակից,
Դուք մնացեք դրսում, իսկ ես դուռը ներսից կպահանմ:
Այսօրվա Ձեր սխրանքները քաջին էին լուկ վայել»:
1978. Դանկվարտը մնաց դրսում պատվար կանգնած հոներին,
Որ շարունակ գալիս էին՝ աչքը տնկած դռներին:
Լսվում էր, թե քաջի ձեռքին ոնց է սուրը զրնգում,
Իր հաղթ սրով նույնն էր անում և Ֆոլկերը, բայց՝ ներսում:

1979. Ժխորի մեջ ահա կանչեց նա Հագենին բամբ ձայնով.
«Ո՛վ զինակից, մենք փակել ենք դուռը արդեն ապահով,
Երկուսով ենք կանգնած այստեղ, երկու բուրգունդ ասպետով,
Իսկ դա նույնն է, Թե փակել ենք դուռը հազար սողնակով»:
1980. Եվ փորձառու Տրոնյեցին մի պահ նայեց դռներին,
Մեջքին չըջեց մեծ վահանը, որ արձակի ձեռքերն իր,
Եվ սկսեց մեծ նախճիրը ու վրեժը անողոք,
Ջարությունից նրա անափ չփրկվեց և ոչ ոք:
1981. Եվ երբ Բեռնի տիրակալի աչքին ընկավ մամեն այդ,
Թե ինչպես է քաջը փչրում զրահներ ու սաղավարտ,
Ելավ, կանգնեց սեղանին և ճարահատյալ խոսք ասաց.
«Նա կսպառի մեր բուրբի համբերութունն անկասկած»:
1982. Ու արդարև, էթցել արքան ցավի մեջ էր անհատակ,
Իր աչքի դեմ մորթում էին հարազատ ու հպատակ,
Ինքն՝ անպաշտպան թշնամյաց մեջ և ընկճված իր հոգում,
Եվ սարսափի մեջ էր սաստիկ, որ արքա էր՝ ի՞նչ օգուտ:
1983. Եվ թագուհի Քրիմհիլը դիմեց Դիտրիխ Բեռնցուն.
«Ազնիվ ասպետ, փրկիր դու ինձ և այստեղից փախցրու,
Քո մանուկնդ ասպետների հովանու տակ ապահով,
Թե Հագենի ձեռքն ինձ հասնի՝ կկործանի անվրդով»:
1984. Դիտրիխն ասաց. «Ինչպե՞ս օգնեմ, ազնվազարմ թագուհի,
Հագիվ ինքս ինձ պաշտպանեմ բուրգունդներից ամեհի,
Ջի այնքան են նրանք հիմա կատաղած ու մոլեգին,
Որ այս պահին ես չեմ կարող փրկել արդեն ոչ մեկին»:
1985. «Բայց ոչ, Դիտրիխ, ազնիվ ասպետ, դու չես կարող մեզ լքել,
Քո մեծ ուժը ցույց տուր, փրկիր մեզ Հագենից մարդակեր,
Նա կսպանի ինձ, եթե դու չլինես ինձ պահապան»:
Հեզ թագուհին երբեք այդքան մոտ չէր եղել դեռ մահվան:
1986. «Լավ, կփորձեմ հիմա օգնել, իմ թագուհի մեծազնիվ,
Խոստանում եմ, վաղուց չէի տեսել այսքան թեժ կռիվ,
Հոնաց հզոր ասպետները չեն երևում էլ աչքիս,
Նրանք ճեղքած զրահներով արդ փռված են հատակին»:

1987. Ապա ամբողջ դաշլիճով մեկ Դիտրիխ Բեռնցին ձայն տվեց, եղջերափող կարծես հնչեց մարտականչով ծանրումեծ, Ձայնը գնաց, հասավ մինչև մյուս ծայրը դաշլիճի, եվ Դիտրիխի կանչը հնչեց բուրգունդների ականջին:
1988. Եվ երբ լսեց Գուլտեր արքան ձայնը ահեղ Բեռնցու, Բուրգունդներին իր հպատակ թեքվեց, ասաց նա ազդու. «Իմ ականջին ձայնը հասավ արքայազարմ Դիտրիխի, Գուցե նրա զինվորնե՞րն էլ զոհն են դարձել մեր ոխի:
1989. Նա կանգնած է սեղանին և, ահա, ձեռքով է անում, Վախենամ, որ ինչ-որ բան է մեզ հայտնել կամենում, Ով բուրգունդներ, մի պահ թողնենք մեր կռիվը, որ լսեմ, Թե Դիտրիխին ի՞նչ է եղել կամ ի՞նչ ունի նա մեր դեմ»:
1990. Եվ երբ բուրգունդ թագավորը պատվեր տվեց այդպիսի, Ցած կախեցին ասպետները սրերն իրենց միասին՝ Լուռ, հնազանդ կամքին իրենց թագավորի վեհաշուք: Ապա ասաց Գուլտեր արքան մեծ իշխանին ամելունդ.
1991. «Ազնվազարմ Դիտրիխ, եթե ասպետները բուրգունդցի Պատճառել են քեզ նեղութուն ու վնասներ առանձին, Ներող եղեք, որ կռվի մեջ տաքացել են, չափն անցել, Ես պատրաստ եմ ուզած վնաս ուզած զնով հատուցել»:
1992. Դիտրիխ արքան պատասխանեց. «Ինձ ոչինչ չի պատահել, Թողեք միայն իմ ամելունդ ասպետներով անարգել, Որ այստեղից դուրս դամ, արնոտ այս պալատից մահաբեր, Երախտապարտ կլինեմ քեզ դրա համար, ով Գուլտեր»:
1993. «Ինչպես դուրս գանք, — Վոլֆհարտն ասաց, որ զարմիկն էր Բեռնցու, — Երգասացն է դուռը պահում փակած ամեն մի անցում, Նրան պետք է մենք սպանենք, որ պալատից դուրս ելնենք»:
«Ձայնդ կտրիր, մի խոսիր չար», — Բեռնցին ասաց սրտաբեկ:
1994. Ապա լավեց դաշլիճի մեջ ձայնը Գուլտեր արքայի.
«Դուք ազատ եք, արքա Դիտրիխ, Ձեր ճամփան մենք չենք փակի, Դուրս գնացեք, երբ ուզում եք, բայց գործ չունեք հոներից, Նրանք պետք է մնան, քանզի վնասվել ենք նրանցից»:

1995. Երբ լսեց դա, Դիտրիխն առավ թևերի տակ գորնդեղ
ՔրիմՀրիզին հեծկտացող և էթցելին վշտախեղդ,
Ապա փութով նրանց տարավ ու պալատից հանեց դուրս,
Եվ նրա հետ դուրս գնացին ամելունգներ վեց հարյուր:
1996. Խոսեց ապա Բեխլարենի մարկգրաֆը պատվարժան.
«Թե ամելունգ ասպետներին թույլ եք տալիս, որ դուրս գան,
Լավ կլինի, ազնիվ Գունտեր, մեզ էլ թույլ տաք անարգել
Դուրս գանք, քանի մեր միջև էլ վեճ կամ կոխի չի ծագի»:
1997. Գիզելհերը պատասխանեց նրան խոսքով բարեհաճ.
«Ամենևին պատճառ չկա մեզ վիճելու, ասպետ քաջ,
Բուրգունդներիս հավատարիմ բարեկամն եք Դուք, ուստի
Ձեր մարդկանցով Դուք կարող եք հիմա դուրս գալ պալատից»:
1998. Եվ վեհանձն մարկգրաֆը թողեց հարկը էթցելի,
Ու նրա հետ բեխլարենցիք՝ Հինգ հարյուր կամ ավելի,
Բուրգունդների հանդեպ նրանք դեռ լավ էին, սիրալիր,
Գունտերն հետո նրանց ձեռքից կորցրեց կես զորքը իր:
1999. Այդժամ տեսավ մի հոն ասպետ, որ գնում է իր արքան,
Ինքն էլ փորձեց Դիտրիխի հետ դռնով դուրս գալ անպայման,
Բայց Ֆոլկերը նրան սրով այնպես ուժգին հարվածեց,
Որ գլուխը հենց էթցելի ոտքերի տակ գլորվեց:
2000. Եվ երբ անցավ էթցել արքան դահլիճի դուռն արնամած,
Քաջ Ֆոլկերին շրջվեց, նայեց դառնակսկիծ ու ասաց.
«Հե՛յ վախ, իմ բախտ, որ հյուր ունեմ այսքան դաժան ապաքեն,
Ասպետները իմ մեկ առ մեկ սրանց ձեռքով կսպանվեն»:
2001. Հազար ավաղ, — ողբաց արքան, — և խնջուլքի համար մեր,
Քանզի ներսում մեկն է կանգնած, որի անունն է Ֆոլկեր,
Վայրի վարազ է իսկական՝ հազած պողպատ սաղավարտ,
Պարտական եմ Աստծուս, որ փրկվեցի չարքից այդ:
2002. Մեր արյամբ է թրջված նրա ժանտ աղեղը ջութակի,
Եվ երգի տակ նրա ընկան իմ քաջերը թանկագին,
Եվ ինչու է երկինքը ինձ նման պատիժ ուղարկում,
Ֆոլկերի պես հյուր դեռ երբեք չեմ ունեցել իմ կյանքում»:

2003. Բոլոր նրանց, ում կամեցան, բուրգունդները բաց թողին,
Ապա Հնչեց դաշլիճի մեջ վայնասուունը վերստին,
Բուրգունդները նորոգեցին իրենց ջարդը անխնա,
Հե՛յ, ինչքան շատ մարդ կոտորեց երգասացը մեն-մենակ:
2004. Երբ Գունտերին աղմուկն Հասավ, շրջվեց մի պահ և ասաց.
«Հագեն, լսիր երգի ձայնը դռների մոտ կիսաբաց:
Փոկերն այնտեղ իր աղեղն է փորձում մեջքին Հոնների,
Բայց աղեղը արյան մեջ է, Աստված նրան թող ների»:
2005. «Ազնիվ արքա, – Հագենն ասաց, – վատ եմ զգում չափազանց,
Որ ասպետին թողի մենակ Հոնների մեջ կովազան,
Փոկերը իմ անդամաճան զինակիցն է, ես՝ նրա,
Պետք է նրան ես օգնության գնամ Հիմա, իմ արքա:
2006. Տեսեք, թե ոնց է Ձեզ ծառայում ասպետը Ձեր Հպատակ,
Ձեր ողջ ոսկին ու արծաթը քիչ է, որ իր վարձը տաք,
Ձույլ պողպատ է կտրում նրա կրակ աղեղն անդադրում
Եվ Հոնների գլուխները շուրջբոլորը իր սփռում:
2007. Ձեմ տեսել ես մի երգասաց, որը կովեր այնպես լավ,
Ինչպես ասպետ Փոկերն այսօր՝ մեծ եռանդով իր անբավ,
Ձեն դիմանում նրա առաջ վահան, զրահ անխտիր,
Արժանի է նա նժույգի, Հանդերձների Հատրնտիր»:
2008. Ինչքան Հոն կար դաշլիճի մեջ և ասպետներ մեծազնիվ,
Բոլորն էլ անդ կոտորվեցին, Հոն չմնաց կենդանի,
Երբ դադարեց վայնասուունը, զինաց աղմուկն ավարտվեց,
Հեզ, Հոգնատանջ բուրգունդները ցած դրեցին զենքն իրենց:

Թե ինչպես էին նրանք սպանվածներին դուրս նետում դաշլիճից

2009. Դադար առան ասպետները սրահի մեջ արնամած,
Եվ Հագենը Փոկերի Հետ կանգնեց դռան դեմ դիմաց,
Ու Հենվելով վահանների՝ Հսկում արին նրանք լուռ,
Խոսել անգամ չէին կարող, Հոգնած էին ու տխուր:

2010. Այդժամ ջահել Գիգելհերը խոսեց այսպես ու ասաց.
«Վաղ է առժամ Հանգիստ տալ մեզ, վերջին հույսեր բուրգունդաց,
Ընկածներին պետք է հանենք այս դահլիճից սոսկալի,
Մեր կռիվը չի վերջացել, կզարկեն մեզ դեռ էլի»:
2011. Եթե ընկած մնան դրանք դահլիճում՝ մեր ոտքի տակ,
Ապա մարտում հոնների դեմ կխանգարեն շարունակ,
Եվ մինչ մի օր մեզ կսեղմեն հոներն իրենց բազմությամբ,
Մենք շատերին դեռ կխոցենք կամ կսպանենք անպայման»:
2012. «Ահա ասպետը ճշմարիտ, – Հագենն ասաց իմաստուն, –
Նման խորհուրդ կարող է տալ լոկ հերոսը մշտաբթուն,
Ինձ պատիվ է զինվոր լինել նման ուշիմ արքայի,
Բուրգունդացին այս խորհրդից պետք է օգուտն իր քաղի»:
2013. Բուրգունդները գործի անցան սրահի մեջ արյունոտ
Եվ յոթ հազար սպանվածի քարշ տվեցին դուռն մոտ,
Եվ պալատի սանդուղքներից նետեցին դուռս՝ անդաստակ,
Եվ ողբալով նայում էին հարազատներ անքանակ:
2014. Բայց դրանց մեջ կային նաև վիրավորներ շատ թեթև,
Նրանց եթե խնամեին, կփրկվեին զուցե թե,
Բայց վերևից ցած ընկնելով՝ ջարդվում էին ու մեռնում,
Եվ հոները կանգնած բարձր լալիս էին ու ողբում:
2015. Այդ տեսնելով՝ Ֆոլկերն ասաց՝ երգասացը աննման.
«Այն, ինչ մարդիկ պատմում էին, ինքս տեսնում եմ հիմա,
Հոներն, իրոք, կնամիտ են, լաց են լինում գլխիկոր,
Փոխանակ այս մարդկանց բուժեն, որ ընկած են վիրավոր»:
2016. Երբ սա լսեց մի հոն իշխան, նրա խոսքին հավատաց,
Իր զարմիկին, որ ընկած էր դավիթի մեջ արնամած,
Մոտեցավ նա, թեքվեց վրան ու տանելու փորձ արեց,
Բայց Ֆոլկերից նիզակահար տեղնուտեղը տապալվեց:
2017. Դա տեսնելով՝ մյուսները փախուստ տվին լեղաճաք,
Եվ հեռացան երգասացից՝ սրտերում ահ, զարհուրանք,
Սակայն մեկը նրա վրա նիզակ նետեց շարությամբ,
Բայց սա գետնից վերցրեց այն, ետ չպրտեց դուրությամբ:

2018. Եվ նիզակը սուրաց, անցավ հրապարակն արքունի,
Եվ անցնելով փախչողներից, մխրճվեց մեջ գետնի,
Երբ տեսան դա՛ հոն իշխաններն էլ ավելի սուսկացին
Եվ Ֆուկերի ուժից իսպառ կարկամեցին, մնացին:
2019. Անդ՝ արքունի պալատի դեմ հոներ կային մեծաթիվ,
Ֆուկերը և Հագենն իսկույն գլխի ընկան, որ պատվի
Մասին են լոկ խոսում նրանք էթցելի հետ թազավոր,
Եվ որ շուտով իրենց գլխին փորձաքներ են գալու նոր:
2020. Եվ Հագենը բարձր կանչեց. «Զորավոր է ազգը այն,
Որին մարտում, դժվար պահին առաջնորդ է իր արքան,
Ինչպես որ մեր արքաններն են պատվախնդիր, քաջանուն,
Որ փշրում են օղազրահ, հեղում արյուն թշնամու»:
2021. Վախկոտներից չէր էթցելը, և վահանը ձեռքն առավ:
«Ահա, Հագեն Տրոնյեցու ձեռքը նաև Ձեզ հասավ,—
Ասաց նրան Քրիմհիլդը,— Ձեր կյանքը մի վտանգեք,
Այլ հոներին առատորեն ոսկի, արծաթ խոստացեք»:
2022. Բայց քաջասիրտ արքան էլի դեպի կռիվ էր մղվում,
Հաճախ չէ, որ արքաները անձամբ արյուն են հեղում,
Հազիվ էին ուժով պահում իշխանները էթցելին,
Իսկ Հագենը հնարագետ գրգռում էր ավելի:
2023. Նա բարբառեց. «Այն պատճառով չես ինձ վրա կատաղած,
Որ իմ ձեռքով սպանել եմ Զիգֆրիդին փառապանծ,
Իսկ չէ՞ որ նա՛ նիդեռլանդցին, ազգականն է քո հեռու,
Քեզնից առաջ ճաշակել է սերը քո սեգ թագուհու»:
2024. Հայհոյանքը ամենքի մոտ լսեց ազնիվ թագուհին,
Խիստ ցավեցին այդ խոսքերից նրա սիրտը ու հոգին,
Հասկացավ, որ Հագենն իրեն ձեռ է առնում հոնաց մոտ,
Նոր վրեժով լցվեց, ապա բարձր կանչեց զայրացկոտ.
2025. «Ով սպանի մենամարտում Տրոնյեցի Հագենին,
Եվ գլուխը ընծա բերի այստեղ ի տես ամենքին,
Ես էթցելի վահանով մեկ ոսկի կտամ լիառատ,
Կտամ նաև բերրի հողեր ու երկրներ մարդաշատ»:

2026. Երգասացը այդժամ կանչեց. «Ջարմանում եմ, թե ինչու
Հոնեբրն այդպես հապաղում են, ի՞նչ է, էլ չե՞ն ճանաչում
Կարմիր ոսկին: Ջկա մեկը, որ Հոնեբրից դա առաջ,
էլ ինչո՞ւ է նրանց Հանդեպ էթցելն այդքան բարեհաճ:
2027. Արդ, իզուր են նրանք խժռում հացն արքայի շարունակ,
Սակայն նրան դժվար պահին միշտ թողնում են մեն-մենակ,
Եվ Հիմա էլ նրանց, ահա, ես տեսնում եմ՝ երկյուղած,
Ջարմանում եմ, թե ինչու են ասպետ կոչում այդ մարդկանց»:

ԴԻՊԼԱԾ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ

Թե ինչպես սպանվեց Իրինգը

2028. Ապա կանչեց Իրինգը, որ երկրից էր Դանեմարք,
Ասաց. «Միշտ էլ իմ գործերում երազել եմ փայլ ու փառք,
Ի՞նչ սխրանքներ չեմ կատարել կռիվներում չարյաց դեմ,
Բերեք զենքերն իմ, Հիմա էլ Հագենի դեմ ես կելնեմ»:
2029. «Խորհուրդ չէի տա քեզ, Իրինգ, — ձայնեց Հագենն ասպետին,—
Լավ կլիներ պատվիրելի՜ր՝ Հոնեբրն հեռու քաշվեին,
Եթե փորձեն նրանք նորից դահլիճ մտնել՝ զենք առած,
Նրանց նույնպես մենք կըարդենք, կչպրտենք դուրս՝ մեռած»:
2030. «Ես թույլ չեմ տա, ասպետ Հագեն, — խոսեց Իրինգը հպարտ,—
Ես տեսել եմ հազար կռիվ ու ավելի դաժան մարտ,
Եվ ուզում եմ քո դեմ ելնել, սրով ելնել մեն-մենակ,
Տեսնենք, թե քեզ ինչո՞վ կօգնի Հոսորտանքը քո դատարկ»:
2031. Եվ բերեցին արտորանքով զրահները Իրինգի,
Բայց նրա հետ զրահ հագավ և Իրնֆրիդ Թյուրինգին,
Նաև արքա Հավարտը քաջ՝ զինվորներով իր հազար,
Զինվեցին, որ նրա կողքին մարտի ելնեն հավասար:
2032. Երգասացը՝ Ֆուլկերն, ահա, տեսավ ամբողջ մի բանակ,
Որ գալիս էր Իրինգի հետ՝ սպառազեն, անքանակ,
Կրում էին նրանք ընտիր սաղավարտներ ամրակուռ,
Երբ տեսավ դա, քաջ Ֆուլկերը խոսեց հերսոտ, ահարկուռ.

2033. «Ասպետ Հագեն, նայեք, ահա, Հերոս Իրինգն է գալիս, նա ինքը, որ Ձեզ կանչում է մենամարտի՝ Հուլյոսով լի, Հերոսն էլ սո՞ւտ խոսի, տեր իմ: Բայց չեմ կարող ես խաբվել, Ահա Հետը բերում է նա Հազար ասպետ և ավել»:
2034. «Դուք մնացեք, - թեքվեց Իրինգն ասպետներին մարտընկեր, - ես կանեմ, ինչ խոստացել եմ իմ երդումով կարեվեր, Խոսքս երբեք ես չեմ դրժի, Հագենի դեմ կելնեի, Թե նա Հզոր լիներ անգամ բազմապատիկ ավելի»:
2035. Մնկի իջավ Իրինգն այդտեղ մարդկանց առաջ, ասպետաց, Խնդրեց թույլ տան մենակ չափվի Հագենի դեմ մարտում բաց, Հոժար չէին նրա խոսքին, երկմիտ էին ու դժկամ, Գիտեին, որ Իրինգը էլ մենամարտից ետ չի գա:
2036. Բայց երբ տեսան ասպետները, որ խնդրում է նա սրտանց, Անում է դա Հանուն պատվի, որ թանկ է շատ, սրբազան, Թույլ տվեցին՝ մենակ ելնի Հագենի դեմ ահարկու, Եվ մի դաժան մարտ բռնկվեց դուռցազնների մեջ երկու:
2037. Առաջ պարզած նիզակը ձիգ, ծայրին՝ գեղարդն ամրակուռ, Եվ վահանը ասպետական թևած ընտիր ու ամուր, Ողջ կորովով առաջ նետվեց ասպետ Իրինգ Դանիացին, Եվ երկուսի խոլ բախումից զրահները թնդացին:
2038. Նախ նետեցին, որքան ուժ կար, նիզակները, որ թեթև Ու սրընթաց թուան դեպի վահանները պողպատե, Եվ Հարվածից փշրվեցին՝ խփվելով կուռ պողպատին, Ապա մռայլ ասպետները ձեռք պարզեցին սրերին:
2039. Թեև Հագենն Հզոր էր շատ, բայց Իրինգը եռանդուն Հարվածում էր այնպես ուժգին, որ լայն դահլիճն էր թնդում, Թնդում էր և մեծ ամրոցը դղրդոցով մի անբավ, Բայց այդպես էլ Իրինգը քաջ նպատակին չհասավ:
2040. Արդ, Իրինգը, չհասցրած և ոչ մի վերք Հագենին՝ Թողեց նրան, երգասացի վրա նետվեց մոլեգին, Կարծում էր, թե սա կընկրկի իր թափի դեմ՝ զարկից կես, Բայց Ֆուկերը պաշտպանվում էր ինչպես Հարկն է՝ քաջի պես:

2041. Եվ երբ ուժգին մի հարվածից, որ երգասացն հասցրեց,
Կարվեցին ձգափոկներն իր վահանից ծանրուձեծ՝
Թողեց նրան էլ Իրինգը, ո՞վ կհաղթեր Ֆոլկերին,
Վազեց դեպի Գուլնտեր արքան՝ հույսը թողած ոտքերին:
2042. Սա կանգնած էր դահլիճի մեջ՝ մենամարտի միշտ պատրաստ,
Սկսեցին զարկել իրար հարվածներով ահասաստ,
Բայց այդպես էլ նրանք իրար չհասցրին ոչ մի վերք,
Եվ սրերը չչողացին մահվան փայլով արնաներկ:
2043. Եվ արքային թողած ապա Իրինգն անցավ Գերնտտին,
Հասավ նրան և հարվածեց՝ բոցը պատեց ասպետին,
Բայց Գերնտտը գտավ իրեն և քիչ մնաց սպաներ
Իրինգին իր հզորազոր հարվածներով մահաբեր:
2044. Նրանից էլ արագ անցավ ասպետ Իրինգն՝ ակնդետ,
Տեսավ՝ կանգնած հռենոսցի ազնվագարմ չորս ասպետ,
Եվ չորսին էլ քաջ Իրինգը ցած տապալից հեշտուխյամբ,
Երբ դա տեսավ, Գիզհելերի դեմքին իջավ մռայլ ամպ:
2045. «Աստված վկա, իշխան Իրինգ, — Գիզհելերը կանչեց չոր, —
Դուք պատասխան կտաք այստեղ ասպետներին համար չորս,
Որ հենց հիմա սպանեցիք»: Եվ ունցավ դեպի նա
Ու զգեստեց սրի զարկով՝ հարվածելով անխնա:
2046. Ջարհուրելի այդ հարվածից Իրինգն ընկավ ցած մեկին,
Կարծուձ էին բուրբը, թե վեր չի կենա նա արդեն,
Գիտեին, թե սպանվել է, մահ է գտել հապշտապ,
Գիզհելերի առաջ, սահայն, նա ընկած էր ուշաթափ:
2047. Քաջ արքայի հարվածն ուղիղ սողավարտին էր իջել,
Եվ թնդյունից միտքն Իրինգի խառն կրթել էր, շողվել:
Եվ նա դեպի փուկեց այդպես՝ տրված ահին սև մահի,
Մեղավորը Գիզհելերի հարվածն էր հույժ ամեհի:
2048. Երբ Իրինգի միտքը շողված աշխույժ առավ վերստին,
Նա բուրգուռնդցու հարվածն հիշեց, սոսկաց խորքում իր որսի
Եվ մտածեց. «Թեև ողջ եմ, ոչ մի տեղից չունեմ վերք,
Բայց հարվածը Գիզհելերի չեմ մոռանա էլ երբեք»:

2049. Կանգնած էին նրան մոտիկ բուրգունդները թշնամի,
Հասկանում էր՝ նրանց համար ինքը մեռած լեչ է մի,
Զգում էր և, որ կանգնած է Գիզելհերը հենց կողքին,
Մտածում էր՝ ինչպես անի, որ կյանք-արևն իր փրկի:
2050. Եվ վեր թռավ արյան միջից ընկած Իրինգը հանկարծ,
Ու հանձնվեց պինդ ոտքերին՝ երախտապարտ էր նրանց,
Ճանապարհհին նա իր առաջ տեսավ կանգնած Հագենին
Եվ հարձակվեց վրան նորից՝ հարվածներով մոլեգին:
2051. Եվ Հագենը վճռեց մտքում. «Պիտի մեռնես դու, Իրինգ,
Ձեռն ազատվի, թե քեզ անգամ օգնության գա չարքն ինք»:
Բայց Իրինգը ճեղքեց ամուր սաղավարտը ասպետի,
Վազգեով, որ նրա սուրն էր փառաբանված և ընտիր:
2052. Երբ վերքն զգաց Հագենը խուլ, քենով լցվեց բովանդակ,
Սուրը նրա ձեռքին շաչեց շանթի նման շողարձակ,
Եվ Հավարտի Հպատակը այդ ժամ դիմեց փախուստի,
Հագենն հասավ նրա հետքից դռների մոտ պալատի:
2053. Բայց վահանը թիկունքին էր թեթևոտն Դանիացու,
Եվ որքան էլ երկար տևեր այդ փախուստը, մահացու
Վերք էլ էր կարող Իրինգին տալ զորեղ ձեռքը Հագենի,
Հե՛յ, ինչ առատ բոց էր ելնում սաղավարտից Իրինգի:
2054. Ողջ ու առողջ Իրինգն հասավ գուգազի մոտ յուրային,
Եվ երբ նրա լուրը առավ ինքը՝ հոնաց թագուհին,
Որ կուվել է Հագենի դեմ ու անվնաս ետ դարձել,
Դրա համար նրան գովեց, խոսքեր ասաց հույժ քաղցր.
2055. «Աստված լինի Ձեզ պահպան, ով փառապանծ իմ ասպետ,
Սփոփեցիր սիրտս ու հոգիս, ողջ է Հագենը թեպետ,
Բայց վերջապես արյուն տեսա նրա մռայլ երեսին»:
Քրիմհիլդը ինքը անձամբ վերցրեց վահանն հերոսի:
2056. «Երախտապարտ եղեք նրան, — կանչեց Հագենն առնացի, —
Բայց փառապանծ այդ ասպետը բախտը մեկ էլ թող փորձի,
Եթե նա քաջ մարդ է իրավ, թող ասպարեզ գա կրկին,
Ես էլ կիջնեմ՝ համարելով, որ ասպետ է նա կարգին:

2057. Այն, որ արյուն կա դեմքիս, և սաղավարտն է իմ ճեղքված,
Ավելի է ինձ բորբոքում, մղում սրի, կռվի բաց,
Ավելի եմ հիմա բոլոր հոնաց վրա գայրացել,
Իսկ Իրինգը ինձ մի կարգին վերք անգամ չի հասցրել»:
2058. Եվ Դանիացին ելավ կրկին, կանգնեց քամու դեմ նորեն,
Որ գովանա մարտից հետո, մկանունքը հովհարվեն,
Գովում էին մարտը նրա, խոսքեր ասում հավաստի,
Եվ դրանից մարկգրաֆը ոգևորվում էր սաստիկ:
2059. Կրկին խոսեց Իրինգը քաջ. «Բարեկամներ, ինձ համար
Բերեք հիմա նոր զրահներ, նոր հանդերձներ՝ ինձ հարմար,
Ես ուզում եմ նորից չափվել ասպետի հետ այդ հզոր»:
Մոռված էր վահանը խիստ, վահան վերցրեց նա մի նոր:
2060. Արագորեն նոր զենք-զրահ հագավ Իրինգն ու կանգնեց,
Վերցրեց նաև քաջ ասպետը մի կուռ նիզակ ծանրումեծ,
Դրանցով էր ուզում ելնել Հագենի դեմ Դանիացին,
Իսկ բուրգունդցին պատրաստ էր լի թշնամանքով մոլեգին:
2061. Եվ քանի որ էլ չէր կարող մարկգրաֆին սպասել
Մենամարտի մոլուցքի մեջ ասպետ Հագենն անարգել,
Պալատից դուրս ելավ մենակ, չէր համբերում նա արդեն,
Եվ ընկրկեց ուժն Իրինգի հզորագոր քաջի դեմ:
2062. Սկսեցին սրամարտով, հարվածներով զորավոր,
Եվ բուրգունդցու սուրը, կարմիր բոց սփռելով շուրջբոլոր,
Ճեղքեց, անցավ վահանը և զրահները Իրինգի,
Վիրավորեց նրան: Բալմունգ սրի զարկն էր դա ուժգին:
2063. Եվ երբ ասպետ Իրինգն զգաց՝ խոր վերք ունի ինքն արդեն,
Մահվան սարսափ պատեց նրան, ուժը պակսեց ապաքեն,
Վահանը մոտ քաչեց գլխին, սաղավարտը լավ ծածկեց,
Բայց Գունտերի հպատակը մարտը մի քիչ էլ ձգեց:
2064. Տրոնյեցին ոտքերի մոտ տեսավ ընկած մի նիզակ,
Դեպ Դանիացին այն չպրտեց՝ իր կորովով բովանդակ,
Որն հարվածեց ուղիղ գլխին, սաղավարտի մեջ ցցվեց՝
Մռայլ վախճան էր պատրաստել քաջը նրան՝ քիչնով մեծ:

2065. Հազիվ Հասավ իր մարդկանց մոտ ասպետ իրինգ Դանիացին,
 Եվ հենց գլխից սաղավարտը նիզակի հետ Հանեցին,
 Ընկերների ձեռքերի մեջ նա ավանդեց հոգին իր,
 Զուր են նրան էլ սպասում մոտիկները վշտակիր:
2066. Ահա նրան մոտեցավ և Քրիմհիլը՝ Թագուհին,
 Եվ սկսեց բարձր ողբալ պատվախնդիր իրինգին,
 Հույժ ցավելով՝ ողբաց նրան՝ ցավը կրկին արթնացած,
 Բայց իրինգը վերջին շնչում դիմեց նրան ու ասաց.
2067. «Էլ իզուր է արտասվելը, ազնվազարմ Քրիմհիլդ,
 Արտասվելուց օգուտ չկա, ճամփան մի՛ բաց արցունքիդ,
 Վերքս խորն է, անտարակույս կտրվեմ ես սև մահին,
 Ցավում եմ, որ էլ չեմ կարող ծառայել Զեզ, Թագուհի»:
2068. Իսկ Թյուրինգցի ու դանիացի ասպետներին նա ասաց.
 «Ոսկին, որ ձեզ Թագուհին է բաշխում առատ, սրտաբաց,
 Մի վերցրեք, թեև ոսկին կարմիր է և հմայուն,
 Բայց ով ելնի Հագենի դեմ, մահ կգտնի իմ հանգույն»:
2069. Եվ ճերմակեց դեմքն իրինգի, մահվան գույնով դալկացավ,
 Մեծահառաչ ողբում էին ընկերները սրտացավ,
 Եվ բուրն էլ՝ Հազար ընտիր ասպետները Հավարտի,
 Պատրաստ էին նետվել հիմա նրա համար թե՛ մարտի:
- 2070 Իրնֆրիդը և Հավարտը դահլիճի կողմ նետվեցին,
 Իրենց Հազար զինվորներով, և դռների մոտ չորսդին
 Բարձրացավ իրարանցում, ուղմի աղմուկ մոլեգնած,
 Հե՛յ, ինչ անձրև նիզակների տեղաց գլխին ասպետաց:
2071. Իրնֆրիդը Ալցայեցու վրա թափով Հարձակվեց,
 Սակայն արի երգասացից նա վնասներ կրեց մեծ,
 Քաջ Ֆուկերի զարկը հատու գտավ Հպարտ Դանիացուն,
 Սաղավարտը նրա ճեղքեց, վերք հասցրեց մահացու:
2072. Ապա մույլ երգասացին Իրնֆրիդը նեղեց շատ,
 Օղագրահ ու ասպետներ՝ ողջը փշրեց զարկով հազթ,
 Երբ հարվածեց Իրնֆրիդը, սրից բոցեր թռան վեր,
 Բայց Դանիացին քաջակորով ընկավ՝ խփված կարեվեր:

2073. Ելան իրար դեմ Հագենը և Հավարտը զինազարդ,
Ով ուզում էր տեսնել դյուցազն ասպետների մենամարտ,
Նրանց տեսներ: Սուր չէր նրանց ձեռքին, այլ շանթ մահացու,
Հավարտը մահ գտավ այդտեղ հատու զարկից բուրգունդցու:
2074. Երբ թյուրինգցիք ու դանիացիք տեսան մահը իրենց թանկ,
Բուրգունդների դեմ լցվեցին կատաղությամբ դժնդակ,
Ուզում էին կռվով մտնել, լցվել դահլիճ ու պալատ,
Սակայն փակ էր նրանց ճամփան, և ասպետներ ընկան շատ:
2075. Եվ Ֆոլկերը այդժամ կանչեց. «Թողնենք ներս գան մենք նրանց,
Քանզի այստեղ չեն գտնի այն, ինչ որ տեսչում են սրտանց,
Այն կղառնա նրանց համար վախճանավայր, փակուղի,
Դա կլինի վարձը նրանց, որ խոստացավ թագուհին»:
2076. Եվ հազիվ էր թշնամական գունդը պալատ ներխուժել,
Որ փլուզվեց նրանց վրա հարվածների շանթն ուժեղ,
Աչք չթարթած՝ շատ գլուխներ գետին թռան սրագարկ,
Գերնտոն էր քաջ կռվում, նաև՝ Գիզելհերը պատանյակ:
2077. Հազար և չորս ասպետները, որ զինավառ մտան ներս,
Սև կորստյան մատնվեցին և մահ գտան ժանտերես,
Գլուխների վրա նրանց շողշողացին սրեր շատ,
Հրաշք էին գործում այնտեղ բուրգունդները հուսահատ:
2078. Լոեց շուտով աղմուկը թեժ, ձայներն հանգան ցավազին,
Եվ հոսում էր արյունը հորդ, լցվում ճեղքերն հատակի,
Ապա ելնում պալատից դուրս, լցվում գավիթը քարից,
Ու կաթում էր արյունը դեռ բուրգունդների գենքերից:
2079. Ապա հանգիստ հյուրերն առան՝ արքա, ասպետ ու զինվոր,
Հոգնած՝ կրկին մի կողմ դրին իրենց գենքերն արնածոր,
Բայց կանգնած էր պալատի դեմ դեռ Ֆոլկերը դյուցազուն՝
Գուցե էլի՞ հոներ կան, որ կռիվ, արյուն են ուզում:
2080. Եվ ողբում էր արքան սաստիկ, Քրիմհիլդը՝ նրա հետ,
Ողբում էր ողջ արքունիքը՝ տիկին լինել, թե ասպետ,
Ես կարծում եմ, մահը նրանց դարձել էր չար մտերիմ,
Որքան հոներ կորան անդարձ և ասպետներ անթերի:

ԴԻՊԼԱԾ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

Թե ինչպես թագուհին կրակի մատնեց պալատը

2081. «Իսկ արդ, — սասց շագենը քաջ, — սաղավարտներս հանենք,
Հոնաց գլխին անչափ աղետ ու դառնություն բերինք մենք,
Նրանք պետք է այս խնջույքը չմոռանան էլ արդեն,
Սակայն մենք էլ չենք հասնի տուն, հոները մեզ կձարդեն»:
2082. Եվ հանեցին ասպետները սաղավարտները իրենց,
Ու նստեցին ծով արյան մեջ, դիակների վրա հենց,
Որ սպանված նրանց ձեռքով՝ լցված էին դահլիճում,
Դա Հյուրերի պատասխանն էր չարության դեմ անզիջում:
2083. Սակայն էթցել թագավորը և Քրիմհիլդ թագուհին
Ջէին կարող էլ խաղաղվել, որոշեցին, որ կրկին,
Մինչ արևի մայր մտնելը, մի գրոհ էլ պետք է տան,
Եվ շուտափույթ հավաքեցին քսան հազար զորական:
2084. Եվ սկսվեց բուրգունդների վրա ուժեղ մի գրոհ,
Ու վերստին շուրջբոլորը տիրեց աղմուկ, թոհուրոհ,
Ելավ, կանգնեց հոների դեմ Դանկվարտը պանծալի,
Կարծում էին՝ նա մեռել է, բայց նա ողջ էր, ուժով լի:
2085. Եվ կռվեցին նրանք համառ՝ մինչև գիշերն իջավ մութ,
Բուրգունդները հերոսի պես ճակատ տվին թշնամուն,
Ամառային երկար օրով պատվար եղան հոնաց դեմ,
Հե՛յ, քանիսը նրանց ձեռքով գտան այստեղ մահ դժխեմ:
2086. Արևադարձ օրն էր դա հենց՝ խրախճանքի դառնանուն,
Քրիմհիլդը դաժանորեն սրտի վրեժն էր հանում,
Հանում էր նա եղբայրներից՝ բուրգունդներից ոխն իր հին,
Պատճառելով անհուն կսկիծ նաև էթցել արքային:
2087. Գիշերն իջավ, և Հյուրերը, հոգսերի հետ իրենց նույն,
Խոր վշտի մեջ նորից ընկան, ողբում էին ցավն անհուն
Եվ մորմոքում իրենց համար մահն է միակ ցանկալին,
Վատ չէր լինի՝ հոների հետ հաշտության փորձ անեին:

2088. Պահանջեցին, որ էթցելը գավիթ դուրս գա պալատի, Բուրգուենդները կորել էին սև ժանգի մեջ երկաթի, Գուենտեր արքան նույնպես եկավ՝ եղբայրների հետ անքեն, Զգիտեին բուրգուենդները՝ վիշտը իրենց ո՛ւմ պատմեն:
2089. էթցել արքան, Թագուհու հետ, իր պալատից իջավ վար, Հողն իրենն էր, նրա գորքը նորանում էր անդադար, Ուստի Հպարտ ասաց նրանց. «Ի՞նչ եք ուզում, ասացեք, Խաղաղությո՞ւն եք կամենում՝ չեք ստանա դա երբեք:
2090. Վնասներից հետո այսքան, որ ձեր ձեռքով բարեկամ, Ստացա ես, այսուհետև ձեզ չեմ ների՝ քանի կամ, Սպանեցիք դուք իմ որդուն, ասպետներին թանկագին, Ոչ մի ներում, ոչ մի զղջում էլ չի փրկի ձեզ կրկին»:
2091. Գուենտերն ասաց. «Ձեր արածի պատասխանն էր դա, էթցել, Անգեն բոլոր զինվորներիս կոտորեցիք անարգել, Արժա՞ն էինք միթե, արքա, դաժանությանն այդ անլուր, Ձեզ մոտ եկանք իբրև եղբայր, ոչ Հանելու Ձեր դեմ սուր»:
2092. Բուրգուենդներից խոսեց ապա Գիզելհերը դեռահաս. «Արքա էթցել, Ձեր քաջերը, որոնց տեսնում եմ ահա, Թող պարզ ասեն, թե ինչո՞վ եմ վիրավորել ես նրանց, Որ եկել եմ իրենց երկիր բարի կամքով ու սրտանց»:
2093. Եվ կանչեցին Հոները չոր. «Քո բարության պատճառով Մեր երկիրը Հիմա լիքն է արցունքով ու Հառաչով, Լավ կլիներ, որ չգայիր Հոենոսից քո օտար, Հենց ձեր ձեռքով ամայացավ մեր երկիրը ծայրից ծայր»:
2094. Այդժամ խոսեց Գուենտեր արքան՝ ահեղ ձայնով, տիրական. «Արդ, ուրեմն, դուք մերժո՞ւմ եք առաջարկը Հաշտության, Ձեզ Համար էլ, անտարակույս, այն կլիներ անչափ լավ, էթցել արքան մեր նկատմամբ անարդար է, անիրավ»:
2095. էթցել արքան բուրգուենդներին դիմեց այսպես ու ասաց. «Ձեր ցավը և իմ ցավը մեծ Հավասար չեն՝ ասեմ բաց, Վնասները, որ կրել եմ բուրգուենդներիդ չար ձեռք, Կհատուցվեն բուրգուենդներիդ անազորուն մահվամբ լուկ»:

2096. Քաջ Գերնոտը պատասխանեց Հոն արքային անվարան.
«Արարիչից ու Ձեզանից ես խնդրում եմ գեթ մի բան.
Թույլ տվեք մեզ, մահից առաջ, այս դժոխքից դուրս ելնել,
Ազատ դաշտում մեռնել ազատ՝ պատիվ է դա և Ձեզ էլ:
2097. Ինչ գալու է մեր գլխին, մենք Համաձայն ենք՝ թող չուտ գա,
Դուք զինվորներ ունեք անթիվ, որ կկռվեն անխնա,
Եվ կօգնեն մեզ՝ Հանգիստ մեռնել, մարտում ընկնել՝ քաջի պես,
Գոնե այս մեծ տառապանքից մենք կազատվենք վերջապես»:
2098. Եվ էթցելի ասպետները Հոժար էին ու արդեն
Ուզում էին թույլ տալ նրանց, որ պալատից դուրս ելնեն,
Բայց երբ լսեց Քրիմհիլդը, կատաղությամբ մերժեց Հույժ՝
Իր տարաբախտ եղբայրներին չթողնելով ոչ մի Հույս:
2099. «Մի՛ արեք այն, ինչ խնդրում են, ով ասպետներ, – գոռաց նա, –
Ասում եմ ձեզ վատաՀորեն՝ եղեք նրանց անխնա
Եվ մի թողեք դահլիճից դուրս, մարդակեր են դրանք լոկ,
Փորձանք կգա ձեզ դրանցից, չի փրկվի և ոչ ոք:
2100. Մայր Ութի որդիներին եթե անգամ սպանեք,
Նրանք էլի մի Հրաշքով ողջ կմնան, ինձ լսեք,
Եվ բավ է սոսկ մի զով քամին, որ կյանք առնեն նրանք նոր,
Ողջ աշխարհը դեռ չի տեսել սրանց նման զորավոր»:
2101. Այստեղ խոսեց Գիզելհերը. «Ձքնաղ քույր իմ, լսիր ինձ,
Դու մեզ Համար պատրաստել ես ճոխ խրախճա՞նք, թե՞ կսկիծ,
Երբ կանչեցիր, Հոննոսից, Հավատալով քեզ՝ եկա,
Ասա, ինչո՞վ եմ մեղավոր, որ մահվան եմ ենթակա:
2102. Հավատարիմ եմ եղել քեզ, չեմ պատճառել ցավ չնչին,
Ես քո երկիր եկա միայն, որ թանկ ես դու իմ սրտին,
Եղբայրներդ են այստեղ ինձ Հետ, և բուրգունդներ Հարազատ,
Մեր նկատմամբ, ազնիվ քույր իմ, պետք է լինես գթառատ»:
2103. «Ձեզ չեմ կարող գթալ երբեք, չգթացին ինձ քանզի,
Երբ որ Հագեն Տրոնյեցին ինձ ցավ տվեց այնպիսի,
Որ կհիշեմ, քանի դեռ կամ և չեմ տրվել դեռ մահին:
Դուք բուրդը պետք է մեռնեք, – կանչեց Հոնաց թագուհին:

2104. Բայց թե, — ասաց, — իմ ձեռքը տաք Հագենին՝ իմ թշնամուն, ես կենդանի ձեզ կթողնեմ, և կտիրի Հաշտություն, Քանի որ իմ եղբայրներն եք, զավակներ ենք մենք մոր նույն, ես կխոսեմ էթցելի հետ, որ շնորհի ձեզ ներում»:
2105. «Արարիչը մեզ չի ների, — Գերնտոն ասաց խիստ դժկամ, — Եթե պատանդ Հանձնենք ազնիվ մեր ասպետին ինքնակամ, Հազար եղբայր էլ լինեինք, կզոհվեինք մարտում բաց, Քան ասպետից կզրկվեինք՝ հավատարիմ, անձնուրաց»:
2106. «Մենք պատրաստ ենք մեռնել, — կանչեց Գիզելհերը ահեկան, — Բայց ոչ մեկը մեզ չի կարող զրկել պատվից սրբազան, Կռիվ կտանք մենք նրանց հետ, ով որ մեր դեմ կկանգնի, Բայց Հպատակ մեր ասպետին մենակ երբեք չենք թողնի»:
2107. Քաջ Դանկվարտը ասաց, ինչպես և վայել էր ասպետին. «Դեռ մենակ չէ իմ եղբայրը՝ պինդ վահանը Բուրգունդի, Ով մերժեց մեր Հաշտությունը, դեռ կափսոսա չարաչար, Դուք կռիվ եք մեզինից ուզում՝ այն կստանաք անպատճառ»:
2108. Քրիմհիլդը կանչեց իսկույն. «Պատրաստ եղեք, իմ քաջեր, Սանդուղքներով վեր մագլցեք ու մարտնչեք անձնվեր, Կտեսնեք, թե որքան առատ ոսկի կտամ ես նրան, Ով Հագենին ընկճի ուժով և սպանի անվարան»:
2109. Եվ մի թողեք դրսում դրանց ու չլինեք կարեկից, ես կրակի կտամ հիմա պալատը ողջ՝ չորս կողմից, Որ վրեժը սրտիս հանեմ բուրգունդներից իմ պատանդ»:
Չանսալ նրան չէին կարող հոն ասպետներն հնազանդ:
2110. Նրանց, ովքեր դրսում էին, ներս քեցին գեներով, Սրի Հատու Հարվածներով կամ նիզակներ նետելով, Որքան էլ որ արքաները տոկում էին, պաշտպանվում, Կիսելով քաջ ասպետաց Հետ իրենց ցավը անպատում:
2111. Եվ էթցելի չար տիրուհին տունը մատնեց կրակի՝ Ասպետների մարմինները մատնելով հուր-տանջանքի, Քամին կրակը բորբոքեց, բոցը երկինք էր հասել, Նման սարսափ դեռ ոչ մեկը այս կողմերում չէր տեսել:

2112. Կանչում էին շատերն անհույս. «Որպիսի՛ բախտ դժնդակ,
 Լավ չէ՞ր միթե՛ մարտադաշտում մեռնեիրք մենք սրագարկ,
 Երկնայինը գոնե գթա, մահ ուղարկի վերևից,
 Ինչ դաժան է վրեժն առնում թագուհին մեր բոլորից»:
2113. Եվ մեկն ասաց բուրգունդներին. «Այս այրվող տան մեջ հենց
 Մենք կմեռնենք բոլորով էլ՝ մոխրացած կամ շնչահեղձ,
 Այս ահավոր բոցերի մեջ ինձ ծարավն է տանջում շատ,
 Վախենում եմ, որ ծարավից ես կմեռնեմ հուսահատ»:
2114. Ասաց Հագեն Տրոնյեցին. «Ով քաջասիրտ իմ ասպետ,
 Ում տանջում է սուր ծարավը, արյուն խմի թող այսուհետ,
 Կրակների մեջ արյունը լավ է խմվում, քան դինին,
 Կարմիր արյունն այստեղ հիմա թե առատ է, թե տեղին»:
2115. Եվ ասպետը հեռանալով՝ դտավ մեռած մի ասպետ,
 Ծնկի իջավ նրա վրա, սաղավարտը տարավ ետ,
 Եվ սկսեց վերքից խմել կարմիր արյունն հապշտապ,
 Երբեք արյուն նա չէր խմել, հիմա հավան էր անչափ:
2116. «Աստված լինի Ձեզ օգնական,— ասաց ասպետն Հագենին,—
 Ձեր խորհրդով իմ ծարավը հագեցրի ես կարգին,
 Այսքան համեղ գինի կյանքում ինձ չէր տվել դեռ ոչ ոք,
 Քանի ողջ եմ, սա կհիշեմ և ծարավն այս անողոք»:
2117. Երբ լսեցին խոսքն ասպետի, մյուսներն էլ վեր կացան,
 Եվ արյունով հագեցրին իրենց ծարավն անսահման,
 Նրանց հոգնած մարմինները աշխույժ առան վերստին
 Եվ զորացան այնքան, որ շատ հոների կյանք խլեցին:
2118. Եվ կրակը դահլիճի մեջ նրանց վրա զորացավ,
 Վահաններով նրանք իրենց ծածկում էին վատ թե լավ,
 Բայց փրկություն չկար ծխից, նաև տապից շնչահատ,
 Ձէին եղել բուրգունդները այսքան խեղճ ու հուսահատ:
2119. Եվ Հագենը կանչեց նորից. «Պատերի՛ տակ, ասպետնե՛ր,
 Թե չէ ընկնող գերանները կճզմեն ձեզ՝ մեջքը ձեր,
 Դրանք հրեք արյան մեջ կամ արյուն լցրեք կրակին,
 Չար խնջույք էր սա, որին մեզ կանչեց քինոտ թագուհին»:

2120. Ցավերի մեջ այսքան ծանր գիշերն իջավ մթամած,
 Եվ դռան մոտ հսկում արին զույգ ասպետներն անձնուրաց,
 Հագներն և Ֆոլկերն հենված վահաններին՝ ուշ ժամին,
 Հսկում էին՝ արդյոք քնած, թե արթուն է թշնամին:
2121. Երգասացը սակայն ասաց. «Դահլիճ գնանք մենք նորից,
 Երբ հոները չտեսնեն մեզ, կկարծեն, թե վերքերից
 Մենք ամենքս կոտորվել ենք, դի ենք անշունչ, մեռած,
 Բայց երբ մոտ գան, մենք կզարկենք նրանց՝ էլի շունչ առած»:
2122. Ապա խոսեց Գիզելհերը՝ ջահել արքան բուրգունդցի.
 «Երևում է՝ այգը մոտ է, զով է փչում՝ զգացի,
 Տա Աստված, որ մենք ապրենք դեռ լավ օրեր ու երկար,
 Ի՛նչ ահավոր խնջույք սարքեց Քրիմհիլդը մեզ համար»:
2123. Եվ խառնվեց մեկ ուրիշը. «Տեսնում եմ, որ լույս է արդ,
 Ու որպեսզի մեզ ապահով զգանք ամեն ակնթարթ,
 Պետք է գինվենք, ով ասպետներ, զրահները հագնենք մեր,
 Քիչ հետո մեզ այցի կգա կինն էթցելի մարդակեր»:
2124. Էթցել արքան կարծում էր, թե բուրգունդները չկան էլ,
 Թե մեռել են հրդեհի մեջ, թեժ բոցերի մեջ անել,
 Բայց ողջ էին նրանք այնտեղ, վեց հարյուր մարդ ողջ էր դեռ,
 Ո՛ր մի արքան ուներ նման անհաղթելի ասպետներ:
2125. Շուտով տեսան հազիվ փայլող սաղավարտները նրանց,
 Երևացին ապա բուրգունդ ասպետները փառապանծ,
 Որ հավաքված իրենց երեք արքաների շուրջն էլի՝
 Կանգնած էին դահլիճի մեջ՝ հենված իրենց զենքերին:
2126. Հաղորդեցին Քրիմհիլդին, որ շատերն են դեռ կանգուն,
 Չհավատաց: Ասաց. «Մի՞թե ստույգ է դա, իսկություն,
 Հնարավո՞ր բան է արդյոք, որ գեթ մեկը ողջ մնար,
 Կարծում էի՝ կոտորվել են բոցերի մեջ անհնար»:
2127. Եվ արդարև, ուզում էին դեռ փրկվել նրանք շատ,
 Թե մեկնումեկն հոների մեջ լինե՞ր նրանց հարազատ,
 Ավա՛ղ, հոնաց երկրում նրանք լոկ թշնամի ունեին,
 Սակայն նրանք իրենց մահվան վրեժն իրենք հանեցին:

2128. Լույսը հազիվ բացված՝ արդեն նրանց ողջուն տվեցին՝
Ուժեղ գրոհ սկսելով ու չափազանց նեղեցին,
Նրանց վրա շարտեցին անհատներ չհիշակներ,
Բայց մնացին նրանք կանգնած՝ ասպետի պես, աներեր:
2129. Կովում էին հոներն համառ և, փափագով մի անհուն,
Ուզում էին տերը լինել ընծաներին թագուհու,
Անում էին այն ամենը, ինչ ասում էր հոն արքան,
Բայց նրանցից շատերն այնտեղ անագորույն մահ գտան:
2130. Նրաչք էին պատմում առատ ընծաներից թանկագին,
Վահանները լցրին ոսկով, հոների դեմ բերեցին,
Եվ բաշխում էր Քրիմհիլդը ոսկի նրան, ով ուզեր,
Այդքան առատ չէր վճարել զինվորներին ոչ ոք դեռ:
2131. Եվ մոտ եկան բուրգունդներին սպառազեն հոներ սեգ,
Քաջ Ֆուկերը կանչեց, ասաց. «Մենք այստեղ ենք դեռ, գիտցեք,
Երեք սրանք այսքան ուժեղ չեն հարձակվել՝ քաջերն այս,
Հոտն են առել Քրիմհիլդի ոսկիների անպակաս»:
2132. Եվ կանչեցին հոներուցիք. «Դե՛հ, գրոհի նետվեք քաջ,
Եվ վերջ տվեք մեր տանջանքին, տառապանքին ժամ առաջ,
Ոչ մեկն այստեղ ողջ չի մնա, մեռնելու ենք անպատճառ»:
Հենց այդ պահին բուրգունդներից շատերն ընկան նետահար:
2133. Էլ ինչ ասեմ, թե ինչ եղավ: Երկու հարյուր և հազար
Մարդ փորձում էր ընկճել նրանց հարվածներով անդադար,
Բայց ավյունը սահման չունենր բուրգունդների հուսահատ,
Եվ վախճանը չէր երևում, և արյուն էր հոսում շատ:
2134. Եվ մահացու, խոր վերքերից անթիվ հոներ մահացան,
Լսվում էր, թե մեռյալներին ոնց են սգում ողբաձայն,
Ու կորցրեց էթցելն ընտիր ասպետներին իր բուր,
Ու թաղվեցին նրանք նորից վշտերի մեջ նորանոր:

ԴՊՊՎԱԾ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես սպանվեց Ռուդիգերը

2135. Նորից շատ մարդ կոտորեցին լուսադեմին բուրգունդցիք,
Գոտելինդի ամուսինը ելավ, դնաց արքունիք
Ու տեսնելով, թե ինչ մեծ է ցավը երկու կողմերի,
Նա դառնորեն արցունք թափեց, ողբաց մաՀը քաջերի:
2136. «Ավա՛ղ ինձ, որ դեռ ապրում եմ, — Ռուդիգերը Հառաչեց, —
Ով կարող է էլ դիմանալ այս ցավերին մեծամեծ,
Կուզենայի Հաշտեցնել, թեկուզ դեմ է և արքան,
Քանզի աղետն անցել է արդ ամենայն Հափ ու սահման»:
2137. Մարկգրաֆը Դիտրիխի կողմ մարդ ուղարկեց՝ Հարցնելու,
Թե չի՞ կարող նա Համոզել մեծ արքային՝ Հաշտվելու,
Սակայն մերժեց Բեռնցին նրան՝ Հաղորդելով. «Արքային
Դեմ չի կանգնի արդեն ոչ ոք: Նա չի ների ոչ մեկին»:
2138. Երբ պալատում մարկգրաֆին տեսավ մի Հոն զորական,
Թե ինչպես է նա արտասվում վշտերի մեջ անսահման,
ՔրիմՀիլդին ասաց. «Նայեք այդ իշխանին երեսպաշտ,
Որին այդքան վեր Հանեցիք Դուք և արքան դժառաստ:
2139. Բարի կամքով Ձեր ամուսնու՝ առատաձեռն էթցելի,
Մարկգրաֆը անթիվ Հող ու ամրոցներ է ստացել,
Բայց ինչո՞վ է նա Հատուցել մեր արքային ու դահին,
Ոչ մի անգամ այս օրերին դեռ չի կռվել, թազուհի:
2140. Երևում է՝ նրան քիչ է տանջում ցավն այս վերահաս,
Բուրգունդներից նա չի կրել դեռ ոչ մի ցավ ու վնաս,
Գովում էին նրան, ասում, թե նա քաջ է, զորավոր,
Բայց չտեսանք մենք մեր աչքով քաջութունն այդ ոչ մի օր»:
2141. Երբ խոսքերն այս մարկգրաֆը լսեց սրտով դառնացած,
Նայեց նվաստ զորականին մեծ ցասումով ու ասաց.
«Զրպարտում ես ինձ նենգորեն, չարախորհուրդ, չարհոգի՝
Անվանելով ինձ երկչոտ մարդկանց առաջ, ամենքի»:

2142. Եվ պինդ սեղմած բուռնցքները՝ հոնի վրա հարձակվեց
Ու բովանդակ իր բարկությամբ նրան այնպես հարվածեց,
Որ հոնն անշունչ ընկավ գետին՝ ոտքերի մոտ իշխանի,
էլ առավել վշտացնելով տրտում սիրտը արքայի:
2143. «Սատակի՛ր դու, ով չարախոս,— մարկգրաֆը թունդ գոռաց,—
Ինքս եմ, ահա, սրտիս խորքում անչափ տխուր, դառնացած,
Որ սուրս չեմ մերկացրել, ինչո՞ւ ես ինձ կշտամբում,
Ձէ՞ որ նրանց հանդեպ, իրավ, ինձ թշնամի չեմ զգում:
2144. Ինչ որ պետք էր անել, անշուշտ, ես կանեի պարտադիր,
Եթե ինքս բուրգունդներին չբերեի մեր երկիր,
Ուղեկցել եմ այստեղ նրանց արնակցի պես մտերիմ,
Այդ պատճառով նրանց վրա չի բարձրանում սուրը իմ»:
2145. Այդժամ նայեց մարկգրաֆին էթցել արքան ու խստիվ
Ասաց. «Լավ եք օգնում Դուք ինձ, ով մարկգրաֆ մեծագնիվ,
Առանց այն էլ՝ ասպետներիս թշնամին է մեր ջարդում,
Արդարացի չվարվեցիք՝ սպանելով այս մարդուն»:
2146. Պատասխանեց մարկգրաֆը. «Բարկացրեց նա ինձ շատ,
Վիրավորեց իմ պատիվը՝ հիշեցնելով այն առատ
Ընծաները, որ երբևէ տվել եք ինձ, արքա իմ,
Թող դաս լինի մյուսներին՝ ինձ չդատեն անհարկի»:
2147. Մոտ եկավ և Գրիմհիլդը, որ տեսել էր հականէ,
Թե զայրացած մարկգրաֆը ինչպես հոնին սպանեց,
Թագուհին մեծ վշտի մեջ էր, և թաց էին աչքերն հեզ,
Եվ ասաց նա Բեխլարենցուն. «Արժա՞ն էինք միթե մենք
2148. Այսքան ծանր ցավերի մեջ նոր ցավ տեսնել, նոր կսկիծ,
Դուք, քաջ ասպետ, միշտ պնդել եք, թե կլինեք կարեկից,
Ձեք խուսափի և կյանք զոհել հանուն ինձ՝ Ձեր թագուհու,
Եվ շատերն են գովել իմ դեմ քաջությունը Ձեր անհուն:
2149. Երբ Հաննոս եկաք, իշխան, իբրև հոնաց սուրհանդակ,
Հիշո՞ւմ եք, որ երգվեցիք՝ անկեղծությամբ Ձեր համակ,
Որ անձնվեր կծառայեք, երբ նեղության մեջ լինեմ,
Իսկ սրանից ծանր օրեր դեռ չեմ տեսել, չգիտեմ»:

2150. «Չեմ ուրանում, խոստացել եմ, որ կզոհեմ, թագուհի, կյանք ու պատիվ, որ պատկան են Ձեզ՝ Քրիմհիլդ, և դահին, Չեմ խոստացել, սակայն, ես Ձեզ՝ Հոգիս կորցնել հավիտյան, ես բերեցի նրանց այստեղ խնջույքի, ոչ կորստյան»:
2151. Քրիմհիլդը ասաց. «Հիշիր քո երդումը, քաջ իշխան, Դու խոստացար, որ կհանես իմ վրեժը անպայման, Կսփոփես իմ ցավը մեծ, որտեղ էլ որ գտնվես»:
Մարկգրաֆը պատասխանեց. «Ես երբեք չեմ մերժել Ձեզ»:
2152. Խոսեց նաև Հոնաց արքան՝ Հույսը կորցրած, թևաթափ, եվ երկունս էլ ծնկի իջան ասպետի դեմ հպատակ, Մարկգրաֆը լսեց նրանց՝ թագուհուն ու արքային, եվ ի վերջո հեծեծանքով խոսեց այսպես դառնազին.
2153. «Օ՛, ավաղ ինձ, որ տեսնում եմ այս բոլորը՝ աչքով բաց, Պետք է զրկվեմ կյանք ու պատվից, այն ամենից, ինչ Աստված Շնորհել էր խեղճ ասպետիս, որ դժբախտ է ու անել, Երկնային տեր, օգնիր գոնե, կարողանամ ես մեռնել:
2154. Ինչ վճիռ էլ որ ընդունեմ ես՝ իշխանս այս թշվառ, Լինելու է ամոթալի և չարադետ անպատճառ եվ ինչպես էլ վարվեմ, մեկ է՝ կնախատի աշխարհն ինձ, կյանք տվողը հիմա թող ինձ իմաստություն տա նորից»:
2155. Շատ խնդրեցին զորեղ արքան և թագուհին՝ աչքը թաց, Որ հանձն առավ իշխանը և բուրգունդներին դեմ գնաց, Ինչ կտրիճներ նրա ձեռքով մատնվեցին կորստյան, Սակայն ինքն էլ, մարկգրաֆը, գտավ հանգիստ ու վախճան:
2156. Հասկանում էր ասպետը, որ մերկացնելով սուրը իր, Միայն ամոթ պիտի բերի իր անվանը անբասիր, Մի բուրգունդ էլ թե սպաներ, նա կդառնար անպատիվ, Ուստի զորեղ իր տերերին մերժեց խոսքով ասպետի:
2157. Այսպես ասաց մարկգրաֆը թագավորին մեծազոր. «Արքա էթցել, ետ վերցրեք ընծաները Ձեր բոլոր, Երկիր, ամրոց, մարդ ու ոսկի, ետ վերցրեք ամեն ինչ, Կհեռանամ ես այստեղից՝ իբրև աղքատ մի վերջին»:

2158. Սակայն էթցել արքան ասաց. «Իսկ ո՞վ կօգնի ինձ, ասպետ, Ողջ երկիրս, իր մարդկանցով, ահա կիսում եմ քեզ Հետ, Միայն թե դու վրեժս առ, ինձ դարձրու պարզերես եվ էթցելի մեծ տերության մեծ իշխանը կլինես»:
2159. Մարկգրաֆը պատասխանեց. «Ո՛րնք վնասեմ ես նրանց, Ձէ՞ որ նրանց իմ հարկի տակ ընդունել եմ սրտաբաց, Հաց եմ կիսել ես նրանց Հետ՝ իբրև անկեղծ բարեկամ եվ ընծաներ տվել՝ Հիմա նրանց մա՞հը ցանկանամ»:
2160. Թեպետ կարող են և ասել, թե վախկոտ եմ ես դարձել, Բայց իմ ոչ մի ծառայություն նրանց երբեք չեմ մերժել, Ոչ թե միայն արքաներին, անգամ վերջին զինվորին, Հաստատել եմ ես նրանց Հետ նաև սիրո ուխտ վերին»:
2161. Գիզելհերին կնության եմ տվել դատերս մինուճար, Նրա նման առաքինի, նրա նման Հոգատար Ամուսին չի կարող լինել աշխարհի մեջ բովանդակ, Ոչ մի ջահել արքա այդքան խոհեմ չէ և Համարձակ»:
2162. Քրիմհիլը կրկին խոսեց, ասաց. «Ազնիվ մարկգրաֆ, Դու չե՞ս խղճում մեզ, կամ քո մեծ կարեկցանքը ո՞ւր կորավ, Նայիր և տես, թե արքայիդ և թագուհուդ սեզ գահին Որքան վնաս են հասցրել Հյուրերը քո թանկագին»:
2163. Մարկգրաֆը Քրիմհիլին պատասխանեց վշտաձայն. «Կհատուցեմ ես իմ կյանքով այսօր բարի գործերն այն, Որ ինձ Համար արել եք Դուք և գթառատ իմ արքան, Դրա Համար պետք է մեռնեմ, իմ օրերը լրացան»:
2164. Ես գիտեմ, որ արդեն այսօր Հողն ու բերդերն իմ անթիվ Պիտի անտեր մնան բուրգունդ կտրիճների շնորհիվ, Իսկ կնոջս և դատերս ձեզ եմ թողնում ես անքեն եվ Հպատակ ասպետներիս, որ երկրում են Բեխլարեն»:
2165. Արքան ասաց. «Ով քաջ ասպետ, քեզ Հետ տերն է երկնային»:
էթցելը և Քրիմհիլը ուրախ էին վերստին:
«Իսկ Ձեր մարդկանց ոչ մի անգամ մտահան չենք անի մենք, Բայց գիտեմ, որ նրանց Հոգսը Դուք ինքներդ կտանեք»:

2166. Եվ քանի որ մարկգրաֆը սիրտն ու հոգին այդպես բաց
Դրեց բախտի նժարներին՝ Քրիմհիլըը հեկեկաց:
Ասպետն ասաց. «Երդուժով ինչ խոստացել եմ՝ ես կանեմ:
Օ՛ր, ավաղ ինձ, ինչ ծանր է մարտի ելնել եղբոր դեմ»:
2167. Այնուհետև տխուր սրտով նա դուրս ելավ պալատից,
Գնաց, գտավ իր քաջերին, կտրիճներին սրտակից,
Ասաց. «Ջինվեք, իմ ասպետներ, հագեք ասպար ու զրահ,
Ժամն է՝ մարտի պիտի գնանք բուրգունդների դեմ հիմա»:
2168. Եվ զինակիր ծառաներին պատվիրեցին փութով, արդ,
Որ զրահներն իրենց բերեն, բերեն տեղ ու սաղավարտ,
Ինչ որ հարկն էր՝ ծառաները հապճեպորեն բերեցին,
Եվ քիչ վնաս չկրեցին նրանց ձեռքից բուրգունդիցի:
2169. Զրահ հագավ մարկգրաֆը՝ իր հինգ հարյուր ասպետով,
Եվ օգնության եկան նրան տասներկու հոն, որ այդօր
Ուզում էին կարմիր ոսկին ու գովքն առնել թագուհու,
Զգիտեին՝ իրենց հանդեպ բախտն ինչ չար էր լինելու:
2170. Տեսան, ահա գալիս է սեզ մարկգրաֆը անվեհեր,
Եվ նրա հետ ասպետները՝ պատրաստ, հագած զրահներ,
Նիզակներով ընտիր ու ձիգ, բռնած վահան ազդու հույժ,
Երգասացը խիստ վշտացավ նրանց տեսքից չարագույժ:
2171. Տեսավ նաև Գիզելհերը, որ աներն է գալիս իր
Եվ գալիս է գենք-զրահով, կտրիճներով հատընտիր,
Եվ մտածեց ջահել արքան, որ գալիս է օգնության,
Ուստի սիրտը թնդաց անչափ, տրվեց կանչին խնդության:
2172. «Ահա թե ինչ պաշտպան ունեմ, — Գիզելհերը կանչեց գոհ, —
Ճամփին կնքած ուխտը սիրո, տես, չի թողնում ինձ դժգոհ,
Ո՛վ կհասնիր մեզ օգնության այսպես գորեղ, ճիշտ ժամին,
Դա իմ կնոջ սիրտն է գալիս, որ հեռանա թշնամին»:
2173. «Էդ ինչո՞վ եք ուրախանում, — երգասացը հարցրեց, —
Երբ տեսնում եք, որ գալիս են այդքան ասպետ մեծամեծ,
Դուք կարծում եք, թե ուզում են մեզ օգնության փո՞րձ անել,
Նա ուզում է, մեր դեմ գալով, իր երկիրը պաշպանել»:

2174. Երգասացը իր խոսքը դեռ չէր հասցրել ավարտի,
Արդեն կանգնեց մարկգրաֆը դռների մոտ պալատի,
Նա ոտքերի առաջ դրեց իր վահանը տոհմական:
Բուրգունդներին սակայն չասաց ջերմ բարեի խոսք անգամ:
2175. Ապա արի մարկգրաֆը կանչեց ձայնով կորովի.
«Է՛յ, դուք, խիզախ նիբելունգներ, պատրաստվեցեք նոր կովի,
Խաղաղությամբ չեմ եկել, այլ որոշելու՝ կյանք կամ մահ,
Բարեկամներ էինք, սակայն, թշնամի եմ ես հիմա»:
2176. Եվ հույսը, որ բուրգունգները նրա հանդեպ ունեին,
Այս խոսքերից հետո մեռավ, և ամենքը սոսկացին,
Քանզի պետք է կռիվ տալին նրա դեմ, ով թանկ էր շատ,
Առանց այդ էլ՝ ծով հոգսերից տրտում էին, հուսահատ:
2177. «Աստված լինի մեզ պահպան, — Գունտերն ասաց՝ քաջ արքան, —
Միթե Դո՛ւք էլ, ով մարկգրաֆ, ծարավի եք մեր արյան,
էլ ո՛ւմ վրա մենք հույս դնենք և հավատանք մենք էլ ո՛ւմ,
Ձեմ հավատում, որ Դուք էլ եք թշնամյաց մեջ մեր բազում»:
2178. «Ավա՛ղ, ոչինչ էլ չես փոխի, — ասպետն ասաց վշտաբեկ, —
Պատվիս ընդդեմ պետք է քայլեմ, ինչ չեմ արել ես երբեք,
Արդ, պաշտպանվեք նիբելունգներ, ձեր զենքն առեք վերստին,
Ուրիշ ոչ մի պահանջ չունի ինձանից մեր թագուհին»:
2179. Գունտեր արքան ասաց. «Բայց Դուք ուշացել եք, Ռուդրիգեր,
Կնքված ուխտով մենք այսուհետ բարեկամ ենք անձնվեր,
Այն սերը, որ Դուք ունեիք Ձեր հոգու մեջ մեզ համար,
Լավ կլինե՛ր՝ պահպանեիք ու պահեիք մինչև մահ»:
2180. Երախտապարտ ենք մենք, իշխան, Ձեր բարության հանդեպ ճոխ,
Դուք հիմա էլ պիտի լինեք բուրգունգներիս կարեկցող,
Ձեր փառավոր ընծաները, որ բերել ենք այստեղ մենք,
Մոռանո՛ւմ եք, միթե ասպետ, չենք մոռանում մենք երբեք»:
2181. Մարկգրաֆը ասաց տխուր. «Ես հիմա էլ կտալի
Ճոխ ընծաներ, ուրախությամբ, վայել Ձեզ պես արքային,
Եթե դա իմ կամքը լիներ, լիներ փափազն իմ հոգու,
Եվ չսպառնար ինձ՝ իշխանիս, չարությունը թագուհու»:

2182. «Խելքի մո՞տ է դա, մարկգրաֆ,— ասաց Գերնոտ Բուրգունդցին,— Որ մեկն իր տունն հյուր ընդունի այն ջերմությամբ առանձին, Ինչպես Դուք՝ մեզ, ապա մաշվան մատնի նրանց՝ Հանց օտար, Չէ՞ որ եթե ողջ մնայինք, պետք կգայինք մեներ իրար»:
2183. Մարկգրաֆը պատասխանեց. «Թե Աստվածը կամենար, Որ դուք կրկին տուն դառնայիք, իսկ իմ կյանքը վերցնեք հար, Այդ ժամանակ իմ պատիվը կփրկեի ես Հաստատ, Դեռ չի եղել ոչ մի ասպետ թշվառիս պես տարաբախտ»:
2184. Կրկին խոսեց Գերնոտը քաջ. «Շատ ցավալի կլինեք Մահը Ձեզ պես սեզ ասպետի և իշխանի անձնվեր, Թող Աստված Ձեզ պահպանի Ձեր բարության Համար մեծ, Ահա ձեռքիս այն սուրն է, որ Ձեր տիկինն ինձ ընծայեց»:
2185. Անդալաճան ծառայել է սուրն ինձ՝ կռվում այս ահեղ, Անթիվ կտրիճ ասպետներ ես նրա զարկից տապալվել, Ամուր է նա, Հրաշալի, ծանրահարված ու ընտիր, Այսպիսի սուր Դուք չեք տեսնի ձեռքին ոչ մի ասպետի»:
2186. Դե՞, չեք փոխում Ձեր միտքը դեռ, մա՞րտ եք ուզում Դուք կրկին, Ձեզ կլարդեն կտրիճներս, որ այստեղ են՝ իմ կողքին, Հենց այս սրով ես անհապաղ կսպանեմ Ձեզ, քաջ իշխան, Ափսոսում եմ սակայն և Ձեզ, և Ձեր տիկնոջն աննման»:
2187. «Տեր իմ, Գերնոտ,— իշխանն ասաց,— Թե Աստված կամենար, Որ Հենց այնպես լինեք, ինչպես Դուք ասացիք՝ բառ առ բառ, Ողջ, անվնաս կմնային բուրգունդներն՝ ինձ մտերիմ, Եվ ես նրանց կթողնեի տիկնոջը և դստերն իմ»:
2188. Իսկ Ութի ջահել որդին խոսեց այսպես ու ասաց. «Ով մարկգրաֆ, բուրգունդները բողբոն էլ ջերմ, սրտաբաց Սիրում են Ձեզ, փորձեք նրանց փրկել, իբրև բարեկամ, Թե չէ չքնաղ Ձեր դուստրը կայրիանա տարաժամ»:
2189. Եթե Դուք Ձեր ասպետներով պիտի իմ դեմ գրոհեք, Խոր փսոսանք պիտի ապրեմ, զղջամ բախտիս Համար Հեզ, Որ ամենքի առաջ ես Ձեզ վստահել եմ, մեծարել եվ լուսերես Ձեր դստերը կնության եմ ես առել»:

2190. Մարկգրաֆը պատասխանեց. «Պաշտանք Ձեր սերը խոր,
Ու թե օգնի երկնայինը՝ վերադառնաք տուն մի օր,
Ազնիվ արքա, չթողնեք, որ տխուր մնա դուստրն իմ,
Նրա հանդեպ եղեք սիրով, մեծահոգի, մտերիմ»:
2191. «Պարտավոր եմ դա պաշտանել,— Գիզելհերը ասաց քաջ,—
Սակայն եթե բուրգունդներին այս դաշլիճում, իմ առաջ,
Զրկեք կյանքից և սպանեք՝ կոտորելով անխնա,
Ոչ Ձեր հանդեպ, ոչ Ձեր դստեր այլևս սեր չի մնա»:
2192. «Այդժամ տերն է մեզ դատավոր»,— ասպետն ասաց, և արդեն
Վահանները վերցրեցին, որ սանդուղքով վեր ելնեն,
Մարտն սկսեն դաշլիճի մեջ հյուրերի հետ թշնամի,
Այստեղ նրանց Տրոնյեցին դիմեց խոսքով բարեմիտ.
2193. «Մի պահ կանգնեք,— Հագենն ասաց,— մի փոքր էլ խոսնեք դեռ:
Ով մարկգրաֆ, Դուք տեսնում եք, որքան նեղն ենք մենք այստեղ,
Թեպետ արդեն էլ ուժ չկա, բայց կկռվենք մենք էլի,
Սակայն մահից մեր ի՞նչ օգուտ Ձեր թագավոր էթցելին»:
2194. «Իմ հոգսերը մեծ են, ասպետ,— շարունակեց բուրգունդցին,—
Վահանը, որ Ձեր տիկինը ինձ ընծայեց սրտագին,
Իսպառ ջարդել են հոները մարտերի մեջ անդադար,
Իսկ ես այստեղ այն բերեցի բարի մտքով և ոչ չար:
2195. Եթե հիմա երկնայինը հնար աներ ինձ համար,
Որ կրեի բազկին վրա ես մի վահան՝ ինձ հարմար,
Ինչպիսին որ քոնն է, ասպետ, լայնաճակատ ու հսկա,
Այս կռվի մեջ ինձ այլևս ոչ մի զրահ պետք չէր դա»:
2196. «Իմ վահանը կտայի քեզ մեծ հաճույքով, իմ ասպետ,
Եթե միայն իմանայի, որ չեմ շարժի դրա հետ
Քրիմհիլդի գայրույթը մեծ: Բայց, միևնույն է, վերցրու այն,
Հե՛յ, թող այնպես լինի՝ մի օր տեսնեք Ձեր Բուրգունդիան»:
2197. Երբ վահանը Տրոնյեցուն նվիրեց նա կարեկից,
Շատ շատերի աչքերն այնտեղ կարմրեցին արցունքից,
Վերջին ընծան էր ասպետի, որ անում էր սրտով մեծ,
Այսուհետև էլ ոչ մեկին նա ընծաներ չտվեց:

2198. Որքան էլ որ Տրոնյեցին խստասիրտ էր, բայց ընծան Ալեկոծեց նաև նրան, շատ էր քայլը վեհանձն,
Որ անուժ էր Բեխլարենցին իր մահվանից քիչ առաջ,
Հագենի Հետ լալիս էին շատ ասպետներ տիրահառաջ:
2199. Հագենն ասաց մարկգրաֆին. «Օ, պատվարժան գորական,
Ձեզ հավասար չկա ոչ ոք, Ձեզ Աստված է պահապան,
Որ տարազիր ասպետներին կարեկից եք Դուք այսպես,
Գուցե պահի երկնայինը Ձեր մեծ սերը մշտապես»:
2200. «Ավա՛ղ ինձ, որ տեսնում եմ սա, – շարունակեց Բուրգունդցին, –
Տեսել էինք անթիվ աղետ, վշտեր՝ ի ցավ մեր սրտին,
Գոնե հիմա գթա Աստված՝ կռիվ չտանք եղբոր դեմ»:
Մարկգրաֆը պատասխանեց. «Ես էլ անչափ ցավում եմ»:
2201. «Կհատուցեմ քո արածը, ազնվասիրտ իմ իշխան,
Ինչ էլ լինի այս կռվի մեջ՝ անազորույն ու դաժան,
Միևնույն է՝ քո դեմ, ասպետ, սուր չեմ շարժի երբեք ես,
Եթե նույնիսկ բուրգունդներին դու մեկ առ մեկ տապալես»:
2202. Նրա առաջ խոր խոնարհվեց մարկգրաֆը հարգորեն,
Լալիս էին ասպետները, զի գիտեին, որ արդեն
Անհնար է խույս տալ կռվից: Մեծ էր վիշտը, անպատում,
Իսկն Հերոս էր մարկգրաֆը, որ մահ գտավ քիչ Հետո:
2203. Եվ սանդուղքից երգասացը նրան դիմեց ու կանչեց.
«Ով մարկգրաֆ, թե Հագենը Ձեզ հաշտության խոսք տվեց,
Ապա ես էլ եմ խոստանում, որ Ձեր դեմ սուր չեմ հանի,
Մենք Ձեզ երբեք չենք մոռանա, երբ որ հասնենք Հայրենիք»:
2204. Իսկ Ձեր ազնիվ տիկնոջը Դուք սա անպայման հաղորդեք.
Նա այս ոսկե բազպանները նվիրեց ինձ ի սրտե,
Որ Հոնբրի առաջ կրեմ՝ Հուրախություն ինձ, դրանք,
Տեսեք, որ ես կատարում եմ նրա իդճը՝ ինձ շատ թանկ»:
2205. Մարկգրաֆը պատասխանեց. «Թե կամենար Աստված,
Նա Ձեզ էլի շատ ընծաներ կնվիրեր սրտաբաց,
Եթե ես ողջ մնամ այսօր, ազնվության մասին Ձեր
Իմ տիկնոջը, անտարակույս, կհաղորդեմ, քաջ Ֆոլկեր»:

2206. Խոսքն ավարտեց մարկգրաֆը և վահանը ձեռքն առավ,
Պարտքը նրան ստիպում էր՝ չհապաղել էլ բնավ,
Վեր սլացավ սանդուղքներով բուրգունդների վրա հենց
եվ ում տեսավ ճանապարհին՝ կատաղորեն հարվածեց:
2207. Հագեներ և Ֆոլկերը քաջ ետ կանգնեցին՝ մեկուսի,
Կատարելով մարկգրաֆին տված խոսքը միասին,
Դուների մոտ անթիվ էին ասպետները բուրգունդցի,
Որ խելահեղ բեխարենցուն նեղության մեջ գցեցին:
2208. Գունտեր արքան և Գերնտը թույլ տվեցին անվարան,
Որ նա դահլիճ մտնի, ապա նրա վերջը այնտեղ տան,
Գիզելհերը մի կողմ քաշվեց՝ մարկգրաֆին կարեկից,
Նա կուզենար՝ իր հետ նաև քաջին փրկել աղետից:
2210. Ռուդրիգերի ասպետները նույնպես դահլիճ խուժեցին,
Հետքից իրենց տիրոջ՝ դեպի ասպետները բուրգունդցի,
Կրում էին նրանք ընտիր, ծանր սրեր գորավոր,
Եվ ջարդեցին շատ սաղավարտ ու զրահներ փառավոր:
2211. Մարկգրաֆի ասպետները հենց լցվեցին մեծ դահլիճ,
Տեղից ելավ Հագենն Հզոր, հետը՝ Ֆոլկերն էն կտրիճ,
Մարկգրաֆից բացի՝ նրանք բոլորին էլ անխնա
Ջարկում էին, զրահներից դուրս էր հորդում արյունն ալ:
2212. Դեռ չէր եղել աշխարհի մեջ այսքան արնոտ մի սպանդ,
Նրանք հատու հարվածներով ասպար էին փշրում անդ,
Վահանների թանկ քարերով լի էր հատակն արյունի,
Հույժ դաժան էր կոտորածը ասպետների անվանի:
2213. Բեխարենցին՝ մարկգրաֆը, ետ ու առաջ էր գնում,
Կարծես լիներ մի չար ոգի՝ մոլեգնությամբ անպատում,
Դա իր օրն էր, նա կուվում էր խիստ գերազանց, փառավոր,
Նա իսկական ասպետ էր՝ ճոխ շնորհներով իր բոլոր:
2214. Կուվում էին և քաջաբար արքաները բուրգունդցի,
Անթիվ ընտիր ասպետների նրանք կյանքից զրկեցին,
Գիզելհերն ու Դանկվարտն այնքան լավ կուվեցին, որ իրավ
Շատ շատերի համար օրն այդ դատաստանի օր եղավ:

2215. Եվ ցույց տվեց մարկգրաֆը, որ ինքն ուժեղ է անչափ, չե՛յ, ինչքան մարդ նա տապալեց մոլուցքի մեջ իր անափ, Դա դուր չեկավ մի բուրգունդցու, որ բարկացավ անսահման եվ աշխատեց, որ պահ առաջ նրան մատնի կորստյան:
2216. Դա Գերնոտն էր, որ Հերոսի կողմը կանչեց անվեհեր՝ Կանգնեցնելով մի պահ նրան. «Ով մեծագնիվ Ռուդիգեր, Դուք ուզում եք ասպետներիս կյանքից զրկե՞լ մեկ առ մեկ, Ես չեմ կարող էլ Համբերել և թույլ չեմ տա դա երբեք:
2217. Այնքան բուրգունդ եք կոտորել, որ բնավ չեմ Հապաղի Ձեր իսկ սրով Ձեզ ուղարկել ճանապարհով դառնաղի, Շրջվեք իմ կողմ Հապա, որ Ձեզ փոխՀատուցել կարենամ, Ինձ տված Ձեր սրի դիմաց, իմ մեծագնիվ բարեկամ»:
2218. Մարկգրաֆը մինչ կՀասնեի արքայազն Գերնոտին, Ասպետական շատ զրահներ արյամբ ներկեց վերստին, Ապա իրար Հանդիպեցին պատվախնդիր երկու քաջ, Ամեն մեկը աշխատում էր ճամփան մաքրել իր առաջ:
2219. Անիմաստ էր պաշտպանվելը, նրանց սրի զարկից մեծ ձեղքվում էր ուզած երկաթ: Ասպետն աՀա Հարվածեց, Արքաեղբոր սաղավարտից շատրվանեց արյունն ալ, Բայց Գերնոտն էլ մարկգրաֆին կարողացավ Հարված տալ:
2220. Բարձրացնելով ծանր սուրը՝ մարկգրաֆի թանկ ընծան, Ու թեպետև նա մահացու վիրավոր էր՝ քաջ արքան, Այնպես թափով վրա բերեց քաջ ասպետի ճիշտ գլխին, Որ այն ճեղքեց: Մարկգրաֆը շունչը փչեց նույն պահին:
2221. Նման ընտիր ընծան երբեք չէր Հատուցվել վատ այդքան, Եվ երկուսն էլ մեռած ընկան՝ մարկգրաֆը և արքան, Երկու կողմից մարտում ընկան նույնաքանակ Հերոսներ, Ու երբ տեսավ ընկածներին՝ սգաց Հագենն ալեհեր:
2222. Տրոնյեցի Հերոսն ասաց. «Աղետ եկավ մեր գլխին, Մենք երկուսին կորցրինք այսօր՝ երկու ասպետ թանկագին, Որոնց նման ողջ աշխարհում չկար մեկը փառապանծ, Նրանց դիմաց բեխլարենցիք կմնան լոկ՝ իբրև վարձ»:

2223. Գուևտեր արքան դառը ողբաց. «Ավա՛ղ, եղբայրն իմ մեռավ, ինչ փորձանքներ տեսանք այստեղ ու չարիքներ մենք անբավ, Հազար ափսոս և բարեկամ մարկգրաֆին մեր ազնիվ, Նա էլ կորցրեց կյանքը իր թանկ և ասպետներ անհաշիվ»:
2224. Իսկ երբ Ջահել Գիգելհերը տեսավ եղբորն իր մեռած, Կատաղությամբ վրա ընկավ մարկգրաֆի ասպետաց, Ով եկել էր Բեխլարենից՝ սպանվում էր անողոք, Եվ Հինգ Հարյուր ասպետներից ողջ չմնաց և ոչ ոք:
2225. Գուևտերը և Հագենն Հզոր, Գիգելհերը պատանյակ, Դանկվարտն ապա և Փոլկերը՝ վշտաբեկ ու զխաճակ, Գնացին, ուր պառկած էին մարկգրաֆը և արքան, Սկսեցին ողբալ նրանց՝ արտասովելով ու անձայն:
2226. «Մահը խլում է մեր մարդկանց, — կրտսեր արքան ասաց մեղմ, — Իսկ մենք լացը մեր ավարտենք և դուրս ելնենք քամու դեմ, Մարտից Հոգնած ասպետներս թեթևանանք, Հովհարվենք, Մահն այլևս չի կամենում, որ այսուհետ ապրենք մենք»:
2227. Դադար առան գետնին նստած կամ էլ պատին կոթնելով, Անգործ էին նրանք կրկին, լուռ էր շուրջը, անխոռով, Պալատն ասես կարկամել էր, դարձել մահվան լուռ անձավ, Երբ ձայները Հանգան երկար, էթցել արքան զարմացավ:
2228. «Ա՛յ քեզ ասպետ, — Քրիմհիլդը բարձր կանչեց ի վերջո, — Նրա համար մեր պատիվը խոսք է դատարկ, անհաճո, Մարկգրաֆը բուրգունդներին ոչ թե միայն չի հաղթել, Այլ պատրաստ է նրանց արդեն մինչ Հոենոս հասցնել:
2229. Ի՛նչ օգուտ որ, արքա էթցել, նրա հանդեպ Դուք այդքան, Բարի եղաք, առատաձեռն, Հովանավոր իսկական, Իսկ նա դրժեց իր երդումը, մեր դեմ թեքվեց՝ զորքն առած»:
Դրա վրա քաջ Փոլկերը պատասխանեց ու ասաց.
2230. «Դժբախտաբար սխալվում եք, ով թագուհի դավաճան, Թե կին եք ազնվածին, բայց ստում եք չարաչար, Մարկգրաֆին խաբել եք Դուք, մեր դեմ Հանել անխնա, Եվ ստում եք, ասելով թե՛ Հաչտվել է մեզ Հետ նա:

2231. Թագավորի հանդեպ պարտքն իր նա կատարեց փառահեղ,
Մարկգրաֆն ու ասպետները նահատակվել են այստեղ,
Նայեք Ձեր շուրջն էլի, գուցե քաջե՞ր գտնեք մոռացված,
Իսկ իր պարտքը Բեխլարենցին կատարել է անկասկած:
2232. Եվ եթե ինձ չեք հավատում, ապա տեսեք աչքով Ձեր»:
Ի տրիտուր Քրիմհիլդի՝ ասպետի դին անվեհեր
Դուրս բերեցին՝ ի տես նրա, ի տես նաև էթցելի,
Անպատմելի հարված էր դա հոնաց գահին ու երկրին:
2233. Եվ երբ նրանք իրենց աչքով մարկգրաֆի դին տեսան,
Սկսեցին մեծահառաչ ողբականչեր ու շիվան,
Սրտակեղեք վայնասունն ու հեծեծանքը հոների,
Ը՞վ կարող է ստույգ պատմել կամ պատկերել անթերի:
2234. Եվ ամենից խոր ողբում էր ինքը՝ էթցելը թշվառ,
Մռնչում էր նա հանց առյուծ՝ կատաղությամբ անսպառ,
Հեծկտում էր և թագուհին՝ ցավից հույսի իր քանդված,
Ողբում էին նրանք անզոր մարկգրաֆի մահն անդարձ:

ԴԻՊՎԱԾ ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

Թե ինչպես սպանվեցին արքա Դիտրիխի բոլոր ասպետները

2235. Տարածվում էր ողբը անչափ հեծեծազին ու տխուր,
Ողջ պալատն էր ձայնից դողում, սուգ էր իջել ամենուր,
Ողբը լսեց մի ամելունգ՝ մի քաջ ասպետ բեռնցի,
Եվ փութաց, որ լուրը տխուր իր արքային հասցնի:
2236. Եվ ասաց նա իր արքային. «Տեր իմ, Դիտրիխ, լսեք ինձ,
Սրտակեղեք լացի ձայն է լսվում հոնաց պալատից,
Ես դեռ երբեք այդքան տխուր եղբրականչ չեմ լսել,
Ինձ թվում է, որ էթցելին ինչ-որ բան է պատահել:
2237. Այդպես դառը ողբում են, երբ կատարվում է մի չար բան,
Երևի թե սպանվել է թագուհին կամ ինքն՝ արքան
Բուրգունդների ձեռքով, քանզի չարացած են նրանք շատ,
Ողբում են հոն ասպետները դառնակակիծ, հուսահատ»:

2238. Բեռնի տերը խոսեց այսպես. «Հավատարիմ ասպետներ, ինչ էլ այնտեղ որ պատահի՝ դուք մնացեք անտարբեր, Բուրգունդները ստիպված են լինել վայրագ, անխնա, իսկ ես նրանց արքաներին խոստացել եմ հաշտ մնալ»:
2239. Քաջ Վուլֆհարտը առաջ եկավ և արքային իր ասաց. «Ես կգնամ հիմա պալատ և Հոնբրից դառնացած կիմանամ բուն իսկուլթյունը և կհայտնեմ ապա Ձեզ, Թե ինչու են նրանք այսօր այդպես ողբում աղեկեզ»:
2240. Պատասխանեց Դիտրիխն ազնիվ. «Երբ զայրուլթն է մոլեգնում, Անխելք հարցերն ավելի են ասպետներին բորբոքում, եվ ամեն ինչ հասցնում են վճիռների տմարդի, Այդ պատճառով պետք է, որ դու պալատ գնաս, Վուլֆհարտ իմ»:
2241. Նա պատվիրեց Հելֆերիխին, որ նա գնա, լուր բերի, Տեղեկանա արքունիքում ասպետներից էթցելի եվ կամ եկվոր բուրգունդներից՝ ի՞նչ է եղել արդարև, Այդքան ծանր ողբ նրանք դեռ չէին լսել երբևէ:
2242. Հելֆերիխը եկավ, հարցրեց. «Հոնե՛ր, ի՞նչ է պատահել»:
Եվ նրանցից մեկը ասաց. «Մեր հույս ու մեր ապավեն Ասպետը, որ սիրելի էր Հոնաց երկրի մեջ համայն, Ռուդիգերը սպանված է բուրգունդներից էդ դաժան»:
2243. Նրա ընտիր ասպետներից ոչ մեկը ետ չի դարձել»:
Դրանից վատ լուր դեռ երբեք սուրհանդակը չէր լսել, Երբ նա դարձավ Դիտրիխի մոտ, սիրտը խոցված էր այնքան, Որ արդարև չէր կարենում պատմել լսածն իր նրան:
2244. «Ի՞նչ լուր ես ինձ բերել, ասպետ,— Դիտրիխն ասաց տազնապած,— Եվ ինչո՞ւ ես, ով Հելֆերիխ, լալիս այդպես թունդ ամպած»:
Պատասխանեց քաջ ասպետը. «Քանզի պատճառ կա լացի՝ Ռուդիգերին սպանել են ասպետները բուրգունդից»:
2245. Եվ բեռնցի հերոսն ասաց. «Երկնայինի կամք է զա, Այլ մի անզուսպ վրեժ է կամ սատանայի չար կատակ, Նրանց ձեռքը մարկգրաֆի վրա ինչպե՞ս բարձրացավ, Ես գիտեի, որ իշխանը սիրելին է նրանց լավ»:

2246. Պատասխանեց քաջ Վուֆհարտը. «Եթե այդպես է, արքա,
Ապա պետք է պատժենք նրանց, ինչպես Հարկն է՝ քանի կանք,
Եթե ներենք, մեզ կծաղրեն, կնախատեն ամենուր,
Ձէ՞ որ այստեղ նեցուկ էր մեզ մարկգրաֆի արջն ամուր»:
2247. Նվաղեց հույժ սիրտն արքայի, պատուհանի մոտ նստեց,
էլի Հարցեր տվեց նրանց, ապա դեմքը խոտոռեց,
Նա պատվիրեց Հիլդերանդին՝ բուրգունդների մոտ գնա,
Որ նրանցից նույնպես ստույգ տեղեկութուն ստանա:
2248. Եվ փորձառու Հիլդերանդը, որ լավ գիտեր ամենքին,
Բուրգունդների մոտ ուզում էր իր սովորքով գնալ հին,
Զրահ չկար նրա հագին, ոչ էլ ձեռքին սուր կամ տեգ,
Ուստի քրոջ որդին նրան հանդիմանեց ի սրտե:
2249. Վուֆհարտն էր դա, որ լուրջ ասաց. «Ո՛ր եք գնում մերկ, անզեն,
Դուք ուզում եք, որ Զեզ, նաև անունը մեր անդ ծաղրե՞ն:
Կհայհոյեն՝ չնայելով, որ ասպետ եք անվանի,
Մեկնեք զինված, և այդ դեպքում՝ կպատկառեն Զեզանից»:
2250. Եվ ծերունին վարվեց, ինչպես զարմիկն ասաց իր ջահել,
Բայց հազիվ էր զրահ հագել ու վահանը ձեռքն առել,
Երբ կանգնեցին բեռնցիք բոլոր՝ սպառազեն, մարտական,
Շատ զայրացավ ծեր ասպետը և արգելեց՝ իր հետ գան:
2251. Հարցրեց նրանց. «Այդ ո՞ւր հանկարծ, ով կտրիճներ փառահեղ»:
«Ուզում ենք գալ: Հագենը շատ վտանգավոր է, զորեղ,
Եթե տեսնի միասին ենք, կզգաստանա անկասկած»:
Եվ ամելունգ ասպետների գունդը նրա հետ գնաց:
2252. Եվ երբ անքուն երգասացը տեսավ՝ գալիս են ահա,
Դիտրիխ Բեռնցու ասպետները՝ առած սրեր ու վահան,
Տեղը տեղին սպառազեն, զրահ հագած, սաղավարտ,
Դիմեց բուրգունդ արքաներին՝ սովորությամբ իր հանդարտ:
2253. Ֆոլկերն ասաց. «Դիտրիխ Բեռնցու ասպետները համագունդ
Հյուր են գալիս: Բայց ձեռքների ունեն վահան ու մկունդ,
Տեսքը նրանց չարացած է, թշնամական ու մռայլ,
Վախենամ, թե նրանց հետ էլ ստիպված ենք կռիվ տալ»:

2254. Քիչ անց արդեն Հիլդեբրանդը պայատի դեմ Հայտնվեց,
 ևս ոտքերի առաջ դրեց իր վահանը ծանրումեծ
 Եվ Գունտերի ասպետներին ասաց ազդու, սառներես.
 «Ազնիվ քաջեր, մարկգրաֆը ի՞նչ վնաս էր տվել ձեզ:
2255. Իմ տեր Դիտրիխն ինձ ուղարկեց այստեղ, ձեզ մոտ՝ իմանամ,
 Ձե՞ր ձեռքով է սպանվել նա՝ մարկգրաֆը բարեկամ,
 Ինչպես արդեն պատմել են մեզ, ով բուրգունդցի ասպետներ,
 Նրա մահը ծանր կսկիծն ու անմոռաց վիշտն է մեր»:
2256. Մռայլ Հագենն ասաց նրան. «Ճշմարիտ է, ոչ կատակ,
 Չնայած շատ կուզենայի, որ սուտ լիներ, Հերյուրանք,
 Եվ իշխանը Հիմա այստեղ մեզ հետ լիներ, ողջանդամ,
 Չողբային նրան տիկնայք, տղամարդիկ մեծազարմ»:
2257. Եվ բեռնցիք՝ լսելով, որ սպանված է քաջն ստույգ,
 Նրա համար խիստ վշտացան, Թափեցին դառն արտասուք,
 Արցունքները թափվում էին մորուքներից նրանց ցած,
 Այնքան էին նրանք խոցված, հուսահատ ու դառնացած:
2258. Բեռնցի Հերցոգ Ջիզլտաբը ասաց սրտով վշտագեղ.
 «Ավա՛ղ, բոլոր քաջաց համար մի վախճան կա լուկ այստեղ,
 ևս շարունակ սփոփում էր հայրենաբաղձ սիրտը մեր,
 Սպանել եք հույսը պանդուխտ ասպետներին, բուրգունդներ»:
2259. Եվ ամելունգ ասպետներից Վոլֆվայնն ասաց ողբհառաչ.
 «Եթե այսօր ես տեսնեի հորս էլ մեռած իմ առաջ,
 Ձէի տխրի ես ավելի, քան որ Հիմա եմ տխրել,
 Մ՛վ կարող է մարկգրաֆի տիկնոջն Հիմա սփոփել»:
2260. Եվ տաքարյուն Վոլֆհարտն այստեղ առաջ եկավ ու ասաց.
 «Հիմա էլ ո՞վ պիտի, արդյոք, առաջնորդի ասպետաց,
 Երբ սպանված է մարկգրաֆ Թուդիզերը մեծազարմ,
 Ափսոս ազնիվ Թուդիզերին, որ մեզ լքեց վաղաժամ»:
2261. Եվ բոլորն էլ արտասովելով՝ ողբում էին կարեվեր,
 Վոլֆբրանդն ու Հելֆերիխը, Հելմնոտը և ուրիշներ,
 Հեծկլտացող Հիլդեբրանդը էլ ոչինչ չհարցրեց,
 Միայն ասաց. «Կատարեք այն, ինչ իմ տերը պատվիրեց:

2262. Արդ, մեզ Հանձնեք դին սպանված մարկգրաֆի մեր եղբայր,
Որ մեր բոլոր ասպետները ողբան նրա մահը չար,
Թույլ տվեք մեր Հարգանքը տանք արժանահարգ ասպետին,
Գոնե այդպես կարողանանք վիշտը մեղմել մեր սրտի:

2263. Մենք՝ բեռնցիք, նրա նման քշված ենք մեր օրրանից,
Ուստի, ազնիվ նիրբլուներ, տվեք մեզ դին իշխանի,
Նրան, թեկուզ և սպանված, պետք է մենք տանք այն բոլոր
Պատիվները, որոնց այսօր արժան է նա ու սովոր»:

2264. Գունտերն ասաց. «Առաքինին այն ասպետն է, անկասկած,
Ով տալիս է ազնիվ Հարգանք ընկերոջը իր մեռած,
Դա ճշմարիտ Հարգանք է, որ պիտի, անշուշտ, մատուցեք,
Մարկգրաֆի վաստակն է դա, որ շատ մեծ է, թանկարժեք»:

2265. «Սակայն ինչքա՞ն մենք սպասենք,— ՎոլֆՀարտն ասաց
բարկացկոտ,—
Մեր սիրելին՝ մարկգրաֆը մեռած ընկած է ձեզ մոտ,
Իսկ մենք չենք էլ կարողանում ետ ստանալ նրա դին,
Տվեք նրան և թույլ տվեք Հողին Հանձնենք ասպետին»:

2266. Երգասացը պատասխանեց. «Մենք չենք անի դա երբեք,
Դուք ինքներդ տարեք նրան, եթե դրա Հարկն ունեք,
Սեզ ասպետը, ծով արյան մեջ, այստեղ պառկած է անշունչ,
Դրանով էլ կմատուցեք նրան Հարգը ձեր, անշուշտ»:

2267. Քաջ ՎոլֆՀարտը ասաց նրան. «Տեր Աստված էլ գիտի, որ
Բուրգուներդ, ով երգասաց, մեզ ինչ ցավ էք տվել խոր,
Ուստի պետք է այդ ցավի Հետ նոր խաղ անել մահաբեր,
Թե իմ տերը թույլ տար, ես Ձեզ կդնեի տեղը Ձեր»:

2268. Դրան խիզախ երգասացը պատասխանեց ի սրտե.
«Նա, ով սիրով խուսափում է արգելանքները խախտել,
Դա անում է գուցե վախի՞ց: Քաջություն է չէ դա Հաստատ»:
Այս խոսքերին Տրոնյեցին Հավան մնաց անչափ շատ:

2269. «Կատակները թողեք Դուք Ձեր,— կանչեց ՎոլֆՀարտն անհամբեր,—
Թե չէ այնպես կփշրվի Ձեր ջուրթակը, եկվորներ,
Որ երբ Վորմս վերադառնաք, կհիշեք ինձ անկասկած,
էլ չեմ կարող լսել արդեն Ձեր խոսքերը սնապարծ»:

2270. Ֆոլկերն ասաց. «Թե գեղեցիկ Հնչյուններն իմ ջութակի,
Ապականեք ձեր ամելունգ ասպետներով անհարկի,
Իմ ձեռքից ձեր գլխին կգա ծանր փորձանք ու աղետ,
Իսկ ես, իրոք, տուն կհասնեմ, չկասկածեք, ով ասպետ»:
2271. Վոլֆհարտն ուզեց նետվել առաջ, սակայն փակ էր յուր ճամփան,
Հիլդեբրանդը ուժով պահեց իր զարմիկին կովազան.
«Տեսնում եմ, որ կատաղության մեջ ես ընկնում քո անմիտ,
Մենք Դիտրիխի բարկությանը կարժանանանք մեկընդմիջտ»:
2272. «Խենթ առյուծին մի կաշկանդեք, — կանչեց վերից բուրգունդցին, —
Երևում է՝ շատ զորեղ է, սակայն եթե նա փորձի
Մոտենալ ինձ, այնպես զորեղ ցույց տամ դրան այստեղ ես,
Որ բերանում լեզուն հավերժ փակվի, մնա համրի պես»:
2273. Այս խոսքերից բռնցիկն այնպես կատաղությամբ համակվեց,
Որ վահանը արագորեն մեղքի վրա իր ձեռք,
Եվ սլացավ առյուծի պես սանդուղքներով դեպի վեր,
Հետևեցին նրան իսկույն ամելունգներն անվեհեր:
2274. Լայն ցատկերով ասպետն հասավ մինչև դուռը, բայց նորից
Կանխեց նրան Հիլդեբրանդը, առաջ անցավ ասպետից,
Նա չէր ուզում, որ իրենից առաջ մեկը սկսեր մարտ
Եվ ի հաճույս նրա՝ նաև Հյուերերն էին կազմ-պատրաստ:
2275. Դիմազրավ կանգնեց նրան, ահա, մուսյլ բուրգունդցին,
Եվ սրերը նրանց ձեռքին խաղացին ու զնգացին,
Երևում էր, որ երկուսն էլ շատ լցված են իրար դեմ,
Քանզի բոց էր ելնում նրանց մեծ սրերից պողպատե:
2276. Եվ ինչպես որ շատ հաճախ է մարտերի մեջ պատահում,
Բաժանվեցին իրարից այդ երկու ասպետն ահարկու,
Դիտրիխ Բեռնցու կտրիճները կովում էին անձնուրաց,
Ելավ ահա քաջ Վոլֆհարտը Ֆոլկերի դեմ երգասաց:
2277. Այնպես ուժգին նա հարվածեց սաղավարտին Ֆոլկերի,
Որ այն ճեղքեց ու նրա հետ՝ և կորդակը անթերի,
Ապա զարկեց Ֆոլկերն, ինչպես որ վայել էր ասպետին,
Եվ բոցերը ցած թափվեցին զրահներից Վոլֆհարտի:

2278. Անձրևի պես բոց էր թափվում զրահներից նրանց կուռ,
Եվ երկուսն էլ եռում էին սև վրեժի խանդով կուռը,
Բայց բաժանեց նրանց այստեղ ասպետ Վոլֆվայն Բեռնցին,
Ուրիշ ոչ ոք չէր բաժանի, իրավ, այս զույգ առյուծին:
2279. Եվ ամելունգ ասպետներից շատերի Հետ միասին,
Չափվում էր և Գունտեր արքան՝ չմնալով մեկուսի,
Եվ դեռահաս Գիզելհերը, որ առջևում էր անվերջ,
Շատ ակնազարդ սաղավարտներ թաթախեց տաք արյան մեջ:
2280. Տրոնյեցու եղբայրը քաջ՝ Դանկվարտը անողոք,
Ինչ արել էր մինչև Հիմա, թեթև խաղ էր թվում լոկ,
Միայն Հիմա, երբ Հանդիպեց բեռնցի ահեղ քաջերին,
Իր կռիվը սկսեց նա՝ Ալդրիանի սեզ որդին:
2281. Ռիչարդն ու Գերբարտը խոլ, Հելֆերիխն ու Վիխարտը
Գրոհ էին տալիս ուժգին, փշրում տեզ ու սաղավարտ,
Նրանց անգամ բուրգունդները նայում էին զարմացած,
Տեսան, ահա, առաջ եկավ Վոլֆբրանդը փառապանծ:
2282. Հիդեբրանդը կատաղել էր, չաքերն էին փայլում չար,
Եվ Գունտերի շատ ասպետներ, նրա ձեռքից սրահար,
Տապալվեցին ու մահ գտան՝ դաժանությամբ առանձին,
Այդպես էին մարկգրաֆի վրեժն առնում բեռնցիք:
2283. Շուրջը մահ էր սփռում նաև սուրը Հերցոգ Զիգչտարի,
Նա, որ զարմիկն էր Դիտրիխի, քրոջ որդին սիրելի,
Իր նմանը չունեի մարտում, գերազանց էր ամենքից,
Հե՛յ, ինչքան շատ բուրգունդ ընկավ զարկից նրա հաղթ բազկի:
2284. Քաջ Ֆոլկերը երբ նկատեց մոյեզնությունն Հերցոգի,
Թե ինչպես է բուրգունդներին ջարդում անսիրտ-անհոգի,
Եվ առվակներ Հանում արյան՝ Հույժ կատաղեց, չարացավ,
Ապա նետվեց նրա կողմը, ու դրանից շատ չանցած
2285. Երգասացի զարկից ընկավ և Զիգչտաթ Բեռնցին,
Այնքան մեծ էր թափը նրա սոսկումնալի Հարվածի,
Որ Հերցոգը անշունչ ընկավ ու ավանդեց հոգին իր,
Սակայն նրա վրեժն առավ ծեր ասպետը գինակիր:

2286. «Ավա՛ղ հերցոգ Ջիզտարին, — Հիլդեբրանդը հեծածաց, —
Որ սպանվեց զարկից հզոր նիրելունդի երգասաց,
Ուստի նա էլ՝ երգասացը, արժանի է նույն բախտին»:
Ափսոսանքը մեծ էր նրա, սահման չկար զայրույթին:
2287. Ահարկու էր հարվածը, որ երգասացը ճաշակեց,
Սաղավարտի կտորներով շուրջընդոլը ծածկվեց,
Զեռքից ընկավ և վահանը, ոչինչ չօգնեց այս անգամ,
Եվ փառապանծ երգասացը տապալվեց ցած ու հանգավ:
2288. Նորից դեպի բուրգունդները գրոհեցին բեռնցիք
Ու անհաշիվ սաղավարտներ ու զրահներ ջարդեցին,
Պիրկ պողպատը տեղի տալիս, սրեր էին թափվում ցած,
Տաք արյունն էր առատ ներկում զրահները փեռեկված:
2289. Տրոնյեցին տեսավ հանկարծ, որ Ֆուկերն է մեռած իր,
Ամենամեծ կորուստն էր դա, որ տեսնում էր բուրգունդցին,
Երգասացը նրա համար թանկ էր անգամ եղբորից,
Օ՛, նա վրեժն հանեց իսկույն մահվան համար Ֆուկերի:
2290. «Հիլդեբրանդը դա չի մարսի, ծեր ասպետը դավադիր,
Նրա սրից սպանված է զինակիցը իմ ընտիր,
Որի նման ինձ գորավիզ չեմ ունենա էլ արդեն»:
Նա վահանը ձգեց մեջքին ու սկսեց իր ջարդը:
2291. Ապա ասպետ Հելֆերիսը Դանկվարտին սպանեց,
Դա Գունտերի, Գիզելհերի համար, անշուշտ, վիշտ էր մեծ,
Նրանք տեսան Դանկվարտին մեծ նեղության մեջ անել,
Բայց այդպես էլ քաջ ասպետին չհասցրին ձեռք մեկնել:
2292. Քաջ Վոլֆհարտը դահլիճի մեջ ետ ու առաջ էր շարժվում՝
Ճանապարհին տապալելով բուրգունդների մեծանուն,
Երրորդ անգամ ահա գծեց իր շրջանը Բեռնցին՝
Նորից էլի կոտորելով շատ ասպետներ իր ճամփին:
2293. Խրոխտ կանչեց Գիզելհերը՝ կանգնեցնելով Վոլֆհարտին.
«Հանդիպել եմ, ավա՛ղ, ճամփիս շատ դժվարին ասպետի,
Դե՛, քաջ ասպետ, ջահել հերոս, հապա կողմը իմ դարձիր,
Ես ուզում եմ, որ վերջ դնեմ այս ամենին, Բեռնցիք»:

2294. Ու շրջվեց Վոլֆհարտը քաջ՝ շուրջբոլորը արյան ծով,
Եվ ընթացավ դեպի արքան՝ օղազրահ ջարդելով,
Նա քայլում էր արյան միջով, արյան շիթերն անհամար
Ոտքի տակից ցայտելով վեր՝ ծածկել էին դեմքը մառ:
2295. Բայց չընկրկեց Վոլֆհարտի դեմ ջահել որդին Ութեի,
Այլ պաշտպանվեց ինչպես հարկն է՝ սրախաղով հմտորեն,
Որքան էլ որ ուժեղ էին գրոհները Բեռնցու,
Բայց նրա դեմ զորեղ ուժ էր՝ ջահել արքա, դյուցազուն:
2296. Խոցեց նրան Գիզելհերը, Բեռնցու զրահը ճեղքեց,
Եվ արյունը թափվեց վերքից ու զրահը վառ ներկեց,
Մահացու էր վերքն ասպետի, արնածոր ու կարեկվեր,
Ոչ մի ջահել արքա երբեք չէր մարտնչել այդպես դեռ:
2297. Ու երբ տեսավ քաջ Վոլֆհարտը, որ խոցված է մահացու,
Նետեց վահանն իր, որ արդեն պետք չէր իրեն՝ Բեռնցուն,
Ծանր սուրը վրա բերեց Գիզելհերին՝ դեռ անպարտ,
Ճեղքեց նրա սաղավարտն ու զրահները ոսկեպատ:
2298. Արդ, մատնեցին նրանք միմյանց դաժան մահվան կորստին,
Եվ տապալվեց խոցված արքան կողքին խոցված ասպետի,
Տեսավ մահը քաջ Վոլֆհարտի չիղիբբրանդը ձերուսի,
Ձէր զգացել նա դեռ կյանքում նման խոր վիշտ, ցավ անհուն:
2399. Ու կորցրեց Գունտեր արքան ասպետներին իր բոլոր
Եվ Դիտրիխն էլ: Չիղիբբրանդը մնաց միայն, տեսան, որ
Դիտրի մեջ նա փնտրում է քաջ Վոլֆհարտին՝ իր զարմիկ,
Գտավ նրան ծով արյան մեջ ու փաթաթվեց մտերմիկ:
2300. Ծերը գրկեց քրոջ որդուն և կամեցավ դուրս տանել,
Բայց ասպետը ծանր էր շատ, ստիպված էր ցած դնել,
Մի պահ միայն բացեց մեռնողն աչքերն, ասես երազում,
Եվ հասկացավ, որ ձերուսին իրեն փրկել է ուզում:
2301. Եվ Վոլֆհարտը խոսեց, ասաց. «Շատ սիրելի մորեղբայր,
Ինձ այլևս պետք չէ ոչինչ, միայն՝ սգալ հայրաբար,
Սակայն լսեք ինձ՝ մեռնողիս, զգուշացեք Հագենից,
Նա ամենքիս վրա անչափ չարացած է, մոլեգնած:

2302. Քող ափսոսան մաՀս անկեղծ ընկերներն իմ վշտաբեկ,
Եվ մոտիկներն իմ արնակից, բայց չարտասովեն թող երբեք,
ՄաՀն ինձ գտավ պատվի դաշտում, արդ, ուրախ եմ ես որքան,
Փառավոր է մաՀս՝ չէ՞ որ ընկա ձեռքով արքայի:
2303. Բայց նաև իմ մաՀով անչափ թանկ նստեցի թշնամուն,
Շատ ասպետաց տիկնայք պիտի ողբան, ապրեն վիշտ անՀուն,
Առիթ չունեք մարդկանց առաջ ամաչելու Դուք բնավ,
Պատմեք՝ Հարյուր բուրգունդ այստեղ ասպետիցս մաՀ գտավ»:
2304. Տրոնյեցին նույնպես Հիշեց երգասացին իր ընկեր,
Որին կյանքից զրկեց ասպետ Հիլդեբրանդը ալեՀեր,
Եվ ձերուհու կողմը ձայնեց. «Խոր ցավ եք ինձ պատճառել,
Խոցել եք շատ բուրգունդների և շատերի կյանքն առել»:
2305. Նա Հարվածեց ձեր ասպետին, ինչպես գիտեմ, Բալմունգով,
Հենց այն սրով, որ կրում էր Ջիգֆրիդը նիբելունգ,
Քանի ողջ էր, չէր սպանել նրան մռայլ բուրգունդցին,
Եվ պաշտպանվեց Հիլդեբրանդը՝ սպասելով Հարվածի:
2306. Դիտրիխ Բեռնցու ասպետը մի մեծ սուր ունեւր իր ձեռքին,
Նա դրանով զարկեց, ճեղքեց կուռ զրաՀը Հագենի,
Բայց Գունտերի Հպատակին մեծ նեղություն չտվեց,
Ապա Հագենն Հարված տվեց ու ձերուհուն խոր խոցեց:
2307. Երբ Դիտրիխ զինակիրը ծանր վերքը իր զգաց,
Վախեցավ, որ ժանտ Հագենից կպարտվի մարտում բաց,
Մեջքին ձգեց վաՀանը և փախավ նրա ժանտ ոխից,
Եվ վիրավոր ասպետն այդպես Հազիվ Հասավ Դիտրիխին:
2308. Եվ ոչ մեկը չփրկվեց կոտորածից մեծասպանդ,
Ողջ մնաց լուկ Գունտեր արքան, Հագենն ասպետ և ապա՝
Հիլդեբրանդը, որ արնածոր մի կերպ փախավ Բալմունգից,
Եվ Հասցրեց իր արքային լուրեր տխուր, ցավազին:
2309. Նստած էր անդ Դիտրիխ արքան՝ Հոգին մռայլ, միգամած,
Բայց ավելի մռայլացավ, երբ ասպետը երևաց,
Չէր մնացել վրան զրաՀ, բզկտված էր, արնաքամ,
Եվ Հարցրեց, աՀը սրտում, քաջ Դիտրիխը տիրական.

2310. «Ով իմաստունն Հիլդբերանդ, ասեք, ի՞նչ է պատահել,
Թաթախված եք ողջ արյան մեջ, ո՞վ է արդյոք դա արել,
Մարտի մե՞ջ եք գուցե մտել բուրգունդցոց հետ չարաղետ,
Թեև ես Զեզ ասել էի՝ կուվել պետք է նրանց հետ»:
2311. Պատասխանեց արևմորուս ասպետը իր արքային.
«Տեր իմ, մեղքը Հագենինն է, նա ինձ խոցեց այն պահին,
Երբ որ պետք է հեռանայի և դուրս գայի դահլիճից,
Ասկայն Հազիվ ազատվեցի այդ արնախում դահլիճից»:
2312. Դիտրիխ Բեռնցին ասաց ազդու. «Արդար վճիռ է կարծեմ,
Շնորհակալ եղեք Դուք դեռ, որ տարիքով մարդ եք՝ ծեր,
Ես ինքս Զեզ կսպանեի, որ դրժել եք խոսքը իմ,
Դուք չպիտի սուր վերցնեիք ընդդեմ բուրգունդ արքայի»:
2313. «Տեր իմ, Դիտրիխ, մի գայրացեք, — ասաց ծերը մորմոքուն, —
Մեծ աղետ է մեզ պատահել, ասպետներիս ամելունդ,
Ուզում էինք մենք դահլիճից մարկգրաֆի դին Հանել,
Բայց մեզ բուրգունդ ասպետները թույլ չտվին դա անել»:
2314. «Ուրեմն իրա՞վ մարկգրաֆը սպանված է, ով ասպետ,
Ավա՛ղ, մեծ է մեր կորուստը, և մեր վիշտը՝ դառնաղետ,
Նրա տիկին Գոտելինդը դուստրն էր իմ մորեղբոր,
Ավա՛ղ նրա խեղճ որբերին, որ մնացին սգավոր»:
2315. Մարկգրաֆի մահվան դույժը նրան այնպես համակեց,
Որ հերոսը, արտասովելով, բարձրաձայն հառաչեց.
«Ափսոս, որ ես կորցրեցի իշխանին իմ զորավիգ,
Զհասցրի օգնել նրան, փրկել ձեռքից այս դավի»:
2316. Կարո՞ղ եք ինձ, Հիլդբերանդ, հիմա ասել հավաստի,
Ո՞ր իշխանի ձեռքով է նա ընկել կամ ո՞ր ասպետի»:
Պատասխանեց. «Տեր իմ արքա, Գերնտոն է դա ազնվամեծ,
Բայց նա ինքն էլ մարկգրաֆից իր վախճանը ընդունեց»:
2317. Ասաց արքան Հիլդբերանդին. «Այդժամ ինքս կզնամ
Եվ պատասխան կպահանջեմ բուրգունդներից այս անգամ,
Զինվորներին իմ պատվիրեք՝ զինավորվեն թող մեկին,
Ասեք նաև՝ զենք, զրահս հիմա այստեղ թող բերեն»:

2318. Ալեմորուս գինակիրը ասաց. «Տեր իմ, ո՞ւմ ասեմ,
Ով որ ողջ է մնացել դեռ, ահա, կանպնած է Ձեր դեմ,
Միայն ես եմ ողջ մնացել, մյուսները էլ չկան»:
Եվ այդ լուրից Հուլիոս ահապահեց ազնվազարմ, հեգ արքան:
2319. Ձեր զգացել նա իր կյանքում դեռ հոգու ցավ այդքան խոր
Եվ թառանչեց. «Թե մեռած եմ սպասեմները իմ բոլոր,
Ուրեմն Աստված մոռացել է ինձ՝ թշվառիս տարաբախտ,
Որ երբևէ արքա էի երկրի վրա մեծահաղթ»:
2320. Ապա կրկին նա հարցրեց. «Ինչպե՞ս եղավ, գինակիր,
Որ բուրգունդներն սպանեցին սպասեմներին իմ ընտիր,
Ձե՞ որ նրանք հոգնած էին, կոխվներից տանջահար,
Տե՞րն է, գուցե, հիչեցնում մեզ մեր մեղքերն անհամար»:
2321. Եթե Տերն իմ վերջն է ուզում է՛հ, իմ վերջը լինի թող,
Ասեք հիմա, բուրգունդներից մնացե՞լ է մեկը ողջ»:
Հիլդեբրանդը պատասխանեց. «Աստված վկա՛ էլ ոչ ոք,
Գունտեր արքան միայն, մեկ էլ՝ ժանտ Հագենը անողոք»:
2322. «Ավաղ, իմ սեզ ասպետ Վոլֆհարտ, կորցրեցի ես քե՞զ էլ,
Ափսոսում եմ, որ ծնվել եմ, որ աշխարհ եմ ես եկել;
Վալֆվա՛յնն ուր է, Ջիզլտաբը, Վոլֆբրանդը ասպետ՝ ո՞ւր,
Էլ ո՞վ պիտի ինձ գորավիզ լինի երկրում ամելունգ»:
2323. Բուրգունդներին զոհ է դարձել Հելֆերիխը աննման,
Գերբարտին էլ ու Վիխարտին պիտի ողբամ մինչ ի մահ,
Ուրախության վերջին օրն է սա իմ կյանքում այսուհետ,
Երանի թե մահը ինձ էլ ընդմիջտ տանեք նրանց հետ»:

ԴԻՊԼԱԾ ԵՐԵՍՈՒՆԻՆԵՐՈՐԴ

Թե ինչպես արքա Դիտրիխը մենամարտեց Գունտերի ու Հագենի դեմ


2324. Եվ իր ձեռքով Դիտրիխն հագավ հանդերձները իր բոլոր,
Ջրահները վրան կապեց Հիլդեբրանդը ալևոր,
Եվ այնպես էր քաջը ողբում, այնպես դառն ու մորմոքուն,
Որ դողում էր նրա ձայնից տունը՝ վշտով աուեցուն:

2325. Ապա կրկին Դիտրիխ արքան զգաստացավ, լրջացավ
Եվ մեկ առ մեկ մուսյուրեն իր զենքերը ձեռքն առավ,
Առավ իր մեծ, լայն վահանը և ամրակուռ տեղն առավ,
Եվ դուրս ելավ, ու նրա հետ Հիլդեբրանդը դուրս ելավ:
2326. Հագենն ասաց. «Արդ, դալիս է ինքը՝ Դիտրիխ Բեռնցին,
Վնասներից հետո այն մեծ, որ մենք նրան տվեցինք,
Նա ուզում է կռվել մեզ հետ և կռիվ տալ մի վերջին,
Ուրեմն այսօր մենք կիմանանք՝ ո՞վ է ասպետն առաջին:
2327. Բայց նա թեև համբավ ունի խիզախ, անպարտ ասպետի
Եվ կուզենա ամեն զնով Հանել քենը իր սրտի,
Եվ տեսքից էլ հիմա անչափ ահազդու է, դժնադեմ,
Ես կփորձեմ զենք վերցնել, մարտի ելնել նրա դեմ»:
2328. Այս խոսքերը լսեց Բեռնցին, Հիլդեբրանդը լսեց ծեր,
Եկան այնտեղ, ու բուրգունդցիք խոսում էին՝ կանգնած դեռ,
Հենված պատին սև պալատի, դռների մոտ ծխամած,
Տեսավ նրանց Դիտրիխը քաջ և վահանը դրեց ցած:
2329. Եվ դիմելով բուրգունդներին՝ ասաց ձայնով ցավազին.
«Արքա, ինչո՞ւ պատճառեցիր ինձ այս ցավը ահազին,
Տարագիրս ապրում էի այս մարդկանց մեջ կարեկից,
Իսկ Դուք ինչո՞ւ ինձ զրկեցիք ամեն հույս ու հրճվանքից:
2330. Մի՞թե բավ չէր և այն, որ դուք, կույր վրեժով, սուր առած՝
Սպանեցիք մեր իշխանին՝ մարկգրաֆին փառապանծ,
Սպանեցիք նաև բոլոր ասպետներիս ամելունգ,
Թեև երբեք չեմ պատճառել ձեզ նման ցավ ու արցունք:
2331. Չէ՞ որ դուք էլ՝ բուրգունդներդ, զգացել եք անպատում
Նույն ցավը, երբ կորցրել եք հարազատներ մարտերում,
Ջգացել, թե որքան ծանր է վիշտը նրանց կորստյան,
Ինձ որքան մեծ ցավ պատճառեց մարկգրաֆի մահը թանկ:
2332. Ինձնից դժբախտ մարդ աշխարհում հիմա չկա, բուրգունդներ,
Բայց դուք անսիրտ, անտարբեր եք իմ ցավի դեմ, նաև ձեր,
Ու էլ ոչ ոք չունեմ հիմա, և դա գործն է ձեր ձեռքի,
Նրանց անգամ անկարող եմ ինքս ողբալ մի կարգին»:

2333. «Մենք այնքան էլ մեղավոր չենք, — Հազենն ասաց անխոռով, — Ասպետները Ձեր ամելունգ այստեղ եկան բոլորով՝ Կովի պատրաստ ամեն պահի, սպառազեն, մարտական, Ձեզ չեն պատմել կատարվածը, ինչ որ եղել է, արքա»:
2334. «Ուրիշ էլ ո՞ւմ ես հավատամ: Հիլդեբրանդն է պատմել ինձ, Ձեզ խնդրել են իմ ամելունգ ասպետները միասին, Որ սպանված մարկգրաֆի դին իրենց տաք անպայման, Իսկ դուք նրանց միայն ծաղրել ու հեզնել եք անվարան»:
2335. Հոննոսի տիրակալը խոսեց այստեղ. «Ով արքա, Ուզում էին նրանք տանել ասպետի դին, ես սակայն Արգելեցի, ոչ հակառակ Ձեզ, այլ՝ արքա էթցելի, Իսկ ամեն ինչ փչացրեց խենթ Վոլֆհարտը քինով լի»:
2336. «Թեկուզ այդպես, Գունտեր արքա, — ասաց Բեռնի տերը քաջ, — Մեկ է, իբրև ազնիվ ասպետ, պարկեշտությամբ Ձեր ճանաչ, Ստիպված եք ինձ հատուցել ցավի համար այն դաժան եվ քավեք Ձեր մեղքը հիմա, որքան էլ որ ծանր է այն:
2337. Հանձնվեք ինձ, իբրև պատանդ, Հազենի հետ միասին, Խոստանում եմ՝ չի սպառնա ոչ մի վտանգ ձեր կյանքին, Կպաշտպանեմ Ձեզ հոներից, չարկամներից Ձեր անթիվ, Վստահեք ինձ, արքա Գունտեր, և խոսքերին իմ ազնիվ»:
2338. Բացականչեց Հազենն այդժամ. «Աստված մեզ պահպան, Ինչո՞ւ պետք է Հանձնվենք Ձեզ ասպետներս պատվարժան, Որ ողջ ենք դեռ, սպառազեն, զենք ենք կրում ասպետի եվ կարող ենք դեռ կռիվ տալ հանուն կյանքի ու պատվի»:
2339. Դիտրիխն ասաց. «Հիմա արդեն անտեղի է խոսքը Ձեր, Ձեր իսկ ձեռքով՝ բուրգունդներին, ասպետ Հազեն ու Գունտեր, Ինձ, որ բնավ թշնամի չեմ, պատճառել եք անհուն ցավ, Ուստի պետք է, որ հատուցեք կորուստները իմ անբավ:
2340. Ձեզ պարզում եմ ձեռք հաշտության և երդվում եմ իմ պատվով, Որ ես ինքս ձեզ կուղեկցեմ մինչ Հոննոս պահհով, Ավելի շուտ ես կմեռնեմ, քան կմատնեմ ձեզ մահվան, Եվ հանուն ձեզ կմոռանամ սրտիս ցավը անսահման»:

2341. «Ժամանակ մի ծախսեք իզուր,— Տրոնյեցին հեգնեց սուր,— Իսկ մեր պատվի՞ց ինչ կխոսեն, ինչ կպատմեն ամենուր. Ա՞յն, որ երկու քաջ ասպետներ հանձնվել են Դիտրիխ, Ձեզ, Ձե՞ որ կողքին միայն Ձեր ծեր Հիլդերրանդին եմ տեսնում ես»:
2342. Հիլդերրանդը ասաց նրանց. «Աստված վկա, ասպետներ, ինչ ասում է տերս, անշուշտ, բարեմիտ է, օգտին ձեր, Դուք անսացեք նրա խոսքին, լսեք ազնիվ ասպետին, Նա ներում է ձեզ, սպասում, որ հանձնվեք իր դատին»:
2343. Եվ Հագենը ծաղրեց նրան. «Ինչ խոսք, դա շատ ավելի Լավ կլիներ, քան դիմելը ամոթալի փախուստի, ինչպես Հենց նոր Դուք վարվեցիք՝ ընդհատելով մարտը մեր, Իսկ Ձեր մասին լսել էի, թե ասպետ եք անվեհեր»:
2344. Հիլդերրանդը կտրեց. «Հագեն, դու ծաղրում ես ինձ, սակայն, Հիշու՞մ ես, որ Վասկենշտայնում ասպետների դեմ համայն, Նստել էիր քո վահանին, ընկերներին քո լքել, Որոնց Վալտեր Իսպանացին կոտորում էր անարգել»:
2345. Ազնիվ Դիտրիխն ասաց նրանց. «Սազո՞ւմ է ձեզ, ասպետներ, Որ նախատեք միմյանց, ինչպես պառավ կանայք լեզվասեր, Ձայնդ կտրիր, Հիլդերրանդ, արգելում եմ խոսել քեզ, Առանց այդ էլ մեր հոգսերը անհամար են, անեղբ»:
2346. Ապա դարձավ նա Հագենին. «Հիմա ասեք, սրտաբաց, Թե ինչ էիք խոսում այնտեղ Դուք՝ պալատի մոտ կանգնած, Երբ տեսաք, որ ես գալիս եմ: Ուրախացա՞ք անպատճառ, Որ մենակ եմ և Ձեզ համար ախոյան եմ շատ հարմար»:
2347. Հագենն անկեղծ պատասխանեց. «Դա ստույգ է և հաստատ, Եվ քանի դեռ իմ ձեռքին է նիբելունգյան սուրը հաղթ, Ես պատրաստ եմ միշտ էլ ելնել Ձեր դեմ՝ թեկուզ Հենց Հիմա, Ջայրանում եմ, որ միտք ունեք պատանդ վերցնել ինձ, արքա»:
2348. Եվ երբ տեսավ քաջ Դիտրիխը մառ պնդությունն ասպտի, Ձեռքը առավ վահանը և պատրաստ կանգնեց թեժ մարտի, Եվ Հագենն էլ փութանակի սանդուղքներից թռավ ցած, Եվ Դիտրիխի զրահներին սուրը խփվեց ու զնգաց:

2349. Դիտրիխն զգաց, որ բուրգունդցին աուլեցուն է զայրույթով
 Եվ սկսեց կռվել զգույշ ու պաշտպանվել խնամքով,
 Հագեներն լավ ճանաչում էր Բեռնի տերը՝ քաջ արքան,
 Եվ գիտեր, թե չարության մեջ վտանգավոր է որքան:
2350. Ծանոթ էր և Բալմունգ սրին, շնորհներին դրա պերճ,
 Ուստի միայն պաշտպանվելով՝ Հարվածում էր մեղընդմեջ,
 Բայց հենց զգաց, որ Բալմունգը նրա ձեռքին այն չէ էլ,
 Նա Հարվածեց և Հագեներն վիրավորեց անարգել:
2351. Եվ մտածեց Դիտրիխն ազնիվ. «Հոգնած է նա, տանջալար,
 Նրան Հիմա սպանելը մեծ պատիվ չէ ինձ Համար,
 Ես կփորձեմ, եթե միայն իմ ուժերը հերիքին,
 Շղթայակապ անել նրան»: Եվ դա արեց Հմտորեն:
2352. Նա վահանը դրեց մի կողմ և մոտեցավ Հագեներին,
 Փրկեց նրան բազուկներով, սեղմեց ուժով աճաբին,
 Եվ որքան էլ ընդդիմացավ, ոչինչ չօգնեց բուրգունդցուն,
 Դրանից շատ թեւթափվեց Գունտեր արքան դյուցազուն:
2353. Նա կալանեց Տրոնյեցուն, ապա բերեց այնտեղ, ուր
 Քրիմհիլդն էր ամուսնու հետ՝ նստած մռայլ ու տխուր,
 Երբ նա տեսավ, որ իր առաջ ինքն՝ Հագեներն է շղթայված,
 Ուրախացավ անասելի, ելավ կանգնեց բերկրած:
2354. Եվ խոնարհվեց քաջ արքային էթցելի նենգ տիրուհին.
 «Երանելի թող լինեն ընդմիջտ քո մարմինը և Հոգին,
 Ազնիվ Դիտրիխ, դու փրկեցիր և՛ պատիվս, և՛ կյանքս,
 Եվ քանի դեռ ես ապրում եմ՝ պարտապան եմ մնում քեզ»:
2355. Եվ Դիտրիխը խնդրեց նրան մարդկանց առաջ ու գահի.
 «Թե կարող եք, մի սպանեք նրան, ազնիվ թագուհի,
 Կհատուցի Հիմա նա Զեզ՝ ինչ պարտք ունեք ու պահանջ,
 Ահա անգնե ու շղթայված՝ կանգնած է նա Զեր առաջ»:
2356. Եվ պատվիրեց թագուհին, որ զնդան տանեն ասպետին,
 Արքունական մութ զնդանը, որտեղ փակվեր նա պիտի,
 Իսկ մինչև այդ բարձր կանչեց Գունտեր արքան պալատից.
 «Հապա ո՞ւր է Դիտրիխը, որ վշտացրեց այսպես ինձ»:



ԴԻՊԿԱԾ

ԵՐԵՄՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ

2357. Ելավ նրա դեմ Դիտրիխը՝ Բեռնի տերը մեծանուն,
Հավասար էր նրան ուժով և Գունտերը քաջազուն,
Ուստի երկար չհասպաղեց, սանդուղքներով նետվեց ցած,
Եվ սրերը նրանց ձեռքին զրնգացին կրակված:
2358. Որքան էլ որ Դիտրիխն հնուց մեծարված էր, զորնդեղ,
Հուժժ կատաղի մարտ էր մղում բուրգունդ արքան նրա դեմ,
Թշնամացել էր Դիտրիխին իր ասպետի համար թանկ,
Եվ հրաշքով Բեռնցին այդօր փրկվեց, մնաց անվտանգ:
2359. Ջարկում էին նրանք իրար մոլեգնությամբ անպատում,
Եվ զարկերից նրանց հուժկու ողջ պալատն էր դղրդում,
Ձգտում էին, որ անպայման փշրեն իրար սաղավարտ,
Ցույց էր տալիս Գունտերն, իրավ, որ ասպետ է մեծահաղթ:
2360. Սակայն հաղթեց Բեռնցին նրան, ոնց հաղթել էր Հագենին,
Սրի ծանր մի հարվածով խոցեց քաջը արքային,
Ու փեռեկված զրահից դուրս ցայտեց շիթը վառ արյան,
Եվ վիրավոր թեև, սակայն դեռ կոպում էր սեգ արքան:
2361. Եվ շղթայեց Դիտրիխն Հպարտ Հոենսոցուն անարգել,
Ոչ մի արքա դեռ իր օրում նման չղթա չէր հագել,
Զի գիտեր նա՝ թե արձակեր բուրգունդներին ձեռքից իր,
Նրանք այդտեղ բուրդին էլ կսպանեին անխտիր:
2362. Եվ բուրգունդցու ձեռքից բռնած՝ այնտեղ տարավ վերստին,
Որտեղ էթցել թագավորն էր և Քրիմհիլդ թագուհին,
Եվ թագուհին զվարթ էր շատ, և փախել էր վիշտն արդեն:
«Բարի գալուստ, Գունտեր արքա», – եղբորն ասաց հեզնորեն:
2363. Եվ Գունտերը պատասխանեց. «Կտայի քեզ ողջույն, թե
Քո ողջույնը, քույր իմ, լիներ անկեղծ հոգուց, ի սրտե,
Բայց թե սիրտդ որքան չար է՝ պարզ տեսնում եմ, հավաստի,
Թե չէ ինչու մենք հոնաց մոտ արժանացանք այս բախտին»:
2364. Ապա Բեռնցին խոսեց այսպես. «Ազնվազարմ թագուհի,
Ձեզ բերեցի, իբրև պատանդ, երկու հերոս անթերի,
Այդպիսի թանկ պատանդ ոչ մի գահ չի տեսել դեռ երբեք,
Վարձ չեմ ուզում Ձեզանից, լուկ նրանց կյանքից չզրկեք»:

2365. Եվ խոստացավ թագուհին, որ խոսքը կանի արքայի, Որն հեռացավ, արցունքն աչքին՝ զրկված խինդից ու գահից, Բայց չմնաց հավատարիմ Քրիմհիլդը իր խոսքին, Նա վերջապես վրեժն առավ, կյանքից զրկեց քաջերին:
2366. Եվ պատվերով Քրիմհիլդի նրանց զնդան նետեցին, Որ չտեսնեն երբեք իրար, մուժ խցերում առանձին, Հանգիստ չառավ քույրը՝ մինչև եղբոր կյանքը իր չառավ Եվ գլուխը նրա կտրած՝ Հագենի մոտ չմտավ:
2367. Եվ թագուհին գնաց այնտեղ, ուր Հագենն էր մեն-մենակ, Եվ դիմելով նրան՝ ասաց թշնամանքով բովանդակ.
«Տվեք ինձ այն, ինչը մի օր անգթորեն խլեցիք,
Խոստանում եմ, որ այդ դեպքում դուք կհասնեք հայրենիք»:
2368. Մուսյլ Հագենն ասաց նրան. «Ազնվազարմ տիրուհի, Թե որտեղ է գանձը թաղված, ես չեմ ասի ոչ մեկին, Ջի երդվել եմ արքաներիս՝ իբրև վասալ և ասպետ, Որ չեմ հայտնի, քանի որդ է եղբայրներից մեկը գեթ»:
2369. «Նրա վերջը կտամ հիմա», – կանչեց անզուսպ թագուհին Եվ պատվիրեց, որ եղբորը խկույն և եթ տան մահին, Եվ Գունտերին գլխատեցին: Եղբոր գլուխն իր առած՝ Քրիմհիլդը եկավ, կանգնեց Հագենի դեմ զարհուրած:
2370. Եվ երբ տեսավ նրա ձեռքին գլուխը իր արքայի՝ Քրիմհիլդին ի պատասխան Հագենն ասաց՝ ոխով լի.
«Այդ դու նրան սպանեցիր, ոչ թե մեռավ ինքն՝ արքան, Անպաշտպան էր և սպանվեց հրամանով Զեր չարկամ»:
2371. Ազնիվ արքան Բուրգունդիայի, արդ, մեռած է, սպանված, Եվ Գերնոտն ու Գիզելհերը՝ մարտում՝ ընդդեմ թշնամյաց, Գանձի տեղը գիտեն հիմա Երկնայինն ու մեկ էլ՝ ես, Բայց վճուղիդ համար գաղտնիք այն կմնա մշտապես»:
2372. Հույժ մուսյլվեց Քրիմհիլդը. «Դուք ինձանից, չար ասպետ, Խլեցիք որդ ունեցածս: Բալմունգը գեթ տվեք ետ, Այն կրում էր Ջիգֆրիդն իմ, վերջին անգամ երբ տեսա, Սպանելով նրան՝ Դուք ինձ ցավ տվեցիք անսահման»:

2373. Եվ քաշելով պատյանից դուրս երկայն սուրը անարգել,
Զի շղթայված ասպետն արդեն չէր խանգարի նրան էլ,
Թափով զարկեց Քրիմհիլդը, կտրեց գլուխն ասպետի,
Եվ դա տեսավ էթցել արքան՝ սարսափի մեջ ու վշտի:
2374. «Ավա՛ղ, — կանչեց էթցել արքան՝ ալեկոծված սրտով ողջ, —
Ամենաքաջ ասպետն է, արդ, խփված ձեռքով մի կնոջ,
Նա հաղթում էր այն բողոքին, ովքեր վահան են կրում,
Թշնամիս էր, բայց ողբում եմ նրա մահը անսահման»:
2375. Հիլդբերանդը բորբոք կանչեց. «Էլ ներում չիք թագուհուն,
Զի Հագենին սպանեց նա՝ սև է իջել իմ հոգուն,
էթցել արքան թեկուզ ծանր պատիժ տա ինձ, թեկուզ մահ,
Քաջ ասպետի վրեժն ինքս պիտի առնեմ ես հիմա»:
2376. Եվ խոյացավ դեպ թագուհին Հիլդբերանդը աներկյուղ,
Սուրը իջավ կնոջ վրա փայլակումով ահարկու,
Ծեր ասպետի ձեռքից դշխոն զգաց մահվան ահը մեծ,
Բայց սարսափի սրտակեղեք ճիչը նրան էլ չօգնեց:
2377. Ով որ պիտի մեռնե՞ր այդօր՝ չխուսափեց մահվանից,
Երկու կես էր կնոջն արել սուրն ասպետի անվանի,
Արտասվում էր էթցել արքան, և Դիտրիխն էր արտասվում,
Լալիս էին հարազատներն ու դառնագին ողբ անում:
2378. Եվ կորստյան մատնվեցին ինչ ասպետներ փառավոր,
Ողջերին էլ տանջում էր խիստ նրանց ցավը խորախոր,
Եվ էթցելի խնջույքն այսպես վախճան գտավ դառնաղետ,
Ինչպես որ միշտ ցավն է գալիս հրճվանքից կամ խինդից ետ:
2379. Էլ չեմ կարող պատմել ես ձեզ՝ ինչ պատահեց այդուհետ,
Գիտեմ միայն, որ դեռ երկար տիկնայք, այրեր քաջասպետ,
Վասն աղետի ծնկակոտոր թափում էին արտասուք,
Եվ ասքն է մեր ավարտվում աստ՝ ողբը զարմի նիբելունգ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Վորմա — քաղաք Գերմանիայում, Հռենոսի ձախ ափին: Պատմական Բուրգունդիայի մայրաքաղաքը:

11. Եթաուֆենյան արքայական Հարստության ժամանակներում ախոռապետը, սենեկապետը, անկողնապետը և մատուցվող Համարվում էին պալատական չորս գլխավոր ծառայողներ:

20. Քասնտեն — Նիդեռլանդական Հին թագավորության մայրաքաղաք: Այժմ քաղաք Գերմանիայի Հռենոս-Վեստֆալիա երկրամասում:

28. Ասպետությանը նվիրվելու առթիվ սուր և գոտի ստանալը Հին գերմանական սովորություն է: Իսկ, ահա, Փրանսիայում այդ առթիվ սրով Հարվածում էին նորընծա ասպետի ուսին:

41. Երգիչ (բնագրում՝ *Spielmann*) — միջնադարյան Գերմանիայում ժողովրդական բանաստեղծ, երգիչ և ասացող: Ետո Հաճախ, ապրելով կալվածատիրական տներում, երգասացները կատարում էին նաև մի շարք կարևոր Հանձնարարություններ, ինչպես, օրինակ, «Նիբելունդների երգում» Վերբելն ու Եվեմելը:

64. Զարմանալի է, որ Զիրգֆրիդի տասներկու ասպետներից ոչ մեկի անունը էպոսում չի հիշատակվում, մինչդեռ Գունտեր, ինչպես և էթցել թագավորների ասպետների ու իշխանների անունները Հանդիպում են շատ Հաճախ:

88. Այս դանձերի մասին բազմաթիվ և բազմաբնույթ ավանդություններ կան պաշտպանված գերմանական ժողովուրդների բանահյուսության մեջ:

97. Բնագրում՝ *tarnkappen* — սա գլխի ծածկոցով թիկնոցն է, ոչ թե գլխարկը:

242. Մարկ — կշռի միավոր թանկարժեք մետաղների Համար արևմտաեվրոպական մի շարք երկրներում:

317. Վաղ միջնադարյան կենցաղում վաճանհերը հաճախ էին օգտագործվում հնչուն մետաղադրամ լցնելու համար: Այդ սովորությունը հանդիպում է թե՛ բուրդունդական, թե՛ հոնաց արքունիքներում:

330-331. Ձիգֆրիդի այս արտահայտությունից, ապա նաև Հագենի խոսքից պարզ երևում է, որ Ձիգֆրիդը ոչ միայն քաջ գիտի Բրունհիլդի երկիրը, այլև հենց իրեն՝ Բրունհիլդին:

362. *Ցացամանկ* — Արևելյան Հեքիաթային երկիր, որ հաճախ է հիշատակվում գերմանական միջնադարյան բանահյուսության և գրականության մեջ:

382. Այն մասին, որ չորս դուցազունները անցնում են Նիդեռլանդներով, այսինքն՝ Ձիգֆրիդի հայրենիքով, էպոսում ոչ մի խոսք չի ասվում:

439. *Ազագուկ* — տես 362 ծանոթագրությունը:

572. Միջնադարյան սովորությունների համաձայն ամուսնացած կանայք առանց գլխաշորի իրավունք չունեին երևալ հասարակության մեջ:

615. Վաղ միջնադարում ամուսնության կարգը ավելի պարզ էր: Ամենակարևորը բանավոր երդումն էր, որ փեսան ու հարսնացուն տալիս էին վկաների ներկայությամբ, իսկ եկեղեցի գնալը չէր համարվում պարտադիր:

681-682. Հավատալիք, որ հանդիպում է շատ ժողովուրդների բանահյուսության մեջ: Ջրկվելով անմեղությունից՝ գերբնական ուժի տեր կինը դառնում է այնպիսին, ինչպիսին բոլոր կանայք են, այսինքն՝ թույլ և հնազանդ:

739. Հավանաբար, Ձիգֆրիդը փոխել է նստավայրը: Բանաստեղծը կարծում է, որ Նիթելունդների երկիրը կարելի է գնալ և ցամաքով:

842. Այս և նախորդ բոլոր մեղադրանքները սուկ Քրիմճիլդի ենթադրությունների վրա են հիմնված: Ձիգֆրիդը Քրիմճիլդի հետ իրեն պահել է ասպետաբար:

860. Գունտերը նույնպես մինչև վերջ չի հավատում Ձիգֆրիդին, այդ պատճառով էլ վախենում է նրա երդումից, քանզի կարծում է, որ Ձիգֆրիդը կասի ճշմարտությունը գիշերվա դիպվածի մասին և դրանով իրեն անարգանք կհասցվի:

911. *Վոզեգյան անտառներ* — (Wasgenwald) լեռնային զանգված ժամանակակից Ֆրանսիայի հյուսիս-արևելքում, Հռենոսի ձախ ափին: Ավստրիացի բա-

նաստեղծը ճիշտ պատկերացում չունի Հոենոսյան երկրի աշխարհագրության մասին: Որսը տեղի է ունեցել Հոենոսի աջ ափին (918, 927), այսինքն՝ Օդենվալդում (տե՛ս քարտեզը):

953. Միջնադարյան պատկերացումների Համաձայն Հովազի մորթին խորհրդավոր բուրմունք է արձակում և դրանով գրավում գազաններին:

967. Եպեսարտ — Սարահարթ ներկայիս Գերմանիայում (Ռայնլանդ-Պֆալցի երկրամաս):

1291. *Պորինգ* — վայր Դանուբի ձախ ափին, Ռեգենսբուրգ քաղաքից վերև, այսօր էլ պահպանվում են հին կամրջի հետքեր:

1299. *Եպիսկոպոս Պիզրիմ* — դյուցազնավեպերում բուրգունդական արքաների և Քրիմհիլդի մորեղբայրը: Պատմական անձնավորություն է: Պասաու քաղաքի եպիսկոպոսն է եղել 971-991 թվերին:

1346. *Բլոյդել* — պատմական անձ է, Աթիլլայի եղբայրը, մահացել է 444-445թթ.:

1505-1506. Այսուհետև բուրգունդներ և նիբելունգներ անվանումները նույնանում են:

1525. *Եվալթենֆելդ* — չվաքական երկրամաս Եվալթ գետի վրա: Այստեղ ևս հեղինակի աշխարհագրական ոչ ճիշտ պատկերացումները Արևմտյան Գերմանիայի մասին իրենց զգացնել են տալիս. 1524 քառատողում բուրգունգները շարժվում են դեպի Դանուբ Արևելյան Փրանկոնիայով, Մայն գետով դեպի վեր, այսինքն՝ չըջանցում են Եվալթենֆելդը:

1532. Ավստրիացի բանաստեղծը այստեղ ուղղակի չի շեշտում, որ Հագենը կրում է Զիգֆրիդի Բալմունգ սուրը:

1547. Տվյալ դեպքում լաստավար սովորական անձնավորություն չէ, որ իր Հացը վաստակում է գետի վրայով մարդ փոխադրելով, դա բավարական թագավորի Հարուստ Հպատակն է, որին Հանձնարարված է մեծ կարևորություն ունեցող գետանցի Հսկողությունը: Ուստի Հագենը Հպարտությունք է հիշում այն մասին, որ երիտասարդ տարիներին լաստավար է եղել նաև ինքը:

1632. Սա էպոսին վաղուց արդեն ծանոթ էքեվարտ կոմսն է, սակայն հեղինակը այս միջադեպում նրա կերպարին Հաղորդել է միֆականացված, ուստիև փոքր-ինչ օտարոտի բնույթ:

1635. Պատահական չէ, որ բուրգունդներին (Հագենին) Հոների երկիր չգնալու մասին զգուշացնում է նաև Էքեվարտ կոմսը: Նա թեև ՔրիմՀիլդի Հպատակն է, սակայն «Երգի» Հեղինակի կարծիքով, ավելի գորավոր է ցեղային Հավատարմության բնագղը:

1652. Պալատական էթիկետի կարևոր տարրերից էր Համբույրը: Համբույր տալն ուներ առանձնահատուկ նշանակություն: Ազնվականն իրավունք չուներ բոլորին Համբուրել: Այն խստորեն կանոնակարգված էր: Նմանատիպ իրադրությունների կարելի է Հանդիպել նաև ասպետական վեպերում: Օրինակ, Էշենբախի «Պարցիֆալի» Հերուսուհին Հարցնում է ասպետին.

Скажите, он княжеского рода,
Должна я точно это знать,
Могу ль я его поцеловать?

1699. Ռուդիգերի որդու՝ Նուդունգի մասին, որն սպանվում է Էրմանարիխ թագավորի դյուցազն Վիտեգի ձեռքով, պատմում է Դիտրիխ Բեռնցու շարքի «Ռավեննայի ճակատամարտը» պոեմը:

1961. Կարելի է ենթադրել, որ նպատակին Հասնելու Համար ՔրիմՀիլդը փաստորեն զոհաբերում է որդուն:

2021. Հոների մոտ ընդունված սովորությունն էր, որ թագավորն անձամբ կռվի մասնակցելու իրավունք չունի:

2101-2102. Այս արտահայտությունը չի Համապատասխանում իրականությանը: Գիզելհերը, ինչպես և Գերնտը, գիտեք Ջիզֆրիդին սպանելու Հագենի մտադրության մասին, սակայն քրոջը ոչինչ չի Հայտնում:

2344. Վալտեր Իսպանացի — գերմանական միջնադարյան էպիկական պատմաներից մեկի («Ասք Վալտերի մասին») Հերոսը, որ պատանության տարիներին թագուհի Հիլդեգունդի և Հագենի Հետ (1756) որպես պատանդ ապրել է էթցել թագավորի արքունիքում: Ծակառագրի բերումով տարիներ Հետո Հագենն ու Վալտերը, իբրև Հակառակորդներ, ստիպված են լինում մենամարտել իրար Հետ: Սակայն չցանկանալով դուրս գալ ընկերոջ գեմ՝ Հագենը զենքերը մի կողմ է դնում ու նստում իր վահանի վրա:

ՆԻՐԵԼՈՒՆ ԳՆԵՐԻ ԵՐԳԸ

Գերմանական ազգային էպոս

DAS NIBELUNGENLIED

Deutsches Nationalepos

Redakteur HOWHANNES AJWASJAN

Zeichnungen von ARKADI BAGDASARJAN (ARKO)

*Տեխ. խմբագիր՝ Մ. է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային ձևավորումը՝ Օ. Ղ. Քերզյանի*

Պատվեր՝ 51

Գինը՝ պայմանագրային

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ

Երևան-9, Տերյան 91